

Göussen 30.94

17





ՄԵԿՆՈՒԹԻՒՆ
ՍԱՂՄՈՍԱՑ ԴԱՒԹԻ։

Յօրինեալ սքանչելի Անձաքանութբ՝ Սբ և Երջանիկ Տն՝ Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ՝ լեզուագէտ և բազմավաստակ Վարդապետի Հայոց, ծաղկաքաղ հաւաքելով 'ի լուսաւոր մեկնութեց հոգեկիր հարցն՝ Աթանասի, Բարսղի, Եպիփանու, Եփրեմի, Դանիէլի և Ներսէսի Լամբրօնացւոյ. 'ի խնդրոյ Արհիական Տն Յօհաննու Բագրատունւոյ՝ Առաջնորդի Սբ Ուխտին Հաղբատու, և աշակերտաց իւրոց։ 'Ի Թագաւորութեն Հայոց՝ որ 'ի Կիւլիկիա՝ Հեթմոյ առաջնոյ։ Յամի Տն 1251։ Եւ 'ի Թուականութեն Հայոց, եօթն հարիւր։

Տպագրեալ 'ի Վեհափառ Հայրապետութե՝ Լուսացնցող և Քնակերտ Սբ Աթոռոյն Էջմիածնի՝ Տն Ղ ՈՒԿԱՍՈՒ Երից Երանեալ Սրբազնատր Կաթուղիկոսի ամ Հայոց։

Հրամանաւ՝ Սբյ Աթոռոյն Էջմիածնի ծայրագոյն Նուիրակի, Հիւսիսային կողմանս եղելոյ ամ ազգին Հայոց՝ Առաքելաշաւիղ Առաջնորդի, Ամենահնարի Երկրպագելւոյ Արղութենց՝ Իշխանազնեայ Տեառն Յովսեփայ՝ Պատուականագին Սրբազան Արք Եպիսկոպոսի։

Արդեամբք և ծախիւք՝ 'ի Սուրաթ բնակեալ՝ Խօջայ Մինասենց Գրիգոր Աղայի որդւոյ՝ 'ի Քս հանգուցեալ Աղայ Յովհաննէսին Ջուղայեցւոյ։


Յամի Տեառն 1797, Մարտի 24։ Իսկ 'ի Թուակն Հայոց ՌՄԽԶ։



'Ի տպարանի Նորին Բարձր Սրբազնութեն։

Ընդ հովանեաւ Սբ Աստուածածնայ Եկեղեցւոյն, որ

'Ի ՅԱԺԴԱՐԽԱՆ։



Յառաջաբանութիւն Հեղինակին։

ՄԻ Է ԱՍՏՈՒԱԾ ԵՒ
ՄԻ ՄԻՋՆՈՐԴ ԱՍՏՈՒԾՈՅ

և մարդկան՝ մարդն Յս Քս, ասէ Քրիստոսի կենդանին Պօղոս։ Քանզի մի է տէրն, ուր ամբարեալ կան ամ գանձք իմաստութեան և գիտութեան. որ անշարժ գոլով շարժէ զարարածս՝ ՚ի կեանս և ՚ի փրկութիւն։ և մի է հաւատ և մկրտութիւն. որ առնէ զբաժանեալ որդիսն աւազանին ՚ի մի տէրն և յիրերաց՝ մի։ Որ թէ պէտ լինին ոմանք խնդրողք և կէսք տուօղք. այլ մի տէրն է, որ շարժէ զոմանս ՚ի խնդիրս, և զկէսս ՚ի տուրս, տալով նոցա ՚ի շարժմանն խնդրոյ՝ և սոցա զկամս և զգոյս հայցմանն՝ յիւրոյն գանձուց, պատճառս գոլ նոցա միշտ մի՛ ՚ի շաղկապ սիրոյ. զոր արար գէպս իւրոյ աշակերտութեան։ Որպէս և մեզ ետուեալ հրաման կանուխ և անդադամ ՚ի ձեռն խնդրոյ։ զկանուխլն անուանեալը միոյ տն. գլուխն արհիական տր Յովհաննէս Նուիրակին յաթոռն տր ուխտին հաղբատայ յերևանն Եր հարկեցուցիչ և մեծ հրամանն։ Եւ զանազանն՝ որք ընդ մեզ էին եղբարք հեռաւորք և մերձաւորք, սիրով ըղմեզ գրաւեցին ՚ի յայս մեծ՝ խորհրդոց օգնի և մեր, և խըրհրդոց նմանեացն։ Եւ զի ոչ ընդ անցեալ ամսապատ և ընդ անկախ ձեռնադրաց գնալ եղեն մեզ գործ՝ ՚ի յաւագորդ. մեծ ծանս փառաւորել. այլ զտարբերման զանութի զհոգւն և զկենաց բանականաց՝ խիստ և անհաս ձեռակերտ զոր և զգեստիր. զոր յորով ձեռնադրողք հատոյն ուղիս։ և թուչունք՝ հոգւոյն թևօք ՚ի վեր և ՚ի խոնարհ ցուցին հեռոս հայքն հոգեկիրք. աթենաս, եպիփանէս, եփրեմ, զանիէլ, և ներսէս յետոյ։ Վս որոյ փառաւորեալ յոծ՝ որ յարդիւտաց էաս զիս, և յածարեալ հայքն՝ առաք յանձն մերձ միմեանց դնել զբանս նոցա ՚ի մի մատեան։ Է՝ զի կարծել զայսատարած բանս նոյ բառ կարծողի մեր ախորժակաց՝ ՚ի կարձեալ ժամանակիս։ Եւ է՝ զի հոգեխառնեալ ՚ի հայրենի

հնոց

չնորհաց սոսա անդ դիցուք, զորս տացէ մեզ տէր յաղօթս նց. կամ՝ պարգեւելով զծերունական հանճարոյ նց զմխիթարութեն: զորոց առեալ զծաղիկս 'ի հոգւոյն սրբոյ կազմեալ՝ 'ի հովիտս դաշտաց սրտից նց և շրթանց, 'ի գունագոյնս երանգոց կապեսցուք 'ի փունջ մի համահամ և բազմահոտոտս զորս առձեան դասանեմք յառաջեալ հարանցս: Եւ տացուք 'ի ձեռս ձեր՝ մանկունք սիոնի. զի և դուք միշտ ընկենուք 'ի գիրկս տր եկեղեցւոյ, 'ի գգուանս ցնծունս անմահ փեսային իւրոյ յի, և որդւոցն առագաստի, 'ի զբօսանս երկնաւոր պարաւորութեն, և մեզ նպաստ բարւոյ և նուէթ գթութե և ողորմութե տն՝ ձեռամբ խնդրուածովք. հարքն մեր՝ եղբարք մեր և որդիք, տուեալ մեզ 'ի մեծապարգև չնորհացն տն օրհնելոյն յաւիտեանս յաւիտենից՝ յերկս անձինս և 'ի միութի բնութե և ածութե, անորոշ և անեղծապէս մշտնջենաւոր ձոխութեամբ:

Յամենայն պարգևացն տն բնաւորեալ է որ մինչև ցյետին արարածս անցանէ, հաստատեալ է 'ի բնութի ծառոց: Զի յորժամ տնկեցին յերկրի՝ ոչ ցուցանեն աճումն բուսոյ 'ի վեր՝ թե ոչ նախ հաստատին արմատով 'ի խոնարհ զի յարտաքին պատահարացն անվնաս իցեն: Այսպէս զմծա բարձ զտունկս զայս և զպտղոյն՝ հանդերձեալ էր տնկել 'ի բանական երկրի մերում՝ հոգևորական և ժիր մշակն այսր դրախտի՝ մեծն եպիփանէս, յոլով արմատս տարածանէ 'ի նուէթս հոգւոց մերոց. զի միաւորեսցիմք ընդ բնութի բուրաստանիս. և այս արձակեսցուք ոստս գեղեցիկս, և պտուղս համահամս ջամբեսցուք գեղեցկապէս քաղցրելոյն արդարութե: Եւ է օրինակ արմատակութե մեզ այսպիսի: Աղեքսանդր Մակեդոնացի որդի Փիլիպպոսի թագաւորեալ ամս ԺԲ. և ամիսս Է. մեռանի 'ի Բաբիլոն, տուեալ զիշխանութին չորից դայեակ որդեաց իւրոց: Եւ ժառանգեաց զաղեքսանդրիայ և զամ եգիպտոս պտղոմէոս լագեան՝ ամս՝ ԼԹ: Յետ նր պտղոմէոս փիլադելփոս ամս՝ ԼԹ: Սա կոչեցաւ եղբայրասէր, եղեալ այր իմաստուն և բազմախորհուրդ: Կազմեաց գրանոց, և խորհեցաւ հաւաքել անդ զպայմունի գրեանց. որ 'ի վերայ տմ երկրի Կրեաց թուղթս բազում՝ և յօժարեցոյց զտմ թագաւորս երկրի և զիշխանս. զի մի անխոյթ արասցեն առաքել առ նա զտմ գիրս՝ երգողաց, բանաւորաց, ձարտարաց, իմաստասիրաց բժշկաց, պատմագրաց, դիւանադպիր արանց. և որ այլ ինչ գիրք իցեն: Յաջողեցան իրքն, և ժողովեցան գրեանք 'ի յոլով աշխարհաց: Եհարց թագաւորն՝ ցոլում զգրանոցն հաւատացեալ էր, և ասէ քանի գիրք ժողովեալ կան 'ի գրանոցին

Եւ

Եւ նա ասէ. Ճ̄ բեւրք, եւ Ճ̄ հազարք, եւ ըՃ̄. գիրք։ Եւ չե
ւս են եկեալ ՚ի հնդկաց, ՚ի պարսից, յեթովպացւոց, եւ յե
լլենացւոց։ Եւ լուեալ թէ յեհէմ հրէաստանի կան գիրք մծա
շունչք մարգարէից. որք պատմեն յաղագս այ̄ եւ աշխար-
հագործութեց, եւ այլ օգտակար փորձառութիւնք։ Արդ՝ եթէ
համոյ թուի քում բարեպաշտութեդ, գրեա եւ մի̄ այսոցիկ,
զի եւ զայն եւս դիցես ՚ի քում բարեսէր գրանոցիդ։ Իսկ թա
գաւորին ուրախ եղեալ գրէ փաղփաղակի թուղթս՝ օրինակ
զայս։ Թագաւոր Պտղոմէոս՝ փորձառատացդ հրէից խնդալ։
Գրանոց իմ կազմեալ, եւ բազում գրեանս ժողովեալ՝ ՚ի նմա
եդի։ Լուայ, որ գոն առ ձեզ գիրք մարգարէից, որք վա̄
այ̄ եւ աշխարհագործութեն ցուցանեն. եւ առանց նախանձու
ցանկացեալ գրեցի առ ձեզ, զի առաքիցէք զնա առ իս՝ համ
դերձ այլովք, վա̄ սպասուց եւ ոչ քննութե եւ չարախնուե.
խնդրեմ զդոսա՝ օգտի աղագաւ. Եւ որ ՚ի վաղընջուց լեալ
զբարեմտութի իմ՝ զմտաւ ածեալ յիշեցէք. այնպէս անտի
քոս զձեր աշխարհդ աւերեալ՝ բազում գերիս ՚ի մեզ առա
քեալ ՚ի փախձառ. զոր բիւր ոսկւով գնեալ իմ, եւ դարմանել
զանազան իրօք, զկերաւորսն բժշկեցի. զմերկսն զգեցուցի.
եւ յոլով թոշակօք արձակեցի ազատս։ Եւ այժմ սեղան կազ
մեալ ՚ի Ճ̄. տաղանդէ ոսկւոյ՝ ՚ի բազմապատիկ ականց զար-
դարեալ բազում ծախիւք եւ սպասուք, առաքեցի ՚ի պատիւ
տեղւոյդ անուանելոյդ. զի գիտասջիք՝ եթէ վասն աղօթից եւ
բարեպաշտութե զգրեանսդ խնդրեմք։ Առէք զիմ սեղանդ
փոխանակ սեղանոյն, զոր առ անտիոքոս եպղփանէս. ողջ
լերուք ՚ի կամս բարձրելոյն այ̄։

Եւ նոցա ընկալեալ զթուղթն ընթերցան, եւ զընծայ-
ոյն տեսեալ՝ յոյժ ուրախ եղեն. եւ անյապաղ զամ̄ն գրեցին
ոսկի գրով. Իբ. զյայտնիսն. եւ այլ եւս Ժ̄ի ծածուկ՝ Հբ. գիրք
առաքեցին ստուգին։

Իսկ թագաւորին ընկալեալ եւ յեռեալ, ոչ կարացեալ
ընթեռնուլ. զի գիրն եբրայեցի էր, եւ բանքն եբրայեցի.
հարկաւորի դարձեալ գրել օրինակ զայս

Թագաւոր Պտղոմէոս՝ բարեպաշտութե փառասէր-
տացդ հրէից որ յեհէմ՝ յոյժ խնդալ։ Գանձի ծածկելոյ եւ
աղբեր կցելոյ՝ զինչ օգուտ է յերկոցունց։ Նոյնպէս եւ որ
՚ի ձէնջ մեզ առաքեցան գրեանքս. զի մեր ոչ կարացեալ ըն
թեռնուլ, ոչինչ շահիմք. այլ արժանի արարէք առաքել
թարգմանիչս, որ յերիտասարդական հասակի իցեն՝ ազգաւ
հրեայք՝ փորձք եբրայեցի եւ հելլէն լեզուի դպրութե եւ
ամենայն խրատեալք։

Իսկ

Իսկ նոցա ընտրեալ 'ի վարդապետացն արս, ՀԲ, վեց վեց այր 'ի ցեղէ. որպէս արար մովսէս հրաման առեալ յայ՝ Հ. այր առնուլ. և զի մի հակառակութիւն լիցի ժողովրդեանն վեց վեց այր 'ի ցեղէ ընտրեալ՝ Բ. յաւելան 'ի թիւն՝ եղդա- դին և մովդադին. զորս ոչ իշխեաց տանել 'ի լեառն, զի չէր հրամայեալ. որք 'ի բանակին մարգարէացան և նոքա 'ի նոյն հոգւոյ. Եւ 'ի նոյն թիւ խորհրդական առաքեցին. որք թարգ- մանեցին զօրէնսդրական հին կտակարանն 'ի փառս կղզւոյ. որ կայ հանդէպ ծովուն աղեքսանդրու: Որ շինեաց ԼԶ սենեակս՝ զդրունսն 'ի ծովն. և սպասաւորս նշանակեաց ոչ եթող, զի մի խորհեսցին ընդ միմեանս. այլ 'ի ձեղուանանէն երդս լուսամուտս. և սենեակքն՝ կրկնայարկք էին: Եւ եր- կու երկու արգել զնոսա 'ի նմա, երկու երկու մանկունս 'ի սպասաւորութիւն նոցա թողեալ, զի փութով գրեսցեն: Եւ սկսան յարարածոց. և յորժամ վճարէր առաջին զոյգն՝ տային յերկրորդն, և յերրորդն, և յայլն կարգաւ: Եւ այսպէս մի մի գիրք շուրջ գայր ԼԶ. սենեակսն. և լինէր մի մի գիրք ՀԲ. կրկինս, առ 'ի զգուշալոյ զհաւասարին: Եւ գիրք ՀԲ. կրկնէին յայգուէ մինչև յերեկոյ. և. ապա հանէին 'ի ՀԲ նաւակս, և տանէին յապարանսն պտղոմէոսի ընթեռնուլ ընդ- նմա: Եւ նոյնպէս զոյգքն առանձինն նստէին, և 'ի վաղիւն նոյնպէս անդրէն դառնային:

Եւ 'ի վճարմանն նորա թագաւորին 'ի բարձր տեղւոջ, և հրամայեաց ԼԶ ընթերցողացն նստել առաջի և ընթեռ- նուլ՝ զեբրայեցի օրինակն առ ընթեր ունելով. և միւսն ըն- թեռնոյր, և այլքն ամ՝ միտ դնէին առաջի թագաւորին. և ապա միաբանոջէ: Եւ գտաւ ամենեւին միաբան. մինչ զար- մանալ թագաւորին՝ և ասել. գործդ այդ այ պանծալաբարին է: Զի ոչ գտաւ երկբայութիւն 'ի նմ. զի ուր յաւելաւ միոջէն բան, ամենեքեան յաւելին. և զոր եհան մին՝ ամենեքեան հա- նին. և զոր հանին՝ պէտս ինչ ոչ ունէր: և զոր յաւելին, յայտ պիտանացու էր: Եւ զի յայտ լիցին պանծալիքն այ, որ հոգւոյն առաջնորդութբ թարգմանեցին, և առ իրեարս ոչ հաղորդան. զի 'ի բանից անտի յիշեսցուք. 'ի ծն. սաղմոն այսպէս կայ յեբ- րայեցւոյն. աղօթելէ կարթի իմ մայրը բիմառակմը. որ թարգմանին՝ ոչ կարդացի և լուր լինէ, նայեա 'ի ձայն. զաղօ- թից իմոյն՝ Հ ունկն յաւելին: Եւ մի 'ի հանելոցն այս է՝ վարիսէ աղամաթենէ. և այս է բանն. և եկաց ադամ ամս ՋԼ ամ. ամն կրկին էր գրած, սրբեցին զխոշորութիւն Հ ունկն:

Մեծ հաւատով արար զայս թագաւորն, և ամենայն յունաց աշխարհին՝ ևս անուանեցաւ թագաւոր. որ և յու-

նա

[illegible]

[illegible]

չարեալ մը՛ քնի, այլ 'ի կատարումն ոչ եհաս. եկն 'ի կեսարիայ տրպատունեաց, և եկեալ յետ՛ սակաւ ինչ ժամանակս շրջ-եալ անդ. և իջեալ 'ի տիւրոս անդ լինէր և Թարգմանէր զգիրս, յորժամ զ՟Ւ՟ իջեանս և զ՟Բ՟ իջեանս կարգեաց գիրս։ Զառաջին եշն՝ զգիրն և զբանն եբրայեցի. և զերկրորդն՝ զբանն եբրայեցի, և զգիրն հելլենացի. զի որ ոչ գիտեն ըզ-գիրն եբրայեցի, հելլենացի ընթեռնուն հասու լինիցին. յեր-րորդն՝ զակիւղայայն, 'ի չորրորդն՝ զսիմաքոսին. 'ի հինգ-երորդն՝ զ՟Հ՟ իցն. 'ի վեցերորդն՝ զԹէոդոտիոնին. 'ի Է՟ երոր-դըն՝ զհինգերորդ Թարգմանութեան. 'ի յութերորդն զվեց-երորդ Թարգմանութե. զոր ոմանք կարծեցին թէ ակիւղայ և սիմաքոս յառաջ են քան զ՟Հ՟ իցն, այլ ոչ է այնպէս։ Այլ՝ որոգինէս գիտացեալ զճշմարիտն, զ՟Հ՟ իցն 'ի միջին կարգ-եաց. զի աստի անդ իջն յանդիմանեսցին. զայս կարգ պիտա-նացու գործեաց որոգինէս։

Արդ՝ յայտ արասցուք և վասն նշանագրաց, որ 'ի սբ. գիրս գտանի, և նշանց և չափոց. թէ ուստի՞ անուանեցան՝ և յոր սակս եղեն։ Ոմանք զսբ. գիրս ստեղծեցին, և կէսք զառոգանութիւս եդին Երէ Ժ՟ են առոգանութիւնք։ Շեշտ, բութ. պարոյկ. երկար. սուղ. սոսկ. թաւ. ապաթարց. են Թամնայն՝ 'ի ներքոյ կից. ստորատ։ Զհայլն ասպղինարի ասեն թէ՝ զհին գիրսն արուեստախօսեաց, և որդին զնորս՝ 'ի ժամանակս յուլիանոսի. զի քերական էր հայրն, և որդին ճարտասան։ Իսկ աստղն կայ 'ի վերայ կրկնաբանութե՞ որս գինէս եդ. զոր Հ՟ ունքն թողին՝ և այլքն Թարգմանեցին, գրեաց զայն որոգինէս՝ ոչ իբրև զպիտանացու, այլ զի մի՛ այպանեսցեն հրէայք և սամարացիք թէ՝ պակաս է հին գրո-եանքն 'ի մէջ եկեղեցւոյ՝ վասն բանիցն որոշելոյ։ Երէ զայն յայտ առնէ թէ՝ զորօրինակ լուսաւորքդ բնութ. են 'ի հաստատութե, բայց յորեղանէ և 'ի յանդոյ ծածկին՝ և յանէութե ոչ անկանին. այսպէս զօրութ. առեղորդայն ծածկեալ է Հ՟ իցն։ Իսկ յոբելեանն է մասն կէս գրոյ, առ 'ի շեղ ունելով 'ի ներքոյ ստեղս. և ատորիկեցի ընդունան Թարգմանել տեղ. և եդաւ 'ի վերայ Հ՟ իցն յաւելեալ բա-նիցն։ Երէ է ապաթութե. այսինքն՝ ապաստեղու տարակոյսն վասն Թերութե բանիցն։ Իսկ լեմնիսկոսն է 'ի վերայ երկուց առողութեաց նշանն։ Երէ հիպլիսկոսն՝ նշան 'ի վերայ զանազա-նութե բանի. զոր այլ և այլ առք Թարգմանեցին։ Են և այլ արուեստք յիմաստնոց գտեալք՝ Թախծական, ծիծաղական տարփական, վրէնջողական նշան կարգացման, զոր ընկա-լաւ սբ. եկեղեցի։

Այսոքիկ ըստ եպիփանու մեծի։ Իսկ ըստ դաւթի եռամեծի անուանակիր և հոգեկիր առն՝ աստուածերգ և աստուածախօս սաղմոսիս դաւթի է այսպէս։

Անպարագիծ ած եղեն տառից՝ յոգնա արդարոց առանց ձևացելոց՝ զբարութեն կամ զբարկութեն՝ որ առ յապայն յուսոյ մարգարէք անուանեցան. զի յառաջատեսք։ Եւ քանզի անտեսականէ ածոյն՝ ի տեսողաց՝ ըստ ինքնէակ բնութե, բարեբարոյ նոցին սր. արանցն եղանիւր թարգմանել։ Արդ՝ սոցա ոմն զանցեալոց իրաց ըստ ածոյն ազդման յայտնէ զորպէսութի, և ոմն զառայն, և ոմն զներկայն. յանցնւր ժամանակս եղանէլին, որք նաղրէլին, և զգուշագոյնս յածոյն պատուէրանագրութեան յորդորէլին։

Իսկ դաւիթս այս բեթղահէմացի որդի յեսսեայ՝ առաջելագունի հասեալ շնորհի՝ փառաւորեցաւ. և որպ արեգակն ՚ի մէջ աստեղաց պայծառագոյնս մեծապէս փայլէր։ Փոքր ինչ այսպիսի ասցուք. ահա ի վերև խափանածունի առաքեալ փոյթ ըստ այնմ՝, թէ մարգարէութիւնք են խափանեսցին, և եթէ լեզուք՝ լռեսցին, որպ երկրայինք. միայն յածօրհնութիւն ընդ երկնայնոցն պարելով պարուց, զսա միայն ծանուցեալ մշտնջենական արուեստ և անանցականս։ Եւ յայս իսկ ըստ ածառութ շնորհացն մնեալ՝ որպ ՚ի ձեռն. սաղմոսին առէ։ Բարձր առնեմ զքեզ ած իմ՝ և թագաւոր իմ։ Քանզի ոչ ունէր հոգի մարգարէութեն, զի մարգարէացի մարդկան, այլ՝ հոգի թագաւորութեն. որպէս ցնծալից գոհութը օրհնեսցէ եւեթ զթագաւորն թագաւորաց՝ զարքայն երկնից. որպ ՚ի նէ. սաղմոսն առէ, թագաւորութիւնք երկրի օրհնեցէք զած. սաղմոս ասացէք ան համբարձելոյն ՚ի յերկինս երկնից ըն արևելս։ Եւ որպ առաքեալքն ան զառաքելութեն ունէին հոգի. զի ըստ ընտրութեն առաքեալք էին, և ոչ մարգարէք. այլ շնորհօք և մարգարէանային և ՚ի լեզուս խօսէին։ Նոյնպէս և դաւիթ ըստ ընտրութեն՝ ոչ մարգարէ, այլ թագաւոր բայց շնորհօք և մարգարէանայր զմեծամեծս այ. վասն զի մի է զօրութի հոգւոյն, թէպէտ և բազմադիմի են շնորհքն։ Քանզի երբ օծ առէ զդաւիթ որդի յեսսեայ՝ ոչ մարգարէ, այլ թագաւոր. և այնչափ շնորհալից եղեալ թագաւորական օծմամբն՝ յորդութը և սիրով սր. հոգւոյն. մինչ և զմարգարէութի հասեալ ժառանգեաց։ Վասն այսորիկ եբրայեցին ոչ առեալ կարգէ զսա՝ և զորդի սորա՝ զսողոմոն ՚ի մարգարէս, այլ ՚ի սրբագիրս։ Այսպէս և ինքն դաւիթ յապաշխարութեն սաղմոսին խոստովանի ասելով ցած. եթէ հոգւով պետութեն քո հաստատեա զիս, որով ուսուցից ան-

րէ

ընկալոյ զձեռնադրս քո Պետրոսի հոգի, յայտնապէս զթա
գաւորութե հոգւոյն ասէ։ Արդ՝ էառ ասէ սամուէլ զեղջիւր
իւղոյն, և օծ զդաւիթ՝ թագաւոր, հրաւիրանաւ իբր կատար
մամբ. և խաղաց 'ի վերա նորա հոգի յօրէն յայնմանէ։

Իսկ առեալ ապա դաւթի զհոգին, ածատուր իմաս-տութբն առնէ երգս ածօրհնութե՝ նուագս անուշարար սաղ-մոսաց՝ ըստ դիմաց դիմաց. որ զի ցնծալից բերկրանօք՝ ոչ բանիւ միայն, այլ և նուագաւոր երգով ձայնիւ զպարտս բա-նեղէն պատարագացն հանապազ նախնիս և խոյրիս հանցէ ածն։ Տեսա՝ 'ի ջերմն և յեռանդնոտ առ ած սիրոյն՝ այնքան յաղթեալ, մինչ զի և բնականաւն ոչ շատացեալ նիւթեան ձայնիւն առ 'ի յօրհնել. այլ առեալ 'ի ձեռն փայտ և աղի, և ձեռնարարապետել առնէ գործի օրհնութե։ Որ զի անասուն մատամբք ձեռաց՝ 'ի ձեռն հնչման գործւոյն՝ բանին կցոր-դեսցէ յածօրհնութիւնս. և այնու հեշտալի հոգւոյն հնարեւ զեղգեղեսցէ զածայլն երգն, ըստ եօթնարփեան շնորհաց հո-գւոյն. որ նախաժամանեալ օրինակաբար 'ի վր նորա հանգ-եաւ. որ յարմատոյն յեսսեայ բղխեալ ծաղիկն. և այնինչ ա-հա գաւազան ծաղկեալ՝ սկիզբն թագաւորութե յազգէն յու-դայ՝ է. աղի յարմարելով քնար, և է. անգամ յաւուր նո-վաւ նուագէր դաւիթ ածն։ Զայս է. շնորհաց աւանդութի ք մարմնոյ սուրբն ուղին. յն առեալ տայ եկեղեցւոյ իւրում. զի ընդ նմա միանգամայն կատարելապէս զյաւիտենիցըն թա-գաւորեսցեն զթագաւորութի։ Վասն այսր խորհրդեան դա-ւիթ մեւս եւս այլ կազմէ գործի, ժ. ուաներով աղի՝ ք ամենա-կատար տասնեկին, 'ի նոյն խորհուրդ ամենակատարութե. զոր և յառաջաբերութենն սբն՝ սաղմոսարան կոչէ, այսինքն նուա-գարան. զոր ամենք անգիտաբար՝ տաւիղ կարծեն։

Այս երկոքեան գործիք են սրբոյն դաւթի. որովք միշտ զսբ հոգւոյն հնչեցուցանէր առաջի ածն. և նշանակէր. որ առա ցաւ, է. աղի քնարն՝ զեօթնարփի շնորհս հոգւոյն. որ գալով 'ի մարդն՝ բոլորովին հոգւոյնացուցանէ զհոգի, և զշունչ, և զմարմին. որովք լցեալ լինի թիւ տասնեկին, զոր նշանակէր տասնաղի սաղմոսարանաւն յօրհներգութի ածն։ Զի այսու օրինակաւ և յառաջ իսկ քան զդաւիթ վարժեալ էին մար-գարէքն՝ այսպիսեաւ երաժշտականութբ յօրհնութիւս ածյ. Եւ առ մովսէսիւ մարգարէ քոյրն ահարոնի՝ և թմբկաւ նուագէր և պարէր ածն 'ի կարմիր ծովուն։ Եւ սամուէլի զսաւուղ օծ-եալ՝ դիպեսցես ասէ պարու մարգարէից 'ի բամայ իջելոց, և առաջի նոցա սրինգ, և թմբուկ, և փող, և քնար, և նոք-եանք մարգարէացեալք. և խաղասցէ 'ի վերայ քո հոգի ածն,
և

և մարգարէասցես ընդ նմա, և դարձցիս յայր այլ: Եւ ոչ միայն նուագէին, այլ՝ պարուք ևս պարէին: Եւ եթէ ոչ գիտէր նուագել, որ մարգարէն էր, զայլ ոք կոչէր նուագածու. և նուագելով՝ գայր հոգին ՚ի վերայ մարգարէին և մարգարէանայր: Կոչեա ինձ սաղմոսասաց ասէ Եղիսէէ ցյորամ արքայ իսրայէլի՝ և ցյոսափատ արքայ յուդայ ՚ի նոցանէ հարցեալ. եբեր ածին և նուագեաց նուագարանաւն եկն ՚ի վերայ եղիսէի հոգին՝ և մարգարէացաւ նոցա վասն ինքնագնաց ջրոյն յանապատին՝ և յաղթութեան ՚ի վերայ մովաբացւոցն։

Եւ ես՝ ինձ թուի այսպիսի երաժշտականութիւն մարգարէին սրբեալ, այսր աղագաւ. քանզի յանշունչ կուռսն մոլեալ մարդիկ՝ նուագարանօք միշտ և աստուածայական սաղմոսարանաւ անդ շուայտեալ պարէին։

Արդ՝ այսպիսի ինչ ամենիմաստ փրկչին հոգին հնարեալ, որպէս զի նովին նախանձու նուագերգութեամբ՝ զանձայլն սաղմոս պարելով՝ յօժարագոյն յորդորմամբ յանդգնութեն հաւատոց, քաղցր՝ ախորժ, և հեշտալի երգովք զվայրենամիտս թերևս որսայցեն, և զկորուսիչ դևսն ՚ի նոցանէ ՚ի բաց մերժեսցեն: Զայն զայս արուեստ ՚ի կոչումն սբ. հոգւոյն և հերքումն պղծոյն՝ այսպէս զնա հրահանգէր. որպէս ՚ի սաւուղէ սբ. հոգին օծմամբ հեռացեալ, և ՚ի տաճարէն ունայնացելոյ մնեալ որջացաւ պիղծ հոգին։ Եւ առեալ ասէ դաւիթ զքնարն հոգւոյն՝ հնչեցուցանէր, և դևն այն ՚ի բաց հալածէր. և զի երկոցունցն այսպէս աջողակ եղեալ ծածառուր հնոր հօր, մինչ զի պարսիւք և աղեղամբ զերևելին՝ և սաղմոսարանաւն զանդերևոյթ թշնամին պարտեալ հերքէր՝ ընդ այս և զբանսէլի այլս ոչ: Սակայն և խորհրդաբար երիցս անգամ ընդ առաւելագանցութեան շնորհաց՝ զթագաւորութեան օծումն ընկալաւ սա. զնախնին հրաւիրանաւ ՚ի տան հօր իւրոյ, որով զշնորհս սբ. հոգւոյն ընկալաւ. և միւս ևս ՚ի քեբրոն՝ յորժամ թագաւորեաց ՚ի վերայ յուդայ. և զերրորդն՝ յորժամ ՚ի վերայ ամենայն իսրայէլի և յուդայ՝ յերուսաղէմ թագաւորեաց: Եւ բազում նուագս հոգեպատում սաղմոսաց՝ ըստ դիպաց դիպաց՝ և ըստ պիտոյից պիտոյից արար սա, և յառաջ քան զթագաւորելն՝ և ՚ի թագաւորելն իւրում մինչև ցօր մահուան իւրոյ. որ ասաց ՚ի տարրական լէ. երրորդ սաղմոսին՝ մանուկ էի և ծերացայ. որով իմանի թէ՝ և ՚ի ծերութեան սաղմոս ասացեալ է սորա. սակայն ոչ օրէնս է ամենայն մարգարէիցն, ասել առ յայն ինչ՝ որ առաջի կայր տեսութեան։ Իսկ ամենատես ակն սբ. հոգւոյն՝ թափանց անցանէր յապայն և ՚ի

հան

հանդերձեալն. զծնունդ գուշակելով զՔն և զԹագաւորութիւն. զաւետարանին ծաղկազարդ քարոզուի, և զամբարշտութեն 'ի բաց բարձումն. զտարագրութի ազգին առ 'ի նա յանդգնելոյ, և զընտրութի եկեղեցւոյ. զկոչումն հեթանոսաց. և զառ 'ի քն ընտանութի. զնորին իսկ զկամաւոր տնտեսութի և զկատարումն. զչարչարանս` և զմահն, զԹաղումն, զյարութին զհամբարձումն յերկինս, և զահաւոր գալուստ նր. զնորոգութի արարածոց, և զդատաստանին յօրինուած, և զկատարածն ամի: Եւ ևս առ այսոքիւք` անդէն իսկ զԹշնամեայն 'ի մի յարուցումն, և զազգին վտարանդութի` որ վասն կռապաշտութե ը. ժամանակս ժամանակս 'ի մի էր յառնելոց. և յայնմանէ որ զբժշկութի չարեացն միասնգամ, և զչարչարողացն կրկին հատուցումն:

Զայս ամ և այսպիսիս 'ի բացում հաւաստի տեսեալ նր հոգիակիզ աչօք տաւղին, 'ի լուսաձեւ նուագսն հնչեցուցանէր: Սակայն բազում սաղմոսք ծածկեալ է սորա, որ և այլ մարգարէիցն մարգարէութիւքն. որպէս զա. տասնքն սաղմոսն, և ճա. օրհնութիւքն:

Եւ ամենայն 'ի բաւականութե եկեղեցւոյ պահեցաւ սաղմոս ՃԾ. որք զանազան ունելով վերնագիրս` կարծեցուցանեն առ անփորձսն, այլոց` այլ ուրուք զնս ասացեալ, որ ը երգեցողացն. և են` որ արտաքոյ նր Գանդի ունի ըստ երգեցողացն այսպ. դաւթի. որդւոցն կորխայ. ասափայ. եդեթումայ. մովսեսի. սողոմոնի. ալէլուիայ. անանուն. և են որ անվերնագիր:

Իսկ են` որք յայլոց այլադոյն ձեւով դրոշմեալ` զնոյն երեմիայի եզեկիելի` անգեայ` զաքարիայի, ժողովողեանն` և առաջին գերելոյն, և աղօԹք աղքատի, և որ այլ ինչ. զոր փոքր 'ի շատէ զհետ երԹեալ` զհանգամանսն ցուցից` ոյ տալով: Եւ այս` ը մեծին դաւթի:

Բայց սքանչելին աԹանաս` այսպ հրամայէ:

Ամ գիրք ամ այլինք` որ շնորհեցան մեզ 'ի հոգւոյն սբյ 'ի հին և 'ի նոր կտակարանս, 'ի շահ օգտութե հոգւոց մերոց են. այլ մտոք իւրաքանչիւր գրոյն` պատմեն զիւրոյ գիտացն առաջի արկեալ իրս. երբեմն պատմելս առնեն, և երբեմն մարգարէանան: Իսկ սաղմոսն` իբրև զիւր բանս և զաղօԹս և զկն յլուրաձուս մատուցանէ. և իբրև 'ի հայելւոջ տեսանէ իւրաքանչիւրոք` զիւր ոգւոյն, և սրբէ, և ընտրէ, և մաքուրս գործէ: Ոչ ոչ յարարածսն զայլոց խօսս պատմէ, եԹէ ամ խօսէր` և մովսես տայր նմա պատասխանի. և դարձեալ եԹէ խօսեցաւ նր ը աբրահամու` կամ ը յեսուայ` կամ այլոցն

Այլ

Այլ 'ի սաղմոսին՝ ո՟ր թէ մարդ ինքն զիւր բանն խօսի ը՟
ա՟յ, և ա՟ծ ընդ մարդոյն. ո՟ր 'ի տասն սաղմոսն ասէ՝ 'ի տէր
յուսացայ. և 'ի ժզ. լուր տ՟ր արդարութ՟, և 'ի ծ. ողորմեա ինձ
ա՟ծ ըստ մեծի Զօրօրինակ, եթէ յանծանօթից ոք կամի-
ցի մտանել առ թագաւորն՝ և երկրպագել նմա, և զոք 'ի
տեղեկաց՝ առաջնորդ իւր կալցի, և ըստ խրատու նորա ար
արեալ զա՟մ ընդ սիրելիս թագաւորին կարգեսցի. ապա թէ
մնացանէ ը՟ խրատ նորա, անարգանս կրեսցէ։ Այսպէս եթէ
ըստ մարմնեղէն վարուց փոխչլին մերոյ՝ ոք կամեսցի գնալ՝ և
նմանել ա՟յ՝ և առ նա մտանել, համ՟երութ՟ մատիցէ յերգս
սաղմոսիս. զի ա՟մ օրինակաւ պատահել կարասցէ բաղձալեացն

Վասն զի ա՟մ գիրք ածաշունչք և օգտակարք՝ յաղա-
գս այնորիկ շարագրեալք եղեն 'ի հոգւոյն սրբոյ, զի իւրա-
քանչիւրոք իւրև 'ի հասարակաց բժշկարանէ զօգուտն իւր
հանիցէ. քանզի բժշկութ՟ ասէ՝ դադարեցուցանէ զմեղս մե-
ծամեծս։ Արդ՝ այլ ինչ մարգարէքն խրատեն, և այլ պատ-
մողք՝ և օրէնքն. այլ և՝ այլ առակք՝ առ՟ իցն խրատութիւք են
իսկ սաղմոսացն գիրք՝ յամենեցունց զօգտակարն առնէ. մ՟ր
զի մարգարեանայ զհանդերձեալսն. պատմութիւն յիշեցուցանէ.
օրինադրէ կենցաղումս. և բովանդակն շտեմարան է հասարա-
կաց բարեաց. յարմար իւրաքանչիւր ումեք՝ 'ի հոգւոյն ս՟բ
հոգացեալ։ Զի զհին վէրսն բժշկէ, և նորախոցիցն՝ արագ
'ի վ՟ր ածէ զողջութ՟ի. զանախտն՝ 'ի նոյն պահէ, և զ՟ր իւրա-
քանչիւր կենցաղոյս՝ զանազանաբար զօրանայ։ Եւ քանզի
ետես հոգին ս՟բ զազգս մարդկան՝ դժուարաւ եկեալս
յառաքինութ՟ի և պղերգացեալս յանձին փրկութ՟ յաղագս
'ի պէսպէս ցանկութիւս մտանելոյ, նուագս անուշութեան խառ-
նեաց 'ի խրատական բանս սաղմոսիս. զի նուագօքն քաղց-
րացեալք՝ զանխլաբար ընկալցուք զօգտակարսն. ո՟ր իմաս-
տուն բժիշկ կրծու դեղ տալով հիւանդին, մեղու զքա-
ղցրութ՟ն օծանէ. մ՟ր զի բռնադատեալ ուսումն՝ ոչ ընդունելե-
ցաւ յարամնալ։

Արդ ուսանիցուք զառաքինութ՟ն զօրինակն, զապաշխա-
րութեան զյարացոյցն, զհամբերութ՟ն զչափն. 'ի սմա ա՟ծաբա-
նութ՟ն կատարեալ. զուշակութ՟ն մարմնով գալստեանն ք՟ի.
երկիւղ տանջանաց. սպառնալիք դատաստանին. աւետիք փա-
ռաց. ա՟մ ինչ բարւոյ իրի ցուցական տեսակ։

Արդ՝ ամենեքեան որք ցանկացեալ են երանութ՟ հոգ-
ւոյն ս՟բ, և զականջս հոգւոյ իւրեանց՝ առ 'ի լսել երգոյս դաւ-
թի կազմեալ են, հետևեսցեն յա՟մ գործոց՝ որ ոչէ հաճոյ հոգ-
ւոյն ս՟բ։ Յորս և մեք ապաւինեալք 'ի շնորհն՝ որ աստ ծած
կեալ

կեալ կան. և նպաստաւորեալ 'ի հոգեխառնութէ որ հոլովմա-պետոյն՝ եպիփանու, աթանասի, բարսղի եփրեմի, և զանի ելի. որք եօթանասունքն՝ հոգւոյն մովսէսի, և եղիշէ 'ի յեղինջի.

Ընկեսցուք այսուհետև 'ի սկիզբն սաղմոսին՝ որ ասէ.





Գիրք Սաղմոսաց Դաւթի ։

ՍԱՂՄՈՍ. Ա

ԵՐԱՆԵԱԼ Է ԱՅՐ ՈՐ ՈՉ ԳՆԱՑ ՚Ի ԽՈՐՀՈՒՐԴՍ

Ամպարշտաց. ՚ի ճանապարհի մեղաւորաց նա ոչ եկաց, և յաթոռս ժանտից ոչ նստաւ ։

Բայց նախ խնդրեսցուք՝ եթէ զի՞նչ է առանձին պատճառ առաջնում սաղմոսիս։ Արդ՝ վերնագիրն զայս միայն ասէ, սաղմոս ՚ի դաւիթ. Զայս ցուցանէ թէ՝ որ հոգին զայս սաղմոս ասաց ՚ի դաւիթ բնակեալ. քանզի թարգմանիչքն զայս և զերկրորդ սաղմոսն անվերնագիր գտին՝ երկիւղածութեամբ յանձինս իւրեանց՝ ոչ իշխեցին յաւելուլ յանձնէ վերնագիրս ինչ։ Իսկ դէմք սաղմոսիս մի կարգաց հաստատեալ է ըստ նմին և մի գործոց։ Զի ամբարշտաց զանհաւատսն ասէ, և զհաւատացեալսն երանէ ասելով՝ երանեալ է այր։

Զի օրինօքն ոչ որք արդարանան, զի ընդ անիծիւք էին. այլ և ոչ օրինօք մարմնոյ՝ որ են յանդամս մեր. այլ՝ հաւատովքն այն աբրահամունն։ Երանեալ է.

Շինողք՝ ըստ մեծութեն կամարաձոյն շինածոյն՝ զուգարանեալք բարձրութե զհիմն յարուցանեն. և նաւակառուցքն՝ բեռնաբեր կառուցանելով նաւ՝ ըստ պատշաճի ծանրութե զողնափայտն կառուցանեն. և ՚ի լինելութե կենդանեաց՝ նախ սիրտն գոյանայ, և ըստ սորա զուգարանի՝ շրջակայ մարմինն մեծ և փոքր։ Արդ՝ որպէս հիմն տան, և ողնափայտ նաւի, և սիրտ կենդանւոյն. այսպէս բոլոր մեծութի և ընդարձակութեի սաղմոսին՝ դրունակեալ այս նախաշաւիղ։ Քանզի բարոյ և

աշխատելի և բերք քրտամբք և վաստակօք լցեալս՝ հանդերձեալ էր խրատել զմարդիկ, յառաջնոց, և առաքինութեան նահատակացն զվարձն խոստացաւ՝ զերանութիւն. ոչ զի յուսով բացակայ բարեացն՝ անտրտմաբար զկենցաղոյս վիշտս բերիցեմք: Այսպէս զուղղեգնացին զդժուար և զխոշոր ճանապարհին զաշխատութիւն թեթևացուցանէ յուսացեալ օթևանին մխիթարութիւն. և վաճառականացն համարձակէ 'ի ծով՝ շահիցն յոյս. և զերկրագործականին զաշխատութիւն գործնոյ պտղոցն շահ: Ուստի մեծ վարդապետն հոգևորաց՝ հոգւոյն ոք՝ իմաստաբար զվարձս առաջի էարկ, զի յերանելի կատարածն հայեսցին, և մի 'ի վաստակն:

Արդ՝ է տիրապէս երանելի ած, ճշմարիտ բարին՝ ըստ առաքելոյ. զոր տայ փրկչին վերայայտնութեան. երանելին ասէ և միայն հզօրն՝ թագաւորն թագաւորաց, որ նոյն ինքն է բարին. որում ած՝ ոք բաղձայ. առ որ ած՝ ոք հայի. անփոփոխելի բնութիւն. անկոյծ կայուն. անտրտում հանգիստն. բղխեալ աղբիւրն. առանց մախանաց շնորհքն. անծախելի գանձն. զոր տայ աննախանձաբար՝ պատկերի իւրում աղամայ, զոր կորոյս մեղօք. և 'ի լրման աւուրց՝ որդւն ած՝ այսրէն տայ ողորմութեամբ, 'ի լերինն նստեալ՝ խոնարհացն հոգւով:

Ո՞ զարմանալեացս՝ թէ զիա՞րդ նմանի դաւիթ ած իւրում, և ուստի յո՞ ձգի մարգարէական հոգւովն, և նման նմա բարբառի. այլ որ ցուցանէ թէ՝ ո՞չ լինի մարդ ածախառն և թագաւոր՝ յաշխարհն հանդերձեալ. և դաւիթ զօրինակ սրբելոյ հոգւոյն՝ և ելանելոյ 'ի նմանութիւն ած՝ ը պօղոսի. համառօտեալ է ած՝ որ կոչեացն զմեզ 'ի հաղորդութիւն:

Արդ՝ երանելի է այր որ ոչ գնաց 'ի խորհուրդս ամպարշտաց.

Եւ զիա՞րդ դիտասցուք՝ որ ոչ գնաց 'ի խորհուրդս. Խնդրելի է թէ՝ զիա՞րդ զայրն միայն երանէ: մի՞ թէ կանայք առաքինիք զկին յերանութենէ. ոչ է զայս ասել, զի մի բնութիւն է առն և կնոջ. ոչ 'ի լինելութեան ասէ՝ արար ած զմարդն 'ի պատկեր իւր, արու և էգ արար զնո. յայտ է թէ՝ առաքինութիւն նոյնպէս պահանջի, և վարձն նմանապէս զոյգ բնութեան. վասն զի այրն գլուխ է կնոջն, գլխոյն է անդամոյն խօսի. ոչ մեք մեր գլխոյն քինէ ասեմք փրկեալս և կենդանի. զի 'ի պսակեալ գլխոյն՝ և անդամքն պսակեալք լինին և խնդացեալ. ոչ եկեղեցւ՝ մարմին քն. Արդ՝ զ'ի միոջէ բնութէ գոյացեալսն՝ բաժանման համարի յիշխանականէն թողել և անուանել. և բացարձակ է այրն՝ հրէի և հեթանոսի, ծառայի և ազատի, ճոխի և աղքատի: Զոր

Զարմանալ արժան է, զիա՞րդ իւրաքանչիւր բաղձս ա-ւանդիւք է լցեալ. զի ոչ ասաց՝ երանեալ է այր՝ որ ոչ գնայ, այլ թէ՝ որ ոչ գնաց. զի որչափ 'ի կենդանութեան է՝ ոչ է երանելի յաղագս անյայտութեան ելիցն. իսկ որ վճարեաց զկեանս զայս, այն ահա զգուշութք երանի։ Եւ ընդէ՞ր երանի՝ ոյք գնան յօրէնս տն. զի գործելով զբարին՝ նովիմբ զհաճելին ունին. իսկ որ 'ի մեղաց միանգամ կամ՝ երկիցս խոտորի, ոչէ գովելի, թէ ոչ 'ի լաւն վախճանեսցի։

Եւ ընդէ՞ր ոչ զուգելն առաքինութե երանէ, այլ զայն՝ որ ոչ արար մեղս. զի այսպէս ձի և եզն և քար երանելին. զի ո՞ 'ի նոցանէ գնաց 'ի խորհուրդս ամբարշտաց, կամ նստաւ յաթոռս ժանտից։ Իմաստաբար արար մարգարէս. զի թէ զկատարեալ բարիսն էր երանեալ, ոչ այնքան վստահացեալ էին մարդիք. այլ գիտելով թէ՝ սկիզբն 'ի բարին համբառնալոյ՝ խոտորիլն 'ի չարէն է։

Եւ դարձեալ՝ զի զկնի բերէ, այլ յօրէնս տն են կամք նր. Քանզի սանդղոց նման է առաքինութի. այնր սանդղոց՝ զոր յակոբն եսես. որոյ վերջին մասն առ երկրաւս էր, և գլուխոյն առ երկին ահաձգեալ. զի դեռ եկեալքն յառաքինութի՝ զգարշապարն յառաջին աստիճանն դնիցեն, և ապա մի ըստ միոջէման։

Արդ՝ երիս էարկ առաջի խրատ. ոչ գնալ 'ի խորհուրդս ամբարշտաց. ոչ կալ 'ի ճանապարհի մեղաւորաց. և ոչ նստել յաթոռս ժանտից. բնութն իրացն զհետ գնաց. զի խորհիմք նախ, և ապա՝ 'ի խորհրդսն մնամք, ապա՝ հեշտանամք նստելով։ Առաջին՝ երանէ զխորհուրդսն մաքուր ունել. զի սկիզբն ախտից 'ի սրտէն է. անտի ելանեն խորհուրդք չարք՝ շնութիք, սպանութիք, գիջութիք, ասաց տէրն. Իսկ ամբարշտութի, յոծ մեղք է. մի լիցի երկբայել ումեք յոյ անհաւատութք՝ և ասել. արդեօք է՞ ած յերկնի՝ անօրինելով զամ. և ընդէ՞ր արդարք աղքատանան, և մեղաւորք ընչաւէտանան. սոքա տկարանան և նք զօրանան. սոքա անպատիւք, և նք փառաւորք, անկարգաբար ամ ի՞նչ և դիպուածով յառաջանայ առանց վերակացուի. եթէ զայս ասէ ոք, գնայ 'ի խորհուրդս ամպարշտաց։

Արդ՝ երանեալ է՝ որ ոչ էառ կարծիս երկբայութն յաղագս այ, և ոչ եղև կարծամիտ վս արդար դատաստանի նր՝ որ այժմ ոչ երևի։

Երանեալ և այն՝ որ ոչ գնայ 'ի ճանապարհս մեղաւորաց. զի ճանապարհ ասին կեանքս այս, յաղագս առ կատարածն փութալոյ ամ ծնելոց։ Ոպ 'ի նաւի ոք 'ի քուն կայցէ,

և

և նոյն հողմով վարեալ 'ի նաւահանգիստն հասանիցէ. թէ պէտ և նա ոչ իմանայ: Նոյնպէս և մեր կեանքս՝ որ 'ի շարժմանէ իմեքէ ընթանայ առ իւրաքանչիւր ընտանի կատարածն. զի թէ 'ի քուն կամք, անցանի ժամանակն. և թէ արթուն անպարապ մտօք՝ և այնպէս ծախի ժամանակն:

Դարձեալ՝ ուղեգնացն զոր ինչ զկնի թողու. տեսանէ 'ի ճանապարհին տունկս՝ բանջարս՝ ջուրս, թերևս սիրելիս բարեկամս՝ ծանօթս, փոքր ինչ զուարճանայ, և ապա թողու և անցանէ. դարձեալ՝ պատահէ քարանց, ձորոց, փշոց, դետանոցաց, թերևս գազանաց, սողնոց, և սակաւ ինչ տրտմիցի, և ապա զայն ևս լքանիցէ: Այսպէս կենցաղս այս. ոչ վայելչականքն մնացականք են, և ոչ տրտմականքն. Ճանապարհն ոչ է մեր, և ոչ մերձակայ գոյքս. 'ի ճանապարհն առ̅ջի հետն շարժեցաւ 'ի գնալն, ապա՝ զկնի քայլն մոռացաւ, և այնպէս կարգեալն: Զերկիր այսօր դու գործեցեր, վաղին այլ ոք. և զկնի միւսն, և ապա այլում անցաւ:

Արդ՝ երանի, որ ոչ յամեաց 'ի ճանապարհի մեղաւորաց: Երկու են ճանապարհք վարուց, և երկու առաջնորդք. միոյն՝ լայն և ընդարձակ, և առաջնորդ սատանայ. իսկ միւսն նեղ և զառ'իվեր, և հրեշտակ բարի ուղղիչ առ երանելի կատարածն, և Քս առաջնորդ է: Արդ երանեալ՝ որ ոչ խոտորեցաւ առ 'ի հեշտութե խաբկանս՝ առ 'ի կորուստ. այլ՝ համբերութեամբ ընդ նեղն երթիցէ Քի հետևելով՝ 'ի կեանսն յաւիտենից:

Ե. յաղագս ծանօթից ոչ նորոց:

Ոչ զայս աթոռս ասէ, յորս փն մեր մարմինքս հանգչիցին. զի աստ ոչ լինի փոխիլ և չարանալ. այլ զի հաստատուն մնալ 'ի չարիս՝ կոչէ աթոռ: Քանզի՝ հնացեալ ախտիւք՝ և չարութե վարժութե ժամանակաւ հաստատեալ՝ դժուարալուանալի է:

Զժանդախտն ասէ՝ յորժամ 'ի մարդ կամ յանասուն մերձենայ, փոխադրութբ յամ մերձաւորսն ճարակի. զի բնութե ախտն է. այսպիսիք են ամ անօրէնութե գործօնեայքն՝ երկրաց չարեաց և մեղաց պատճառք լինին, հիւանդակից լինին և 'ի միասին կորնչին. զի փութան պատիկք և մեղաւորք զյոլով հաղորդս առնել ինքեանց, զի հաւասարութբ չարեացն փախիցեն 'ի թշնամանացն:

Արդ՝ ամբարիշտ են, որ կաց երկիրպագանեն. և մեղաւորք են՝ որք օրինօք և հաւատովք են՝ և մեղանչեն սրտկութբ, չնութբ, գողութբ, և աղտեղութբ ապականեն զինք-

եանս

եանս. և ժողովք են, որք չարեաց նորայունից դատեալք են. արուհամոլութե՝ անասնամոլութե, և այլոց չարեաց. զոր և այլոց ահանսեն զերեանց գործն ուսանին՝ յանհերելի պատուհաս անձանց՝ յօրն դատաստանի:

Դարձեալ՝ զիշխանութի աստ աթոռ, ոչ թէ թագաւոր լցէ աշխարհաց, կամ դատաւոր ազգաց, կամ գլուխ զօրաց, կամ առաջնորդ ազանց, և պիղծ ախտին զանդել լիցեն. ոչ ցանկալի է նը̅ ձոխուլ բաղմաց, նոյնպս և գործ նը̅ բաղձալի է յաղագս պայծառ կենայն: Այլ՝ որ փոխանորդ լինին չարաց աթոռոյ, զի մի կորիցեն. մի փոխիցեն զչարիս նը̅ զի երանելիք լիցեն. եթէ ախտացան խորհրդով, մի գնասցեն ճանապարհաւ. եթէ այսու և սովորեցին, մի հաստատեսցին և նստիցին. զի մի զրկեսցին յերանութէ յաստէ յայսժմանէ, և անհերելի տանջանացն մասնեսցին: Այլ զկնի երթիցուք մարգարէին՝ յօրէնս տն̅ խորհելով:

Երրայեցւքն ասեն թէ՝ յորժամ հօգաւ սահուղ առգլուխն, և գնաց 'ի խորհուրդս և 'ի ճանապարհս դևութին, և հանդեր 'ի ժանտ աթոռս նը̅, ասաց դաւիթ զսաղմոս զայս

Դարձեալ՝ առ նախաստեղծն հայի բանս, որք աշակերտեցան օձին. բայց ունի այլ իմն ազդումն: Այմ մարդ յերիս բաժանի. 'ի մարմին՝ յոգի՝ և 'ի միտս. նոյնպ և վաստակք իւր յերիս. գնալն 'ի խորհուրդս՝ հոգւոյն է. և կալն 'ի ճանապարհս՝ մտացն. և նստելն՝ մարմնոյն: Վկայէ և սողոմոն. լաւ է տեսանել աչաց՝ քան զգնացս հոգւոյ. որ 'ի ճանապարհս մեղաւորաց զկայ առնու, 'ի գնացից մտացն դադարէ, և գայ 'ի գործել: Իսկ՝ աթոռ ժանտից, որ անկանի 'ի յուսահատութի յեայի մեղսն:

Զառաջին պտուղ մարգարէութեն լուրյ քրիստոսի մատուցանէ դաւիթ, այնմիկ՝ որ ծնանելոց էր 'ի նմանէ. և զերանութիս այնոցիկ՝ որ յուսացեալ են 'ի նա. և երանելի կոչէ զայնոսիկ, որ ոչ գնացին 'ի խորհուրդս դպրացն, և 'ի ճանապարհս փարիսեցւոցն, և ոչ նստան յաթոռս քահանայապետոյն:

Այլ յօրէնս տն̅ են կամք նորա. և յօրէնս նորա խորհեսցի նա 'ի տուէ
և 'ի գիշերի. և եղիցի նա իբրև ծառ, որ տնկեալ է 'ի գնացս ջուրց:
Որ զպտուղ իւր 'ի ժամու տացէ, և տերև նը̅ մի թափեսցի. և զա̅մ
զոր ինչ արասցէ, յաջողեսցի նմա:

Ոչ միայն 'ի ժամանակն հրամայէ 'ի բաց կալ, այլ՝ զտիւ և զգիշեր յօրէնս տն̅ խոկալ՝ նման մովսեսի հրամայէ. որ ա-

սաց

սաց եղիցի պատգամս այս 'ի սրտի քո և 'ի բերան քո՝ 'ի նստել
'ի տան, 'ի գնալ 'ի ճանապարհ. զի ոռոգեսցիս ոպ̃ ծառն՝ որ
տնկեալ է 'ի գնացս ջուրց: Զի հոգւոյն սր̃յ են օրէնք. զոր
Տ̃րն զիւրն բան՝ որ հոգի և կեանք՝ 'ի ջուր անուանէ առ
սամարացին. և դարձեալ թէ՝ ոք ծարաւի է, եկեսցէ առ իս
և արբցէ. և գետք 'ի նմանէ գնան՝ յայլս: Այնպիսին ըղ-
պտուղն 'ի համեղերձեալն տայ, և սաղէն տերև յուսոյն ոչ
թափի, և ամ̃ բարիք յաջողեսցին նմա:

Յօրէնս տ̃ն խորհելն, իբրև զաչքն ձկեայ՝ որք մտանեն
առ մուխէս, ազատ գոլով յորթոյ անոփ. և ոչ իբրև զաքա-
ալք և աքար, որք խոտեցին զօրէնսն մուխէսի և զյեսուայն.
որ ոչ տնկեցան մերձ 'ի ջուրս՝ իբր զղաճիթ և զեզեկիայ և
զյովսիայ: Օրէնք զաճեցուցանեն ասէ. և զի կրկին ասէ թէ՝
յօրէնս նր̃ խորհեսցի. քանզի չէ սոսկ գիր, այլ հոգի:

Փայտ 'ի գնացս ջուրց՝ քս̃, լո̃ սողոմոնի. փայտ կենաց
է ամենեցուն՝ որ պատսպարին 'ի նա, և որ յենուն 'ի նա:
Եւ՛ տնկեալ է 'ի գնացս ջուրց, որք հաւատան 'ի նա՝ ամ̃ ու-
թեք է տրն, յայտ է՝ ուր աճեցաւ նր̃ է. պտուղ՝ հաւատ
ողջ. և տերև՝ լրումն պատուիրանեն, որ զարդարէ զհաւա-
տըն. և նման լինի քեզ, յորժամ՝ նորոգեսցէ զմարմին խո-
նարհութեան մերոյ՝ լո̃ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց:

Որ խորհի յօրէնս տ̃ն, ոչ գնայ 'ի խորհուրդս ամ-
բարշտաց: Որ խորհի 'ի ասէ, զի ուր հոգւոյն օրէնքն է՝
հոգին անդ է. և ուր է՝ ուր յիշումն տ̃յ կայ: Որ թէպէտ
աշխարհական գործոյ վերակացու է՝ որ է գիշեր, ոչ լինի
նմա խաւար, ոպ̃ և ոչ դաւթի:

Ծառն կենաց՝ քս̃ յեկեղեցւոջ. զոր գնացք գետոց
ուրախ առնեն. և 'ի դէպ ժամու տայ մեզ պտուղ՝ զմարմին
և զարիւնն իւր. տայ և զմատանին՝ զդրոշմն պատկերին՝ ա-
պաշխարողաց, և զպատմուճանն: Եւ՛ ոք 'ի պատուիրանս նր̃
խոկան, եղիցին ուռք յորթն նմանեալք նմա. և նա 'ի դէպ
ժամու տացէ այլ պտուղ այն՝ որ ասէ. եկայք՝ օրհնեալք
հօր իմոյ:

Դարձեալ՝ մկրտեալքն յաճախմն՝ գտանեն զծառն
կենաց քս̃, նմանելով մահու նր̃ և յարութեն՝ լո̃ պօղոսի.
և տան պտուղ նմա՝ պհոգի և զմարմին 'ի կենաց նիս, որ է
ժամանակ ընդունելի. զի ոչ ոք է որ 'ի դժոխս խոստովան
լինիցի առ նա: Գիշեր՝ նախ քան զտ̃ն գալուստն. և տիւ
զկնի գալստն. արթունքն՝ ճրագով օրինացն յայնժամ, և
այժմ աւետարանին արեգակամբս ըստ կարի նմանեցին, և
նմանեն քս̃ խաչեցելոյն՝ տալով պտուղ լո̃ ժամանակին պատ

շաճի՝

շահի՛ 'ի բանից 'ի գործոց, այլև յանձանց, և յորդւոց· և տերև գոլութենց և փառաց՝ ոչ Թափի հարիւրապատիկն, մինչև ժառանգեն զկեանս յաւիտենականս զվայելումն պտղոյն անմահութեն և անվախճան։

Ո՛չ այսոքիկ են ամպարիշտք, և ոչ այսոքիկ· այլ որպէս փոշի, զոր հոսէ հողմ 'ի վերայ երեսաց երկրի։

Ո՛չ այսպէս խորհեցան ըստ մոլեկսի հրեայքն, և ոչ այսպէս որ այսօր խորհին հեթանոսք, այլ որպէս փոշի ցրուեալ են յազգս ամ։ Արդարք ասէ եղիցին ծառոյն ջրոյն տնկեալ և պտղաբերին· իսկ ամպարիշտքն ոչ այսպէս, այլ իբրև զփոշի հոսեալ կորնչին 'ի յերաստակաց նց· զորս դու ոչ յիշեցես, նք 'ի ձեռանէ քումմէ կորիցեն։ Այսպէս և այս են գնացք արդարոցն· կուսութի, ողջախոհ ամուսնութի, այլև այլ բարի ճանապարհ՝ ըստ օթևանացն· ամպարշտին և ոչ մի 'ի սոցանէ, այլ իբր փոշի հալածին յամէ։

Ամպարիշտք 'ի մարդկանէ՝ որ ծծապաշտք անուանին, և գեք և կուռք՝ որ ծծքե· ոչ այսպէս են նք, և ոչ այսպէս են կուռքն· այլ իբրև զփոշի հալածին անուանքն 'ի նոցանէ· զի որպ սրքն նմանին որդւոյն նց, և ամպարիշտքն իւրեանց ծծոցն։ Ո՛չ այսպէս են ամպարիշտք, որ ոչ գնան 'ի խորհուրդս չարս, և ոչ այսպէս՝ որ խորհին յօրէնս տն· այլ իբրև զփոշի հալածին յահագին ատենին քի· և ամպարիշտք են՝ որ անմասն են 'ի բարւոյ· ոչ այսպէս են՝ որոց պտուղ գոյ և մասն բարւոյ։

Վասն այսորիկ ոչ յարիցեն ամպարիշտք 'ի դատաստան, և ոչ մեղաւորք 'ի խորհուրդս արդարոց։

Վս չյարիցեն դատաստանն մոլեկսի երկրպագուաց որթուն, այլ ամ գիտէր և հատոյց նց· և ոչ յեսուայ վասն թքարայ։

Ո՛չ յառնեն 'ի դատաստան, այլ 'ի դատապարտութի և 'ի տանջանս· իբրև յայտնի աւազակք և սպանողք չածին 'ի քննութի և ոչ բուռն լաւքն· զի դատաստան կիսամառնեայցն է, որ ունին զլաւն և զկորուստն։

Քանզի ծանօթ է Տր զճանապարհս արդարոց· ճանապարհք ամպարշտաց կորիցեն։

Զի ճանաչէր՝ Թէպէտ և զօրն երկայնամտեաց աքարայ· քանզի ճանաչէ՝ որոց ոսկի արծաթ՝ ակունք են գործք

ձա

Յանդիմանէրք ամպարշտաց կործանին, զի առաքելոյ. թէ որոց գործն պղծեսցի, տուժեսցի. ապա ինքն կայ 'ի հուրն անշիջանելի. որոց փայտ և խոտ և եղեգն գործքն. ամբարիշտք՝ դատաստանի անխ ոչ ունին. և Աստուածորդք թէպէտ ապաշխարեն, չէն 'ի խորհուրդս արդարոցն՝ որք աստէն յուրախութե՛ կան յու_ սալ պսակին, զմեղացն սպլին յիշելով:

Դարձեալ՝ Աստուածորդք արդարացեալք թէպէտ յորքայ ութե՛ն են, այլ չէն 'ի դասս այց իբրև զհնովք և զեղեա. զի անապատն և մաքսաւորին չէն իբրև զորդւոյն որոտման. քան զի ձմնայէ Տր զորդւարոցն, զի նեղ է. և զամբարշտացն՝ զի լայն է, որ 'ի կորուստ տանի. ասէ և Տէրն. ձմնապարհ՝ որ յաջմէն են՝ զկեան Տէր, թիւրք են՝ որ 'ի ձախմէն են։

ՍԱՂՄՈՍ. Բ.

Եբրայեցին և ասորին մին առնեն զերկուսեան և զսա, և զմին՝ երկուսն ասնեն: Խոկ երկրորդն մեկնիչն մակաղնին ասէ ելէ՝ Մարգարէանալ զի Քրիստոսին, զոր ասարեն 'ի վերայ ՔՆ միոյ՝ հեթանոսք և ժողովուրդք միաբանեալ. զոր իշխան ... սաղմոսն ... յորժամ Պիղատոսի, որ հեթանոս էր. ասեն, արդարև խռովեցան 'ի յաղագս յայտ մին հեթանոսք և ժողովուրդք միաբանեալ. և ժողովուրդք զնա արբեր ... յայտ.

Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք. և ժողովուրդք խորհեցան 'ի նանիրս։

Խռովեցան շուրջակայ ազգքն՝ 'ի հանելն մովսէսի զիս_ րայէլ, յեգիպտոսէ յերուսաղէմ. և քնի զնոքս իսրայէլ յերկրէ. և 'ի մարմնոյ տղայ։ Քանզի անձանց մխացեցին և ոչ նմա՝ որ խաչեցին կացեալ գծագս աշխարհի, ազատելով զորդիս մարդկան 'ի սատանայէ։

Յանդիման եղեն թագաւորք երկրի . և իշխանք ժողովեցան 'ի միասին զՏն Տն և զՕծ օծելոյ նորա։

Զայս և առաքեալ ասէ, զոր ոչ ոք յիշխանաց Դիս այ_ սորիկ ծանեաւ. զի թէ էր ծանուցեալ՝ ոչ արդեօք զՏրն փա_ ռաց 'ի խաչ հանէին. ժողովրդոյն իշխանք՝ զքահանայսն և զքահանայապետսն կոչէ. զոր աւետարանն ասէ. ժողովեցան քահանայապետք և ծերք ժողովրդեանն. վասն Տն յայտէ. հօր. և քնի նր. զի որդւոյն՝ հօրն է պատիւ և նախատինք. զՏն ասելոյն. որ զիս ընդունի և կամ անարգէ. հօրն է։

Այլ

Այլ եբրայեցիքն ասեն, եթէ յորժամ միաբանեցին փղշտացիքն, ամոնացիք, մովաբացիք, և եդոմացիք, և ելին ի վերայ սիոնի. եղև երբեք այս: Այլ հոգւոյն սրբոյ, և հոգեկիր սրբոցն բանքն հաւատարմացին:

Խզեսցուք զկապանս նց. և ընկեսցուք ՚ի մէնջ զլուծ նոցա:

Զերեսս խզեցին զլուծն քի. և հեթանոսք զմովսեսին: Զհաւատացեալքն ասեն խզել զկապանս հեթանոսաց՝ որ ՚ի կուռս. և ընկեցուք զլուծն հրէից. որ է օրէնքն կոչեցեալ. ըստ այսմ. ընդէ՞ր դնէք լուծ ՚ի վզի աշակերտաց, զոր ոչ մեք և ոչ հարքն մեր կարացաք բառնալ: Կամ թագաւոր և իշխանք երկրի ասէին. որք էին պատկերք խաչահանուացն յետ այնորիկ որ չմտին յուղկանս տն. և չառին զքաղցր լուծն զոր առաքեալքն եդին. և ոչ կապեցան ՚ի սէրն այն, և եղեն ուռք որթոյն: Դարձեալ ասեն ոմանք եթէ հրեշտակք ասացին առ իրեարս յաղագս պահուն սոսկացեալք, խզել զկապ բնութեանն. և ընկենուլ զլուծ խաչին. զոր եբարձ տէրն յուսն:

Զանգիտեալ. կամ մարդ փոփոխութիւն. կամ ՚ի յայն ասելոյն խորհել ՚ի սոսկ:

Բնակեալն յերկինս ծիծաղեսցի զնոսա. և Տր արհամարհեսցէ զնս:

Յերկինս բնակեալ է, զոր ասացին գողացան աշակերտքն. և ծիծաղի զխարխեցուլքն. այսոքիկ ե̅ թագաւորք և ե̅ իշխանք հնազանդելոց: Գործք իւրեանց ծաղր արարին զնոսա: Ո՛չ ուրախութբ ծիծաղի. այլ տրտմութբ, և ոչ հեքնելով զի ծիծաղելիք և արհամարհանք եղեն դիւաց՝ զայն գործելով. և այնպէս խառնեցին և տրտմեցին տն՝ նախ քան զմահն, կորուստ հրէիցն և խաչահանուացն. և հրէից և հեթանոսաց հալածչաց, և սպանողաց առաքելոցն, և հաւատացելոցն ՚ի նա:

Ցայնժամ խօսեսցի ընդ նս բարկութբ իւրով, և սրտմտութբ իւրով խռովեսցէ զնոսա:

Երբ տացէ ժամանակ ապաշխարութե զքառասուն ամ, և ոչ զղջանան, խօսի ը̅ նս հռոմայեցովքն. զորոց ասացին չիք մեր թագաւոր բաց ՚ի կայսերէ. Զի նախ հեզութբ խօսէր անձամբ. և ապա ասէր ուսարուք յինէն զի հեզ եմ: Դարձեալ ՚ի ժամանակի դատաստանին. ասէ երթայք յինէն ՚ի հուրն յաւիտենական. ը̅ արժանեաց:

Ես կացի Թագաւոր ՚ի նմանէ, ՚ի վերայ լերին Սիովնի սրբոյ նորա, ՚ի պատմել ինձ զհրամանս Տն։

Ոմանք զհօրէ ասեն ասացեալ. այլ որդւոյ է յարմարական. որ ՚ի կամացն հօր՝ դաւթի որդի եղև, և եկաց թագաւոր. ոչ յօտար երկիր. այլ յաթոռն դաւթի յերէմ. թէպէտ անզգամ՝ թագաւորքն փշով պսակեցին. այլ ՚ի Հեռաստանէ ատաղքէ խնամոտունն՝ զդստերացն երեմի՝ տեսանել զխորհուրդ պսակին՝ յաւուր փեսայութեան իւրոյ. և ուրախութեն սրտի իւրոյ. որովք բարձան փուշք յանցանացն մերոց. և ուսոյց եթէ հրամանն և կամք հօր է՝ զի մի միայն որդւոյ, այլ և հօրն լինիցուք չնորհապարտք։

Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու, և ես այսօր ծնայ զքեզ։

Օրն լոյս է. ոմն թէ ասել հօրն ես այսու բնութեամբ իմ՞ անմայր անժամացոյց լուսով՝ անօրինակ անճառ և անխառն նորի ծնայ զքեզ. զայս ասելն՝ ոչ ուք լուծաւ. բայց որդւ. զի ցիս ասաց. և ոչ ը այլ։ Դարձեալ այսօրն ժամանակի ոչ է յայտական. ոմն և ասէ. յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ. և եթէ՝ նախ քան զամ՝ բլուրս ծնաւ զիս։ և թէ՝ յառաջ քան զարև է անուն նր։ Զի ժամանակ ոմն յերկս հատանի. նախ քան զլինելն մարդ. և անտի մինչ ՚ի յարութիւն. և ՚ի մշտնջենաւոր օրն. զի այսօրն անկզբն ոչ ցուցանէ. զի ած չէ ը ժամանակաւ, որ թէ տիւ և գիշեր ասի նմա և վաղիւ. զի յս քս երեկ և այսօր, նոյն և յաւիտեանս։ Իսկ ասելն, այսօր եթէ ձայնի նր լուիցուք. զի միշտ հայր է և միշտ ասել զայս՝ նմա լուիցուք հաւատալով զնա թագաւոր ՚ի սիոն, յեկեղեցի պատմել, ես և հայր իմ մի եմք։ Եւ տր ասաց ցիս, որդի իմ ես դու, և ես այսօր ծնայ զքեզ։

Խնդրեա յինէն, և տաց քեզ զհեթանոսս ՚ի ժառանգութիւն, և իշխանութիւն քեզ ընդ ամ ծագս երկրի։

Ահօրածին և կուսածին մանկանն ասէ հայր, մերումիս բնութեն միացելոյ՝ ը ծնեալն ՚ի հօրէ ը բանն. որ ունի զհայրենիսն լրմամբ առանց խնդրելոյ. զի որ յանձին կալաւ լսել ՚ի հօրէ թէ այսօր ծնայ զքեզ զորդին յառաջ քան զյաւիտեանս. ըստ պօղոսի թէ՝ հայր առաքեաց զորդին որ եղև ՚ի կնոջէ. և զայս ևս լսէ թէ՝ խնդրեա յինէն. զի ասացեալն՝ ժողովուրդ ածն յակոբ և վիճակ ժառանգութե իս-

րայ

բայել, օտարացան և 'ի խաչ հանեին զՏէրն. և փոխանակ նոցա եկին հեթանոսք. զի որում ասաց յետ յարութեան առաքելոցն. աշակերտել զամ հեթանոսս. և իշխանութի քեզ. ոչ է ամ ծագս, այլ զամ ծագս երկրի. զի նմա են. և 'ի ձեռս նր են ամ ծագ երկրի. և Տնն է երկիր լրմամբ իւրով. զի ծանիցեն բնակեալք յերկրի՝ զՏէր երկրին։ Խնդրեին բանիւ չերեւի. իսկ զոտայն վկայէ ասելով, տուեալ լինի ամ իշխանութի. և ամ ինչ տուեալ 'ի հօրէ իմմէ. Թերեւս մարմին առնուլն խնդրել էր, յորժամ եղև մեր գլուխ. և կայր յաղօթս վասն մեր. և է մեր գոհանայր։

Հովուեսցես զնոսա գաւազանաւ երկաթեաւ. և որպէս զանօթս բրտի փշրեսցես զնոսա։

Հովիւ քաջ ասաց զինքն Տէրն. որ զհաւատացեալսն կակուղ գաւազանաւն, ամենատարածանաւն և ցպով խաչիւ հովուէ որք մխիթարիչք կոչին դն ասիցն. ցուպ քո և գաւազան նոցա մխիթարեսցեն զիս։ Իսկ զխաչահանուսն և զանհաւատսն՝ երկաթի գաւազանաւ հռոմայեցւոցն՝ որ էառ զնա. և բրբև զխեցեղէն անօթ փշրեաց. և զորդիսն ցրուեաց ընդ ամ երկիր, տիտոսիւ և վեսպիանոսիւ, զոր դանիէլ երկաթ առակեաց զհռոմայեցւոց թագաւորութիւն։

Արդ թագաւորք՝ դուք 'ի միտ առէք. և խրատեցարուք ամենեքեան, որք դատէք զերկիր։

Մի նմանէք կատաղի ազգին հրէից՝ թագաւորք հեթանոսաց. այլ ծառայեցէք Տն երկիւղիւ. զի Տր ձեր դոյ յերկինս. և ակնառութի ոչ է առաջի նր. այլ ով դատիք զերկիր՝ դատելոց էք. և որով չափով չափէք չափեսցի ձեզ։

Ծառայեցէք Տն երկիւղիւ. և ցնծացէք առաջի նորա դողութ.

Տեառն ծառայեցէք երկիւղիւ. և մի իբրև զհրէայքն զձանձրկն ակկարծնի՝ լկտութե. զի զդոյն բնութե անզօյգ արար. պատուով պսակեալ և Տր կացոյց երկրի, յերկրականն մեծարեալ իշխանութի, կենաց և մահու հրաման տալ։ Ցնծացէք՝ զի Տծ է։ այլ դողութե՝ զի Տր է. և յաւանելոց է բարկութի նր 'ի վերայ ամ ամբարշտութե և անիրաւութե մարդկան։

Ընդ

Ընկալարուք զխրատ նորա՝ զի մի՛ բարկասցի Տր. և կորնչիցիք 'ի ճանա պարհէն արդարութեան։

Զի մի՛ բարկասցի 'ի ժամ դատաստանին։ Դարձեալ խրատ զաւետարանն ասէ։ և կորնչիցիք։ որ ասացն ես եմ ճա_նապարհ. Թերևս թէ յապաշխարութի կոչէ. որք հանին զորն 'ի խաչ. և որք հակառակն կային աւետարանին։ Յաղագս որոյ՝ որք ընկալան զխրատ նր արդարեւ, և կատան_դիմանս, և նախ քան զնն արդար, երկիւղիւ և դողութը ցնծային առաջի նր։ Եւ որք խոտորեցան 'ի ճանապարհէն արդարացուցչէ, կորեան զյաւիտենից կորուստն, երբև ըղձեկոս. և զդեհոկղետեանս. և զմոքսմիաննս և զայլսն։ Դարձեալ ընկալարուք. երրայեցին ասէ. հաւանեցարուք զորդին. զի մի՛ բարկասցի հայրն, ապաշխարութի. երբև պոռնիկն զօտա_րն յի արտասուօք. զի ուր և են արտասուք զդ ջնջեալ՝ անդ են ոտքն քր։

'Ի վաղվաղակի, յորժամ բորբոքեսցի բարկութիւն նորա։

Առ մեզ՝ նախ բարկանալն է սրտմտութի, և բորբոքելն՝ երբ մարմնով 'ի գործ ածեմք պատժեսսեան 'ի տանջել։ Զնոյն և ա՛յ ասէ, առ խրատէ բարկութի, և յոյց ապաշխարելն՝ անդ բորբոքէ 'ի տանջել։ Յորժամ տծ մեր յայտնապէս գայ յա՛ քն զօրութի և փառօք. և հուր առաջի նր բորբոքեսցի. ո՞ պատմեսցէ ձեզ՝ եթէ հուր բորբոքեալ կայ ասէ եսայի։ Քանզի՝ արդ. քաղցրութի կոչէ պատժեսսեան, ասելով ե_կայք առ իս ամ աշխատեալք։

Երանի ամենեցուն՝ որք յուսացեալ են 'ի տր։

Երանելիք են սուրբ ... որք յուսան 'ի տր. զի յոյս ոչ երբեք ամաչեցուցանէ։ Եւ ո՞նց է յոյսն՝ որ երբև զպօղոս կարեն ասել. կայ և մնայ ինձ արդարութեն պսակն։

Սաղմոս յորժամ փախչէր յաբիսողոմայ։ Զնեղութիւն պատմէ. և զդարձ ժողովրդեանն 'ի գերութենէ. և զչարչարանս տն՝ և զմահն. և զյարութիւն մարգարէանայ։ Այլ և բազմութիւն նեղչաց 'ի բերանոյ սաւ_ղայ յամ գլխոյ. և գոհանայ, զի փրկեալ խորհրդով մահու, և յա_րութեն փրկաւ։

ՍԱՂՄՈՍ. Գ.

Տէր զի՞ բազմացան նեղիչք իմ. և բազումք յարեան 'ի վերայ իմ։

Գերչացն վիշտք, և համանայ 'ի վր մարդկանէ. և դաւ

Թէ

թէ ոչ միայն հեթանոսք և ընտանիք, այլ և որդին իւր. և 'ի վր̄ ան մերոյ հրեայք։

Բազումք ասէին զանձնէ իմմէ, թէ չէ՛ փրկութիւն սորա առ Այ իւր։

Յուսահատ առնէին զիս թէ չիք փրկութիւն, որք ըզ-մեղսն գիտէին, և զապաշխարութիւն ոչ գիտէին, զայս ասէին. և հրեայքն որ հակառակ հօր կարծէին։

Այլ դու Տր օգնական իմ ես, փառք իմ և բարձրացուցիչ գլխոյ իմոյ։

Ես վստահ եմ ասէ թէ բարձրանայ գլուխ իմ 'ի քէն պսակելով. և որդի զհայր փառաւորէ. և հայր զորդի խաչիւ պսակեալ։

Զայնիւ իմով ես առ Տր կարդացի և լուաւ ինձ 'ի լեռնէ սրբոյ իւրմէ։

Զհոգւով կամ յաղօթս ասէ՝ և ո՛չ ձայն ուժգին. երբ մովսէսի ասէր Տն զի՞ գոչես առ իս։ 'ի լեռնէ սրբոյ իւրմէ. 'ի սիոն համարելին զՏծ 'ի հինն։ Այլ Տր 'ի սիոնէ եկն 'ի մայրն ասացեալ և ձայնիւ կարդաց 'ի խաչին. հայր թող սդ̄։ և լուաւ ինձ։ 'ի գողգոթայ լեռնէն լուաւ յՏն աւազակին։ և զդ ասաց նմա՝ ասաց եւայի և ծննդոց նորա։

Ես ննջեցի և 'ի քուն եղէ. զարթեայ՝ և Տր ընդունելի ինձ է։

Զայն գիշերն դաւիթ յայնկոյս յորդանանու անցեալ 'ի փախչելն, որ նշանակէ զՔն զկամաւոր մահն. և զյարութիւն Քն։ ընդունելի իմ էր. զի յարոյց և ընկալաւ յերկինս։

Ո՛չ երկեայց ես 'ի բիւրուց զօրաց նոցա. որ շուրջանակի պատեալ
պաշարեալ՝ պահէին զիս։

Որք Է̄ աբիսողոմայ։ վայելէ բնութիւն ասուի յաւանդ որք 'ի դիւաց բազմութենէ ոչ երկնչէին։ Եւ ցյՏ ասէր ադամ, 'ի գերեզմանի եղեալ։

Արի՛ Տր՝ և փրկեա զիս Այ իմ. զի դու հարեր զամենեսեան, որք էին ընդ իս թշնամութե՟ 'ի տարապարտուց. և զատամունս մեղաւորաց փշրեցեր։

Ովքէին ընդ իս մինչև ցայժմ թշնամութե՟։ 'ի տարապարտուց. զի ոչինչ մեղայ նմա. բայց միայն քեզ։ Ով̄ դահիճ այ՝ և ոչ որդւոյն. վՏյ զարի Տրն 'ի վրէժխնդրութի ասէ

յեր

յերկայնմտութենէ․ իբրև եղև այն․ և այս։ Զի 'ի դժոխս երթեալ տէրն առնոյր վրէժ 'ի դիւաց, ազատելով զադամ։ Եւ զատամունս մեղաւորաց փշրեսցես։ Քանզի մինչև յօրն դատաստանի 'ի բերան սատանայի, և յատամունս դժոխոց՝ ասէն մեղաւորք․ և անդ յորովայն 'ի դժոխս իջանեն․ եթէ ոչ փութան ինքեանք ելանել փշրելով զատամունսն։

Տեառն է փրկութիւն․ 'ի վերայ ժողովրդեան քոյ՝ օրհնութիւն քո։

Զի յՏն կոչեցաւ․ որ փրկէ զժողովուրդ իւր 'ի մեղաց իւրեանց․ զոր դաւիթ հայցէր․ առնել Տէ իւր ժողովրդեանն՝ որ Տէ իւր էին․ և տէրն փրկէ՝ որք Տէ նմա են հաւատովք։ 'Ի վր ժողովրդեան օրհնութիւն քո։ Որպ անեծք յադամայ յամ՝ որդիսն, մինչև յերկրորդն ադամ․ յայնմհետէ 'ի նմանէ յամ ծնեալքն՝ ժառանգութեամբ նր՝ օրհնութիւն նր։

'Ի կատարած՝ սաղմոս 'ի դաւիթ։ Զկատարածն՝ ակիւղաս և թէոդոտիոն յաղթութիւն թարգմանեցին։ Քանզի զէնք յաղթութեան աշխարհականաց դաւիթ զսաղմոս զայս, նշանակելով զՏն յաղթութիւն 'ի վերայ մահու։ Իսկ եօթանասնիցն զկատարածն ասէն Տէ 'ի վախճան աւուրց՝ կատարել մարգարէութիւն։ Որպ և ասէ, Տէ պսակ յաղթող նշանակաց և պարգևացս։ Շնորհակալ լինի Տն, որ էտ նմա յաղթութիւն։ Գուշակէ վասն աղօթից առաքելոցն զոր լուաւ Տն․ և վասն զղջման և բարեգործաց բարեաց տեսանել զգթութիւն Տն։ Զի նախ ժամ զայս՝ ծանուցն մեզ զկամաւոր մահն Տն․ և ապա գուշակէ վասն մարգարէիցն։ Զի լրումն աշխարհաց՝ որ է կատարած՝ 'ի հինգ բաժանի․ չորսն մարգարէիցն և առաքելոցն էհաս։ Առաջինն մինչև 'ի ջրհեղեղն։ Երկրորդ յաբրահամ․ երրորդն 'ի մովսէս․ չորրորդն՝ մարգարէիցն․ մինչև 'ի գալուստ բանին Այ․ և հինգերորդն՝ մինչև 'ի կատարածն օրն։ Որպ Տր աս մշակսն՝ առաջին երրորդ, վեցերորդ, իններորդ․ և մետասաներորդ ժամ ասէ․ զայս նշանակէ կատարածն․ Զոր և դաւիթ գուշակէ, վասն իւր, և վասն Այ մարգարէիցն, զոր և ասէր․ էին դէպ քո անձն են․ և դէպ ընկալաւ աղ քո Իսկ ո՞չ է աղն հօր․ Տէ ոչ՝ որդին միածին․ որ հաւատացելոց մարգարէութեան զգթութեան իւր։

ՍԱՂՄՈՍ․ Դ։



ԿԱՐԴԱԼ ԻՄՈՒՄ ԼՈՒԱՐ ինձ Այ ըստ արդարութեան․ 'ի նեղութեան իմում ընդարձակեցեր․ ողորմեա ինձ և լուր աղօթից իմոց։

Տեսէք ասէ և յուսացարուք․ որպ յիս եղև փրկութիւն։ Ըստ արդարութեան․ Այ, արդար խնդրուածոց․ և ոչ արդար պարծի զոլ՝ 'ի նեղութեան․ սովոր է Այ թողուլ զսուրբս 'ի նեղ-

դութեն. և տեսանել զնահատակութի՛ն նր. և պատուիչ լինի քաջութե՛ն նր. ա՛յ աբրահամու. յոբայ. յովսեփու. և երեք մա՛նկանցն: Անդորրը. ընդարձակ. եթէ առ ՚ի ծակերն պօղոս. շատ են քեզ շնորհք իմ. զի զօրութի իմ ՚ի տկարութե քում կատարի: Ողորմեա՛ և լուր: Ո՛չ յաղթի անձն ծառայի. այլ յորժամ առնու զպտուղ աղօթիցն և ՚ի նեղութե, յանդորրութե. այլ եւս խնդրէ ողորմութի. զի անսպառ են: ՚ի կարդալ խմաւ: Ըստ եսայեայ. մինչև խօսեսցիս ՚ի սրտի քում առաջից ասասցիս եմ: ՚ի նեղութե": Ո՛չ միայն փրկեցեր. այլ և մեծամեծս անդորրը արարեր: ողորմեա՛ և լուր": Զի թէ և յն արդարութե լսելի եղև. սակայն յողորմութին այ ընթանայ. և նմա համարի զնա:

Որդիք մարդկան՝ մինչև ցերբ էք ծանրասիրտք. ընդէ՞ր սիրէք զնանրութիւն, և խնդրէք զսուտ:

Յինէն ուսարուք զայ խնամս. և ՚ի բաց ընկեցէք զծանրասրտութիւն:

Ծանիցուք զի սքանչելի արար Տր զսուրբ իւր. և Տր լուիցէ ինձ ՚ի կարդալ իմում առ նա:

Զի ՚ի բազում մահուց փրկեաց զիս ասէ: Այլ զք, զխոնարհութին ասէ. և զանմեղութին առ աքսորում: և զի խոստացիրաք են անհաւատքն, որ այնչափ տեսին զայ շնորհըն ՚ի դաւիթ, և դարձեալ յարձակէին ՚ի վերայ: Որդիք մարդկան": Որդիք ադամայ. և նմայն՝ զնոցայն ըէ էք սիրէք զնանրութի. առ այնոսիկ ասէ, որ խորհէին սպանանել զդաւիթ: Որդիք մարդկան": Ո՛չ խպառ կորի օծեալն տն. այլ մինչ ՚ի մահն սաւուղի: Ծանիրուք. զք, զիմանութեն՝ որ ընտիր ցուցաւ ազանչելեօք, որ յետ մահուն հաստատեաց զաթոռ թագաւորութե իւրոյ առաքելօքն: Տր լուիցէ": Հայր լուաւ որդւոյն:

Բարկանայք՝ և մի մեղանչէք. զոր ինչ ասէք ՚ի սիրտս ձեր, յանկողինս ձեր զղջացարուք:

Յորժամ սպառնայք բանիւ գործով մի կատարէք: Յանկողինս": ՚ի ժամ հանգստեան. զի անխռով պահեսցէք զխորհուրդն ՚ի գիշերի: Բարկանայք: Առ իւրն ասէ որք լսէին: Բարկանայք և մի մեղանչէք: Յերկու բաժանի բարկութին չարաց և բարեաց. ընդդէմ չարացն և ախտիցն բարկանալ

պարտ

պարտ է. իսկ որ այլ չհնազանդէ՝ փախչելով ՚ի մեղաց զղջմանց յանկողինս: Իբրև դաւիթ յորժամ բարկացաւ ցանկութեն՝ զղջացաւ թանալով զանկողինն զամ՛ գիշերին ՚ի սրտին ասելով ցնա. բարկանայք և մի՛ մեղանչէք: Եւ՛ որք զայս առնեն. այն-պիսեաց արդարութի՛ մնասցի պատարագ. որպէս և ասէ ։

Մատուցէք պատարագ արդարութեան. և յուսացարուք ՚ի Տէր ։

Յուսացարուք, զի գոյ հատուցումն: Մատուցէք. զոհս մի հրեայք և հեթանոսք. այլ ոչ ըստ կամացն իւր. այլ դուք զքո, և զխոստումն պաշտօնդ և զանձամբ զերկրպագութիւնս մատու-ցէք. քշելով զախտաւոր շարժմունս որք յարձակին ՚ի վե՛ իւ-ր և ՚ի վե՛ պատարագին սրբահամեց ։

Բազումք ասեն, ո՞ ցուցցէ մեզ զբարութիւնս. նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց. և ետուր ուրախութիւն սրտից մերոց

Բազումք են որ անյոյսք են ՚ի հաճառոց տն և ՚ի նմանէ հատուցմանն. վասն արդարութե զոր առնեն. այլ փառս ՚ի մարդկանէ խնդրեն. կամ զերկրաւոր բարութիւն համարին նշան տն լինելոյ առ նս: Իսկ ՚ի մեզ ասէ, նշանեցաւ լոյս ե-րեսաց քոց. որ է հաւատոյն լուսով տեսանել զնախախնամ-ութին նր. ուրախութի սրտից մերոց. և մօտ է յոյս նր ՚ի մարդիկ ։

՚Ի պտղոյ ցորենոյ գինւոյ՝ ձիթոյ իւրեանց բազմացան

Երկուքս այսոքիւք զնմ բարութեանց տալով զանհնարկութի զոր այլ ունիք չէ հնար թէ զայս ուղէն տալ: Բազումք ա-սեն: Դարձեալ խառնէ դաւիթ զինքն ՚ի դասս նմ սրբոց. և համաձայնեալ ընդ նոսին ասէ. ո՞ ցուցցէ մեզ զբա-րութի տն երևման երեսաց: զի չէք այլ բարի բայց մի նծ. որպէս ասաց ինքն նծ բանն: Զոր բազում արդարք և մարգա-րէք ցանկացան տեսանել. Իսկ դաւիթ որպէս վայելեալ ասաց, նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց. որ է ծանուցաւ որպէս ՚ի թափօր: Եւ ետուր ուրախութի: Զինա եղյծ զատդ աշխարհի. զոհարթ երեսօք. և ուրախ սրտիւք ձոնակելով ըդ մեհ. զոր բաժակ կոչեաց. քանզի սրտի բերկրեցելոյ երեսք զուարթ են: Վասն որոյ աւետեօք եղեալ հրամայէր առաք-ելոցն գաւառացն երուսաղէմի՝ տեսանել զորն յաւուր փեսայ ութեն նորա, և յուրախութեն սրտի: Զորոյ զխնդութի ձր-գեալք ՚ի մեզ. զնորշանն խաչի նր գրոշմելով յերեսս մեր, երեք

երօք

երօք փարթամացեալք: Ցորենով. և գինւով. և ձիթով: Ցորեան՝ մարմինն. գինի՝ արիւնն. ձէթ շնորհք հոգւոյն, յօծումին անապականութե. և 'ի շնորհս որդէգրութե: Վն որոյ ասէ լցուցեր զնոսա. զի ոչ զոք մերժէ 'ի սեղանոյ իւրմէ՝ որ գնան առ նա:

Խաղաղութբ յայս և 'ի սոյն ննջեսցուք և զարթիցուք. զի դու տր մի-այն առանձին յուսով զս բնակեցուցեր զմեզ:

Դարձեալ՝ որք զվաւս 'ի մարդկանէ խնդրեն, և ցորենով. և գինւով. և ձիթով միայն ճանաչեն զԱծ, պատերազմ է կեանք նց և դառնագոյն մահ նց: Իսկ մեք 'ի ձեռն հաւատոյ խաղաղութե կալցուք առ Այ՝ անխռովելի միաւ յաջոյ և յահեկէս զինուցն. խաղաղացեալ 'ի խղճէ մտաց՝ 'ի հաւատս յայս, և 'ի յոյս յարութե՝ որ 'ի մեռելոց: Ննջեսցուք և զարթիցուք: Որպ հրեշտակ ասաց ցդանիէլ. երթ 'ի վախճան, և հանգիր, և յարիցես 'ի կատարածի: Զի դու տէր միայն": Ասելով թէ որ հաւատայ յիս զմահ մի տեսցէ: Եւ թէ՝ եկեսցէ ժամանակ, զի որ 'ի գերեզմանս իցեն, լուիցեն ձայնի որդւոյն Այ, և որք լուիցեն կեցցեն. զի յոյս տեսանելի չէ յոյս:

'Ի կատարած վասն ժառանգաւորին:

Ժառանգաւոր կոչի բանն Այ, միաբանեալ ըստ նմա և ընկերեցեալ ըստ նմին կոչի ժառանգաւոր, ըստ գրելոյն որդի և աստ. եկայք ժառանգեցէք: Եւ պօղոս ասէ, ժառանգ Այ և ժառանգակից քի: Այլ բարեգործութեանն, վասն վիճակելոյն. վիճակեալ ասէ՝ ըստ գրի Այ, և զոր ընկեցեալ: Եւ է վիճակն, անապականելի իրք և 'ի վեր քան զերկինս: Քանզի զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ. և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Այ սիրելեաց իւրոց:

Աղօթք եկեղեցւոյ:

ՍԱՂՄՈՍ. Ե:

Բանից իմոց ունկն դիր տէր. և 'ի միտ առ զաղաղակ իմ:

Սուրբ եկեղեցի նեղեալ 'ի հալածչաց՝ ասէ. և աղաղակ զսրտի յօժարութեն կոչէ:

Նայեա 'ի ձայն աղօթից իմոց. Թագաւոր իմ և Այ իմ:

Զի առ մեզ որիշ են աչք և ականջ. իսկ Այ բնաւորին տեսանէ և լսէ. որով տեսանէ և լսէ: Թագաւոր. զի տր է, և Այ զի արարիչ է: Այլ և ինքն դաւիթ սպասէր և աղօթէր պատրաստ լինել ընդունել առաւօտն լուսոյ զՏրն: Վասն որոյ ասէ:

Եւ զի քեզ աղաչեցից Տէր ընդ առաւօտս լուիցես ձայնի իմում. ընդ առաւօտս պատրաստ եղէց յանդիման լինել առ Տէր:

Ուստի ցանկալին մարգարէքն յեկեղեցւոջն երկրպագանել նմա. քանզի նախ կոչեաց ժառանգ, երկրորդ՝ որդի, երրորդ՝ Տէր և Աստուած. չորրորդ՝ բարի և լոյս. իսկ աստ՝ հինգերորդ աղաչէ. զի եղցէ օրէնքն, և մինչէ առաւօտն. որ է բան Հնորհայն. զի տկար էին առ ջք ժողովրդեանն առ լեալին. և տեսօղ լուսոյն եկեղեցի. իբր զհռաքէլ որ է վերլնն եհե: Բանից իմոց": Եհ Ը առաւ": Տէր է առաւօտն. որ եկն զինի գիշերոյն՝ յայտ է օրինացն: Ընդ առաւօտս պատ". Նշանակէ թէ Աստուած մեք 'ի ձեռն քո տեսանեն զհայր: Իբր ասէ. որ տեսեալն զիս տեսեալ զհայր. զի նա է ճանապարհ: Ո՛չ Աստուած մարդոյ է ասել Ը առաւօտս պատրաստ եղէց. այլ որք իբրև զեղեալ կարող են ասել. կենդանի է Տէր որոյ կացեալ եմ այսօր առաջի:

Ո՛չ եթէ դու Աստուած կամիս զանօրէնութիւն. և ոչ բնակեսցեն առ Տէր չարք. և անօրէնք մի՛ բնակեսցեն առաջի աչաց քոց:

Իբրև Աստուածքն հեթանոսաց՝ որ բնակեալ էին 'ի նմա չար դևքն: Մի անօրէնք": Հրեայք յայսմ հետէ 'ի տաճարին, և չար թագաւորք և դատաւորք կալցեն զիշխանութիւն:

Ատեցեր զամենեսին, որ գործեն զանօրէնութիւն. կորուսանես զամենեսեան որ խօսին սուտ:

Ատելի են առաջի քո ասէ Աստուած անօրէնք. և չարագործք: Կորուսանես զամենեսեան, որք խօսին զսուտ: Կարգ առեալ յօձէն. և հեթանոսք՝ Աստուած ասելով զկուռս. և հրեայք՝ թէ չէ քո թագաւոր, այլ կայսրն:

Զայր արիւնահեղ և զնենգաւոր պղծեսցէ Տէր. այլ ես ըստ բազում ողորմութեան քում մտից 'ի տուն քո. և երկիրպագից 'ի տաճար սուրբ քո երկիւղիւ քո:

Արիւնահեղն 'ի կայենէ սկսեալ. պիղծ անձնս. յորժամ առնուս զշնորհս քո 'ի նմանէ առ 'ի սաճուղայ, և 'ի հրէից: Այլ ես ըստ բազում": Առաջին արդարքն յուսով. և քրիստոնեայք յայտնապէս երկրպագեն յեկեղեցւոջ, ողորմութիւնն Աստուծոյ աւելի քան արժանաւորութիւն: Երկիւղիւ": Զի մի՛ անկցին իբր նախաստեղծքն 'ի դրախտին: Մտանել ասէ

'ի

'ի ձեռագործս, և մտօք 'ի վերինն եդեմ երկրպագել. մինչև լիցանէ յերկնից նոր եկեղեցին նորոգեալ յարութեան։

[illegible]

Զի գնացք ճանապարհի է առաքինութեան, և 'ի Տեառնէ ուղղին գնացք առն. դժուարինքն 'ի դիւրինս ուղղեալք։ Վա՜յ թշնամեաց իմոց Որք փորձութիւնս յարուցանեն եկեղեցւոյ. և հարեալք ընդ վիմին խորտակին։

[illegible]

Որք կառչին ընդ ուղղափառս հեթանոսք և հերձուածողք։ Եւ սիրտք նոցա՛։ Զի յաւերժածոյ սրտին խօսին։ Նմանեալք. ստեալք են. և զուր ջանան։

[illegible]

Իբր գերեզման բացեալ կամ ծածկեալ՝ հոտ գարշութեան 'ի բանս նոցա. և սիրտք նոցա գերեզմանք մեռելոտի մտածմանց. զոր նենգութեամբ ծածկեն կամ խօսին։

[illegible]

Աւելի չխնդրէ պատիժս. այլ զի անկցին 'ի խորհրդոց. և մի անկցին 'ի կորուստ։ Եթէ լրբին են՝ և բազմանան յամբարշտութիւնս, մերժեա՛ յերեսաց քոց։ Զի դառնացուցին զքեզ։ Զոր խոստովանիմք քաղցր և յաւիտեան զողորմութիւն։ Ասաց Քրիստոս ցհրէայսն. տեսանիցէք զաբրահամ և զիսահակ և զյակոբ յարքայութեանն. և զձեզ հանեալ արտաքս։

[illegible]

Հաճոյացեալքն ուրախ լինին, որք յուսացան 'ի տէր. որ ասաց. զուրախութիւն ձեր ոչ ոք հանիցէ 'ի ձէնջ։ Եւ բնակեսցիս դու 'ի նմա։ Ես և հայր իմ առ նա եկեսցուք։

[illegible]

Զի

Զի որ պարծին 'ի տէր պարծեսցին. ոչ միայն սիրողքն անուան նր: Որք զամ կոչմունս բնութե եւ պատուոյ 'ի բաց ընկեցեալ՝ քրիստոնեայք սոսկ պարծանօք : Զի օրհնես֊ ցես՛: Այլ հոգեւոր օրհնութե յերկնաւորս 'ի քս: Ով զի֊ նու հաճութ քո": Զի հաճոյք տն զէն էր նր. եւ պսակէ զնս յաւուրն պսակման:

Ով զինու": Դարձեալ՝ երբեւ զրահիւ եւ սաղաւարտաւ պսակեալ զինուորն աշաւոր եւ գեղեցիկ է . նոյնպս քն տծ հաճեցաւ զմեր մարդն 'ի նքն կրել խաչիւ. եւ պսակեաց զմեզ արդար դրոշմն խաչին յերես. եւ 'ի հանդերձեալն տծե֊ ղէն փառօքն լուսովք զանձն բոլոր:

'Ի կատարած 'ի վերայ ութներորդին: Սաղմոս 'ի Դաւիթ:
Վեցօրեայ արարչութեամբ հաստատեցաւ աշխարհս. եւ զօր եօթներորդն՝ օրհնեաց 'ի հանգիստ արարածոց. եւ յետ այնորիկ յանդէպս եօթնեկի յաւիտենիցն հա֊ տուցման աւուր յարութեան: Քանզի՝ եօթներորդ օր պատկեր ... մինչեւ ցվերջին կենդանեաց եւ ... ութներորդ, եւ կայ եւ մնայ անվերջ, եւ անվախճան: Զի այլ օր զնա ոչ ..., եւ ոչ ...: ... , զի ..., անփոփոխելի եւ ... յոյժ ... եմ . զի որ ... ... , յայս ... ... :

ՍԱՂՄՈՍ. Զ:

Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. եւ մի՛ բարկութեամբ քով խրա֊ տեր զիս:

Ոչ 'ի յանդիմանութեանն եւ ոչ 'ի խրատու հրաժարէ, որ սաստ է ողորմութեան, այլ 'ի բարկութեանն եւ 'ի սրտմտու֊ թեանն՝ որ անվախճան լինի. որ չէ 'ի խրատ. այլ 'ի տանջանս յաւիտենականս: Տէր մի սրտմտու": Որպէս զաւակ:

Ողորմեա՛ ինձ Տէր զի հիւանդ եմ ես. բժշկեա՛ զանձն իմ, զի խռո֊ վեցան ոսկերք իմ:

Ոչ որք անկանին 'ի մեղս՝ թէ ոչ թուլասցի եւ հիւանդա֊ նայ խորհրդով: Բժշկեա՛ զանձն իմ: Զհոգին ասէ անձն: Ոսկերք, կամ զխորհուրդն ասէ. կամ զմասունս հոգւոյն. զի 'ի միասին ախտանայ հոգի եւ մարմին:

Անձն իմ յոյժ խռովեցաւ, եւ դու Տէր մինչեւ ցե՞րբ:

Հոգին առաւել զարհուրի. զի նմա է զգալ հանդերձ֊ եալ տանջանացն: Մինչեւ յե՞րբ ասելով յայտ առնէ զյոլով ժամանակացն՝ որ յետ մեղացն կայր 'ի զղջման, որ ասաց ըզ սաղմոս զայս:

Դարձ

Դարձիր Տէր և փրկեա զանձն իմ. կեցո զիս վասն ողորմութեան քո։

Որպէս թէ դարձուցեալէ այ զերեսս։ Կեցո՛։ Կեցո զիս 'ի մեռանելոյ։ Ըստ ողորմութեան, և ոչ ըստ արդարութեան։

Զի ոչ ոք է որ 'ի մահու յիշէ զքեզ. կամ 'ի դժոխս խոստովանի առ քեզ.

Զկնի մահուն ասէ, որ յետ անդ գնալոյն. զի ոչ յիշէ ոք զքեզ՝ յուսով քաւութեան 'ի դժոխս գնացեալն. որ թէ խոստովան լինի։

Վաստակեցայ ես 'ի հեծութեան իմում. լուացից զամ գիշեր զմահիճս իմ. և արտասուօք իմովք զանկողինս իմ թացից։

Լուծիցեն որք ասեն թէ վախճան գայ տանջանացն. և դիւրաւ քաւի մեղքն։ Զի ահա զմիոյ գիշերոյ զմեղանսն՝ զամ՛ գիշերս երկիւղիւ լուանայր արտասուօք, թանալով զանկողինն։

Խռովեցաւ 'ի սրտմտութենէ ակն իմ. և մաշեցայ ես 'ի վերայ ամենայն թշնամեաց իմոց։

Այն՝ զմիտս կոչէ. մաշեցաւ, զի մարմնական ցանկութեանց սրտմտէր. և քան 'ի վր թշնամեացն ամօթոյ և նախատանացն՝ առաւել մաշէր, վասն մեղացն՝ յերկիւղն այ։

'Ի բաց կացէք յինէն ամենեքեան. որք գործէք զանօրէնութիւն։

Դևք՝ որ յետ մեղացն 'ի յուսահատութիւն արկանեն։

Լուաւ Տէր ձայնի լալոյ իմոյ. լուաւ Տէր աղօթից իմոց. և Տէր զխնդրուածս իմ ընկալաւ։

Քանզի զհեշտութիւն բնութեան՝ որ 'ի բնութենէն գայ, արտասուօքն լուանայ։ Եւ Տէր զխնդրուածս իմ՝ ընկալաւ. զի հոգին սբ ոչ մեկնեցաւ 'ի նմանէ, զոր խնդրեաց թէ՝ զհոգի սբ քո մի հաներ յինէն։

Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ամ թշնամիք իմ. դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի և խռովեսցին ։

Սատանայ և դևք են։ Յոյժ. զի ոչ պարզեն երեսք նց յամօթոյ. յորժամ խաբեալքն 'ի նոցանէ 'ի զղջութիւն եկեալ դառնան առ ած, երբեմն զանառակ որդին։ Յոյժ, զանչափն ասէ։ Վաղվաղակի. զի կարօտիւ և փութով յառաջ ելանէ հայրն ։

Սաղ

Սաղմոս վասն Քուշայ։

Տէրն մեր ուսոյց յաղօթսն՝ թողուլ իւրաքանչիւր յանցաւորացն, եւ ապա զիւրն յուսալ թողուլ։ Զօրութիւն զայս ունի սաղմոս, զի 'ի փախչելն Դաւթի յաբիսողոմայ, Սեմեի Գերայի եւ [illegible]՝ որ անիծանէին զնա, եւ աղաչէր զՏէր՝ [illegible]. եւ յետ այնր ասաց զսաղմոս զայս։

ՍԱՂՄՈՍ Է։



ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ ԻՄ 'Ի ՔԵԶ յուսացայ փրկեա զիս. եւ յամ հալածչաց իմոց ապրեցո զիս. 'ի ձեռաց գողգաց է։

Տէր Ած իմ 'ի քեզ յուսացայ. և ոչ 'ի մարդ։ Ցամ հալածչաց"։ Զի թէ որդի՛ նր կամէր ԶԻ՛ նմա, այլա ոչ ոքէր որ խաղաղութի՛ առնէր ԶԻ՛ նմա։

Գուցէ իբրեւ յափշտակիցէ զԴ առիւծ զանձն իմ. մինչ իցէ որ փրկիցէ եւ ոչ այն՝ որ ապրեցուցանիցէ։

Զի իբրև զԹագաւոր՝ ամ խոյսելնէ գայր 'ի վերայ նորա աբիսողոմ։

Տր Ած իմ եթէ արարի զայդ. եւ եթէ իցէ անօրէնութիւն 'ի ձեռս իմ։

Զայաց 'ի մարմինս մեծ՝ իբրև զոչխնչ։

Թէ հատուցի իբրեւ այնոցիկ, որ հատուցին ինձ չար. անկայց եւ ես 'ի թշնամեաց իմոց ընդունայն։

Հալածեսցէ այսուհետեւ թշնամին զանձն իմ. հասցէ եւ կոխեսցէ յերկիր զկեանս իմ. եւ զփառս իմ 'ի հող բնակեցուսցէ։

Փառք զԹագաւորութեն ասէ. ամ լիցք յայտ առնէ, թէ ոչ գտանէ թողութի ոք՝ թէ ոչ թողու իւրում յանցաւորին։ Որդ նմա չկայր ոխս առ աբիսողոմ. և առ աքիտոբէլ։

Արի՛ Տր բարկութեամբ քով. եւ բարձր լեր 'ի սահմանս թշնամեաց իմոց։

'Ի վրէժխնդրութի։ Կամ ամն մերոյ 'ի մահուանէ։ Բարկութեա։ 'Ի վճռ սատանայի Բարձր լեր"։ Կամ 'ի խաչ, կամ յերկինս համբարձմամբ։ Յորժամ սպանեցին թշնամիքն հրէայք 'ի հռոմայեցւոցն. կամ սատանայ վճարեաց զտանէն 'ի դժոխս զհոգիս մարդկան։

Զարթի՛ր Տր Ած իմ 'ի հրամանս քո՝ զոր պատուիրեցեր. եւ ժողովք ժողովրդոց շուրջ եղիցին զքեւ։

Զոր

Զոր օրինօքն պատուհիրեցեր՝ մահ է մահու. և պատուհաս է թշնամութեն: Կամ՝ որդին ոչ 'ի քանւան՝ զոր գուշակեցին մարգարէքն: Եւ՛ ժողովք ժողովրդոց": դաւթին՝ առ մի ամ հայր, և որդւով եկեղեցի որ՝ յանդամն նոր:

[illegible]

'Ի քարձր աթոռ դատաստանի երևելի Ծի: Եւ՛ դարձեալ առ հայր՝ յետ կատարման անօրէնութեն: Եւ՛ ոչ դատի զժողովուրդ իւր: Որդի յերկրորդ գալստեանն:

[illegible]

Դաւթի՝ առ աքիտոբէլ. և հայր որդւոյ՝ առ հրէայսն: Եւ՛ եկեղեցւոյ առ սատանայ. զի շատ կռուեցաւ ընդ սմա տարապարտ:

[illegible]

Սատանայի և հրէիցն 'ի հանդերձեալն: Զի անդ է կատարեալ հատուցումն երկուցն դասուց:

[illegible]

Զի անաչառ և անաղալ է դատաստան նր.

[illegible]

Զի կարօղ է յամի. և ոչ ածէ զկարկութիւն. համօրէն ամենին ոչ ածէ. ակն ունելով դարձի:

[illegible]

Այսինքն սպառնայ ցուցանելով զէնն: Սրով, 'ի մօտոյ մահուհաւմբ. և աղեղամբ, 'ի հեռաստանէ միջնորդօք. օտար հեծելօք, և այլազգօք. զորս 'ի կապարճն՝ այսէ 'ի յիշման իւրում, և 'ի դատողական զօրութե ունի: Զանօթս մահու. զգործիս սանջմանց: Եւ՛ զնետս իւր այրեցելովք է գործեալ: այրեկէք մեղքն. փայտ, խոտ, եղէգն: Հոգեկանն.

և

և մարմնական մեղօք մասին նոքա ցասման են. այլ և զդատա-
պարտեալսն 'ի հուրն՝ նոքա կոչէ. որք զայլս տանջեցին, տան-
ջելոց են և ինքեանք։ Բայց զի՞նչ են՝ երեք անունն 'ի վերայ
Ածն, Ած դատաւոր. Ած արդար. Ած փրկիչ. զոր երրորդու-
թեան յայտնապէս ցուցանէ մեզ։

Ահաւասիկ երկնեաց զանօրէնութիւն. յղացաւ ցաւս, և ծնաւ զա-
նիրաւութիւն։

Աքիտոբէլ, և յուդաս, նախ յղացան, և ապա երկնե-
ցին. ապա ծնան։ Զի յառաջ խորհեցան, ապա խօսեցան,
ապա գործեցին։

Սոյն գուբն՝ զոր փորեաց և խորացոյց, 'ի նոյն անկցի 'ի խորխորատ
զոր և գործեաց։

Զի խեղդամամբ աստի կենացս ելին. և անդէն 'ի յա-
ւիտենական կենացն։

Դարձցին ցաւք 'ի գլուխ նորա. և 'ի վերայ գագաթան նորա անօրէ-
նութիւնք իւր իջցեն։

Քանզի 'ի նեղքոյ անկցին անքաւելի մեղաց. այլ դաւիթ
զերծաւ 'ի գրոյն տառապանաց. և Ած մեր 'ի գերեզմա-
նէն, և եղ յերկինս։ Եւ՞ որ եկեղեցի ասէ։

Խոստովան եղէց Տն ըստ արդարութեան նորա. սաղմոս ասացից անուան
Տն բարձրելոյ։

Քանզի անուն նորա կալաւ զծագս երկրի. զի յանուն
յի քի ամ ծունր կրկնեսցի, երկնաւորաց և երկրաւորաց։

'Ի կատարած վասն հնձանաց սաղմոս։

Հնձան՝ սքանչելի ասէ, ըստ Տն աւետեաց. էս էմ որթ. և
զատուցեալսն չորեաց ոստ, որոց գինին ուրախ առնէ զերկին
և զերկիր. զանզի չարչարանաց Տն խորհուրդն, և ատաջելո-
ցն, և ամ հաստատելոց գործս և բան բարութեան՝ հաւատա-
ցեալ 'ի հնձան՝ իմաստ ողջոյն 'ի հնձան ծնընդ. այսինքն,
զննեալ՝ ըմպե գինի. որ է իմաստութիւն և գիտութիւն ուրախա-
րար գինի՝ Ած, և հրեշտակաց, և մարդկան։ Ողջ հնձան է
եկեղեցի՝ հաւատացեալ ամ հաստատեցելոց. Եւ զի հնձա-
նաց

նաց առէ. քանզի հրէից մի խորան էր. և մերս բազում, ընդ ծով, և ընդ ցամաք. ձեռագործ շինուածք ամ եկեղեցեաց. և յաւիտենական մի խորհուրդ պատարագի: Եբրայեցիքն ասեն Թէ՝ յորժամ Թերէր զտապանակն տաւիղն, և տնէր 'ի հնձանաց աւե-ղէոն Թագաւորացն Եբուսացւոց, և Տարշեալ էին քահա-նայքն, և ղևտայքն և երգասացքն երգէին, յայնմ ժամանակի ասացեալէ զսաղմոսս զայս: Այլ Տէրն մերոյն էառ զա, յոր-ժամ տղայքն քառասնօրէայք զովսաննայն աղաղակէին: Եւ տօզոս առէ, զէոսբ մի խոնարհելն տեսանէմք զյսն. որ է ճըմ-ջէր վն յաղթութեն մահու:

ՍԱՂՄՈՍ Ը.

Տէ՜ր Տէր մեր, զի՞ սքանչելի է անուն քո 'ի վերայ ամ երկրի:

Կոչումն հեթանոսաց: Աքանչանայ մարգարէս երկիցս կրկնելով զՏէրն. զի նախ քան զմարդ լինելն՝ և զկնի՝ մի Տէր է. որոյ անունն՝ սքանչելագործ է ընդ ամ երկիր:

Համբարձաւ մեծ վայելչութիւն քո 'ի վերայ քան զերկինս. 'Ի բերանոյ մանկանց տղայոց ստնդիեաց հաստատեցեր զօրհնութիւն:

Այսինքն՝ վերացաւ, համբարձաւ պատուէն նորա որ վայելէր մեծութեան նր. ոչ միայն զի մարդիկ գիտացին Թէ Տէրութիւն նր 'ի վեր է քան զերկինս. այլև՝ հրեշտակք ուսան յեկեղեցւոյ՝ զբազմապատիկ զիմաստութիւն նր: Որ նախ ծանաչելն զնա ը̄ Ածութեն, մինչև մարդացեալ էր: Իսկ այժմ գիտացին Թէ՝ տղայ եղև. և 'ի տղայոց բերանոց քառասնօրէից հաստատեցաւ եԹէ օրհնութիւն պարտին նմա ամ արարածք. որպ և 'ի զչարեն քահանայիցն ասաց. եԹէ դոքա լռեսցեն. քարինքդ աղաղակեսցեն: Եւ 'ի բերանոյ ասէ. քանզի ոչ 'ի սրտից կարէին կաԹնկերքն. այլ հոգին Սբ շարժէր զլեզուս նց:

Վասն Թշնամեաց քոց Տէր. զի եղծցէ Թշնամին և հակառակորդն:

Դիւաց, և հրէից. քանզի եղծաւ Թշնամին՝ հրէիցն քահանայութիւն. և բեկաւ հակառակորդն՝ սատանայ. ծած-կեալ յիմաստնոց և 'ի գիտնոցն. և ծանուցեալ տղայոց:

Տեսից զերկինս զգործս մատանց քոց, զլուսին և զաստեղս՝ զոր դու հաստատեցեր:

Զի՞ զարմանայք ասէ եթէ տղայք երգեն նմա . զի յայնմ հետէ տեսցեն մարդիկ զարարածս նր. և խոստովանեսցին զնա արարիչ ամ. և ինքնախօսութբ ասասցեն զնա, թէ տե սից զերկինս 'ի հանդերձեալն՝ յորժամ բացցեն դպրութիւնքն։ Նախ զհին արարածն՝ ուր և է խորհուրդն . և ապա զնոյն՝ զոր առնելոց ես, նոր երկին. և նոր երկիր, լուսաւո րօք։ Տեսից ասէ, գործն 'ի ձեռն երեւի երկնի, և արուեստն 'ի մատունսն. զոր գեղեցիկ կարգ աստեղացն ցուցանեն. թէ արուեստաւորի յօրինեալ է։ Զարեգակն չասէ . թերևս յայտնի է արդ . իսկ լուսին՝ և աստեղք՝ գիշերոյ սպասա ւորք , և փոփոխականք՝ անյայտք են ։ Դարձեալ՝ արեգակ աճեցարանն՝ որ քարոզի յայտնապ. լուսին օրէնքն. աստեղք մարգարէքն յայտնելոց են. մանաւանդ հրեշտակ՝ որ քօղ ունի և առաջ... զհին մատեանն, և զսխրտս նր։

Ո՞վ է մարդ՝ զի յիշես զնա տէր . կամ որդի մարդոյ, եւ թէ այց ինչ արասցես դու նմա։

Ադամ. զի յիշեաց այնքան, մինչ եղև ինքն մարդ , և որդի ադամայ։ Զի ոչ նմա միայն , այլ՝ որդւոց նր ողոր մեացի. որ բազմապատիկ մեղան քան զադամ։

Փոքր ինչ խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս . փառօք և պատուով պսակեցեր զնա. և կացուցեր զնա 'ի վերայ ամ ձեռակերտաց քոց։

Զի հրեշտակք յառաջնում աւուրն, և ադամ 'ի վեց երորդին . կամ զի՝ կարօտ կերակրոյ եղև . կամ՝ բ երկնաւ էառ տեղի։ Այլ՝ զառաքելոյն պարտիմք զթարգման խնդ նալ. որ ասէ զփոքր մի խոնարհեալն՝ տեսանեմ 'ի յս կա տարեալ, վս չարչարանաց մահուն . զի հրեշտակք անմահ են. սակայն մահ նր փառք նմա եղև խաչիւ պսակեալ։ Եւ դպր ձայն 'ի հօրէ փառաւոր արարի։ Եւ յս չև էր ասէ փա ռաւորեալ. զի չև էր խաչեալ։ Քանզի՝ խաչեալ մարմինն նր ած է 'ի վր ամ ձեռագործաց, հրեշտակաց և մարդկան։

Զամ ինչ հնազանդ արարեր 'ի ներքոյ ոտից նորա, զխաշն և զարջառ՝ և զամ ինչ։

Զհաւատն հաւատացեալ զոր յանձնեաց պետրոսի։ Զար ջառ, զառաքեալսն, և զմարգարէսն, և զվարդապետս. որ ե զինք են բանաւոր երկրի գործունեայք։ Եւ զամ ինչ. որ չև է կատարեալ գործով. այլ յորժամ հնազանդեսցին և փրկեսցին. 'ի քարոզել աճեցարանին բ ամ տիեզերս։

Եւս եւ զերէ դաշտի, զթռչունս երկնից, եւ զձկունս ծովու՝ որ շրջին ընդ շաւիղս ծովու։

Զհեթանոսս զվայրենամիտս։ Զթռչունս։ Զհրեշտակս։ Զձկունս, որք 'ի խորս չարեաց լողան, եւ 'ի հաւատալըն սրբլին։ Կամ՝ զմեռեալսն որք յառնեն, կերպարեալքն 'ի հաւուց. եւ 'ի ձկանց, հնազանդելին ըստ առաքելոյ. թէ յանուն յի քի ամ ծունր կրկնեսցի, երկնաւորաց եւ երկրաւորաց։ Երկնաւորաց՝ հրեշտակաց. երկրաւորաց՝ մարդկան։ եւ սանդարամետականաց. մեռելոց։ Եւ զի՛ ասէ զձկունս ծովուց, բազմաւոր. քանզի 'ի դժոխս յոլովք են տանջանարանաց տեղիք. ըստ մեղաց չափոց։ Իսկ զշաւիղն մի ասէ, զի մի է ճանապարհն մահու որով ամենեքեան մեռանին։

Տէր տէր մեր, զի՞ սքանչելի է անուն քո յամենայն երկրի։

Ցուցանէ թէ 'ինմանէ սկսեալ՝ 'ի նա կատարին արարածք ամ. Հրեշտակն ասաց ցմանուէ, զի՞ հարցանես զանուանէ իմմէ 'նա է սքանչելի. 'ի վեր քան զամ անուն, լի ըսքանչելեօք։

'Ի կատարած վս գաղտնեաց որդւոյն դթի. սաղմոս 'ի դաւթէ։ Եօթանասունքն վասն գաղտնեաց որդւոյն՝ ասեն։ Ակիւղաս վասն յաղթութեան մահուան որդւոյն։ Սիմաքոս՝ վասն յաղթութեան մանկութեան որդւոյն։ Թէոդոտիոն՝ վասն տղայութեան որդւոյ։ Մեկնաբանիչքն ամենեքեան վասն որդւոյն մտածեն. որ յաղթեաց բանսարկուին մահու։ Եւ ոչ էր գիտելի ամենեցուն, եւ ոչ առաքելոցն անգամ, որպէս եւ ասէ՝ էր բանն ծածկեալ 'ի նոցանէ։ Եօթանասունքն զայս յայտ առնէ գաղտնեացն ասել։

ՍԱՂՄՈՍ. Թ.



ՈՀԱՑԱՅՑ ԶՔԵԶ ՏԷՐ ԲՈԼՈՐՈՎ

սրտիւ իմով. պատմեցից զամ սքանչելիս քո։

Զօրաբաբէլ եւ ժողովուրդն ասեն։ Դարձեալ ըստ մովսէսի, սիրեսցես զտր ած քո յամ անձնէ եւ 'ի սրտէ. եւ ոչ տալ բաժանել զխորհուրդս՝ յարծաթսիրութի, եւ յոծսիրութի. յոսկէսիրութի, եւ 'ի քնասիրութի. յայս կեանքս, եւ 'ի հանդերձեալն։ Պատմեցից՝ Որ եբրայեցւոյն հետեւին՝ ասեն

ատեն. Թէ յորժամ եհար դաւիթ զադրաազար արքայ սու-բայ, ասաց զսաղմոս զայս: Գոհանամ եւ պատմեմ, ոչ միայն զայն, այլ՝ զա̃մ սքանչելիս: Սակայն՝ յայտնէ զկործանումն մանկու եւ դժոխոց, 'ի ձեռն մահուան որդւոյն իւր: Պատմե-ցից զա̃մ սքանչելիս քո: Թէ ադրիազար միայն էր, պարտ էր ասել զպարտութիւն քո. այլ ցուցանէ ոչ զադրիազար, այլ զա̃մ զոր գործեաց տէր 'ի գալստեան իւրում. զծնունդն 'ի կուսէ որ է տարաբութիւն որդւոյ. եւ զայլ հրաշսն, եւ զմահն. եւ զիջա-նելն 'ի դժոխս, եւ զյառնելն 'ի մեռելոց. որ անյայտ էր յիշ-խանաց աշխարհիս:

Ուրախ եղէց եւ ցնծացայց 'ի քեզ. սաղմոս ասացից անուան քում բարձրելոյ:

Ոպ̃ եւ այլ ոք ասէ, յիշեցի զա̃ծ եւ ուրախ եղէ: 'Ի քեզ ասէ ուրախ եղէց, եւ ոչ յայլ ինչ: Ցնծալն՝ առաւե-լութիւն է ուրախութեան. ո̃պ պայծառանայ հոգւով: Սաղմոս ասացից անուանդ՝: Իսկ թէ քո չեմք ասէ հասու. այլ զանուն քո բարձր քարոզեմք երգով:

'Ի դառնալ յետս թշնամեաց իմոց, տկարասցին եւ կորիցեն յե-րեսաց քոց.

Յորժամ դարձան յետս թշնամիքն, գիտացին թէ ա̃ծ ք̃ս է, բնաւեցին տկարացան եւ կորեան: Այլեւ՝ յորժամ դառ-նայ մահ յետս, եւ յառնէ տէրն. յայնժամ ա̃մ զօրութիւն հա-կառակորդացն տկարասցին: Յետս թշնամին ասէ խաւարն մահ. քանզի՝ դարձցին եւ տկարասցին ասէ:

Արարեր զդատաստան իմ, եւ զիրաւունս. նստար յաթոռ դատաւոր արդարութեան.

Յորժամ իրաւամբք դատին թշնամիքն՝ յայտնի թէ յոյժ եղեւ զդատաստանն: Այլեւ՝ որդին դատաստանաւ փրկ-եալ զմեզ՝ նստաւ յիւր սեփհական յաթոռն, ուստի ոչ էր մեկնեալ. եւ այնուհետեւ տեսանէ թշնամին զնուէր՝ նստել 'ի բարձունս. եւ զինքն իբրեւ զչարագործ՝ 'ի թշուառութիւն կործ-եալ, զդատապարտել եւ հանել 'ի նմանէ զկիրս հեթանոսաց:

Սաստեցեր 'ի հեթանոսս, եւ կորեան ամբարիշտք. զանուանս նոցա ջնջեցեր յաւիտեանս յաւիտենից. եւ թշնամւոյն զէն պակասեաց մինչ 'ի սպառ.

Առաքելովքն սաստեաց հեթանոսաց, ո̃պ յորժամ զոհս կամէին մատուցանել պօղոսի եւ բառնաբայ. եւ ո̃պ զաղաղաց

ւոց

ւոց ասէր. ո՞ անմիտ Գաղատացիք և կորեաւ սատանայ և ամբարշտութիւն։ Զանուանս նոցա ջնջեցեր : Զկռօնեայ, զՈրամազդայ, և այլոց. և ոչ երբէք անկանի ՚ի միտս նոցա կռապաշտութիւն։ Այլ՝ զանուանս նոցա ջնջեցեր : Զվիշապն բազմագլուխ, զթագաւոր և զիշխանս կռապաշտս : Եւ թշնամւոյն զէն պակասեաց։ ՚Ի սատանայէ ապստամբեալ զօրութիւնքն. թագաւորութիւնքն հեթանոսաց, զի նոքօք էր զօրութիւն նորա։ Դարձեալ՝ թշնամւոյն զէն՝ դիւթք և կախարդք. որովք գործէր մեծամեծ չարիս։

Զքաղաքս աւերեցեր. և կորեաւ յիշատակ նոցա աղաղակաւ։

Զդժոխս՝ որք զաղմուկ և զդամբանս. և զմեհեանս դիւաց և զմարդիկն՝ յորս բնակեալ էին դևք երբ ՚ի քաղաքի : Եւ կորեան յիշատակք. ոչ ումեք անկանի ՚ի յիշատակս կռապաշտութիւն։ Աղաղակաւ. որպէս՝ յայտնապէս և երևելի։ Այլև աղաղակաւ չքանէին դևք։ Դարձեալ՝ զքաղաքս աւերեցեր, զդժոխս. և զգերեզմանս՝ յաւուրն կատարածի։ Դարձեալ՝ յամենայն տեղիս եղ համբաւ կորստեան նոցա։

Այլ Տէր՝ և մնայ յաւիտեան. պատրաստեաց ատեան զաթոռ իւր ՚ի դատաստանի.

Անպաշտութիւն կայ և մնայ յաւիտեանս յաւիտենից։ Դարձեալ՝ կայ Աստուած միշտ. այլ մնայ աթոռն դատաստանի. որ յաւիտենական է, հատուցանել ամենեցուն զարժանն։ Պատրաստ արար. անդ հատուցանել. Ոչ միայն յայսմ աշխարհի եցոյց զիւր զօրութիւն. այլ և՝ ՚ի հանդերձեալն ցուցանէ զահագին ատեանն ամենայն մարդկան։ Աստ զգութն աւելի եցոյց։

Ինքն դատէ զաշխարհս արդարութեամբ, և զժողովուրդս իւր ուղղութեամբ.

Զի աստէն մարդկան դատաստանքն՝ սխալ էին և անիրաւ. և ծուռութիւն երբ հրէից։

Եղև Տէր ապաւէն տնանկի, օգնական ՚ի նեղութեան՝ ՚ի դէպ ժամանակի.

՚Ի լման ժամանակի՝ առաքեաց Աստուած զորդին լինել ապաւէն տնանկին ազգաց։ Դարձեալ՝ եղև Տէր ապաւէն տնանկին յորժամ տեսանէին զչարագործս ՚ի տանջանս զդևսն. և նա օգնէ աստէն տնանկացն ասելով. եկայք օրհնեալք հօր իմոյ։ Դարձեալ՝ եղև Տէր ապաւէն. որպէս և ասէ, ՚ի ժամանակի ընդունելութեան լուայ քեզ :

Յուսասցին 'ի քեզ ամենեքեան՝ որք գիտեն զանուն քո. զի ոչ թողեր զայնոսիկ, որք խնդրեն զքեզ Տէր։

Գիտեն, զի ողորմած ես. զի յայսմ աշխարհի յուսով են ամ արդարք. իսկ անդ՝ վայելմամբ։ Զի ոչ թողես"։ Զի ամ որ խնդրէ առնու։ Ասա զանունն գիտեն քո, անդ յինքն հային։

Սաղմոս ասասջիք Տեառն՝ որ բնակեալ է 'ի Սիոն. պատմեցէք 'ի հեթանոսս զգործս նորա։

Զի թէ և հնոյն ոք ասիցէ, այլ նշանակէ զնորս սիոն եկղ և պօղոս ասէ. մատուցեալ էք 'ի սիոն լեառն՝ յեհմ. յերկինս։ Դարձեալ՝ բնակեալ 'ի սիոն. ոչ այն՝ որ խաչեաց զնա, այլ՝ որ արդ փառաւորէ զնա։ Պատմեցէք 'ի հեթանոսս։ Սիմաքոս՝ զմեքենայս ասաց։ Ակիւղաս՝ զփոխմունս։ Արդարև՝ մեծ փոփոխմունք. թշնամիքն եղեն սիրելիք. հեռաւորքն՝ մերձաւորք. ծառայքն՝ որդիք. խաւարեալքն՝ լոյս. և այլն

'Ի խնդրել զարիւն նց՝ յիշեաց. և ոչ մոռացաւ Տէր զաղօթս տնանկաց։

Զոր զոհեցին դիւաց զորդիս, եկն և խնդրեաց ըզ վրէժ 'ի բռնաւորէն։ Զաղաղակ տնանկաց։ Զաղաղակ՝ ոչ զաղօթից. այլ զի՝ վս մեղաց մտին ախտք. և նեղութիւնք. և մեռելութիւն։ Զվշտանայն ասէ. և զաղէտսն անհանդուրժելի որ շարժէր զողորմութիւն ստեղծողին։

Ողորմեա ինձ Տէր՝ և տես զխոնարհութիւն իմ 'ի թշնամեաց իմոց. որ բարձրացուցանես զիս 'ի դրանց մահուանէ։

Ողորմեցաւ. յորժամ եբարձ զմեղս. զի ըստ նմա մտանէր մահ։ Եւ ո՞վ է թշնամին, թէ ոչ՝ սատանայ. որ խոնարհեցոյց զբնութիւն՝ ծառայել ախտից և կռոց։

Որպէս պատմեցից զամ օրհնութիւնս քո 'ի դրունս դստեր սիոնի, և ցնծացայց 'ի փրկութիւն քում։

Դուստր հնոյն սիոնի, և դուռն վերնոյն երուսաղէմի՝ եկեղեցի ասէ. քանզի եկեղեցեաւ մտանեմք անդ. ընդ անթիւ երախտեաց նր՝ բերել օրհնութիւն տալով նմա յեկեղեցւոջ։ Դարձեալ՝ դրունս սիոնի դերեւ՝ երկոտասան դրունս քրն՝ զոր ետես եզեկիէլ. և զնոյն ասաց մեծն յոհաննէս.

և ս

և երկրատեսան յողջոց մարգարէից: Եւ՛ ցնծացայց 'ի փրկութե քում. զի տւ փրկեցաք. մեծ է մեզ:

Ընկլան հեթանոսք յապականութեան իւրեանց՝ զոր արարին. և որոգայթն՝ զոր թագուցին, անդէն ըմբռնեցաւ ոտն նց:

Այս է, սաստեցան և անկան 'ի ջանալն ապականել զեկեղեցի: Որոգայթ զոր թագուցին'': Զի առաւել յետ մահուան առաքելոցն ըմբռնեցան յուռկանս աւետարանին. որով զերծանել կարծէին: Դարձեալ՝ դևք զոր հեթանոսք կոչէ, անկան 'ի կորուստ՝ զոր տն խորհեցան:

Ճանաչի տր յառնել դատաստանս իւր. և 'ի գործս ձեռաց իւրեանց կալաւ մեղաւորն:

Զի վն այսորիկ լինի դատաստան՝ զի ոչ ճանաչեն զնա: Եւ 'ի գործս ձեռաց'': Որք զտրն կամեցան որսալ 'ի մահ, ինքեանք որսացեալ եղեն 'ի կեանս: Դարձեալ՝ ամ՛ոք որ մեղանչէ, ըմբռնի 'ի նմանէ իբր 'ի կապանս:

Դարձցին մեղաւորք անդրէն 'ի դժոխս. և ամ հեթանոսք որք մոռանան զաստուած:

Որք դարձան 'ի տր, և վայելեցին 'ի քաղցրութէ նր, և ելին 'ի դժոխոց մկրտութ աւազանին, և դարձան յառաջին փախածն, հրաւիրեալք են 'ի դժոխս: Կամ՝ որք 'ի դժոխս զնայն տն՝ ոչ հաւատացին, սակայն՝ ելին ընդ թագաւորին մտանելոյն 'ի բանտն. և յաւուրն դատաստանի դառնան 'ի նոյն տեղի. կամ յայլ դժոխս. և 'ի դժնդակ տեղիս. զի անդրէն ասէն՝ ցուցանէ թէ նախ անդ էին:

Ո՛չ իսպառ մոռանայ տր զաղքատն. համբերութիւն տնանկաց մի՛ կորիցէ իսպառ:

Քանզի՝ երանելիք աղքատք հոգւով՝ թէպէտ թուին թողեալք 'ի ձեռաց. այլ զհամբերութիւնն՝ զոր ետուն տն, առնելոց են հազարաւոր:

Արի՛ տր՝ և մի զօրասցի մարդ. դատեսցին հեթանոսք առաջի քո:

Թագաւորքն՝ որ պաշտել տային զինքեանս պատկերօքն, յորժամ դատին, իմանան, թէ ծառայակիցք էին, և ոչ ածք:

Դարձ

Դարձեալ՝ մարդն անօրէնութեան Նեռն՝ մի՛ երկարեսցի ժա-մանակ նորա. զի մի՛ դարձեալ հեթանոսք լիցին, և դատին:

Կացո՛ Տր՝ օրէնսդիր 'ի վերայ նոցա. և ծանիցեն հեթանոսք եթէ մարդիկ են:

Ո՛չ զմխիթարելն, այլ որ ասացն, լուարուք զի ասացաւ ա-ռաջնոցն այս լինել. այլ ես ասեմ զայս: Եթէ ոչ եկի լուծանել, այլ լնուլ. զնա խնդրէ մարգարէս, զայցելութիւն՝ զոր արար գալստեամբն իւրով: Կամ՝ զնոր կտակարանս ասէ փրկա-նակ քեզ: Եթէ ծանիցեն հեթանոսք, և ոչ անբան անասունք. կամ դևք ապստամբք:

Ա. Եղերգութիւն և աղօթք Դաւթի:

Զոր առնէ գոռոզութեամբ զի երկայնմտութեան Տն. և հպարտութեան արդա-րացն. և համբերութեան աղքատին:

Ընդէ՞ր Տր կայցես 'ի հեռաստանէ. անտես առնես 'ի դէպ նեղութեան ժամանակի:

Հողմ՝ որ սիրէ զՏծ, ոչ վհատի 'ի նեղութեան. որպէս սա կի ոչ առնու զպատկեր Թագաւորի՝ մինչև 'ի բովս մտանէ: Այսպէս և դաւիթ, թէպէտ 'ի հնումն էր, զհոգևոր պա-տերազմ պատերազմէր. և գիտէր թէ 'ի չարեն եղև մեղան-չելն. և նեղէր զինքն զդ ջնմով: Դարձեալ՝ ընդէ՞ր Տր ան-տես առնես զայսչափ ժամանակս մինչև լնլեալ լրման ժամանա-կին. որ է դիպող ժամանակ: Դարձեալ՝ աղօթէր կոչել զհե-թանոս, և մի՛ յամենալ:

Յամբարտաւանել ամբարշտին՝ այրի աղքատն. արգելցին 'ի խորհուրդս իւրեանց, զոր և խորհեցան:

'Ի սպառնալն ամբարտաւանիցն սատանայ՝ աղքատն իբրև հրով տոչորեալ լինի. և հանէ 'ի բերանոյն իբրև բղ-ծուլ՝ զչարչարն և զհառաչումն: Արգելեալն 'ի խորհուրդս իւրեանց: Զի դու ես որ ըմբռնես զիմաստունս 'ի խորա-գիտութեան, և ոչ կարեն յաղթել սրբոցն:

Զի գովի մեղաւորն 'ի ցանկութեան անձին իւրոյ. որ զրկէ՝ և նա գովի:

'Ի սուտակասարգացն գովելն հեշտացեալքն 'ի ցանկութ աշխարհիս, սակայն՝ բարկանայ Տծ, որպէս և ասէ:

Իսկ ընդէ՞ր բարկացոյց մեղաւորն զՏծ, ըստ բազում բարկութեան իւր-ում, թէ ոչ խնդրէ:

Զի նախ մեղաւորն բարուք անգամ բարկանայ աղքատաց. այլ շարժէ զնա յերկրպագութիւն իւրմէ. զի առանց երկիւղի գործեն զչարիս, ամն ոչ ունելով թէ՝ լինելոց է ուրեք:

Ո՛չ է ահ ած առաջի աչաց նր. պղծեալ են ճանապարհք նր յամ ժամ:

Եւ՛ այն է պատճառ որ պղծ են ճանապարհքն և գնացքն յամ ժամ. զի ոչ հայէին յած միշտ:

Բարձեալ են դատաստանք քո յերեսաց նր. 'ի վր ամ թշնամեաց իւրոց տիրեսցէ:

Աստուծոյ իրաւունք 'ի սատանայէ և յիւրոցն. և կարծէ տիրել 'ի վր թշնամեաց. չտեսանէ զանձնենգ դատաստանն այ. որպ ասէր թէ հալից 'ի վր ամ տիեզերաց, և յափշտակեցից իբրև զձուս մնացեալս:

Ասաց 'ի սրտի իւրում, թէ ոչ սասանեցայց ազգէ յազգ առանց չարի:

Այն ոչ ունի տանջանաց. որպ միւս թարգմանն ասէ. թէ ոչ դարձայց 'ի չարեաց, և ոչ զղջացայց. զի յազգէ յազգս անխոռնի կենաց:

Անիծիւք և դառնութեամբ և նենգութեամբ լի՛ է բերան նր. և 'ի ներքոյ լեզուի նորա ցաւք և վաստակք:

Զոր խօսի դառնութեն և ոխ է 'ի հնութեն եկեալ. և նենգութեն՝ որ է կեղծաւորութեն: Լի է բերան ներքին, և վերին մտօքն: Եւ 'ի ներքոյ լեզուի թաքուցեալ ունի ցաւս հասուցանել ամենեցուն և վաստակս:

Նստի դարանեալ ընդ մեծամեծս 'ի գաղտնի՝ սպանանել զանմեղս:

Գաղտագողի մտանէ մեծամեծացն՝ յորժամ ինքն չէ կարող:

Աչք նր 'ի տնանկս հային. դարանի 'ի գաղտնի, իբր առեւծ 'ի մայրւոջ իւրում.

Մեծացն չկարելով՝ և տնանկին աղաման և ևւրոց սպառէ սատանայ. որ և հրեշտակաց թշնամութիւ. և աշակերտքն նր նոյնպս ընկերակցօք ջանան իբրև առիւծ 'ի տունէ դարանեալ, և 'ի գիշերի ըմբռնեալ զորս իւրեանց:

Դարանի յաքշտանէլ ողոքատն. յաքշտանէլ ողոքատն, և յգնել զնա:

Յորոգայթ էր ձգել զաղքատն:

Յորդայն էր խոնարհեցուցանէ զնա. խոնարհեցոյց և անկցի 'ի ներքոյ իւրում 'ի վերայ տնանկաց:

Եւ զգործոն ջանաց եա, սակայն ինքն խոնարհեսցի և անկցի

Զի ասաց 'ի սրտի իւրում թէ մոռացաւ Աստ. դարձոյց զերեսս իւր՝ զի մի՛ տեսցէ իսպառ:

Զարդամ. դարձեալ, վն յոլովութն մեղացն:

Արի՛ Տր Աստ իմ. բարձր եղիցի ձեռն քո. և մի մոռանար զտնանկս:

Տեսեալ զերկայնմտութն Այն դաւիթ. ապօթէ վն տնանկաց, թէ գոնեայ միրացն զձեռնդ 'ի հարկանել զչարն զի զերծցին տնանկք 'ի ձեռաց նց:

Իսկ՝ ընդէ՞ր բարկացոյց ամբարիշտն զԱծ. զի ասաց 'ի սրտի իւրում ոչ խնդրէ:

Այս է պատճառն, զի կարծեաց սատանայ թէ յաւիտեան ունի զիշխանութիւն. և Այն ոչ քննէ զխորամանկութիւնս նր, և զպէսպէս չարիս:

Տեսանես դու զնա 'ի ցաւս, և 'ի սրտմտութիւնս հայես. 'ի ձեռս Տեառն է աղքատն, և որբոյն դու ես օգնական:

Զի ասէ հարկ էնձ ասել զայս. դու ինքն տեսանես զցաւս աղքատին. և զարամութիւն թշնամեաց 'ի վն նորա. քեզ թողեալ է, չէ ումեք փոյթ: Աղքատ առաջին՝ աղամ, և զնոյն որք, յոյ և 'ի տրուպք էն:

Խորտակեսցէ բազուկ մեղաւորի՝ և չարի. խնդրեսցի մեղք նորա, և նա մի՛ գտցի:

Սեմաքոս, և նա մի՛ ապրեսցի 'ի չարեացն իւրոց: Ընդ-էր ոչ ասաց զմեղաւորն, այլ զբազուկն. քանզի մեղաւոր՝ մարդն. և բազուկ՝ սատանայ էր: Ցորժամ սատանայ ոչ լի-նի, և ոչ մեղք: Դարձեալ բազուկ, այսինքն՝ զօրութիւն որով մեղանչէք:

Տէր թագաւոր յաւիտեանս յաւիտենից. կորիցեն հեթանոսք յերկրէ նր։

Զի որ գործեն՝ ասեն ոչ քննէ տր. իսկ ես ասեմ՝ ոչ առնէ անտես։ Եւ վասն այսորիկ կորիցեն յերկրէն կեն-դանեաց հեթանոսք. զի այն է երկիր նր։ Դարձեալ՝ հեթանոս անուն չլինի յերկրի նր։

Զցանկութիւն տնանկաց լուար տր, 'ի պատրաստութիւն սրտից նոցա հայեցաւ ունկն քո։

Սիմաքոս, զպէտս սրտից նց տեսանես, և հաստուցանես Զցանկութի՛ւն։ Այնմ ցանկայ տնանկն՝ յորժամ խորտա-կէ զամբարիշտն զսատանայ. զի մի՛ կորուսցէ զմարդիկ։ Եւ լսել ասի դարձեալ՝ տալ զըղձայսն։ Պատրաստութի սրտից այն է, զի պատրաստ էին սրտիւք՝ ամ չարեաց համբերել, և շատ բարեգործել։

Դատ առնել որբոյն և տնանկի. զի մի ևս յաւելցուն մարդք, 'ի մե-ծամեծել նորա 'ի վերայ երեսաց երկրի։

Այսինքն 'ի վրէժխնդրութի ամն՝ մեծապս շահին եր-կեղծաւորքն յայս։ Զի մի ևս յաւելցի՛։ Այլքն տեսանել խրատին, և ոչ յաւելուցուն զինքեանս 'ի նց չարեաց Դարձեալ՝ նեղեալն մի յաղթեսցի։

'Ի կատարած՝ սաղմոս 'ի դաւիթ։

Յորժամ փախուցեալ էր 'ի սաւուղայ, և հեգնէին զնա, թէ չուեսցէ 'ի լերինս որպէս ճնճղուկ։ Այլ՝ եղբայրեցին և ասէին սոսա, թէ՝ յորժամ էր սա անձուկ, և 'ի գնալն անձկութեան 'ի վերայ երկրայնոյ, և 'ի տանելն զբանսն զնա, գերեցեն ամբարշտացն զնեղեալս նր. և 'ի ճնշմանն ոչ ոչ կարացուն երեխայսն, զի մի՛ ածցեն ընդ դասսն սորա զդառնութի։ Եւ զի թագեցաւ զգեներալս. որպէս եղև. յայնժամ երգեաց զայս զորհնութիւնս այս, և ասէ։

ՍԱՂՄՈՍ. Ժ.



ՏԷՐ ՅՈՒՍԱՑԱՅ. ՈՐՊԷՍ ԱՍԻ

ցէք ցանձն իմ, փոխեսցես 'ի լերինս որպէս ճնճղուկ։

Դուք զօրքդ հեգնելով ասէք, դառնացեալ վն կամանց ձեր գերելոց. և ես ապրեցայ որպէս ճնճղուկ յորոգայթէ որ-սողաց։ Դարձեալ՝ 'ի վն գողտայ և եզեկիայ։

Զի ահա մեղաւորք լարեցին զաղեղունս իւրեանց · պատրաստ արարին նետս ՚ի կապարճս, խոցել ընդ խաւար՝ զուղիղս այս ուղիղ են սրտիւ։

Լարեցին զաղեղունս ամաղէկացէքն, կամ սաւուղ, գլխաւոր բանակն բարս: Պատրաստ արարին զնետս ՚ի կապարճս: Զնետն զաւառ խորհուրդ էր ՚ի կապարճս: Զդել ընդ խաւար: ՚Ի բանի անօրէնով գայլս, որպէս զուղիղն զաւիթ սրտիւ. զոր և հրէայքն տն մերոյ. և սա սանայ տմ ուխտք. որոց նետքն չերևէին, բայց հարուածքն երևէին, յորժամ խոցէին մեզ։

Զի զոր դուն կազմեցեր՝ նոքա աւերեցին. իսկ արդարն զի՞ արար։

Խնամ տուեր Թագաւորութիւն, նոքա զեկեղեցեաց աւերեցին մեղօք. և զհիմն ոչ կարին. որպէս սատանայ զադամ. զոր դու ամենակալն ստեղծեր: Իսկ արդարն, տէրն՝ զի՞նչ արար հրէից, որ աւերեցին զերուսաղէմ: Եւ զաւիթ սաւուղայ. և ադամ սատանայի:

Տէր ՚ի տաճար սուրբ իւրում. Տէր յերկինս յաթոռ իւրում։

Ցեկեղեցի և յերկինս, յաթոռ, տեսանէ և դատէ զգործս մարդկան: Եւ մեք ՚ի վեր հայեսցուք յաթոռն դատաստանի, և մի մեղիցուք, և երկիցուք յեկեղեցւոյ:

Աչք նորա ՚ի տնանկս հային, արտեւանունք նր քննեն զորդիս մարդկան։

Զորս հրեշտակաց՝ որք առաքին ՚ի սպասաւորութիւն, աւաւել խնամն զտնանկս և զաստապեալս. որ ՚ի մարդ կանէ ոչ ոք է: Արտեւանունք նր": Ոչ զաչս պահեն յեկեղեցւոյ կարգն, զառաջնորդս եկեղեցւոյ, և զորդիս ադամայ, քննեն զլաւ և զվատթարս. շատ նեղելով տնանկաց: Դարձեալ՝ աչք նր ՚ի տնանկս հայլն օգնութեան, և զնոյն չարչարիչսն՝ մանր քննութեան դատի:

Տէր քննէ զարդարն և զամբարիշտն. որ սիրէ զանիրաւ, ատեայ զանձն իւր։

Զադամ, և զսատանայ, զդաւիթ, և զսաւուղ: Որ սիրէ զմարմնոյ հեշտութիւն, ատեայ զհոգին: Դարձեալ՝ ամենայն բնաւրքն չգան ՚ի դատաստան. իսկ որ գան, և նա դատի, ոչ կորնչին. զի ես մասին ունին արդարութիւն, և զամբարշտութիւն Քանզ խօսքի որ ՚ի բնաւ մնանէ, ոչ կորնչի:

Տեղասցէ ՚ի վերայ մեղաւորաց որոգայթս՝ հուր և ծծումբ. այս մրրկի բաժին բաժակի նոցա։

Զա

Զստամբակսն պատուհաս ՚ի հանդերձեալն, որ դիւրագոյն լինի նոցա. զի աստէն զանցաւորս առին. և նոքա զյաւիտենականսն Որոգայթ. զի յանկարծ լինի: Հուր, գործքն ծծումբ գործօղքն: Այս, որ է հողմն մրրիկն որ է հրախառն հողմն: Բաժին բաժակին: Զի բաժակ բարկութեան հատուցանելոց է, այլ ստամբակացն նոցա գործակցացն է:

Արդար է Տէր՝ և զարդարութիւնս սիրէ. զուղղութիւն տեսանեն երեսք նորա:

Որ հակառակն նոյ՝ զանիրաւութիւն սիրէ, և զթիւրութիւն, տեսանեն երեսք նորա:

՚Ի կատարած. ութերորդաց սաղմոս:

Յորժամ մեռաւ Սաւուղ, ասաց Դաւիթ զսաղմոսս զայս: Իսկ ձեռն ութերորդացն՝ ասացաւ ՚ի [illegible] սաղմոսին: Զաւուր[illegible] և զհրեշտակն [illegible]: Եւ ՚ի հանդերձեալ աւուրն՝ [illegible]

ՍԱՂՄՈՍ. ԺԱ.

Ապրեցո զիս Տէր՝ զի նուաղեաց սուրբ. նուաղեցին ճշմարտութիւնք յորդւոց ՚ի մարդկանէ:

Յաւուրս երեմիայի, եղիսէի, և և եղիայի, ՚ի մեռանելն նոցա: Դարձեալ՝ որք աստէն խոստացան կուսութիւն, և պարկեշտութիւն, և ոչ պահեցին:

՚Ի նանիր խօսեցաւ այր ընդ ընկերի իւրում. շրթունք նենգաւորք սրտէ ՚ի սիրտ խօսեցան:

Սաւուղ ընդ Դաւթի, և հրէայքն ընդ քր՟ի: Սրտէ ՚ի սիրտ": Իւրեանց սրտին նման կարծեցին զսիրտ նոցա:

Սատակէ Տէր զամ՟ շրթունս նենգաւորս, և զլեզուս մեծաբանս:

Զնախանձ չարեաց՝ որ ասէր նման լինել բարձրելոյն:

Որ ասացին. զլեզուս մեր մեծ արասցուք, շրթունք մեր առ մեզէն, և արդ՝ մեր ո՞վ է Տէր:

Զոր ինչ ախորժեմք խօսիմք, և չիք մեր թէ ուրեք բաց ՚ի կայսերէ: Այլև՝ նեռնն, և փարաւոն, և նաբուգոդոնոսոր:

Վասն թշուառութեան աղքատին՝ և հեծութեան տնանկին, այժմ յարեայց ասէ՝ Տէր. եդից զփրկութիւն իմ, և համարձակեցայց ՚ի նմա:

՚Ի վրէժխնդրութիւն տեառն մտանելոց և աղքատաց զրկելոց, որ առ Տէր աղաղակեն. ՚ի այնմ՝ զրկեալն ՚ի ձեռն աղաղակէ: Եւ որդին նոյ ՚ի հայրենի աթոռոյն՝ յաղագս զրկութեան բնութեան՝ յառնեմ ասէ: Եդից փրկութիւն իմ: Զխաչն ՚ի գողգոթայ. զի ՚ի նմա է փրկութիւն: Եւ համարձակեցայց ՚ի նմ

Հա

Համարձակ քարոզեցաւ ընդ ամ երկիր, և որք ոչ լուեան աստ յօրն վերջին լսիցեն։

Բանք Տն են բանք սբ, որպէս զարծաթ ընտրեալ և փորձեալ յերկրէ. որպէս զտեալ և պարզեալ եօթնպատիկ 'ի հողոյ։

Առնէ զոր խոստացաւ 'ի մարգարէս և յառաքեալսն. որպէս զարծաթ 'ի մարգարէսն, իբրև զոսկի յառաքեալսն. որք բեցաւ և մեկնեցաւ եօթնպատիկ 'ի հողոյ. ընդ եօթն սեանց իմաստութեան տանն. եօթն ճրագացն. եօթն աչացն. եօթն սուրբ խորհրդոցն։ Մեկնեցաւ եօթնարփի շնորհն հոգւոյն։ Ըստ այնմ զոր ետ ընդ յեկեղեցւոջ առաքեալս, մարգարէս, հովիւս, վարդապետս, ապա զօրութիւնս, ապա շնորհս օգնութեան։ Պարզեալ 'ի հողոյ. 'ի հողեղէնս հոգիս. և 'ի բերանս, փոքր ձուլեցին զբանն սրբոց. զոր եօթն նշանակէ։

Դու Տէր պահեսցես զմեզ, և պահպանեսցես զմեզ յազգէ յայսմանէ մինչև յաւիտեան։

'Ի յազգէ անօրէն թէպէտ և մեռաւ. և 'ի չորհեղեղէն։ Եւ ապրեցուցեր յազգէ յայսմանէ։ Որ ոչ են իբր նմանէ եթէ ոչ պահօք և աղօթիւք։

Շուրջանակի ամբարիշտք շրջին. ըստ բարձրութեան քում մեծարեցեր զորդիս մարդկան։

Շրջին կորուսանել մեզ շարժմամբ։ Ըստ բարձրութեան քում մեծարեցեր։ Զի որդիք այն կոչեսցին. վեհագոյն գոլով քան զհրեշտակս։ Եւ բարձեցին աստ շուրջանակի իբրև զմոլոր լրբութեան որդւոցն եդոմայ. զոր ասեն թէ՝ որդիքն եսաւայ լրբեցան, կանգնեցին զպատկերն անիծեալ եայ լբել, և խայտառակեցին անդ՝ արք, և կանայք։

'Ի կատարած սաղմոս 'ի Դաւիթ։

Զինչ մեղայն, և յետ յորում ապաշխարութիւն՝ ասաց զայս

ՍԱՂՄՈՍ. ԺԲ.

Մինչև յե՞րբ Տէր մոռանաս զիս իսպառ. մինչև յե՞րբ դարձուցանես զերեսս քո յինէն։

Պաղատանք են դարձի հեթանոսաց։ Ո՛չ թէ մոռանալ կարէ, այլ զկնի խնդրի մտացն յայտնէ, որ չտայր համբերել։

Մինչև յե՞րբ դնիցեմ զխորհուրդս յանձն իմ. և ցաւս սրտի իմոյ զաւուրս

Թէ

Թէ արդ հաշտեալ է ընդ, և դարձեալ դատիմ՝: Երբ ցաւք սրտի՝: Սահման ոչ գնէ, զնոյն ասելով զաւուրս. սուս կալով թէ և մեղք մեռանիմ ես

Մինչև յերբ բարձրասցի թշնամին 'ի վերայ իմ. նայեաց և լուր ինձ տէր ած իմ:

Քանզի երբ խոնարհիմք 'ի մեղս, բարձրանամ: Դարձեալ՝ առաջին արդարքն սուգ ունէին յանձինս վասն ելիցն 'ի դրախտէն: Ենովք՝ յիշեմ. ամ. մինչև փոխեցաւ անդ: Երբ հինգ հարիւր ամ՝ նոյ կուսութի պահեաց. ակն ունելով փոխման. մինչև լուեաւ այլ ինչ պահել նմա: Երբ աբրահամ, և իսահակ, և յակոբ, զայն խնդրէին, և մովսէս իսկ, և ոչ գեր կիրն աւետեաց: Զնոյն ցանկութի ունի դաւիթ, ասելով զմինչև յերբն՝ Նայեա և լուր՝: Հայելդ քաւական է հուր գծարաւ իմ:

Լոյս տուր տէր աչաց իմոց:

Մասցս տեսանել զցանկալին զայն՝ զոր ասաց, ես եմ լոյս աշխարհի:

Զի մի՛ երբէք ննջեցից 'ի մահ.

Զյաւիտենից մահնէ Ցանկայ անմահ կերակրոյն: Որն զերն մեղաց հեշտութեք, և անհաւատութեն մոռացմամբ թէ հուր բորբոքեալ կայ:

Մի՛ ասասցէ թշնամին՝ թէ յաղթեցի նմա. նեղիչք իմ ցնծասցեն թէ ես սասանեցայց.

Յորժամ մեղօք մեռանիմք անապաշաւ՝ յաղթէ նա: Կամ նեղիչք իմ ցնծասցեն, իբր 'ի վեր նախաստեղծիցն ասանմանն յանմահ կենացն:

Ես յողորմութիւն քո յուսացայ, ցնծասցէ սիրտ իմ 'ի փրկութիւն քում. օրհնեցից զտէր՝ զբարերարն իմ.

Թէպէտ ամաչեմ՝ յարդար ատենէդ, միայն յուսով քոյն հարկանեմ զողորմութեդ: Ցնծացաւ սիրտ իմ, 'ի յասելն հրեշտակին թէ նա փրկեսցէ զժողովուրդ իւր 'ի մեղաց իւրեանց: Օրհնեցից զքեզ. զի անբաւ բարերարութեդ որ առիս՝ օրհնութի պարտիմ քեզ, գոհութիւն և երկրպագութի.

’Ի կատարած. սաղմոս Դաւթի։
’Ի վերայ առաջնոյն մարդկութեանն. եւ ապերախտութեան, եւ որ զփրկութեան [illegible]
ժողովրդեան։

ՍԱՂՄՈՍ ԺԳ.

Ասաց անզգամն ’ի սրտի իւրում, թէ ոչ գոյ Աստուած։

Սենեքերիմ, և ռափսակ, և չարն ընկերն ասէր Ած. և այն եղև պատճառ։ Զի

Ապականեցան եւ պղծեցան յանօրէնութիւնս իւրեանց. եւ ոչ ոք է որ առնէ զքաղցրութիւն։

Ապականեցան, անկանել ’ի հաւատոց. և պղծեցան չար գործով. և ’ի մերձաւորաց նոցա ոչ ոք էր որ զգլաւն բարեաց նոցա քաղցրացուցանէր յուսով, թէ կայ Ած դատաւոր ամենի։

Տէր ’ի յերկնից նայեցաւ ’ի վերայ որդւոց մարդկան, տեսանել թէ իցէ՞ ոք իմաստուն, որ խնդրիցէ զԱծ։

Տէրն հայեցաւ և ոչ Ած. զի Ած՝ ամենատես թագաւորն. և տէրն դատող. դատողն յերկնից հայի. զի բազմացան չարեք մարդկան. և վերացաւ գթութիւն նոր յանդգամաց, որչափ բարձր են երկինք յերկրէ։

Ամենեքեան խոտորեցան ’ի միասին՝ եւ անպիտանացան։
Ոչ ոք է որ առնէ զքաղցրութիւն. եւ ոչ ոք՝ մինչեւ ’ի մի։

Եւ այն եղև պատճառ Ան գալստեանն ’ի առաքելոյ։

Ո՞չ գիտասցեն ամենեքեան, որք գործեն զանօրէնութիւն։

Ցանկալութիւն չարեացն՝ կորոյս զայն մտացն։

Որք ուտէին զժողովուրդ իմ իբրեւ զկերակուր հացի, եւ զՏէր ոչ կարդացին։

Ովք ուտէին զխորայծել բերանալիր Ած՝ բերանով, ըստ եսայեայ, դևք՝ և չար թագաւորք՝ ընտութիւն. և զհրեշտակն՝ գիւրքն և փախուցին։ Ըստ այնմ՝ ուտէին զոտունս այրեաց. ուտէին հացիւ. և զհացն առնուն, և այլ մնացի բանիւ խաբէին. իբրև հացիւ զոր տէրն ասաց։ Եւ սա Ած ոչ կարդացին։ Ո՛չ յիշէին զԱծ, և ոչ երկնչէին. յաւել ’ի դատաստանէն

Ան-

[illegible]

Ուր ակն չունէր սենեքերիմ՝ անդ սատակեցան. ճՁԵ. հազարքն։ Դարձեալ՝ անդ երկիցեն՞։ Երկիւղ է յեկեղեցի. այլ ոչ այդ 'ի հրեայսն. զի նոցայն ծառայական, և եկեղեցւոյս իբր որդի պատկառէ 'ի հօրէ նախ քան զանկանելն 'ի մեղս։ Զի տ՟ր է յազգս՞։ Որ ասաց ը՟ ձեզ եմ՝ զա՟մ աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի։

[illegible]

Զեղեկիայն. և դարձեալ՝ զայնմ որ աղքատացաւ վ՟ մեր. հրեայք և հերձուածողք, որք զխորհուրդն ա՟յ արհամարհեցին։ Զի տ՟ր է յոյս նո՟ր։ եղեկիայ, և բնութեն՝ հայր։

[illegible]

Զի անդ համարէին զա՟ծ, և անտի եւ հրեշտակն և սատակեաց զասորիս. և ազատեցան գերեալքն 'ի նոցանէ. և դարձեալ մինչ 'ի քաղաքն Ե՛ ցնծացաւ յակոբ։ Յուդայ և բենիամին։ Ե՛ ուրախացաւ իսրայէլ. տասն ցեղքն։ Այլ՝ ո՞ տացէ ասելն, իղձքէ և բաղձանք մարգարէիցն, 'ի սիոնէ տալ փրկիչ, զբանն 'ի վերին սիոնէ. և զմարդ լինելն 'ի բնութէս, զի սիոն մայր ասի, ուստի տուաւ յս՟, որ է փրկիչ իսրայէլի, և տ՟մ ազգաց։ Քանզի մինչ ծնաւ զերկոտասան ազգն յակոբ, կոչիւր նահապետ, և ապա իսրայէլ կոչեցաւ։ Ե՛ տ՟րն՝ մի կոչիւր նախ քան զառնուլն զերկոտասան անդամ բնութենս. և ապա՝ գլուխ անդամոց կոչեցաւ լման եկեղեցւոյ. և մեք գլխովն մեր՝ իսրայէլ ա՟յ կոչեցաք։ Զի զա՟ծ ոչ ոք ետես, բայց գլուխն մեր միածինն. 'Ի դարձուցանել տ՟ն զգերութի. զգերեալսն 'ի սատանայէ։ Ցնծասցէ յակոբ. արդարքն առաջինք. որ խառնեցին զհեշտութի մարմնոյ. և ուրախ եղև իսրայէլ. որք տեսին զա՟ծ 'ի մարմնի։ Այլ նոյն ինքն տ՟րն յակոբ և իսրայէլ՝ ցնծացաւ. և ասաց, գոհանամ զքէն հայր, տ՟ր երկնի և երկրի։

'Ի հաստատուն աղբերն 'ի գաւառէն։
Զի 'ի սիոն եւ 'ի պաշտպանին գործեցաւ մեծագոյն հրաշքն յաւուրբն . եւ
երկնաւորեալ ժողովրդոյն յոյժ, եւ ամէն։

ՍԱՂՄՈՍ. ԺԴ.

ՏՐ ՈՎ ԿԱՑՑԷ 'Ի ԽՈՐԱՆԻ ՔՈՒՄ.

կամ ո՞վ բնակեսցէ 'ի լերան սուրբ քո։

'Ի տաճարն և յեհէմ որ առ լերամբն սիոնի շինեալ է. և զանուանն մյ բարձեալ է։ Քահանայ 'ի տաճարին. կամ Թագաւոր 'ի լեառն սիոն։ Այլև՝ զխոսելով հոգևոյն ասէ զայս, թէ գալոց են անտի շնորհքս այս 'ի հեթանոսս։ Ո՞վ ձայն լսելի լինէր թէ գնամք ասոր, գնամք, և ոչ ևս դառնամք։ Դարձեալ՝ յանձնաւագործ խորանին 'ի լերինն եկեղ, ո՞ է որ ժամի ժառանգել, և յաւիտենից բնակել։

Որ գնայ անբիծ՝ գործէ զարդարութիւն խօսի զճշմարտութիւն 'ի սրտի իւրում։

Որ չառնու բիծ յոգի, և 'ի մարմին արատ ինչ. գործէ զարդարութիւն. զբոլոր մասունս ասէ արդարութեան անուամբ։ Խօսի զճշմարտութիւն ոչ 'ի լեզու միայն այլ 'ի սրտի իւրում։

Որ ոչ նենգաւորեաց լեզուաւ իւրով, եւ չար ընկերի իւրում ոչ արար։

Թէպէտ և 'ի սրտին չունի նենգ հպարտութեան, և ս ը հեգն չնախատէ սում բանիւ. զի զրկել զբկօղն։ Չար ընկերի ոչ արար արդևամբք։

Նախատինս 'ի մերձաւորաց ոչ առնու . արհամարհեալ է առաջի նորա չարագործն։

Հաւ անուշ լինել ամ ումեք, լալ ը լացողս, և խնդալ ը խնդացողս։ Արհամարհեալ է առաջի նր։ Ոչ կեղծիւք հաճոյ լինի ամ ումեք . այլ պարզ մտօք ասէ զչարիս. գովէ յամենեցունց, և ոչ ընաւ նախատի։

Զերկիւղածս տն փառաւոր առնէ. որ երդնու ընկերի իւրում, եւ ոչ ստէ։

Որպէս պօղոս ասէ. որ գնայր 'ի ճանապարհ անբիծ։ Երդնու և ոչ ստէ։ Որ եդև մարմնոյն ընկեր մեր, զԱծ այլ նըս տեսանելով։ Այսպիսի ինչ ասէ և յեսու որդի շմաւո

նի

նի. ինն խորհրդոց երանեցի ես, և զտասն ես ասեմ: Նախ՝ այր զոհարձացեալ յորդիս: Երկրորդ՝ որ կենդանի գոլով տեսանել զաեկումն թշնամեաց հաւատացելոց: Երրորդ՝ որ դիպեցաւ կնոջ իմաստնոյ: Չորրորդ՝ որ ոչ գայթակղեաց լեզուաւ: Հինգերորդ՝ որ ոչ ծառայեաց անարժան իրաց: Վեցերորդ՝ որ գտանէ իմաստութիւն: Եօթներորդ՝ որ խօսի յականջ լսողաց: Ութերորդ՝ զոր ոչ կործանեաց ախտ ագահութեան: Իններորդ՝ որ ո՛չ երկմտեաց 'ի յուսոյ. Այլ այսմ ամենի է երկիւղ տն կատարումն. զի նա է սկիզբն սիրոյն այ: Երդնու և ոչ ստէ, իբրև զյովնաթան. և ո՛չ ումք պաւուղ: Դարձեալ՝ քն աւազանաւն երդուեալ և ո՛չ ստէ. որ եղև մարմնովն ընկեր մեր:

Զարծաթ իւր 'ի վաշխս ոչ տայ, և կաշառս 'ի վերայ անպարտից ոչ առնու. որ զայս արասցէ, նա մի՛ սասանեսցի յաւիտեան:

Ո՛չ փխութական 'ի վարձու, և ո՛չ զաննութ բանն: Կաշառ 'ի վերայ իրաւանց": Ո՛չ մարմնական ինչս յանմանէ որ իրաւանց տրն է. և ո՛չ բան գոլութն վասն բանին: Որ զայս արասցէ": Որք են թուով տասն. ոչ սասանեսցի 'ի ճանապարհէ խորանին. և ո՛չ 'ի բնակութենէ նորա յաւիտենից: Նախ՝ գնայ անբիծ. Երկրորդ՝ որ գործէ զարդարութիւն. Երրորդ՝ որ ճշ է սրտիւ. Չորրորդ՝ որ ոչ նենգաւորեաց. Հինգերորդ՝ չար ընկերի ո՛չ արար. Վեցերորդ՝ ո՛չ նախատէ զայլս, և ո՛չ առնու փոխարէն. Եօթներորդ՝ արհամարհէ զչարագործն, և ո՛չ հաղորդի, թէ և մեծ ոք է. Ութերորդ՝ զերկիւղածս տն մեծարէ կցորդ լինելով. Իններորդ՝ զարծաթ 'ի վարձու ո՛չ տայ. Տասներորդ՝ կաշառ ոչ առնու. անսասան մնայ յաւիտեան: Տասն՝ որք է և նուէր այ. և լնու զինն դասս հրեշտակաց. իբրև զդրամն, և զոչխարն:

'Ի չափաւորած Յարձանագիր սաղմոս 'ի Դաւիթ.

Արձան՝ ո՛չ միայն զարդն՝ որ 'ի վերայ գերեզմանին առնի. այլ յորժամ գրեն և արձանագրութեանն զյաղթութիւն պատերազմաց. զաւերումն զաղաքաց: Այս և այս սաղմոս ունի զմարգարէութիւն չարչարանաց քի. զյաղթութիւն մահու. և զխորտակումն դժոխոց. և զյարութիւն 'ի մեռելոց: Եւ ըստ գիտելոյ մարմնոյ իւրոյ ասէ առ հայր աղօթելով 'ի դիմաց մերոց. ըստ և ասէ Պօղոս. Թէ յաւուրս մարմնոյն՝ աղօթս և պաղատանս մատուցանէր, և լուեալ լինէր.

ՍԱՂՄՈՍ ԺԵ.

Պահեա՛ զիս Տէր, զի ես ՚ի քեզ յուսացայ. Ասացի Տեառն, Տէր իմ ես դու՝ և բարիք իմ ՚ի քէն են:

Հայր իմ պահեա՛ զիս յանուն քո, Տէրն աղօթեաց առ Հայրն յուսումն մեզ. զի իմ պատուէրանօքն ևս ուղղեսցէ առ Հայր զկեանս մեր: Ասացի Տէրն՝ Տէր իմ ես դու: Մեք քարոզն և փայտին ասեմք Հայր և Տէր. նա ասաց եղանեմ ևս առ Հայր իմ, և առ Հայր ձեր. Տէր իմ, և Տէր ձեր: Եւ բարիք իմ քեզ չեն": Զոհքն և խունկ հրեշեցն. ոչ լինեն աստ: Եւ կամ յայլ ինչ զոր պարծի մարդ. զի անկարօտ է բնութ: Զի ոչ առնելն մեզ բարի՝ այն չունի փոխարինի. և մեք զոր առնեմք ոչ մեր է. նմա չէ ինչ պիտոյ:

Սրբոց որոց՝ որք են յերկրի նորա. սքանչելի արարեր զամ կամս իմ ՚ի նոսա:

Առաքեալքն յեկեղեցւոջ, և յերկրի քո են և ոչ յօտարի: Սքանչելի արարեր": Զի սքանչելեօքն զոր գործէին առաքեալքն, լինէր կամք Տէր. որ է փրկութիւն մարդկան:

Յաճախեցան հիւանդութիւնք նոցա. յետ այնորիկ ապա փութացան:

Բազում փորձութիւն յետ այսորիկ ապա փութացին ՚ի փրկութիւն, բացեալ զաչս մտացն:

Ոչ ժողովեցայց ՚ի ժողովս նոցա յարեանց. և ոչ յիշեցից զանուանս նց ՚ի շրթունս իմ:

Որ ժողովին ՚ի զոհել արեան՝ հրէայք և հեթանոսք, ես չեմ անդ ՚ի գլուխ այնոց ժողովելոյն. և զնոսա ոչ յանձնեմ քեզ Հայր. այլ որք զանարեան պատարագս ժողովին մատուցանել: Եւ դարձեալ՝ զարիւնահեղս վկայիցն ասէ:

Տէր բաժին ժառանգութեան իմոյ՝ և բաժակի իմոյ դու ես, որ այսրէն դարձուցանես զժառանգութիւն իմ ինձ:

Մահուան իմոյ զկիրք՝ եկեղեցի է ասէ որդին առ Հայրն: Դու ես որ այսրէն դարձուցանես": Ոչ ասաց տաս, այլ այսրէն դարձուցանես զմարդիկ, և զդրախտն՝ զոր ունէր ադամ նախ, և կորոյս յանցանօք, մահուամբ իմով այսրէն դարձ:

Վիճակք ելին ինձ ընտիրք, և ժառանգութիւն իմ հաճոյ եղև ինձ:

Ընդ Թագաւորս, և ընդ քահանայս, և ընդ մարգարէս անուանի ասէ: Եւ ժառանգութիւն իմ հաճոյ եղև ինձ: Նոցա չէին հօտքն, զի վարձկանք էին. և չեղև նց հաճոյ՝ ժառանգել վասն նց. բայց ինձ, զոր դու Հայր՝ ինձ ետուր զհեթանոսս:

Օրհնեցից զՏէր՝ որ խրատեաց զիս, մինչ 'ի գիշերի ևս խրատեցին զիս երիկամունք իմ։

'Ի դիմաց եկեղեցւոյ է։ Մինչ 'ի գիշերի։ 'Ի տնէ ուսայ յուսով արթուն կալ՝ զչորրորդ ժամ գիշերոյն. որ է կենցաղս այս, և հասակն։ Երկամունք։ Երկնաւոր ցանկութիւն զի լաւ է քան զանցաւորս։

Յառաջագոյն տեսանէի զՏէր առաջի իմ յամենայն ժամ. զի է ընդ աջմէ իմէ, զի մի սասանեցայց։

Զայս և ինքն իսկ ասէր, չեմ միայն զի հայր ընդ իս է։ և այժմ ընդ աջմէ եկեղեցւոյ. ըստորում հայր կոչէ զնա յերկինս. ով թէ ինքն անդ իցէ անսասան։ Յամօթ լիցի արիոս, որ արարած ասաց զՈրդին. որ և 'ի մեռանելն՝ Տյ ընդութեն ասաց զՏմ։

Վասն այսորիկ ուրախ եղև սիրտ իմ. և ցնծացաւ լեզու իմ, ևս և մարմին իմ բնակեսցէ յուսով։

Որ է հոգին ո՞ր կենդանի հոգւոյն։ Եւ ցնծացաւ լեզու իմ. 'ի կոչելն զնա հայր։ Եւս և մարմին իմ. զի դեռ մարմնով չեմք անդ. քանզի ակն ունիմք փրկութեն մարմնոյ՝ ասէ պօղոս, զի յուսով ապրեցաք։

Զի ոչ թողցես զանձն իմ 'ի դժոխս. և ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն։

Զայս պետրոս մեկնեաց 'ի գլուխն մեր. զի ոգի նորա ոչ թողաւ 'ի դժոխս, և ոչ մարմին նր ետես զապականութիւն։ Զի զի՞նչ էր կերեալ եկեղեցի և անմահացեալ, թէ ապա կանեալ էր մարմինն 'ի գերեզմանին։

Ցուցեր ինձ զճանապարհս կենաց, լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց քոց 'ի քաղցրութեան աջոյ քո մինչև իսպառ։

Զայս եկեղեցի ասէ, ուսեալ զճանապարհն՝ որ ասաց, ես եմ ճանապարհ։ Լցուցեր զիս ուրախութեամբ. զի տեսաք զերեսս քո՝ զոր տմ արդարք ցանկացան. 'ի քաղցրութեն և ոչ յարժանեաց լինց։ Կացուսցես յաջմէ քումէ խաղաղ վայելել և յաւիտենական։ Ընդդէմ է սաղմոս և յամօթ ապօղինարի որ ասաց, հոգի ոչ էառ։ Եւ զեւտիքէս յանդիմանէ, որ ասէ թէ մարմին չէառ։ Եւ զսիմոն թէ երկու որդի է։ Զի միաւոր ասէ միշտ։

'Ի

'Ի չարարած [illegible] 'ի [illegible]:

Մինչ [illegible] 'ի [illegible], [illegible]:

ՍԱՂՄՈՍ· ԺԶ:

Լուր Տէր արդարութեան. նայեաց 'ի խնդրուածս իմ. ունկն դիր աղօթից իմոց՝ զի ոչ շրթամբք նենգաւորօք:

'Ի վր գերութն, և դամբանելի է: Լուր Տէր արդարութեան: Զխնդրուածս կոչէ արդարութին, և ոչ պարծի վարուք: Ունկն դիր աղօթից իմոց, զի ոչ շրթամբք նենգաւորօք: Զի ոչ զայլ խորհիմ, և զայլ խօսիմ:

Յերեսաց քոց իրաւունք իմ ելցեն, և աչք իմ տեսցեն զուղղութիւն:

Քո տեսանելով արա ինձ դատաստան, զոր տեսանեմ աչօք իմովք զուղիղն:

Փորձեցեր զսիրտ իմ, և խնդրեցեր 'ի գիշերի. փորձեցեր զիս՝ և ոչ գտաւ յիս անիրաւութիւն:

Շատ անգամ մատնեցաւ սաւուղ 'ի ձեռս դաւթի, և 'ի գիշերի ևս, և ոչ սպան զնա՝ ասելով, յանօրինաց ձեռաց ելցէ չար և ոչ յինէն: Դարձեալ՝ գիշերն է կենցաղս այս:

Մի՛ խօսեսցի բերան իմ զգործս որդւոց մարդկան. վասն բանից շրթանց քոց ես պահեցի զճանապարհս խիստս:

Զոր գործելով պղծեաց զինքն սաւուղ, մի՛ պղծեսցուք զբերանս մեր պատմելով զայն: Վասն բանից շրթանց քոց՝ ես պահեցի զճանապարհս խիստս: Որ ասացեր ադամայ, 'ի քիրտն երեսաց քոց կերիցես զհաց քո: Եւ թէ՝ դառնալ 'ի հող: Դարձեալ՝ որ ասացեր անձն ընդ անձին. և այլն: Այլև՝ զոր Տէրն ասաց, նեղ է ճանապարհն, որ տանի 'ի կեանս:

Հաստատեա՛ զշաւիղս իմ 'ի ճանապարհս քո. զի մի՛ գայթագղեսցին գնացք իմ:

Զնուրբ գնացս պատուիրանաց քոց՝ հաստատ պահել. և անգայթակղ մնալ միշտ,

Ես առ քեզ Տէր կարդացի՝ զի լուար ինձ Տէր, խոնարհեցո՛ առ իս զունկն քո. և լուր բանից իմոց:

Զի նախ լռեար ինձ ըստ յօժարութեան յաջողելով ամ՛ ուրեք, զայն կարդացի ով ՚ի գրի, և յուսացայ ՚ի քեզ: Խո նարհեցո՛: Յանբաւ բարձրութեննէդ խոնարհեցո՛ ասէ:

[illegible]

Զի կրտսեր էի ՚ի տան հօր իմոյ և տղայ. ո՛ զարմանալեացս Փրկես զիս յայնցանէ՝ որ հակառակ կան աջոյ քո: Սաւուղ, աբիսողոմ. այլազգիք ամ՛. եղեկխայի և զօրաբաբելի իւրեանց ոսոխքն: Աջոյ քո՝ որով օծայ թագաւոր:

[illegible]

Բազում պահպանութիւնք աչաց՝ բիբն, արտեւանունքն, յօնքն. նոյնպէս յերկրորդութեան եղիցի ինձ յոլով խնամակալութիւն: Ծածկեսցես": Զի մի բնաւ տեսցեն աչք թշնամեաց իմոց զիս: Որք տառապեցուցին և հալածական արարին: Այլև գեղքն իմանալի թշնամիք:

[illegible]

Շատ անգամ արարին զայս, ով յայրին: ՚Ի ձարպս իւր եանցս: Յուրախութեան արգելան. և ՚ի լուսոյ, զի ոչ կարացին ըմբռնել: Ոմանք զգլխութիւն և զխափկութիւն ասեն ձարպ. որ արգելոյր զնա ՚ի խորհելոյ, և զարժանն յիմանալոյ, զի ամ բարտաւանս խօսէին:

[illegible]

Յերկրէն խարայելի. և այժմ դարձեալ պատեցան զինեւ առ լերամբ մով: Ուշ եդին խոնարհեցուցանել": Յամ զօրութեան ջանան, յօգնականութեամբ քումով՝ որ բարձր պահես զիս, խոնարհեցուցանել, և տալ գերեզմանի:

[illegible]

Զօրութիւն բանականի ՚ի բաց ընկեցեալ՝ չար գազանի նմանեցին որսալ զիս, դարանամուտ լինելով:

Առ՛

Արի՛ Տր՝ ժամանեա՛ նց, և խափանեա՛ զնս. փրկեա՛ զանձն իմ յամպարշտաց, 'ի սրոյ՝ և 'ի յձեռաց Թշնամւոյն :

Ընթա՛ ը առաջ մինչև եկեալ են, փրկեա՛ զանձն իմ 'ի սրոյ և 'ի ձեռաց Թշնամւոյն : Թէ արժանի լինիմ մահու, մի նց սուր սպանցէ զիս, այլ քո: Զոր այլ Թարգմանն ասէ, սուր քո 'ի ձեռս Թշնամեաց իմոց՝ մի սպանցէ զիս : Կամ՝ սուր քոյոյ Թշնամւոյն 'ի ձեռին քո. զի քո են Թշնամիքն իմ և ը քեզ կռուին. և 'ի ձեռս քո է կեանք և մահ նց. Թէպէտ ոչ գիտեն :

Տր նուա՛ զնս յերկրէ. բաժանեա՛ և խափանեա՛ զնս 'ի կեանս իւրեանց:

Մարգարէութը ասէ զսաւուղ 'ի կորուստն. բաժանեա՛ 'ի Թագաւորութենէն. և խափանեա՛ 'ի կենաց:

Գաղտնեօք քոյ լցաւ որովայնք նց. յագեցան խոզեղինօք, և թողին զմնացորդս տղայոց իւրեանց :

Զբարկութիւն ասէ զոր 'ի ծածուկ ունիս, տալ ամբարշտաց Թէ ոչ դառնան. ը այնմ. ո՞չ այս ամ ժողովեալ է առ իս և կնքեալ պահի: Որովայն նց՝ որ է խորհուրդն, լի է չարութը, զոր դեռ կամին առնել. և այն է նիւթ բարկութեան հրոյդ, որ կայ 'ի գաղտնիս. նովին չափով յագեցան կերակրով: Սիմաքոս ասէ կերան հարքն և յագեցան հարուածովք. և Թողին զպատուհաս տղայոց իւրեանց: Զի է չար՝ զոր գործեցին, և առին զհատուցումն. և է՝ զի Թողին որդւոց իւրեանց չար ուսումն, և ը այնմ պատուհաս :

Ես արդարութը երևեցայց երեսաց քոց. յագեցայց յերևել փառաց քոց:

Երեսս՝ զոր դու սիրես տեսանել, արդարութը գնալն է, և երևել առաջի քո 'ի տեսիլ աչաց քոց: Յագեցայց յերևել փառաց քոց: Նոքա չարեօք և բարկութը յագեցան. այս է՝ չԹողին չար, զոր ոչ արարին. իսկ ես արդարութը գնացից. և փառաւորելովն քո զդէմն, յագեցայց. քաղցեալ և ծարաւի գոլով արդարութեան՝ որ ես դու, Տր իմ և Ած իմ օրհնեալ յաւիտեանս յաւիտենից:

'Ի կատարած 'ի վերայ պատերազմօղ նահատակի ծառային տն դաւթի. որ խօսեցաւ ընդ տն զբանս օրհնութեն . յաւուր յորում փրկեաց զնա տր 'ի ձեռաց ամ թշնամեաց, և 'ի ձեռաց սաւուղայ. և ասէ ։

Վերջին ցուցանէ վերագիրս՝ զայս բան դաւթի. զի յօրհնաւ տն իւրոյ նահատակեցաւ ընդդէմ երևելի թշնամեաց. և յաղթօղ գտաւ։ Զի յոյժ զօրհնեցաւ այս նմա՝ լինել օրհնաւ ըստ մարմնոյ որդւոյ իւրոյ, որ մի- այն բանիւ. այլև առնաւ մի իրօք. այնու՝ զի 'ի գողգոթա ոչ երևեաւ. և 'ի վերջին փղշտացւոյն գերեալ ըն երևեաւ։ Որ և տրն 'ի փորձութեն ոչ երևեաւ, և 'ի ժամանակի չարչարանացն՝ գերեալ ըն զարհուրելեաւ։ Իբրև սանք աղմուկ զհարկաւորս էմմանուէլի, զմահ նր, և զյարութեն և զհոգւոյն հեղմանսաց. այլև՝ զերկրորդ գալստեանն նշանակն ։

ՍԱՂՄՈՍ. ԺԷ։



ՍԻՐԵՑԻՑ ԶՔԵԶ ՏԷՐ ԶՕՐՈՒԹԻՒՆ իմ. տր հաստատիչ իմ, ապաւէն իմ՝ և փրկիչ իմ։

Ընդ ամ բարեաց տյ՝ ոչ գոյ նմա արժանաւոր պատա րագ, քան զսէրն . զոր մովսէս օրինադրեաց . և տրն երկ- րորդեաց . և յաւել ևս նորագոյն զօրութի։ Ոչ հեծեալք, և ոչ զէնք, այլ՝ դու տր հաստատիչ յետ մեղաց շարժմանս։ Ապաւէն. երբ ամրոց, յոր անկանի յերկիւղէ։ Եւ օգնեցեր ձեռն տուեր, և կանգնեցայ նաթանաւ։ Եւ փրկիչ 'ի պատե րազմողաց։

Այ օգնական իմ, և յուսամ 'ի նա. ապաւէն իմ, եղջիւր փրկութեն իմոյ՝ ընդունելի իմ է։

Յոյժ միայն մեր եղջիւր. ոտք եղջիւր եղեն է զէն և զօրդ, և քո բարձր զօրութիւն իմ։

Օրհնելով կարդացից առ տր, և 'ի թշնամեաց իմոց ապրեցայց

Ոչ միայն կռուելով ընդ թշնամիսն, այլև՝ օրհնելով ըզ քեզ ապրէի 'ի թշնամեաց։

Շուրջ եղեն զինև երկունք մահու. և ուղխք անօրէնութեն խռովե- ցուցին զիս։

Ոպէ երկն յղւոյ մերձ 'ի մահ, նոյնպէս՝ յորժամ աստի անտի խառնէին յերեարս անօրէն հեթանոսք և անօրինելք սաւուղ, և աբիսողոմ, խռովեալ լինէին. և երբ ուղխս ջուրց յարուցեալ պղտորէին զխորհուրդս ։

Վերայ դիտելոյ պատուիրանին Աստուծոյ. և ժամանակին [illegible] [illegible] [illegible]։

Իբր զնի կենդանի ՚ի վշտալից գերեզմանի, ժամանեն զրդայթք մահու, յաքխտութելոյ և յայլոց եղեալ։

՚Ի ննջել [illegible] [illegible] [illegible] [illegible], և [illegible] [illegible] [illegible] [illegible]։

Եւ ոչ յայլևս հնարս վստահանայի։

Իբր զանպտուղ ծառս տերևազարդս, ուր գազանք որ- ջանան. իբրև թագաւորքն քանանացւոց. և որ նաբուգոդո- նոսոր, որ զինքն տեսանէր։

Անցի՝ և ահա ոչ էր. խնդրեցի՝ և ոչ գտաւ տեղի նր։

Թէ՝ չնախանձեցայ, և չերանեցի. յետոյ խնդրեցի. և ոչ գտաւ տեղին քանանացւոց թագաւորաց. այլ՝ որդւոցն իսրայէլի։

Պահեա զամբծութիւն. և տես զուղղութիւն. զի գոն մնացուածք առն խաղաղարարի.

Սիմաքոս, պահեա զմիամտութիւն։ Զի գոն մնացուածք. Թէ պահես անբիծ զմարմինդ, և զտեսող զհոգին ուղիղ 'ի հաւատս. և հոգին առնէ զխաղաղութիւն զայս, և համդէպ աստէն. և մնացուած՝ զոր տնին է տալոց յետ երկնին. որդի այ կոչեսցիս յառաջին գալն, և 'ի հանդերձեալն՝ առնուս զյաւիտենից կեանսն. զհայրենին ժառանգել, ասա զհար- խութիւն։ Եթէ զի՝ չեն արդարքն իբր զգալոյ, որ ոչ բողո- քիցէ, այլ՝ իբր զթզենի և զայգի, որ հասանեն, և անեն

Անօրէնք հալածեսցին 'ի միասին. և զաւակ ամբարշտաց կորիցէ։

Սիմաքոս, ամբարիշտք 'ի վախճանի կորիցեն:

Փրկութիւն արդարոց 'ի Տնէ է. վերակացու է նց 'ի ժամանակի նեղութեան:

Զի մի՛ նմա արդարք մնացին, երբ յովսէփ, նաև դա- նիել: վերակացու եղև 'ի ժամանակի նեղութեան. երբև էր յով- սէփ 'ի բանտի, և դանիել՝ 'ի գուբ առիւծոց:

Օգնեսցէ նոցա Տէր՝ և փրկեսցէ զնոսա. ազատեսցէ 'ի մեղաւորաց՝ և կեցուսցէ զնս, զի յուսացան 'ի նա:

Փոխանակ՝ զի յուսացան 'ի նա. զի ոչ լռեաց յովսէփ՝ կնոջն, և ոչ դանիել խափանեաց զաղօթսն երիցս անգամ յօրն:

Սաղմոս 'ի դաւիթ. առ 'ի յիշատակ շաբաթու:

Զինչ մեղացն՝ յորժամ ժամանակաց անցելոց 'ի վր՝ առաջ գայր 'ի խղճէ մտացն նեղելով: Այլև՝ 'ի դէպս նմանապէս յանցուցելոցն՝ բժշկարան է և դեղ զօրաւոր 'ի հոգւոյն: Իսկ շաբաթուն առեալ, զի հանգիստ լի- նի ապաշխարողացն 'ի խղճէ մտացն. զի և մեղաւորքն էին որ առաքէին լու- ծանէին ինքեանց զհանգիստն. և շաբաթն հանգստեան արդարոցն՝ ա- նուանի. որ լինի զինի եօթներորդին ութերորդին. այլ և առաւ փրկեցա- շաբաթն ջրհեղեղին 'ի նովաւ. 'ի յեօթնեկն 'ի յունին: Եւ այլ լուծիչ շաբաթու՝ ջրհեղեղ լինէր. նոյնպէս և որ մեղօք առաւ լուծանէ զշաբա- թուն հանգստեան արդարոց, յայտնի բանս և յարհաւիրս կացցէ. զի մի՛ կորիցէ զյաւիտենից ջրհեղեղաւն 'ի համահաւասար աւերնին. վէմ ասէ:

ՍԱՂՄՈՍ. ԼԷ:



ՄԻ՛ ՍՐՏՄՏՈՒԹԵԱՄԲ ՔՈՎ յանդիմաներ զիս. և մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս:

Զի դէմն սրտմտութեան և բանն բարկութեան ցուցանէ անդ. դատաւորն. այլ զի՝ և խրատն սաստ է, և ոչ անդ. խրատ- ուեմ, և ոչ զայրացմամբ ասէ, այլ՝ հայրաբար:

Զի նետք քո հարան զիս. և յիս հաստատեցաւ ձեռն քո:

Փոխանակ յողորմութեն շարժելոյ զՏծ՝ ասէ նետք քո. փորձանքն և խիղճ մտացն: Այլև՝ ասեն թէ՝ և 'ի հարկա- նելն նետիւ զոր կամի, հանգչէին ձեռք աղեղնաւորին: Ասէ յիս հաստատեցաւ ձեռն ցասման քո. հանգ. արդ. զցասումն քո. զի յերկարեցաւ առիս շատ:

Ո՛չ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ յերեսաց բարկութեան քոյ:

Զոր կամիցին. զի ասեն թէ անկար դաւիթ 'ի ցաւս և 'ի խոցոտմունս մարմնոյ: Իսկ անդ` 'ի յայն շաբաթու ոչ գոյ բժշկութիւն չարչարանաց մարմնոյ, յերեսաց բարկութեան հայելոյն նոյ:

Ո՛չ է խաղաղութիւն ոսկերաց իմոց. յերեսաց մեղաց իմոց:

Զի ուղղածուծ ատնելին ցաւքն զոսկերսն. և պատճառ ոչ դու ես ասէ. այլ` դարշելի դիմօք պատկերեալ մեղքն իմ: Այլև` ոսկերք պաղզմունս հոգւոյն ասէ, որով զարհուրելի յահագին ատենին:

Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ. որպէս բեռն ծանր ծանրացան 'ի վերայ իմ:

Գլուխ զմիտսն ասէ. չարայ լինել ամբառնալ 'ի վեր զօդիս. զի որպէս բեռն ծանր` ծանրացան 'ի վերայ իմ: Զի եղէ որպէս զմնոյր անասուն, և առել բեռինս մեղաց. որ ծանր է քան զերկաթ և զպղինձ: Որպէս մեծս մարգարէն` կշիռ և վէմ կապարեայ կոչէ, զահ և զերկիւղ վերջոյ աւուրն:

Նեխեցան և թարախեցան վէրք իմ, յերեսաց անզգամութեան իմոյ:

Յայտնէ թէ` ունէր վէրս. և զինքն անզգամ ասէ իբր անբանացեալ: Այլև` անդ հրեշտակք գարշին իբր 'ի հոտոյ գարշութեան` 'ի մեղաւորաց. եթէ ոչ լուծցաւ ասաէն նեխութեան` արտասուօք, և փուտն կտրեցաւ տրօք անմնկայ:

Տառապեցայ և խոնարհեցայ յոյժ. զօրհանապազ տրտում գնայի, զի անձն իմ լի եղեւ չարչարանօք. և ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ:

Չքաւորեցայ 'ի բարեաց, և խոնարհեցայ 'ի ներքոյ լծոյն մեղաց: Զօրհանապազ. ասաէն յայտնի է, իսկ անդ` ոչ է գիշեր հանգստեան 'ի վաստակոց և 'ի տրտմութենց. զի հոգի և մարմին` լի է վշտօք, որպէս ասէ:

Չարչարեցայ և խոնարհեցայ մինչեւ յոյժ. մռնչէի ի հեծութենէ սրտի իմոյ:

Եհայն` մինչև յոյժ. և ոչ ասէ որքանն. զոր հոգին ոչ ապղեցութեն տայ յաւէտ ապէտ մեղուցելոցն: Մռնչէի ասէ: Ասա թէ մռնչեն ընդդէմ սովորութեան. զի մի կրկնեսցի,

և

և հեծեծեն սրտիւք. Իսկ թէ ոչ՝ անդ լալաչաց և կրճել ատամանց։

Տր առաջի քո է ամ ցանկութիւն իմ. և հեծութիւն իմ ՚ի քէն ոչ թաքչեցաւ։

Ցանկութիւնք՝ որով մեղայ, և հեծութիւնք՝ որով ապաշխարեցի։ Եւ արդ՝ ցանկութիւն է իմ՝ ներումն գտանել ՚ի քէն, և արքայութիւն. զոր հեծելով հայցեմ։

Սիրտ իմ խռովեցաւ յիս, և եթող զիս զօրութիւն իմ. լոյս աչաց իմոց, և այն ոչ էր ընդ իս։

Սիրտ իմ խռովեցաւ. որ չգիտաց այլ ոք։ Եւ եթող զիս զօրութիւն իմ. զխտակցութիւն մտացն, որով ինձ այր յառաջ, և ասէր, արարի իրաւունս". և յանբծութեան իմում գնացի։ Լոյս աչաց": ՚ի շատ արտասուաց. կամ՝ զաքխողոմ ասէ։ Այլև՝ յօրն ահագին՝ որք աստէն զօրացուցանէին և լուսաւորէին խորհուրդ, անդ թողուն։ Ոչ ասէ թէ՝ մինչ չև խաւարեալ արեգակն և լուսին, և աստեղք։

Բարեկամք իմ և մերձաւորք իմ առաջի իմ մերձեցան և կացին. և մերձաւորք իմ հեռի եղեն յինէն

Մերժեցան և կացին հեռի՝ աքիտոբէլ և նմանիքն իւր։ Եւ անդէն հրեշտակք և մարգարէք բանիւք իւրեանց հեռանան

Բռնադատէին զիս և խնդրէին զանձն իմ. այլ խորհէին չար ՚ի վերայ իմ, խօսեցան զանօրէնութիւնս, և զնենգութիւնս զօր հանապազ խորհեցան։

Աստ դևք յուսահատ առնէին, և ՚ի նոցանէ չարժկալքն հալածէին, և անդէն տանջանք և խոշտանգանք. յիշեցուցանելով զանօրէնութիւն իմ։

Այլ ես որպէս խուլ՝ զի ոչ լսէ. որպէս համր՝ որ ոչ բանայ զբերան իւր։ Եղէ ես որպէս մարդ, որ ոչ լսէ. և ոչ գոն խօսք ՚ի բերան նորա։

Լռեաց աստ դաւիթ՝ սեմեայ նախատանացն, և ոչ ետ պատասխանի. և անդ՝ ոչ ասել ինչ, կամ լսել առ տանջեալ սրին։ Չէի խուլ և համր, այլ իբրև զմարդ բանական՝ զպատճառ լռութեան գիտելով։

Եւ ՚ի քեզ Տր յուսացայ, և դու լուիցես ինձ Տր ած իմ։

Եւ

Ես 'ի քեզ տէր յուսացայ աստէն , և դու լուիցես 'ի դէպ ժամու ։

Ասացի՝ թէ գ՛ ուրախ եղիցին ինձ թշնամիք իմ․ 'ի սասանել ոտից իմոց՝ 'ի վերայ իմ մեծամեծս խօսեցան։

Դուք և մարդիկք․ 'ի սասանել ոտից՝ 'ի պատուհասելանաց ա̃յ, մեծամեծս հայհոյեցին։

Ես 'ի տանջանս պատրաստ եմ․ և ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Գիտակցութեանց մասաց խոնց , զի արժանի եմ․ և անդ՝ զի չէք հնար զերծանելոյ ։ Ցաւք իմ՝։ Եւ տէրն մի՛ մեր՝ զմեր ցաւն մեղաց՝ առաջի իւր եդեալ՝ եբարձ զնա խորովք չարչարանօք։

Զանօրէնութիւն իմ պատմեցից․ և հոգացայց վա՛ մեղաց իմոց։

Զիս, և ոչ զայլ ումեք։

Իսկ արդ՝ թշնամիք իմ կենդանի են, և զօրացեալ են քան զիս․ և բա-զում եղեն, որք ատեցին զիս 'ի տարապարտուց։

Դուք՝ անմահք։ Եւ զօրացեալ են․ զի յորժամ մեղան-չեմք, զօրանան, և բազմանան։ Ովք ատէին զիս 'ի տարապարտուց․ նոքա՝ որոց չէի մեղուցեալ։

Որք հատուցին ինձ չար փոխանակ բարւոյ․ չարախօսէին զինէն զի ես երթայի զհետ արդարութե՛։

Աբիսողոմ և աքիտոփէլ․ նոցա չկամէի առնել չար․ և հրէայք՝ տ̃ն ա̃յ յ̃սի։

Մի՛ թողուր զիս տէր այ̃ իմ ․ և մի՛ 'ի բացեայ առնէր յինէն, հայեաց յօգնել ինձ տէր փրկութե՛ իմոյ։

Նոքա թողին, դու մի՛ գարշիր․ զի ես զանձն և զահ քո՝ ոչ թողում։ Հայեաց յօգնել ինձ։ Հայելն քո յօգնելն՝ բաւական է ինձ՝ տէր փրկութեան իմոյ։

'Ի

՚Ի նշաւակութ․ յերկնաւորաց օրհնութիւն․ ՚ի գաւիթն սրբոյ։ ՚Ի գերեզմանս եղանակս գնէր առաջնորդն ՚ի գաւիթս։ Առէն ՚ի գաւիթս պատճառ այս սրբոց և այլ՝ որ յանուն նոր կոչին, յօժարութեամբ և ՚ի խորան զի գեղեցիկ շարժէր ՚ի յաւուրս։ Ոմանք ասեն՝ գաւիթն յորժամ այլա-կերպեցաւ զինչ ՚ի թշնամի մարց զարդարն։

ՍԱՂՄՈՍ· ԼԸ։

Ասացի՝ ես պահեցից զճանապարհս իմ․ զի մի՛ մեղայց լեզուաւ իմով։

Զի հոգին ասաց նմա՝ պահպանել զինքն, այն է ճանապարհ՝ զոր հոգին ցուցանէ․ ով որն պահեաց զճանապարհս մտօրէնութե լեզուի, և ոչ յայտնեաց չարին։ Սակայն՝ կատարեցաւ նախ ՚ի դաւիթ, որ չետ պատասխանի սեմեայ որդւոյ գերեայ։ Զի մի մեղայց լեզուաւ իմով։ Ժուժկալեցի ասէ, թէ և ոչ ՚ի գործոց, փոխանակ զի գործովք ոչ պղծեցայ։

Եդի պահապան բերանոյ իմոյ՝ ՚ի հակառակել մեղաւորին առաջի իմ։

Եդի պահպան զահն Տն։ ՚Ի հակառակել․ ՚ի ցանկելն մոլիք։

Խուլ եղէ և խոնարհեցայ․ լռեցի ՚ի բարւոյ, և ցաւք իմ նորոգեցան յիս։

Բարի յուսով լռեցի, թէ Տր տեսցէ և խղճայ և ցաւք իմ նորոգեցաւ, զոր ունէի ՚ի սրտի։ Դարձեալ՝ բարի թուէր մարդոյ ՚ի նախատինս թափել զփղձուկ սրտին։

Ջեռաւ սիրտ իմ ՚ի ներքս իմում․ և ՚ի խորհուրդս իմ ջեռեցաւ հուր։

Սիմաքոս, ընդ յերկելն զնեղս իմ՝ երբ հրով վառէին զիս խորհուրդք իմ։ ՚Ի խորհուրդն կրէր զբորբոքեալ գեհենին։

Խօսեցայ լեզուաւ իմով և ասացի․ ցոյց ինձ Տր զվախճան իմ, և զթիւ աւուրց իմոց՝ զինչ են, զի գիտացից ես որպէս ինչ պակասեալ եմ յինէն։

Թէ դո՞յ լինձ ժամանակ․ զի կարացից ապաշխարել։

Ահա չափով եդեր զաւուրս իմ․ և կայ զօրութիւն իմոյ որպէս ոչինչ է առաջի իմ․ այլ այն ամենայն ընդունայն է ամ մարդ կենդանի։

Սիմաքոս, թզաւ մարդոյ աւուրքն չափով է․ ապա զուր է խնդրելն ասա հանդիսա։ Ես կար զօրութն իմ։ Զինչ

է

է զօրութիւն մանկանացն. առաջի իմ՝ երբեք զոչինչ է։ Սա-կայն ընդունայն է"։ Սիմաքոս, որ շուտ լի է. հաւատալի է նման, որ է ձնչոյ. մեղի, որ զկնի մարմնոյ հետեւի։

Աղուէսն որսկան 'ի պատմէրէ շրջի մորթ, ամենայն 'ի շուկ խանութ. գտն յեւ՝ եւ ոչ գիտէ ում ժողովէ

Կերպարան, շուք, եւ սատեռ դիւրափոփոխ։ Կամ" այս միայն է բարին, զի կերպարան տայ է։ Սակայն 'ի զուր խօսի. լինել, տնկէ, զպյրացուցանէ, զպյրանայ։ Գանձէ եւ ոչ գի-տէ ում ժողովէ։ Ո՛ գիտէ Թշնամիքն առնուն կամ երբէն, եւ առնեն նուէթս մեղաց։

Խօսք արդ ո՞չ է համբերութիւն իմ, ըստ ոչ դու տէր. իմ իմ զօրութիւն իմոյ՝ ըստ ոչ 'ի ձեռն։

Այսքան տրտմութիւն՝ զի արդ տանիմ, եւ ոչ լուծա-նեմ զիս, այլ՝ աղաւնանեմ. Թէ ոչ յոյսն որ 'ի քեզ, քաւել զիս եւ 'ի յայլ կեանս մխիթարել։

Յաւիտեան անօրէնութիւն իմն փրկեցեր զիս. ողորմելով անդրդամանց ա-րարեր զիս։

Զոր յանցեայ, չսպաներ զիս. այլ 'ի նախատինս ա-նըզգամաց թողեալ, եւ յոյն եւս փորձել զիս։

Խուլ եղէ, եւ ոչ բացի զբերան իմ, զի դու արարեր։

Գիտելով՝ զի 'ի քէն թողեալ է։

'Ի բանս արդ յինէն զտանջանս իմ. զի 'ի զօրութիւն ձեռին քո ես պակա-սեցայ

Զտանջանս 'ի խղճէ մտացն։ Զի 'ի զօրութեան ձեռին քո"։ դու հարեր ցասմամբ՝ եւ հալածեմ։

Կշտամբութիւն վասն մեղաց խրատեցեր զմարդ. մաշեցեր որպէս սարդոստայն զանձն նորա. ամենայն ընդունայն է ամ մարդ։

Զոր կարծէր բաւական լինել անձին, կամ այլոց, որպէս զաւազ. եւ զիս մաշեցեր. փոքր փոքր կարճեցան ժամանա-կըք մեր՝ մինչեւ ցեօթանասուն ամն, եւ այս՝ լի տկարութեամբ, եւ ցաւօք, եւ հոգօք. որ մաշեն զհոգի ցնորիւք։ Սակայն՝ ընդ-ունայն է ամ մարդ, ամ որ մարդ է, զայս ասէ։

Լուր արա աղօթից իմոց. ունկնդիր լեր պաղատանաց իմոց, արտասուաց իմոց մի լռեր:

Որ թանայր զանկողինսն: Մի լռեր: այլ մխիթարեա զիս:

Պանդուխտ եմ ես առաջի քո, նժդեհ եւ անցաւոր՝ որպէս ամ հարք իմ:

Որդ աստեղին աքսորական, եւ յակոբ հայրքն իմ: Առաջի քո: Որոյ հաղար ամն՝ իբրեւ զղաւ մի գիշերոյ է. զի՞նչ համարեալ է առաջի քո՝ չափով աւուրցս աղալանք եւ մեղք:

Թողացոյ ինձ զի հանգիցայց. մինչչեւ երթեալ իցեմ, առաւել ոչ եւս գտանիցիմ:

’Ի հալածմանէ, ’ի մնացս խղճէ: Մինչեւ երթեալ ’ի սկիզբն լինելութե ’ի հող. ուստի այլ ոչ եւս գտանիցիմ առ դարձեալ. եթէ ոչ տաս աստէն ինձ ժամանակ ապաշխարութե, եւ խղճիւ մեռանիցիմ: Այլ թողացո ինձ՝ հանգչել խորհրդով, թէ քաւեցայ. եւ ապա ’ննջեցից յուսով: Կամ՞ ծանո ինձ զժամանակ յայտնութե քո եւ գալստեան ’ի դժոխս. զի այնու յուսով հանգեայց, քանզի թէ ’ի քէն՝ յայլ տեղեաց ոչ գտանիցիմ յայնմ կորստենէ:

’Ի կատարած. սաղմոս ’ի դաւիթ:

Որպէս զի երեւեցոյց, եւ կէտս զի ..., այլ զի ... ’ի ... (զի ... ամ ... համբերութբ,) ... սաղմոս: Սաղմոս ... զի ... ’ի ... եւ ’ի ... ասացելէ:

ՍԱՂՄՈՍ. ԼԹ:

Համբերելով համբերեցի Տն, եւ նայեցաւ առ իս. եւ լուաւ աղօթից իմոց:

Արդարքն՝ աստէն եւ ’ի դժոխս ակնունէին Տն՝ մինչ նայեցաւ գթութբ, եւ լուաւ աղօթից արդարոցն:

Եհան զիս ’ի գբոյ թշուառութեան, ’ի կաւոյ եւ ’ի տղմոյ:

Զեք քան զդժոխս գտանել զուբ թշուառականաց անելանելի, զհոգիսն անտի եհան, եւ զմարմինսն ’ի կաւակերպ տղմոյն մեղաց՝ ուր խրեալ էաք լի ամ աղտեղութբ, այն՝ որ ասաց համբերութբ ստասջիք զհոգիս:

Հաստատեաց ’ի վերայ վիմի զոտս իմ. եւ ուղղեաց զգնացս իմ:

Վէմ՞ հաւատքն, յորոյ վր հաստատեցան ոտքն մտաց, գնալոյ առ ած: Եւ ուղղեաց զգնացս իմ: Տէրն՝ որ ասաց զինքն ճանապարհ առ հայր:

Արկ ’ի բերան իմ օրհնութի նոր. զօրհնութի Տն այ մերոյ:

Զի՞նչ

Զի՞նչ այլ նոր օրհնութիւն՝ քան զոր առաքեալքն ուսուցին, զոր ունի եկեղեցի. զոր 'ի բերան տղայոցն հարկ քառասնօրէից, որք զովսաննայն երգէին. որ և այժմ առաքեաց ած զհոգի որդւոյ իւրոյ 'ի սիրտս մեր, որով աղաղակեմք աբբա հայր: Զօրհնութիւն նոր : Օրհնութիւն նոր է, այլ օրհնեալն՝ տր ած մեր՝ է 'ի սկզբանէ:

Տեսցեն բազումք՝ և երկիցեն, և յուսասցին 'ի տր. երանի է այր՝ որոյ անուն տն յոյս է նր:

Սակայն սիրով եկին 'ի հաւատս, և բազումք երկիւղիւ տեսեալ զսքանչելիս և զարհաւիրս, և յուսային թէ՝ զնա մինչ կարող է առնել. որոց՝ մարգարէս երանի տայ յուսացելոցն յորժամ անուանէ տրն յս քս:

Ո՛չ հայեցաւ նա 'ի նանրութիւնս. և ո՛չ 'ի մոլութիւնս սուտս:

Այն՝ որ յանուն տն յուսայ, ո՛չ հայի 'ի կռապաշտութիւն և ո՛չ որ նախ մոլորեալ էին 'ի սուտ յոյսն իւրեանց:

Բազում արարեր դու՝ տր ած իմ զսքանչելիս քո. խորհրդոց քոց՝ ո՛չ ոք է որ նման է քեզ:

Մարգարէս՝ ընդ քն ասէ. սքանչելիս առ աբրահամ, առ իսահակ, առ մովսէս. այլ այս խորհուրդս՝ որ քեւ յայտնեցաւ, և քո է, ո՛չ ոք նման քեզ թարգմանեաց զայս: Թէպէտ և էին տեղեակ 'ի մասնէ՝ մարգարէքն, այլ ծածկեալ էր, և արդ յայտնեցաւ բստ պօղոսի: "Խորհեալ թէ այսպէս ասէ. բազում արարեր դու տր ած զսքանչելիս": Սքանչելիք խորհրդածոյ՝ նշանակեալ այլ երաց, 'ի նորս բազում է. զրախտին. տապանն. խոյե՛ն փրկելն իսահակայ. ծո՛վն կարմիր. օձն պղնձի. զաւ. ն յորդանանու. և այլն. ած ո՛ նման է քեզ. զի չկարացին զքեզ թարգմանել. զի օրինակք էին:

Պատմեցի և խօսեցայ՝ և բազում եղեն քան զթիւ. ընդ զոհս և ընդ պատարագս ո՛չ հաճեցար. մարմին հաստատեցեր ինձ. զողջակէզս և զվասն մեղացն ո՛չ խնդրեցեր:

Ես այլ զոր կարացի՝ ասացի. այլ՝ ո՛չ կարացի թուել. զի ո՞ գիտաց զմիտս տն". ընդ զոհս և հն պատարագս՝ ո՛չ հաճեցար, որք հն օրինացն մատչէին. զայս՝ որդին առ հայր ասէ. որ ասէր, թէ՛ մարգարէք և արդարք ցանկացան տեսա–

նել

նել՝ զոր տեսանէք՝ և ոչ տեսլին։ Մարմին հաստատեցեր․ ընդ այս հաստատեցաւ միաւորեալ․ զի հայր կամեցաւ զմարդանալն որդւոյ։ Զողջակէզս և զվն մեղաց՝ ոչ խնդրեցեր։ Գլխաւորքն այս էին, զորս ոչ ախորժեցեր․ կամ՝ լսելիս հաստատեցեր․ զի լաւ է ունկնդրութիւն եկեղեցւոյ, քան զհրէական պատարագն․ ոպ սամուէլ ընդ սաւուղ ասաց։

Ցուցանէ աստի՝ թէ ահաւասիկ գամ ես․ ՚ի գլուխ գրոց գրեալ է վասն իմ։

Մարգարէիւք թէ՝ ահաւասիկ գամ ես, որդին ասէ ցհայր, թէ յորժամ խոստացեր զզոհս․ յայնժամ ասացի թէ՝ գամ։ ՚Ի գլուխս գրոց․ յամ գիրս գրեալ է․ զի գլուխն և պատճառն ես եմ։ Ես նախ ՚ի գլխոյս՝ ՚ի սկիզբն սաղմոսին՝ ըստ եփրեմի․ զի ծառն կենաց՝ տնկեալ ՚ի գնացս ջուրց՝ տէրն է։ Այլ և բերեշիթն՝ ըստ եբրայեցւոց, ՚ի գլուխ գրոց թարգմանի․ անդ՝ յոլով գրեալ է վասն որդւոյ, և յայտնեալ են Արարածքն այսպէս կոչի․ և գլուխ է ամ գրոց․ ՚ի սկզբանէ արար ած զերկինս և զերկիր։ Ես եմ որ առի մարմին երկրաւոր, և հոգի երկնաւոր․ զոր արարի պատկեր իմն նախ։ Ես մարդկային․ ահա ես եկից, և բնակեցայց ՚ի միջի քում։

Առնել զկամս քո ած իմ կամեցայ, և զօրէնս քո ՚ի մէջ որովայնի իմոյ։

Ըստ աւետարանին թէ՝ ոչ եկի առնել զկամս իմ․ այլ զհօրն՝ որ առաքեաց զիս․ զոր և ած ասէ վասն մարմնոյն։ Ես զօրէնս քո․ զաւետարանն․ ՚ի մէջ որովայնի իմոյ, որ է եկեղեցի․ և զորս ծնանի, աղիք և ոսկերք են նորա։

Աւետարանեցի զարդարութիւն քո յեկեղեցւոջ մեծի․ ահա զշրթունս իմ ոչ արգելից ՚ի քէն․

Եկեղեցի՝ ՚ի բնաւ հաւատացեալսն, որ մի է հաւատովն և մեծ։ Ահա զշրթունս իմ, զվարդապետութիւն իմ՝ ոչ արգելում՝ մեղանչելոյ շրթամբք․ որոց տաս զհոգի սբ, և բան ՚ի բանալ բերանոյ, ան շրթունք են նոքա։

Տէր դու գիտացեր, զի զարդարութիւն քո ոչ ծածկեցի ՚ի սրտի իմում․ ճշմարտութիւն քո՝ և զփրկութիւն քո։

Արդարացուցի զքեզ ՚ի բանս քո․ ոպ յորժամ ասէր հայր արդարև աշխարհ զքեզ ոչ ծանեաւ․ այլ ես ծանուցի

զանուն քո։ Զճշմարտութիւն քո՝ զՀոգին ճշմարտութեան. զփրկութիւն, զոր առաքեցեր զՅս քո։

[illegible]

Այլ և՝ յեկեղեցւոյ առաջնորդսն ասի. որք պատմելով զբանն Տն՝ համարձակութի առնուն 'ի Տնէ մեծ է.

[illegible]

Զոր չթագուցի մի թողցեն զիս։ Յինէն՝ յեկեղեցւոյ. զի ողորմութի քո՝ առ մեղուցեալսն և զղջացեալսն. և ճշմարտութիւն քո՝ առ պսակս անմեղաց. յամ ժամ ընկալցին զիս, այսինքն՝ զանդամս իմ։

[illegible]

Անիրաւութիւքն չատն տեսանել զգալ փորձութենցն. Դարձեալ՝ զհալածիչսն եկեղեցւոյ ասէ։ Դարձեալ՝ հասին անօրէնութիւք 'ի նախատեղծիցն։ Եւ ես ոչ կարացի տեսանել. որք գլորեցան, և ապա զղջացան. զի զղջումն ծածկեց զյանցանս նոցա։ Եւ չկարեն 'ի չկամելոյն է. 'ի վեր տյ, զոր իւր համարի Տրն զմեղսն։

[illegible]

Հեթանոսք բազում են քան զհաւատացեալսն՝ որ 'ի գլուխ տն բուսան։ Եւ սիրտ իմ՝ եթող զիս. երկիւղ անկաւ 'ի բազումսն, հայելով թէ անդ իւր լինի կորուստ նոց, և իմն ցըն՝ որ մեղանչեն. թողուլ զյասուեն սրտի՝ որք խօսեցայ ընդ նս, ասելով ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս։

[illegible]

Կամք քո բարեկամն է փրկել. և նայելոյ օգնութի է։

[illegible]

Դուք, և 'ի նոցանէ զօրացեալ քն. բառնալ զեկեղեցի՝ որ համակ է տն և մրմին. դարձցին յետս ամօթով, որք ասէին խսկ։

[illegible]

Վաղվաղակի՝ նախ քան զօր դատաստանի, որ վաշ վաշ կարդան 'ի գլորեալն ուրախ, կրէ ամօթ։

[illegible]

Հրեշտակք, և արդարք, ընդ փրկութեն մարդկան:

[illegible]

Մեծ է քն ա͞ծ. ոյք սիրեն, ասեն զայս հաւատացեալ Թագաւորք. զփրկութիւն քո. որ քև փրկեցան:

[illegible]

Բնութիւն, և տրն՝ որ էառ զսա. խորհեա զիս. զօգուտ֊տին եկեղեցւոյ. օգնական, ինքն հայր սիրէ զձեզ ասէ, վան հասիր և մի յամենար:

'Ի կատարած. սաղմոս 'ի Դաւիթ:

[illegible]

ՍԱՂՄՈՍ. Խ:

ԵՐԱՆԻ ՈՐ ԽՈՐՀԻ ԶԱՂՔԱՏՆ

և զտնանկն. յաւուր չարէ փրկէ զնա Տէր:

Եւ զբանն՝ վասն յուդայի՝ այլեւս յինքն ձգեաց թէ՛ գիրն լցցի, որ ուտէր ընդ իս հաց, արար ինձ խաբէութիւն: Այլ՝ զնա արժան է խորհել նախ՝ (ըստ պօղոսի, ոչ եդի 'ի մտի գիտել ինչ ձեզ կամ խորհել, բայց միայն՝ զյս քս և զնոյն 'ի խաչ ելեալ.) զայն՝ որ մեծատուն էր և աղքատացաւ վասն մեր. զի մեք նր աղքատութբն ձոխասցուք: Վն որոյ 'ի նա և 'ի չարչարանս նորա կատարեաց զսաղմոսս. որ և ամբաստանէ զիշխանացն հրէից, և զյուդայէ. ուստի երանի ասէ որ խորհի զաղքատն և զտնանկն: Զտնանկն ոչ ոք տաց 'ի թարգմանչացն. սակայն՝ զմերս ունելով տրն չէ ան

դէպ. որ աղքատք 'ի բնութէ, 'ի հողոյ լեալ և 'ի հող հրաւիրեալ, և մերկ ծնեալ և մերկ գնացեալ. և տնանկ, զի անկաք 'ի դրախտէն՝ որ է տուն բնակութե մերոյ: Երանի որ խորհի. ով երանելի է՝ չունի պահպանութի, և ոչ մասն տառապանութե. որով առաքեալքն երանեցան: Յաւուր չարի. չար օր կոչեն մարդիկ, թէ հիւանդութեան, թէ նախատանաց, թէ աւազակաց ձեռս անկանելոյ, թէ տագնապանաց. յորժամ կարօղ է փրկել՝ աղքատն կոչեցեալ և տնանկն, որ տեղի ոչ ունէր ուր դնել զգլուխն. զի Տր է նա տնանկ: Այլև՝ օր չար՝ զօր դատաստանին ասելի է ձախակողմեանն այծեաց. յորժամ փրկեն խորհողքն զՏրն աղքատացեալ, 'ի տանէ և 'ի գեղջէ. և որ վասն նորա զրպարտեալս խորհի համբերեցանել:

Տր պահեսցէ զնա և կեցուսցէ. երանելի արասցէ զնա 'ի վերայ երկրի. և ոչ մատնեսցէ զնա 'ի ձեռս թշնամեաց իւրոց:

Փրկէ 'ի մահուանէ և կեցուցանէ յողորմութե, երանելի առնէ 'ի վերայ երկրի հարիւրաւորաւն, և յերկինսն կենդանեաց՝ յաւիտենական կենօքն առնէ զնա երանելի. և ոչ մատնէ դիւաց և այլոց որոգայթից:

Տր օգնականեսցէ նմա 'ի մահիճս ցաւոց իւրոց. զամենայն անկողինս նորա դարձուցանէ 'ի հիւանդութեան նորա:

Անկողին ըստ մտաց, ըստ հոգւոյ, ըստ մարմնոյ, թէ մեղանչեմք, 'ի մահ խզուած է. զի անձն որ մեղիցէ, նոյն և մեռցի. մահիճք վասն այնր ասի. և այս են մեր անկողինք, որ յողն և յորսայս անկանիմք. 'ի հիւանդական ախտից դարձուցանէ յառողջութի, և յարդարութի:

Ես ասացի Տր ողորմեա ինձ. բժշկեա զանձն իմ, զի մեղայ քեզ:

Որդի առ հայր ասէ, բժշկեա զեկեղեցի խմորիս չարչարանօք: Մեղայ քեզ. այլ թագաւորինչ չէր ասացեալ զմեղայն. այլ մերն նմա համարեալ է: Դարձեալ՝ հոգի մարդոյ արդարոյ երբ ելանէ 'ի մարմնոյ, յոլովութենէն իմ մարմն լինչ համբաւեան առնու, բժշկութի ասէն կրից ժամդոյ՝ յորում անդամ ակնակ կրեալ, զոր ասէ մեղայ քեզ. այլ զլովանդակ պակէն 'ի դատաստանին առնու. սակայն՝ հրեշտակք պահեն զնա 'ի մուրոջ համբաւեան ուղեք. մի զի դևքն մի նեղեսցեն. և միւս՝ զի 'ի վերին երկինն մի գնասցեն մինչ 'ի դատաստանն:

Թշնամիք իմ ասացին ինձ չար. երբ եւցէ՝ զի մեռցի, եւ կորիցէ անուն նորա։

Իշխանք հրէից՝ որոց ծանր էր տեսն եւ անուն նորա։

Մտանէր տեսանել զնանրութիւն, խօսէր 'ի սիրտ իւրում. եւ ժողովէր զանօրէնութիւնս յանձին իւր

Յուդա մտանէր առ տէրն տեսանել թէ ո՞ւր լիցէ, որ նմանիր էր նմա, եւ ոչինչ օգուտ. եւ խօսէր նոյնպս մնոտի. մի թէ ես իցեմ տէր. 'ի սրտի իւրում ժողովէր. առնուլ արծաթ անօրէնութեն վարձ. եւ յանձն իւր կուտեաց չարիս։

Արտաքս ելանէր եւ զնոյն խօսէր. զինեւ շշնջէին ամ թշնամիք իմ։

Գնալով առ քահանայապետսն՝ զնոյն խօսէր զնանրութիւն, զոր 'ի սրտին ունէր. զի՞նչ կամիք տալ, զի մատնեցից ձեզ, զինեն շշնջէին, քրթմնջիւն էր զնմանէ առ ամենեսեան թէ ո՞րպ սպանցեն։

Խորհեցան չար 'ի վերայ իմ. բան անօրէնութեան եդին 'ի վերայ իմ։

Չէ այլն այն յայս, զի զչարութս ոչ պահէ։

Մի՞ թէ որ ննջիցէն, եւ այլ ոչ եւս յաւելուցու յառնել. զանզի եւ այր խաղաղութեան իմոյ, յոր եւ եսն յուսացայ։

Այն՝ որ ասաց խաղաղութիւն յայս եւ 'ի սոյն ննջեցից եւ զարթեայց. քանզի զմահն եւ զյարութեն 'ի մի յարեաց տէրն. պարտ է որդւոց մարդոյ մեռանել եւ յերիր յաւուր յառնել. իբր ասել, ես ննջեմ, եւ սիրտ իմ արթուն է. եւ թէ ես ննջեցի եւ 'ի քուն եղէ, զարթեայ եւ տէր ընդունելի իմ է։ Քանզի եւ այլն խաղաղութեն. զյուդայէ ասէ. յոյս դպր թէ խաղաղութեն քարոզ լիցի աշխարհի։

Որ ուտէր զհաց իմ, յաճախեաց առնել ինձ խաբէութիւն։

Զոր աւետարանն վկայէ, թանալով ը ինն նմայն։ Յաճախեաց առնել"։ Յաճախս եւ աններելի էր քան զհրէիցն։

Այլ դու տէր ողորմեա ինձ, եւ կանգնեա զիս. եւ ես հատուցից նց։

Կանգնեաս զեկեղեցի իմով արեամբս, եւ ես հատուցից հրէիցն հաւատացեալքն։

Յայսմ ծանեայ ինձ հաճեցար ընդ իս. զի մի՛ ուրախ եղիցին չար թշնամիք իմ։

Որ ասացեր ՚ի յորդանան եւ ՚ի թաբօր։ Զի մի՛ ուրախ եղիցեն յիս թշնամիք իմ. հրեայքն եւ հերձուածողք ջնջել զեկեղեցի իմ։

Այլ զիս յանմեղութեան իմում ընկալար. եւ հաստատեցեր զիս առաջի քո յաւիտեան։

Ընկալար յարութեամբ ՚ի փառս։ Հաստատեցեր զիս. եկեղեցեաւ, անմահանելի ՚ի դրանց դժոխոց։

Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի յաւիտենից յաւիտեանս, եղիցի եղիցի։

Հաւատացեալք այսու գոհանան զինէն, որ է Տէր Աստուած Իսրայէլի հնոյն, եւ նորոյս. յաւիտեան ունելով զգթութիւն։ Ասա հրեշտակք ասեն եղիցի եղիցի. զի նք յաւիտենականք են։

՚Ի կատարած. իմաստութիւն որդւոցն Կորխայ. սաղմոս ՚ի Դաւիթ։ Ղեւտացիք էին՝ որք իմաստութեամբ եղանակէին զերգսն, եւ որոշեալք ազգաց։ Այլ զերգս սաղմոսիս՝ զոր որք ՚ի Բաբելոն գերեալք հրէայք յաղթն անդ՝ Երուսաղէմ եւ յեկեղեցին երգել։ Դաւիթ՝ ասէր մինչ էր դաւիթ յանապատին հալածեալ Սաւուղայ։

ՍԱՂՄՈՍ. ԽԱ.

Որպէս փափագէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափագէ անձն իմ առ քեզ Աստուած։

Սակայն՝ ասացեալ է դաւթի, մինչ դառնայր ՚ի վիճակացն ռուբենի եւ գադայ, շրջելով ՚ի մէջ թաբօրայ եւ ահերմոնի. եւ ցանկայր կալ առաջի տապանակին Տն, ասելով, որպէս փափագէ"։ Իբր մեք Տէր եւ իմանալի եղջերուք վերնոյն եւ քեզ փափագեմք։ Զի եղջերուք՝ օձս եւ ճճիս ուտեն, եւ նեղլին ՚ի ծարաւոյ. այնպէս աւան ունէաք մեք եղաք, որ նախ քան զքո գալուստն, փոխանակ ճճեաց՝ զկռապաշտութիւն բնութենս ունելով, եւ նեղեալք յօձաձեւ ցանկութեանցն։

Ծարաւի է անձն իմ առ քեզ Աստուած, հզօր եւ կենդանի. երբ եկից երեւեցայց երեսացդ Աստուծոյ։

Ընդդէմ դիցն հեթանոսաց՝ որք տկարք են, եւ մեռեալք։

Երբ

Ե՞րբ եկից"։ Ոչ դու տէ՛ր ուրեք ես, այլ մեք՝ որ հեռացաք, գամք. յորժամ՝ խոնարհիս և ցուցցես զքեզ։ Երես՝ հօր՝ որդի, որով տեսանի հայր։

Եղեն ինձ արտասուք իմ կերակուր ՚ի տուէ և ՚ի գիշերի. և այն զի ասէին ցիս զօրհանապազ՝ ուր է այ քո։

Լալով ուտէին զկերակուրն ՚ի բաբելոն. և դաւիթ սայորդմանէ. և մեք բղձային յոլ։ Այլ՝ արտասուք մխիթարէ, երբ կերակրով՝ որ առ սեղան այ։ Զդ ջրցելոց խորհուրդքն ասեն, ո՞ւր է այ քո, զոր մեղօք հեռացուցեր ՚ի քէն. մեղքն ձեր ասէ որոշեն ՚ի մէջ իմ, և ձեր։ Գերուոյն պատշաճի ասել ՚ի քաղդէացւոց՝ թէ ո՞ւր է այ քո։ Եւ դաւիթ իւր առեալքն. և ընութ ես՝ դևք։

Զայս ոգ յիշէի, արտաքսէի յիս անձն իմ. զի անցանէի ընդ հովանի յարկին սքանչելւոյ տանն այ։

Քաջալերէին մարգարէքն ՚ի բաբելոն, և դաւիթ զանձն յուսով օծմանն, և ընութ իւր՝ խոստմամբ աւետեաց։ Սքանչելի տուն այ տաճարն, և տապանակն, զոր ցանկային, և ընութ ես՝ եկեղեցի։

՚ի ձայն ցնծութեան խոստովանութեան. և ՚ի ձայն տօնախմբութեան։

Սաղմոսաց ձայնիւ ՚ի տաճարին, և խոստովանութեն անուանն այ, տօնիւք և բարեկենդանութբ մտանել։ Եւ մեզ ՚ի տեղին՝ որ աստ, երթամ, և պատրաստեմ ձեզ տեղի։

Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ այ, խոստովանեսցուք նմա՝ փրկիչ երեսաց իմոց այ է։

Քանզի՝ զպայութն տրտմութեն նման է որ գիտէ զպակասելի՝ ախորժելեացն, դեղ յոյսն է առ այ և խոստովանութեն։ Փրկիչ երեսաց իմոց այ է, որ փրկէ յամօթոյ և յարտասուաց զերեսս

Անձն իմ յիս խռովեցաւ. վն այսորիկ յիշեցից զքեզ յերկրէն յորդանանու, ՚ի հերմոնէ ՚ի լեռնէ փոքունէ։

Չկարէի մխիթարել։ Յիշեցի զքեզ"։ Գերին զայն յիշէր՝ յորժամ յեգիպտոսէ գայր, և ձոխ անցանէր ընդ յորդանան, և դադարէր առ լերամբ ահերմոնի։ Եւ դաւիթ

զլուրն

զեւլոն և զմերն խառնէ որ 'ի գլխոց առաջին սերցն, կարօտ-եալք յորդանանու խորհրդոյն, և Ահերմոնի, որ թարգմանի ճրագ ճանապարհի. մկրտութեան նշան եղև մեզ լոյս, և լուսա-տու ճանապարհին յերկինս։ Ահերմոն փոքր է քան զԹաբօր ևոր յովհաննէս քան զՔս նր. նախ մկրտէր ուր արեգակն Քս փայլեաց զիմանալի լոյսն։

Խորք 'ի խորոց կարդացին առ ձայն, 'ի ձայն սահանաց քոց։

Երբ գային յերկնաւոր խորք ծովուն՝ որ լսեցին զնր և ճանապարհ եւուն խորայելի. Եւ յորդանան նոյնպէս ձայ-նիւ սահանաց, և հնչմամբք. Երբ առ նոյնիւ սահանք երկնից և երկրի բանային. որ էր սահմանն եղեալ, կարդացին թէ՝ դու փոխես զՔս եղեալ սահմանն, քեզ հնազանդ եմք։ Իսկ մտաւորն՝ խորհուրդք խորոցն նր բանային. որ խորոց անհատ ծովու խորք է բազմապատիկ. և փակեալ երկինք բանային 'ի ժամ մկրտութեան նորա՝ 'ի ձայնէն հօր սահմանադրին, փակո-ղին և բացողին։ Ըստ այլոց՝ ասէ թէ՝ մինչ կայր դաւիթ յեր կիրն յորդանանու, սաստիկ կարկուտ և յորձանք անձրևաց եղև 'ի մէջ փախստացուցն, ըստ այն ասէ։

Ամենայն զբօսանք քո, և ալիք քո անցին 'ի վերայ իմ.

Զբօսանք՝ ցնորք. ալիք՝ տատանմանք դերանցն. և դաւ-թի փախուստն. և բնութեան վշտին որ յաղագս։ Դարձեալ զբօսանք՝ խնդակմանքն. և ալիք՝ տրտմականք դիպեցան դաւ-թի և բնութեան։

'Ի տուէ պատուիրեսցէ Տր զողորմութիւն իւր, 'ի գիշերի երգս նորա ինձ. և աղօթք իմ առ Այ կենաց իմոց։

Զարեգակն ծագելով 'ի մէջ չարեաց և բարեաց։ 'Ի գիշերի զօրհնութի նոր, զաշխատութիւն հանգուցանել քնով և նոր այժ առեալ՝ նոր օրհնութի տալ նր. դաւիթ ասէր 'ի շրջելն։ Իսկ գերբոյն գիշերն գերութեան՝ մեզ եղև, յոր-ժամ դանիէլ և երեք մանկունքն նր սքանչելեօքն փայլեցին. որ թէպէտ աղօթէին մեզ նաբուգոդոնոսորայ, այլ մեզ կե-նաց խրոց էր, զի այլի 'ի նմանէ, և զերծանի յնէմ։ Եւ մերն՝ մեզ յաւիտենական կենացն մեր քնի, զի հաշտեցի ընդ մեզ. և կենդանի լեցի ընդ մեզ, երբ 'ի պօղոսի Դարձեալ մեզ որն որ ասաց զողորմութեան կամիմ և ոչ զզոհ։ 'Ի գիշերի, իմաստունք կուսանք լսցուք, յորժամ բանից զփեսայն թէ գայ փեսայ. և նոր օրհնութիւն տացուք։

Աս

Ասացից ցԱծ՝ ընդունելի իմ ես դու. ընդէ՞ր մոռացեր զիս. ընդէ՞ր տրտում գնամ ես 'ի նեղել թշնամւոյ իմոյ:

Ո՛չ թէ մեղադրելոյ վ͞ս՝ այլ աղէտ սրբկանելոյ աղաղակ ասէ. եւ զի յեն՞մ զիս ընդունեցիր ասէ:

'Ի խորտակել ոսկերաց իմոց նախատէին զիս թշնամիք իմ. յասել ցիս զօրհանապազ, թէ ո՞ւր է Ած քո:

Զի ցրուեցան 'ի բաբելոն եւ 'ի բազում տ͞ղս, ը͞ս այնմ՝ որդի մարդոյ, ոսկերքդ այդոքիկ ա͞մ տունն իսրայէլի է. որք ասեն ցրուեցան ոսկերք մեր, հատաւ յոյս մեր, եւ մեռաք. եւ ասէին բաբելացիքն՝ ո՞ւր է ած ձեր, որ խոստացեալ է ձեզ դարձ. ընդէ՞ր ոչ պաշտէք զմերս աստուածս:

Ընդէ՞ր տրտում ես անձն իմ, եւ ընդէ՞ր խռովես զիս. յուսա առ ած, խոստովանեցայց նմա՝ փրկիչ երեսաց իմոց ած է:

Ընդէ՞ր կրկին խօսի ը͞ս անձին. զի առաջինն՝ վ͞ս դառնութեան էր, եւ յուսոյ մխիթարութ͞ք. եւ երկրորդս՝ թէ աղտեղացաք, ասեմք 'ի յոյսն յայն, թէ՝ որ զայն ետ ձրի, զվաստակ աշխատութեան ընդունի. եւ այս է յոյսն: Զի որ զարիւնն ետ՝ երբ ոչ խնդրեաք, յորժամ խնդրեմք՝ զիա՞րդ ոչ տայցէ զողորմութիւն: Այլեւ՝ խոստովանելն կրկին է. դաւանելն զած անդ, եւ աստ զմեղս խոստովանելն:

Սաղմոս 'ի դաւիթ:

Նոյն միտք են սաղմոսիս, գերութեան իսրայէլի եւ դառնութեան 'ի սաղմոսաց առաջնոյ սաղմոսին է:

ՍԱՂՄՈՍ. ԽԲ:

Դատ արա ինձ Ած. եւ իրաւ արա ինձ 'ի դատաստանի իմում:

Զի քո է գիտել զկիրս բնութեան՝ սանձողին բնութեան իրաւ արա. զի ոչ առանց ներելոյ զիս թշնամւոյն մեղայ: Եւ գերելն ասէ, եօթանասուն ամէ, ժամէ քաւելոյ:

Յազգէ որ ոչ է սբ, 'ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա զիս:

Գիւք՝ որ չեն 'ի սրբութեն, եւ քաղդեացիքն: Իմարդոյ մեղաւորէ. 'ի Նաբուգոդոնոսորայ, այլեւ 'ի սուտ քմէն:

Դու

Դու ած հզօրդ իմ եւ ընդէ՞ր մոռացար զիս, ընդէ՞ր տրտում գնամ ես 'ի նեղել թշնամւոյ իմոյ։

Որ ասացեր միթէ մոռանայ հարսն զզարդ իւր. զի դառնացեալ 'ի սաստիկ ցաւոցն՝ ոչ մոռացուցի ասելով զայս։

Առաքեա՛ ած զլոյս քո եւ զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ, եւ հանցեն զիս 'ի լեառն քո եւ 'ի յարկս քո։

Զզօրութի օրինացն՝ եւ զճշմարտութի խոստմանն դար ձի։ Դարձեալ՝ լոյս յն որ ասաց՝ ես եմ լոյս աշխարհի. եւ ճշմարտութի հոգին. երբ անուանէր միշտ։ Զի առաջնորդեսցեն, զնոսա յերուսաղէմ, եւ զընութիւն յիմանալի լեառն՝ վասն ամրութե. յարկ՝ վասն հանգստեանն։

Մտից առաջի սեղանոյ քո առ ած. որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։

Սեղան՝ յն. զի անդ նուէրին մեր ած բարեգործութիւք։ Եւ՝ դարձեալ՝ խրախճանութիւք իմանալի կերակրոցն 'ի սե- ղան հօրն, որ եւ մանկունս գործէ վայելողսն. այնպիսի ու- նելով զօրութիս. Թէ ոչ դարձջիք անդ եւ լինիջիք մանկունք, ոչ մտանիցէք յարքայութի այ։

Խոստովանեցայց քեզ օրհնութեամբ ած ած իմ։

Ջերմութի է կրկնելն. խոստովանիմ թէ առ քեզ է ամ գանձք բարութե։

Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա առ ած խոստովանեսցուք նմա՝ փրկիչ երեսաց իմոց ած է։

Ցերաւ ասացան՝ որ միազօր է առաջնոցն՝ որ նախ քան զաա։ Զի երկիցս անդ, եւ մի առ խօսի ընդ անձին. զի մի՛ տացէ յինքն մտանել դիւական տրտմութե. որ ոչ տայ ուրախ լինել 'ի պարգեւսն քն։ Եւ զի՛ երիցս կրկնեաց. եր- րորդութեն հանելով զքաղանդակ տրտմութեն, լնլով զանձն ցնծութ։

'Ի կատարած, իմաստութիւն որդւոցն կորխայ. սաղմոս 'ի դաւիթ:

[illegible] Այլ՝ [illegible]

ՍԱՂՄՈՍ. ԽԳ:



ԱԿԱՆՋՕՔ ՄԵՐՈՎՔ

լուաք. զոր հարքն մեր պատմեցին մեզ:

Թէպէտ աչօք չտեսաք, ականջօք լուաք զոր գործեաց յաւուրս յառաջնոյ. Դարձեալ՝ ած ականջօք մերովք լուաք. այս ոչ էր առաջնոյն, որք ազդեցուք 'ի սիրտս իմանալին մարգարէքն առանց ականջաց: Եւ թէ ասի, եւ մովսէս գրէ ձայնի ած լսել ժողովրդեանն՝ չէ նման առանց բերանոյ եւ լեզուի եւ ձայնական գործեաց ձայնի գալ յառաջ: Այլ՝ ստուգանալ առաքելոցն է ասել զայս. եւ մարգարէս 'ի դիմաց նոց ասէ զայս. որոց երանեցան աչք եւ ականջք, եւ հարքն մարգարէքն:

Զգործն զոր գործեցեր յաւուրս նոցա, յաւուրսն առաջինս:
Ձեռն քո եղծեաց զհեթանոսս. եւ զնոսա տնկեցեր. չարչարեցեր զժողովուրդս քո, եւ հաներ զնոսա:

'Ի պաղեստինէ, եւ զնոսա տնկեցեր. չարչարեցեր զքանանացիսն, եւ հաներ յերկրէն. եւ արդ՝ զդեմն 'ի հեթանոսաց:

Ոչ եթէ սրով իւրեանց ժառանգեցին զերկիր. եւ ոչ բազուկ նոցա փրկեաց զնոսա:

Ոչ եւ ոչ այժմ մեք:

Այլ աջ քո՝ եւ բազուկ քո՝ եւ լոյս երեսաց քոց. զի հաճեցար ընդ նոսա:

Այլ աջ քո. աջ՝ զօգնականութիւն ասէ. բազուկ՝ զզօրութիւն. եւ լոյս երեսաց՝ զխնամսն. կամ զսիւն լուսոյն: Եւ արդ՝ աջ քո եւ բազուկ հօրդ՝ որդին քո միածին. եւ լոյս երեսաց քոց՝ հոգին սբ. զի հաճեցար եւ առաքեցեր զմա լուսաւորել:

Դու ես ինքն իմ՝ թագաւոր իմ եւ աստուած իմ, որ հրամայեցեր զփրկութիւն յակոբայ:

Ցոյց ասաց նաթանայէլ. դու ես քն դու ես թագաւորն

ւորն խարայելի: Որ հրամայեցեր. հրամանքն քո բաւական լինէր փրկել յակոբայ, 'ի դեհաց և 'ի ցաւոց:

Քեւ զթշնամիս մեր հարկանիցեմք. և անուամբ քով արհամարհեսցուք զյարուցեալսն 'ի վերայ մեր։

Զգևմն. և անօրէնամբ". զի ասէին յանուն յոլի ելէք:

Ո՛չ եթէ յաղեղն իմ յուսացեալ եմ, և ոչ սուր իմ կեցուսցէ զիս։

Մատաթէ և յուդայ մակաբեայ, և ոչ առաքելոցն:

Այլ դու փրկեցեր զմեզ 'ի թշնամեաց մերոց. և զատելիս մեր յամօթ արարեր։

Զի սրբեաց զտաճարն, և կոտորեաց զզօրսն անօրինաց:

Աստուծով պարծեսցուք զօր հանապազ. և անուամբ քով խոստովան եղիցուք յաւիտեան։

Հրեայն ոչ կարէ զայս ասել. թէպէտ և տիւ փրկեցան. բայց մեք՝ յիրաւի ասեմք. զի մահուամբ տն և խաչիւ նր փրկեցաք. երբ ասէ պօղոս ինձ մի լիցի պարծել, բայց միայն 'ի խաչն տն:

Բայց արդ՝ մերժեցեր և անարգեցեր զմեզ. և ոչ ելցես ած ընդ զօրս մեր։

Յորժամ սպանան որդիքն մատաթէ, և զօրացան կապաշտութիւքն, որպէս զայլ առաջնորդս ժողովրդեանն, ըղ տկարան քան զմակաբայեցիսն. որպէս ներոն զգլխաւորս առաքելոցն:

Դարձուցեր զմեզ յետս քան զթշնամիս մեր. և ատելիք մեր յափշտակէին զմեզ։

Որ էաք յառաջ քան զաղգս ամ զօրութ քով. և ատե լիք մեր յափշտակեցին, աւերեցին դարձել զնէմ: Եւ զկնի մահուն առքելոցն՝ յափշտակեցին 'ի հաւատացելոցն զտկարսն,

Ետուր զմեզ իբր ոչխարս 'ի զենումն. և ընդ հեթանոսս ցրուեցեր զմեզ։

Յաւուր շաբաթու կոտորեցին զյոլովս, և զայլսն գերե ցին: Այլ՝ վկայքն են գառինն՝ որ երբար զմեղս աշխարհի Դարձեալ՝ մարգարէս զբանս աղետիցն տեսանէ՝ որ 'ի հառ մայեցւոցն էանց ի հրէայս, 'ի վրէժխնդրութի արեան մի ածնին, և խաչողն աշակերտաց:

Վաճառեցեր զժողովուրդս քո առանց գնոյ . և ոչ գոյր ինչ աղաղակք
մերոյ:

Զհրեշտակն վաճառեաց հռոմայեցւոցն յայտնի է և աղաղակն. մի՛ զի՛ զորդին Տ̄ն վաճառեցին հրեայքն արծաթոյ: Այլև՝ վկայքն տեսեալ զայն՝ վաճառեցին ձրի զինքեանս վ̄ն նմայ. և ոչ է թիւ աղերսի և աղաղակի եկեղեցւոյ առ Տ̄ր, որ կարող է տալ զայն՝ որ ոչ արժէ չարչարանք ժամանակաւոր:

Արարեր զմեզ նախատինս դրացեաց մերոց. ծաղր և այպն շրջակայից
մերոց, որ շուրջ են զմեօք:

Յաւուրս մակաբայեցւոցն: Եւ՛ զկնի խաչին՝ զհրեշտակս Եւ՛ զեկեղեցւոյ մանկունս նախատեն վ̄ն ք̄սի, երանելի լինին:

Արարեր զմեզ յառակս հեթանոսաց. ի շարժել գլխոյ ժողովրդոց:

Հրէիցն յայտնի է. իսկ՝ պօղոս զմեղս պարծանօք ասէ, երբև առակ ʼնշաւակի եղաք ամենեցուն. և երբ զՏ̄րն՝ եդեւ ʼնշաւակ շարժելին զգլուխս: Այլ՝ նշաւակ ո՞չ զնեն աղեղնաւորք, ձգելով զնետ նախատանաց: Առակ, զի մի օրինակաւ ամենեքեան այսպն առնեին:

Զօր ամ̄ նախատինս իմ առաջի իմ է. և ամօթ երեսաց իմոց ծածկեաց զիս:

Հրէիցն ոչ գոյ թիւ աղաղակի և ամօթոյ: Եւ՛ եկեղեցի զի միշտ երգէ զայս, զի որքան աղալեմք, ամաչեմք. 'ի գիտողացն յայտնի, և 'ի ծածուկ 'ի խղճէ մտացն. և այն ծածկէ զյանցանքն . և անցաւոր ամօթս՝ զյաւիտենականն ծածկէ:

'Ի ձայնէ նախատողէն և չարախօսի, յերեսաց Թշնամւոյն և հալածչի:

Առ հրեիւք՝ անձնիւքերիմ, և անտիոքոս, և այլս յոլով. և ասա սատանայ՝ որ միշտ հալածէ 'ի բարւոյ զմեզ. և առաջի Տ̄ն չարախօսէ երբև զյոբ:

Այս ամ̄ եկն 'ի վերայ մեր, և մեք զքեզ ոչ մոռացաք. և ոչ անիրաւ
եղաք ուխտի քում, և ոչ դարձաւ յետս սրտիւ մերով:

Ով մակաբայեցիքն պահեցին զուխտս իւրեանց . և եկեղեցի ոչ կարէ սուտ ուխտի նոր, զոր եդ սա աւետարանաւն. զի ո՞ մեկնեսցէ զմեզ 'ի սիրոյն ք̄սի:

Դարձուցեր զշաւիղս մեր 'ի ճանապարհաց քոց, խոնարհ արարեր զմեզ 'ի տեղւջ չարչարանաց. և ծածկեցեր զմեզ ստուերաւ մահու:

Զհրէայսն 'ի բաբիլոն. այլեւ՝ 'ներեցին անձնիշխան կամաց մերոց: Ստուերք մահու, առաքելոյն է բանս. զի ոչ համարիմք մահ, այլ ստուերք, վ՟ն քո՟ւ. զի կեանք մեր ծածկեալ են ը՟ն նովաւ: Դարձուցեր զշաւիղս մեր. զառաքելոցն՝ յօրինացն. իսկ՝ առանց տեղի չարչարանաց, զի 'ի հեթանոսս առաքեցան. այլեւ՝ անդէն յեհմ տեղի ՟ն չարչարանացն, որք անդ կատարեցան:

Թէ մոռացեալ էաք մեր զանուն ա՟յ մերոյ. և համբարձեալ էաք զձեռս մեր առ ա՟ծս օտարս:

Նախ՝ զմակաբայեցիսն 'ի գերութեն. և ապա մեք զմնոյն քրիստոնէութեն՝ ոչ մոռանամք, 'ի հալածանս և 'ի մահս, և ոչ խնդրեմք ձեռօք օտար դից. վկայեցն է բանս. զի հոգւոյն գիտէր զարխութե նց:

Ապաքէն ա՟ծ քննէր զայս. զի նա գիտէ զգաղտնիս սրտից մերոց:

Զի վ՟ն նմա և ոչ յայլ ինչ պատճառս նեղիմք, լուքն 'ի հնումն և 'ի նորումն:

Վ՟ն քո մեռանիմք զօրհանապազ. համարեցաք ի՟բ զոչխարս 'ի սպանումն:

Բնական մահ մի է, յօժարականն միշտ, զոր ախորժեմք:

Զարթի՛ր ընդէ՞ր ննջես տր. արի՛ և մի՛ մերժեր զմեզ իսպառ:

Երկայնամտես դիմաց և հեթանոսաց:

Զի՞ դարձուցանես զերեսս քո 'ի մէնջ. մոռանաս զաղքատութիւն և զնեղութիւն մեր:

Ցոյց կրեաց եկեղեցի վ՟ն քո՟ւ աղքատութե և նեղութե:

Խոնարհ եղեն մինչև 'ի հող անձինք մեր. և կցեցան երկրի որովայնք մեր:

'Ի գերեզմանս, այլև՝ զբազումս փղաց և ձիոց կոխան առնէին:

Արի՛ տր օգնեա՛ մեզ, և փրկեա՛ զմեզ վ՟ն անուան քո:

Առ զվրէժն մեր. վ՟ն քո անուանդ է վիշտս մեր, զի նախատի, և ոչ թէ ձանձրանայ եկեղեցի 'ի նահատակութե:

'Ի

'Ի կատարած. վասն այլայլելոց ժամանակաց, որդւոյն Կորխայ իմաստութեան.
սաղմոս օրհնութեան վն սիրելւոյն։

Զայլայլելոցն՝ փոփոխմանց է, զոր սիմաքոս՝ ծաղկանց, և ըէոդոտիոն՝ շուշան ասէ։ Եւ սիրելի՝ որդին զոր պատանեաց հայր. որում շնորհեն տաց իւրայ, փոփոխեալ ենէջին յաւաքին վերայն, ծաղկեցաւ սէդ շուշան բա մարգարէին, 'ի մարդ լինելն ան, որում ասէ հայր։

ՍԱՂՄՈՍ. ԽԴ։

Բղխեաց սիրտ իմ զբան բարի. և ասացից զգործս իմ թագաւորի։

Զանախտ ծնունդն ասէ, երբ բան 'ի սրտէ անժամանակ և անմեկնելի։ Եւ ասեմ զգործս իմ թագաւորի։ Աստ հայր զգործս իւր՝ թագաւորի որդւոյ իւրոյ ասաց, և յաւետարանն՝ որդին զիւրն՝ հօրն ասաց. որ բնակեալն է յիս հայրն՝ նա գործէ զգործսն։ Մեծի բղխման կենդանութեան ջրոյն՝ մերձ տանի զմեզ այսօր հոգին սբ, զոր ասէ դաւիթ՝ զխորհուրդն էմմանուէլի, կատարեալն 'ի հօրէ՝ բղխեալ բան բարի։ Զի որ 'ի սրտէ հօր բղխեաց բան դաւիթ, երբ պատգամ 'ի նմանէ առնու 'ի սիրտ, և նոյն պատգամն բան է։ Եւ ասեմ զգործս. զգործեցեալ յիս զմարգարէութիւս թագաւորին քի. որ թագաւորեաց 'ի վն տանն յակոբայ 'ի յաւիտեան։

Լեզու իմ որպէս գրիչ արագագրի դպրի, գեղեցիկ տեսանելով քան զամ որդւոց մարդկան։

Հոգին սբ առնէ թեր կայ սրտին դաւթի, և շարժէ երբև զգրիչ, և գրէ, թացեալ 'ի խորհուրդս հօր՝ երբև 'ի մելան։ Դարձեալ՝ երբև գրիչ 'ի ձեռն գրողին՝ ոչ կամի, և զոր ախորժէ, նոյնպէս լեզուն դաւթի 'ի ձեռն հոգւոյն։ Եւ կամ՝՝ զոր բան ասաց հօր, զնոյն լեզու կոչէ դաւթի, երագ գրելով, որ ասաց և եղև նմա ամ սքանչելիքն. երբ այն՝ կամիմ սրբեաց։ Գեղեցիկ տեսլեամբ. զի ոչ յախտէ սերման ծնաւ, և ոչ 'ի գերեզմանի ապտեղացաւ. որ ոչ է բնութ որդւոց մարդկան. այլ՝ ած երգոյն, եղբօր որդին իմ կարմիր է և սպիտակ, ընտրեալ 'ի բիւրուց. և էր եւս հասակաւ և գունով մարմնոյն. թէպէտ՝ եսայի անարգ ասէ զտեսիլն, այլ՝ առ ածութիւն կշռելով ասէ. և է մն չարչարանաց խաչին. ըստ բուն նուաղեալ ասէ, և ոչ 'ի բնութենէ։ Այլև՝ բանն, որ էր լեզուն դաւթի. գրիչ՝ մարմինն ան, որ 'ի դաւթայ, գեղեցիկ գրեր քան զամ որդիս մարդկան. Թէ և մովսէս գրեաց օրէնս՝ գրիչն առաջին, այլ ոչ սոյ գրէ ածրն. որ հաւա

տայ

տայ յիս՝ զմահ մի տեսցէ. և ուր եմ ես, անդ և պաշտօն-եայն իմ եղիցի։ Զի օրէնքն 'ի ձեռն Մովսիսի տուան, շնորհ-քըն և ճշմարտութիւնն 'ի ձեռն յի քի եղեն. Որ տեսանէ, նա գիտէ որքան գեղեցիկ է։

Սփռեցան շնորհք 'ի շրթունս քո. վասն այսորիկ օրհնեաց զքեզ ած յաւիտեան։

Շնորհօք ասէ ստեղծեր զաշխարհս. այլուր՝ ողորմութ ասէ շինեաց զաշխարհս. և թէ ոչ շնորհք՝ զբարկացօղս և զմխասակարսն՝ ոչ ստեղծանէր, և ոչ սպանօղ ձեռքն՝ ոչ կազմէր. 'Ի նոյն շնորհաց և կենդանարար բժշկութիւնքն, և վարդապետութիւն, ըստ աւետարանին թէ՝ զարմանային ը բանս շնորհացն՝ որ ելանէին 'ի բերանոյ նր։ Վասն այսորիկ՝ օրհնեաց զնա հայր՝ որ ած է մարմնոյն, այս է՝ յայտնեաց, թէ՝ դա է որդի իմ սիրելի. ըստ յօհաննու թէ՝ կնքեաց հայր թէ ած ճշմարիտ է. որ ընդունի զվկայութի նորա. զմար-մինն՝ ընդ բանին։

Ած զսուր քո ընդ մէջ քո հզօր, վայելչութե և գեղով քով։

Զմարմինն է բանն. դարձեալ՝ բանն էր՝ որ սուր է քան զամ սուր. և զիշխանութիւն ասէ 'ի գործ արկանել. և հզօր՝ կարօղ յամի վանեալ զպատերազմօղն՝ որ է մեղ չարին։ Վայ-ելչութե և գեղոյ համար, այս է՝ եկեղեցւոյ սրբոյ. որ է նմա հարսն վայելուչ և գեղեցիկ։ Կամ՝ ամ վայելէ քեզ՝ գեղեց-կապէս մղեա զճակատն։

Լարեա յաջողեա և թագաւորեա վն ճշմարտութե հեզութե և արդա-րութե, և առաջնորդեսցէ քեզ սքանչելապէս աջ քո։

Լարեա պատրաստեալն, և ուղղեա 'ի քարոզութի, և թա գաւորեա 'ի վր հեթանոսաց բանիւ նր. վն հեզութե՝ որ ասացեր, հեզ եմ և խոնարհ։ Ճշմարտութե, որ վկայեցեր, ես եմ ճանապարհ և ճշմարտութի։ Արդարութե, որ ասացեր՝ դատաստան իմ արդար է։ Ցոյց ասէ արդեամբք զանուանսդ։ Եւ առաջնորդեսցէ քեզ՝ հոգին սբ և զօրութի քո. զի չես կարօտ օգնականի։ Իսկ սքանչելապէս՝ ոմանց կանգնումն. կե-նաց գլորումն, ըս հաւատոց և անհաւատութե. այլև՝ սքան-չելիքն բանայր դուռն բանին։

Նետք քո սրեալ են հզօր, և ժողովուրդք ընդ քեւ անկցին, 'ի սիրտս թշնամեաց թագաւորին։

Բանն քո 'ի բերան առաքելոցն հոգւով թերեալ։ Ժողովուրդք 'ի ներքոյ քոյ". Հեթանոսաց 'ի ներքոյ իշխանութե անկանին։ 'Ի սիրտս թշնամեաց", 'ի սրտէ վիրաւորին դեռ թշնամիքն քո։ Կամ՝ երբ հաւատան թշնամիքն հեթանոսքն՝ սիրով քո խոցոտեալ լինին 'ի սիրտ։ Դարձեալ՝ ըզհռոմայեցիսն ասէ նետ, և թշնամիս զհրէայսն, որք ոչ կամիցան զթագաւորելն քո 'ի վերայ իւրեանց։

Աթոռ քո ած յաւիտեանս յաւիտենից, գաւազան ուղղութեան՝ գաւազան արքայութեան քո։

Սիմաքոս՝ աթոռ քո՝ որ 'ի սկզբանդ ես ած՝ երկինք և եկեղեցի յաւիտեան։ Գաւազան ուղղութե աւետարանն, որով ուղղէ հաւատն՝ յարօտ, և 'ի ջուրն և 'ի փարախն. զի կանոն է նա ուղղափառ հաւատոյ, որով ուղղի ամ թիւր։ Գաւազան թագաւորութե քո, խաչն՝ որով տիրեաց մահու և դժոխոց, և կալաւ զծ ը ձեռամբ։

Սիրեցեր զարդարութիւն, և ատեցեր զանօրէնութիւն։

Ըստ եսայեայ՝ անարգեսցէ զչարն և ընտրեսցէ զբարին անդէն 'ի տղայութենն ատեաց զհրէայսն և փախեաւ յեգիպտոս, և եած զմոգսն, որք արդարացան նովաւ։

Վս այսորիկ օծ զքեզ ած ած քո իւղով ուրախութեան, առաւել քան զընկերս քո։

Մարդկութիւն օծաւ ածութեն կամօք հօր, ուրախարար իւղովն որ թափեցաւ 'ի մարմինն։ Այլ ոմն ասէ՝ ածդ իմ ած քո, որ ստեղծօղդ ես իմ, 'ի կամս հօր ստեղծար մարդ։ Ընկերս քո. թագաւոր և քահանայ և մարգարէք, որք օծեալ կոչեցան, իւղով և արեամբ և հոգւով միայն օծան, և ոչ ածութբ. այլև ոչ մնաց 'ի մահու իբրև այլ օծեալքն։ Դարձեալ՝ ասէ ուրախացելն օծեալքն զի կոչեցան ընկերք քո

Զմուռս և զհալուէն և զկասիա 'ի զգեստուց քոց, 'ի տաճարաց փղոսկրէ էց, ուստի ուրախ արարին զքեզ դստերք թագաւորաց 'ի պատիւ։

'Ի զգեստէ՝ որ է եկեղեցի զգեստ, ոմն ասաց, կենդանի եմ ես ասէ տր, զի զձեզ զամենեսեան իբր զհանդերձ արկից զինև. ուստի՛ եղանեն անուշահոտ առաքինութիւք, թէ ոչ 'ի հանդերձէ նորա՝ զոր մոգքն խորհրդաբար ընծայեցին 'ի

ծըն

ծննդեանն. զմնուան մանուն, որ սիրով մեռաւ. կասկայ թաղ-
մանն, խունկ մանրուածու՝ որով պատեցաւ. սաշխ յուռենի
խունկ է. և այս խառնուածոյ անուշահոտ յանիւ փայտից,
զոր հարսն ծրարեաց 'ի մէջ սաւանց սիրով, գլխաւոր յա-
րութեան, մեռաք, թաղեցաք, և յարեաք ընդ քեզ, ասէ զայ
հոտն: 'Ի տաձարաց փղոսկրեաց, ուստի ուրախ արարին զքո
ստերք թագաւորաց 'ի պատիւ: Թագաւոր՝ առաքեալքն.
դստերք 'ի նոցանէ աշակերտեալքն, որք մեծամեծ ընծայիւք
կոչեն զնեամ եկեղեցւոյ, ուրախ առնել զփեսայն զա-
նախ: Ընդ այլ ընծայս՝ և փղոսկրեայ, հանելով 'ի կառոց տա-
ձարաց, նշանակել թէ 'ի բնութէ հօր ունի զանմահութիւն,
ոչ՛ նա ունի զանխառնութիւն:

Կայցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ՝ 'ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ
և պաճուճեալ:

Զվերին եկեղեցին ասէ, որ ոչ հնազանդեցաւ չարին,
և նմանս զսասանելքն 'ի հօրնէ, և մնացս ընդ նմա 'ի
յաջմէ. որ է պատուոյ նշանակ: Դարձեալ մարմին բանին
զլուխ եկեղեցւոյ, որ ընդ աջմէ է հօր, 'ի հանդերձս ոսկեհուռս
զի անապական էրև. և զնոյն ինքն զքո զգեցեալ է, նորա-
զարդարեալ, և զանազան առաքինութեամբ պաճուճեալ:

Լուր դուստր և տե՛ս՝ խոնարհեցո զունկն քո. մոռա զժողովուրդ քո,
և զտուն հօր քո. զի ցանկացաւ Թագաւորդ գեղոյ քո:

Ոչ փեսային որդի դուստր կոչեցաւ, և հարսն դուստր,
խոնարհելի առ ձայն փեսային, որ բարբառէ 'ի դրանն: Մոռա
զժողովուրդ քո՝ զհեթանոսութիւն. և զտուն հօրն՝ զխաւարին
իմաստութիւն, ուր բնակեալ էր չարն առաջին՝ հայրն սուտ
զոր կարծէիր, քարին ասելով և փայտին՝ հայր իմ ես դու.
Զի ցանկացաւ". Ցդ՝ ցանկացեալ է զաղուեկեղ գեղեցիկ տե-
սանել, յորժամ լուանայ աւազանաւն:

Սա ինքն է Տէր քո: Երկիր պագցես նմա. և դուստր Տիւրոսի երկիր պագցէ
նմա. և պատարագօք զերեսս քո աղաչեսցեն մեծամեծք 'ի ժողովրդոց:

Նա ստար էր, սա է բուն տէրն, քո ստեղծողն: Երկիր-
պագցես նմա, և մի մեհենից: Եւ դուստր ծուրայ փիւնիկե-
ցիք՝ որ առաջին դուստր և ջերմ են 'ի կուռս. և թէպէտ ոչ՝
ամ համարին զանձինս, փոխեալք անտի՝ երկիր պագցեն
նմա, որպէս անդրանիկ լինի փիւնիկ ասորին, որ երկիրպագա-

 նէր

նէր, և ոչ դադարէր 'ի պաղատանաց՝ վն դստերն. և ոչ դադարէր շուն կոչել. որ և զկնի գոլի, և զարդ առնու, և դուստր լինի և կոչի: Պատարագօք պաշտեսցեն", զամենայնք մարմինն տն, եկեղեցի՝ որ է երես այ. զոր պատարագօք արժան է պաշտել, նախ՝ զինքեանս ընծայել, և ապա՝ մատչել և ասել, զոր պատարագ, կամ զոր օրհնութիւն 'ի վերայ հացիս և բաժակիս աստ ասացուք, ըստ մեծին յօհաննու, մեծամեծքն հաւատովք և գործովք:

Ամենայն փառք դստեր թագաւորի 'ի ներքոյ. 'ի վերջաւորս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ:

'Ի ծածուկ սրտին, ըստ պօղոսի բնակել քն 'ի ներքին մարդն՝ հաւատովք 'ի սիրտս ձեր: Իբր ազանին թագուհւոյք հանդերձ զարդքաշ առ ստորոտովք, խայտանկար և ազգի ազգի գունովք և նկարուք. և յեկեղեցւոջ՝ այլ արարողութիւնք, պահօք և տօնիւք և սովորութիւնք 'ի նախնեացն. որ թէ չիցեն հերձուածովք ապականեալք՝ աւելորդ է զարդու, և ոչ պատճառ հակառակութեան: Այլ թարգմանն ասէ, 'ի հանդերձս քղանցաւորս, որք են ազգի ազգի շնորհք հոգւոյն. յիշատակ ունելով անմոռաց երախտեացն այ. ոչ 'ի հին ծովքն: Ուստի 'ի հոգւոյն առեալ է բան իմաստուն, այլուստ այլինչ և այլն, այս է վերջնաւորքն քղանցք:

Տարցին թագաւորի կուսանք զհետ նորա. և ընկերք նր տարցին նմա:

Եւ՛ ընդէ՞ր կուսանք, զի սրբութիւն կարեն յարենալ 'ի փեսայն անախտ. թէ և սղալեն, սրբին, կուսանան, որ է անապականն լինին. և տապա՛ տարցին յառաջնորդաց, և յուսուցչաց, նախ յառաքելոցն և զընկերս նր՝ յառաջ 'ի հրէիցն հարսնացան, և ապա՝ 'ի հեթանոսացն տարան քարոզքն ընկերս նմա. և որ զամենն օրըստօրէ ընկերանան առաջնորդն:

Ածցեն ցնծութեամբ և ուրախութեամբ. և տարցին 'ի տաճար թագաւորի. և փոխանակ հարց քոց եղիցին որդիք քո:

Ո՛չ 'ի հարկէ, այլ՝ խնդութիւն, աւելի քան դհրէայս՝ լինին տաճար քն. և թէ շատ յետս կացին 'ի հրէիցն եղեն որ դիւքն հրէից առաքեալքն, որք բանիւք իւրեանց խօսեցան ընդ տիեզերս իբրև զկայս մի ոք յանդիման կայուցանել քն. զորոց ասէ:

Կացուսցես զնս իշխանս ընդ ամենայն երկիր. և յիշեցից անուան քո ընդ ամենայն ազգս ազգաց։

Զառաքեալսն։ Եւ այլ մեկնութիւն ոչ խնդրէ բանս, զի յայտնի է։

Վասն այսորիկ ժողովուրդք խոստովան եղիցին առ քեզ յաւիտեան, և յաւիտեանս յաւիտենից։

Զի միշտ քարոզի աւետարանն արքայութեան ընդ ամ տիեզերս. և ժողովքն առ քո, և խոստովանին յաւիտեան։

'Ի կատարած. որդւոցն Կորխայ 'ի վերայ գաղտնեաց։

Որք զգանձս տաճարին՝ պահէին երգէին զսաղմոսս: որպէս զի գովեաց և զօրութեանն տան, այլ՝ ոչ է յորժամ զայն. զի պատերազմ ած մինչև 'ի ծագս երկրի, զոր ոչ արար զօրութեանն։ Այլ՝ յայտնապէս զեկեղեցւոյ հաստատութիւն, և զխաղաղութիւն առաքելոց ընդ տիեզերս ամ. յարմար յառաջասացեալ սաղմոսին. և գաղտնի՝ զանյայտութիւն խորհրդոյն տեառ. այլ՝ որ ինչ եղեն 'ի խաչելութեանն քն։

ՍԱՂՄՈՍ. ԽԵ.

Այ մեր ապաւէն և զօրութիւն. օգնական 'ի վերայ նեղութեանց, որ գտին զմեզ յոյժ։

Որոց Այ ապաւէն է, օգնութիւն գտանեն 'ի նեղութիւնս. զի ուր առաւել եղեն մեղքն՝ առաւել և շնորհքն, և միշտ լինի ևս։

Վասն այսորիկ ոչ երկիցուք մեք 'ի խռովել երկրի. 'ի փոփոխել լերանց 'ի սիրտս ծովու։

Զի ապաւէնն մեր 'ի խաչի կայ, թէև խռովեցաւ երկիր, և դողացաւ 'ի հիմանէ, և փլան լերինք 'ի ծով. առաքելոցն քարոզութք ամբոխեցան հրէայք և հեթանոսք. և դևք առակեալ 'ի լերինս՝ հալածեցան յանդունդս. երբ ըզ լուսնոտական դևն՝ զոր տրն ասաց։

Գոչեցին և խռովեցան ջուրք նոցա. խռովեցան լերինք 'ի զօրութենէ նր։

Նոյնդ է, խռովեցան լերինք 'ի զօրութենէն քն տն. երբ պատկերն փակեալ՝ 'ի ծով հրամանաւ բաղաքատայ։

Գնացք

Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն Այ. և սուրբ արար զյարկս իւր Բարձրեալն։

Աւետարանիչք և առաքեալք, յորոց յորովայնէ գետք բղխեցին։ Քաղաք՝ որ ոչ կարէ թաքչել, ուր գտանին ամ արուեստաւորք հոգևոր համձարոյ. և ամ վաճառականք մնացական հարստութեան։ Սբ՛ արար զյարկս. աւազանաւն զեկեղեցի, զի աստ բնակէ Թագաւոր։

Ած ՚ի մէջ նորա, և նա ոչ սասանեսցի. օգնեսցէ նմա Ած՝ ՚ի վաղորդայնէ մինչև ՚ի վաղորդայն։

Նախ՝ բարձրեալ, որ է ՚ի խաչն բարձրեալ. որ արար ըզյարկս իւր բարձրեալն, ապա գիտացուք զնա Ած ծնեալ՝ ՚ի միջի մորում. ուր երկու և երեք ժողովին, անդ եմ ես ՚ի մէջ նոցա։ Օգնեսցէ նմա Ած ՚ի վաղորդայնէ մինչև ՚ի վաղորդայն։ Զոր հրէայքն սկիզբն դնեն աւուրն զերեկոյն, յարուցեալ Տէրն երևեցաւ կանանցն. մինչ ՚ի լուսանալ առաւօտուն՝ երկիցս անդամ երևեցաւ. զոր մեք ասեմք վաղն. այլև՝ ՚ի յայնմ վաղորդայնէ յարութեան սկսեալ քարոզութեան մինչև ՚ի վաղորդայն գալստեանն։

Խռովեցան հեթանոսք, և խոնարհեցան թագաւորութիւնք. ետ ձայն իւր Բարձրեալն՝ և խռովեցաւ երկիր։

Հերովդէս և պիղատոս խռովեցան և խոնարհեցան յաղաչանս հրէիցն, և խաչեցին զՏէրն։ Ետ զձայն իւր բարձրեալն, զ ինն ժամուն գոչեաց՝ ՚ի ձայն մեծ։ Եւ խռովեցաւ, զի շարժեցաւ երկիր։ Այլև՝ ՚ի քարոզելն ընդ աշխարհ ետ զձայն իւր բարձրեալն աշակերտօքն, և շատ անգամ շարժէր երկիր. և ձայն գայր յերկնից առաքելոցն և վկայիցն։

Տր զօրութեանց ընդ մեզ. ընդունելի է մեր Ած յակոբայ։

Որ ասաց ընդ ձեզ եմ զամ աւուրս նշանս առնելով. Ած յակոբայ՝ քս, զորոյ ասաց յակոբ մի՛ պակասեսցէ պետ։

Եկայք և տեսէք զգործս Այ, որ արար զնշանս և զարուեստս ՚ի վերայ երկրի։

՚ի հաւատս, որ արար զնշանս աւելի քան զոր Տէրն արար. և որ ՚ի ժամ խաչին. զոր և առաքեալքն արարին թէպէտ և այն ևս Տէրն է։

Եկայք

Մերժէ զպատերազմ ՚ի ծագաց մինչ ՚ի ծագս երկրի. զաղեղն փշրեսցէ, զզէն խորտակեսցէ, և զվահանս այրեսցէ հրով։

Ո՛չ ոք, բայց միայն տէրն. թէ և առաքելովքն զդիւաց և զհեթանոսաց զաղէտն։ Աղեղունք և զէնք և ասպարք, դիւթք, և կախարդք, և կուռք. և մեհեանք պաշտամանց այրեաց հրովն՝ զոր եկն արկանել յերկիր։

Կանխեցէք և ծանիջիք, զի ես եմ Տէր. բարձր եղէց ՚ի հեթանոսս, և բարձրացայց ՚ի վերայ երկրի։

Կանխեցէք կամօք, ապա թէ ոչ, հրով գեհենոյն ծանիցէք. բարձր եղէց, յորժամ թագաւորք հեթանոսաց՝ հաւատասցեն. բարձր եղէց, յորժամ գայ ՚ի վերայ ամպոց երկնից, յայտ է զօրօքն իւր։

Տէր զօրութեանց ընդ մեզ. ընդունելի է մեր Աստուած Յակոբայ։

Այսինքն՝ զօրութիւնք նշանաց։

՚Ի կատարած. վասն որդւոցն Կորխայ. սաղմոս ՚ի Դաւիթ։
՚Ի գիւտս Տն առաքելոցն էր եկեալ առ մկրտօղս. ելն՝ ելանէ ՚ի վերայ երկնից և գովեստ առնու։

ՍԱՂՄՈՍ ԽԶ։



ԾԱ՛ՓՍ ՀԱՐԷ՛Ք ԱՄԵՆԱՅՆ ՀԵթանոսք, աղաղակեցէք առ Տէր ՚ի ձայն ցնծութեան։

Կայթել հրամայէ հեթանոսաց. որ է գործովք ուրախ առնել զհոգիս. կրկին ձեռք հոգւոյ և մարմնոյ՝ բաղխումն հաւատոյ առ գործս։ Աղաղակեցէք, զցնծութիւն ասէ, զի միտք աղաղակեսցեն։

Տէր բարձրեալ և ահաւոր, թագաւոր մեծ ՚ի վերայ ամ երկրի։

Զի հայր յերկիր և տայ դողալ սմա, զոր առաքեալքն ծանուցին։ Թագաւոր մեծ։ Թէպէտ են թագաւորք երկրի, այլ՝ չեն ՚ի բնէ։

Հնազանդ արար զժողովուրդս ընդ մեզ. և զհեթանոսս ՚ի ներքոյ ոտից մերոց։

Զնախն

Զնախն քան զայս հեթանոսաց ետուն աւետիս, և աստի յառաջ գոհանան առաքեալքն. զի ած հնազանդեցոյց, որք 'ի հեթանոսաց ժողովուրդք եղեն քի։ Եւ զհեթանոսս 'ի ներքոյ ոտից մերոց։ Զդևս ընդ ոտիւք, որ ետ իշխանութի կոխել զօձս և զկարիճս, զի հեթանոսութենն անուն առ դևսըն թողին, և ինքեանք ժողովուրդ եղեն քի առ նա հաւաքմամբն։

Ընտրեաց զմեզ նա 'ի ժառանգութիւն. զգեղեցկութիւնն յակոբայ՝ զոր նա սիրեաց։

Զայս՝ հեթանոսք գոհանան, զոր ետ հայր որդւոյ, և որդին ընտրեաց և հանձնեաց։ Գեղեցկութեցն յակոբայ, զյակոբայ մարգարէութին ասաց, որ ասէ, մի պակասեսցի իշխան 'ի յուդայ, և մի պետ։ Գեղեցկութեցն յակոբայ. թագաւորին յի տեսօղք եղաք ամ տնօրէնութե. զոր հայր սիրէ, որ էր մեր անընկալութե. զոր 'ի տեսանելն իմացաք, թէ գեղեցիկ է տեսլեամբ քան զամ որդիս մարդկան։

Համբարձաւ ած օրհնութբ. և տր ձայնիւ փողոյ։

Ցեա կատարման տնօրէնութե օրհնեաց զառաքեալսըն, և համբարձաւ։ Զայնիւ փողոյ՝ զհրեշտակաց ձայնն ասէ. այլև՝ զոր առաքեալքն հնչեցին ընդ ամ երկիր։

Սաղմոս ասացէք այ մերում, սաղմոս ասացէք թագաւորին մերում. սաղմոս ասացէք

Թագաւոր ած 'ի վերայ ամ երկրի ած է, սաղմոս ասացէք նմա իմաստութբ։

Սաղմոս թագաւորին հօր։ Սաղմոս թագաւորին քի։ Սաղմոս ամենասբ հոգւոյն. որ թագաւորեաց 'ի վրյ ամ հեթանոսաց, զհայր և զորդի յայտնելով 'ի ձեռս առաքելոցն։ Սաղմոս ասացէք նմա 'ի յերեսին անձինս մեոյ ածութե. իմաստութբ, մտաւոր, և ոչ տաւղօք և քնարօք ըստ հնոյն։

Թագաւորեաց ած 'ի վերայ հեթանոսաց. ած նստաւ յաթոռ սրբութեան իւրոյ։

Որ 'ի զաւակէն աբրահամու մարդ եղև, որ նախ՝ ոչ դիտէին զնա, մինչ դևք, և մեղքէին թագաւորեալ։ Ած նստաւ 'ի հայրենին. զոր ոչ երբէք էր յափշտակեալ։ Այլև՝ յեկեղեցին հեթանոսաց։ Եւ 'ի հանդերձեալն՝ 'ի դատաստականն։

[illegible]

Առաքեալքն առ Տէրն ողբաձայնէն. յո՞ ասեն 'ի լեառն Ձիթենեաց յորժամ վերանայր. և զօրութիւնք՝ որ սպասաւոր էին ասեն՝ ամբարձաւ ընդ 'նմա: Այլ՝ յայժմ ամբարձաւ. զի զուսուցիչս իւրեանց՝ զփրկիչն դասքն ուսուցին: Եւ՞ խնդրեմք՝ առաքեալքն, 'ի համբերձեալն ժողովին առ դատաւորն: Եւ՞ զի՝ Տր զօրութեան էին, և յերկինս, և նստին յերկրորդական աթոռ:

[illegible]

ՍԱՂՄՈՍ. ԽԵ:

Մեծ է Տէր, և օրհնեալ է յոյժ 'ի քաղաքի Այ մերոյ, 'ի լերին սբ իւրում:

Այսն ասեմք թէ՝ յորժամ յաղթեաց Դաւիթ Տմ թագաւորաց, և չոգաւ յերուս, և կաղք և կոյրք ասեն՝ ոչ մտցէ այսր Դաւիթ մինչև զնոսա կոտորէ. և յորժամ էառ՝ խնայեաց 'ի նա, և ասէ, մեծ է Տր 'ի քաղաքի Այ մերոյ, զի քաղաք Այ լինի սա, և լեառն սբ. սակայն՝ զեկեղեցի ասէ քաղաք. յորժամ բազմացաւ օրհնութի 'նորա 'ի լեառն սբ 'ի վերինն, յորոյ վերայ հիմնն յուսոյ՝ և այս է շինեալ, և յաւելաւ 'ի նա:

[illegible]

Է նա 'ի սմա սիոնն վերին, որ եկաց 'ի հաստատութի. և արդ Տմ երկիր վնոյն ցնծութի զգենու, ուր ոչ է ցաւ և տրտմութի, և հեծութի և մահ: Վերինք սիոնի, մի լեառն բազումք եղեն. մինն կայր 'ի հարաւ, և հեթանոսք կային 'ի հիւսիսի. և պատերազմէին ընդ միմեանս, մինչ եբեր Տր զանունն և զշնորհսն սիոնի, որ է անմատոյց և զլխաւոր այսրէն, և իւրոյ մեծութեն կոչեաց քաղաք: Զի նախ քան զքրի գալուստն՝ ազգ մարդկան զհոգին սբ ոչ ունէին զճարտարապետն, որ պարիսպ շինէր և կենդանութե տայր, և արձանատա

աղա

ադարակէր։ Իսկ՝ յորժամ՝ տուեաւ հողին մը քաղաք անուանեցան մը արք, և առաքինիք արուեստաւորք, և բժիշկք

Այժ ՚ի պատճառէ եղբարց յայտնի. ՚ի ժամանակի որ օգնական լինէր նոցա։

Պօղոս ասէ, դուք տաճար այ կենդանւոյ էք. զի տաճար Թագաւորին ՚ի քաղաքի անդր է. որ է յատուկ քրիստոնեայն յեկեղեցւոջ։ ՚Ի ժամանակի երբեւ ՚ի դէպ լինէր առաքելոցն, և եկեղեցւոյ օգնել նոցա, ապա գիտէին թէ՝ Ք մեղ է ուր խոստացաւ։

Ահաւասիկ Եւանգելիոնն երկիր ծաղկեցան, և անցին ՚ի միասին։

Գութ և մաղթ յայտնի է. այլև՝ իմ Թագաւոր ժողովեցան Թէպէտ և ոչ տեղեաւ, այլ՝ կամօք, բառնալ զեկեղեցի և զանուն քո. երբ դեկոս, և դիոկղետիանոս, և մաքսիմիանոս խորհեցան, մինչ կոստանդիանոս սքանչելեօք հաւատաց, և տրդատ, և նոքա անկան ՚ի միասին։

Ինչպէս տեսին այսպէս՝ և զարմացան. խռովեցան տատանեցան, և դողումն կալաւ զնոսա։

Զհաւատացին մարգարէութեան դաւթի, երբ տեսին աչօք՝ զարմացան։

Անդ երկունք որ ՚ի ծննդեան. ՚ի հողմ սաստիկ խորտակեսցէ զնաւս ՚ի Թարշիշ։

Աղքատաց՝ հեթանոսաց. և կեցուսցէ զորդիս աբրա-

հա

համու, խոտհակայ, յակոբայ, որ չունէին ատէն տունս: Իմ խոնարհեցուցէ զփարաւոն, զամաղէկ, զամուրհայիսն, զսենեքերիմ, և զսատանայ. որ յամպս ասէր դնել զաթոռն:

Կայցէ և մնայցէ ընդ արևու, յառաջ քան զլուսին ազգէ մինչև յազգ:

Յ̅ն ք̅ն իմանալի արեգակն ը̅ հօր և ը̅ հոգւոյն, որ արև է նր. ոմ և նոյն հօրն ասէ ձևաւագայլ. և հոգին՝ լոյս երեւաց որդւոյ: Յառաջ քան զլուսինն է, զի արարիչ է ժամանակայ, զոր լուսինն առնէ: Զի յեբրայեցին և յասորէն՝ այսպէս կայ, թէ՝ երկիրպագցեն նմա՝ ը̅ արեւու և ը̅ լուսնի: Որպէս՝ զխորդ սողոմոնի վայելէ, յազգէ հրէից, մինչև յազգն հեթանոսաց: Դարձեալ՝ ը̅ ծագել արեգական առաւօտուն, և երեկոյն՝ յառաջ քան զծագել նշուլից լուսնին, եկեղեցի յաղօթս կացցէ առ նա մինչև ցկատարած:

Իջցէ ոպ անձրև ՚ի վերայ գեղման, ոպ ցօղ որ ցօղէ յերկիր:

Առ կոյսն անամուսին՝ և անսերմանական լուծութիւն, ոպ առ գեդէոնիմ նկարեցաւ յաղէ և յանձրև, և ՚ի կալն, և ՚ի դրղմն: Դարձեալ՝ ՚ի վերայ գեղման անձրև՝ որ է բրդոյ, ոչ բանայ դուռն և մտցէ. այլ զամենեսեան լուծանայ և սրբէ. և յերկանեն՝ ոչ խռովէ և քակէ. նոյնպէս Տ̅րն առ կոյսն եմուտ և ել, ոպ ցօղ. և առաքեալսն քարոզեն հեղ բանիւ:

Ծագեսցէ յաւուրս ն̅ր արդարութիւն բազում խաղաղութիւն մինչև հատանիցի լուսին:

Զի ոչ հոգին զանցեալ բնութիւն՝ որ է լոյս և օր լին, ծագեաց շատ արդարութիւն կուսութիւն, մարտիրոսութիւն, և ճգնութիւն. և խաղաղութիւն բազմացաւ՝ մինչև զթշնամիս անդամ սիրել: Մինչև կատարեսցի լուսին. ոպ լուսին մեծահնանայ, և նուաղանայ, և երկիր նոյնպէս պատերազմի և խաղաղանայ. և զի՝ մի է Ք̅ս և լուսին, զի և Տ̅րն սուր առաց բերել: Դարձեալ՝ մինչ խաւարի արեգակ և լուսին՝ ըստ Տ̅ն հրամաննին, զի և այն՝ կատարումն է. այլ յորժամ արեգակն ք̅ն ծագէ, խաւարի լուսինն սատանայ: Այլև՝ ասեն թէ՝ տարով մի յառաջ լուսինն բոլորի, և մնայ, նախ քան զեղի դալն, և խանդարի տոմարն. վերջացեալ երեսուն լինի, և եօթներեակն եօթն:

Տիրեսցէ նա ՚ի ծովէ մինչև ՚ի ծով. ՚ի գետոց մինչև ՚ի ծագս աշխարհի:

Յեզերաց մինչև յեզերս. քանզի ծով է շուրջ զաշխարհաւ: 'ի գետոյ". 'ի յորդանանէ, որ երկու ակնի է, մի այն գետոյ անէ, ուր սկսաւ մկրտութիւն մինչև եզերին կեանք վարդ կանո:

Առաջի նր նոր հնդիկք անկցին. Եւ թշնամիք նր հող լիզիցեն:

Եթովպացին նախ կղզիք անկցեն, որ 'ի մէջ ծովու բնակեալ են, չինեան 'ի նմանէ անծանօթ. որք ծուր և սիրտն ամ գնալոյն. այլ՝ եթովպացւոյն և թովմայիւ վաղ քարոզեցաւ 'ի հնդիկս: Եւ թշնամիք նր հող կերիցեն. որք օձն առաջին ամ թշնամիքն մոխրին, և ըստ մոխիր զան միշտ. և հերձուածողք մոխիր ուտեն, և ոչ մանանայ:

Թագաւորք Թարսիս եւ կղզեաց՝ պատարագս մատուսցեն նմա. Թագաւորք արաբաց եւ սաբայ՝ պատարագս բերցեն նմա:

Թարսսի, և կղզիք, զկողմն կարգեղոնի ասէ կղզի. և զԹարսսի՝ տարսոնի, զներքին հնդկաց. և կղզեաց պատարագս բերցեն, առ հաւատացեալք, և 'ի հանդերձեալն՝ առ հասարակ ամ ազգք՝ երկրպագութի և փառաբանութի մատուցանեն: Թագաւորք արաբայ և սաբայ, որ է երջանիկն արաբիայ, և ապառաժն կոչեցեալ արաբիայ, զմոգքն ասեն երեք թագաւորք. պարսից մելքոն. գասպար՝ հնդկաց. պաղտասար՝ արաբկաց. պատարագս բերցեն, ոսկի, զմուռ, և կնդրուկ:

Երկիրպագցեն նմա ամ թագաւորք երկրի. եւ ամ ազգք ծառայեսցեն նմա:

'ի կատարածի:

Զի փրկեաց զաղքատն 'ի հզօրէ. զաղքատն եւ զտնանկն, որոյ ոչ է ոք օգնական:

Մխաւոր աղքատ՝ զբնութիւն ասէ, զոր փրկեաց 'ի սատանայէ: Զաղքատն և զտնանկն՝ զհրէայսն. ըստ այնմ թէ՝ հայեցաւ, և ոչ ոք էր որ օգնէր նմա:

Անխնայեսցէ նա յաղքատն եւ 'ի տնանկն. եւ զանձինս տնանկաց կեցուսցէ. 'ի վաշխից շահից փրկեսցէ զանձինս նց:

Գթով խնամենէն է անխայելն. 'ի վաշխից չարեաց փրկեսցէ, զի փոխանակ չլսելոյն նմա՝ 'ի դրախտին ճաշակմամբ 'ի քաղցր պտղոյն, միշտ պահանջէ զվաշխն, զհոգիսն 'ի դը-

ժո

ժոխս տանել սատանայ, որ թող տալոյն. անմիտ թողել զպարտսն՝ որ մահն է, յորմէ որն փրկեաց, և յերկրորդ գալստն՝ զայն բառնայ, զհինգ հարիւր, և զյիսուն, թողեալ ըզ մեզ հինգ պարտութեանցն եհայր. և յիսուն ազատմայն, ՚ի սրտէն և ՚ի կենս. մեղաւոր առաքեալ. և յիսուն զաղատ միտացն ադամայ նշանակ է:

Պատուական է անուն նորա առաջի նոցա. կեցցէ, եւ տացի նմա յոսկւոյ արաբիացւոց:

Ցո՛յց որում ամ ծունր կրկնի: Դարձեալ՝ պատուական է անուն նր՝ առաջի նր, ըստ այլոց. եկեղեցւոյ՝ առաջի քրիւանցն՝ եհեղ զարիւն իւր վասն նր, զի քրիստոնեայք կոչին: Կեցցէ, հերձուածս ոչ կարէ սպանանել. Եւ ՚ի մեռելոց կեցցէ. և տացի նմա յոսկւոյն արաբացւոց, որ աղնիւ է, զի բուսմանք է, զի եթէ թագաւոր նր, նշանակ անախտ հաւատոցն, որով դարձաք յառաջին փառսն: Ասորին ասէ, պատուական է արիւն նր. և այն ես՝ պատուէր ՚ի մեզ, սուկալի պատուով:

Յաղօթս կացցեն առ նա յամ ժամ. եւ զօր հանապազ օրհնեսցեն զնա:

Որք ոչ թերացան ՚ի հաւատս, քնար են հոգւոյն. և գիշեր ոչ տիրէ նոցա, այլ զօրհնութիւն նր՝ յամ ժամ ՚ի բերան ունին. վասն որոյ՝ ասէ թէ զօր հանապազ:

Եղիցի հաստատութիւն ընդ ամ երկիր. եւ ՚ի վերայ գլխոց լերանց:

Եկեղեցի հաստատի ընդ ամ երկիր. և ՚ի վերայ գլխոց լերանց, ըստ այնմ՝ ոչ կարէ քաղաք թաքչել. որ ՚ի վերայ լերին կայցէ: Ասորին ասէ, եղիցի ցորեան ընդ ամ երկիր. յայտ է ՚ի հացոյն՝ որ անկաւ յերկիր, և մեռաւ. և ՚ի վր գլխոց լերանց՝ յոյժ սէք, որ ասէ զցորեան աղնիւ, նախ՝ առաքեալքն, և ապա՝ նմանօղք նր:

Բարձրասցի քան զԼիբանան պտուղ նորա. ծաղկեսցին ՚ի քաղաքի որպէս խոտ երկրի:

Բարձրասցի քան զամ կրօնս և զհրէից պաշտօնն՝ պտուղն եկեղեցւոյ, հաւատն, յոյսն, սէրն. զի լիբանան բարձր է քան զպաղեստին, և զասորիս. այլ՝ լիբանան անպտուղ է որպէս ամ երկրի կրօնք՝ այնպէս անբարի էր: Ծաղկեսցի յեկեղեցի. ոչ որպէս հրէից կրօնքն՝ փոքր մի ծաղկեալ յեհմ, խամրեցաւ: Երբայեցին ասէ բուսցի ՚ի քաղաքի որն: Քաղաք՝ որն մարիամ. պարիսպ՝ կուսութիւն, ուր բուսաւ ծառն, ոչ նման հրեշտակաց, այլ՝ մարդոյ, որ խոտոյ նմանեցաւ. զի մեք

անուանոյ Նմանեցաք, զի կերակուր լիցի մեր։ Խօսս 'ի քաղաքի, և ոչ յանդաստանս և յագարակս, այլ 'ի քաղաքի՝ զոր ոչ կոխեն և կալլեն մարդիկք, այլ թէ՝ 'ի քաղաքի ուրեք 'ի մահարձանի, որ չկոխի, և բուսանի։ Եւ զի 'ի քաղաքի ասէ, որ է յերևանի. և զպարիսպն կոխեն, այլ ոչ զմահարձանն, իբրև 'ի կողմն՝ յոր արձանացաւ մահն։

Եղիցի անուն տն օրհնեալ յաւիտեան. զի յառաջ քան զարև է անուան նր։

Զինչ և անուամբ, օրհնեալ է. զի յառաջ քան զարև է անունն նր՝ իսկականն, թէպէտ և խոստ կոչեցաւ յետոյ։

'Ի նա օրհնեսցին ամ ազգք երկրի, և ամ ազինք երանեսցեն զնա։

Զի զաւակն է աբրահամու՝ յորում՝ օրհնեսցին ամ ազգք. և ամ ազինք երանեսցեն զնա, զի զիններորդ երանութիւն նախ ինքն եառ 'ի մեր բնութիւն՝ զոր զգեցաւ, և ապա ետ մեզ. զի ամ ազգք ասեն, երանելին, և միայն հզօրն, թագաւորն թագաւորաց, և տէրն տերանց, որ միայն ունի զանմահութիւն։

Օրհնեալ տր տծ իսրայէլի որ առնէ սքանչելիս միայն. և օրհնեալ է անուն տր փառաց նր յաւիտեան. լցցի փառօք նր ամ երկիր. եղիցի եղիցի։

Օրհնեալ տր տծ իէլի՝ որ գրեալն է, լուր իէլ տր տծ քո՝ տր մի է։ Եւ օրհնեալ է անուն տր փառաց նր յաւիտեան, որ խաչեալն կոչի, զի ոչ է նախատանաց։ Լցցի փառօք նր ամ երկիր, ներովբէքն ազաղակելին խաչին խորհրդով։ Եղիցի՝, որ է հաւատարիմ, և ճշմարիտ. որ ասաց՝ եղիցի լոյս, և եղև, և այլն. նոյնպէս՝ և այս լինի։



Սաղմոս յասափ. օրհնութիւն:
Դաւիթ երգէր, և ասափ գրէր, և երգարանէր, առեալ ի հոգւոյն սրբոյ, որ էօթանասունքն ի հոգւոյն մովսէսի: Որոյ շնորհօ գերւոյն, և զմխիթարութիւն՝ այլ՝ զբնոյն յուզմանս խորհրդոց և կրից մարդկան՝ ցոյց տուեալ, յորժամ շփոթութեան չարացն՝ ոչ ենթեն նարգմութիւն:

ՍԱՂՄՈՍ. ՀԲ.



ԲՐԵՒ ԶԻ ԲԱՐԻ Է ԻՍՐԱՅԵԼԻ
Ած, և այց ուղիղ էին սրտիւք:

Որ և ինքն բարի է, և չունի չափ բարույն, Ած՝ զոր իէլ պաշտէ: Ոյք ուղիղ են սրտիւք. նոցա բարիս պարտի, ոմանց աստ և անդ. և կլսոց՝ անդ միայն զանմահն:

Բայց իմ իսկ փոքր մի ևս սասանեալ էին ոտք, առ սակաւուք մի՝ և գայթեալ ցնդեալ էին գնացք իմ:

Սակաւ մի ասէ տկարանայր խորհուրդս, զոր ոտք կոչէ, գնացք՝ զուղիղ մտածմունսն կոչէ:

Նախանձեցայ ես ընդ անօրէնս, զխաղաղութիւն մեղաւորաց որ տեսանէի զի ոչ գոյր հայեաց մահու նոցա:

Ընդ քաղդեացոցն աջողութն. զի ոչ գոյր վրէպ մահու նց. սիմաքոս, զմահ ոչ ածէին զմտաւ. ոչ վրիպէին 'ի ցանկալեաց իւրեանց: Այլ վրէպ՝ մահատարաժամն ասէ, որ չլինէր նոցա:

Հաստատուն էին տանջանք նոցա, ի վաստակս մարդկան չէին նոքա. և ընդ մարդկան ոչ տանջեսցին:

Հոգին ոչ պատասխանի տայ գայթագղել սրտից թէ՝ կայ նց հատուցումն առ Ած: Զի մարդկայպէս չէր նոցա գործքն բարի, այլ՝ ոչ մեղքն նման այլոց մարդոց, այլ՝ դիհաց. ըն մարդկան ոչ տանջէին թեթև աստ, այլ՝ յէ դևան անդ.

Վասն այսորիկ կալաւ զնոսա ամբարտաւանութիւն. արկան զիւրեամբք զամ-
բարշտութիւն և զանօրէնութիւն իւրեանց։

Զի աստէն ներելն եղև նոցա պատճառ ամբարտաւանութեան, և իբրև զզարդ՝ արկան զիւրեամբք զամբարշտութիւն։

Ելցէ որպէս ՚ի ճարպոյ անիրաւութիւնք նոցա. զի գնացին նոքա ըստ խոր-
հրդոց սրտից իւրեանց։

Համբերող է Ած զձմերայն և զփափուկ կեանսն, և նիւթ հրոյն առնէ. յորժամ տայ արեգականն բոցակէզ առնել յաւուրն դատաստանի. զի աւելի չարութիւն նոցա՝ փափկութիւնն էր. և անզգուշութեամբ գնալն ՚ի խորհուրդս իւրեանց փափուկ կենօք, և ոչ զղջացան։

Խորհեցան և խօսեցան չարութիւն. զանիրաւութիւն ՚ի բարձանց խօսեցան։

Ո՛չ միայն առ մարդիկ ասէ, այլև՝ առ Ած անիրաւս խօսեցան։

Եդին յերկինս զբերանս իւրեանց, և զլեզուս իւրեանց ածէին ընդ երկիր։

Ո՛չ ածէին զմտաւ՝ տեղւոյն հեռաւորութեամբ զբարձրութիւն փառաց նորա. և զլեզուս իւրեանց ածէին զերկրաւ. մինչ ոչ կարէին հասուցանել, առ մեզ դարձուցանէին ըզչարութիւնս. իբրև հրեայքն՝ զհօր հայհոյութիւնն առ որդին, որ յերկրի աստ էր։

Վասն այսորիկ ժողովուրդ իմ դարձցի այսրէն. և աւուրք իմ լի կա-
տարեալ գտցին ՚ի նոսա։

Ած ասէ զայս, որպէս թէ՝ յետ մ՝ կայցէ, զի ստիպեն բաբելացիքն՝ զոր չարեացն իւրեանց, ըստ խստութեան իւրեանց, և անզեղջ սրտին։ Եւ աւուրք իմ լի կատարեալ՝ զոր հատի վճիռ եօթանասուն ամացն, գտցին ՚ի նոսա. յորժամ վասն ողորմութեան իմոյ ՚ի վճռէն հաշուէիմ յերեքտասան ամէ թագաւորութեան Ովսիայ, և ոչ ՚ի գերութենէն։

Ասացին՝ զիա՞րդ գիտաց Ած. կամ գոյցէ՞ արդեօք գիտութիւն առ ՚ի
Բարձրելոյն։

Երկու դիմօք է իմանալ, մի՝ ՚ի պատուհասելն զբաբելացիսն՝ զարմացմամբ ասեն, զիա՞րդ ոչ թաքեաւ չարիք նոցա ՚ի Ածնէ. և մի՝ յորժամ ՚ի վշտացն նեղէն, ասեն, արդեօք ո՞ւ առնէ զայս Ած։

Ահա

Այս մեղաւորս էին և յաջողեալ է ինձ, նոյն՝ և ուսին զմեծութիւն աշխարհի:

Թէ մեք մի մեղաց՝ գերեցաք ամեն, ահա մեք աւելի եմ՝ և յաջողի սոցա:

Ասացի՝ 'ի գիր ուրեմն արդարացուցի զսիրտ իմ. լուացայց ամբծութեամբ զձեռս իմ. և եղէ ես խոշտանգեալ զօրհանապազ. և նշանակեալ եմ ընդ առաւօտս:

Զկնի միոյն խոստովանի, թէ սրտիւ ուղիղ, և ձեռօք լուացեալ 'ի չարեաց, և ոչ ընաւ կցորդեալ: Եղէ ես խոշտանգեալ զօրհանապազ 'ի միոյս թէ զի՞որդ յաջողի սմ: Եւ կշտամբանք իմ՝ զօրն և զգիշերն իմ, և ընդ առաւօտն դարձեալ սկսանէի: Կամ՝ առաւօտ՝ զդարձն ասէ, թէ զիս կշտամբել սկսայ և մեղադրել, թէ ընդէ՞ր կարծմոնեցի:

Թէպէտ և ասէի թէ այսպէս պատմեցից. ահաւասիկ յազգ որդւոց քոց՝ որոց և ուխտեցի:

Խորհէի թէ ասեմ որդւոց ժողովրդեան քո՝ զայս կերպ որ ասաց, թէ սասանեալ էին ոտք, և դայթաքեալ գնացք. այլ ոչ իշխեցի, զուցէ դայթաքիցին տխմարքն, այլ զայս ուխտեցի նմ:

'Ի միտ եդի, թէ ծանեայց և այս ջան է առաջի իմ, մինչև մտից 'ի սրբութիւնս այս. և 'ի միտ առից զվախճան նց:

Ջանամ յապաշաւանս՝ մինչև մտանեմ 'ի դառնալն 'ի Տրն եկէմ, և ապա 'ի միտ առնում թէ՝ յի՞նչ կատարեցաւ յաջողումն բաբելացւոյն. զնոյնն և դուք ասէ արարէք. այսպ առ ած ասէ:

Սակայն ձգին ոտնգունք ինձ պատրաստէր արարչին զնէ. և նախատանօք զնէ յամբարտաւանութենէ իւրեանց:

Վ'տնենգութե՝ զոր ունէին առ մեզ, տարադիր արա յիւրեանց աշխարհէս կիւրոսիւ 'ի պարս. և կործանեցես յապականութե իւրեանց, որ զքեզ հայհոյեցին:

Իսկ զիա՞րդ եղեն յաւեր յանկարծակի, սատակեցան պակասեցան կորեան վն անօրէնութէ իւրեանց, և եղեն որպէս երազ զարթուցելոյ:

Տեսեալ հոգւոյն՝ զաւերն բաբելոնի հեռանայ, զի ահա երազ էր ասէ:

Տր 'ի քաղաքի քում զպատկերս նց անարգեսցես. զի հուր բորբոքեցաւ 'ի սրտի իմում, և երիկամունք իմ այլագունեցան:

'Ի քաղաքի քում՝ յեհմ ասէ թէ ինչ գործեցին, որ

ճշմա

Ճշմարիտ էր, զբաբելոն՝ որ պատկեր է և նմանութիւն, անարգեցի իբր ունայնութիւն ունայնութեանց: Զի հուր բորբոքեցաւ 'ի սրտի իմում, և երիկամունք իմ այլագունեցան. 'ի ցասումն և 'ի ցանկութիւն. մերթ առ 'ի հրով նախանձու՝ զաւերն նէմի տեսանելով: Քանզի և մատաթիա և յոլովք 'ի մկայեցն՝ տեսեալ զպատկերս դողային երիկամունքն, և կործանեալ անարգեցին զկուռսն, և զմատուցիչսն պատարագաց սպանին: «Խորտակեալ՝ որ 'ի քաղաքի քում». և բաբելոն քո է, զնորհս պատկերի քո՝ մա. 'ի նշ՟նէ, զի արհամարհեցին զիս:

Եւ արհամարհեալ եղէ, և ոչ գիտացի. որպէս զանասուն համարեցայ առաջի քո, և ես յամ ժամ ընդ քեզ եմ:

Կարծիմ եթէ ասէ, և արհամարհ ցուցայ, իբրև զանասուն համարեցայ զանձորոճածն բաբելոնի տեսանելով. և ես յամ ժամ օրինօքն ընդ քեզ եմ. և նոքա օտարք են:

Կալար զաջոյ ձեռանէ իմմէ, 'ի խորհուրդս քո առաջնորդեցեր ինձ, և փառօք ընկալար զիս:

'Ի դիմաց կատարելոցն ասէ, և իւր, և այլ մարգարէիցն. յելից եգիպտոսէ՝ 'ի խորհուրդս քո առաջնորդեցեր ինձ, և աստ՝ դանիէլիւ և եզեկիէլիւ, և որք 'ի դարձին մարգարէքն՝ հոգւոյն: Զաջոյ ձեռանէ՝ զմխիթարսն. և փառօք ընկալար զիս, թագաւորաւն զօրաբաբելիւ, և քահանայապետաւն յեսուեաւ:

Զի՞նչ կայ իմ բնաւ յերկինս, կամ 'ի քէն զի՞նչ կամեցայ 'ի վերայ երկրի:

Բարի ինչ ունիմ յերկինս՝ քան զքեզ, երբ այդր գամ. և յերկրի այլ ինչ խնդրեմ, քան զոր արարեր աւեր բաբելոնի, և ինձ դարձ, և զյորդ յերկրի. վասնորոյ՝ ասէ:

Նուաղեաց սիրտ իմ և մարմին իմ. Աստուած սրտի իմոյ, բաժին իմ Աստուած յաւիտեան:

Ո՞վ սաստիկ ծարաւոյն նեղեալ ստիպէ բերել ջուր այսպէս հոգւով ասէ և մարմնով թալկացեալ նուաղիմ: Սրտի իմոյ բաժին. ոչ ուզէ 'ի բնաւից այլինչ յաւիտեան սիրտ իմ՝ զատ զքեզ. Երբ իցէ, զի եկից:

Ահաւասիկ ոյք հեռի առնեն զանձինս իւրեանց 'ի քէն, կորիցեն. սատակեսցես զամենեսեան՝ որ պոռնկեցան 'ի քէն:

Հա

Հաւանեալքն անտիոքու և Նաբուգոդոնոսորայ. դու չես հեռի յումեքէ՝ բովանդակ բարեաւք և գթութ. այլ՝ որք արարին զհեռանալն. որքան և է՝ կորուստ է։ Սատակեցին ամենեքեան՝ բովանդակ դևք և կռապաշտք, և որք անդարձ մնան ’ի մեղաց։

Ինձ մերձենալ առ Ած բարի է, և դնել առ Տր զյոյս իմ։

Որքան նոցա հեռանալն չար է, և յուսահատելն։

Պատմել զամ օրհնութիւնս քո. ’ի դրունս դստեր սիովնի։

’Ի դրունս եկեմ՝ որ առ երուսաղէմն, որ երուսաղէմ սիոնէ է կոչի դուստր առ մօր. և յեկեղեցիս՝ որ դուստր է վերին սիոնի, որ է մայր մեր ամենեցուն։

Իմաստութիւն յասափայ։

Որպէս ’ի գերելն ասորւոց, և այլ յաղթելոյ ժամանակին՝ յերկրաւոր մա-կաբայեցւոցն. այլ մշտնջենաւորէ զայն վերջին աւերմանն է ’ի տիտոսէ. որ է զհրեշտակութիւնն արկեալ ողբացն Տն. զոր հոգին Ած ողբայ ’ի բերանոյ զղջացելոցն, և գերելոցն, առնելով։

ՍԱՂՄՈՍ. ՀԳ.

Ընդէ՞ր մերժեցեր Ած իսպառ. բարկացաւ սրտմտութիւն քո ’ի վերայ խաշին արօտի քո։

Որ ոչ երբէք եղև նմա անդարձ գերութիւն. բարկացաւ սրտմտութիւն քո". զոր յառաջ հովուէիր յարօտս մարգարէիցն։

Յիշեա՛ զժողովուրդ քո, զոր ստացար ’ի սկզբանէ. փրկեցեր զգաւազան ժառանգութեան քո։

Ստացար իսկ յեգիպտոսէ, և փրկեցեր ’ի փարաւոնէ. ըստ մովսէսի, եղև բաժին Տն ժողովուրդ իւր յակոբ. և վիճակ ժառանգութեան նորա իսրայէլ։

Լեառն սիովնի այն՝ որ բնակեցեր դու ’ի նմա. համբարձ զձեռս քո ’ի վերայ ամբարտաւանութեան նց իսպառ։

Ուր դաւիթ եբեր զխորանն և զտապանակն, և եդեր դու զանուն քո ’ի նմա։ Համբարձ զձեռն քո ’ի վերայ հր-էից՝ որք զկայսեր թագաւորութիւն խնդրէին, և խնդրե-
ցին

ցին զարիւնն նորա 'ի վերայ անձանց և որդւոց՝ խապառ խնդրեցին։ Համբարձ զձեռն քո դարձեալ միշտ հարկանել զնա։

Որ ինչ անիրաւեցաւ թշնամին 'ի սրբութեան քում. պարծեցան ատելիք քո 'ի մէջ տօնախմբութեան իւրեանց։

'Ի տօնի զատկին՝ 'ի մէջ բարեկենդանութեն խաչեցին զՔս̅. պարծեցան ատելիք քո, վա՛հ ասէին՝ որ քակէիր զտաճարն. 'ի նոյն տօնի հատուց։ Եհարց թէ՝ ընդէ՞ր մերժեցեր, և այս էմ՝ պատասխանի է թէ՝ ոչ անդատաստան մերժեցեր։

Եդին զնշանս իւրեանց 'ի նշանս. և ինչպէս ոչ ծանեան զելս 'ի վերուստ։

Պիղատոս՝ նշան աւերածի 'ի տաճարն եմոյծ գլուխ խոզի, և դրօշ՝ որ կայր 'ի վր̅ պատկեր արծուոյ։ Այլև՝ նոր շանք լինէին աւերածոյ, դուռն՝ որ բացաւ ինքնին, որ քսան մարդ հազիւ ընէին. և երինջն՝ որ գառն ծնաւ. և այրն՝ որ աղաղակէր, վայ ենձ, վայ ենձ. և նք̅ եդին 'ի նշանս բարւոյ։ Եւ ինքեանք ոչ ծանեան զելս 'ի վերուստ։ 'Ի վերուստ գոլ մեծ բարկութին, և են նց̅ յենձ՝ պէսպէս պատուհասին, և այս էր։

Որպէս յանտառի՝ փայտատօք կոտորեցին զդրունս նր̅, 'ի միասին փայտատօք և տապարօք կործանեցին զնա։

Արուեստաւորս ածեալ՝ քանդէին։

Այրեցին 'ի հուր զսրբութիւն քո յերկրի. պղծեցին զխորան անուան քո։

Յերկրի՝ և ոչ 'ի յերկինս է, խորհրդով զսբ̅ եկեղեցի։ Պղծեցին, խայտառակութիւն գործելով 'ի տաճարին։

Ասացին 'ի սիրտս իւրեանց ազգք նց̅ 'ի միասին, եկայք լռեցուսցուք զամ̅ տօնս այ̅ յերկրէ։

Զշաբաթ, զզատիկ, զտաղաւարահարսն, և զայլսն։

Նշանս մեր ինչ ոչ տեսաք, և ոչ ևս գուցէ մարգարէ. և զմեզ ինչ ոք ոչ ճանաչիցէ։

Եւ արդ լռեալ են նշանագործքն և մարգարէքն, որք և յայլ գերին մեր, մարգարէքն էին, և զմեզ ոչ ճանաչեցին իբրև զինել, և զժողովուրդ այ̅։

Մինչև յե՛րբ ա͞ծ՝ նախատէ թշնամին, բարկացուցանէ հակա-
ռակորդն զանուն քո ի սպառ։

Սատանայ և հրեշայքն դեռևս հակառակին, և հայհոյեն զՔ͞դ Յ͞ս։

Ընդէ՞ր դարձուցանես զձեռն քո, և զաջ քո 'ի միջոյ ծոցոյ
քումմէ ի սպառ։

Ծոցն՝ կրկին է, զանձ բարութեան և բարկութեան ա͞յ, և ձեռն՝ որ բաշխէ զբարկութիւն, և աջ՝ որ զպարգևս. հատուցանէ իւրաքանչիւր ըստ արժանեացն, իսպառ մի երկայնամտեր։

Ա͞ծ թագաւոր մեր յառաջ քան զյաւիտեանս. որ արարեր
զփրկութիւն 'ի մէջ երկրի.

Վ͞ոյ արարեր փրկութիւն 'ի մէջ եդեմի. յեդեմ որ է սիրտ երկրի՝ ըստ իւրն ասելոյն։

Դու հաստատեցեր զօրութե͞ քով զծով. դու խորտակեցեր
զգլուխ վիշապաց 'ի վերայ ջուրց։

Զծովն կարմիր երբ զպարիսպ արար և անտի. վիշապ եգիպտոսի քաղաք, գլուխ վիշապաց՝ իշխանք ն͞ց։

Դու ճմլեցեր զգլուխ վիշապին, և ետուր զնա կերակուր
զօրացն հնդկաց։

Մխաւոր զփարաւոն. և ետուր զնա կերակուր զօրացն հնդկաց. զի եկին հնդիկք, առին զկապուտն, զոր ալիքն ընկեցին 'ի դուրս։

Դու ճեղքեցուցեր զաղբերս և զվտակս. դու ցամաքեցուցեր զգետս սաստիկս։

Զաղբիւրս 'ի վիմէն, և ցամաքեցուցեր զյորդանան. և զգետամն սողոմայ, և զյորդանան, զայն՝ որ գայր դարիւ և դարիւ։

Քո է տիւ, և քո է գիշեր. զլոյս և զարև դու հաստատե-
ցեր. և դու հաստատեցեր զա͞մ սահմանս երկրի. զամառն և
զձմեռն դու արարեր։

Ժամանակաց արարիչ դու, որ արարեր եգիպտոսի գիշեր, և իմ ե՞ր տիւ. զլոյս և զարև. և դու հաստատեցեր զա͞մ սահմանս երկրի. սահման եդիր զոյեցս, և կան. զգարունն ձմերայինն՝ որ մերձ է յիշէ, և զամառն՝ աշնայնովն որ առընթեր՝ դու առնեղծեր։

Այ [illegible]

Բարի տէր կամօք մեռանիմ զչարն, յուշ լիցի առէ զայս ոչ կամեցաւ գիտել և պահել 'ի մտի զտք անուն քո, որ ոչ նախատի, այլ նախատեաց, և նախատէ ևս. ժողովուրդ սա զգամ՝ քան զերգն և զեշ՝ բարկացոյց զանուն տք քո, զի որ դեւ տյ ոչ ուսաւ զքեզ զոր:

Մէ՛ [illegible]

Գազանացն զիւրեաց զանձն հրէի և հեթանոսի, որ խոստովանին զքեզ տծ. և զանձինս անանկաց՝ որ մեղան և զղջացան, մի մոռանար:

Հ [illegible]

Զոր ուխտեցեր եկեղեցւոյ՝ զհաւատս և զգործք՝ քոյով արեամբդ, զի լցան սուրք՝ եկեղեցիք հերձուածողաց յափշտակութք յերկրի, վն երկրաւոր փափկութեց, կամ փառաց և լինելց՝ քանտապաշտեցան, և սուտ խօսեցան՝ արիոս, նեստոր, և այլքն. կամ զի յերկինս ոչ ելին հոգւոյն սրբով իմանալ զգիրս. այլ երկրաւորք եղեն և շնչաւորք՝ և ափշեցան

Մէ՛ [illegible]

Անկեալն յեկեղեցւոյ թէ զղջացեալ գայ առ քեզ, թէև՝ մահու չափ է հերձուած 'ի հոգւոյդ տք. այլ աղքատ հեթանոսն, և անանկ հրէայն օրհնեսցեն զանուն տք քո. զի ողորմած կոչիս և երկայնամիտ:

Ար՛ [illegible]

'Ի հանդերձեալն՝ զի քոյ է դատաստանն. յիշեա՛ զնախատինս՝ 'ի սատանայէ, որ նախատէ զպատկեր քո, և զանուն քո, և զեկեղեցի քո, և զփառս քո, և զքեզ յմ:

Մէ՛ [illegible]

Որ յեկեղեցիս աղաղակեն միշտ։ Ամբարտաւանութե̄ գիճաց և կռապաշտից՝ վերասցի հանապազ, յորժամ դու միայն յայտնեսս տր̄ մեր և յս̄ ած̄։

’Ի կատարած. մի՛ ապականեր. ընդ օրհնութե̄։ Սաղմոս յասափ, երգ առ ասորեստանեայսն։

Վն̄ դատաստանաց այ̄ [illegible], և վն̄ Գերեզմանին, և վն̄ [illegible] ասորեստանեայցն, և վն̄ աւուրն կատարածի, որ և աւէ։

ՍԱՂՄՈՍ. ՀԴ.

ԽՈՍՏՈՎԱՆ ԵՂԻՑՈՒՔ ԱՌ ՔԵԶ

ած̄, խոստովան եղիցուք և կարդասցուք զանուն [illegible] քո։

Նախ՝ խոստովանիմք զյանցանս, և ապա՝ կարդամք զանուն քո. և ընդ է՞ր կրկնէ զխոստովան եղիցուքն. անանիայ ուսոյց կարդալ զանուն տն̄ զկնի խոստովանութե̄ մեղաց, յասելն ցպօղոս, արի՛ լուա զմեղս քո. այսւ խոստովանութե̄ մեղացն, ’ի կարդալ զանուն տն̄, որ է հաւատոյ խոստովանութիւն տն̄ այ̄, որ դատօղ է և ողորմած։

Պատմեցից զա̄մ սքանչելիս քո. յորժամ ժամ առից՝ ես ուղիղ դատեցայց։

Երբ յենէմ հասից զերծեալ ’ի նեղութենէ՝ արդարադատ եղէց, զոր դու ասացեր դատաստան արդար դատեցարուք։ Ասէ թէ՝ յասելն դաւթի զսաղմոս՝ զյուդայի ցեղս միայն ունէր, խոստանայ թէ՝ յորժամ զտասն ցեղն առնում, ուղիղ դատաստանաւ դատիմ զբովանդակն ’ի ժամու։ Իսկ՝ առաքեալքն յորժամ հրաման առին նստել յերկոտասան յաթոռ՝ աստ քարոզեցին, և անդ դատին։

Մաշեցաւ երկիր՝ և ա̄մ բնակիչք նորա. ես հաստատեցի զսիւնս նր̄։

Երուսաղէմ և ա̄մ բնակիչք նր̄. ես հաստատեցի զսիւնս նր̄, զայս ած̄ ասէ, սիւն՝ զօրաքաբէլ, և յեսու, և մեր զարէքն. և քի̄ է բանս, որ ’ի մաշելն մեղօք ա̄մ երկրի՝ հաստատեալ լինի ’ի պատարագն երկնի, յարդարութ̄, ոն̄ և յած̄պաշտութ̄. և մարմնոյ երկրի պակասեալ յառաքինութ̄. և հոգւոյն բնակչաց ’ի նոսա՝ ’ի սէրոյ. ած̄ն հաստատեաց սիւնս՝ զառաքելսն, զեօթն զօրութիւնս հոգւոյն դնելով ’ի նոսա, շինելով զիմաստից տունն։ Դարձեալ՝ եւեմ հնոյն սիւնս զեկեղեցի հաստատեաց, ըստ պօղոսի ասելոյն առ տիմոթէոս,

հա

հանել զսա ՚ի վերինն սիոն, որ է սիւն սորա մշտնջենաւոր: Դարձեալ՝ երբ վ̃ն մեղաց աւերի երկիր, այս է սիւնն, վ̃յ ասէ:

Ասացի անօրինաց, թէ մի՛ անօրինիք. և մեղաւորաց, թէ մի՛ բարձրացուցանէք զեղջիւրս ձեր:

Հպարտից ասէ, մի՛ բարձրացուցանէք զեղջիւրս ձեր, սակաւ ինչ է ամենակս աստ, այս է բարձրէքն:

Մի՛ համբառնայք ՚ի բարձրունս զեղջիւրս ձեր. և մի՛ խօսիք զա̃յ անիրաւութիւն:

Զեղջիւրսն ամբառնալ՝ զմնամնոյն բարսն ՚ի ձեղ առնել. այս է սիւնն՝ բանն ք̃ն, բանիւ գոյացաւ երկիր, ասաց և եղև. այլ բանիւ հաստատի այսպիսեօք, որ ասաց անօրինաց և մեղաւորաց, մի՛ խօսիք զա̃յ անիրաւութիւն, այս է ՚ի բարձունս ամբառնալ զեղջիւրն, ասել թէ՝ անիրաւ է դատաստան նորա. քաղդէացիք, կամ՝ հրէայք:

Զի ո՛չ յարևելից՝ և ո՛չ յարևմտից, և ո՛չ յանապատէ լերանց. այլ ած դատաւոր է:

Զչորս կողմն յիշէ, զհիւսիւս և զհարաւ՝ անապատ ասէ զի ո՛չ բնակեն անդ մարդիկ, վ̃ն կարի ջերմութեն և ցրտութեն. և յարեգակնն ելանելն և ՚ի մտանելն՝ որոտմունք և թրնդմունք լինին, և ո՛չ անդ են բնակիչք . յարևելս և յարևմուտս, և ՚ի տեղիս յայս՝ ո՛չ լինի պատուհաս. այլ՝ ուր մարդիկ են, և կոխեն զօրէնս նր̃ : Դարձեալ՝ զի ո՛չ յարևելից, ապ̃ թէ ասէ՝ չորից ծագաց՝ ուր գերեցան հրէայքն, ՚ի քաղդէացւոց՝ յարևելից. ՚ի յունաց՝ յարևմտից. ՚ի հարաւոյ՝ յեգիպտոսէ. ՚ի հիւսիւսոյ՝ ՚ի հայոց. այլ՝ դատաւոր ած է. նր̃ հրամանաւն եղև գերիլն, և ՚ի զղջանալն՝ նա դարձուցանէ դատաստանաւ : Դարձեալ՝ յարևելից յոյնք, յարևմտից հռոմայեցիք, պատերազմաւ միշտ ը̃ միմեանս ելանեն. և յանապատ է լերանց՝ ՚ի մարաց և ՚ի պարսից՝ ՚ի վր̃ բաբելոնի յառնեն. սակայն՝ ած է դատաւոր նց̃ : Դարձեալ՝ զի ո՛չ յարևելից, որ մայր է լուսոյ, պակասեաց խնամք , և ո՛չ յարևմտից չարիք, ուր կայր չարն թագաւորեալ , և ո՛չ յանապատէ լերանց պատերազմ, ուր զօրք չարին ՚ի թագաւորս հեթանոսաց, այլ՝ ած դատաւոր է, գիտէ կշռել և դատել զամենեսին: Այլ՝ ասեն յարևելից խաչն գայ , յարևմտից ածածինն, յանապատէ՝ տապանակն. սակայն՝ ած դատաւոր է:

Զայս խոնարհ առնէ, և զայն բարձրացուցանէ · Բաժակ ՚ի ձեռին Տն գինւով լի անապակ արկեալ և խառնեալ յայսմանէ յայս:

Զենմ գերութը · և զայն բարձրացուցանէ դարձին՛ն բաժակ ՚ի ձեռին Տն, զոր շյատ մատուռ՛ակն երեմիայ արբուցանէր թշուորաց և Տմ՛ երկրի: Եւ՛ խոնարհեցուցանէ յայսմանէ յայս · ՚ի ձեռաց Տն յեւէմ· յայս՝ ՚ի բաբելոնէ ՚ի ձեռն կիւրոսի· կամ խոնարհեցուցանէ ՚ի խստութէ ՚ի հեզութի· գինի լի անապակ՝ ուշակորոյս առնել ՚ի խելաց՝ զՏմ յանցաւորս, հնարս ոչ գտանել զերծանելոյ· բաժակ ՚ի ձեռին Տն՝ անօթ բաժակի· որ զնաբուգոդոնոսոր ասէր բաժակ ոսկի ՚ի ձեռին ունել, և արբուցանել ում կամի· լի՝ որ ոչ սպառի: Իսկ արկեալ՝ թերևս խառնեալ, որ է զարմանք, անապակ և խառնեալ · անապակ՝ զի անակնառու է, այլ՝ խառնէ գթութն զի մարմինք եմք, տկար և ցաւոտ:

Սակայն մրուր նր ոչ սպառեցաւ · և արբցեն զնա Տմ մեղաւորք երկրի ·

Մրուրն պահի բաբելոնի, զի հրեայքն եօթանասուն ամ՝ և բաբելոնի, և գօգայ միշտ: Եւ՛ դարձեալ՝ զոր պատրաստեալ է սատանայի, և հրեշտակաց նր ՚ի հանդերձեալն: Դարձեալ բաժակ փրկութե ՚ի ձեռին՝ զոր էնքն էարբ խաչին, և խոնարհեցոյց յաւաքեալսն և ՚ի վկայս, զորոյ զմրուրն ըկորբստական՝ հրեայքն և չար իշխանքն արբցեն, արբուցիչքն Տն և առաքելոցն, և վկայիցն:

Եւ ես ցնծացայց յաւիտեան· սաղմոս ասացից Այ յակոբայ

Ցիրաւացի դատաստանն Այ՝ զյակոբ յիշէ, զի վասն նմա եղև նոցա դարձն::

Զամ եղջիւրս մեղաւորաց փշրեցից· և բարձր եղիցի եղջիւր արդարոյ:

Հակառակորդքն շատ էին ՚ի դարձին, եդովմայեցիք, և մովաբացիք, և փղշտացիք, և այլք· և բարձր եղիցի եղջիւր զօրաբաբելի· և քրն՝ որ է խաչն· այլև՝ Տրն յորժամ խափանեսցէ զամ իշխանութի:

՚Ի կատարած· ընդ օրհնութիւնս· Սղ՛ Ասափայ: Սաղմոս յասափ· Երգ առ Ասորեստանեայսն:

Ու է՛ Ած յայտնեալ Հրէաստանեայ, և ՚ի մէջ Իսրայելի, նշանակէ և զանուն Տն:

ՍԱՂ

ՍԱՂՄՈՍ. ՀԵ։

Յայտնի է 'ի հրէաստանի ա՛ծ, եւ յիսրայէլ մեծ է անուն նորա։

Սքանչելեօքն՝ եւ քո խաչի՛ն յայտնեցաւ Թէ՝ ո՛վ է 'ի գլուխն արարածոց։ Այլ՝ իմանալի հրէաստան՝ խոստովանող սէրք ա՛մ, 'ի վերինն սիոն՝ որք տեսանեն զա՛ծ, եւ մեծ է անուն նորա։

Եղեւ խաղաղութե՛ տեղի նորա. եւ բնակութի՛ն նորա սիոն։

Խաղաղութե՛ն կոչի եկե՛մ վերինն, ուստի մերժեալ են ցաւք, եւ հեծութի՛նք։

Անդ խորտակեաց զօր զզօրութի՛ն աղեղան, զվահան զսուր եւ զպատերազմս։

Զասորւոյն, զի 'ի վերինն սիոն՝ ոչ կարէ ձգել նետս եւ պատերազմել չարն։

Լուսաւոր ես դու սքանչելապէս լերանց յաւիտենից. խռովեցան ամենեքեան որ անմիտ էին սրտիւ. ննջեցին զքուն իւրեանց՝ եւ ինչ ոչ գտին։

Եօթանասունքն ասեն, լերինք սիոնի՝ լոյս առէք. լերինքն իսրայելի՝ լոյս առին ցնծալով 'ի զբօսանս. խռովեցաւ ասորին անմիտն, ննջեցին եւ ոչ գտին զեկէմ։ Դարձեալ՝ լերինք յաւիտենից՝ հրեշտակք, որոց արեգակն՝ ա՛ծ է, անմիտք ննջեն, եւ ծուլանան յընդունակութեանն հրեշտակաց ասա, եւ անդ խռովին, եւ ինչ ոչ գտանեն մասնակցութի՛ն ը՛ն արթուն բնութեան։ Այլ՝ նահապետքն լերինք, եւ 'ի քէն լոյս առին, տեսին եւ ուրախ եղեն, իբր աբրահամ. եւ անմիտ հրէայքն ծուլացեալ՝ ոչ իմացան։ Դարձեալ՝ լերինք իմաստուն կուսանքն, զի զձէթ առին ամանով, եւ անմիտ յիմարքն ննջեցին, եւ ինչ ոչ գտին։

Ամենայն արք՝ 'ի մեծութե՛ յետոյ ձեռաց իւրեանց. 'ի սաստէ քումմէ ա՛ծ յակոբայ ննջեցին, եւ որք հեծեալ էին 'ի ձի։

Ամենայն մարդիկ՝ որ 'ի սենեքերիմ, եւ 'ի ռափսակ ապաւինէին, 'ի սաստէ քումմէ ննջեցին, հարիւր՝ ութսուն եւ հինգ հազարքն էին, որք 'ի հեծման ձիոցն սատակեցան. եւ փօգայ՝ նոյնպէս. այլ՝ որք իբրեւ զձիս իգամոլ՝ զկնի ցանկութեանց գնան։

Դու ահաւոր ես՝ և ո՞վ կարէ կալ առաջի քո. ամ երկնաւորք գո-ցերկնից, յայտնի եղև բարկութիւն քո։

Արդ գիտասցուք՝ զի կարօղ էիր նախ քան զհայհոյելն նոցա սաստկել, այլ՝ ոչ նոքա հեգնեցին, յայտնի եղև բարկու-թիւն քո։ Այլև՝ ՚ի կրկին գալստեանն յայտնելոց է բարկութիւնն։

Երկիր երկեաւ և դադարեաց ընդ յառնելն Այ ՚ի դատաստան. ընդ ապ-րեցուցանել զամ հեզս երկրի։

Ասորւոցն՝ դատաստանաւն։ Այլև՝ ՚ի համբառնալն նշանի քո յաստեղս՝ ՚ի ծննդեան քո։ Այլև՝ ՚ի խաչելն ոմն, և ՚ի գալն միւսանգամ. յառնելն, և ՚ի գալն, և երևել՝ մեր դեղութենն ասի. զամենայն հեզս՝ զոր երանեաց։

Խորհուրդք մարդկան խոստովան առնիցեն առ քեզ. և ծածկեալք իմաս-տութեան օրհնեսցեն զքեզ։

Զի և խորհրդոց քննութի է անդ, և աստ՝ ծածկեալ իմաստութը, առաքինութիւն յայտնի, և օրհնի յայտնապէս Ած։

Ո՛ւխտս տուք՝ և կատարեցէք Տն Այ մերոյ, ամենեքեան որ շուրջ էք զնովաւ։

Ուխտեցէք ընդ եղեկիայ՝ որ շուրջ զերուսաղէմաւ էք. այլև՝ որ ընդ աստուծոյ էք. զնա միայն պաշտել, որ օգնեաց ձեզ, և զքրիստոսի ուխտն աւազանաւն. և կատարեցէք հրաժարեալք ՚ի սատանայէ. որ շուրջ էք զնովաւ, անդամք էք մն աստուծոյ։

Մատուցէք պատարագս ահաւորին. ո՛ բառնայ զհոգիս իշխանաց, ահա-ւոր է նա քան զամ թագաւորս երկրի։

Որք ուխտեցին անտառնս անդ՝ և աստ զքահանային պաշ-տօնն, կատարեսցեն. ո՛ բառնէ զոգիս իշխանաց, ո՛չ միայն զա-սորւոց իշխանսն, այլև՝ զմն թանձրականաց, որք ինքնիշխան-ութն մերժանչեն, ազատ բնութն։

՚Ի կատարած. վասն իդիթումայ. սաղմոս յասափ։
Ասափ գրէր, և իդիթում եղանակէր և կարդայր տաճարին. որ խօսի ՚ի դէմս գերւոյն. և նշանակէ զմիութիւն կերպն։

ՍԱՂ

ՍԱՂՄՈՍ. ՀԶ:

Զայնիւ իմով ես առ Տր կարդացի. ձայնիւ իմով ես առ Ած, և նայե-ցաւ առ իս:

Ձայն էր առէ իմ, և իմաստքն նմա. սակայն նայեցաւ առ իս և ազատեաց:

Յաւուր նեղութեան իմոյ զԱծ խնդրեցի ձեռօք իմովք. 'ի գիշերի առաջի նր ոչ խաբեցայ:

'Ի գիշերութեն ձեռօք տարածմամբ. և ոչ խաբեցայ, զի առի զխնդրեան:

Ո՛չ կամէր մխիթարել անձն իմ. յիշեցի զԱծ՝ և ուրախ եղէ. հոգայի, և նուաղէր յիս հոգի իմ:

Ցայլ ումեքէ չկամէի առնուլ մխիթարութի, զԱծ յիշեցի, որ է առ ձեռն պատրաստ դեղ սգաւորաց, և նեղելոց. հոգայի զկէրս իմ դառնագոյն, զոր նախնիքն մեր ոչ կրեցին. և նուաղէր հոգիս ցանկանալով փրկութե:

Ժամանեցին պահուց աչք իմ. խռովեցայ և ոչ խօսեցայ. խորհեցայ զաւուրսն զառաջինս. և զամս յաւիտենից յիշեցի:

Արթուն աչօք հասու լինէի փոխման ժամուց գիշերոյն անցման, և կարէի թուել. խռովեցայ և ոչ խօսեցայ. չասացի ումեք զկէրան իմ. խորհեցայ զաւուրսն զառաջինս, և զամս յաւիտենից յիշեցի, յորում 'ի բարւոքն էին հարքն մեր:

Խօսեցայ 'ի գիշերի ընդ սրտի իմում. հոգայի՝ և տագնապէր յիս հոգի իմ:

'Ի առանձնջեան ոչ տայի թոյլ 'ի վաստակոց. տառապէր յիս հոգի իմ, բանական հոգիս ցնորէր յիս:

Մի՛ թէ յաւիտենից մերժեսցէ՞ զիս Տր. և ո՞չ ևս յաւելուցու 'ի հա-ճել ևս:

Ցեհ՛Ա. և ոչ ևս յաւելուցու 'ի հաճել, զինի եօթա-նասուն ամի:

Կամ իսպառ արգելցէ զողորմութի իւր յինէն. կամ կատարեսցէ՞ զբան իւր ազգէ մինչև յազգ:

Թ.էև

Թէև մեղաւոր եմ, աւելի՛ թէ ո՞ր է ողորմութիւն քո՞ որ անարժանից առնեալ լինի · կամ կատարելոց զբան սպառ-նալեացն յաղթէն մեր՝ մինչև յաղէ բարեկացուց թողով ըզ-մեղ ասա յաւիտենից:

[illegible]

Զգութին՝ որ առ նախնիսն, և արդարոց վ՜ բարեկացու-ցանելոյն իմ ընա:

[illegible]

Դու խնայեա զպատճառն, ներութի՛ն այս՝ բոլէ աջո-ղակ, նորոգել զիս ՚ի հնութէ մեղաց · այն և՝ զոր արար աջոյն հօր աւազանաւն:

[illegible]

Զի ոչ անդութ է, և ոչ տկար:

[illegible]

Որ ոչ այլովք, այլ՝ ձեռօք քո գործեցեր զմարդն:

[illegible]

Դու ես որ առնես ողջ ՚ի հիւնս, նոյնպէս և ՚ի նորս սքանչելիս · զի ոչ է դատաստանք քո · ոչ ՚ի ծածուկ ինչ արարեր:

[illegible]

Զորդիսն յակոբայ՝ որ յեգիպտոս գնացին, զորս ապ-րեցոյց, և ստացաւ յոխնդրուս. և նոյն ես որ տարածմամբ քոց ձեռաց՝ զմեզ փրկեսցես:

[illegible]

[illegible]

Կարմիր ծոմոն. և խորք խառնեցան, հերձան յերկուս։

Ձայն եղեն ամպք. զի նետք զո գնան 'ի ձայնէ որոտալոյ զո անուոյ։

Որոտ անհագին ձայն ասէ ող։ Քանզի՝ և նետք քո գնան, որ է արկուած շանթից. 'ի ձայնէ որոտալոյ, որպէս թէ՝ եկեր կառօք քերովբէիւք յանխուս լծեալ, զոր եւես եղեկէլ 'ի վերայ քոբար գետոյ։ Այլև՝ ձայնք և որոտմունք և շարժմունք յօդս միշտ լինին, և 'ի ձմեռնանէ փայլատակմունք, և ցոլմունք, աստեղաձև թռիչք՝ իբր նետք, և անոճանտեսակ ընթացք փայլմանց լուսոյ ճառագայթից։ Այլև՝ անուիւք երկու կառաց, կառք՝ խաչն, կենդանիք լծեալք՝ առաքեալք և մարգարէք, նետք՝ բանք քարոզութեան. փայլատակմունք՝ նշանք և սքանչելիք, յորմէ խռովեցաւ և դողաց. վոյ՝ ասէ։

Երևեցան փայլատակմունք զո աշխարհաց, խռովեցաւ և դողաց երկիր։

Զի ահագինք են, և զարհուրեցուցիչք։

'Ի ծով են ճանապարհք զո, շաւիղք զո 'ի ջուրս բազումս. և հետք զո ոչ երևին։

Իսկ այն ը ծով Դերս, և իշխան Դերս այսօրէն՝ ոչ ծանեաւ զնա. և ը խմնալի ծովն վերին, և ոչ ոք գիտաց զնա. մինչ հարցին, և ուսան. և անդ յայտնեցաւ թէ նա ինքն է թագաւոր փառաց։ 'Ի կարմիրն, և այլն. զի զպետորս կոչեաց գնալ առ ինքն։


Առաջնորդեցեր իբրև զխաշինս զժողովուրդեան զո. 'ի ձեռն Մովսէսի և Ահարոնի։

Անդ Մովսէսիւ և Ահարոնիւ, և աստ՝ երկու կտակօք, և երկու երկու զառաքեալսն առաքելով, հովիւն քաջ քո ամեն, որ ասացեր արածել զոչխարս, օրհնեալ յաւիտեան։

'Ի [illegible]. իմաստութեան յասափ։

[illegible]

ՍԱՂՄՈՍ. ՀԷ.

ԱՑԵՑԱՐՈՒՔ ԺՈՂՈՎՈՒՐԴՔ յօրէնս իմ. խոնարհեցուցէք ականջս ձեր 'ի բանս բերանոյ իմոյ։

Ո՛չ Դաւիթ է օրէնսդիրը, այլ՝ Տէրն որ ասաց, լուարո՛ւք զի ասացաւ առաջնոյն, այլ ես յիմ օրէնս՝ զայս ասեմ. խոնարհեցուցէք զՏմ հեզութք և ներքին ականջօք. որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ։

Բացից առակաւ զբերան իմ, խօսեցայց զառակս 'ի սկզբանէ։

Ե՛ս այս Տէրն է, որ առանց առակի՝ ոչ ինչ խօսէր ։ Խօսեցայց». որ 'ի սկզբանէ ծածկեալ կայր 'ի խորհուրդն։

Որ լուաք՝ և ծանեաք զայս, և հարքն մեր պատմեցին մեզ։

Եկեղեցի ասէ զայս, զոր լուաւ յառաքելոցն։

Ոչինչ ծածկեցաւ յորդւոց նոցա յազգ յազգ, պատմել զօրհնութիւնս Տեառն, զզօրութիւն և զսքանչելիս իւր՝ զոր արար ։

Առաքեալքն իւրոց աշակերտացն, և նոքա այլոցն, և այլքն մեզ։ Օրհնութիւն Տեառն, որ է յայտնութիւն հօր և զսքանչե_լիսն՝ զոր ինքն արար։

Հաստատեաց վկայութիւն իւր ընդ Յակոբ, և օրէնս եդ 'ի մէջ Իսրայէլի։

Յակոբ՝ զՏմ ժողովուրդն ասէ, և վկայութի՛ զօրէնսն մովսէսի՛ն, յայտնի է. զոր Տէրն ոչ եկն լուծանել, այլ՝ հաստատել նոր օրէնս՝ նորոյս Իէլի, որ ծածկեալ էր յայտնեցաւ։

Որչափ պատուիրեաց հարցն մերոց, ցուցանել զայս որդւոց իւրեանց. զի ծանիցեն յազգ յազգ։

Յայտ է որ գալոց են հեթանոսք. յոլով անգամ ասաց զայս մովսէսի՛, և Տէրն առաքելոցն ասէր, ուսուցէք, և աշակերտեցէք զՏմ հեթանոսս։

Որդիք որ ծնանիցին՝ յարիցեն և պատմեսցեն զայս որդւոց իւրեանց. զի դիցեն առ Աստուած զյոյս իւրեանց, և մի՛ մոռասցեն զգործս Աստուծոյ։

Գործք Այ՝ են մարդիկ, և Ծ, ծանիցեն հրեայք և հեթանոսք, թէ՝ յո՞ է Ած, որդ և ասէ ։

Զի մի

[illegible] և մի եղիցին որպէս և հարքն իւրեանց։

Խնդրել զնորն, և մի զհինն՝ որ պատուիրանազանցք եղեն։

Ազգ չար և դառնացօղ. ազգ որ ոչ ուղղեաց զսիրտ իւր, և ոչ հաւատարմեաց ընդ ԱԾ ոգի իւր։

Երթալ առ իմ, և նմանել նմա. հրեայք և կռապաշտք հեթանոսք, որոց մի նմանեսցին որդիքն, հաստատեալքն ՚ի նոր կրօնս։

Որդիք Եփրեմի լարէին և ձգէին, յաւուր պատերազմի [illegible]։

Զի քաջ աղեղնաւորք էին, ի գիրկս քարշէին զաղեղն՝ զպինդն, և զհաստաբեստն. յաւուր պատերազմի՝ ՚ի վայր թողէին ՚ի կապարճացն զնետսն, և զտեղի առնուին, մինչև սպառէին ՚ի թշնամիսն, յորժամ յաղթէր իմ։ Իսկ յորժամ ոչ լի անդրէն դարձուցանէին, փախստականք լինելով. և է՝ զի ՚ի թշնամիսն թողուին ՚ի փախչելն։ Եփրեմեան էր բռնութեամբ որ զերինջսն արար. և աքայաբ։

Ոչ պահեցին նոքա զուխտն ԱԾ. և ըստ օրինացն նր ոչ կամեցան գնալ։

Որ ասացին, զամ ինչ զոր ասասցէ Տր՝ լուիցուք, և արասցուք։ Դիւրին էր, կամք միայն պիտէր։

Մոռացան զերախտիս նր, և զսքանչելիսն՝ զոր եցոյց նց։

Զերախտիսն՝ որ յեգիպտոս։

Առաջի հարց նց զոր արար զսքանչելիս Տր, յերկրին Եգիպտացւոց՝ և ՚ի դաշտին Տայանոս։

Մոռացան զերախտիս նր, երփրեմեանքն լինէին առաջ նորա իմ հակառակուք. ՚ի դաշտին տայանու, տեղին է, որ առ եզր կարմիր ծովուն կայ։

Հերձ զծովն՝ և անցոյց զնս. կացոյց զջուրսն որպ ՚ի տիկս։

Նշանաւ մկրտութեան՝ որ երբև ՚ի տիկս կապոհի սատանայ, զի մի կարասցէ ապականել զշնորհս մկրտութեան։

Առաջնորդեաց նց ամպով ՚ի տուէ. և զամ գիշեր ՚ի լոյս հրոյ։

Ամպն՝ հոգին, լոյսն հրոյ՝ հրեղէն լեզուքն, որ ՚ի հոգւոյն, ուր ոչ է գիշեր մեղաց։

Հերձ

Հերձ զվէմս յանապատէ, և էարբ ըմպելիս նց 'ի խորոյ մեծէ:

Նշանակ բացման կողին տն. 'ի խորոյ մեծէ՝ որ ոչ սպառի ընաւ:

Հան զջուրսն 'ի վիմէն. և հոսեաց ոպ զգետս զջուրսն:

Եւ զվարդապետութիւն ոպ գետս, զոր ասաց բղխել յորովայնէ:

Այլ յաւելին 'ի մեղանչել. և նոքա դառնացուցին զբարձրեալն յանջրդի:

Յետ 'ի խաչ հանելոյն զՏէրն բարկացուցին, զի անջուր մնացին 'ի վարդապետութենէ առաքելոցն:

Փորձեցին զԱծ 'ի սիրտս իւրեանց, 'ի խնդրել զկերակուր անձանց իւրեանց:

Իբրև տն ասէին, ի՞նչ նշան առնես, հարքն մեր՝ մանանայ կերան:

Տրտնջեցին զԱյ՝ և ասացին. միթէ կարօ՞ղ իցէ Այ պատրաստել սեղան յանապատէ:

Անանայն ջուր 'ի վէմն ասեն բղխեն, զի՞նչ նոր է այս, և մանանայն ասէին, զի՞նչ է այս մնոտի հացս:

Քանզի հարկանէր զվէմն՝ և հոսէին ջուրք, և վտակք խաղային 'ի նմանէ:

Գաւազանաւ, և վտակք բղխեալ խաղային:

Միթէ հա՞ց ևս կարասցէ տալ նա մեզ. կամ պատրաստեսցէ՞ սեղան ժողովրդեան իւրոյ:

Թէ մինչ այժմ զայս կարէ՞ ասեն հաց 'ի ցորենոյ տալ մեզ՝ հաւատասցուք:

Վսն այսորիկ լուաւ զայս Տր, և յապաղեաց. հուր բորբոքե-ցաւ 'ի Յակոբ. և բարկութիւն ել 'ի վերայ Իէլի:

Յապաղեաց զմտանելն յերկիրն պարգևաց, զքառասուն ամ հուր բորբոքեաց. յայտնի է յանապատին տեղին, որ հրայրեաց կոչեցաւ. և 'ի սոսա բորբոքեցաւ հուր նախանձու 'ի տնէ, և բարկութիւն 'ի Հռոմայեցւոց:

Զի ոչ հաւատացին յԱծ. և ոչ յուսացան 'ի փրկութիւն նր:

Որ դիւրեին էր յայնքան հրաշսն, և ոչ յուսացան 'ի յն նորա:

Հրաման ետ ամպոց 'ի վերուստ, զդրունս երկնից եբաց. և տեղեաց 'ի նս մանանայ 'ի կերակուր։

Տարերքդ մտաւմք են մյ, յորժամ կամի, բանայ, և հանէ: 'Ի վերայ երկրի զլեառն ամպացուցանէր զկարծրն, և յոր կենս՝ արտավարեալ սորեցուցանէր իբրև զցորեան զմաննայն։

Զհաց երկնից ետ նց, զհաց հրեշտակաց կերան մարդիկ. և իջոյց 'ի նս կերակուր 'ի լիութե։

Ո՜չ յերկնից, այլ յօդոյն, զոր երկինք կոչեն գիրք. զհաց հրեշտակաց, կամ՝ հրեշտակաց մաքրութեն վայելէր, կամ՝ հրեշտակաց միջնորդութբ լինէր առեալ, և էր օրինակ հացին՝ որ 'ի յերկնից իջեալ՝ կենաց տայ մի. և իջոյց 'ի նս կերակուր 'ի լիութի, աւելի քան զպէտսն։

Հան զհողմ հարաւոյ, և ած զօրութբ իւրով զհիւսիսայինն։

Միոյն ածէր զլորամարգն, և միւսոյն արգելոյր։

Տեղեաց 'ի նս իբր զհող զմիս. իբր զաւազ ծովու զթռչունս թեւաւորս։

Զի զինի մայ՝ խոզէ ցանկացան, տայ նոցա և զայն, որ զհամ և զդիւրութի նց ունէր։

Անկ 'ի մէջ բանակի նց, և շուրջ զխորանօք նց։

Զի մի հեռի աշխատ լիցին։

Կերան և յագեցան յոյժ. զցանկութի նց ետ նց. և ոչ ինչ զրկեաց զնս 'ի ցանկութեն իւրեանց։

Որ պարզ է. զի թ ցանկութե բարուցն՝ փոփոխումէր որակ և համ՝ մաննայյին, և լորամարգն նոյր զցանկութիւն մայ խոզէ։

Մինչդեռ կերակուրք 'ի բերան իւրեանց էին, բարկութի այց ել 'ի վր նց։

Քանզի տրտնջելով և ոչ գոհութբ ուտէին, և կամէին դառնալ յեգիպտոս։

Սպան զբազումս 'ի նոցանէ. և զընտիրս իսրայէլի արգելոյց։

Ցաւ

Յամենայնականացն՝ և յերկնայնացն՝ զկորուստեանքն և զդա-գամնեանքն։

Ցայս տեղի [illegible] ոչ հաստատեցին [illegible]։

Զարմանայ հոգին, զի նշանակէր զայն՝ որ ՚ի գալստեանն քո՝ յոլովք գտանին անպատրաստք. որք և անդ՝ զոհ ՚ի ձեռս, և այլ մերժք զայլոց, և ի բարուջ ՚ի բերանս նոց, և հաւանէ բարկութեն յանկարծակաս՝ երբև երկն յոլոյ, զի ասէ թէ՝ և ես աւելի։

Պ[illegible] [illegible] նոցա [illegible]։

Յունայն՝ դատարկ ՚ի բարւոյ. և ամք նոց փութային անցին, տարին երբև զամիս, և ամիսն՝ երբև զշաբաթ անցանէր, և շաբաթն երբև զօր։

Ց[illegible] [illegible] նոցա [illegible] տե-
[illegible]։

Իբրև զծառայս չարս, զի որդիք ոչ եղեն, յանձ և ՚ի մոլեկս դիմեցին յառաւօտէ մինչև ցերեկոյ, և զգիշերն մինչ ՚ի միւս առաւօտ, որք թէ՝ նոր սկսանիմք յայսմհետէ յառաքինութիւն անսղալ զոլ խոստանային։

Ց[illegible] [illegible] նոցա [illegible]։

Կերծեօք յերէկին, և ՚ի հարկէ մշտացն։

Ս[illegible] [illegible]. [illegible]
[illegible] նոցա ոչ [illegible] [illegible], [illegible] ոչ [illegible] նոցա։

՚Ի լեզուս՝ օրհնութիւն, և ՚ի սիրտ՝ անէծս, ըստ այնմ՝ ժողովուրդ իմ շրթամբք մեծարէ զիս, և սիրտ իւր հեռացեալ մեկուսի են յինէն։

Այս նա [illegible] [illegible], [illegible] նոցա [illegible] ոչ [illegible]։

Գիտած՝ զի հայր է, քաւէր՝ թէպէտ և ոչ ՚ի սրտէ խնդրեցին։

Ց[illegible] [illegible] [illegible]. [illegible] ոչ [illegible] [illegible]
[illegible]։

Հնարս հնարէր։

Յիշեա՝ [illegible] հոգի որ ելանէ՝ այլ ոչ ևս դառնայ։

Մարմին ունար, և հոգի՛ որ չէր մահու՝ յայժմու վարս ոչ դառնայ, զի աստէն է ապաշաւանքն 'ի կեանս յայս։

Քանի՞ցս անգամ դառնացուցին զնա յանապատի. և բարկացուցին զնա յերկրին անջրդի։

Ո՛չ գոյ թիւ ։ Դառնացուցին", թէ փոքր մի յամէր վէմն՝ որ գնայր զնի, հայհոյէին։

Դարձան՝ և փորձեցին զԱծ. և զՍբն Իսրլի զայրացուցին։

Սրտիւք յեգիպտոս. և զորս էջլի զայրացուցին, որ ոչ է 'ի ցասմանէ և յախտից։

Ո՛չ յիշեցին զձեռն նորա. յաւուր յորում փրկեաց զնս 'ի ձեռաց նեղչաց նոցա։

Ձեր երկար ժամանակ անցեալ 'ի վերայ։

Որ արար զնշանս՝ և զարուեստս իւր յերկրին եգիպտացւոց, և 'ի դաշտին տանեոյ։

Բանիւն եղեալ նշան, և ձեռօքն արուեստ։

Դարձոյց յարիւն զգետս նց. և զանձրևս նց, զի մի՛ արբցեն։

Զողայոցն արիւն տայր ըմպել նոցա, և 'ի վերուստ անձրևն վկայէր թէ՝ յայտ է որում մեղան, զի չգայ անդ անձրև եթէ ոչ՝ հրաշիւք։

Առաքեաց 'ի նս շանաճանճ՝ և եկեր զնս, և գորտս ապականեաց զնս։

Զի երբև զշունս կատաղիս էին եգիպտացիքն առ ինէ։

Եւ ետ ժանտաց զպտուղ նց, և զվաստակս նց մարախոյ։

Զի լի էին ժանտով նենգութեն միտք նոցա։

Հար կարկտիւ զայգիս նց, և զթզենիս նց եղեամբ։

Զի զծնապաշտսն՝ խիստ բանիւք կոչկոճէին։

Մատնեաց 'ի կարկուտ զանասունս նց. և զստացուածս նց հրոյ [illegible]։

Զի պաշտէին երբև զնծա՝ զանասունս . և հուր եղանէր 'ի մէջ կարկտին, և այրէր զբեկեալն և զմնացեալն 'ի կարկտէն։

Առաք

Առաքեաց 'ի նմա զբարկութիւն սրտմտութեան իւրոյ, զբարկութիւն սրտմտութեան և զնեղութիւն:

Բարկութեն բանիւ, և սրտմտութեն արդեամբք. զի սիրտք և խորհուրդք իւրեանց՝ չարչարեսցեն զնա յահ և յերկիւղ:

Առաքեաց 'ի նմա փանջան՝ 'ի ձեռն հրեշտակի չարի. ցուցանելով 'ի նմա զբարկութիւն սրտմտութեան իւրոյ:

Ոչ թէ չար էր հրեշտակն, այլ՝ վա՛ս գործոյն, զի խիստ էր, և ահաւորին անուանէր:

Ոչ խնայեաց 'ի մահուանէ զանձինս նց. և զանասունս նց 'ի մահ մատնեաց:

Որք մեռեալք էին յայ:

Եհար զամ անդրանիկս եգիպտացւոց, զսկիզբն ամ վաստակոց նոցա 'ի յարկս քամայ:

Զմարդոյ և զանասնոյ, զի զանդրանիկ խորհուրդ տծ-պաշտութեն սպանէին յանձինս: Մեստրայիմ 'ի Քամայ էր:

Համբարձ իբր ոչխարս զժողովուրդեան իւրոյ. և ածեալ զնա իբր հօտ յանապատ:

Հորդան՝ լայն ճանապարհ է ծովն եա, և երբ յաղա-ձայն դիմեցին:

Առաջնորդեաց նց յուսով, և ոչ երկեան, և զթշնամիս նոցա ծով ծածկեաց:

Ցոյս եա, թէ որ զայս ամ արար՝ ոչ ինչ տկարանայ նմին:

Եհան զնա 'ի լեառն սրբութեան իւրոյ, 'ի լեառն այն՝ զոր ստացաւ աջով նր:

Զսիոն ասէ՝ զոր սահղծեալ էր, և ստացեալ եմ՝ աբրահամու և յակոբաւ 'ի քանանացւոցն. այլև՝ հարկանելովն 'ի ձեռն յեսուայ ստացեալ էր:

Մերժեաց յերեսաց նց զհեթանոսս. վիճակեցոյց 'ի նմա զվիճակ ժառանգութեան իւրոյ, և բնակեցոյց 'ի յարկս նց զազգս իէլի:

Սատակմամբ քանանացւոց. և զերկիրն վիճակ ետ նմ։

Փորձեցին՝ դառնացուցին զԱծ բարձրեալն, և զվկայութիւնս նորա ոչ պահեցին։

Վայ՝ տուն դառնացողաց կոչեաց. որոց ասաց մի լինիք իբրև զհարքն ձերք։

Դարձան խոտորեցան որպ և հարքն նոցա, դարձան՝ և եղեն որպ աղեղն ծուռ։

Իբրև յանապատին, աղեղն 'ի բնութէ արտաքնոտին այն պէս կազմի, նք կամակար եղեն թիւր։

Դարձան բարկացուցին զնա 'ի բագինս իւրեանց. և դրօշելովք իւրեանց նախանձ արկին նմա։

Լուաւ Աճ, և արհամարհեաց զնա. և անարգեաց յոյժ զԻէլ։

Դրօշեալ պատկեր կանգնեցին. նախանձ արկին նմա՝ իբրև կին՝ որ զայլ արամբ գայցէ, յորմէ և ինքեանք յոյժ անարգեցան։

Մերժեաց զխորանն Սելովմայ՝ 'ի խորանն, ուր բնակեցաւ 'ի մէջ մարդկան։

Որով զինքն բնակեցոյց 'ի մէջ մարդկան, վն մեղաց որդւոցն հերեայ՝ 'ի վիճակէն յոսեփայ՝ յայլազգիս գերեցին և 'ի դառնալն՝ 'ի տուն աբեդդարայ գեթացւոյ։

Մատնեաց 'ի գերութիւն զզօրութիւն նց. և զգեղեցկութիւն նց 'ի ձեռս թշնամեաց նց։

Զի զզօրութի և զգեղեցկութի նց՝ որ տապանակն էր, 'ի ձեռս թշնամեաց փղշտացւոցն ետ։

Արգել 'ի սուր զժողովուրդ իւր. և զժառանգութիւն իւր անարգեաց։

Արգել, չետ փախչել մինչ անկան 'ի սուր երեսուն հազար 'ի դասուցն իէլի։

Զերիտասարդս նց եկեր հուր, և վն կուսանաց նց ոչ ոք ողբացաւ։

Եկեր հուր՝ բարկութն այ. և վն կուսանաց նց՝ որ խայտառակեցան, ոչ ոք ողբացաւ, չարարին փոյթ, և չար թուէ ցաւ այ։

Քահանայք նոցա անկան ՚ի սուր. և այրիք նոցա ոչ ոք էր՝ որ լայր:

Ոփնի և Փենեհեզ. և զայրիս նոցա ոչ ոք էր որ լայր. զի իւրաքանչիւր ոք սուգ ունէր յիւր տանն. և ՚ի ծնանելոյն հեղեայ՝ վայքաբօթ կոչէին. որ է անցեալ են փառքն իէլի. և մեռանէր մայրն:

Զարթեաւ տր ՚ի քնոյ իւր, որպէս հզօր զի թափէ զգինի:

Յերկայնմտութեն առնու վրէժ. հզօր՝ զի թափեսցէ զգինի ցասմանն յանօթս բարկութե: Եւ զարթեաւ՝ ոչ որպ եալ ՚ի ցասմանէ, այլ որպ հզօր՝ որ ոչ յաղթի արբեցութն, կամ լրջանայ, և ապա առնէ դատաստան, այլ արդարութբ հատոյց:

Եհար զթշնամիս իւր, նախատինս յաւիտենից արար զնոսա:

Զհրէայսն, նախատինս յաւիտենից արար, որք և են իսկ արդ:

Մերժեաց նա զխորանն յովսեփա, և զազգն եփրեմի նա ոչ ընտրեաց:

Որ թմ չարեաց առաջնորդ էին:

Այլ ընտրեաց նա զազգն յուդայ. զլեառն սիոնի, զոր և սիրեաց:

Որում խոստացեալն էր, ուստի տրն ծնանելոց էր. և զլեառն սիոն՝ ուր խաչեցաւ, և սիրեաց զտեղին:

Շինեաց որպ միեղջերոյ զսրբութի նր. յերկրի հաստատեաց զնա յաւիտեան:

Միահեծան թագաւորութի. շինեաց որպ միեղջերոյ", որպ նա մի եղջիւր ունի, և անյաղթ կենդանի է, նշանակ միաչօր տէրութե նր. զսրբութի նր, զկայն ունայն՝ զոր ուխտեաց դաւիթ տյ, և շինեաց սողոմոն. զայն ընկալաւ տծ և հաստատեաց ՚ի ձեռն սողոմոնի. մինչև ՚ի բնութե դաւթի էառ մարմին, և հաստատեաց սրբութի տծութեն յաւիտենից:

Ընտրեաց զդաւիթ ծառայ իւր, և ընկալաւ զնա ՚ի հօտէ խաշանց. ՚ի զկնի ծնելոց ընկալաւ զնա:

Նախատես գիտացեալ զկատարութի նր, որ թէպէտ սխալեաց ՚ի սիրոյն ոչ մեկնեցաւ. ՚ի հօտէ խաշանց՝ ոչ անարգեաց

իւր

Իբր պաշտօն. ՚ի վերջին ծնելոյն ընկալաւ, զվերջնածին գա-ռինսն արածէր:

Հովուէր ըստ անմեղութեան սրտի իւր, եւ ըստ իմաստութեան ձեռաց իւր:

Պատկեր խորց հովուութեն:

Արածէր զնոսա խնամովն սրտի իւրոյ, յանմեղութեան ձեռաց իւ-րոց առաջնորդէր նոցա:

Զկուռսն երկրին կործանէր, զաստուածպաշտութիւն ուսու-ցանէր. երգս եւ սաղմոս արկանէր յոգիս նց, յօրինակ խ-րում՝ որն՝ որ եկեց զնմա թերին. եւ անմեղ ձեռամբ խաշա-տարած՝ առ ինքն հաւաքեաց զաշխատեալս եւ զբեռնաւորս, ը որս եւ զմեզ հանգուսցէ յարքայութեն իւրում, եւ նմա փառք յաւիտեանս ամէն:

Սաղմոս Յասափ:

Զաւերումն էին՝ որ յանդիմանեալ էր, որ երբեմն հովուեցաւ, եւ որ էին նց օրինակ լինէր՝ առ մեզ աւերման նոյնպիսիս:

ՍԱՂՄՈՍ. ՀԸ:



ՄՏԻՆ ՀԵԹԱՆՈՍՔ Ի ԺԱ-

ռանգութիւն քո. պղծեցին զտաճար սբ քո:

Սատանայ օձին ՚ի դրախտն եմուտ, պղծեաց տաճարն այ ադամ. հեթանոսք յենքն. եւ արդ՝ յոլով անգամ յեկե-ղեցի. եւ չար խորհուրդք ՚ի մարդիկ:

Արարին զԵրուսաղէմ որպէս հովանոց մրգապահաց. եդին զդիակունս ծա-ռայից քոց կերակուր թռչնոց երկնից եւ զմարմինս սրբոց քոց գա-զանաց երկրի.

Զդրախտն եւ զտաճարն. խուղս մրգապահաց, ՚ի հատա-նել մրգին՝ անխնամ թողուն. կամ հիւղս՝ ուր զփորսախսն եւ զանուանելին հանեն կամ հեղուն. ոչ միայն զքաղաքն թա-փուր արարին. այլեւ՝ զընակիչսն զսէրն կոտորեցին, եւ անթաղ ընկեցին գազանաց, զմսակերայեցուցն զմարմինս:

Հեղին զարիւն նոցա որպէս զջուր՝ շուրջ զԵրուսաղեմաւ, եւ ոչ ոք էր՝ որ թաղէր զնոսա:

Իբր զառուս լցեալ՝ եղանէր արիւննն ը դրունսն, շուրջ զԵրուսաղեմաւ. եւ ոչ ոքէր որ թաղէր յերկինչելոյ. եւ կամ.

չմնաց որք․ և դնեք զպատկերն այ ամ ուրեք անպարտակ ցրուեցին։

Եղաք մեք նախատինք դրացեաց մերոց․ ծաղր և այպն շրջակայից այնոցիկ, որ շուրջ էին զմեօք։

Եդոմայեցւոց, մովաբացւոց, և քնութեանս՝ զինաց։ Դրացիք են մեր՝ զի բանակակիցք են։

Մինչև յերբ տր՝ բարկանաս իսպառ․ բորբոքեսցի իբրև զհուր նախանձ քո։

Բարկանաս մեղաւորացս, և ոչ կամիս 'ի քէն՝ որք ուսուցանեն մեզ զմեղս։ Բորբոքեսցի առ հուր նախանձ քո, որ ասացեր՝ մի արասցես կուռս, զի ած նախանձոտ եմ ես։

Հեղ զբարկութիւն քո 'ի վր ազգաց՝ որ զքեզ ոչ ճանաչեն․ 'ի վերայ թագաւորաց որ զանուն քո ոչ կարդային․ զի կերան զյակոբ, և զտեղի նր աւերեցին։

Որք կուռս պաշտեն, և զանուն քո ոչ կարդան․ մեք զոնեայ գիտեմք զքեզ, և կարդամք զանուն քո․ զի կերան զյակոբ և զտեղի նր աւերեցին․ զժողովրդեան ազգանքն կերան, և զտեղին աւերեցին։ Եւ դեքն՝ յանպաշտութէ քակեցան, և զգրաւմն աւեր թողին։

Մի յիշեր զմեղս մեր զառաջինս․ վաղվաղակի հասցեն առ մեզ ողորմութիւնք քո տր․ զի աղքատացաք յոյժ։

Զմեղս առաջնոցն՝ որ յեգիպտոս․ վն առաջնոց մեղաց մեր մի բարկանար․ և վն ադամայ և եւայի․ վաղվաղ եկեսցէ միածինն քո, զի աղքատացաք յոյժ, խոզիցն ցանկանալով կերակրոց։

Օգնեա մեզ աճ փրկիչ մեր վն փառաց անուան քո։

Օգնելդ քո յն՝ փառք է անուանդ քո։

Տր փրկեա զմեզ՝ և քաւեա զմեղս մեր վն անուան քոյ։

Ցն է քաւութեն, որ է սրբութն մեր։

Մի՛ երբեք ասասցեն 'ի հեթանոսս, թէ ուր է աճ նց։

Խնդրե

Իբրեւ փարաւոն ասէր՝ ոչ գիտեմ զնա. յորժամ յու-սացեալքս 'ի քեզ՝ ոչ ապրիմք, ասեն:

Այլ յայտնի լիցի 'ի մէջ հեթանոսաց, առաջի աչաց մերոց. առ 'ի խնդրել զվրէժ արեան ծառայից քոց՝ որ եւ հեղաւ:

Պատուհասն նց 'ի վը հեթանոսաց, 'ի տեսիլ աչաց մե-րոց. խնդրել զվրէժ արեան, տուր եւ հեղաւ արեանն, անդ-հատ:

Մտցէ առաջի քո հեծութիւն կապելոց ըստ մեծութեան բազկի քո՝ շահեա՛ զորդիս սպանելոց:

Որք գերիք են եւ 'ի բանտի հեծեն. եւ որք սրով կատա-րեցան վն մեղաց իւրեանց, զանմեղս ապրեցուցանել աղաչէ. ոպ ինքն ասաց թէ՝ մի մեռցի որդի ը հօր:

Հատո՛ դրացեաց մերոց եօթնպատիկ 'ի ծոց նց, նախատինս զոր նախատե-ցին զքեզ Տր:

Դիմաց եօթնպատիկ որ է բազում. 'ի ծոցն ասէ՝ զան-վրէժն. եւ զի 'ի սրտամն մտցէ. զի եօթնպատիկ էր մեղքն նց՝ քան զմերն, եւ քո դատաստանն արդար է:

Մեք ժողովուրդք եւ խաշն արօտի քո, խոստովան եղիցուք առ քեզ յաւիտեան, յազգէ յազգ պատմեսցուք զօրհնութիւնս քո:

Գրեմք եւ պատմեմք զերախտիսն, եւ զօրհնութիւնս քո՝ դնեմք առաջի քո՝ ալելս, զհեծութիւն որ դեռ 'ի կապանս կան որք:

'Ի կատարած. 'ի վը շուշանցելոցն վկայութիւն. Ասափայ սաղմոս. 'ի վերայ Ասորեստանեայցն:

Զհոգւոյն եկեալ 'ի Դաւիթ, եւ զաղօթս նց նշանակէ. եւ զդարձն եւ զնորոգումն փոխոյ. եւ զերգոյն, որ Ասորեստանեայ եւ 'ի Բաբելոնայ եկին եհեր-ալն՝ զաղօթս մն որ՝ վն փորձութեան թշնամեաց:

ՍԱՂՄՈՍ. ՀԹ.

Որ հովուեսդ զԻսրայէլ՝ նայեա՛ց, որ առաջնորդես ոպ խաշին Յովսէփու:

Նայեա՛ եւ տես զտառապանս. խաշն յովսեփու՝ կոչե-ցաւ իէլ. զի ապրեցոյց 'ի սովոյ յեգիպտոս, եւ տըրն՝ զի հաց եղեւ ինքն իւրում ժողովրդեանն:

Ու նստիս 'ի քերովբէս՝ յայտնեաց առաջի եփրեմի, բենիամենի և մնասէի։

Զոր ետես եղեկիէլ, և զի՞ դեռ զայն չէր տեսեալ՝ զոր մովսէս ետ առնել, և դնել 'ի մէջ տապանակին, և նոյն հոգին էր 'ի դաւիթ արքայ։ Կոչեաց հովիւ և նստեալ 'ի քերովբէս, զի ոչ նման է այսր հովուաց, որ պառաւարօք շրջին. յայնժամ իջեր հովիւ, և արդ՝ ամ նի։ Եփրեմ՝ զտասն ցեղն ասէ, և զմնասէ 'ի նոյն տունս. իսկ՝ բենիամին զինքն և զյուդայ, որ յատկացան 'ի տասանցն առ ռոբովամ. զի 'ի դարձին զմիաւորելն ասաց։ Դարձեալ՝ եփրեմ է ուրեմն գերեցաւ 'ի թագլաթփաղասարայ, մնասէ 'ի սաղմանասարայ ընդ այլսն. բենիամին՝ զինի յուդայ՝ 'ի նաբուգոդոնոսորայ, թուի թէ՝ կէս ցեղին մնասէի այլ է յուդայի էր։

Զարթո զզօրութիւն քո, և եկ 'ի փրկութիւն մեր։

Ցերկայնամիտ լինելոյդ, և եկ անձամբ կեցո։

Աստուած զօրութեանց դարձո՛ զմեզ, երևեցո՛ զերեսս քո 'ի մեզ՝ և կեցցուք։

Դարձո՛ յէջմ, և զընութիւնս 'ի վերինն. երևումն երեսաց քոց՝ բաւական է փրկել զոր կամիս։

Տէր Աստուած զօրութեանց՝ մինչև յերբ բարկանաս յաղօթս ծառայից քոց։

Մեք յաղօթս, և թշնամիք մեր 'ի ձոխութե։

Ջամբեցեր մեզ հաց արտասուաց. և արբուցեր մեզ արտասուս չափով։

Ըստ չափոյ մեղացն՝ պհայն է արտասուս խառնեալ ուտելին մարգարէքն, յորժամ հեծեալ իմացան զգալն քնի՝ արտասուօք ուտելին կերակուր, նեղեալք 'ի կարօտոյն. ոմն ինքն ասաց մարգարէք և թագաւորք ցանկացան տեսանել և լսել։

Արարեր զմեզ նախատինս դրացեաց մերոց, այպն կատականաց թշնամեաց մերոց։

Դիմաց. այսին կատականաց՝ փղշտացւոց և քաղդէացւոց։

Աստուած զօրութեանց դարձո՛ զմեզ, երևեցո՛ զերեսս քո 'ի մեզ՝ և կեցցուք։

Ամենեցունց զօրութի 'ի քեն է։

Այգի յԵգիպտոսէ փոխեցեր. հաներ զհեթանոսս՝ և զնոսա տնկեցեր, և առաջնորդեցեր նմա:

Յորդւոյն աբրահամու. հաներ զհեթանոսս՝ զքանանա ցիսն. և զնոյն տնկեցեր. ըստ եսայեայ, այգի եղև սիրեցելոյն". և առաջնորդեցեր նոցա, ցուցեր ճանապարհ:

Հաստատեցեր զարմատս նորա՝ և ելից զերկիր. ծածկեաց զլերինս հովանի նորա, և բարունակ նորա զմայրս այ:

Հաստատեցեր շինելով զԵրմ և զտաճարն, և ելից զեր կիր. ծածկեաց զլերինս հովանի նորա՝ մոլեխսիւն զսինայ և ըզ քորէբ, և զնաբաւ. յետոյ զժամ թագաւորս՝ որ հարկս տային և բարունակ նորա՝ թագաւորք հրէից. զմայրս այ, զքահա նայս՝ զոր 'ի պատիւ առնուլին, երբև զանթառամ և զանու շահոտ տունկս:

Ձգեաց զոստս իւր մինչև 'ի ծով. մինչև 'ի գետս են շառա ւիղք նորա:

Զայգն մինչև 'ի ծովն հնդկաց, մինչև 'ի գետս եփ րատ՝ շառաւիղք ժողովրդեանն: Այլ՝ քո այգի, ուռ՝ առաքեալքն: Այլ՝ հաւատացեալքն այգի համեալք 'ի նեղից ախտէն, չարչարեալ գլխս. և ծածկեաց զլերինս՝ ըզ հրեշտակս հովանի նն. և բարունակ՝ զմնուեն մեր առէ, որ միաւորեալ միացաւ 'ի բանն. որ ծնօղն է ածայցուցիչ և երբ մայր անխառն. ձգեաց զորժ իւր, զհաւատս խոստովանութե, մինչև 'ի ծովն հրեղէն յերկինս. և 'ի գետոց՝ 'ի յորդանանէ՝ որ երկու ակնի է, եար և դան կոչեցեալ, ուր զմկրտութին սկսաւ, մինչև 'ի ծագս աշխ:

Ընդէ՞ր քակեցեր զցանկ նորա, և կթեն զնա անցաւորք ճանապարհի:

Զխնամն և զօրէնս. և ըստ ժամանակս ժամանակս՝ զե կեղեցւոյ խնամն մն խրատու: Կթեն զնա անցաւորք ճանա պարհի, 'ի մանասէէ մինչև 'ի սեդեկիայ: Այլ՝ թագաւորք հեթանոսաց երբև զանցանել այգի՝ զեկեղեցի, և դևք ևս՝ չար իշխանօք զքրիստոնեայս:

Ապականեաց զնա խոզ անտառի, և էրէ վայրի արածեցաւ 'ի նմա:

Նաբուգոդոնոսոր. և էրէ վայրի կամ կինջ արու խոզ անտիոքոս, որ այլ վայրենագոյն էր քան զնաբուգոդոնոսոր. որ 'ի մատակ առեւծ առակի. և այս՝ սատանայ և դևք:

Ա՛ծ զօրութեանց՝ դարձ, հայեաց յերկնից և տես. այց արա այգւոյս այսմիկ. և կանգնեա զսա, զոր տնկեաց աջ քո:

Իբր թէ՝ դարձուցեալ զերեսս քոյ. այց արա՛, մանաւանդ մերձաւորիս, զոր այսմիկ ասէ. դարման՝ խնամ. զոր տնկեաց աջ քո՝ յս քս:

'Ի վերայ որդւոյ մարդոյ՝ զոր զօրացուցեր դու 'ի քեզ. այրեցեալ 'ի հուր և աւերեալ, 'ի սաստէ երեսաց կորիցեն:

Զօրաբաբելի. զօրացուցեր զնա՝ մեծարելով յայս աշխարհս. քաղդեացին այրեցեալ 'ի հուր և աւերեալ՝ 'ի սաստէ քումմէ կորիցեն կիւրոսիւ: Դարձեալ՝ 'ի վերայ տն՝ որ եղև որդի ադամայ. զոր զօրացուցեր առնելով զա՛ծ որդի իմ սիրելի. սատանայ լիցի այրեցեալ 'ի սաստէ քումմէ յաւուրն դատաստանի:

Եղիցի ձեռն քո 'ի վերայ առն, աջ քո 'ի վերայ որդւոյ մարդոյ, զոր զօրացուցեր դու 'ի քեզ:

Դաւթի խոստումն՝ զոր խոստացար թէ՝ ձեռն իմ ընկալցի զնա՛. աջ քո 'ի վերայ որդւոյ մարդոյ՝ զօրաբաբելի, որում ասաց եսայեաւ, կալայ զաջոյ ձեռանէ նր: Դարձեալ՝ կրկին ասէ ձեռն՝ որ ստեղծեր զադամ; ըս այնմ թէ առ ա̄ծ հող երկրէ. աջ՝ որ զերկրորդն ադամ՝ 'ի կուսական արգանդի, որ ասաց՝ զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի 'ի վերայ քո. և ինքն իսկ որդին միածին աջ հօր և զօրութիւն:

Ո՛չ ևս 'ի բացէայց եղիցուք մեք 'ի քէն. կեցուսցես դու զմեզ, և զանուն քո տր կարդասցուք:

Ինձ և բնութիւնս մեր ասեն. մի եղիցին մեղքն մեր որոշիչ. կեցուսցես դու զմեզ և զանուն քո տր կարդասցուք իշխան կենաց և մահու:

Ա՛ծ զօրութեանց դարձո զմեզ, երևեցո զերեսս քո 'ի մեզ՝ և կեցցուք:

Զորս կրկնեաց, որ խնդրեցաւ տն գալն 'ի չորս ժամանակս. առ նոյիւ, աբրահամու, մովսէսիւ, և մարգարէիւքն. և տրն եկն 'ի մետասան ժամուն:

'Ի կատարած. վն հնձանաց. սաղմոս յասափ. հինգերորդ շաբաթու. Զեկեղեցի ասէ հնձան. և 'ի հինն երգէին զսա առաջի տապանակին, յոր ժամ էր 'ի վերայ հնձանաց [illegible]. որ հարու խորհուրդ հնացեալ: Ուստի և զերդ գերութեան 'ի բաբելոնէ:

ՍԱՂՄՈՍ. Ձ.

Ցնծացէ՛ք առ Ա՟ծ, օգնական է մեր. աղաղակեցէ՛ք առ Ա՟ծ Յակոբայ։

Սիմաքոս՝ ուրախ լերուք. Թէոդիտոն՝ զուարճացարո՛ւք քաջալերեն զերեարս դերկէն. այլ՝ 'ի դալն յեհէմ նորոգեն զհինն յետ եօթանասուն ամի դառնալոյն. և մանկունք եկեղեցւոյ զնուրեանց փառսն տօնանելով։

Առէ՛ք սաղմոս, և տուք օրհնութիւն. սաղմոս մատուցէք նմա 'ի ձայն քաղցրութեան։

Երգէ ինքն մարգարէիցն երգ. և նորա՝ զօրինացն և ըզ մարգարէիցն և զառաքելոցն, զոր առին 'ի հոգւոյն. զհինն ոչ թողլով, զի քաղցրագոյն է արմատն՝ խառնել ընդ պտղոյն։

Փո՛ղ հարէք 'ի գլուխ ամսոյ. յաւուր նշանաւորի տարեկանաց մերոց։

Զոր 'ի սինայ լսէին ձայն, կազմեցին 'ի նիւթոյ. և 'ի գլուխս ամսոց, և 'ի տարեմուտս հարկանէին, և 'ի տօնս նշանաւորս. զի յիշատակն մնասցէ, գուշակումն հանդերձելոց՝ յորժամ փող հարկանի, և մեռեալք 'ի ք՟ն յարիցեն։

Հրաման է այս Իսրայէլի, և իրաւունք են Ա՟յ Յակոբայ։

Ինքն հրամայեաց Ա՟ծ, և իրաւունք է մեզ առնել. փողովն նոցայն, իսկ մեզ՝ սրտիւ արժանէ կոչել. իբր մովսէս, զոր ասէր Ա՟ծ՝ զի՞ գոչես առ իս։

Վկայութիւն յովսեփու՝ զոր եդ ընդ նմա. ա՟ծ ելանէր նա յերկրէն Եգիպտացւոց, լեզու զոր ոչ գիտէր՝ լուաւ։

Զամ՟ ժողովուրդն կոչէ յովսէփ. վկայութիւն եդ Ա՟ծ ընդ ամ՟ ժողովրդեանն, որ ելանէր նա յերկրէն եգիպտացւոց. զի՞նչ օրինակաւ ելանել և առնել պարտէր, ասաց։ Լեզու՝ զոր ոչ գիտէր՝ լուաւ. ոմանք ասեն քաղդէացին է, կամ քանանացի՝ զոր յեգիպտոս մտանելն՝ լսէին. և կէսք թէ մովսէս նախ զոսկերսն յովսեփու 'ի ձուկն եդ պահել. և յելանելն խօսեցաւ առնուլ, որ է առաքել. այլ լեզու այ և խօսս չգիտէր և չէր լուեալ ամ՟ ժողովուրդն, և անդ լուաւ։ Այլ ասորին ասէ թէ՝ յանցանելն ընդ ծովն նոր լեզու առին. և այնու երգեցին օրհնեսցուք զՏ՟ր, և երբայեցիք կոչեցան. զի երբայն՝ անցիք ասէ։

'Ի բեռաց տարար 'ի բեռնաւորաց զթիկունս նր · եւ ձեռք նր յորմէ եւ 'ի կողովս ծառայեցին :

'Ի քթոց թիկամբք, եւ 'ի թէ ձեռօք չարչարեսին. նախ՝ յայնցանէ 'ի բաց արար, եւ ապա՝ սաստ:

'Ի նեղութեան քում կարդացեր առ իս՝ եւ փրկեցի զքեզ. լուայ քեզ 'ի գաղտնի մրրկի, եւ փորձեցի զքեզ 'ի ջուրն հակառակութեան:

Աղաղակեցին առ է առ Ած որդիքն իշլի եւ լուաւ: Լուայ քեզ 'ի գաղտնուէ մրրկին․ առ քեզ կայի, եւ լսէի, թէ պէտ դու ոչ տեսանէիր 'ի մրրկէ վշտացն քոց՝ ուր կայիր. եւ իբրեւ եկիր 'ի մեռայն, մօտ կայի, եւ փորձէի. եւ առ մովսէսի՝ 'ի բարկանալն ձեռ՝ յորժամ ոչ եղ ջուրն, 'ի միւսանգամ հարկանելն՝ մօտ կայի: Դարձեալ՝ 'ի սինայ կայր ամպն մրրկեալ թանձրութբ, զի չկարէիր տեսանել, եւ լուայ քեզ, յառաջն՝ մովսէս խօսեցի ընդ մեզ, եւ ոչ Ած:

Լուր ժողովուրդ իմ՝ եւ վկայեմ քեզ, եթէ դու լուիցես ինձ:

Ցուցանէր 'ի բաբելոնէ՝ զայս Ած, զի հաւատասցես թէ՝ յամի կարող եմ:

Մի՛ եւ եղիցին քեզ աստուածք աւտարք. եւ մի՛ երկիր պագանիցես դու աստուծոյ օտարի:

Զի չէին, եւ զփորձ առեր:

Ես եմ տր Ած քո՝ որ հանի զքեզ յերկրէն եգիպտացւոց. ընդարձակեա զբերան քո՝ եւ լցից զդա:

Բայց եւ խոստացիր թէ՝ առնես զոր ասեմ, եւ լցից զդա մարգարեական շնորհօք, եւ առնեմ քեզ դարձ, եւ լնում գոհութբ զբերան քո: Այլ՝ զներքին մարդոյն զբերանն բաց, առեալ 'ի նմանէ զանհաւատութեան քար, եւ զկապ մեղացն․ եւ քարոզեա զանուն իմ, եւ լցից զդա շնորհօք: Դարձեալ՝ բաց զբերան քո, եւ խնդրեա զոր կամիս, եւ ես լցից, որ է կատարեցից զխնդիրն:

Ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի իմում, եւ իէլ ցիս ինչ ոչ նայեցաւ:

Գիտէ հոգին թէ՝ ոչ լսեն․ եւ իէլ՝ յիս ինչ ոչ նայեցաւ, հաւատով, եւ ոչ գործով: այս է ինչ ոչն. այլ՝ 'ի կուռս իւր:

Բարձի թողի զնոսա ըստ խորհրդոց սրտից իւրեանց. եւ գնասցեն ըստ կամս անձանց իւրեանց:

Ով և որդ՝ է տեսանել:

Զի թէ ժողովուրդն իմ լուեալ էր ինձ, եւ Իսրայէլ ի ճանապարհս իմ գնացեալ էր:
Որպէս զոչինչ խոնարհ արարեալ էր իմ զթշնամիս նոցա, ՚ի վերայ նեղչաց նոցա արկեալ էր զձեռն իմ:

Զի թէ հեթանոսք ոչինչ են, և յոչինչ համարեալ են նմա, զի ղեկավարութիւն ինձ էր զհսկայսն և զխառարտն, և զայլս քոլոլն չարաց սասանել. և ՚ի վերայ նեղչաց նոցա արկանել էր զձեռս իմ, չգալ և գերել:

Թշնամիք Տն ստեցին նմա, եւ եղիցի ժամանակ նոցա յաւիտեան:

Թշնամիք Տն եղեն, և ստեցին նմա, ասացին զամ զոր ինչ խօսեցի ընդ ձեզ՝ լուիցուք, և արասցուք, յետ յեգիպտոսէ: Եղիցին ժամանակք նց՝ յայսմ Տէր իբրև զնմանոց:

Կերակրեաց զնս ՚ի պարարտութենէ ցորենոյ, եւ ՚ի վիմէ մեղր յագեցոյց զնոսա:

՚Ի պարգևական Տն՝ զայն չարգել ՚ի նոցանէ. և ՚ի վիմէ մեղր յագեցոյց նց. ՚ի ծարաւ ժամու իբրև զմեղր քաղցր է ջուրն. առաւել այն վիմի՝ որ օրինակ էր Քսի: Այլ ասի թէ՝ զապրելն նստի ՚ի մէջ վիմին, իբրև զոչխար կոտորել թանձր, զայն ասէ ՚ի վիմէ մեղր:

Սաղմոս Ասափայ:
Յանդիմանութիւն է չար իշխանաց և քահանայից. և զղջացման առնէ ըստ Քրիստոսի Որդւոյ:

ՍԱՂՄՈՍ. ՁԱ:

Աճ եկաց ՚ի ժողովս աստուածոց, եւ ՚ի մէջ նց դատէր զԱծ:

Իշխանք և դատաւորք և քահանայք և ղպիրք՝ որք կեն ՚ի նշանաւոր ժամու հրամանն աստ, Քսք կոչին, և այնմ թէ՝ զՏծ քո՝ մի հայհոյեսցես, և զիշխան ժողովրդեան քո՝ մի անարգեսցես. յայտ առնէ թէ՝ Տծ ՚ի մէջ նց է, և տեսանէ, և քննէ. այս է դատելն. և այժմ ասէ:

Մինչեւ յե՞րբ դատիք անիրաւութիւն, եւ զերեսս առնուք մեղաւորաց:

Զվաղ

Զձայն ժամանակացն յայտ առնէ զերկայնմտութիւն. և ակն առնուք 'ի մեղաւորաց՝ որ զրկեն զաղքատն, թէ և՝ այլ մեղս ոչ ունիցին:

Դատ արարէք որբոյն և աղքատին. իրաւունս արարէք տնանկին և խոնարհին:

Որ զրկեալ են յօգնականաց, որբք 'ի ծնողաց. և կանայք յարանց. իրաւունս արարէք տնանկին՝ որ անկեալ է 'ի հայրենեաց. և խոնարհին՝ որ 'ի խոնարհ ունի 'ի բնէ զկեանս, և չունի կաշառս:

Ապրեցուցէք զաղքատն և զտնանկն, 'ի ձեռաց մեղաւորի փրկեցէք զնա:

Զոր խոնարհ ասաց:

Ոչ ծանեան և ոչ 'ի միտ առին, 'ի խաւարի գնային, և շարժեսցին ամ հիմունք երկրի:

Զպատուէրն խրատոյ, և ոչ 'ի միտ առին զհաստատութիւն, 'ի խաւարի գնացին, որ է անիրաւութիւն ամ լոյս արդարութեան: Եւ շարժեցան ամ հիմունք երի, կամ հրեշտակք կործանեալք 'ի բարկութենէ, կամ պատերազմունք և խռովութիւնք եղեն, կամ ինքեանք իշխանքն են հիմունք որք շարժեցան 'ի գնացից աստուծոյ:

Ես ասացի՝ թէ աստուածք էք, և որդիք բարձրելոյ ամենեքեան:

Զայն կամեցայ՝ որ լինիցիք, իրաւունս առնելով և խաղաղութիւն: Աձք. զի ոմն զծով բաժանեաց. ոմն զգետ 'ի վեր դարձոյց, և զլուսաւորս արգել. ոմն զցօղ և զանձրև արգել. ոմն զառն ջուրց հրամանն ետ և քաղցրացան: Որդիք, խոնարհքդ բարձրելոյն:

Դուք ահաւասիկ իբրև մարդիկ մեռանիք. և իբրև զմի յիշխանաց անկանիք:

Իբրև որդիք այ՝ մեռանիք իբրև զնա. և իբրև զմի յիշխանաց անկանիք, 'ի դևաց, որ անկան անխոնարհութեամբ. կամ՝ իբրև մեռանիք՝ միայնէս լինիք աղքատաց՝ ոչ ինչ աւելի. և զանմահ կեանքն մեռանիք, և զմիշտ մնացականն կորուսիք, զպատիւ և զիշխանութիւն, որ է 'ի վերայ ամենայն ընչից ան կեալ:

Արի՛ այ, և դատեա զերկիր. զի դու ժառանգեսցես զամ հեթանոսս:

Արի յո՛ և դատեա արդարութեամբ. զի դու ժառանգես ցես զամ հեթանոսս. զի դու ես ակնկալութի ամի ըր յակոբայ.

Օրհնութիւն. սաղմոս Ասափայ։

Զինչ պարտին ժողովեցան ազգք պատերազմել ընդ մեզ, զոր տեսեալ պատմէ հոգւովն աստ։

ՍԱՂՄՈՍ ՁԲ.



Ո՞ ՔԵԶ ՆՄԱՆԻՑԷ. ՄԻ

լռեր եւ մի դադարեր Ած։

Ո՞ քեզ նման օգնական կարէ լինել մեզ՝ 'ի մեծ պատերազմիս։ Դարձեալ՝ ո՞ նման է քեզ յերկայնամտելն. այլ աստ՝ մի լռեր և մի դադարեր առնուլ զվրէժ մեր։

Զի ահա թշնամիք քո գոչեցին, եւ ատելիք քո համբարձին զգլուխս իւրեանց։

Զայն ետուն իրերաց և ատելիք քո. արդարև՝ յայտնի եղեն թշնամիք և ատելիք քո, 'ի յարկանել զհնձանս չինելոյ զեհմ՞ իբրև զծով գոչեցին, և իբրև զալիս յարձակեցան։

'Ի վրէ ժողովրդեան քո խորամանկեցին զխորհուրդ. խորհեցան 'ի վրէ սրբոց քոց, եւ ասացին։

Խորամանկեցին զգիտելն մեր, զուք ոչ գիտէք ասեն զի զան այլազգիքն 'ի վր ձեր, և մեզ ասեն որդւոցս զոհաց՝ սուգ մեծ է. ամնացէք և մովաբացիք ասէին զայս. և խորհէին ը՞նու՝ զայս ասելով։

Եկայք սատակեսցուք զդոսա յազգաց, եւ մի՛ յիշեսցի անուն Իսրայէլի եւս։

Թէ այլևս մի՛ յիշեսցի իբրև ազգ։

Խորհեցան միաբանութեամբ 'ի միասին. վր քո ուխտ արարին։

Վ՞ քո փառացդ փոքրկացուցանելոյ ուխտ արարին ը իրեարս։

Բնակիչք Եդոմայեցւոց՝ եւ Իսմայելացիք, Մովաբ եւ Հագարացիք։

Որ խորամնօք բնակէին 'ի սաւէ կայենին, որ եղոմ կոչեցաւ վր երկրասիրութեն. և իսմայելացիք՝ յաբրահամէ և 'ի հագարայ. մովաբ՝ որ 'ի ղովտայ. և հագարացիք՝ որ ը այլում առն եղև հագար յետ մեկնելոյն յաբրահամէ։

Գեբաղ՝ Ամոն՝ Ամաղէկ, և այլազգիքն ամ բնակչօքն հանդերձ Ծուրայ:

Եսաւայ են որդիք և այլազգիք՝ որ են փղշտացիք, զոր պաղեստինացիս կոչեն այլք. բնակչօքն հանդերձ ծուրայ, որք են փիւնիկեցիք:

Նաև Ասուր եկեալ էր ընդ նս. ամենեքեան սոքա զօրավիգն էին որդւոցն Ղովտայ:

Ասուր եկեալ՝ ասորւոց թագաւորն, որ կայր յայնմ ժամանակի. ամենեքեան զօրավիգն էին, զի նք գրգռեցին զնա:

Արա ընդ նս որպ Մադիամ, որպ Սիսարայ, որպ Յաբինն՝ ՚ի հեղեղատն Կիսոնի:

Իշխանք էին յաբինայ արքայի, որ եկին ՚ի վր իէլի, յաւուրս բարակայ դատաւորին. ՚ի ծործորմն կիսոնին, ուր կոտորեցան ՚ի հոլխան ձորոց, և սպանաւ սիսարայ ՚ի յայելէ կնոջէ քաբերայ յաներայն մովսէսի:

Սատակեցան նոքա յայնդովր. և եղեն որպ զաղբ երկրի:

Դեբովրայ՝ մարգարէ էր, և զօրացոյց զբարակ: Յականս". ՚ինձ մա տեսանելն հոգւոյ ակամբ. և եղեն որպ զաղբ՝ որ խառնի ընդ հող՝ պարարտացուցանել զերկիրն:

Արա զիշխանս նց որպ զՈրեբն, զԶեբն, զԶեբէէ, զՍաղմանա, և զամ իշխանս նց:

Մեծամեծ իշխանք էին, որք ըմբռնեցան ՚ի գեդէոնէ:

Որք ասացին՝ ժառանգեսցուք ՚ի մեզ զսրբութի այ:

Դևք՝ զընութիս, և նք՝ զեհեմ:

Աճ իմ՝ արա զնս որպ զանիւ, որպ զեղէգն առաջի հողմոյ:

Յորմէ հուր թափի յոլով անգամ, և այրէ զայլն ՚ի գնայն. և եղէգն ՚ի հողմոյ՝ ՚ի սաստիկ շարժմանէ նոյնպս տաշորի. շրջանակաւ զնս. ասէ յինքեանս, և ՚ի չարիս իւրեանց: Ոմանք ասեն՝ անիւ կոչի փուշն, որ ՚ի ծայրս կառէնն՝ ՚ի չորանալն անկանի:

Որպ հուր՝ որ այրէ զանտառս, որպ բոց՝ որ հրդեհէ զլերինս:

Որ պատահէ և այս, ՚ի հողմոյ ուժգին բաղխմանէ հուր թափի, և այրէ զանտառս. և ընդ յանպատրութեան իւրեանց չարեացն՝ ասէ մաշեա, զի յերերաց սատակեսցին:

Այնպէս հալածեսցես զնոսա մրրկաւ քով. եւ բարկութեամբ քով խռովեսցես զնոսա:

Սպառնալեօք նախ՝ զոր մրրիկ կոչէ. և բարկութ̄ քով", խռովութիւն արկցես ՚ի մէջ նց̄:

Լցո զերեսս նց̄ անարգանօք, եւ խնդրեսցեն զանուն քո Տէր:

Որ ամօթով դառնան, և խնդրեն և ուսանին, զի անուն քո ահագին է, քանզի Տր̄ է: Դարձեալ՝ մոլորեալսն՝ արտասուաթաց լիցին երեսք նց̄, և խնդրեսցեն զողորմութիւն քո՝ ապաշխարութ̄:

Ամաչեսցեն եւ խռովեսցին յաւիտեանս յաւիտենից, եւ ամօթալից կորիցեն:

Յահ քո և յերկիւղ. յաւիտեանս յաւիտենից, թէ ոչ զղջան:

Ծանիցեն զի անուն քո Տէր է. եւ դու միայն բարձրեալ ես ՚ի վերայ ամ̄ երկրի:

Չէ սոսկ իբրև զիւրեանց կռոցն և դիցն՝ որ խոնարհ են, և ոչինչ:

՚Ի կատարած. վս̄ հնձանացն. որդւոցն Կորխայ սաղմոս:
Հնձան՝ զեկեղեցի ասէ, զի Գինւոյն միր՝ որդի Կորխայ շինեաց, եւ զհայր մշակ՝ էր ոգւոյն: Որպէս զերամս ՚ի բաժանելն, եւ շնորհաւորեն բնակեն ՚ի վերինն սիոն:

ՍԱՂՄՈՍ. ՁԳ.

Որչափ սիրելի են յարկք քո Տէր զօրութեանց. ցանկայ եւ փափագէ անձն իմ ՚ի գաւիթս քո:

Յարկք՝ բազմաւորս ցուցանէ, ըստ այնմ թէ՝ ՚ի տան հօր իմոյ օթևանք բազում են. և ըստ երկրի եկեղեցիք՝ դրունք են վերնոյն սիոնի: Ցանկայ և փափագէ անձն իմ, զի յայն սակս անկեալ ՚ի մեղ ա̄ծ պղծանկութե̄. գաւիթք և սրահք՝ ըստ ծով և ըստ ցամաք՝ տունք աղօթից, որ սրահք են վերնոյն, ուր փափագն է մեր, իսկ նք̄՝ եդեմի ցանկալին:

Սիրտ իմ և մարմին իմ՝ ցնծացան առ Աստուած կենդանի:

Քո՛ւ սիրտ՝ եկեղեցականք, և մարմին՝ աշխարհականք. նա յորդորէ առ հայր ցնծալ. և մեք ևս՝ առեմք հոգւով և մարմնով բաղձալ առ գլուխն մեր, որ ասաց՝ ես եմ կեանք: Ցնծասցէ առ Աստուած կենդանի, զի բաժինքն անշրջելիք են և միաւեալ. և ստացուածք Աստուծոյ և ցանկալիք մարմնականք՝ ապականացուք են և անցաւորք:

Քանզի ճնճղուկ եգիտ իւր տուն. տատրակ բոյն իւր՝ ուր դիցէ զձագս իւր:

Սիմաքոս՝ հաւ եգիտ աւուրք գարնայնոյ ասէ. և հաւք՝ եթէ բոյնս դիցեն, թախանձին մինչ տեղի գտանեն, նոյնպէս և մեք՝ մինչ յԱստուած հասանեմք: Դարձեալ՝ 'ի տեղի տաճարին՝ հաւք բոյն են եդեալ, և յոյժ ցաւէ մեզ: Իսկ՝ յեկեղեցի ճնճղուկք՝ աշխարհականք, տատրակ՝ եկեղեցականք և անապատաւորք, զի երկոքին ոչ հաւք են ճնճղուկք և տատրակք, և բոյն՝ զեկեղեցի ունին, ուր դնեն զձագս առաքինութեան իւրեանց: Դարձեալ՝ ճնճղուկ որսացեալք մեղօք՝ և զերծեալք յաշխարհութենէ, երբ այլուր ասէ, անձինք մեր ապրեցան որպէս ճնճղուկք յորոգայթէ որսողաց. իսկ տատրակ՝ անմեղքն և մեքն, որ միշտ պահեցին զանձինս պատարագաց:

Սեղան քո Տէր զօրութեանց, Թագաւոր իմ և Աստուած իմ:

Սեղան՝ ուստի բղխեն յորդութիւնք Աստուծոյ շնորհաց՝ Տէրն է զօրացն հրեշտակաց, ուր հայրդ գոհարձանաս երբ 'ի սեղանն տեսանելով 'ի յԱստուած քո՝ զԱստուած առաքինութեան եկեղեցւոյ. Թագաւոր՝ որ է գլուխ, և Աստուած իմ՝ որ ստեղծեր զիս:

Երանի՛ ամենեցուն՝ որ բնակեալ են 'ի տան Տն. յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ:

Աստ յուսով, և յետոյ 'ի վերինն՝ ուր անհատաբար տեսանելով զքեզ օրհնեն յաւիտեան:

Երանեալ է այր՝ որոյ օգնութիւն իւր 'ի քէն է. ելս եդ 'ի սրտի իւրում 'ի հովիտս արտասուաց 'ի տեղւոջ յորում ուխտեաց:

Զի առանց քո՝ ոչինչ կարեմք առնել: Ելս եդ 'ի մտի. յօժարութիւն մեր է: 'Ի հովիտս արտասուաց. ուր հրեշտակ երևեալ յանդիմանեաց, և ելաց ժողովուրդն. որոյ կոչմանն Աստուծոյ երկիր ասի հովիտ արտասուաց: Դարձեալ՝ ուր ծնաւ Եւայ ցաւօք: Դարձեալ՝ զկեանս մահկանացու՝ կոչէ հովիտ արտասուաց: Դարձեալ մարդ՝ որ դնէ 'ի սրտի պակասութիւն, և փոխելի աշխարհօք՝ զելս իւր դնելով առաջի 'ի տեղւոջ յորում ուխտեաց, 'ի վերինն սիոն, ոչ իջանել անտի երանելի է ստուգապէս:

Զօրհնութիւն տացէ՝ որ զօրէնսն տնէ. գնասցէ նա 'ի զօրութէ 'ի զօրութիւն. և երևեսցի ած աստուածոց 'ի սիոն:

Եզրաս ունէր դարձեալ գրեալ զօրէնս. և որ ելս 'ի սրտէ դնէ՝ թող անձին օրէնս դնէ. և գնասցէ 'ի պահոց՝ յաղօթս, յաղօթից՝ յողորմութի, 'ի պաղատանս, և յարտասուս, և յայլ բարիս: Դարձեալ՝ 'ի հաւատս, 'ի յոյս, 'ի սէր, 'ի յուսանել, և յուսուցանել, և յընթեռնուլ: Եւ՛ երևեսցի ած հրեշտակաց 'ի սիոնի, երբ տեսցեն աշակերտքն 'ի վեր ելանել ածացեալ լինի, և ածն Աշխարհի՝ երևի այնպիսեացն, որպէս որն երևեցաւ յետ յարութեն՝ աշակերտացն 'ի վերնատունն:

Տէր ած զօրութեանց՝ լուր աղօթից իմոց. ունկն դիր ած յակոբայ:

Զի ածն յակոբայ՝ է յն̄, որ իէլ կոչեաց զնա:

Ընտրանեաւ եւ տուր մեզ. տես ած և նայեաց յերեսս օծելոյ քոյ:

Ընդունելիս որ գայ առ քեզ, և ոչ հանես արտաքս. տես ած՝ որ եկաք առ քեզ, և նայեաւ յաշխարհն՝ ովք են քրիստոնեայք, բացերես և պայծառ արասցես 'ի յամօթոյ մեղաց, որ այժմ թանան արտասուօք:

Վս̄ զի լաւ է ինձ՝ մի օր 'ի գաւիթս քո, քան զհազարս:

Ցնծեցից յետ յարութեն քն̄ի, քան զհազար օր օրէնսքն, զի 'ի դաւթէ մինչ 'ի քն̄ հազար ամ է:

Ընտրեցի ընդ աղբ գալ 'ի տան այ աստուծոյ, քան բնակել 'ի յարկս մեղաւորաց:

Վերջին լինել յեկեղեցի և աւելածու. և թէպէտ լեցի լսել զյանցմանց նշ̄ զխոստովանութի, քան բնակել յարկս հեթանոսաց՝ հազար ամ, և զյաջողուածս նշ̄ լսել: Դարձեալ՝ ընտրեցի աստ ը̄ աղբ. և ը̄ մոխիր գալ, և վաստակել, և սերմանել արտասուօք, և անդ 'ի տան ան̄ կալ և հնձել, քան հանգստիւ կալ 'ի մարմնի զանցաւոր կեանս, և զանանցն բնակել յերկրի յարկս մեղաւորաց, զի դժոխքն յերկրի է:

Զողորմութի և զճշմարտութի սիրէ տր ած մեր. շնորհս և փառս տացէ:

Սիրէ ած զմարդ ճշմարիտ՝ տր և ողորմած, շնորհս տայ ողորմածացն, և փառս ճշմարտոցն:

Տր̄ ոչ պակաս առնէ զբարութիւն իւր յայնցանէ, որ գնան յանմեղութեան :

Զվարձն տայ, և զձիր ողորմութեան չառնէ պակաս անա-րատիցն. որպէս ա̅յ լինել առնէ տռուր խղճմտութեան:

Տր̄ ա̅ծ զօրութեանց, երանելի այր՝ որ յուսայ 'ի քեզ:

Տր̄ ա̅ծ՝ քո̄ է, զեղեալ ոք բաժանել խղճէ մեր յերկրաւոր բնութիւնս, զի հասարակաց յուսոյ ըղձեցն տայ պտղաւնութեան. և յոյս՝ ոչ երբէք ամաչեցուցանէ:

'Ի կատարած. որդւոցն Կորխայ սաղմոս:

Զկնի դարձին Բաբելոնէ և գերութեան՝ շնորհս առնելով ա̅յ հրաշագործութեան ասէ:

ՍԱՂՄՈՍ. ՁԴ.

Հաճեցար Տր̄ ընդ երկիր քո, և դարձուցեր զգերութիւն Յակոբայ:

Հաճեցար զկնի վեց հարիւր ամի՝ ո̅ր աստուծոյ և յանձնաց բնութեան. կամ ո̅ր եօթանասնից՝ հինգ հարիւր՝ հարիւր՝ յիսուն և ութ ամի. և հրեից՝ յետ եօթանասուն ամի: Եւ դարձուցեր զգերութիւն, որ է քին. այսու գիտացաք յորժամ յարեաւ 'ի մեռելոց, և զհոգիսն եհան 'ի դժոխոցն:

Թողեր զանիրաւութիւնս ժողովրդեան քո, ծածկեցեր զա̅մ մեղս նց̅:

Յաւել ցանգամայն՝ թողեալ ըլցին քեզ մեղք. քո՛ որ էր օրինակ աղամայ. և ցպռանկին՝ յօրինակ կանգնեցի բնութեան: Ծածկեցեր զա̅մ մեղս նց̅՝ մկրտութեամբ, և զպղծն լուացանելովն. զի անդ՝ 'ի տեսանել զորս յանցաւորին՝ յայտնի լինէր:

Լռեցուցեր զա̅մ սրտմտութիւնս քո, դարձար 'ի բարկութենէ սրտմտութեան քո:

Որ ո̅ր քանութե մեղացն՝ որ ոչ է թիւ:

Դարձո զմեզ ա̅ծ փրկիչ մեր, դարձո զսրտմտութիւնս քո 'ի մէնջ:

Զի չեւև եկեալ եմ՝ որ զնայեր 'ի յաղամայ՝ յո̅ մեր. և դարձեալ զսրտմտութիւնս քո, որ մ̅ ալոլոյն, և անպատեհ պատասխանւոյն:

Մի՛ յաւիտեան բարկանար մեզ. և մի՛ ձգեր զբարկութիւնս քո ազգէ մինչև յազգ:

Զի դու յաւիտենից ես, և մեք ժամանակաւ մեղան-չեմք. և մի ձգեր զլարկութին քո՝ յօրինաց հրեից 'ի նորա. զի օրէնքն՝ զլարկութին գործէին 'ի դատաւորսն՝ յորժամ ոչ պահէին։

[illegible]

'Ի մեղաց մահուանէ՝ իբրև զաւազինն որ ստուծեր յոյժէ : Փողոյլուրդ քո ուրախ եղիցի 'ի քեզ, որ 'ի սուգ է վ̃ն մեղաց։

[illegible]

Մերով բնութ̃բս տեսցուք զ յ̃դ մեր։

[illegible]

'Ի հոգւոյն լռեալք զաւետիս զալստեանն յառաքեալսն, և որ յետ յարութենն երևեալ աշակերտացն ասաց, խաղաղութի ը̃ ձեզ : Առ սը̃ս իւր՝ առաքեալքն, և առ այնոսիկ՝ որ դարձեալ են առ նա սրտիւք, որ 'ի հրէից և 'ի հեթանոսաց, և միշտ այս գործ է ո̃յ ։

[illegible]

Փրկութի՝ յ̃ն ն̃ր, իբր առ սիմէոն 'ի գիրկս իւր, և առ աննայ. զի յո հանգչիմ, թէ ոչ՝ որ դողան 'ի բանից իմոց. բնակել փառաց ն̃ր, այն՝ որ վերացաւ 'ի քերովբէիցն յօդն. և 'ի լեռնէն ձիթենեաց՝ գնացին 'ի բաբիլոն։ Բնակել փառաց ն̃ր", խաչն, և ն̃բ մարդիկ, որ պատկեր և փառք ա̃յ են։

[illegible]

Ողորմութի և ճշմարիտ հաւատք՝ 'ի մարդկանէ մի՛ պակասեսցին։ Դարձեալ՝ ողորմութի յ̃ն, ճշմարտութի հոգին ս̃բ. արդարութի 'ի մարդկանէ՝ խաղաղութի յ̃յ՝ միաւորին 'ի համբոյր. արդարութի յառաքելոցն, խաղաղութի 'ի տ̃նէ որ ասաց՝ խաղաղութի տամ ձեզ։ Յօհաննէս համբուրեաց զտ̃րն՝ որ արդարութի է և խաղաղութի. և կոյսն մարիամ՝ ոչ դադարեաց 'ի համբուրելոյ. այլև՝ պոռնիկն 'ի բաց ընկեցեալ զպղծնկուն՝ համբուրեաց զոտս արդարութ̃ն ։

Ճշմար

Ճշմարտութիւն յերկրէ ծագեաց. արդարութիւն յերկնից երևեցաւ։

Ճշմարիտ խոստումն 'ի մարգարէիցն, արդարութիւն յա՛ որ ասաց ցՅոհաննէս, պարտ է մեզ լնուլ զամ արդարութիւն, զի յերկրի թեթև էր արդարութիւնն։ Այլև՝ Ճշմարտութիւն զինքն ասաց տէրն, որ բուսաւ յարմատոյն յեսսեայ 'ի կուսէն։ Եւ արդարութիւն՝ հոգին սբ եկեալ արդարացոյց զառաքեալսն յերկինս ձայնիւն հօր։

Տէր տացէ զքաղցրութիւն, և երկիր մեր տացէ զպտուղ իւր. արդարութիւն առաջի նր գնասցէ. դիցէ 'ի ճանապարհի զգնացս իւր։

Տէր տայ զյօղ, և երկիր տայ ցորեան և գարի և գինի։ Տէր տայ զքաղցրութիւն, աւազանաւն զթողութիւն մեղաց. և բանական երկիր մեր՝ յայնմհետէ զպտուղ՝ բարի գործս, զի անկակից եղաք քնի. և ծառ որ ոչ առնէ պտուղ բարի՝ հատանի, և 'ի հուր արկանի։ Տէր տայ զձայն յարութեն, և երկիր զթաղեալսն 'ի նմա։ Արդարութիւն առաջի նր գնասցէ, զի արդար դատաստանին ը առաջ ելանեն։ Դիցէ 'ի ճանապարհի զգնացս իւր, 'ի կեանս և 'ի տանջանս, որ է դատաստանն։ Տէր տայ զքաղցր ձայն թէ՝ եկայք օրհնեալք հօր իմոյ. երկիր մեր՝ հոգիք և մարմինք ցուցանեն զպտուղ 'ի քն, և յաղքատսն. արդարութիւն առաջի նր գնասցէ, առաջի տն գնայ, որ է երևելի. դիցէ 'ի ճանապարհի զգնացս, թէ ընդ նեղն գնացին, թէ ը ընդարձակն՝ ըստ արժանեաց զօթեւանսն առնուն, նոյնպէս ճախարակողմանն երևի։

Սաղմոս 'ի Դաւիթ. աղօթք։

'Ի դիմաց իւրոց, և եղբարց, և զօրականաց, և քահանայից՝ վասն աղօթից մարդկանէ։

ՍԱՂՄՈՍ. ՁԵ.

ԽՈՆԱՐՀԵՑՈ՛ ՏԷՐ ԶՈՒՆԿՆ ՔՈ ԵՒ

լուր ինձ. զի աղքատ և տնանկ եմ ես։

Իբր մարդասէր բժիշկ խոնարհեցուցանէ զունկն առ շուրթն հիւանդին, և լսէ զնուաղ խօսս նր։ Եւ որ աղօթէ խոնարհի նախ, ապա և տէրն խոնարհի։ Աղքատ և տնանկ եմ ես, թէպէտ թագաւորքն էին դաւիթ, և եղեկիայ, և զօրաբաբէլ, ոչ 'ի թագն՝ այլ 'ի բնութիւն հայէին։

Պահեա զանձն իմ զի սբ եմ. փրկեա զծառայս քո Այ իմ, որ 'ի քեզ յուսացայ։

Առ սատուղ և առ սենեքերիմ, և առ գոգ, և բնութիւն

սբ

Տր ստեղծաւ, դու որ ստեղծեր՝ պահեա՛ 'ի սրբութն: Փրկեա՛ զծառայս քո՝ Ած, որ 'ի քեզ յուսացայ և ոչ յանձին սրբութն:

Ողորմեա՛ ինձ Տր, զի առ քեզ աղաղակեցից զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քո, զի առ քեզ Տր համբարձի զանձն իմ:

Որ կամի թէ՝ լսին աղօթքն, մինչ աղաղակեացէ, ով և Տրն ասէ, Ած ոչ առնէ վրէժ՝ որ աղաղակեն առ նա 'ի տուէ և 'ի գիշերի: Ուրախ արա զանձն ծառայի քո՝ որ պատկեր քո է անձնս, աղբերացո սմա և զսկզբնատիպդ ուրախութն, ուր կայց զայս հոգւոյս:

Զի դու Տր քաղցր և ուղիղ ես. Բազումողորմ առ ամենեսեան, որ կարդան առ քեզ:

Քաղցր և ուղիղ դատաւոր ես բազումողորմ՝ առ հրէայս, և առ հեթանոսս:

Ո՛ւնկն դիր Տր աղօթից իմոց, և նայեա՛ 'ի ձայն խնդրուածոց իմոց:

Ամենայն ոք աղօթէ առ Տր. և զամ տեսանէ Ած, այլ ոչ զամ խնդիրս կատարէ. վն այնր՝ ասէ նայեա՛, եթէ զհաճոյս քո հայցեմ, մի՛ գուցէ չգիտելով՝ քար և օձ խնդրեցից:

Յաւուր նեղութեան իմոյ կարդացի առ քեզ, և լուար ինձ:

Զփորձ եմ առեալ ասէ՝ զի լսես ինձ:

Ոչ ոք է նման քեզ յաստուածս Տր. և ոչ ոք է ըստ գործս քո:

Սենեքերիմ ասէ, մինթէ կարացին Ածք ազգացն՝ ապրեցուցանել իւրաքանչիւր զՏն: Եւ ոչ ոք է ըստ գործս քո, զոր տեսանեմք զարարածս և զնէմ. զի Ածք՝ որ զերկինս և զերկիր ոչ արարին, կորիցեն: Դարձեալ՝ ոչ ոք է յառաքելոցն և 'ի մարգարէիցն և 'ի մարտիրոսացն և յարդարոց, զի ըստ գործքն քո՝ ոք գործեաց, որ է ազատութին մեր. զի շնորհօք էին անուանեալ Ածք:

Զամ ազգս զոր արարեր՝ եկեսցեն և երկիր պագցեն առաջի քո, և փառաւոր արասցեն զանուն քո յաւիտեան:

Զամ ազգ՝ 'ի հաւատս յորժամ գան և կամ 'ի հանդերձեալն, այլ փառաւոր առնեն յաւիտեան՝ հաւատացելոցն է:

Մեծ

Մ [illegible]

Որով յայտ է, զի դու միայն ես սքանչելագործ Տծ յն։

Ա [illegible]

'Ի ճանապարհի՝ որ զքեզ ասացեր . և գնացից 'ի ճշմարտութեն քում՝ առ հայր քո և առ հոգի . և ուրախ եղիցի սիրտ իմ՝ յերկնչել անուանէ քումմէ. զի ոչք 'ի դիմաց երկնից չէն՝ տրտմին ։

Խ [illegible]

Ով և լուծաւ թէ՝ սիրեսցես զՏր Տծ քո յամ սրտէ քումմէ, և յամ զօրութէ քումմէ։

Մ [illegible]

Հեթանոսաց եկեղեցին ասէ, զի զհրեշտակս ծառայիւք, և զնա՝ անձամբ փրկեցեր, եջանելով 'ի դժոխս ներքինս. զի զոր աւերեաց Տրն ներքոյ երկրիս էր. 'ի վն չէին՝ գեհեան և սատանայինք։ Իսկ դժոխ՝ ուր եղեալ զիւր թագաւորութեն սատանայ՝ բանտէր զհոգիսն, թոյլ տալովն Այ. թէպէտ և անմարմին հոգւոցն տեղի ոչ ասի, այլ՝ դեւքն անմարմինք արգելուլին զնա։ Դարձեալ՝ դժոխք ներքին՝ ուր Տծ միայն գոյր ձեռնհաս։

Ա [illegible]

Հոգւոյն ասեն, յայտ է՝ կուտեցան ժողովեցան դեւքն, արգելուլ կամէին, և պատաջինն՝ ոչ ծանեան առաջի իւրենց զՏրն. զի բանական հոգւոյն ծածկեալ էր զԱծութին. մինչ խորտակեցան դրունք և նիգք, և կապեալք լինէին յԱծուէն։

Ա [illegible]

Գթած՝ առ որդիսն, ողորմած՝ առ զղջացեալսն, երկայնամիտ՝ առ անդարձսն, քաղցրամոլոր՝ առ բարկացեալսն

ճշմա

Ճշմարիտ առ պսակացն արժանիս գտանիս. որ լի է ողորմութեամբ նայելդ քո:

Տուր զօրութիւն ծառայի քո . կեցո զորդի աղախնոյ քո. եւ արա ընդ իս նշան բարութեան:

Զօրութիւն տկարացելոյս . կեցո զորդի աղախնոյ քո՝ Եւայի, կամ դաւթի, եւ եկեղեցւոյ, եւ զօրաբաբելի. ասեն չեմք օտար, այլ՝ ՚ի ծնողաց ունիմք զածպաշտութիւն: Նշան բարութեան, ցոյց զկատարածն ասորւոց, զդարձ արեգականն, ըզ մահն գօգայ. զի է նշան չար, երբ աւերման եկն մի նշանքն. երբ զօսանալ ձեռացն ըռբռնավանայ. Դարձեալ՝ խաչն նշան ՚ի ճակատ հաւատացելոցն եւ յերեսս, պատճառ ամ՝ բարութեան:

Տեսցեն ատելիք իմ եւ ամաչեսցեն. զի դու Տէր օգնեցեր ինձ, եւ մխիթարեցեր զիս:

Սաւուղ. եւ ռամիկ, եւ գօգ, եւ դեւք. զի դու Տր օգնեցեր ինձ՝ հանելով ՚ի դժոխոց. եւ մխիթարեցեր զիս՝ մխիթարիչ հոգւովդ սրբով:

Սաղմոս օրհնութեան. որդւոցն Կորխայ:
Որով սաղմոս զհիմունս հեթանոսաց, եւ զանդրանկութիւն եկեղեցւոյ եւ զառաքինութիւն հաւատացելոցն:

ՍԱՂՄՈՍ ՁԶ:

Հիմունք նր ՚ի լերինս սբ նր . սիրէ Տր զդրունս սիոնի առաւել քան զամ յարկս յակոբայ:

Հիմունք՝ քո, որ է գլուխ եկեղեցւոյ. ՚ի լերանց սբ՝ ՚ի յաբրահամ եւ յիսահակ, ոյք մերձենան ՚ի տեղին՝ ուր կախեցաւ խոյն: Դարձեալ՝ հիմունք առաքեալքն. լերանց՝ հաւատոյ ածպաշտութեան: Այլ՝ նկարեցաւ եկեղեցի ՚ի դրախտն, ՚ի տապանն, եւ ՚ի սինայ, եւ շինեցաւ ՚ի վր հիման առաքելոցն եւ մարգարէիցն. զորս եդ ած յեկեղեցւոջ, նախ՝ զառաքեալս, երկրորդ՝ զմարգարէս: Սիրէ Տր զդրունս սիոնի վերնոյն, զոր պօղոս ասէ, մատուցեալ էք ՚ի սիոն լերանն, եւ ՚ի քաղաքն այ, եւ յեմ յերկինս. եւ դրունք նր՝ եկեղեցիք են ամ երկրի, զոր սիրէ ած: Այլ՝ հիմունք եւ դրունք են՝ որոց ասաց, ոչ կոչեցից ծառայս, այլ բարեկամս. եւ թէ՝ սիրեաց զիւրսն, եւ իսպառ սիրեաց զնս. եւ կացէք յիս, եւ ես ՚ի ձեզ. այլ միացան ՚ի

'ի լեառն Տն՝ 'ի նոյն լինիցին Տրն ։ Սիրէ Տր զդրունս սիոնի՝ քան զխորանն, զտաճարն, զժողովրդանոցն. այս են երկոտա֊սան դրունքն՝ յողջոց մարգարտաց, զոր ետես յօհաննէս։

Փառաւորեալս խօսեցան վն քո, ահաւորին քաղաքդ Այ ։

Փառաւորեալն Ած խօսեցաւ վն քո 'ի մարգարէսն, և առ պետրոս՝ դու ես վէմ, և 'ի վր այդր վիմի շինեցից զե֊կեղեցի իմ։ Կամ՝ փառաւորեալ բանք խօսեցան 'ի մարգա֊րէից, յառաքելոց, 'ի գաբրիէլէ, յաւետարանչացն՝ 'ի մատ֊թէոսէ, 'ի մարկոսէ, 'ի ղուկասու, 'ի յօհաննու։ Նորին ոչ ասէ աշխարհիկ քաղաքդ Այ, այլ՝ գեղ Այ. որ է գեղեցկութն և փառք Այ եկեղեցի նր. իսկ քաղաք՝ որ ոչ կարէ թագչել, ամենայնիւ և լի ամ արուեստիւք և գեղեցկութեամբ։ Աշխա֊րհիկ ասէն՝ վն յայտնի տեսանելոյն իբր առաջի աչաց. Այ քաղաք՝ յորդ վր անուն նր կոչի, և յարմար է մեծութեն նր։

Յիշեցից զռահաբ և զբաբելոն՝ որք ճանաչեն զիս. ահա այլազգիք և ծուր՝ և ժողովուրդք հնդկաց, սոքա եղեն անդ ։

Ռահաբ՝ որով յիշէն քանանացիք. բաբելոնիւ՝ ամ քաղդէացիք և պարսք. որք ճանաչեն զիս՝ կարի չարք, զորս ոչ խոտէ. ահա այլազգիք՝ փղշտացիք, և ծուր, փիւնիկեցիք, ասորիք և հայք. և ժողովուրդք հնդկաց՝ որ է ամ լեզուս. սոքա և ամ ազգք և լեզուք՝ որք 'ի հաւատս եկին և գալոց են, զորս ամն մարգարէս տեսանէ 'ի վերին սիոն գեղեցկա֊ցեալ, և 'ի բաց եղեալ զամ հնութի, և զսեւութի, և զաղտե֊ղութի. իբր զի՝ յայտնի ասէ եղեն անդ՝ որ է 'ի վեր եկին։

Սիոնի ասէ մայր, և մարդ ծնաւ 'ի նմա. և ինքն հիմնեաց զնա 'ի նմա բարձրեալն ։

Ամենայն՝ որ հաւատացեալ մարդ է, զսիոն ասէ մայր, որ է բնութիւն, և ազգդ զոր թոռեաց։ Բայց երկնչի դա֊ւիթ յանուանէ ռահաբու և բաբելոնի՝ մայր ասել Այ, և Ածածին. քանզի՝ նախ Այն ծնաւ, և ոչ իշխեցաւ ասել Ած ծնաւ, այլ՝ մարդ, որ երկու ունի ծնունդ. զ'ի հօրէն ոչ ասէ այլ՝ որ 'ի կուսէն, որ էր 'ի բնութէն։ Եւ ինքն իսկ հիմունս էարկ, զի առանց սերմանէ է, և ինքն հզօր, որ Բն եբրայեցւոյն՝ հիմունս, զոր եօթանասունքն՝ բարձրեալ ասեն, և եսայի Ած հզօր հայր հանդերձելոյ Դին. բարձրեալն նոյնն է որ 'ի խո֊նարհ ծնաւ, հիմն էարկ անախտ ծննդեան, որոյ եղբարքն

 ծնա

ծնանին 'ի կոյս աւազանէն. զի վերինն սիոն 'ի բնութենէս հաւաքի:

Տէ̅ պատմեսցէ գրովք ժողովրդեան, իշխանացս այսոցիկ՝ որ եղեն անդ:

Սիմաքոս՝ տէր թուեսցէ գրովք զիշխանս ժողովրդեան իւրոյ, զի թագաւոր և դատաւոր է, զնորին թուէ և յան_ուանէ կոչէ. և գրէ զիշխանսն զառաքեալսն 'ի դպրութի̅ կենաց. ը̅ այդ մի՛ խնդայք, զի դևք հնազանդին, այլ՝ խնդացէք, զի անուանք ձեր գրեալ են յերկինս: Այլև՝ գիր և տր̅՝ հոգին տր̅, որ 'ի սիրտս հաւատացելոցն գրեցաւ. պատ_մեսցէ գրովք ժողովրդեան իւրոյ, առաքեալքն 'ի գիրս հոգ-ւոյն իշխանացս, որք կացոյց ը̅ ամ̅ երկիր:

Որպէս ուրախ լինելոյ 'ի քեզ ամենեցուն. որոց բնակութիւն իւրեանց 'ի քեզ է:

Որոց բնակութի̅ 'ի քէն առնու աստ և այժմ. որոց խըն դալ ասացեր, և թէ՝ դուք ընդ իս իցէք: Այլև՝ ութսուն և վեց թիւն խորհրդաւոր է, ութն տասամբն՝ զկատարումն եկեղեցւոյ՝ ութերորդ դարուն նշանակէ, և վեցիւն զդարն՝ յորում եկն տրն, և հիմն արկ եկեղեցւոյ. և դըսունք՝ զգայարանքն, և մասունք հոգւոյն, զոր սիրեաց և եառ:

'Ի կատարած. վս̅ մաղաղէթայ իմաստութե̅. զի եր պատասխանի եմանի ի- մաստութե̅ իէլի:

Սիմաքոս՝ [illegible]

[illegible]

[illegible]

ՍԱՂՄՈՍ. ՁԷ.

Տէ̅ ած փրկու̅ իմոյ, 'ի տուէ կարդացի և գիշերի առաջի քո:

Տէր՝ մինչ յեճմէլին, և գիշեր 'ի բաբելոն: Այլև՝ անդ 'ի

'ի բաբելոն զտիմ և զգեհեն։ Եմ բնութենս նախքան զեանն քի՛ ով 'ի գեհենի արդարութեն, և զինի եկեղեցի՝ ով 'ի տաճարին։

Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր, խոնարհեցո զունկն քո 'ի խնդրուածս իմ։

Մտցեն երբև պատգամաւոր հաշտութեն, ով կուռնե_լեսին :

Զի լցաւ չարչարանօք անձն իմ, և կեանք իմ 'ի դժոխս մերձեցան. համարեցայ ես ընդ իջեալս, որք իջանեն 'ի գուբ։

'Ի դժոխս՝ զբաբելոն ասէ, ուր չարչարանօք կայր իել իբր 'ի գբի, նման հեթանոսաց՝ որ ոչ օգնէր ուծ. և որն եա չարչարեցաւ երբև զմի ոք եղեալ 'ի գերեզմանի։

Եղէ ես ով մարդ առանց օգնականի, և 'ի մեռեալս ազատ։

Մանաւանդ՝ այս ուն է, որ չէր կարօտ օգնականի. և 'ի մեռեալս ազատ, ազատ 'ի մեղաց և 'ի մահուանէ, որ ոչ էր խէր նմա. որպէս և ասէր, ո՞ 'ի ձէնջ յանդիմանեսցէ զիս վասն մեղաց։

Ով վիրաւորք, որ ննջեն 'ի գերեզմանս։

Վերաւոր՝ 'ի կողս և յոտս և 'ի ձեռս. ով ուն է նման ննջել, և ոչ սոսկ մարդոյ. և ոչ բովանդակեքն 'ի գերեզմանի. զի այլ ո՞ ննջեաց 'ի գերեզմանի, բայց՝ որն, որ ասաց՝ ես ննջեմ, և սիրտ իմ արթուն է։

Զորս դու ոչ յիշեցեր, նոքա 'ի ձեռաց քոց մերժեցան։

Ո՛չ յիշեցեր զատամանայ, այլ՝ զմարդիկ յիշեցեր։

Եդին զիս 'ի գբի ներքնում՝ 'ի խաւարի և 'ի ստուերս մահու։

Ցուլելի 'ի գբի եղաւ, այլ՝ ներքնում ասելով՝ զդժոխս յայտ առնէ. և ո՞յք եղեն անդ՝ զուեն, և սէրն, որ առ հո_ գիմն : 'Ի խաւարի, թերևս հուր էր 'ի դժոխս խաւարին, այլ նմա՝ ստուերք մահու, և ոչ մահ։

Յիս հաստատեցաւ սրտմտութիւն քո, զամ զբօսանս քո ածեր 'ի վր իմ։

Աշխամայն յիս զտեղի էառ անէծքն և սրտմութին. զնմ

զբ.

դրօսանս պղնորս տարակուսանաց ՚ի մարդկի՝ ածեր ՚ի վ̄ր իմ կամելով լինել զիս մարդ. սկսաւ ասէ տրտմել և հոգալ, թէ ո՞ր անվնաս արասցէ զմարդիկ ՚ի պատերազմէն ը̄ սատանայ։

Հեռի արարեր յինէն զծանօթս իմ. եւ եդին զիս նշաւակ իւրեանց։

Այլին ասէ ծանօթքն նր̄ ՚ի հեռաստանէ. և եդին զիս նշաւակ, մինչև ցայսօր հրէայքն իբրև զնշաւակ նետաձգու-թեն նախատանաց։

Մատնեցայ՝ եւ ոչ ելանէի. աչք իմ տկարացան յաղքատութենէ։

Զի ոչ կամեցաւ ելանել ՚ի ձեռաց նց̄. աչք իմ տկարա-ցաւ յաղքատութէ, սիմաքոս՝ աչք իմ սուրեցին, յայտ է որ տասուս իջոյց տր̄ն ՚ի վ̄ր եկմի, յաղքատացեալ բնութիւնս աղէխարշեալ։

Աղաղակեցի առ քեզ զօրհանապազ, եւ համբարձի առ քեզ ձեռս իմ։

Ցայօթս երեկս. իսկ՝ առաջին արդարքն լուսով ար-դարութ̄ին։

Մի՛ եթէ մեռելո՞ց առնիցես սքանչելիս դու. կամ բժիշկք յարուցանիցե՞ն՝ խոստովան առնիցին առ քեզ։

Գիրւոյն ՚ի դէպ է թէ ասէ, մինչ կենդանի եմ օգնեմ ինձ։ Այլև՝ քարոզեաց տր̄ն ՚ի դրունս դժոխոյն. մի՞ թէ մեռեալ ասէք ինձ հոգիք, զի՞նչ կարես առնել, կամ դու, կամ այլ բժիշկ, կամ մարգարէք՝ որ խոստովանեն առ քեզ հոգիքս թէ՝ ա̄ծ ես։

Մի՛ եթէ պատմիցէ՞ ոք ՚ի գերեզմանի զողորմութիւն քո, կամ զճշմարտութիւն քո ՚ի կորստեան։

Թէ այլ ուրեք ողորմեա՞լ ես ՚ի գերեզմանի եղեալ, թէ զկապար դու տարար. զճշմարտութիս քո՝ ասա ՚ի կորստ-եան ցուցեա՞լ ես։

Մի՛ եթէ ճանաչիցե՞ն ՚ի խաւարի սքանչելիս քո, կամ արդարութիւն քո յեր-կրի մոռացելոյ։

Ցերկիր ասա մոռացեալ, որքան ամք են յադամայ հետէ։

Եւ ես առ քեզ տէր աղաղակեցի. առաւօտու աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ։

Տէրն ասէ առ հայր զընութեն աղօթք. առաւօտու ա-ղօթք իմ ժամանեսցեն առ քեզ, որ էր իւր գալուստն՝ յետ-դիշէր ժամանակին։

Ընդէ՞ր Տէր մերժես զանձն իմ. եւ դարձուցանես զերեսս քո յինէն։

Որովհետեւ եկի ես՝ հոգւոց այլ մի լիցին հեռի 'ի քէն որ զերեսս ոչ տեսանեն 'ի բարկութենէ։

Տնանկ եւ վաստակեալ եմ ես 'ի մանկութենէ իմմէ. 'ի բարձրութենէ խոնարհ եղէ եւ տագնապեցայ։

Տնանկ եղէ յայլս ծնեալ, եւ վաստակեալ 'ի մանկութենէ՝ փախչելով յեգիպտոս, զոր հերովդէս կամէր սպանանել. 'ի բարձրութենէ խաչին խոնարհեցուցի զգլուխ, եւ հանի զոգիս. ոչ եթէ զմեռեալ, այլ՝ ափշեալ կարծէին մինչ խոցեցին։

Յիս հաստատեցան բարկութիւնք քո. արհաւիրք քո խռովեցուցին զիս։

Զի անէծս կոչեցայ. արհաւիրքն՝ որ 'ի շարժմանէ երկրին, խռովեցուցին զանդամսն՝ զառաքեալսն. չհաւատային թէ յառնեմ։

Շրջեցան զինեւ որպէս ջուր, զօր ամենայն պաշարեցին զիս 'ի միասին։

Շուրջ գային զխաչիւն քաղմութիւնք իբրեւ զջուր. զօր ամ՟ մինչեւ ցերեկոյ պաշարեցին։

Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ եւ զծանօթս իմ, վասն թշուառութեան իմոյ։

Զառաքեալսն՝ վասն թշուառութեան տեսանելոյն զիս Գիրքոյն յայտնի է, յորս նկարեալ կային այսք։

Իմաստութիւն Եթանայ Իսրայելացւոյ։

Ոմանք Եթանայ Իսրայելացւոյ ասեն, այլ Եզրահ էր՝ որ յաւուրս ջահ աւուրն էր, եւ այս՝ նմա է. Եզրայէլն՝ գեղ էր Յուդայեցւոց, անուն գայլն եղելոյ յէջմ, եւ նահապետն 'ի փախչելն, ուստի նեղեալն էր, որ Եզրաքայն սղմաւթիւն, եւ ծաղիկ յայս է զի զմբաղ պարզեւօքն Տն, զնրա ատ նա ծաղկեցուցիչ զի շնորհեալ Տն պաւուն, եւ ամ՝ եղեւ Տն ծաղիկ բանին մարգարէութեան։ Ոսկի ասէ իւր վասն աւետմանն եղեալ, իմա՝ կամ 'ի խաւարածն։

ՍԱՂՄՈՍ. ՁԸ.



ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆՍ ՔՈ ՏԷՐ յաւիտեան օրհնեցից ազգէ յազգ պատմեցից զճշմարտութիւն քո բերանով իմով։

Զորս առաքեն՝ եւ զորս առնուլն յոյս՝ շնորհօք է, որ է ողորմութիւն, եւ ոչ ըստ արժանեաց։ յաւիտեան օրհնեցից, որքան ձգի ժամանակս. ազգէ յազգ՝ 'ի հանդերձեալսն, 'ի պակասել արդարոցն, եւ 'ի հրեշտակս. պատմեցից զճշմարտութիւն

թիս քո, զի անդ ոչ է ողորմութիւն, այլ՝ ճշմարտութիւն։ բերանով իմով, որ է հոգին սբ, զոր Տն ասաց՝ ես տաց բերան, և իմաստութիւն։

Ասացեր՝ թէ յաւիտեան ողորմութիւն շինեսցի. յերկինս պատրաստ եղիցի ճշմարտութիւն քո։

Չասէ թէ շինեցաւ, այլ՝ շինեսցի որդւոյն վերստին. և զառաջինն եւս՝ ողորմութբ շինեաց, գիտելով՝ զի մեղան չէ ատեալ, վասն որոյ զաշխարհս առնէ. սակայն՝ արար ողորմութբ։ Եւ՛ ուր ասաց վասն առաջնոյն, դաւթիւ ասաց հոգին՝ ողորմութբ Տն լի եղև երկիր. և աստ ասէ՝ թէ թողցեն որդիք քո զօրէնս իմ՝ հարից գաւազանաւ, բայց զողորմութիւն իմ ոչ արգելից. զաւակ նր յաւիտեան կացցէ, հիմն անդ արկաւ, և նախ անդ լուծան ՚ի հօրէ, և եկին աւետաւորք կուսին, և հովուացն, պատրաստ էին և յօժար ՚ի փրկութիւն մեր, և եկեղեցի չէ հեռի անտի. մատուցիլ էք ասէ պօղոս ՚ի սիոն և յեհմ յեկեղեցի։ Այլև՝ առ նոյին ասաց, ոչ ևս յաւելից հարկանել զամ երկիր վասն մեղաց, զաղեղն իմ եդից յամպս, այլովքն համդերձ. զոր և ասէ թէ՝ և յերկինս պատրաստ եղիցի, ուր և նշանն է։

Եդի ուխտ ընտրելոց իմոց. երդուայ դաւթի ծառայի իմոյ։

Աբրահամու, իսահակայ, յակոբայ, զի ասէր ՚ի զաւակէ քումմէ կերպարանչիւր ումեք ասէի։ Երդուեայ դաւթի՝ որ ՚ի հարիւր երեսուն և մին սաղմոսին ասէ, երդուաւ Տր դաւթի ճշմարտութբ։

Յաւիտեան հաստատեցից զզաւակ քո. և շինեցից ազգէ յազգ զաթոռ քո։

Յաւիտեան հաստատեցից, այլ ոչ ամ փոխել՝ քան զՏն, յորումէ օրհնեսցին ամ ազգք. և շինեցից ազգէ յազգ զաթոռ քո, որ է եկեղեցի սբ։ Զերկինս շինեսցին ճշմարտութիւնք նր, և զերկիրս ողորմութիւնք նր, և եկեղեցի ողորմութբ և ճշմարտութբ միայ։ Ազգէ յազգ՝ այժմու փորուցս մինչև յազգն՝ յորում հրեղէն նորոգին ամ արարածք։

Խոստովան եղիցին երկինք սքանչելեաց քոց Տր, և ճշմարտութեան քո յեկեղեցւոջ սրբոց։

Ուր նախ գիտացին յերկինս, և զճշմարտութիւն նախ

նոքա

նորա քարոզեցին յեկեղեցւոջ, աստեղբ զմոգսն ածելով, և հովուօքն զփառք 'ի բարձունսն. և հոգին իջանէր ձայնիւն հօր, և առնել լուսաւոր:

[illegible]

Սիմաքոս՝ յեթեր ամպս, որ առլին յոյ՝ իբրև ամպ 'ի ծովէ երկնաւորքն, և յայտնեցին զիքանչելիսն. կամ՝ ո՞վ նմանեցէ տն յորդիս այ, որ շնորհօք կոչեցան, և 'ի լրութե նր առլին առաքեալք և մարգարէք և սրբք:

[illegible]

Տիարքն զայթագղին վն երևելւոյն, ոչ և հրեշտքն վն մարմնոյն, այլ՝ խորհրդաւորքն զյս ած փառաւորեն 'ի հոգիս իւրեանց: Մեծ և ահաւոր 'ի վր այնոցիկ որ շուրջ են զնովաւ. յետոյ ասին այ՝ 'ի թիկանցն անդէտ սրբքն, 'ի ձախմէ՝ ծառայքն որ երկնչին, յաջմէ՝ վարձկանքն որ ասէ եկայք օրհնեալք հօր իմոյ", զի. քաղցեայ և ետուք ինձ ուտել". յերեսաց կուսէ՝ որդիքն:

[illegible]

Կարող ես յամէ՝ և ճշմարտութիւն քո՝ ըստ արժանւոյն պատկէ զայնոսիկ՝ որ շուրջ առացա զքև: Տեսակ է այս յարմարութե բանից, այլ նա ավրով իւրով բովանդակելոյն զեմ:

[illegible]

Որ զաւազնելի արդելիչ. և զխռովութի ալեաց նր՝ դու ցածուցանես, ոչ երբեմն 'ի կարմիր ծովուն, և յետոյ 'ի նաւին առ աշակերտսն:

[illegible]

Վիրաւոր էր փառաւոր հպարտութբ թէ՝ ընդդէր թագաւոր ելանել իէլի, և խոնարհեցոյց 'ինեբքոյ ալեացն. 'ի զօրութե բազկի քո ցրուեցեր զդևսն 'ի մարդկանէ, և զկռապաշտութիւն:

[illegible]

Քո են երկինք՝ որ երբ շինովդ գործես, ուստի ջուր հե-
ղեր առ նոյնս. և զերկիր նոյնով՝ ուստի աղբիւրք նորածինք
եղեն։ Երկինք յօգնակի, որդ այլ ևր ասացեալ է. և երկիր
միաւոր, զի այլ երկիր ոչ է քան որ երևելիս. զ՞եօ՝ շինմանա_
կիս և զգալիս։ Զհիւսիս և զհարաւ դու արարեր. Թաբօր՝ի
կողմ հիւսիսի պայծառական աշխարհին, և աՀերմոն ՚ի հարա
ւոյ, զևրբեանց սեպհականն առէ ցնծալ անուամբն քո, ուր
զաւանի ճշմարիտն տծ։ Այլ՝ աշխարհ ոչ ցնծան, ուր
սուտքն պաշտին, մինչ գայ տէրն, և զաւանան ՚ի նա։ Այլ՝
գունափոխութիւն տն ՚ի Թաբօր՝ ցնծացաւ ճառագայթ երե-
մամբն տն ՚ի Թաբօր անկեալ զահերմոնիւ։

Քո է բազուկ՝ և զօրութեան. զօրասցի՝ աջ քո՝ և բարձր եղիցի
ձեռն քո։

Բազուկ՝ որ կրես զամ զօրութիւն քով, և ՚ի ձեռս քո
են ամ տիեզերք երկրի. զօրասցի աջ քո՝ աջակողմեանքն
քո զօրասցին. և բարձր եղիցի ձեռն քո ՚ի հարկանել զհակա
ռակորդսն։

Յարդարութիւն և յիրաւունս հաստատեալ է աթոռ քո. ողորմութիւն և
ճշմարտութիւն գնասցեն առաջի երեսաց քոց։

Յարդարութիւն որ չկայ կեղծաւորութիւն և անիրաւութի,
և յիրաւունս՝ զի խնայելով առնես զմարմնաւորացս. ողորմու
թիւն առ մարմնաւորսն, ճշմարտութիւն առ անմարմինսն։

Երանի ժողովրդեան, որ գիտէն զօրհնութիւն քո տէր. ՚ի լոյս երեսաց
քոց գնասցեն, և յանուն քո ցնծասցեն զօրհանապազ, և յարդարութիւն
քում բարձր եղիցին։

Յետ քարոզութեան՝ և զօրհնութիւն ուսուցին առաք-
եալքն. ՚ի նորանման հաւատով՝ նոր օրհնութիւն մատուցա-
նել, զհայր և զորդի և զսբ հոգին օրհնել, զոր հրէայքն
ոչ գիտէին։ ՚Ի լոյս երեսաց քոց գնասցեն, երես հօր որդի,
լոյս երեսաց՝ հոգին. և յանուն քո քրիստոնէական ցնծա-
ցեն զօրհանապազ, և յարդարութեան քում՝ զոր արարեր խա
չիւն բարձր եղիցին, որ ասացեր զամենեսեան ձգեցից առ իս։

Պարծանք զօրութեան նոցա դու ես տէր. և ՚ի կամս քո բարձր եղիցի եղ
ջիւր մեր։

Պարծանք՝ առաքեալքն ասեն, զօրութիւն զոր գործէին՝
նմա

նմա տայլին. և 'ի կամս քո բարձր եղիցի եղջիւր մեր, հա-ւատոն գործովքն բարձրանայ:

'Ի Տեառնէ է օգնութիւն մեր սրբոյն Իսրայէլի՝ թագաւորին մերոյ:

Օգնութիւն մեզ 'ի քէն է, որ ասաց ընդ ձեզ եմ: Դարձեալ՝ սբն իսրայելի յս, որ ասէր հայր ընդ իս է:

Յայնժամ խօսեցար տեսլեամբ ընդ որդիս քո, և ասացեր. եդի զօգ-նութիւն իմ 'ի վերայ հզօրին, և բարձր արարի զընտրեալն 'ի ժողովրդ-եան իմ:

Յայնժամ խօսեցար, սիմաքոս՝ յորմէհետէ խօսեցար տեսլեամբ ընդ մարգարէսն՝ զոր որդիս ասէ, ով 'ի հոգ-ւոյն ծնեալ. եդեւ զօգնութիւն. որ չէ վասն կարօտութեն, այլ՝ վկայութեն. և բարձր արարեց զընտրեալն 'ի ժողովրդենէ իմ. մի. ըստ երգոյն թէ՝ ընտրեալ է 'ի բիւրոց. այլև՝ 'ի մար-գարէսն գտանի այսպիսի բանք, ըստ եսայեայ 'ի մին ասցէ մանուկ իմ, վերացի և բարձրացի. և թէ՝ իսրայէլ ընտր-եալ իմ:

Գտի զԴաւիթ ծառայ իմ, իւղով սրբով իմով օծի զնա:

Եգիտ 'ի մէջ աղքատաց հովուաց, հօտից և ողայոց թագուցեալ:

Ձեռն իմ ընկալցի զնա. և բազուկ իմ զօրացուսցէ զնա:

Ընկալցի 'ի գիրկս խնամոց և զօրացուսցէ ընդդէմ թշնամեաց:

Մի՛ տիրեսցէ նմա թշնամի, և որդի անօրէնութեան մի՛ չարչարեսցէ զնա:

Ոչ թշնամի հրեայքն, և անօրէն հեթանոսք:

Հարից առաջի նորա զթշնամիս նորա, և զատելիս նորա 'ի պարտութիւն մատնեցից:

Արար զայս յոլովս, ով 'ի վեշտասան սաղմոսին ասէ, յերեսաց քոց նրաուունք խնձ եղեն:

Ճշմարտութիւն իմ և ողորմութիւն իմ ընդ նմա. և յանուն իմ բարձր եղի-ցի եղջիւր նորա:

Ճշմարտութիւն յանմեղութեան, ողորմութիւն զկնի մեղացն։

Եդից 'ի ծովու զձեռն նր. և 'ի վերայ գետոց զաջ նորա։

Այս ամ՛ դաւթի փայլել, և տնօրէնութեան որդւոյ նր. դաւթին 'ի կալումն ծովէն՝ յափրատ և 'ի տիգրիս։ Այլև՝ եղից զձեռս նորա 'ի վերայ ծովու օրինաց, և 'ի վերայ գետոց զաջ աւետարանին, զոր աջողացոյց ընդ իւր։

Նա կարդասցէ առ իս՝ հայր իմ ես դու, ած ընդունիչ փրկութեան իմոյ։

Զգտանել դաւթի ասել զայս, ած ընդունող փրկութե իմոյ, վասն մարմնոյն։

Ես անդրանիկ արարից զնա, և բարձր քան զամ թագաւորս երկրի։

Անդրանիկ 'ի բազում եղբարս՝ 'ի ծնունդս աւազանին, և բարձր՝ որ նստաւ ընդ աջմէ հօր։

Յաւիտեան պահեցից նմա զողորմութիւն իմ, և ուխտ իմ հաւատարիմ ընդ նմա։

Ուխտ ընդ դաւթի։

Հաստատեցից յաւիտեանս յաւիտենից զզաւակ նորա. և զաթոռ նորա որպէս զաւուրս երկնից։

Յորժամ 'ի բաց եղեալ լինի հաստատութիւն՝ և նոր երկին՝ և նոր երկիր միաբանի, և միանայ աւուրք արդարոյն ընդ հրեշտակաց, և լինի մի։

Թէ թողցեն որդիք նր զօրէնս իմ, և յիրաւունս իմ ոչ գնասցեն գնալ,
Թէ զարդարութիւնս իմ անարգեսցեն, և զպատուիրանս իմ ոչ պահեսցեն։

Յեքոնիայ, և սեդեկիայ ։

Հարից գաւազանաւ զանօրէնութիւնս նց, տանջանօք զանիրաւութիւնս նց։

Նաբուգոդոնոսորաւ. և ոչ ասէ զնա, այլ զանօրէնութիւնս նց. տանջանօք', գերութբ։

Բայց զողորմութիւն իմ ոչ արգելից 'ի նմանէ. և ոչ ներեսցից ճշմարտութեան իմում, և ոչ անարգեսցից զուխտ իմ. և ինչ որ ելանէ ընդ շրթունս իմ, զայն ոչ արհամարհեսցից։

Զողորմութիւն 'ի դարձ առնէլ. և ոչ նենգեցից ճշմարտութեան իմոյ, զոր խոստացայ՝ զմիածինն տամ, զուխտն իմ՝ որ ել 'ի շրթանց իմոց:

Միանգամ երդուայ 'ի սրբութեան իմ, եթէ Դաւթի ես ոչ ստեցից:

Իբր ասել 'ի ճշմարտութեան իմ, այլև՝ 'ի հոգին ոք:

Զաւակ նորա յաւիտեան կացցէ. և աթոռ նր իբրև զարեգակն առաջի իմ. իբրև զլուսին, որ հաստատեալ է յաւիտեան. և վկայ հաւատարիմ յերկինս:

Զաւակ՝ յն, աթոռ՝ եկեղեցի, իբրև զարեգակն առաջի իմ; զի մարմինն է նր, իբրև լուսին՝ կրէ եկեղեցի փոփոխումն, լրումն և պակասութիւն, մինչև կատարի 'ի չափ հասակի կատարմանն քի: Վկայ հաւատարիմ, իբրև այլուր ասէ, թէ կարէք զուխտն իմ՝ որ ը տուընջեան և գիշերոյ՝ խափանել, չլինել տիւ և գիշեր. նոյնպէս՝ և զուխտն իմ որ ընդ դաւթի. հայրն է վկայն հաւատարիմ, որ ասաց՝ դա է որդի իմ: Դարձեալ՝ արեգակն և լուսին՝ խաւարմամբն հաւատարիմ վկայ եղեն մարդութեան նր. զոր և ասեն թէ՝ ըղ շամանդաղն լուսինն անտի 'ի հետ ունի:

Իսկ արդ՝ դու մերժեցեր և անարգեցեր. և ընդ վայր հարեր զօծեալ քո:

Թողին զօրէնս քո. հարեր զօծեալն քո՝ զսեդեկիա, որ փորեցին զաչսն:

Դարձուցեր զուխտ 'ի ծառայէ քումմէ. պղծեցեր յերկիր զսրբութիւն նր:

Այն է՝ զոր արկանէ յերկինս, որ չմնաց յաթոռն. պղծեցեր զ թագն, և զքրմութիւնն:

Քակեցեր զամ պարիսպս նր, և եդիր զամրութիւնս նր 'ի դողումն:

Զենքն, և եդիր 'ի դողումն զամ զամրոց աշտարակին որ իբր դողայր 'ի պաշարելն զերուսաղէմ:

Յափշտակեցին զնա անցաւորք ճանապարհի. եղև նա նախատ դրացեաց իւրոց:

Անցաւոր թագաւորք, ասորւոց, բաբելացւոց, և եգիպտոսի. նախատ դրացեաց՝ փղշտացւոց, և եդոմայեցւոց:

Բարձր արարեր զաջ նեղչաց նորա. ուրախ արարեր զամ թշնամիս նր:

Բու

Բուռն թագաւորութի տուէր. ուրախ արարեր զիմ թշնամիս նր, զմոլարեցիս, և զամբարշտեցիս, և զայլսն:

Դարձուցեր զօգնութի 'ի սրոյ նր. և ոչ ընկալար զնա 'ի պատերազմի:

Դարձուցեր զօգնութի՛ չօգնեաց սուր. և ոչ ընկալար 'ի խնամս քո. այլ կալան զսեդեկիայ զորքն քաղդեացւոց:

Անարգեցեր զսրբութի նր, և զաթոռ նր յերկիր կործանեցեր:

Սրբութի զարքունիսն առէ:

Նուաղեցուցեր զաւուրս ժամանակաց նր. և հեղեր զնովաւ զամօթ:

Մետասան ամ սեդեկիայ, յեքոնիայ երեք ամիս. և հեղեր զնովաւ զամօթ, աղալեաւուն երկանս:

Մինչև յե՞րբ դարձուցանես զերեսս քո իսպառ. բորբոքեսցի որպէս հուր բարկութի քո:

Բորբոքեսցի 'ի վր բաբիլոնի:

Յիշեա՛ և զիս՝ թէ ո՞վ է իմ հանգիստ. միթէ 'ի զո՞ւր ինչ ստեղծեր զմ որդիս մարդկան:

Ո՞վ է հանգիստ 'ի հեռաւորս, կամ 'ի մերձաւորս. մի թէ 'ի զուր ինչ ստեղծեր, թէ վր սակաւուց արդարոցն միայն ստեղծեր. ամ մարդիկ կորեա՞ն արդեօք. եկ և ասա՛ եկա՛յք առ իս ամ աշխատեալք: Մի թէ 'ի զուր ինչ ստեղծեր, մանաւանդ թշուառութի ընութեա. աղերսիւ ընդ առաջի տյ. յիշեա՛ ամս զոր ասացեր, արասցուք մարդ ըստ պատկերի մերում:

Ո՞վ է մարդ որ կեցցէ՝ և ոչ տեսցէ զմահ, կամ փրկեսցէ զանձն իւր 'ի ձեռաց դժոխոց:

Ո՞վ է որ ոչ ըծննդեան պարտն հատուսցէ մահուամբ, թող թէ զայլս հանէ 'ի դժոխոց, կամ անմահութի տացէ, բայց՝ դու յս:

Ո՞ւր են ողորմութիւնք քո Տր առաջինք, զոր երդուար դաւթի ճշմարտութբ քով:

Որ և առանց երդման՝ ճշմարտութիւն է բանն քո, տալ զմիածինն քո նմա:

Յիշեա՛ զնախատինս ծառայի քոյ, զոր ընկալայ 'ի ծոց իմ յազգաց բազմաց:

Զյեքո

Զյերկնիս· այլ՝ զանուէթիս 'ի գլխոց · որ պարտէր եա մինչև ցվատթարս՝ զամ ազգ, չնչաւոր, և անշունչ: 'Ի ծոց իմ՝ յազգաց բազմաց, 'ի սիրտ՝ որ է հոգւին բանական:

Զոր նախատօնակին Ընծայեն ժա տր. նախատօնակին փոխանակ օծէլոյ հոյ:

Բարեխօսեցէք՝ փոխանակ պատուհասացս քո վասն օծմանս, և դուք զանուէթիս · որոյ փոխանակ օծելոյ քո՝ քրիստոնեայք եղեցուք. այլ որք՝ փոխանակ զի քրիստոնեայք եմք, ջանան 'ի մեծամեծ նախատինս արկանել, և չարիս տալ գործել:

Որ կենդանի ես տր յաւիտեանս յաւիտենից. Եղիցի եղիցի:

Ցո՞ քա՞ է տր մծ, և ոչ յաւել թէ ինչ՝ զի մծ է տր մծ. յաւիտեան՝ յանսպառ և 'ի միջու՝ միակցութբ բնութն: Եղիցի, սիմաքոս՝ ամէն. ակիւղաս՝ ճշմարիտ. թէոդիտոն՝ հաստատելով. որ ասէր, ամէն ասեմ ձեզ. և եղիցի քեզ որպէս և կամիս. և որ հաւատայ յիս՝ զմահ մի տեսցէ. ամէն:





Աղօթք 'ի Մովսէսի յայրն Այ:

Ո՛չ գտանի այս 'ի գիրսն Մովսէսի, բայց միայն այսպէս, եթէ՝ յանգնէնց Մովսէսի ունելով, և անուանեալ որ ապաւէն են. այն՝ յայտ է՝ զի պատիւ երգեալ զսա 'ի դէմս Մովսէսի, զի աղաչեաց վճարել անձն. և ոխս- բայց՝ և պատուոյ բնութեան, նման Մովսէսի աղաչաւորութեան, որ ունի զնոյն՝ և զմխիթարութիւն բնութեան, և զպարգև գիրութեան, և՝ և զխնդր- կէն ողորմութեան

ՍԱՂՄՈՍ. ՁԹ.



ՏԱՊԱՒԷՆ ԵՂԵՐ ՄԵՐ ԱԶԳԷ մինչև յազգ. մինչչև լերինք հաստատեալ էին, մինչչև ստեղծեալ երկիր՝ և աշխարհս ամենայն:

Տէ՛ր ապաւէն՝ ո՛չ նոր, այլ՝ 'ի յաւելայ, յհնումայ, յհ- նունքայ, 'ի նոյէ, յաբրահամէ, 'ի մովսեսէ, 'ի մարգարէից, մինչև 'ի գալուստ քո Տր: Ապաւէն եղեր, բնակութի մեր դու էիր նախ քան զԱմ. մինչչև լերինք հաստատեալ էին, որ ցեցք են երկրի, և բրգունք. և մինչչև ստեղծեալ երկ- կիր, անդրանիկ տմի հացուցեր զնեզ 'ի քեզ. յորմէ զմար- դանալդ արկեր հիմն. և սիրեիր զնեզ՝ պատրաստելով ար- քայութի. ըստ այնմ, եկա՛յք օրհնեալք հօր իմոյ՝ ժառան- գեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութի՛ն 'ի սկզբանէ աշխ:

Յաւիտենից մինչև յաւիտեանս, դու ես. և մի՛ դարձուցաներ զմարդ 'ի խոնարհութիւն. և ասացեր, դարձարո՛ւք որդիք մարդկան:

Յաւիտենից մինչև յաւիտեանս դու ես, դու միայն ես 'ի սկզբանէ, և գոյքս տմ՛ սկսեալ 'ի քէն: Մի դարձուցաներ զմարդ 'ի տառապանս, զի յետ մեղացն՝ մեռուստ 'ի վայր ան- կաք

կայք, 'ի հող տառապանաց՝ ուստի առաք, 'ի յարուցանելն 'ի հողոյ՝ մի՛ դարձուցաներ 'ի տառապանս դժոխոց։ Դարձեալ՝ որ զզջմամբ առ քեզ դիմէ, մի՛ դարձուցաներ յետս գնալ անյուսաբար, և տառապիլ 'ի մեղս, զի դու ասացեր մարգարէիւքն, դարձարո՛ւք առ իս, և ես դարձայց առ ձեզ։

Հազար ամ յաչս քո ոպ̄ օր երէկին՝ զի անց. ոպ̄ պահ մի գիշերոյ. և ամք նց̄ անարգութեամբ եղիցին։

Ո՛չ միայն հազարն, այլ՝ ամենայն կեանք մարդկան իբրև երեկեան օրն՝ որ չէ մեզ 'ի միջի, և ոպ̄ պահ մի 'ի գիշերոյ, որ զանխլաբար անցանէ. և ամք նց̄ անարգութեամբ եղիցին, ո՛չ ինչ համարեալ են 'ի նեղեքն. չնեղի ած՝ զի երկայնամիտ է 'ի համբերելն. որ թէ հազարամեայ ժողովեսցեայն զղջման ապաշխարութեամբ՝ ընդունի ած՝ իբր զաւամայն։ Այ մի օր էր 'ի նորեքն՝ որ ասաց մեռանել՝ յորում աւուր ուտէր։ Ասորին ասէ, ազգ նց̄ քնուլ եղիցին, որ է մարդկան ազգ մահուամբ կատարին։

Ընդ առաւօտս ոպ̄ դալարի անցցեն. ընդ առաւօտս ծաղկի դալարի զուարճասցին և ծաղկեսցին. ընդ երեկոյս թարշամեսցին՝ չորասցին և անկցին։

'Ի տղայութենէ յաջողուածս՝ մարդիկ իբր կարծեն թէ՝ դեռ սկիզբն է, հիմնադրութիւն ծիւրին, և հոգին՝ որ արեգակն է մարմնոյն, մտանէ յերկինս, երեկոյ եղեալ կենացն, զոր կարծէին առաւօտ կենաց, և աշխարհին իւրեանց։ Այլ՝ բարւոք յետ քնոյն՝ զառաւօտն բերէ, որ է յարութիւն։ Երկրորդէ զառաւօտն, զի նա է որն՝ ուր արդարքն բուսանին և զուարճացեալ ծաղկին յաջակողմնն. իսկ՝ ձախակողմեանքն 'ի մտանել խոնարհելի արեգականն՝ յերկիրս թարշամեսցին, չորասցին, և անկցին։ Այլ՝ հրեշտակք 'ի ծագման առաւօտին քնի սքանչելեօքն ծաղկեցան և զուարճացան, և յետ խաչին 'ի համբառնալ արեգական՝ թարշամեցան, չորացան, և անկան 'ի պատուոյ փառաց։

Սատակեցաք մեք 'ի բարկութենէ քումմէ, և 'ի սրտմտութենէ քումմէ խռովեցաք։

Բնութիւն յադամայ բարկանալն, և հրեշտակքն 'ի դերելն։

Եդեր զմեղս մեր առաջի քո, և զկեանս մեր 'ի լոյս երեսաց քոց։

Չիք քան զայն ահագին, յորժամ մեղք մեր առաջի

դա

դատաւորին դնիցէն, զի ոչ ծածկին։ Եւ՛ զկեանս մեր ՚ի լոյս երեսաց քոց․ երեւին առաջի քո՝ լուսով երեսաց քոց կենացն պտուղք, թէ բարի, և թէ չարք։ Երբայեցին՝ զմանկութիւն մեր ՚ի լոյս․ հրէիցն են յեգիպտոսէ․ և մեզ՝ որ մանկացաք աւազանաւն․ այլև՝ յարութեան լուսոյն, որ առաց՝ ես եմ լոյս աշխարհի։

Ամենայն աւուրք մեր նուաղեցան․ և ՚ի բարկութեան քում վախճանեցաք։

Բնութեամս՝ յադամայ, և հրէիցն՝ ՚ի գերելն։

Ժամանակք ամաց մերոց անդադար ամ սակաւք․ և եթէ առաւել ամաց մերոց ՚ի նմա՝ եօթանասուն ամ։
Այլ թէ առաւելուն՝ ութսուն ամ․ որ ինչ աւելի քան զայն, ցաւք և հեծութիւնք։

Որ զժամանակս մեր առնեն արեգակն և լուսին՝ ոչ դադարեն, և մեք և՛ս ՚ի գործելն անդադար, տկարայեալք՝ անարգ եղեալք իբրև զարդ, և գործք վարուց մեր՝ իբրև զոստայնս նր, և կեանք կարճեալ՚ի նախնեացն ամաց, եկն յեօթանասուն և յութսունն, և աւելին՝ լի ցաւօք․ չեմք նըմանն արդարոցն, ոչ ամօք և ոչ վաստակօք։ Այլև՝ հրէիցն յամսն ՚ի գերութիւն յեօթանասուն ամին դարձն, և այլք՝ յութսունն, և որք այլ յամեն արտաքոյ կամացն ոչ՝ ցաւօք լցեն և հեծութեա․ ըստ այնմ թէ՝ որ մինչ ՚ի հարիւր ամն՝ ոչ եղանէ, մեղաւոր է անդէն մեռանելոյն և անիծեալ։

Եկն ՚ի վերայ մեր հեծութիւնք, և խրատեսցուք․ խնդրեմ՝ ո՞ գիտասցէ զզօրութիւն բարկութեան քո, կամ յահէ քումմէ զբարկութիւն քո համարեսցի։

Թէ հեզաբար խրատս՝ այսչափ լլկեաց զմեզ, զի սաստէն վիշտքն՝ ՚ի խրատ են, իսկ արդ՝ ո՞ գիտասցէ զհանդերձեալն, յորժամ ՚ի գործ արկանես զսաստումն պատուհասի, և ոչ խրատու։ Կամ յահէ քումմէ զսրտմտութիւն քո համարեսցի․ ահն բաւական է հալել զարարածս իբրև զմոմ․ և յահէն՝ ո՞վ կարէ զսրտմտութիւնս քո՝ որ է գործքն մեր պատճառ համարել, այլև՝ մեր սրտմտութեան զգործմն։

Այսպէս ցոյց ինձ զաջ քո․ և որ խոնարհ են սրտիւք, զիմաստութիւնս քո։

Այսպէս՝ որ խրատողս է, աստէն տանջելն հեզաբար՝ որ աջոյ է, և աջողակ, որ խոնարհեն, և արդ և՛ս դողան ՚ի

բա

քանից քոց։ Զիմաստութի՛, զի տեղեկացեալ՝ 'ի հանդերձ-եալ բարկութենէն ապրեսցուք։ Եբրայեցին ասէ, այսպէս ցոյց ինձ զօր ելից իմոյ. կամ զվախճանին ասէ, կամ որպ ասեն յոլովք թէ՝ լաւ է գիտել զօր մահուան, զի զպարծցին յա-պաշխարանս, և թէ այնպէս լինին՝ ապաշխարօղք կոչին, և ոչ արդարք, 'ի տանջանաց զերծանելին, այլ ը արդարոյն ոչ պատկին։

Դարձ Տր՝ մինչեւ յե՞րբ. մխիթարեա՛ 'ի ծառայս քո։

Մինչև յե՞րբ գերութի՛ բնութեա, կամ հրէիցն. մխիթար եա 'ի ծառայս քո որպ մեք՝ յետ հարկանելոյն հանգչելովք 'ի ցասմանէ

Լցաք առաւօտու ողորմութբ քո. ցնծացաք և ուրախ եղաք՝ զամ ա-ւուրս կենաց մերոց։

Հրեայն յետ դարձին, և մեք 'ի ծագմանն քի, որ ելից զմեզ շնորհօք և ողորմութբ, որպ առաքելովքն և խղաքեր-քըն 'ի յարութն առաւօտուն։ ցնծացաք և ուրախ եղաք զամ աւուրս կենաց մերոց. մեզ վայելէ զամ աւուրս ուրախ լի-նել, ընդ մեզ ունելով զնոքն։

Ուրախ եղաք փոխանակ աւուրցն, որ խոնարհ արարեր զմեզ, և ամացն՝ յորս տեսաք չարչարանս։

Խոնարհ արարին զմեզ դևքն և քաղդէացիքն։

Հայեա՛ Տր 'ի ծառայս քո՝ և 'ի գործս ձեռաց քոց, և առաջնորդեա՛ որդւոց նոցա. և եղիցի լոյս Տն այ 'ի վերայ մեր։

Ի ծառայսն՝ զի գնեցեր չարչարանօք, և 'ի հողոյ ստեղ-ծեր ձեռօք. առաջնորդեա՛ ադամայ և եւայի, զոր ստեղծեր, և պատկերաւ պատուեցեր. եղիցի լոյս Տն այ 'ի վր մեր՝ հոգւոյն սբ՝ որ էր յառաջ յադամ, նախ քան զմեղանսն։

Զգործս ձեռաց մերոց ուղի՛ղ արա 'ի մեզ Տր. զգործս ձեռաց մե-րոց յաջողեա՛ մեզ։

Զշինութի տաճարին և զեկեղի, և զնութենս զառա-քինութիս, որով ստեղծանէ զմեզ նոր՝ մր։

Օրհնութի գովութի 'ի փառս։

Թէպէտ՝ անվերնագիր, այլ՝ ըստ եբրայեցւոց ասէ, որ յառաջընթացեալ սաղմոսին յաջորդեալ յաւուրսն։

ՍԱՂՄՈՍ. Ղ:

Ո բնակեալն է յօգնութեն Բարձրելոյն ընդ հովանեաւ Այ երկնից հանգիցէ:

Իբրև յերկինս՝ անձեռնմխելի է թշնամեաց, որ մօտ է Այ է, և յառաքինութեն տան:

Ասասցէ Տն՝ ընդունելի իմ ես, ապաւէն իմ Այ, և ես յուսամ 'ի նա:

Նա ընդունելի 'ի խնամս իւր:

Նա փրկեսցէ զքեզ յորոգայթէ որսողին, և 'ի բանից խռովութենէ:

Յորսողէն՝ որ եդ ապաժամ որոգայթ՝ զմեծ անձն, և բան իւր խռովեցոյց զնա, և զեղեկեալս, յասելն ասորւոյն՝ ո՛չ է Ած՝ որ կարէ փրկել:

'Ի թիկանս իւր ընդունեսցի զքեզ. 'ի հովանի թևոց նր յուսասցես:

Զոր մինչեւ ասէր թէ՝ բարձեալ բերէ 'ի վր միջնորդաց իւրոց, անգիտելի խնամքն Այ է, և երկու կատակացն զօրութիւքն: Եւ դարձեալ՝ բարձր վարդապետութիւն յուր, վն հաւատոց և գործոց՝ ուր ընկալաւ զազգն հեթանոսաց. 'ի հովանի թևոց նր յուսասցես, 'ի զօրութի խաչին:

Ոպ̃ զէն շուրջ եղիցի զքեզ՝ ճշմարտութիւն նր:

Ճշմարտութիւն եղիցի քեզ ասէ ամուր զէն. հաւատն՝ առ Ած, և առ մարդիկ՝ ճշմարիտ գոլ:

Ո՛չ երկնչիցես դու յերկիւղէ գիշերի, և ոչ 'ի նետէ՝ որ թռչի 'ի տուէ:

'Ի գիշերի մարմնոյ ընդ իս խորհուրդս, և երկիւղին զարհուրեցուցանէ. և 'ի տուընջեան աչօք և լեզուօք ձգէ նետս, կամ յայլմէ յինքն, կամ յիւրմէ յայլս:

Յիրէ որ շրջի 'ի խաւարի, 'ի գայթագղութենէ դիւէ 'ի հասարակ աւուր:

'Ի մեղս շրջի սատանայ, և գայթագղեցուցանէ զմարդիկ, զխաւարն իբրև զմիջօրեայ լոյս կարծեցուցանելով: Դարձեալ՝ զձմնձրուն դևն ասէ՝ որ միջօրեայ կոչի. որ հասանէ 'ի վր յայնմ ժամու՝ յորում եմուտ ադամ 'ի տարակոյս, ուտել չուտել ը եհայի:

Անկցին 'ի կողմանէ քումմէ հազարք, և բիւրք ընդ աջմէ քումմէ. որ առ քեզ իսկ ոչ մերձեսցին:

Եղեկեալ թշնամիքն յաջմէ և յահեկէ նէմի անկցին: Այլև՝ դևք հազարք կռուին 'ի ձախմէ ը մեղաւորս՝ արկանել 'ի մեղս, և բիւրք ընդ աջմէ 'ի հպարտացուցանել զառաքինիս: Դարձեալ՝ հազար դևք յահեկէ թշնամիք, բիւրք հրեշտակք օգնականք յաջմէ. ո՛չ առաց եղխսէ, ը մեզ շատ են

քան ը՟ նմ : Այլև հազարք յահեկէ ձախակուսէ չարիւք կռուէին, տասն հազարք աջակողմեան քոյոյ գայթագղեցուցանել․ որ առ քեզ ինչ ոչ մերձեսցին, առ եզեկիայ, առ գեդէոն, և առ յովհաննէս, և առ նմանօղս նոցունց՝ սէրք տմ:

Բայց միայն աչօք քովք հայեսցես դու, և զհատուցումն մեղաւորաց տեսցես. զի դու Տէր յոյս իմ ես:

Որպ և տեսին իսկ յասորիսն. այս խոստումն տ՟ր՟՝ սրբոցն է. և 'ի սոցանէ պատասխանի այս, զի դու տ՟ր՟՝ յոյս իմ ես, 'ի քեզ է յոյսն, և ոչ 'ի մեզ:

Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն. ոչ հասցեն առ քեզ չարք, և հարուածք մի՛ մերձեսցին 'ի յարկս քո:

Դաւիթ ասէ ցեզեկիայ, ոչ հասցեն առ քեզ չարք, իբրև առ յոբ՝ ոչ կարացին առանց հրամանի, որպ 'ի յարկս հոգւոյն՝ որ չառնէ իշխանութիւն, ասելով տ՟յ՟ թէ՝ զհոգի նորա պահեսցես:

Հրեշտակաց իւրոց պատուիրեսցէ վ՟ս՟ քո, պահել զքեզ յմ՟ ճանապարհս քո:

Որպ այլուր ասէ, բանակ հրեշտակաց տ՟ն՟ շուրջ են զերկիւղածօք իւրովք, զի հոգիք են հարկաւորք՝ որք առաքին 'ի սպասաւորութիւն, որպ աբրահամ և յակոբ առացին:

'Ի ձեռաց իւրեանց բարձցեն զքեզ. զի մի՛ երբէք հարցես զքարի զոտն քո:

'Ի բաղուկս", 'ի զօրութիւն. զի մի՛ երբեք հարցես զքարի', չկարէ գայթագղեցուցանել:

'Ի վերայ իժից և քարբից գնասցես դու. և առ ոտն կոխեսցես զառիւծն և զվիշապն

Սատանայ փորձչին ասաց, հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո', բերս ունելով զեա՝ իբր զհրեշտակս յաջմէ՝ զի հպարտացուցէ արկանել զանձն յաշտարակէն. նա խոնարհութ՟ե՟ ետ պատասխանին, զի այն է զէն յնդդէմ հպարտութեան, որով անկաւ ինքն և բիւրքն իւր. թէպէտ՝ ոչ վասն տ՟ն՟, այլ՝ վասն արդարոյն էր ասացեալ դաւթի զբանըն. զայս ոչ ասաց թէ՝ 'ի վերայ իժից կոխեսցին, սակայն՝

գնաց

զնաց և կոխեաց, և ետ կոխան առաքելոցն։ Իժ՝ զդառնութիւն կոչէ, թագաւորական՝ զինքնիշխան բանականութիւն. առեւծ՝ զխրոխտալն. վիշապ՝ սպանող թիւնոյն չարութեան. թագաւոր իժից՝ արքայեկ օձն է. առեն թոյնն է, և աչօք ևս առեն սպանանէ. երբ սատանայ 'ի ձեռն զդայարանացն. քարբ՝ ոչ հնազանդի թոյլայ. իժ է դեն՝ որ զդայարանօքս նենգէ, և քարբ՝ որ ոչ տայ զզջանալ. առեւծ՝ որ 'ի վերայ մահուն կայր. վիշապ՝ որ զհոգիսն 'ի դժոխսն ունէր, զոր կոխեաց տէրն զամ։

Քանզի յիս յուսացաւ, և փրկեցից զնա. հովանի եղէց նմա, զի ծանեաւ զանուն իմ։

Այն ասէ վասն եղեկելոյն, և բնութեան, զի ծանեաւ զանունն, զի յայտ է տէրն՝ որ փրկէ. հոգի՝ հովանի. և հայր՝ գթած այնպիսւոյն։

Կարդասցէ առ իս՝ և ես լուայց նմա. և առ նմա եղէց 'ի նեղութեան։

Կարդասցէ առ իս", զփորձառեալ. և առ նմա եղէց 'ի պաշարեալն զենմ, և 'ի վշտանալն բնութեան։

Փրկեսցից և փառաւոր արարից զնա. Երկայն աւուրբք լցուցից նմա զփրկութիւն իմ։

Ի յարութեան, այլ՝ 'ի մահուանէ. փառաւոր արարից զնա, և դարձեալ արեգական զփրկութիւն իմ։ Երկայնաւուրբք լցուցից, հնդետասան ամօքն եղեկեայ, և զբնութիւն անմահութեան յուսով։

Սաղմոս օրհնութեան աւուր շաբաթուց 'ի դաւիթ։
Նուագեալ է շաբաթուն ժողովրդեանն հրէից, [illegible] արարողն է ասել. զի հրէից օր մի ասաց դադարելոյ, և միւս [illegible] բերն յարութեանն տէր անմահ լինել, և դադարել 'ի չարեաց. զի դադարեալն առ շաբաթն։ Այս են՝ դաւիթ չոգաւ 'ի չորրորդ դրան Գիճերոյն, և եդիր զհանգստեան 'ի յաւն, և զարթուցեալ զնա՝ ոչ ես եդեր նոյօ։

ՍԱՂՄՈՍ. ՂԱ։

Բարի է խոստովան լինել Տն, սաղմոս ասել անուան քում Բարձրեալ։

Քան

Քան ննջել՝ խոստովանել, թէ քո արարած եմք. սաղմոս ասել, երգով յիշել զանուն քո, Ած գթած, ողորմած, երկայնամիտ, և քաղցր:

Պատմել առաւօտու զողորմութիւնս քո, և զճշմարտութիւնս քո 'ի գիշերի:

Առաւօտու, զի զարթեալն ծագես չարաց և բարեաց. և զճշմարտութիւն քո 'ի գիշերի, զի մարմնոյ տալիչ ես. գիտես ճշմարիտ՝ զի պէտս ունիմք հանգստեան քնոյ: Դարձեալ առաւօտ՝ Քի գալուստն, որ ողորմելով կենդանացուցանէ զմեռեալս. և զճշմարտութիւն քո 'ի գիշերի, զի օրինօքն սպասանէր ստուգութեամբ: Դարձեալ՝ առաջին գալուստն առաւօտ. վերջինն՝ գիշեր, և խաւար մեղաւորաց: Դարձեալ՝ առատ ողորմութիւն, և անդ ճշմարտութիւն

Տասնաղեան սաղմոսարանաւ, 'ի յայն օրհնութիւն գովել:

Ըստ թուոյ մասանց Ժի կարգելոյս գործի օրհնութեան, և ըստ թուոյ զգայութեանց հոգւոյ և մարմնոյ. զի տասն մատամբք ձեռաց, տասն զգայութեամբ բերանն օրհնեսցէ զԱծ: Այլև՝ հոգին երկու զօրութիւն ունի, միտք, և բան, և երկաքանչիւրքն հինգ հինգ զօրութիւնս ունին, որք 'ի ձայն օրհնութեան գովեն զԱծ: Քանզի՝ քնարն հեթանոսաց լեալ էր, մինչև եկն Քս, և էարկ զհնչումն հոգւոյն՝ անխարդախ յամ ազգս: Ունի և այլ կերկին զօրութիւնս՝ անձն մարդոյն, գիտնականս հինգ՝ միտք, տրամախոհութիւն, կարծիք, զգայութիւն երևակայութիւն. և կենդանականս՝ հինգ, կամք, ընտրութիւն, յօժարութիւն, ցանկութիւն, բարկութիւն. ոմանք բանականք են, և ոմանք անբանք. և բանականքն՝ միտք, տրամախոհութիւն, կարծիք, կամք, և ընտրողութիւն. և անբանն՝ յօժարութիւն, զգայութիւն, երևակայութիւն, ցանկութիւն, և բարկութիւն. որք են զարդարիչք հոգւոյ. տեսականաւն՝ բանականն զարդարի, և գործնականաւն՝ անբանքն. որով ըստ արժանւոյն միշտ օրհնեմք զԱծ: Եւ կամ այսօրիկ՝ կատարեալ իմաստասիրութիւն՝ յերկուս բաժանի 'ի տեսականն, և 'ի գործնականն:

Ուրախ արարեր զիս Տէր յարարածս քո, և 'ի գործս ձեռաց քոց ցնծացայց:

Ուրախ արարեր զիս՝ երբ գիտացին հեթանոսք թէ արարածք են և ոչ Աստուածք՝ զոր պաշտէին. այլև՝ մարմին ուրախ լինի յարարածս քո, զպէտսն առնելով, և ցնծայ հոգի գիտելովն՝ եթէ գործ է ձեռացն քո: Դարձեալ՝ ցնծայ հոգի

հոգի խոնարհութիւն, քննելով զարարածս, և զանօրինակամանն
տն՝ աստուծոյ բնոյթի:

Ոչ ոք մեծ է ի գործս քո Տր, և լոյս է որ է ի երկնային քո:

Թէպէտ և գոյք՝ քան զմեր հասու լինելն. Թէպէտ
է մարդս պատկեր մեծին Տն. և որ մեծն է ք կամ՝ գործք
անօրէնութեան քանի խորքն: Եւ յոյժ խոր են խորհուրդք քո,
խառնուած բնութեան մեր անքննելի, մանաւանդ՝ երբ Տծ
խառնեցաւ:

Այր անզգամ զայս ոչ ճանաչէ. և անմիտն զայս ոչ առնու ի միտ:

Շնչաւոր մարդ՝ ոչ կարէ գիտել բնաւ զայս:

Ի բուսանել մեղաւորաց ոպ խոտ· ի ծաղկել ամենեցուն՝ որ գործեն զա-
նօրէնութիւն:

Զի մարդոյ՝ ոպ խոտոյ են աւուրք իւր, որոց յոյժ
աստ է անմնայուն. ի ծաղկելն թագաւորութ և իշխանութ:

Սատակեսցին յաւիտեանս յաւիտենից. և դու բարձրեալ ես յաւիտեանս Տր:

Փոքր մի ծաղկին, և յաւիտենից սատակին. և դու բար-
ձրեալ ես յաւիտեանս, բարձր մնալով ի մեղաւորաց:

Զի ահա թշնամիք քո Տր. զի ահա թշնամիք քո կորիցեն, ցրուեսցին
ամենեքեան՝ որք գործեն զանօրէնութիւն:

Կրկնէ զթշնամին, զի անհաւատ լինելոյն և չար գոր-
ծելոյն եղեն թշնամիք բարւոյն: Գիտեցաւ այս՝ սատանայի,
և հրէից:

Բարձր եղիցի ոպ միեղջերոյ եղջիւր իմ, և ծերութիւն իմ ի յիւղ պա-
րարտութ

Որպէս միեղջերուն՝ միապետութի հեթանոսաց՝ մի-
ածութի. և ծերութի իմ՝ ի ձէթ պարարտութն. սխալքս՝
աստուածութի իմ իբրև զձիթենի վարսաւոր. զի Տծ տայ եղև
և ծերացոյց զմնութիւն, որ է՝ խոնարհութս գործեաց, լուսա-
ւոր կենօք և պարմնութ, տայ և որդի կոչեցաւ բնու-
թեն: Այլև՝ յիշեցուցանէ զմիեղջերուն՝ որ կուսին ըմբռ-
նի

նի, յօրինակ տն՝ որ զծերութիւն օրինացն և զցամաքութիւն ՚ի պարարտութիւն աւետարանին փոխեաց։

Եւ տեսցէ ակն իմ ՚ի թշնամիս իմ, այլ յարուցեալսն ՚ի վերայ իմ չարաց, ՚ի նոսա լուիցէ ունկն իմ։

Եղեւ ակն իմ ՚ի թշնամիս իմ՝ զոր ինչ ինձ խորհէին։ Սիմաքոս, ակիւղաս, թեոդոտիոն, եբրայեցին, տեսցէ ակն ասեն, և լուիցէ ունկն ՚ի հանդերձեալն ասեն. իսկ եօթանասունքն՝ զհանդերձեալն իբրև զանցեալ, զի սովոր են գիրք զլինելոցն իբրև զեղեալ ցուցանել. իբրև ասաց տր՝ աւազակին, այսօր ընդ իս լիցես ՚ի դրախտին, և զղազար՝ ՚ի գոգն աբրահամու։

Արդարն որպէս զարմաւենի ծաղկեսցի, որպէս մայրն լիբանանու բազմասցի եղիցին։

Արդարք՝ ՚ի գալ շնորհացն քի, արմաւենին ՚ի բարձրըն ընէ զպտուղն, և արդարքն՝ յերկինս զառաքինութիւն։ Մայրն՝ անխախտարհելի է, և արդարն նոյնպէս ՚ի մեղս։ Եւ Դարձեալ՝ արմաւենին յուշ բերէ պտուղ, և մայրն յետոյ պնդի. և փառք արդարոցն ՚ի կատարածի աշխարհիս, և ՚ի պնդիլն անմահութեն, որք բազմացան աւազանաւն աճեցինք. և ծաղկեսցին պէսպէս շնորհօք հոգւոյն։

Տնկեալք եղիցին ՚ի տան տն, և ՚ի գաւիթս այ մերոյ ծաղկեսցին։

Տնկեալք ՚ի վերինն եմք. և ՚ի գաւիթս այ մերոյ՝ առաքինութիւն ծաղկին յեկեղեցի ասէ։

Եւս և բազմասցին ՚ի ծերութեան պարարտութեան. գիրք և փափուկք եղիցին՝ ՚ի պատմել, ուղիղ է տր այ մեր, և ոչ գոյ ՚ի նմա անիրաւութիւն։

՚Ի ծերութեան յորժամ լրումն հեթանոսաց մտցէ, այսա ամ իէլ կեցցէ. գիրք և փափուկք եղիցին ասէ՝ փառաւորեալքն ՚ի նոր ժամանակին, պատմելով զայս թէ՝ ուղիղ է տր այ մեր, և ոչ է անիրաւութիւն և անիրաւութիւն ՚ի դատաստանս՝ նր, և նա է յա քն ամ տր մեր, դատաւոր արդար, որ ասաց՝ դատաստանն իմ արդար է։

Յաւուրն առաջին շաբաթու, յոր հաստատեցաւ երկիր. օրհնութիւն գովութեան ՚ի դաւթի։

՚ի

'Ի յառնելն չարարարաց յաւուր շաբաթու՝ յօրհնելն եւ 'ի հաւատն զհամ Գիտէր արդարոյն, այլ թագաւորեաց երկրոյն յետնոցն, եւ հայեցեալ նմա, զի երկիր եւ այն ... է որ յայտ։ Վասն զի դարձեալ ասացաւ 'ի վեր զօրացուցանէ, եւ յաղթութիւն գտեալ. եւ 'ի վեր երկնից, եւ աստիճանն առաքինութեանն. զի շաբաթացոյց նմա Տր զամն զայն, եւ զերկիրդ եւ անհանգիստ լինել, այլ ... զբնութիւն, եւ 'ի գալ մ... ամին զբնութեան ..., յորում ժամանակի հանգեաւ թագաւորութիւն Տն՝ ծանօթացաւ ամ երկրի։

ՍԱՂՄՈՍ. ՂԲ։



ՏԷՐ ԹԱԳԱՒՈՐԵԱՑ՝ ՎԱՅԵԼՉՈՒ-
թիւն զգեցաւ, զգեցաւ Տէր զօրութիւն՝ ընդ մէջ իւր ածաւ։

Կրկին ասէ զգեցաւ զօրութիւն, մի՝ զարարչականն նախ, եւ այս՝ զնախախնամականն։ Այլ՝ զոր մերս յետ չարչարանացն եւ զյարութիւն մարգարէանոյ, զի տէրութիւն միշտ թագաւոր է, չասաց թագաւորեաց, այլ թէ՝ թագաւորեաց մարմնովն 'ի վերայ տանն յակոբայ. վայելչութիւն մարմնոյն, որ զգեցաւ. զօրութիւն ածեալ ընդ մէջ, ուր բնաւորեալ է զօրութիւն 'ի մէջն որ է տէրութիւն։ Ընդ դարձեալ՝ քօղարկէ զհաւատացեալսն, մի՝ արտաքս վասն չարչարանացն, զի թագաւորեաց մահու եւ դժոխոց՝ յետ մահուն, զի եւ այս՝ կրկին զգենուլն է։

Հաստատեաց զաշխարհս՝ զի մի սասանեսցի. պատրաստ է աթոռ քո՝ 'ի սկզբանէ յաւիտենից դու ես։

Առ եկեղեցին զերկիրն ենէ հաստատեաց, յորում ամբարձան գետք մարգարէիցն, առեալք 'ի վերայ ենմի, եւ սղանեալք այլազգեացն. եւ քրիստ զամ Ծ, զի մի սասանեսցի կռապաշտութեամբ. պատրաստ է աթոռ քո, մարգարէս ասէ՝ քոյն քեզ մնայ աթոռ ընդ աջմէ հօր, զոր ոչ ոք կարէ յափշտակել, եւ հանդերձեալ դատաստանին աթոռն. թէպէտ խոնարհեցար, 'ի սկզբանէ դու ես Տր։

Ամբարձան գետք Տր, եւ ամբարձին գետք զձայնս իւրեանց. յարիցեն գետք 'ի գնացս իւրեանց։

Յորժամ ծովք սահմանեցան, գետք ամբարձան 'ի վերայ ցամաքի. ամբարձան առաքեալքն 'ի վերնատունն. ամբարձին գետք զձայնս իւրեանց, յոմ լեզուս խօսելով. յարիցեն գետք երբ գնացին գետք ընդ աշխարհս 'ի վիճակս իւրեանց։ Դարձեալ

եալ՝ ամբարձման գետք՝ առաքեալքն ’ի վ̄ր դիմաց, և ա̄մ ամե‑ տից, ո̄ն առաքելովն. զձայնս իւրեանց բարձին քարոզութե̄ն. յարիցեն գետք ’ի հանդերձեալսն հրեղէնքն ը̄ դանիէլի. և առաքեալքն յորժամ յառնեն ը̄ առաջ տ̄ն՝ նստելն յերկոտասան աթոռ, ուր և դնեն յուսով աստէն:

’Ի ձայնէ ջուրց բազմաց, սքանչելի են զբօսանք ծովու:

Յորժամ խառնին ը̄ ծով՝ ջուրք գետոց, և ամբոխեն, նոյնպէս և ’ի ձայնէ առաքելոցն զրուեցան հեթանոսաց վարք և կեանք ’ի ծովու աշխարհիս: Այլ և՝ երբ նոր կտակիս իմաստք խառնին ’ի ծով՝ հանդերձեալ խնամոցն, սքանչելի լինին ցնորեալքն ’ի ծովու [illegible]՝ ուսմունք հեթանոսաց:

Սքանչելի ես դու Տր ’ի բարձունս. վկայութիւնք քո յոյժ հաւատարմացան:

Առ հրեշտակս՝ որ սքանչացեալ ասէին, ո՞վ է սա թագաւոր փառաց. վկայութե̄նք քո՝ երկրաւորքս մեք յոյժ հաւատացաք: Սքանչելիքն հաւատարիմ առնէին զառաքելոցն խօսս. այլ և՝ երկնաւորացն ’ի սքանչանալն՝ աւելի հաւատացաք:

Տան քում վայելէ սրբութիւն Տր՝ ընդ երկայն աւուրս:

Եկեղեցւոյ՝ որ հանդերձ քո է, և կամ առաջի քո հրեշտակք. վայելէ՝ զի սրբեսցին ’ի մեզ հեթանոսք աւազանաւն և մեղուցեալք ապաշխարութե̄. երկայն աւուրս, մինչ գալ դու երկրորդ անգամ, քարոզեսցի աւետարանն ը̄ ա̄մ երկիր:

Սաղմոս ’ի Դաւիթ. չորեքշաբաթու:

Յորժամ լուսաւորիչն եղեն վկայք մեծին Տն. և ’ի վ̄ր եկեղեց ասէն յարձակէին բերանք օձին. այլ՝ զանօրէնութե̄ն չար եղբարացն հրէից՝ ասէ մարգարէ, որք հեղին արիւն անբիծ որոց [illegible] և [illegible]՝ և [illegible]՝ չար դատ է ’ի չարչարս եղբարանց եղբարացն, և լոյս տալ՝ որոց եղբարքն. այլ՝ զհալածանս եկեղեցւոյ ասէ: Դաւիթ՝ [illegible] զօրութե̄ն սաղմոսէ ’ի ժամանակս [illegible]:

ՍԱՂՄՈՍ. ՂԳ:

Ա̄ծ վրէժխնդրութեանց. Տր տր՝ վրէժխնդրութեանց յայտնեցաւ:

Լի է ցասմամբ բանս՝ կրկնելով զվրէժխնդիր տ̄ն, որ յայտնեցաւ ’ի յառնուլ զվրէժս անաւրինաց, և զինչ, այլ՝ հրէից սպանողացն իւր:

Բարձր լեր որ դատես զերկիր. հատո հատուցումն ամբարտաւանից։

Բարձր լեր, և յերևանի՛ ասէ ցոյց զըստաստանս քո, Եւ՛ի խաչն, և ձգեա զամենեսեան առ քեզ. Հատո՛ զհատուցումն ամբարտաւանից, իշխանն հպարտ անկցի արտաքս։

Մինչև յերբ մեղաւորք Տէր, մինչև յերբ մեղաւորք պարծիցին։

՚Ի խաբեբայն զեհայ՝ մինչև ցքեզ, որ եկիր։

Բարբառեսցին խօսեսցին զանիրաւութիւն. խօսեսցին ամենեքեան՝ որ գործեն զանօրէնութիւն ։

Խօսէին զանիրաւութիւն, յոծ և ՚ի բռնութիւն հանէին կապանձաւս կորստեան մեր ։ Խօսեսցին ամենեքեան", թէ այլ համարձակին՝ նոյնպէս խօսեսցին ։

Զժողովուրդս քո Տէր խոնարհ արարին, և զժառանգութիւն քո չարչարեցին։ Զայրին՝ և զպանդուխտն սպանին, զորբն կոտորեցին, և ասացին. ոչ տեսանէ զայս Տէր, և ոչ ՚ի միտ առնու Աստուած Յակոբայ։

Դուք զենուլիս, և ՚ի նոցանէ խաբեալ իշխանքն՝ զանօգնականս և զտկարս. և ասացին՝ ոչ տեսանէ զայս Տէր", չարն քան զՏէ" զայս ասել է, թէ՝ ոչ տեսանէ Տէր ։

Իմացարուք անզգամք ժողովրդոց՝ և անմիտք, մինչև յերբ ոչ առնուք ՚ի միտ։

Անզգամք։

Որ տնկեաց զունկն՝ նա ոչ լուիցէ. կամ որ ստեղծ զակն՝ նա ոչ տեսանիցէ։

Այդ է անուն ձեր՝ անզգամ և անմիտ, որ ՚ի կառոյ ստեղծ տեսօղ ակն, և լսօղ ականջ կազմէ, մի թէ ինքն ոչ ունիցի։

Որ խրատէ զազգս, ոչ նա ոչ յանդիմանիցէ. որ ուսուցանէ մարդոյ զգիտութիւն։ Տէր ճանաչէ զխորհուրդս մարդկան՝ զի են ընդունայն։

Որք ոչ ունին օրէնս և մարգարէս խրատէ բանականաւն և դատէ, զձեզ թողու առանց յանդիմանութեան ։ Ո՛ւսուցանէ մարդոյ զգիտութիւն. խօսուն արար զմարդ, և կարգեաց զարարածս առաջի նորա իբրև զդպրոց, և ուսուցանէ սո-

վաւ

վաւ. Տէր ծանուցէ զխորհուրդս մարդկան, որք ասեն՝ ո՛չ տեսանէ Տէր զգործս մեր, և զերծանիմք աւանց տանջանաց։

Երանի՞ մարդոյ՝ զոր խրատես դու Տէր. և յօրինաց քոց ուսուցանես զնա։

Զոր յայս կեանքս տանջես, և յօրինաց քոց ուսուցանես գործով և տանջանօք, 'ի քանի՞ս չլսեն թէ ընդէ՞ր անցանէք զօրէնօքն։

Ցածուցանես դու զնա յաւուրս չարութեան, մինչև փորեսցի խորխորատ մեղաւորին։

Զաւուրն դատաստանի զտանջանս՝ աստէն տանջելովն ցածուցանես, մի օր առնես, զչար օրն հանես՝ որ մեղաւորացն է։ Մինչև փորեսցի խորխորատ մեղաւորի, որ է դժոխքն զոր մեղաւորքն փորեն իւրեանց, մինչ 'ի կատարած աշխարհի ։ Զօրն չար՝ չար իշխանքն՝ որ ակարացան կարծեն ։

Ո՛չ մերժէ Տէր զժողովուրդ իւր, և զժառանգութիւն իւր ո՛չ առնէ անտես։

Զանկարգայեցին, և զոր մեղաւորքն չարչարեն, այլ՝ ներէ ։

Մինչև դարձցին իրաւունք յարդարութիւն. ընկալցին զնա ամենեքեան որ ուղիղ են սրտիւ։

Զոր Սիմաքոս՝ զհետ երթիցեն իրաւանց արդարութե. զի աստ թիւրեալ են իրաւունք, անդ դառնան յարդարութի. զի և յոյ՝ այլ խնայելիք կայ աստէն ․ իսկ անդէն՝ զատ է 'ի Ք̅ն որ է արդարութի մեր, և դատի արդարութ̅։ Ընկալցին ամենեքեան'', աստէն առաքեալքն ընկալան, և հաւատացեալքն իբրև զնաթանայէլ՝ յորում նենգութի ո՛չ գոյ, և անդ՝ զինքեամբ արկանեն իբր անդամք զգլուխ, և արդարութե նորին՝ երևին երեսացն ա̅յ հօր։

Ո՞ յարիցէ ընդ իս 'ի վերայ չարաց. կամ ո՞ հաստատեսցէ ինձ 'ի վերայ այնոցիկ, որ գործեն զանօրէնութիւն։

Ած ասէ զայս, թէ՝ չեմ կարօտ օգնելոյ ինձ ումեք, 'ի վ̅ր չարագործացն արկանել տանջանս. կամ ո՞ հաւասար ինձ կարէ տանջել զչարսն ․ թէպէտ ն̅ք՝ շատ իմացան գործս տանջանաց՝ սրբոց իւրոց։

Թէ

Թէ ոչ Տէր օգնեալ էր ինձ, փոքր մի ևս բնակեալ էր անձն իմ 'ի դժոխս:

Պատկերալքն ասեն, Թէ ոչ օգնեալ էր մեզ 'ի հոլիտ տրտմութեան՝ 'ի սաստիկ վշտացն գլորեալք 'ի դժոխս:

Եթէ ասէի՝ թէ ահա սասանեցան ոտք իմ, ողորմութիւն քո Տէր օգնէր ինձ:

Երբ ասէի թէ՝ ահա սասանիլ կամիմ՝ 'ի տկարութէ մարմնոյս, ողորմութիւն քո ժամանէր առ իս:

Ըստ բազում ցաւոց սրտի իմոյ՝ մխիթարութիւնք քո ուրախ արարին զանձն իմ:

Զոր տկարանայր հոգիս ևս, գտանէր հոգին զթիւն ցաւոյն, և հասանէր 'ի թիկունս մխիթարիչն. և յիշէի զմխիթարութիւնն՝ որ ասաց, երանի սգաւորաց, և ուրախ առնէր զանձն իմ:

Մի՛ հաղորդեսցէ ընդ աթոռ անօրէնութեան, որ ստեղծանէ վաստակս ընդդէմ հրամանի:

Որք անօրէնութե՛ դատին՝ ոչ հաւասարեն քեզ ուղիղ դատաղէդ: Մի՛ յերկարեսցի, յամեսցէ ընդ քեզ՝ որ յաւիտենից ես. Որք մի՛ անուանեսցին չար աթոռակալքն, զի ստանձնաւէ վաստակօք, և դժուար ասէ զհրամանս քո. որ ասացեր՝ դա՛տ արարէք որբոյն, և տո՛ւք իրաւունս այրւոյն. զի առանց կաշառոց հրամայես և անաչառ, և հակառակ հրամանի քո առնեն:

Որսացան զանձն արդարոյ. և զարիւն անմեղ դատապարտ առնէին:

Զևայ, զյովսէփ, զդանիէլ, զյովհաննէս, և զորս. զարիւն անմեղ դատապարտ առնէին, մեք օրէնս ունիմք, և ըստ օրինաց մերոց պարտ է մեռանել:

Եղև Տէր ապաւէն ինձ. Աստուած օգնական յուսոյ իմոյ:

Ասացեալ սրբոցն է բանքս, դանիէլի, յովսեփայ, յովհաննու, և բընութեն:

Հատուսցէ նոցա Տէր ըստ անօրէնութեան նոցա. ըստ չարութեան նոցա կործանեսցէ զնոսա Տէր Աստուած մեր:

Դիւհաց, և հրէից, և հերովդի. ըստ չարութեան նոցա, զի մեծ են չարիք նոցա, վասնզի՝ տիրասպանք են:

Օրհ

Օրհնութիւն գովութեան ՚ի Դաւիթ:
Որով ծանուցանէ Եղիայ ամենայն ՚ի հաւատացելութիւնն զեկեալ և
զերկրպագել, հաւատալ զամ ժողովուրդս և ազգ:

ՍԱՂՄՈՍ. ՂԴ.

Եկայք ցնծասցուք ՚ի Տէր, աղաղակեսցուք առ Աստուած փրկիչ մեր:

Զի ածք հեթանոսաց՝ մոլեալք են և կորուսիչք:

Կանխեսցուք առաջի նորա խոստովանութեամբ. սաղմոսիւք աղաղակեսցուք առ նմա:

Կանխեսցուք, զի գայ օր՝ հարկիմ երկրպագել. և ինքն Դաւիթ և ուխտ՝ երգողաց և երկրպագուաց հրամայեն:

Ած մեծ է Տէր. Թագաւոր մեծ ՚ի վերայ ամ երկրի:

Զի որք ասեն թէ՝ այլ են արարիչք ծովու և ցամաքի, և օդոյ, սուտ են

՚Ի ձեռս նորա են ամ սահմանք երկրի, և բարձրութիւնք լերանց նր են.

Սուտ՝ որք չորից կողմանց իշխանս՝ ասեն դևս ոմանս. ՚ի ձեռս նորա՝ որով արարին, և պինդ ունի. բարձրութիւնք լերանց՝ ուր ելանէին լուսնկ արկանել, նորա են:

Նորա է ծով՝ և նա արար զնա, և զցամաքս ձեռք նորա ստեղծին:

Նորա է ծով՝ և նա արար, և ոչ պլուտոն. և զցամաք՝ ձեռք նր ստեղծին, և ոչ դեմետրէ. այսպէս պատմեն գիրք զերկինս, զհրեշտակս, զարեգակն, զլուսին՝ և զաստեղս. ըղ ծով զցամաք ձեռք նորա ստեղծին, և զմարդն ձեռամբ իւր կազմեալ ասեն:

Եկայք երկիրպագցուք նմա. անկցուք և լացցուք առաջի Տն արարչին մերոյ:

Յայսմհետէ անկցուք և լացցուք առաջի՝ ապաշաւելով զմոլորութիւն:

Նա ինքն է Տէր Ած մեր. մեք ժողովուրդք ձեռին նորա, և խաշն արօտի նր:

Յորում անգամ կրկնէ, զի այլ մի մոլորեսցին. մեք ժողովուրդք՝ փրկեալք ՚ի փարաւոնէ հզօր ձեռամբ. և խաշն, որ յարօտս նր փայփայեալք, ՚ի մանանայն, և յօրէնս, և ՚ի մարգարէս: Այլև՝ հովուին քաջի յի խաշն:

Այսօր եթէ զձայն նորա լուիցէք, մի՛ խստացուցանէք զսիրտս ձեր՝ որպէս ՚ի դառնութեանն:

Մի

Մի՛ լինիք որպէս լուծանն 'ի սինա և զառնացուցին, խըս-տացուցանելով զսիրտս իւրեանց՝ երբեւ զհայրսն, 'ի դառնութեն՝ որ այնպէս կոչեցաւ անուն տեղւոյն:

Յաւուրն փորձութեան յանապատին. ուր փորձեցին զիս հարքն ձեր, փոր-ձեցին զիս՝ և տեսին զգործս իմ զքառասուն ամ:

Փորձեցին՝ ջրով, և հացիւ, և մսով, թէ կարէ՞ Ած տալ, և այն՝ ոչ թուով՝ և աւուրբք, այլ՝ զքառասուն ամ:

Զզուեցայ ընդ ազգին ընդ այնմիկ, և ասացի՝ միշտ մոլորեալ են սըր-տիւք. և նոքա ոչ ծանեան զճանապարհս իմ:

Գարշեցայ, տաղտկացայ, ջանացայ հնարս գտանել փրկութե. ապա ասացի՝ միշտ մոլորեալ են սրտիւք, անյոյս եղեալ ասացի զայս:

Որպէս երդուայ 'ի բարկութեան իմում. թէ մտցեն 'ի հանգիստ իմ:

Երդուեայ 'ի բարկութե ժամն, թէ մտցեն յերկիրն պարգևաց: Այլ՝ զոմ ընդարձակս մեկնէ՝ որ քի՛ծն խօսէր պօղոս, թէ՝ երեք շաբաթ է, մի՝ այն, որ հանգեաւ յաւուրն եօթներորդի. մի՝ հրէից, որ հանգուցանէր յերկիրն պարգևաց, որոյ պատկերք էին շաբաթք աւուրցն և ամացն, և չեղեն արժանի, և կան 'ի տառապանս. և մի՝ մեզ խոստացաւ 'ի հանդերձեալն. և զայսօրն՝ 'ի դաւիթ խոստա-ցաւ յետ այնչափ ժամանակաց. որ թէ կամին լսել այսօր յն, և ոչ խստացուցանել որպէս զհարսն իւրեանց, մտցեն 'ի հանգիստն յաւիտենից. որպէս ակիւղաս և սիմաքոս ասեն, զքառասուն ամ ջանացայ, և ապա՝ երդուեայ, թէ ասէն բացար-ձակ՝ թողու խորոց եմն, որ թէ կամին՝ յոյ բաց է դուռն, զի քաղցր է, քանզի՝ ստեղծող է, գնող է, սնուցող է, փրկիչ է, հայր է, և եղբայր, և որդի:

Սաղմոս 'ի Դաւիթ. 'ի ժամանակի զի տաճարն շինեցաւ:

Յետ ելիցն արարին նաւակատիս, որ և՝ նշանակէ զնորոգումն արա-րածոց, և նորոգութեան, գալստեանն քի:

ՍԱՂՄՈՍ ՂԵ:



ՐՀՆԵՑԷՔ ԶՏԷՐ ՅՕՐՀՆՈՒ-թեամբ նոր. օրհնեցէք զՏէր ամ երկիր:

'Ի Նորանալ իրաց՝ որ յՔս, և զօրհնութիւն նորացուցանելի է, որ է աստ հաւատք 'ի Քս երրորդութիւն, և օրհնութիւն՝ յաւազանին նորածին ծննդոցն. յետ հրաժարմանն 'ի հնոյն՝ նոր կեանք և դաւանութիւնք սկսանիմք. Ամ երկիր, և ոչ հրէաստան միայն:

Օրհնեցէք զՏէր և օրհնեցէք զանուն նորա. աւետարանեցէք օր ըստ օրէ զփրկութիւն նորա:

Զի Քս անուամբն և էութեամբն իւր՝ Տէր է, ոչ որպէս կուռքն՝ որ զանունն ունէին, և ոչ էին Տէր. կռոցն անունն՝ ճշմարտին է, կուռքն անիծելի է, և զօրհնելոյն անուն՝ չէ պարտ դնել. զոր և Քս զիւր անուամբն պատուէ՛ն ընդունել, և ներէր նոցա. աւետարանեցէք, աւետիս տուք աւետարանիչքդ. օր ըստ օրէ՝ կարգաւ զամ օր. զփրկութիւն նր՝ զՔս նր:

Պատմեցէք 'ի հեթանոսս զփառս նր, յամ ժողովուրդս զսքանչելիս նր:

Զփառս՝ զխաչն. և զ'ի նմանէ դատաստանն. յամ ժողովուրդս՝ 'ի հրէայս. զսքանչելիս նր, զոր արար 'ի մէջ նց. զի նշանախնդիրք էին:

Մեծ է Տէր՝ և օրհնեալ է յոյժ. ահաւոր է նա 'ի վերայ ամ կռոց:

Ցուցանի է յոյժ, որ է օրհնեալ. ահաւոր է նա 'ի վր ամ կռոց, զի առ'ի նորա՝ ոչ համբարտեցին. 'ի մտանելն յեգիպտոս՝ շարժեցան ձեռագործքն, և յաւուր խաչելութեան՝ բազումք խորտակեցան ընդ տեղեօք. և առաքեալքն 'ի քաղաքսն, և վկայքն ևս:

Ամենայն կուռք հեթանոսաց դևք են. և Տէր զերկինս արար:

Կուռք մխասւնչք են, և զդևս զդեցեալ են. այլ Տէր զերկինս արար, որ բովանդակէ զերկիր, և զկղզիս՝ ուր կուռքն են:

Խոստովանութիւն և վայելչութիւն է առաջի նորա, սրբութիւն և մեծ վայելչութիւն 'ի սրբութեան նորա:

Խոս

Խոստովանութիւն և մեծվայելչութիւն է առաջի նորա. հազարք հազարաց կային առաջի նորա 'ի հրեշտակաց, որք ասէին զվայելչականն, սբ սբ սբ տր զօրութեանց։ Սրբութի՛ն, որ մեծութեան նր վայելէ, 'ի սերովբէական իմացաւ, և 'ի նմին սրբոց՝ յերկինս. Թէպէտ՝ որդին փոքրկացաւ, ունի զվայելչական փառսն՝ զխոստովանութիւնն և զսրբութիւն, 'ի սբ մարդեղութեան, ըստ ասելոյն՝ որ ծնանի 'ի քեն՝ սբ է։

Մատուցէ՛ք Տն ազինք ազանց. մատուցէ՛ք Տն փառս և պատիւ. մատուցէ՛ք Տն փառս անուան նր։

Հեթանոսաց է պատուէրս, Տր երրորդութեան պատուաբաշխ մատուցանել. ոչ ոչխարս և զոհարակս, այլ փառս և պատիւ։ Զփառս անուան նր, զի Տր է յս քս 'ի փառս այ հօր և հոգւոյն։

Առէ՛ք պատարագս և մտէ՛ք 'ի սրահս նր. երկիր պագէ՛ք Տն 'ի գաւիթս սրբութեան նր. և խռովեսցի յերեսաց նր ամ երկիր։

Առէք պատարագ զձեզ, և մտէք 'ի սրահս նր՝ յեկեղեցի, երկիր պագէք Տն 'ի գաւիթս՝ նախ 'ի սրահն, թերևս 'ի հրեշտակաց տաճարն, և ապա 'ի գաւիթ որ մերձ է յերկինս յեկեղեցի սբ. և խռովեսցի յերեսաց նր ամ երկիր. եօթանասունքն՝ շարժեսցի ասեն, որ է յառաջին կարգացն, խռովելով առաջին վարուցն։

Ասացէ՛ք 'ի հեթանոսս՝ թէ Տր թագաւորեաց. հաստատեաց զաշխարհս զի մի՛ սասանեսցի. և դատի զժողովուրդս իւր ուղղութեամբ։

Զոր 'ի հեթանոսաց քս հրամայեաց աշակերտեցէ՛ք զամ հեթանոսս. հաստատեաց զաշխ՝ որ սասանեալ էին, և ամբոխեալ թէ՝ զո՞ պարտ է պաշտել։

Ուրա՛խ եղիցին երկինք՝ և ցնծասցէ երկիր. շարժեսցի ծով լրիւ իւրով. ցնծասցին դաշտք՝ և ամ որ է 'ի նս։

Ուրախ եղիցին երկինք, զի թէ վասն միոյ մեղաւորի դարձի՝ խնդան, քանի՞ առաւել ընդ բոլորին։ Երկիր ցնծասցէ զի յս կոխեաց զնա։ Զուարճասցի ծով, զի ցամաքեցոյց Տր զալիս նր, և ընկալաւ զհոգին, և ծնանի որդիս այ։ Ծով լրիւ իւրով զուարճասցի, որ դիւօք լի էր, և արդ՝ հոգւովն սրբով։ Ցնծասցեն դաշտք, սիմաքոս՝ ագարակ, զոր Տրն ա-

ասաց

սաց ագարակն Տն է : Ուրախացան երկինք՝ հրեշտակք. ցնծացաւ երկիր՝ հոգիք մերն և արդարոցն՝ որք յերկրի են: Զուարճասցի ծով՝ բազմութիւն մարդկան. սիմաքոս՝ գոչեսցէ ծով, յերկինս հանցէ զօրհնութիւն: Ցնծասցեն դաշտք տալով հաց և գինի ՚ի նիւթ պատարագի:

Յայնժամ ցնծասցեն ամ փայտք անտառի յերեսաց Տն՝ զի գայ, և գայ նա ՚ի դատել զերկիր:

Ծառք՝ թէպէտ և անպտուղք են, այլ ետուն ամն փայտ խաչի, և սա՛ մի՝ և նիւթ շինութեան եկեղեցեաց. և ծառք դաշտի՝ որթ և ձիթենի, նիւթ միւռոնի և խնկոյ. և յայլոց բուսոց, եւ՝ և ՚ի հատից նուէր տյ. ծառք անտառի՝ զի սիրով հայեցաւ ՚ի խաչափայտն և եբարձ յուսն: Զի գայ առաջին գալուստն՝ ոչ ՚ի դատել, այլ ՚ի հաստատել. և դարձեալ գայ ՚ի դատել երկրորդ անգամ:

Դատի զաշխարհս իրաւամբք, և զժողովուրդս ամ ճշմարտութեամբ իւրով:

Զտիեզերս՝ զչորս կողմանս երկրի՝ զհեթանոսս. և զժողովուրդս ամ ճշմարտութեամբ իւրով՝ օրինօք և մարգարէիւք, զի ուղղիչ էին մարգարէք և առաքեալք, զհրէայսն՝ որ ոչ հաւատացին յՔն յոյ դատին:

Սաղմոս ՚ի Դաւիթ. ՚ի ժամանակի զի երկիրն հաստատեցաւ:
Ունի առաջին և երկրորդ գալստեան Տն՝ յորժամ հաստատի երկիր:

ՍԱՂՄՈՍ. ՂԶ:

Տէր թագաւորեաց՝ ցնծասցէ երկիր. ուրախ եղիցին կղզիք բազումք:

Զի ոչ սգալից և հեծալից միայն լինի երկիր, այլ և՝ խնդացէ ընդ մարդկան փրկութի. ուրախ եղիցին կղզիք, ուր ընկալան զաւետարանն, կիպրոս, կրետէս, կարքեդոն, և այլքն:

Ամպ և մէգ շուրջ է զնովաւ. իրաւունս և յարդարութի ուղղեալ է աթոռ նր:

Ամպ և մէգ ՚ի սինա ծածկէր զփառսն, զձայնն լսէին, և զէութիւն ոչ տեսանէին. և ամն մարմինն՝ ամպ, յառաջին գալն, և յերկրորդին անամպ գայ և մգով, որ է լոյս անմատոյց. յիրաւունս և յարդարութի ուղղեալ է աթոռ նր, զի կեղծաւորութի ոչ է ՚ի դատաստանի նր:

Հուր առաջի նր գնասցէ, այրեսցէ շուրջ զթշնամիս նորա։

Զոր դանիէլ ասէ, անիւք կառաց նորա հուր, և գետ հրոյ յորդեալ ելանէր առաջի նր։

Երևեցան փայլատակունք նր տիեզերաց. ետես՝ և սասանեցաւ երկիր։

Խաչն՝ որպէս փայլակն որ ելանէ յարևելից. այլև՝ յաթոռոյ նր ամպ հրեղէն ելանէ, և փայլատակունք հատանեն 'ի նմանէ։ Յառաջին գալն՝ աստղն, և յերկրորդն՝ հուր վառեալ։ Այլև՝ առաքեալքն էին փայլատակունք նր. ետես և սասանեցաւ երկիր, յառաջինն ցնծաց, և յերկրորդն սասանի, և 'ի բաց տայ զմեռեալսն։

Լերինք որպէս մոմ հալեցան յերեսաց տն, յերեսաց տն ամ երկրի։

Լերինք՝ զգալիս է իմանալ, զի հալին հարթին և հաւասարին։ Այլև՝ զօրութիւնքն սատանայի՝ յերեսաց տն, իսկ որք թուք ձգեցին, զի՞նչ լինիցին։ Ոմանք ասեն միայն հրեշտակք՝ և դևք, և մարդիկ մնան, այլ ամ գոյքս հրով հալին, այլ՝ ոչ անկանին յանէութիւն. սակայն՝ չերևի թէ՝ այս այնէ։

Պատմեցին երկինք արդարութիւն նորա. տեսին ամենայն ժողովուրդք զփառս նորա։

Պատմեցին, որպէս 'ի ծննդեանն՝ հովուացն, և 'ի յարութեն՝ կանանցն, երկնաւոր հրեշտակք, նոյնպէս և անդ՝ զարդար դատաստանն վկայելով տն յիր։ Տեսցեն ամ ժողովուրդք զփառս նր, որք տեսին զանարգանս նր, առաւել քան թէ՝ որ տեսին 'ի թաբօր։

Ամաչեսցեն ամենեքեան որ երկիր պագանեն կռոց, և որք պարծին 'ի դրօշելոց իւրեանց։

Զորս ինքեանք դրօշեցին՝ առնօղքն, և դրոշմագեցին, յորժամ տեսցեն հալեալ յերեսաց տն ընդ լերինս։

Երկիրպագեցէք նմա ամ հրեշտակք նր, զի լուաւ և ուրախ եղև սիոն. և ցնծացին դստերք յուդայ վասն իրաւանց քոց տր։

Ըստ պօղոսի՝ յորժամ միւսանգամ մուծցէ զանդրանիկն յաշխարհ, ասէ երկիր պագցեն նմա ամ հրեշտակք, զի լուաւ հրեշտակաց և արդարոց, և մարդ եղև. և ուրախ եղև սիոն վերինն. վասն իրաւանց, զի իրաւամբք փրկեցան մարդիկ. ցնծասցեն դստերք յուդայ, ամ եկեղեցիք, որդիք և դստերք առաքելոցն. որոց ասէր պօղոս, 'ի քն յն աւետարանաւն ես ծնայ զձեզ. և զի՝ ծննդականն է, և ածեցուն եղեն, դստեր անուամբ կոչէ։

Զի դու Տէր բարձրեալ ես ՚ի վերայ ամենայն երկրի. յոյժ բարձրացար ՚ի վերայ ամենայն կռոց:

Զի դաս ՚ի վերայ ամպոց, յոյժ բարձրացար ՚ի վերայ ամ կուոց, յորժամ ցուցանէին թէ՝ աստուածք քո են, որք զամ երկիր պագանեն քեզ:

Որ սիրէք զՏէր՝ ատեցէք զչարութիւն. պահէ Տէր զանձինս սրբոց իւրոց. ՚ի ձեռաց մեղաւորաց փրկեսցէ զնոսա:

Զի զի՞նչ միաբանութիւն է քո ընդ բռնաւորս. պահէ Տէր զանձինս սրբոց իւրոց, մի՛ երկնչիք ասաց, որ զմարմին սպանանեն և զոգին ոչ կարեն. ՚ի ձեռաց մեղաւորի փրկեսցէ, որ է սատանայի:

Լոյս ծագեաց արդարոց. ուղղոց սրտից եղև ուրախութիւն

Արդարոց, զի մեղաւորք խցեն զաչս յիմանալի արեգականն. ուղղոց սրտից եղև ուրախութիւն, որպէս պղծոցն տրտմութիւն:

Ուրախ եղերուք արդարք ՚ի Տէր. խոստովան եղերուք յիշատակի սրբութեան նորա:

Աւետաւորս այսու խոստովանեցէք, զի յիշատակէ զձեզ առաջի Հօր իւրոյ սրբապէս, ասելով ահաւասիկ ես և մանկունք իմ:

Սաղմոս ՚ի Դաւիթ օրհնութեան:
Նոյն Տէր էն յաղագս յայտնութեանն իւր առաջնոյն և երկրորդին:

ՍԱՂՄՈՍ. ՂԷ.

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

Զի հինն էանց, և ամ ինչ նոր եղև. զի սքանչելիս արար, նոր երգ յԵգիպտոս. և զոր ՚ի մարդ լինելն, և յորժամ շրջէին առաքեալք յայլ կերպարանս:

Փրկեաց զնա աջ իւր, և բազուկ սուրբ իւր:

Օգնողի չէր և կարօտ. զամենակալութիւն ասէ աջ, և բազուկ՝ զզօրութիւն:

Եղյց

Եցոյց Տր զփրկութիւն իւր, առաջի ազգաց յայտնեաց զարդարութիւն իւր:

'Ի հասարակ աւուր եւ 'ի խաչն, եւ գիտացին տիեզերք խաւարմամբ լուսաւորացն:

Յիշեաց ողորմութիւն իւրով Յակոբու, ճշմարտութիւն իւրով տանն Իսրայելի. եւ տեսին ամ ծագք երկրի զփրկութիւն այ մերոյ:

Զյակոբ՝ զոր ուխտեաց նահապետաց, 'ի զաւակէ նց օրհնել ամ ազգաց. եւ տեսին ամ ծագք երկրի՛՛, գիտացին թէ՝ այդ է որ արարն զնեղ, եւ նա փրկեաց:

Աղաղակեցէք առ Տր ամ երկիր. օրհնեցէք ցնծացէք՝ եւ սաղմոս ասացէք:

Աղաղակեցէք, զփրկութիւնս զայս՝ որք գիտէքդ՝ ասացէք որք ոչն գիտեն. օրհնեցէք, զի զայս բաւեն մարդիկ հասուցանել մզ:

Սաղմոս ասացէք այ մերում օրհնութեամբ, օրհնութեամբ եւ 'ի ձայն սաղմոսաց:

Սաղմոս ասացէք, զձայնականն շարժելով մատունս. օրհնութիւն՛՛, կրկնել ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ տալ զօրհնութիւն:

'Ի ձայն օրհնութեան կատարեալ փողոյ. օրհնութեամբ ցնծութեան՝ եւ 'ի ձայն եղջեր փողոյ. եւ աղաղակեցէք առաջի թագաւորին Տն:

Կատարեալ յարծաթոյ եւ 'ի պղնձոյ խառնեալ. եւ 'ի ձայն եղջեր փողոյ, եղջիւր եզին, զոր 'ի Սինա լուեան աննիւթ, նիւթեղէն կազմեցին, զուրախութիւն իւրեանց հրապարակաւ յայտ առնել՝ զոր աստ հրամայէ: Եւ մեք մտօք եւ հոգւով իբրեւ կատարելոյն զանձն ձգնութբ, եւ զմիտս՝ իմաստութբ ձուլեալ, եւ մարմնով՝ իբրեւ եղջիւրբ, եւ զօրանալ, եւ յաղթել կարեաց մարմնոյ, եւ այսպէս աղաղակեմք առաջի թագաւորին մերոյ յն:

Խռովեսցի ծովն լրիւ իւրով, տիեզերք եւ ամ բնակիչք նորա. եւ գետք ծափս հարցեն 'ի միասին յերամն:

Որք 'ի ծովու եւ 'ի ցամաքի խառն են բանականաց մարմինք եւ ոսկերք՝ յուզին յոյ եւ խռովեսցին 'ի բաց տալն, եւ ամ բնակիչքն՝ գազանք եւ անասունք եւ թռչունք հալին հրով, եւ զառաջին մարդկայինքն մարմինք. եւ գետք ծափս հարցեն՛՛, յայտնի ցուցանելով զորս ունէին 'ի միրոյսն, առեն առ մեզ է, իբրեւ ձեռօք ցուցանելով: Այլեւ մարգարէք եւ առաքեալք, հին եւ նոր միաբանք միաձայն ցուցին եւ ոչ հեռացոյնք 'ի միմեանց, 'ի միոյ հոգւոյ՝ որ ձեռն էյ ասէ:

Լերինք ցնծասցեն առաջի տն, զի գայ և հասանէ տր ՚ի դատել զերկիր։

Լերինք ցնծասցեն՝ ապականութիք հալեալք և սրբեալք իբրև զդրախտ նորոգեալք։ Լերինք ցնծան, մանաւանդ որ եկեղեցիք և խաչք, և խաչադրեալ կրօնաւորք լեալ են։ Ցնծան, զի առաւել փայլէ շնորհն տն ՚ի մէջ այնպիսի լերանց և դաշտաց։ Այլև՝ լերինք հրեշտակք, և յոյժ սէր ՚ի մարդկանէ. զի գայ և հասեալ է ՚ի դատել զերկիր, հասեալ է ժամանակն դատելոյ զերկիր. զերկու իբր դատի դհոգի, և զմարմին, կամ զչարս և զմարդիկ։ Այլև՝ որք յերկիր անկան մեղօք՝ այլ ուստեք յաշտեցմանց, և զսա սիրեցին։

Դատել զաշխարհս արդարութեամբ, և զժողովուրդս իւր ուղղութեամբ։

Զաշխարհասէրն՝ որ ատացաւ ՚ի չարն կալ, և մէջն չէն յաշխարհէ. այլև՝ բնականաւն զհասարակն, և օրէնօքն և աւետարանաւն՝ որք ժողովուրդ կոչեցան, ուղղիչ ունելով լար և կանոն։

Սաղմոս ՚ի դաւիթ։

[illegible]

ՍԱՂՄՈՍ. ՂԸ։



ԹԱԳԱՒՈՐԵԱՑ, ԲԱՐԿԱՑԱՆ ժողովուրդք՝ որ նստի ՚ի քերովբէս, սասանեսցի երկիր։

Թագաւորեաց՝ զժամանակն ցուցանէ, որ ՚ի մարմնոյ թագաւորեաց. բարկացան ժողովուրդք՝ հրեայք յառաջնումն, և ասեն, ոչ կամիմք թագաւորել քեզ, բայց՝ կայսեր. որ նստին ՚ի քերովբէս, երբ յայտնի նստի ՚ի քերովբէս, թագաւորն բարկանայ, և սասանի երկիր, զոր սարսուռ ունի ՚ի տեսանելն զդատաւորն. և զգեստնոյն կան, նոքա երկիր կոչին. զի և նստեալն մարմնոյ է։

Տր ՚ի Սիոն մեծ է, և բարձր է ՚ի վր ամ ժողովրդոց։

՚Ի վերինն՝ ուր ձայնաչէն զնա՝ մեծ է. և բարձր", որք ոչ գիտեն զնա թէ՝ դատելոց է զնա. զի բարձր է, սակայն տեսանէ, թող երկնչին ՚ի նմանէ։

Խոստովան եղիցին անուան քում մեծի, զի ահաւոր և սուրբ է. և պատիւ թագաւորի զիրաւունս սիրէ։

Ընդ վերինսն և ես խոստովանիմ. զի ահաւոր է, որք պահեցից զանձն, զի ուր մեծ է անկանել անդր՝ 'ի ձեռս Այ կենդանւոյ. և պատիժ թագաւորի', չորս որ 'ի թագաւորն երկու պատճառս ունի հաստատուն մնալոյ, որ ոչ լինի թագաւորն՝ յորժամ խնդին չեղեւ պարտականն առնելոյ ոչ. և երբ զիրաւունս սիրէ՝ որոց է ձեռամբն են. զի այս է պատիժ թագաւորի, և ոչ թագն և ծիրանին:

Դուռ պատրաստեցեր զուղղութիւն. իրաւունս և արդարութիւն յակոբայ դու արարեր:

Զօրէնս ուղղիչս խելք՝ դու հոգացար, որով կարող են առնել իրաւունս և արդարութիւն որդիքն յակոբայ, որով առ դարձեալ յայնժամ, և արդ զաւետարան եսուր:

Բարձր արարէք զՏր Այ մեր. երկի՛ր պագէք պատուանդանի ոտից նորա՝ զի սուրբ է:

Եւ այստէս լինի բարձր. երկիր պագէք ուր խաչն կանգնեցաւ. կարծելով թէ՝ նախատեն, բարձր արարին, զի ոչ է պատուանդանն՝ ուր մարմինն խաչեցաւ, և թաղեցաւ, որ 'ի վերջին աւուրս, երբ ոտք վերջինն է մանն. Տն ոտունն՝ գլուխ, և ոտք մարդկութիւն:

Մովսէս և Ահարոն 'ի քահանայս նորա. Սամուէլ ընդ այնոսիկ, որ կարդային զանուն նորա:

Ամբաստանութիւն է հրէից, զի յարեան 'ի վե՛ր Մովսէսի և Ահարոնի քարկոծել. և սաւուղ զսամուէլ կամէր սպանանել, զայնպիսիսն զԾառայսն, որք և զԾառն սպանին. յայտ է ով նոյ և Տն կամեցան սպանանել: Մովսէս", եբրայեցին ասէ, որ է մովսէս, և Ահարոն. ոչ ասէ որ էին, այլ որ է որ մշտ է, աւագք էին և անդրանիկք Տմ խելք: Սամուէլ է այնոսիկ է, որ յորովայնէ ընտրեցան ամլածինք, խաշակ, յակոբ, և յովհաննէս՝ որք կարդան զՏծ հայր՝ պատճառ գոյութեան, և ոչ զինութեան:

Կարդային առ Տր, և նա լսէր նոցա. և 'ի սեան ամպոյ խօսէր ընդ նոսա:

Եւ այնպէս ոչ երկնչէին 'ի սրբոցն Այ:

Պահէին զվկայութիւնս նորա, և զհրամանս՝ զոր ետ նոցա:

Ոչ վայրապար Տն լսէր նց, այլ զի՝ պահէին զվկայութիւն որ է օրէնքն, կամ խորանն:

Տր ած մր՝ դու լսէիր նց, ած՝ դու քաւիչ լինէիր. վրէժխնդիր ՚ի վր ամ գործոց նց:

Ցո՛ դու լսես. դու քաւիչ. զի յաղօթս կային, և քաւէր զժողովուրդն. և ՚ի թշնամեացն վրէժ առնոյր ոչ ՚ի փարաւոնէ, և յամաղեկայ, և յայլազգեացն, սամուէլիւ. վրէժխնդիր ՚ի վր ամ գործոց նց. զի ՚ի վր այսքան չարեաց գործոցն ընէլ՝ որ առ ած, և յիւրեանս, հաշտեցուցանէին զած, և ՚ի թշնամեաց վրէժ առնուին:

Բարձր արարէք զտր ած մր. երկիր պագէք ՚ի լերան սբ նր. զի սբ է տր ած մր:

Ինձ կրկնի ամ ծունր. նախ՝ պատուանդան, և ապա՝ լեառն, զի յերկիր իջեալ՝ դատաստան առնէ, ապա՝ յերկինս վերանայ, զոր լեառն կոչէ. զի սբ է տր ած մեր՝ յարենէ ամենեցունց, որք ՚ի մէջս իւրեանց մեռանին:

Սաղմոս խոստովանութեն ՚ի դաւթի.
Նոյն դէմք են. ուսուցանէ ըն՝ որդւոց ազգի[illegible] արժան է մտանել առաջի այ, և [illegible] առնել զխոստովանութիւն:

ՍԱՂՄՈՍ. ՂԹ.

Աղաղակեցէք առ տր ամ երկիր. ծառայեցէք տն ուրախութբ:

Առ մինն յո. ծառայեցէք, զի ՚ի նախատակե դիւցն դերծայք. ուրախութբ ծառայել հանէ յազատութե և ՚ի կարգ որդւոց:

Մտէք առաջի նր ցնծութբ. ծանիջիրուք զի նա է տր ած մր:

Յառաջ սրտիւ, և մի խղճիւ յանցանաց ծանիրուք", և զանցեալն թողու ձեզ, յորժամ ոչ գիտէիք:

Նա արար զմեզ, և ոչ մեք էաք. մեք ժողովուրդք և խաշն արօտի նր:

Սուտ են՝ որ ինքնակայք ասեն զերեւելիս, չէաք, և ՚ի նմանէ եղաք. այլև՝ չէաք բարուք, նա արար զմեզ մարմին և անդամ իւր. մեք ժողովուրդք՝ առ նա ժողովեալք, և խաշն՝ զի ոչ միայն ած մեր է, այլև՝ հովիւ քաջ, որ զանձն իւր եդ ՚ի վր մեր:

Մտէք

Մտէք ընդ դրունս նորա խոստովանութեամբ, եւ օրհնութեամբ ՚ի գաւիթս նորա։

Եկեղեցի՝ դուռն է վերնոյն, այլեւ՝ դրունք են նորա՝ հաւատ, յոյս, սէր, և այլ առաքինութիւնք, կուսութիւն, կրօնաւորութիւն, քահանայութիւն. այլ՝ ոչ քեն է կանոն և սահմանն՝ այնպէս մտէք, զի նեղ է։ Խոստովանութեամբ և օրհնութեամբ ՚ի յարկս նորա, խոստովանել ՚ի դրանն, և մտանել օրհնութեամբ ՚ի յարկս, ուր օթեւանք են ՚ի տան Հօրն։

Խոստովան եղերուք նմա, եւ օրհնեցէք զանուն նորա։

Եւ ոչ դիցն. զնա օրհնեցէք, և մի զկուռսն. և զանունն ասէ, զի բնութիւն անհաս է։

Քաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա. ազգէ մինչեւ յազգ է ճշմարտութիւն նորա։

Մի զարհուրիք, յաւիտեան է ողորմութիւն նորա, ողորմութեամբ առաւ զաշխարհս. ազգէ մինչեւ յազգ է ճշմարտութիւն նորա, յեգիպտոսէ մինչեւ յելն ՚ի բաբելոնէ. այլեւ՝ ՚ի մարդկային վարուց՝ ՚ի հրեշտակաց ճշմարտութիւնն, ուր ոչ կանայս առնեն, և ոչ արանց լինին։

Սաղմոս ՚ի Դաւիթ։

[illegible]

ՍԱՂՄՈՍ. Ճ.

Զողորմութիւն եւ զիրաւունս օրհնեցից զքեզ Տէր. սաղմոս ասացից, եւ ՚ի միտ առից։

Այսու օրհնի Ած, սակայն՝ այլ է ողորմութիւն, և այլ է իրաւունք. Տրն ողորմութեամբ քաւեաց զմեղ, և իրաւամբք թափեաց ՚ի սատանայէ։ Օրհնեմք զնա՝ ողորմելով մեզ ՚ի ձեռն աղքատաց. և իրաւամբք՝ ուղիղ հաւատով պաշտեմք զնա. սաղմոս ասացից և ՚ի միտ առից, բերանով ասեմք և մտօք իմանամք, այս է՝ զհամն առնումք։

Ճ.

Ճանապարհ ամբիծ մտադիր եղեայ առ իս. զի գնայի ես յամբծութեան սրտի իմոյ՝ 'ի մէջ տան իմոյ:

Ճանապարհ ամբիծ պահեցից առ է, մինչև եկեսցէ առ իս ամբիծն յա ճանապարհն, և առնու զիս. զի գնայի ես, ոչ գործով միայն, այլև՝ սրտիւ. 'ի մէջ տան իմոյ՝ երբև առաջի իմ և խորանի նորա:

Ո՛չ եդի առաջի աչաց իմոց իրս անիրաւութեան. ոյք առնէին զուրացութիւն, ատեցի:

Ո՛չ եդի իրս անիրաւ ածել զմտաւ. ոյք առնէին զուրացութիւն ատեցի, 'ի սկզբան եդի ամբիծ վարս, և յայլս տեսեալ զուրացութիւն ատեցի. մեղանչէին, և ուրանային, և ոչ խոստովանէին:

Ո՛չ մերձեցաւ առ իս՝ որ թիւրն էր սրտիւ. խոտորեալ յինէն անզգամին, և ես ինչ ոչ փոյթ առնէի:

Ո՛չ մերձեցաւ առ իս որ թիւրն էր սրտիւ, հեռի պահէի յարքունեացն. խոտորեալ յինէն անզգամին, և ես ինչ ոչ փոյթ առնէի. յաղագս այնորիկ թէ գնային յինէն, չէր ինձ փոյթ:

Որ խօսէր գաղտ զընկերէ իւրմէ, զնա [illegible] 'ի [illegible] հալածէի:

Յառաջին ձայնաչէին՝ այլ ոչ տեսանէի, այլ՝ հալածական առնէի:

Որ ամբարտաւան էր աչօք՝ և ագահ սրտիւ, ընդ նմա և հաց ոչ ուտէի:

Յաչացն ձեռնաչէի զամբարտաւանսն՝ 'ի խեթիւ հայելն յայլս. և ագահ սրտիւ՝ կաշառ թէ առնուին, թէ մեծ ոք էր՝ հացակից ոչ լինէի. այլև՝ նա որ շարժէր 'ի սրտի իմում՝ ոչ ներէի, այլ՝ հալածական առնէի:

Աչք իմ 'ի հաւատացեալս երկրի, զի նստցին նոքա ընդ իս:

Ուր լսէի հաւատացեալ իմ և օրինաց՝ բերեալ ածէի ընդ իս նստուցանէի. զի որ զօրէնսն ոչ պահէ՝ չէ հաւատացեալ:

Որ գնայր 'ի ճանապարհ ամբիծ, նա պաշտէր զիս:

Նոքա լինէին իշխանք, և հոգացողք Թագաւորութեան:

Ոչ բնակէր 'ի մէջ տան իմոյ՝ որ առնէր զամբարտաւանութիւն. որ խօսէր զանիրաւութիւն, ոչ յաջողէր նմա առաջի աչաց իմոց:

Ոչ բնակէր գործով ամբարտաւանն. կամ խօսէր անիրաւս՝ չէր յաջողեալ: Զպատկեր տն ունէր Ոզիայ, որոյ առաջի ոչ աջողեցաւ, և ոչ յաջողի տմ՝ անիրաւաց, երբ յուդայի, և որք 'ի բաց կացին յաշակերտութենէն. և սատանայի ոչ յաջողի առաջի ամենատես ածութե նր:

Ընդ առաւօտս սպանանէի զամենայն մեղաւորս երկրի. սատակել 'ի քաղաքէ տն զամենեսեան՝ որ գործեն զանօրէնութիւն:

Այս երկիւղած Թագաւորն՝ առաւօտու դատաստանի պարապել, վերակացու եղեալ, և որսօղս չարագործաց. 'ի գիշերի զոր ըմբռնէին, սպանանէր յառաւօտն ըստ օրինացն: Սատակէր 'ի քաղաքի տն զամենեսեան ոյք գործեն զանօրէնութի, աւելի յենմէ՝ յորոյ վերայ կոչեցեալ էր անուանն տյ: Առաւօտ՝ տրն, որ 'ի ծագման նր՝ տեղի եսաւն տմ չարք, եւ առաւել յեկեղեցւոջ, որ է քաղաք տյ, յորմէ արտաքս անկանին տմ պղծութիւնք և չարիք, և գործ անօրէնութե 'ի քրիստոնէից: Ցորոց իւրաքանչիւր ոք անձն քաղաք է, և միտքն՝ Թագաւոր է. սատակէ զտմ մեղաւոր խորհուրդս, և զմտածմունս, որ 'ի դիւաց սերմանեալ գործեն 'ի մեզ՝ արտաքոյ կամացն քն զգործս, քնէ սպանանեմք, և ոչ կենդանացուցանեմք:

Աղօթք աղքատի. յորժամ հոգասցի՝ առաջի տն հեղեսցէ զխնդրուածս իւր:

Աղօթք՝ խօսք առ տծ, աղքատն՝ Դաւիթ. այլ՝ ազգաւ ասէն, որ է բնութեամբ աղքատ և ողորմ. և յորժամ հոգասցէ 'ի մտաւ պաշտամանն տն հայ, և յերկիւղէ ման առաջի զխնդրուածս իւր՝ առաջի տն ա- ռնել, տր լուր աղօթից իմոց. որ առնէ զխնդրութիւն դիմաց, և զաղերսն հեծութեանց. և ասացեալ է զա 'ի փոխէն յաղօթս:

ՍԱՂՄՈՍ. ՃԱ.



ՏԷՐ ԼՈՒՐ ԱՂՕԹԻՑ ԻՄՈՑ. ԱՂԱ

ղակ իմ առ քեզ եկեսցէ. մի դարձուցաներ զերեսս քո յինէն:

Աղաղակ՝ 'ի Թշուառ բնութենէս. և 'ի բաբելոնէ յերկինս. մի դարձուցաներ զերեսս քո յինէն, երբ յաղամիս:

Յաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո առ իս զունկն քո. յորժամ աւուր կարդամ առ քեզ՝ վաղվաղակի լուր ինձ։

Օրինօքն ասացեր թէ ՚ի նեղութեան անկանիս՝ յիշեա զՏէր Աստուած քո, և փրկեսցիս։ Յորում աւուր կարդամ առ քեզ, ըստ յառաջակայն ասէ, և ոչ զանցեալն, վաղվաղակի բարերարեա առ իս։

Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ. և ոսկերք իմ որպէս խռիւ չորացան։

Հեղձուցանի ծուխ և մաշի, հատանի յօդք և ցրուին. այսպէս տրտմութեամբ նուաղեցաք, և մաշեցան կեանք մեր և ոսկերք. կորուսի զծաղիկն, և խռիւ եղէ, մինչ զի սակաւ կայծն երկնուղի այրէ զիս։

Հարաւ որպէս խոտ՝ և ցամաքեցաւ սիրտ իմ. մոռացայ ուտել զհաց իմ ՚ի ձայնէ հեծութեան իմոյ։

Հողմով խորշակի գերչօքն. և ցամաքեցաւ սիրտ իմ, հողի իմ կարօտի եհան, և դիւրախառն. մոռացեալ ուտել զհաց իմ, հատան ցանկութիւնք կերակրոց. ՚ի ձայնէ հեծութեան իմոյ՝ ընկերաց և անձին, զի դանդաղի, հաց ցանկութեան ոչ կերայ։

Կպեցաւ ոսկր իմ ՚ի մարմին իմ. նմանեցայ ես հաւալուսն անապատի։

Ցանսուաղ կալոյն հալեցան միսք, և կցեցան ոսկերն ՚ի մորթն. նմանեցայ ես հաւալուսն անապատի. յաղագս երկչոտութեան, և անապաստանութեան՝ յիշէ զթշուառս գայս։ Ասեն զհաւալուսնն՝ որդեսէր, մինչ չերթալ ՚ի բունոյն բերելոյս, և ՚ի ննջել ձագուցն՝ սպանանէ կտցաւն, և ապա՝ հանէ արիւն ՚ի լանջացն, և առնու ջուր ՚ի բերանն, և սրսկէ յետ երեք աւուր՝ և կենդանանայ. որպէս որդին սորան զաւակ վա մեղաց, և երեքօրեայ իջեալ ՚ի դժոխս՝ կենդանացոյց ըզբնութիւս, զոր սիրով հարկ զինքեամբ։

Եղէ ես որպէս բու յաւերակի. տքնեցայ՝ և եղէ ես որպէս ճնճղուկ միայն ՚ի տանիս։

Բու յաւերակս՝ և որ յաւերակի բնութիւս յամ բարեայ. հաւալուսն և բուն չեն ոչ կենդանիք, որ և մեք չէաք մեք, այլ սրբեաց ինքեամբ խառնելով. իբրև զճնճղուկ միայն ՚ի տանիս, օրինաւոր հրէայն մեկուսի առնէր զինքն ՚ի

դե

դեղութիւն, զի մի պղծեսցի ը̄ հեթանոսան լինելով. և Տրն՝ զոր ծանօթքն թողին, և կացին ՚ի հեռաստանէ: Պարձեալ յորժամ օձ կամի մտանել ՚ի բոյնն, ելանէ և ձգէ ՚ի տանիսն. և զի՝ սողեցաւ օձն յեռայի բոյնն, և կոտորէ զորդիսն, եւ Տրն ՚ի խաչն, և ձգեաց առ հայր, և յանձնեաց զհոգի անե-նեցուն, ասելովն՝ ՚ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ:

Նախատէին զիս թշնամիք իմ զօրհանապազ, եւ գովիչք իմ զինէն երդնուին:

Բարկացիք առ երեսս երդնուլն, Թէ՝ եղեց երբե-ւիցէ՝ Թէ չառնեմ՞ զոր ասեմ: Այլև՝ դեւք զընութիւն նախատեցին, զոր ՚ի դրախտին նախանձելով գովէին, և դեւքն երդնուլն ՚ի զօրութիւն՝ որով եհայր յաղթեցին: Եւ հրեայքն զՏրն, և գովիչքն յառաջագոյն՝ յետոյ նախատանօք երդնուին:

Զմոխիր ոպ̄ հաց կերայ. եւ զըմպելի իմ արտասուօք խառնեի:

Որջանքէ երբ ասէ՝ զհաց ոպ̄ զմոխիր կերայ, զմոխիր ոպ̄ հաց կերայ, ոչ ախորժելով, և յըմպելին՝ Թափէին ար-տասուքն ՚ի բաժակն:

Յերեսաց բարկութեան սրտմտութեան քո. զի դու բարձրացուցեր, եւ խոնարհեցուցեր զիս:

Զադամ պատկերաւ բարձրացոյց, և ՚ի հող խոնարհե-ցոյց. և զհրեայն բարձրացուցեր՝ հանելովն յեգիպտոսէ, և տմ̄ նշանօքն, և հաներ ՚ի Թագաւորութի, և խոնարհեցու-ցեր ՚ի բաբիլոն. երբ զմանուկ որ՝ վերացուցեալ ՚ի հանգոյր, և յանառակեն զորկուցանէ զգեստն:

Աւուրք իմ ոպ̄ հովանի անցին. եւ ես ոպ̄ խոտ ցամաքեցայ:

Մօտ եղէ ՚ի դժոխք՝ կատարած կենաց, զի շուք դիւրա շարժ է, և յերեկոյին՝ ընաւ պակասի. ոպ̄ խոտ ցամաքեալ՝ որ զձեռս հնձողին կոչէ ՚ի հնձել. և մարդ ծերացեալ՝ զմահ. և լցեալ չափ մեղացն՝ զկորուստ և զջնջումն:

Դու Տր̄ յաւիտեան կաս. եւ յիշատակ քո ազգէ մինչեւ յազգ:

Յաւիտեան կաս, և միշտ յիշես, և մեք խոտ՝ և մնաց մանք ծածկեմք. յազգ հայեաց, և ողորմութիւ վաղագոյն ույց առա մեզ:

Դու

Դու յարուցեալ գետոյս ՚ի վր ունիս · ծածկեալ գետակոյ Նորա հաւ-աստեալ է ծոց:

Զի եօթանասուն ամէ՛ յարուցեալ յերկայնմտութէ, և ՚ի հայրենի աթոռոյն, և ՚ի գերեզմանէն, զի խոստաբանչիւրոյն ժամանակ է · երբեւ հրեշտակն ՚ի զաքարիայ մարգարէն ասէ, մինչեւ յե՞րբ ոչ ողորմեսցիս ՚ի վր եհմ, այս եօթանասուն ամէ: Իսկ սոյն՝ զծածանօթութիւն ասէ՝ որ է հաւատն, զոր վերին Յն ունի, և եկեղեցի արդ:

Հաճեցան ծառայք քո ընդ քարինս նր, և ՚ի հողս նր գթասցին:

Ընդ քար և ընդ հողաւերակացն եհմ · և մը առաքելքն ընդ հողեղէն բնութիւն՝ որ մկրտեալ առնեն քար, երբեւ ըղ վեմն կենդանիս · այլեւ՝ ցանկան դրախտին, թէ հող եցէ անդ պտղաբեր, եթէ քարինս ունի շինուածոյ:

Երկնային հեշտանօք յանուանէ քումմէ · և ամ թագաւորք երկրի ՚ի փառաց քոց:

Կնորոս և արտաշէս՝ արկեալ առ երկիւղ ՚ի նմ · և դեւք յանուանէն քոյ: Այլեւ՝ մաղթէ հեթանոսաց և թագաւորաց երկիւղիւ գալ ՚ի հաւատս, երկնչելով ՚ի փառաց նր, յոր ժամ յարիցէ վանել զերկիր:

Շինէ Տր զսիոն, և երևեսցի փառօք իւրովք ՚ի նմա:

Մարգարէանայ · և երևեսցի", զի որք ո՞չն գիտեն զնծ՝ ՚ի տեսանելն զաւերն եհմ՝ ՚ի տկարութէ նր կարծեն, երբ չէն տեսցեն՝ փառք նր անդ երեւութանան:

Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց, և ոչ արհամարհեաց զխնդրուածս նր:

Կրկին գերեացս՝ հրէից և հեթանոսաց · և ոչ արհամարհեաց զխնդրուածս, թէպէտ մեղաւորք էաք:

Գրեսցի այս յազգ այլ․ ժողովուրդ զոր ստացեալ է՝ օրհնեսցէ զՏր:

Պատմեսցի գովեստ սքանչելիքն յազգ յայլ, ՚ի հեթանոսս յայտ է · ժողովուրդ զոր ստացեալ է ՚ի գինս արեան իւրոյ՝ օրհնեսցէ զնր:

Հայեցաւ նա ՚ի բարձանց ՚ի սրբութէ իւրմէ · Տր յերկնից յերկիր հայեցաւ:

Ցերկ

Յերկնից՝ 'ի սրբութենէ՝, յորժամ երկնաւորքն ևս հայ-ցեցին զերկուն մարդկան. զի անդ միայն հանգչէր, և հայէր։

[illegible]

Յեքոնիայ՝ և սեդեկիայ, և այլոց թագաւորաց, և որք 'ի հայ կազմեաց, և յարշակունեացն էին գերեալք և կապեալք, և որ 'ի դժոխս. և 'ի գործս ձեռաց իւրեանց՝ կապեցին մեղա-ւորք. արձակել զորդիս մահապարտաց, զի մահապարտք մե-ռան, զորդիսն ազատեաց ասելով՝ մի մեռցի որդի ընդ հօր այլև՝ զաղամայ և զեհայի որդիսն։

[illegible]

Զանուն քաջութեան նր 'ի վր գօտւոյ. և զօրհնութե՛, ըղ-ջէնութեի տաճարին, և զենուեն. յեկեղեցի, և 'ի վերինն սիոն։

[illegible]

Յամ կողմանց գերեալք յեհմ, և թշուառաց ծառայել թն, որք հրամանն տան ազատութե. այլև՝ յորժամ 'ի հաւատս ժողովքն, և թագաւորք քրիստոնեայք լինին։

[illegible]

Յայտ է այ, որ ազատեաց զժողովուրդն. 'ի ձմնապարհի զօրութե իւրոյ, եկեալ զօրութեքն այ 'ի գալն յեհմ. զնոհա զութեն աւուրց իւրոց ասա՛ ինձ, ասէ եօթանասուն ամ է իմ, և զեօթանասուն ամ գերի կացի, եօթանասուն ամ աւուր մեղ վայելել 'ի տես եհմի, և կիսօրեայ մի եղիցի կենաց։ Այլև՝ ցանկայ տեսանել զաւերն բաբելոնի։ Դարձեալ՝ այս կեանքս կէս է և պակաս, և այն՝ յաւիտեան, 'ի կէս աւուրցս մեղք մի հաներ յաւիտենականն, զի այն ըն քեզ յարաձգի։

[illegible]

Յամի կարօղես, կէսս և յաւիտեան՝ քո են. մինչեւ նախ զերկինս ասէ, և զաւիթ զերկիր. քանզի երկինք եր-կու են, նա զառաջինն ասէ՝ նախ քան զերկիր, և զաւիթ զնի երկրի զհաստատութիւն։

Նոքա անցանիցեն, եւ դու կաս՝ եւ մնաս յաւիտեան:

Ով տէր ասաց, երկինք և երկիր անցցեն, զի եղականք են, և դու կաս, Տէր, զի անեղ ես:

Ամենեքեան որպէս հանդերձ մաշեսցին. որպէս վերարկու փոխեսցես զնոսա, եւ փոխեսցին:

Ցուցանէ թէ ո՞րպէս անցանեն. ոչ յանգոյութիւն անկանին, այլ՝ իբրեւ զձորձ հնանան, և մաշին. իբրեւ վերարկու՝ հնացեալ՛ի բաց դնի, մաշուկքն փոխէ, և նոր արկանէ, յայտ է այլայլմունք և անկարգութիւնք՛ի բաց դնին և պղտորմունք, և եղականացն այլայլութիւնք անցանեն, և լինի երկին նոր և երկիր նոր. հաստատութիւն՛ի բաց դնի, իբր զմագաղաթ ծալեալ, և երեսք երկրի զարդարեալ մնասցէ:

Բայց դու նոյն իսկ ես, եւ ամք քո ոչ անցանիցեն. որդիք ծառայից քոց բնակեսցեն ՛ի նմա. եւ զաւակ նց յաւիտեան յաջողեսցի:

Ամք քո՝ որ է կենդանութիւն քո, որդին և հոգին. որդիք ծառայից քոց բնակեսցեն ՛ի նմա, սակաւ ինչ յետ մ՝, և յեր կար յեկեղեցի, և զաւակի նոցա յաւիտեան յաջողեսցի, զոր ծնանին յետ մ և յեկեղեցի. յաւիտեան՝ նախ զկեանս քո, և ապա՝ մարմնոյն և անդամոցն:

Սաղմոս ՛ի Դաւիթ:
Ով որ նախ քան զսա սաղմոսն ասէր յաղօթեր գերութեան, այլ այս ամ ասէ, զոր ասէ ծերացեալ Դաւիթ՝ զհատուցմանէ զնոցա, եւ զերիս երգէ եւ զաւակեալքն իւրոյ օրհնութեան յորդորէ ասելով:

ՍԱՂՄՈՍ. ՃԲ.

Օրհնեա անձն իմ զՏէր, եւ ամ ոսկերք իմ՝ զանուն սբ նր.

Մի խաբեսցէ զքեզ ծերութիւն, և մի ցաւք, նախ հոգին՝ որ պատկեր է այ, և ապա՝ ամ ոսկերքն, զոր այլք՝ ներքինս ասեն, որ է կարծր խորհուրդ. և կամ ամ ոսկերք՝ լինամք զմարմինն ասէ, ամ խաղացմամբ ոսկերաց՝ վառել՛ի սէրն այ:

Օրհնեա անձն իմ զՏէր. եւ մի՛ մոռանար զամ տուրս նր:

՛Ի բաց հալածէ զքունն, և զմոռացմանն ամպ, որ եա նա մեզ զամ արարածս, և արդ՝ զմահածինս ես, և զկեր հայրութիւն, և զհոգւոյն սէր նորոգութիւն և զմխիթարութիւն:

Ո՛ քաւէ զմեղս քո. Բժշկէ զամ հիւանդութիւնս քո։

Աղբիւրն օրհնութեան՝ և անկարօտ բնութիւն՝ ներգործէ առ քեզ՝ առ միշտ կարօտ՝ զսովորական բարերարութիւն. քաւէ զմեղս քո, քաւելն՝ անմերձացուցանելն է, յայս հանել զպատճառն, ՚ի սատանայ, և յօձն առաջին ։ Այլ և՝ մի՛ ասի քան, մի՛ առնէ զքեզ. զերկամուսն հանելով զմեղս, և զնա մեղայ՝ զամ հիւանդութիւնս քո, որ ոչ մնաց, որ ոչ հոգւոյ, և որ ոչ մարմնոյ, ոչ անդամալուծին ասէր՝ այլ մի՛ մեղանչէր, առաջինն թողեալ եմ։

Որ փրկէ յապականութենէ զկեանս քո. պսակէ զքեզ ողորմութեամբ և գթութեամբ։

Այս՝ աստ ոչ է, այլ ՚ի յարութեանն պսակէ, ոչ ըստ արժանեաց, այլ ողորմութեամբ և գթութեամբ, ըստ այնմ, իբրև փեսայի եդ ինձ պսակ, և իբրև զհարսն զարդարեաց զիս։ Անդամալուծին ասաց Տէրն՝ թողեալ լիցին քեզ մեղք քո, և առ զմահիճս քո, և երթ ՚ի տուն քո՝ ՚ի դրախտն, և ՚ի պսակեալ յօրինակ բնութեան։

Որ լնու ՚ի բարութենէ զցանկութիւն քո. նորոգեսցի որպէս արծուոյ մանկութիւն քո։

Զմանկութեն տածանելոյն. զի այնք է բարին և այլ ոչ դոյ քան զնա անդր։ Նորոգեսցի որպէս արծուոյ մանկութիւն քո. զոր ասեն՝ մերձ կայ արեգականն, և իջեալ լուանայ յաղբերս, և նորոգի։ Որպէս բնութիւնս հաւատով մերձ կացեալ քի՝ լուանայ յաւազանն և նորոգի։

Առնէ ողորմութիւնս Տէր, և իրաւունս ամենայն զրկելոց։

՚Ի սաղմոսայն է։

Եցոյց Տէր զճանապարհս իւր Մովսէսի, և որդւոցն Իսրայէլի զկամս իւր։

Եւ այն էր մերկել զնոսա յամոյն և ՚ի ծառյն. և տալ զհացն յերկնից իջեալ. կամ թէ՝ զկամս իւր՝ օրինօքն յայտնեաց Մովսէսի, զոր ձեռնապարհ կոչեաց։

Գթած ողորմած է Տէր, երկայնամիտ և բազումողորմ։

Մի՛ լինիք վատայոյս, զի բնութիւն ունի զամ բարութիւն։

Ո՛չ

Ոչ է յաւէտ բարկանայ մեզ տր̃, և ոչ յաւիտեան պահէ ոխս։

Զի չէ̃ ընութեն, այլ՝ զմեզ խրատելով տանջէ սակաւ։

Ո՛չ ըստ մեղաց մերոց արար մեզ տր̃, և ոչ ըստ անօրէնութեանց մերոց հատոյց մեզ։

Մահու էր արժանի բնութիւս ՚ի նմին աւուր․ և ս՝ և հրեշտակն․ զի որ մեղանչէ՝ մեռանի գրեալ է, այլ՝ նա խրատելով խրատեաց, և ՚ի մահ ոչ մատնեաց։

Այլ որչափ բարձր են երկինք յերկրէ, այնպէս զօրացոյց տր̃ զողորմութիւն իւր ՚ի վերայ երկիւղածաց իւրոց։
Որչափ հեռի են արեւելք յարեւմտից, այնպէս հեռի արար ՚ի մէնջ զանօրէնութիւնս մեր։

Թէ դատանէր բարձր քան զերկին, կամ երկայն և հեռի՝ քան զարևելք յարևմտից, այնու ցուցանէր զողորմութիւն տր̃․ որ̃ չկարեմք զբարձրութի երկնի նկատել մօտք և աչօք, նոյնպէս՝ և ոչ զողորմութիւն, որ զօրացաւ խաչելութեամբ քի։ Եւ որ̃ չգիտեմք զորքանն հեռաւորութե արևելից և արևմտից, և ոչ զչափ հեռանալոյն մեր մեղօք յայ̃․ որ կալաւ զձեռանէ մեր, և մերձ տարաւ իւր։ Եւ որ̃ չկայ խաւար յարևելս, և ոչ՝ ուր տծ̃ է՝ մեղք և մախանք։ Այս ՚ի յօհաննէս ուրեք՝ թէ որչափ բարձր են երկինք, այնչափ է միջոցն արևելից և արևմտից, և լայնութի հիւսիսոյ և հարաւոյ։

Որպէս գթայ հայր ՚ի վերայ որդւոց իւրոց, այնպէս գթասցէ տր̃ յերկիւղածս իւր։

Այլ այս ՚ի քո̃ յոյժ գերազանցեաց, յասելն՝ դուք որ չարքդ էք՝ գիտէք պարգևս բարիս տալ որդւոց ձերոց․ զի առ նորայն կշռեալ՝ մերն չար դատանի․ սակայն երկիւղածաց ասէ գթալ, և ոչ աներկիւղից։

Զի նա գիտաց զստեղծուածս մեր, և յիշեաց թէ հող եմք։

Եւ չէ̃ մոռացեալ՝ զի ՚ի հողոյ եստեղծ։

Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր․ որպէս ծաղիկ վայրի՝ այնպէս ծաղկի։

Զի հաւասարեաց անասնոց և նկար բանջարոյ։ Որ̃ ծաղիկ վայրի․ զի ՚ի շատ պատահարաց անկանի, ոչ գոլով ՚ի պարտիզի․ ՚ի ներքոյ պարսպի, և ցանկոյ։

Շնչէ ՚ի նմա հողմ, և ոչ է՛ և ոչ եւս երեւի տեղի նր։

Շնչէ հողմ մահու, և ոչ է երբէք եկն մարդ. և ոչ եւս երեւի տեղի նր թէ ուր չոգաւ։

Բայց ողորմութիւն տն յաւիտեանս յաւիտենից ՚ի վր երկիւղածաց իւրոց, և արդարութիւն նր յորդւոց մինչև յորդիս։

Մխիթարող զասելն շնչէ ՚ի նմա հողմ, հոգի ասէ. Թէ քեւս զոր յառաջն փչեաց. ասա ասէ հոգի անցանէ՝ գնայ, և ոչ է յառաջին կերպարանն մարմինն որ ՚ի գերեզմանս է տեսանել։ Բայց ողորմութի տն միայ յաւիտեանս յաւիտենից ՚ի վր երկիւղածաց իւրոց". յոգիս երկիւղն հոգւոյն է, և յաւիտենական է. ած նր կոչի, երբէ աբրահամու, իսահակայ, յակովբայ, զի չէ մեռելոց, այլ կենդանեաց, ինքն մի կայեաց ճշմարտութին. և ՚ի զաւակն երբէ յաբրահամ, և յակոբայ։ Եւ արդարութի նր յորդւոց մինչև յորդիս. որ դար զամենի ՚ի խոստումն՝ զոր խոստացաւ զաւակացն։

Այլ պահողաց ուխտի նր, յիշողաց պատուիրանաց նր՝ և առնել զնոսա։

Զոր նոքեանք ուխտեցին հրէայքն, և զոր որդիք քրիստոնէից։ Յիշեն զպատուիրանսն նր, և առնեն զնա՝ ոչ բանիւ միայն, այլև՝ արդեամբք։

Տր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր. արքայութիւն նր ամենեցուն տիրէ։

Իւր սեպհական՝ որ անխախուտ է. և անմնայց զաւառ որ թէպէտ՝ անդ ասի արքայութի նր, բայց ամի տիրէ ծովու և ցամաքի։

Օրհնեցէք զՏր ամ հրեշտակք նր՝ հզօրք զօրութբ. որ առնէք զբանս նր ՚ի լսել ձայնի պատգամաց նր։

Ուր զաթոռն ասաց. հզօրք զօրութեամբ, զի անմահք են. որք առնեն զբանն նր՝ զանմնականութեն սահմանն. այլև՝ սպասաւորութի որդւոց ադամայ. լսօղք ձայնի պատգամաց նր, զի սպասաւորի անունն է հրեշտակն. հաւատարիմք են ՚ի սպասաւորութին։

Օրհնեցէք զՏր ամ զօրութիւնք նր, պաշտօնեայք և արարողք կամաց նր։

Յերեք քահանայապետութիւս բաժանին երկնայինքն,

զհրեշտակս ՚ի ներքին կարգէն, և ՚ի միջին կարգէն զզօրու-
թիւնս մեծարէ յօրհնելն զԱծ, զի նոքա ոչ բաւական համար-
ձակ. և զվերին քահանայապետութիւնն՝ ոչ վստահացաւ. այլ
որ մեզ մերձաւորք են, և ուսուցիչք: Սակայն՝ տմ երկնային
քըն կոչէին այս երկու անուամբս՝ հրեշտակք, և զօրութիւնք.
հրեշտակք՝ զի ամենեքեան տծային բանիցն բանաբերք են.
և զօրութիւնք՝ զի ամենեքեան հզօրք են յառնելն զկամս տն:
Եւ տմ մին՝ տմ անձն՝ ունի էութիւն, և զօրութիւն, և ներգոր-
ծութիւն. յորժամ ասէ ամենազօր՝ զկարողութիւն ասէ, զոր
ամենեքեան ունին էութիւն, և զօրութիւն, և ներգործութիւն և
կարող են առնել զկամս նր: Այլև՝ վերինքն կոչին ներքին
դասուցն անուամբ, զի ունին զնոցին շնորհս և զկարս. և
ներքինքն վերնոցն անուամբ ոչ կոչին, զի ոչ ունին զվերնոյն:

Օրհնեցէք զտր ամ գործք նր. ընդ ամենայն տեղիս է տէրութիւն նորա.
օրհնեա անձն իմ զտր:

՚Ի մի բովանդակ զտմ գոյեղէնս՝ յորդորէ յօրհնութիւն,
զի որք գոյակիցք են՝ կցորդակիցք եղիցին ՚ի փառաբանութիւն
տյ. վն՝ ասէ ընդ ամենայն տեղիս. զի ուր և են՝ օրհնեն,
մերձ է և ընդունի զօրհնութիւնն. ըստ որում ասէին քերով-
բէքն՝ օրհնեալ են փառք տն ՚ի տեղւոջ իւրում: Օրհնեա
անձն իմ զտր, յանձնէ սկսեալ զօրհնութիւնն՝ յինքն աւար-
տէ. զի գլուխ ներքին աշխարհիս՝ մարդն է, և բերան գոր-
ծոցն տյ, անշունչ և շնչաւոր արարածոցս, բանական գովա-
վն՝ ասէ օրհնեա անձն իմ զտր, անմահապէս զյաւի-
տենականն. զի և դու օրհնեսցես, և ժառանգեսցես զերկիրն
կենդանեաց. զի զփառաւորիչս իմ ասէ փառաւորեցից. և
որք օրհնեն զտէր՝ ժառանգեսցեն զերկիր:

Սաղմոս ՚ի Դաւիթ. ՚ի վերայ աշխարհագործ արարածոց.
Զայս սաղմոս՝ ասեն առաջին ասէին, զի եկեալ զնախն յարարչութեանն
երկրի, զծով ցամաք, զերկիր ջրեղէն, և զարարիչն երրորդութեանն,
և հետև զտն զբոլոր իւր ՚ի մի, և նորոգութիւն նոցին տյ՝ եկեալ զա
մի լուսաւորք: Այլև՝ ուսուցանէ մեզ՝ ո՞րպէս արժան է օրհնել զԱծ:

ՍԱՂՄՈՍ. ՃԳ:



ՕՐՀՆԵԱ ԱՆՁՆ ԻՄ ԶՏԷՐ. ՏԷՐ
ած իմ մեծ եղեր յոյժ.

Շատ է երախտիքն տյ առ հոգի՝ որ արարին զնա ան-
մահ և պատկեր իւր. և որ կամի մերձ գոլ տյ՝ օրհնեսցէ
զնա

զնա միշտ։ Տր̅ ա̅ծ իմ մեծ եղեր յոյժ. եղերն՝ տնօրէնութեան վայելէ։ Սիմաքոս՝ մեծ ես յոյժ։

Խոստովանութիւն և մեծ վայելչութիւն զգեցար. արկեալ զլոյս որպէս զօթոց, ձգեցեր զերկինս որպէս խորան. և յարկեր 'ի վր̅ ջուրց զվերնայարկս նր̅։

Խոստովանութի և մեծ վայելչութի զգեցար. երբ գի-տացին՝ խոստովանեցին զքեզ որպէս վայելէ մեծութեան քո, և ոչ իբր նախ կուռցն տային. իսկ զգեցարն՝ թէ յարեցաւ 'ի քեզ. 'ի դէմն ոչ մերձենայր, զի չէր անկ։ Արկեալ զլոյս որպէս զօթոց զհանդերձն ըս̅ պօղոսի, որ միայն ունի զանմահութի բնակեալ 'ի լոյս անմատոյց. զոր դաւիթ՝ խաւար և մէգ ասէ, զի երկրաւորան ծածկէն յաչաց. և լոյսն անմատոյց՝ այլէ և ա. զի թէ այս արեգակս խաւարէ զաչս, որքան որ ի-մանալին է. Ձգեցեր զերկինս որպէս խորան դիւրաւ՝ բանիւ միայն, և հեշտ քան թէ որ զմորթ կամ զկտաւ ձգէ սեամբք։ Եւ յարկեր 'ի վր̅ ջուրց, զոր մովսէս 'ի վերոյ հաստատութեան զնէս ջրոյն, և զնէսն 'ի ներքոյ հաստատութեան ասէ, զվեր-նայարկս նր̅, զվերին երկինն արկ ձեղուն 'ի վր̅ ջրոյն։

Որ դնէ յամպս զգնացս իւր. և շրջի նա 'ի վերայ թևոց հողմոց։

Սովոր է ա̅ծ ամպով երևել, որպէս 'ի սինա, 'ի քորէբ, 'ի թաբօր, 'ի վերանալն. և հողմ է թև ամպոց, և նովաւ կա-ռավարէ ա̅ր երագ քան զա̅մ հողմս, խնամելով ամպով զեր-կիր, տալով ջուրս և արգելլով զաւելին, և հանել պտուղ յերկրէ։

Այլ ասեն այլաբանութբ̅, խոստովանութի և մեծ վայել-չութի զգեցար, զմարմնանալն 'ի խաչին. զոր սիմաքոս՝ օրհնութի և բարեփառութի ապաստաւորեցար ասէ։ Խորան՝ եկեղեցի որպէս վերինն։ Արկեալ զլոյս որպէս զօթոց՝ 'ի զննալն 'ի դժոխս. զի խաչեալ ա̅ծ կոչեցար, վ̅ս սիրելոյդ զմեզ։ Յարկեր 'ի վ̅ր ջուրց՝ զմկրտութիւն. վերնայարկ՝ հոգին։ Դնէ յամպս ըզ-գնացս իւր, 'ի մարգարէս. կառավարել 'ի թևոց հողմոց, զոր շնորհք հոգւոյն ներգործեն։

Որ առնէ զհրեշտակս իւր հոգիս, և զպաշտօնեայս իւր 'ի հուր կիզելոյ։

Ո՛չ միայն մարմնոյ և զգալեացս ես արարիչ, այլև՝ ան-մարմնոցն. զի զոր մովսէս ոչ ասաց զառնելն, դաւիթ և ա-մոս ասեն, զոր հողմ, և հուր, և հոգի կոչեն։ Եւ զսար-կաւագունս իւր 'ի հուր կիզելոյ. թէպէտ 'ի բնութենէ չու-

նին

նէին կեղողութեն, այլ՝ հրամանաւ ա՟յ կեցուն երբեւ զստղում՝, և զմեղս կեղուն երբ զեսայեայս: Ընթերցմանն ասէ թէ՝ առնէ զհրեշտակս. և ասէ թէ՝ զմնացեալս զնոսա՝ պարտէ խոսնալ. և սահման նը՟ գուցթի երբեմնակատար, անմարմինս. զոր այլք ասեն լոյս թափանցանց, հուր անկիզանօղ. հողմ անվայրափակ. և այսքան ասելով՝ ՚ի վերնոցն իջանէ ՚ի խոնարհ և ասէ:

Հաստատեաց զերկիր ՚ի վերայ հաստատութեան իւրոյ, զի մի՛ սասանեսցի յաւիտեան:

Ակիւղաս՝ և սիմաքոս՝ ՚ի վերայ առակի ասեն. այլք՝ ՚ի վերայ յառակի. յառակի՝ որ ՚ի մէջ հաստատման. և առակի իւր օրինակաւն որ երեւի ՚ի վեր և ՚ի ներքոյ, և ինքն յինքեան: Մի սասանեսցի յաւիտեան, որն զսասանելն աշխարհ և զմարդիկ հաստատեաց ՚ի մէջ հաւատոյ, զի մի սասանեսցի:

Խորք որպ զգեստ վերարկու է նորա. ՚ի վերայ լերանց կացցեն ջուրք:

Ակիւղաս՝ և սիմաքոս՝ անդունդք և խորք վերարկու ասեն, որ ՚ի սկզբանէ խաւար և ջուր ՚ի մէջ երկրի. և արդ ևս՝ երկիր է՝ յորոյ վերայ ծով կայացեալ է իբրեւ զգեստ: ՚Ի մէջ լերանց կացցեն ջուրք, և լերինք ևս են՝ զոր ծածկեալ են ծովք, և յաղագս այնորիկ՝ գնալի է նաւուց, և ուր ոչ են լերինք՝ ոչ կարէ ելանել նաւ ՚ի մէջ նը: Դարձեալ՝ խորք անհասից կան ՚ի վերայ ծովու խնամոցն այ, ըստ պօղոսի, ով խորք մեծութե և իմաստութե, և գիտութեն այ: ՚Ի մէջ լերանց կացցեն ջուրք, որ առաքելոցն. զի անդ զտեղի առեն անգիտութիւնք, ըստ այնմ՝ մեզ յայտնեաց ած հոգւովն:

՚Ի սաստէ քումմէ փախիցեն, և ՚ի ձայնէ որոտման քումմէ զարհուրեսցին: Ելանեն լերամբք և իջանեն դաշտօք, ՚ի տեղի յոր հաստատեցեր զնոսա:

Տեսողացն յայտնի է, և յորժամ սաստէ՝ փախնուն, երբ սաստ ժողովին ջուրքն. կամ առ նոյնէ հողմովն սաստեն, և ցամաքեցուս. կամ ՚ի ծովն կարմիր. և միշտ ՚ի խաղալեյն լեռնանայ՝ կուտակե ի յեզրն, և տեսեալ զսահմանն զաւազ՝ պատկառեալ սանձահարի: Այլև՝ դևք ՚ի ծովու աշխարհէ ՚ի սաստէ փախնուն, և ՚ի ձայնէ որոտալոյ հոգւոյն ՚ի վերնատանն, և անտի ընդ տիեզերս ելանեն լեռնանան, յանդգնեն, և դարձեալ սաղրին ՚ի տեղի յոր հաստատեցեր զնա:

Սահման եդեր՝ և ոչ անցանեն, և ոչ ևս դառնան ՚ի ծածկել զերկիր:

Ցուցմունք առնուն զօրանջմանս:

Առաքեցեր զաղբերս ընդ ձորձորս. 'ի մէջ լերանց գնասցեն ջուրք:

'ի ծովէ հանես ջուր, և ընդ երակս երկրի՝ պատառ-մամբ լերանց ընդ ձորամէջս առաքես, ընդ մէջս լերանց գնալով նլաննն. և թէ՝ յի՞նչ պէտս:

Արբուսցեն զամ գազանս վայրի. յագեսցին ցիռք 'ի ծարաւս իւրեանց:

Ցիռ՝ իշավայրին: Այլև՝ յանսահման ծովէ հոգւոյն առեալ առաքեալքն 'ի մէջ օրինաց և մարգարէից՝ զիմաստու-թիւն աղբերացուցանէին հեթանոսաց, և ճշմարիտ իմաստութեն զգազանաբարոյս և զվայրենամիտս 'ի հեթանոսաց յագեցու-ցանէին:

Անդ թռչունք երկնից բոյնս դիցեն. և 'ի միջոյ վիմաց տացեն զձայն իւրեանց:

Ե՞նչ են, և ձագուց նց՝ պէտք են աղբիւրք, երկրո-տացն՝ որք 'ի միջոյ վիմաց իշխեն տալ ձայն: Իսկ՝ յեկեղեցիս թռչունք՝ թեթևքն թևօք հոգւոյ 'ի մեղաց, և 'ի մէջ եր-կուց կտակաց վիմաց՝ տացեն զձայն օրհնութեան այ:

Արբուսցէ զլերինս 'ի վերնատանց իւրոց. 'ի պտղոյ գործոց իւրոց լցցի երկիր:

Ցամաքոց շտեմարանելոց, 'ի պէտս կենդանեաց՝ որք անդ: 'ի պտղոյ գործոց լցցի երկիր, որ զերկիր առոգէ անձ-րև՝ զոր գործեն մարդիկ, լնու երկիր բարութեամբ: Արբու-ցանէ զլերինս, դարձեալ՝ զառաքեալսն 'ի մարգարէիցն և 'ի հոգւոյն, և 'ի պտղոյ նոցին բանիցն՝ որովք գործեն, լնու բանական երկիր:

Բուսուցեր խոտ 'ի կերս, դալար 'ի ծառայութիւն մարդկան:

Զպէտս անասնոց, որք կերակրեալ ծառայեն մարդկան: Եւ որ անասնաձև և անգէտ են մարդիկ՝ բանք այ իբրև զխոտ են նց. յորժամ իմաստնանան՝ հանել լինի անտի հաց 'ի կենդանի երկրէ, և գինի ուրախարար. վայ՝ ասէ:

Հանել հաց յերկրէ. գինի ուրախ առնէ՝ իւղ զուարթ, և հաց հաստատէ զսիրտ մարդոյ:

Հաց 'ի մբ կուսէն, գինի ուրախ առնէ, արիւն տն՝ զի այ է, և ոչ անասնոյ. իւղ զուարթ՝ միւռոն, որ զհոգին մբ ունի. և հաց՝ մարմին տն. զի որ ուտէ՝ զմահ ոչ ճաշակէ. և այս է իմաստութի այ. ուտել և է մարդոյ կենդանութի, և ուրախութի, և զուարթութի. և 'ի նոցանէ, և նոքօք՝ եա ըղ հոգևորն և զմարմնաւորն:

Յ[illegible]

Եօթանասունքն՝ ծառք անտառի զի ոչ մայրի, պատն ոք, և ոչ մարդ խնամէ և սնկէ, յագեցին յանձրևաց՝ որ յամպոց. և մայրք լեռնանուս, որք են հաստատեալք, անկեալք 'ի տան ան, որ թէպէտ՝ անպտուղք, այլ՝ պտղաբերոք եղեն յագեալք 'ի հողւոյն։

Ա[illegible]

Բայց արարիչն, սիմաքոս՝ արիւն արատայ տունն է նոր. 'ի պէտքէ առէ մարդկային շինուածս, և թռչնոց 'ի բոյնս։ Եւ որ մանունք են և երկչոտք՝ մերձ առ արարչին բոյնս՝ ձագս հանեն, զգուշանալով յօձից՝ զոր ունէ արարիչն Դարձեալ՝ յեկեղեցի Թռչունք երկնից հրեշտակն, և հրեշտակացեալ մէք, որք խնամեն և սնուցանեն որդիս լուսոյ և տանջեան. և բոյն տառեղն քո՝ եկեղեցի առաւէն նոցա, նոյնա և 'ի նմանէ զօրացեալք լինին. զի ողջախոհ է հաւս այս, և եկեղեցի մայր և քաղաք ողջախոհութեան։

Լ[illegible]

Զորս առեն երկչոտ գոյ՝ լեռն ոչ ունելով, 'ի գաղաթունս լեռանց վստահանան ձորակեր և ընկղմեալ ղեղջ խելա և նապաստակ 'ի փոքր կենդանիս են երկինւղեն. որև՝ զօրութք կոչին, 'ի մէջն առաւելինն։ Եղջերու՝ միակեր. նապաստակք գողք և խաբեբայք, ղղջան, և յեկեղեցի առաւելինն։

Ա[illegible]

Զի նոր աւուրքն են ամիսք և չափ ժամանակաց։ Արեգակն ծանեաւ", ոչ բանականաւ, այլ՝ կարգն 'ի սահմանս արարչին, որ երևմանն տիւ գործէ, և թաղմանն գիշեր. և խոնարհելովն և բարձրանալովն և հաւասարութբն՝ զորս եղանակս։ Լուսինն օրէնքն, արեգակն աւետարանն. լուսին ժամանակաւ՝ ոտ և օրէնքն էր. և արեգակ քո յաւիտենական. որև՝ ծանեաւ զժամանակ մտանելոյ խորոյ յԾ՝ զաւակինն և զերկրորդն։

Ա[illegible]

Խաւար պատահմամբ, իբր շուք շինուածոյ. խաւար 'ի վերայ անդնդոց. և եղև գիշեր՝ մուտ արեգականն. 'ի նմա գնան ամ̃ գազանք անտառի:

Կորիւնք առիւծուց մռնչեն՝ և յափշտակեն. և խնդրեն յԱյ կերակու րս իւրեանց

Ո՛չ միայն ասէ 'ի հանգիստ մարդկան է գիշեր, այլև՝ գազանաց տայ համարձակութիւն՝ շրջել և կերակրել: Խաւար սատանայ՝ որ ոչ արարաւ խաւար, այլ լոյս. արարաւն՝ 'ի վերայ լուսոյն է. այլ ինքն եղև գիշեր. և 'ի նմա կամին գը-նան ամ̃ դևք՝ որ յանտառս 'ի մեհեանս բնակեն, և 'ի կռա-պաշտսն, մինչեն՝ ով պետրոս ասէ՝ ոսոխն ձեր սատանայ իբրև զառիւծ գոչէ. և խնդրեն յայս հօտէցն կերակրել մե-ղօք և չար գործովք:

'Ի ծագել արեւու ժողովեցան, և 'ի որջս իւրեանց դադարեցին.

'Ի բոյնս, կամ իբրև 'ի մայր դիմեն յանտառս. 'ի ծա-գել արեգական քո՝ առ հեթանոսս, հաւաքին դևք առ անհաւատսն:

Ելանէ մարդ 'ի գործս իւր, և 'ի վաստակս ձեռաց իւրոց մինչև յերեկոյ:

Հանգչել, և ոյժ առնուլ, զի վաստակի մինչև ցերե-կոյ, կատարելով զհրամանն՝ ուտել զհացն 'ի քրտանց երե-սաց: Եւ ամ̃ որ բանական է՝ քի՛ ուսեալ զգործելեան, գը-նան լուսովն մինչ օր կայ:

Որպէս զի մեծ են գործք քո Տր. զամ̃ ինչ իմաստութեամբ արարեր. և լցաւ երկիր արարածովք քովք:

Մեծ են քան զամ̃ զինչ ասելս. զամ̃ ինչ իմաստութե արարեր՝ ուղղով. լցաւ երկիր ստեղծուածովք քո. ոչ վայրապար արարեր զերկիր զներքին և զվերին, այլ լցեր ստեղծուածովք՝ որ 'ի քէն եղեն՝ իմանալի և զգալի:

Այս ծով մեծ և ընդարձակ. 'ի անդ են սողունք, որ ոչ գոյ թիւ, գա-զանք մեծամեծք և մանունք. 'ի անդ և նաւք գնան. վիշապն զոր ստեղ-ծեր խաղալ նմա:

'Ի ծովս զսքանչելեան մեծ. մեծ է քան զցամաք, որպ

ոչ

ոչ ասաց մեծ՝ զի յայտնի էր. անդ որ՝ հանգիստ է կենդանեաց որք են 'ի նմա, զոր հանգիստ ասէ: Սիմաքոս՝ մողունք և գազանք, մեծքն և մանունք կան առ իրեարս, և ոչ ապաւէն 'ի միմեանց. սողնոցն ոչ գոյ թիւ. զոր այլք ասեն վեցհարիւր ազգ 'ի ջուրս, և չորսհարիւր 'ի ցամաքի. և այլք վեց հազար. թող զայլսն՝ որոց գոյութի 'ի գտայութենն ոչ անկանի: 'Ի սմա և նաւք գնան. ոչ միայն սողնոցն և գազանացն, և կիտոսացն է պէտք ծովն, այլև՝ նաւաց գնալոյ ճանապարհ, 'ի պէտս մարդկան: Վիշապն զոր ստեղծեր, լևիաթան մեծն խաղալ նմա, զի զբօսնու նմա՝ որ է ջրոյն անդնդոց: Ծով՝ աշխարհս. սողունք՝ թագաւորքն 'ի մեջս. գազանք մեծ և փոքր՝ աշխարհակալք և իշխանք. նաւք՝ հոգևոր և մարմնաւոր վաճառականք. վիշապ՝ սատանայ. խաղալ նմա՝ հրեշտակք ըստ յօժայ. և առաքեալք, և մեք եմ: Դարձեալ ծով՝ երկինք. սողուն՝ աստեղքն. գազան՝ կենդանատեսակքն. նաւք՝ արեգակն և լուսին. վիշապն՝ որ ասեն զամ երկիրս բոլորեալ է, զորոյ զտուտն և զգլուխն ռաստ և զանապ կոչեն աստեղագէտքն, և զխաւարումն արեգական և լուսնի անտի ասեն. և խաղալ նմա աստեղաբաշխքն: Ծով դարձեալ՝ ասեն զոր երկրորդ աշխարհ կոչեն զմարդիկ. սողունք՝ ժիժմունք խորհրդոցն. գազանք մեծամեծք և մանունք, մեծ՝ ցասումն. փոքր՝ ցանկութիւն. նաւք գնան, հոգևոր և մտաւոր խմացմունքն. վիշապ մեծ՝ ցանկութի որդէծնութե. խաղալ ընդ նմա՝ կուսութիւն արհամարհելով, կամ աւելի ցնորիւք մարմնասէրք առժամանակ մի:

Ամենեքեան զքեզ ակն ունին. տալ դու դոցա կերակուր նց 'ի ժամու:

Զպէտս և զկարիս բնաւոր ցուցանելով սպասեն, և զտուեալն անդիտաբար ընդունելով 'ի ժամու:

Տուր դու նոցա՝ և ժողովեսցեն. բանաս զձեռն քո, ժողովեսցեն զամենեքեան լնոյս քաղցր:

Ուստի և քեզ է փոյթ. բանաս զձեռն քո՝ իբր սեղան ամենունեան՝ լցուցանես քաղցր կամօք, և ոչ պարտամամբ, բաց 'ի դիւաց՝ որք 'ի քէն ոչ խնդրեն զարժանն.

Դարձուցանես զերեսս քո 'ի նոցանէ՝ և խռովին. հանես զոգի 'ի նոցանէ, պակասին և 'ի հող դառնան:

Դարձուցեր զերեսս քո յաղամայ, և ապա մեռաւ. և

տմ

ամ՝ ինչպ և կենաց բաժանումն 'ի քէն լինի. որ խառնի ցաւօք, և քաղի կենդանութեան. սակայն՝ հանել վհոգելս բանս կանաց է, և պակասեալ 'ի կենաց՝ հող լինելն:

[illegible]

Զանձեղէնդ. սատանաս ընծ՝ յարութեան, զոր խոստացար 'ի գիրս հինս, և յաւետարանս. և նորոգես՝ երբ աւազանաւն զմարդիկ. զերեսս երկրի՝ զայլայլմունս 'ի բաց հանելով, զարդարի անապականն:

[illegible]

Զոր տան արարածք յաւիտեան վկայելով, և 'ի նմանէ առնելով և ոչ տալով: Տէր ուրախ եղէցի յարարածս քո, զի սատանայ այլ ոչ տայ մեղանչել մարդկան՝ որով տրտմիլ տայի քզ:

[illegible]

Այժմնքն՝ ոչ ուրախ լինի ամ՝ զի երկրպագի, այլ զի՝ փրկեալս տեսանէ զմարդիկ: Զի նա այնպիսի է որ հայր յերկնի, և տայ դուզալ, և մերձ գալովն ընու հրով և ծխով զերկիր, երբ առ սինայ լերամբն. թերևս հայր և դուզալ տայ՝ 'ի բաց տալով զանուեալս, և ծխին լերինք 'ի հաւատաւորն. և ապա նորոգի երես երկրի:

[illegible]

'Ի կեանս՝ և ոչ յետ մահու, զի ոչ ոք է որ 'ի մահու յիշէ: Դարձեալ՝ 'ի կեանս իմ զ յարութիւն և զանմահութիւն ասէ, վասն՝ իմ ասէ, զի այս չէ իմ, այս անասնոց է. մինչև եմ ես ը տյ. զի մինչ անասահման է. զի այլ ոչ գոյ մահ՝ որ խափանէ զօրհնելն:

[illegible]

Զի չեցէ անգիտաբար, և ոչ 'ի բերանոյ՝ որ սուտ և ճշմարիտ եղանէ. և ես ուրախ եղէց 'ի տր 'ի տեսս նորա վայելմամբ:

[illegible]

Պակասմն 'ի մեղանչելոյ · եւ ամբարիշտք մի եւս գտցին, զի հատեալ մեղացն եւ ամբարշտութեանն՝ ոչ անուանի նոքօք 'ի մարդկանէ մեղաւոր : Պակասեսցին մեղք՝ առաջին գա լրստեալքն, եւ սպառին երկրորդքն · եւ յոլովք 'ի հրէից եւ 'ի հեթանոսաց՝ անկուր մնան խմաստից. այլ դու անձն իմ՝ որ արժանացար առնուլ զձաշակս զայս, օրհնեա զՏր: Զօ-րեքինեաց օրհնեա անձն իմ զՏր, որ է չորեքնկեթեայ բնութես մեռուամ նորոգումն, առաքելովք, մարգարէիւք, աւետարանչօք, եւ վարդապետօք:

Ալէլուիա :

Ա[illegible] ժողովրդեան եւ [illegible] 'ի [illegible] ալէլուիայն: Զի ալէլուիայն՝ օրհնեցէք զՏր [illegible], կամ գովեցէք զՏր: Այլ՝ [illegible] հեթանոսաց, եւ [illegible]՝ զՏր [illegible], [illegible]: Զի [illegible]՝ [illegible] նմա զՏր՝ [illegible] ալէլուիայն. զՏր եւ [illegible]:

ՍԱՂՄՈՍ· ՃԴ:

Խոստովան եղերուք Տեառն՝ եւ կարդացէք զանուն նր · պատմեցէք 'ի հեթանոսս զգործս նր:

Սիմաքոս՝ քարոզեցէք ասէ զկարգաւն· պատմեցէք 'ի հեթանոսս", զի քարոզի հեթանոսաց [illegible] օրէնք:

Օրհնեցէք՝ եւ սաղմոս ասացէք նմա· պատմեցէք զամ սքանչելիս նր · եւ գովեցարուք յանուն սբ նր:

Քրիստոնէական անուամբ · եւ ոչ յինչս եւ 'ի կալուածս հպարտացեալք· քանզի՝ զգովեցարուքն՝ պարծեցարուք գրեաց սիմաքոս· որ է այն թէ՝ որ պարծի 'ի Տր պարծեսցի:

Ուրախ եղիցին սիրտք այնոցիկ՝ որ խնդրեն զՏր · խնդրեցէք զՏր՝ եւ հզօրք եղերուք· խնդրեցէք զերեսս նր յամ ժամ:

Զի որք խնդրեմն՝ գտանեն զնա, եւ նա ուսուցանէ թէ խնդրեցէք նախ զարքայութիւն· եւ ուրախանան սիրտք, զհայրենի տունն լսելով: Խնդրեցէք զՏր եւ հզօրք եղերուք· զի զօրութե պէտք ունիմք ամենեքեան, զի տկարացաք եհայիճ· յամ ժամ խնդրել պարտ է զերեսս նր, զխնամակալութի նր:

Յիշեցէք զսքանչելիս նորա՝ զոր արար. զարուեստս և զիրաւունս բերանոյ նորա։

Զնոյնն՝ և ասէ ես անուն նորա։ զարուեստսն՝ զորս ձեռս ընէր տէրն. և զիրաւունս բերանոյ նոր, բերանով ասէր, և իրաւանայր գործով։

Զաւակն աբրահամեան ծառայք նորա, որդիք յակոբայ ընտրեալք նորա։

Ծառայք, 'ի հինն միջնորդք մարգարէքն՝ որ և ծառայք, և 'ի նոր՝ առաքեալքն ընտրեալք. որ ասաց տէրն յո բոլյնէ ընտրեցի զձեզ։

Նա ինքն է տէր ած մեր. յամ երկրի են իրաւունք նորա։

Ցո քո օրէնօքն զծառայս առաքեաց, և աւետարանաւն՝ զընտրեալսն, որովք եղեն յամ երկրի իրաւունք նորա, զի ընդ ամ երկիր ել բարբառ նոցա։

Յիշեաց յաւիտեանս զուխտ իւր, և զբանն՝ զոր պատուիրեաց մինչև 'ի հազար ազ։

Յիշեաց անմոռաց, և զբանն՝ զոր հազար ամաւն զյաւիտեան ասէ յիշել, և ոչ մոռանալ։ Դարձեալ՝ զի զուխտն աբրահամու՝ կրկնեաց առ դաւիթ՝ յիշելով զկնի հազար ամին դաւթի. զոր սահմանով եդ զմինչն, և զնորա սկսեալ՝ զերկրորդ դալուստն եդ սահման, զոր պօղոս ասէ, քանիցս անգամ՝ թէ ուտիցէք զմարմինն և ըմպիցէք զարիւնն՝ ըզ մահ տն պատմեցէք, մինչև եկեսցէ նա. վն՝ ասէ։

Զուխտն զոր եդ ընդ աբրահամու. և զերդումն իւր ընդ իսահակայ։

Զերդումն երկրորդ՝ առ իսահակ. և զոր աբրահամու, և իսահակայ։

Հաստատեաց զա յակոբ զհրաման իւր. և զա իսրայէլ զուխտ իւր յաւիտենից

Զոր և իմն կոչեաց, զոր 'ի հազարեկին դաւթի՝ սկըսաւ որդւոյն 'ի վերնատանն։

Ասէ՝ քեզ տաց զերկիրն քանանու, զվիճակ ժառանգութեան ձերոյ։

Մեծի

Մեծի ուխտին գրաւականներ տային զքանանացւոցն երկիրն, զոր վիճակ ձեր տաց․ քանզի՝ սեմայ էր վիճակն, և զոլորեցին քամայ և քանանու ազգքն, ՚ի դառնալն յաշտարակաշինութենէն, և ՚ի ցրուելն ՚ի վերայ երկրի, զոր խոստանայ՝ անդրէն դարձուցանել․ որև՝ առաքելոցն տուեալ, լինել միջնորդ հաւատոց նոր:

Զի էին նոքա թուով սակաւք, նուազք և պանդուխտք ՚ի նմա:

Պատճառն չտալոյ նոցա առժամայն՝ աբրահամու, իսահակայ, և յակոբայ, զի սակաւք էին, չկարէին ժառանգել, նուաղութիւնքն՝ որ պանդխտութեամբ շրջէին խորանօք: Նոյնպէս՝ առաքեալքն որք եղեն հարք ազգաց բազմաց անթուոց նուաղք և պանդխտաք էին:

Անցին նոքա ազգէ յազգ, ՚ի թագաւորութենէ ՚ի ժողովուրդ այլ:

Առ աբիմելէք ՚ի փղշտի, և յեգիպտոս առ փարաւոն․ և առաքեալքն ՚ի հրէից՝ առ հեթանոսս, և յայլ և յայլ թագաւորութիւնս:

Ո՛չ եթող մարդկան զրկանել նոցա․ հանդիմանեաց զթագաւորս վասն նոցա:

Թագաւորացն ոչ ետ թոյլ մերձենալ ՚ի սառայ․ և առաքելոցն ասաց մի՛ երկնչիք ՚ի սպանողացն զմարմին, և զոգին ոչ կարողացն:

Մի՛ մերձենայք առ՝ յօծեալս իմ․ և ՚ի մարգարէս իմ մի՛ չարանայք:

Հոգւով և բանիւ այլ օծեալք էին․ և ՚ի մարգարէս իմ՝ մի՛ մեղանչէք, ՚ի բանն ասէ տուր զկինդ, զի մարգարէ է, և արասցէ աղօթս վս̄ քո:

Կոչեաց սով յերկիր նոցա․ զամ̄ զօրութիւն հացի եբեկ:

Մեղքն կոչէ զպատուհասն: Զամ̄ զօրութիւն հացի, ոչ կարէ լնուլ զանօթի հացի՝ ունող և բանջար․ եբեկ, զի առ լրանալն՝ ոչ յագենային․ և հեթանոսք սովեցան յառաջին վարուցն, և յօրինացն իւրեանց:

Առաքեաց առաջի նոցա այր․ ՚ի ծառայութիւն վաճառեցաւ յովսէփ:

Խնամքն այդ, որ թէպէտ՝ և նոքա վաճառեցին, պահեաց

զնա

զնա. այր կոչէ՝ Թէև տղայ էր հօթնևտասան ամեայ. զի առաքինութիւն առնէ այր, զոր լի ունէր նա։

Խոնարհ արարին 'ի կապանս զոտս նր. և անց ընդ երկաթս անձն նր։

Զուր ածելով կնոջն չնաբարոյ 'ի պատճառս ողջախոհութեան՝ անց ը երկաթս անձն նր, զհասակն ասէ մեծն, կամ զտրտմութի հոգւոյն։

Մինչև եկեսցէ բան նր. և բան Տն փորձեաց զնա։

Երազոյն բանն, և բան Տն փորձեաց զնա, զի յանձնեաց զինքն 'ի մատռուակն, զորոյ զերազն բարւոք մեկնեաց։ Դարձեալ՝ բան Տն փորձ եցոյց, և մեկնեաց 'ի կատարմամն։

Առաքեաց թագաւոր, և եհան զնա. իշխան ժողովրդեան եթող զնա։
Կացոյց զնա տէր տան իւրոյ. իշխան 'ի վր ամ ստացուածոց իւրոց։

Յայտնի է։

Խրատել զիշխանս նր իբրև զինքն. և զծերս նր իմաստունս արասցէ։

Զիշխանս եգիպտացւոցն՝ իբրև զինքն առնել. զծերս նր իմաստունս արասցէ. զի երկրորդ կացոյց իւր փարաւոն, ոչ որ ամբարձցէ զձեռն իւր և զոտն 'ի գործ, կամ 'ի ճանապարհ, առանց քո։

Եմուտ Իսլ յԵգիպտոս. յակովբ պանդխտեցաւ յերկիր Քամայ։

'Ի պատճառս տեսլեանն յովսեփու, և 'ի սովելն սովուն յերկիրն քամայ. զի մեծակ քամանու է եգիպտոս։

Աճեցոյց զժողովուրդ իւր յոյժ, և զօրացոյց զնա քան զթշնամիս իւր։

Զի խնայեաց մանկաբարձիցն. և զօրացոյց զնա՝ քան զթշնամիս իւր, քան զեգիպտացիսն։

Դարձոյց զսիրտ նր ատել զժողովուրդ իւր, և 'ի նենգել զծառայս իւր։

Դարձոյց զսիրտ նր", ոչ բռնադատեաց, այլ անձնիշխան կամաց նր ներեաց, և չարութեն եա։

Առաքեաց զմովսէս ծառայ իւր, և զահարոն զոր ընտրեալ իւր։

Մովսէս ծառ՝ զի 'ի գետոյն ալբեցոյց. և զահարոն ընտրեալ իւր, զի քահանայութի էր տալոց, և յայն էր ծնեալ

[illegible]

Զի վաղվաղակի արձակեսցեն զլինել, տեսանելով զնշանսն:

[illegible]

Զի նոր էր շօշափելի․ զի դառնացուցին զբանն ո՛չ լսելովն:

[illegible]

Զի զարիւն տղայոցն աբրահամու խնդրեաց․ գունով, և համով՝ արեան լինէր:

[illegible]

Ըստ Թուոյ տղայոցն, իբրև կենդանացեալ գայլն տան ջեռ զնա, մինչև 'ի շտեմարանս Թագաւորին:

[illegible]

Շնացօղք էին․ և մժեխ՝ զի խոցոտօղք էին:

[illegible]

Սառն և հուր՝ 'ի միասին կայեալ, զի ցուրտ էին յատենն զլինել, և ջերմ 'ի տանջելն:

[illegible]

Զանբանսն նախ վանեաց, խնայելով 'ի նա:

[illegible]

Որև խառնիճ՝ ազգ է մարախոյ մանր, զի լի էին դառն ճճիւք սիրտք նց:

[illegible]

Զի բոյս բանական բարուց՝ ո՛չ էր 'ի նս:

[illegible]

'Ի մեղմագունիցն 'ի խիստ կատարելով, զի անդրանիկ խորհուրդն տծպաշտութեն՝ ապանեալ էր 'ի նս:

[illegible]

Զի վարձ էր նց կռապաշտութեն․ և ո՛չ գոյր յողդէ նց հեծանք, զի մի խափան լինի ուժք հեղանալ 'ի գնալըն:
Այլև՝ խորհուրդ էր յարութեն հասարակաց:

[illegible]

Զի

Զի երկնչէին 'ի հասարակ մեռանելոյ։

Սփռեաց ամպ՝ հովանի առնելով 'ի դուռն. և հուր լուսոյ տալով նոցա 'ի գիշերի։

'Ի տուէ ծածկոյթ 'ի տապոյ, և 'ի գիշերի փարատիչ խաւարի, և ձմռանաչէր զնա, և զնայր զնմնի. երբև արդ՝ հոգի ոք զծնեալն յիւրքէնն աւազանաւն։

Խնդրեցին՝ և եկն լորամարգի. և հացիւ երկնից լցոյց զնա։

Որ զհամ խոզի մնոյ ունէր՝ որում ցանկացան. և հացիւ երկնից լցոյց զնա. առատ և աւելի քան զպէտսն՝ մինչև տաղտկացան։

Եհար զվէմն՝ և բղխեցին ջուրք, և գնացին գետք ընդ անջրդի։

Յօրինակ բացման կողին նն։

Յիշեաց զբան իւր սուրբ, որ ընդ աբրահամու ծառայի իւրում։

Որում ասաց, թէ՝ 'ի չորրորդ ազգին ելցեն որդիք քո 'ի պանդխտութենէ, մի՛ր՝ ասէ։

Եհան զժողովուրդ իւր ցնծութեամբ, և զընտրեալս իւր ուրախութեամբ։

Ճոխ և լի նմ գանձիւք։

Եւ ետ նոցա զերկիրս հեթանոսաց. 'ի վաստակս ժողովրդոց ժառանգե-ցոյց զնոսա։

Զամուրհացւոց և զքանանացւոց։

Զի պահեսցեն զիրաւունս նորա. և զօրէնս նորա խնդրեսցեն։

Զայս միայն խնդրէր, զոր ոչ պահեցին ապաշխարհօքն։

Ալէլուիա։

Զալէլուն՝ անմարմնոց երգող սերովբէից, ամենայն՝ գովե-ցէք մարդկանայ, ընդ երևելեացն խաղաղէն։ Որ և մեզ պարգևեաց հրեշտակային, և շնորհեաց 'ի ձեռն մարմնոյն։ Ալէլու-եա՝ զնորոյ ժողովրդեանն ընտրութեան ասէ գերմ աղօթէ։

ՍԱԴ.

ՍԱՂՄՈՍ ՃԵ։

ՈՍՏՈՎԱՆ ԵՂԵՐՈՒՔ Տն՝ զի քաղցր է. զի յաւիտեան է ողորմութիւն նր։

Բարեխօս լերուք ասէ. զի ամ քաղցրութիւն յետ նր է, և ՚ի նմանէ. զի յաւիտեան է ողորմութիւն նր, որով ընտրեցաք նախ քան զլինելն ամ։

Ո՞ խօսեսցի զզօրութիւնս Տն. լսելի արասցէ զամ օրհնութիւնս նր։

Որ յեգիպտոս. և զամ օրհնութիւնս նր լսելի արասցէ ՚ի բաբիլոնէ։ Դարձեալ՝ ո՞ խօսեսցի զզօրութիւնս Տն, յամ ականջս լսեցուսցէ զօրհնութիւնս նր։ Դարձեալ՝ ո՛ խօսեսցի, ոչ որ է բաւական զզօրութիւնս պատմել, թող թէ՝ զհաւենն. այլ՝ ոչ զարժանաւոր օրհնութիւնն լսելի առնել։

Երանի՝ որք պահեն զիրաւունս, և առնեն զարդարութիւն յամ ժամ։

Իրաւունք հաւատոյն, և արդարութիւն գործոյն. յամ ժամ, և ոչ ՚ի սակաւս։

Յիշեա՛ զմեզ Տր ըստ հաճոյս ժողովրդեան քոյ. և այց արա մեզ ՚ի փրկութեան քում։

Իբր հաճոյիցն քոց արարեր, և մեզ արասցես

Տեսցուք մեք զբարութիւնս ընտրելոց քոց. ուրա՛խ եղիցուք յուրախութեան ազգի քոյ. և գովեսցուք մեք ՚ի ժառանգութեան քում։

Զոր ՚ի նմ լուաք՝ ՚ի մեզ ցոյց Տր։ Դարձեալ՝ ընդ հեթանոս փրկել աղօթէ։ Սոքա են ընտիր ազգ՝ ըստ պետրոսի, քահանայութիւն թագաւորութեան, որ ազգ անուանեցան, և խառնեցան ՚ի քս, և ժառանգութիւն գոլեալ եղեն։

Մեղաք մեք ընդ հարս մեր, անօրինեցաք և յանցեաք։

Որք յանապատին մեղան. անօրինեցաք և յանցեաք. երբ ժառանգութիւն կալաք՝ յորմէ անպարտ են հեթանոսք։

Հարքն մեր յԵգիպտոս ոչ իմացան զսքանչելիս քո. և ոչ յի-շեցին զբազում ողորմութիւնս քո։

Զատման հարուածսն. և ոչ յիշեցին զբազում ողորմութիւնս քո, թէ յօրինակս պատճ ծառայութեան ազատեցեր։

Դառնացուցին զքեզ յանցանելն ընդ ծով կարմիր. փրկեաց զնս վասն անուան իւրոյ. ցուցանել զզօրութիւն նր:

Թողացոյց իմ սքանչելիսն՝ որք անցին ընդ ծովն՝ զկարմիր մուրացման քարբեղէնքն. ու գիտել՝ զոր ինչ հանդերձեալ էին առնել. այլ փրկեաց անուանն իւրոյ փրկեաց. զի ծանիցեն զզօրութիւն նր, ընտելանան, և վարժին ասէ:

Սաստեաց 'ի ծով կարմիր՝ եւ ցամաքեցաւ. առաջնորդեաց նց ընդ անդունդս որպէս ընդ անապատ:

Հողմով սաստեաց՝ և ցամաքեցաւ. առաջնորդեաց նց ընդ անդունդս՝ որպէս ընդ անապատ. անջուր, և անցանելի, և արձակ անապատ:

Ապրեցոյց զնս 'ի ձեռաց ատելեաց նց, եւ փրկեաց զնս 'ի ձեռաց թշնամեաց նց:

Զոր ինքեանք ատէին՝ գիտելով թշնամիս ինքեանց զեգիպտացիսն:

Ծածկեաց ջուր զնեղիչս նց. եւ մի 'ի նոցանէ ոչ ապրեցաւ:

Զի զայս հայցէ իմ նախանձաւոր, զեւր փրկութիւն տեսանել, և զթշնամեաց կորուստն անխղճաբար, զի այլ ահ ինչ ոչ ունիցի:

Հաւատացին 'ի բանս նր, եւ օրհնեցին զօրհնութիւնս նր:

'Ի բանն նր՝ և ոչ 'ի նա, այլ՝ առժամանակն լսելով ըզ խոստումն. և օրհնեցին զօրհնութիւնս նր՝ ոչ 'ի սրտից իւրեանց, այլ՝ 'ի մովսէսէ ուսեալք. զի մովսէս արանց՝ և մարիամ կանանց առաջնորդէին:

Վաղվաղակի մոռացան զգործս նր. եւ ոչ անսացին խորհրդոց նր:

Զի փորձէր զնա կարօտութեամբ ջրոյ և կերակրոյ:

Ցանկացան ցանկութիւն յանապատի. եւ փորձեցին զած յանջրդի:

Յայնպիսի տեղւոջ՝ ուր իմ յայտնի էր ընդ նմ. փորձեցին զած յանջրդի, 'ի մառայն, զոր քաղցրացոյց:

Ետ նց զխնդրուածս նց. առաքեաց լիութիւն յանձինս նց:

Զոր

Զոր այլ ինչ խնդրեցին լինելութք և ոչ կարօտութք են։

[illegible]

Զայնպիսի հեղն. և զահարոնն ար տն, զոր նախ ընտրել կոչեաց։

[illegible]

Զի քացին զերամս խորհրդոց ՚ի հայհոյութի այլ` նոյնչափ խայտառակութք կորեան, զի ահ արկցէ այլոցն. որք էին ՚ի ցեղէն ռուբենի. իբր զանդրանիկն հայցելին զերիցութի որոյ փոխանակ առին զանէծսն յաւիտեայ հօրն խորհրդոց, իբրև ջուր մոռանելով ՚ի հող, և չեռալով ՚ի վեր։

[illegible]

՚Ի ժողովն կորխայ` որ էր զեհմացի, և հայցէր զահարոն ի քահանայութեն, հուր եղ ՚ի բուրվառացն` և եկեր զնս. և զոց մաշեաց զմեղաւորս, զի իբրև զծծումբ լինի մեղքն հրոյն` յետ աշաղին պատուհասին։

[illegible]

Զոր յեգիպտոս պաշտէին, և տեղին քարեբ` ուր կային փառքն այն ինչլի. ոչ որթու կենդանւոյ, այլ` պատկերի. և փոխեցին զնծ ՚ի նմանութի որթու խոտակերի ։ Ո՛ մեծի լրբութեն. այդ սոզոս ասէ, փոխեցին զփառս անեղծին այ` ՚ի նմանութի պատկերի եղծանելոյ։

[illegible]

Զարմանոյ թէ` զոքեան և զարդարխա մնացան։

[illegible]

Թէպէտ առ իւն ասէ սատակել զդուսս, և զքեղ արարից յազգ մծ. որ եկաց առաջի նր, և հայցեաց, և իջեալ ՚ի լեռնէն խորտակեաց զորթն։

[illegible]

Զքառասուն օր պահօք` անցոյց զգարկութին։

[illegible]

Յետ այնորիկ` այլ և խայտառակէ, յորժամ լրտեսքն եկին` անարգեցին զերկիրն, զոր յուսացի յետ մահուն ցանկայր. և մովսէս և ահարոն ցանկային։

Տրտնջելոյն ՚ի ձմեռնային եղանակի. և ոչ լուսոյ յայնիկ գոլ:

Լսելով ՚ի լրտեսացն՝ լալ սկսան և տրտնջել:

Համբառնայ ընկերաց իւր ՚ի վր նց, հարկանել զնս յանապատի:

Զամս քառասուն սատակմամբ, զի ասացին՝ լաւ էր թէ՝ յանապատի աստ մեռանէաք:

Ցուցանէ զօձն պղնձի նց ընդ հեթանոսս ցուցանէ զօձն նոցա ընդ գաւառս:

Որք զկնի բազում ժամանակաց՝ նմանօղք եղեն այնպէս սի հարցն. ընդ հեթանոսս և ընդ գաւառս՝ որք երբեւ զնս՝ պաշտեցին զկուռս յեհէմ:

Պղծելոյն նոցա ՚ի բէելփեգովր. զի կերան զզոհս մեռելոց:

Բէլ՝ կռոց անուն, և փեգովր՝ տեղւոյն. ոմանք զբահաղ ասեն զնա՝ որդւոցն ամոնայ. ոմանք զաստղարան, զդարպնելի ամօթն՝ զոր բերէին զատերբ մաղխանացուցն, խրատով մադիամու, առընթեր բանակին իէլի, և գրգռէին զնս ՚ի զոհել և ՚ի կռապաշտել, և ՚ի պոռնկել, նախ՝ երկրպագել, և ապա՝ ճաշելն զոհել, և ուտել ՚ի զոհելեացն, և ապա՝ խառնակել ընդ ինքեանս. վա՝ ասէ, կերան զզոհեալ և մեռելոց. զոր երբայեցին քուաս ասէ, որ է խառնակութիւն կանեփին և արեան, զոր մեռելոց սովոր էին նուիրել:

Բարկացուցին զնա ՚ի գործս իւրեանց. յաճախեաց ՚ի վր նց բեկումն:

Որքան յաճախէին ՚ի չարիս, և տր ՚ի բեկանել զնս յաւելոյր, զի անկան քսանեւչորս հազարք:

Ա... ՚ի մէջ փենեհէս, ... և դադարեաց հարուածն. համարեցաւ նմա յարդարութիւն ազգէ յազգ մինչև յաւիտեան:

Եկաց ՚ի մէջ, յայտ է բարկութեան տն. փենեհէս որդի եղիազարու քահանայ, հարեալ աշտէիւն, և ապա՝ առեալ զբուրվառն՝ եկաց ՚ի մէջ կենդանեաց և մեռելոց, և քաւեաց առաջի տն. համարեցաւ նմա արդարութիւն, գովեցաւ յոյժ, և գովի մինչև յաւիտեան՝ բարւոք նախանձն իւր՝ վա տն:

Բարկացուցին զնա ՚ի ջուրսն հակառակութեան. չարչարեցաւ մովսէս վս նց, զի դառնացուցին զոգի նր:

Զի մեռեալ էր մարիամ, և ՚ի սուգ էր մովսէս. ծարաւեցաւ ժողովուրդն և կուտեցան հակառակել ընդ մովսիսի, զի ելցէ ՚ի վիմէն, և հանցէ նց ջուր. և չարչարեցաւ մովսէս ցասմամբ, զի դառնացուցին զոգի նր տրտմեալ:

Հրա

Հրամայեաց շրեհամէջ եւրոպէ. Եւ ո՛չ սատակեցին զազգսն՝ զոր ասաց նոցա տր:

Եւ ո՛չ սրտիւ մովսէս. և ասաց որդւոց անօրէնութեան, մի՛ թէ 'ի վիմէ աստի աղբերացից ձեզ ջուր. և եհար բարկութբ զվէմն, և ո՛չ ել ջուրն, մինչև յերկրորդ հարկանելն. զի ցոյց ետ, ո՛չ թէ՝ ինքն էր որ տայր նոցա ջուր. և յամ՝ իջևանս երևէր վէմն 'ի գլուխ բանակին, և տեսանէր ամ՝ իէլ. և կանգնէին առ դրան խորանին իւրեանց և աղօթէին, և մովսէս ելեալ հարկանէր զաւազանաւն, յօրինակ բացման կողին քի: Եւ այս անկարգաբար եղև, զի պարտ էր մովսէսի հեզութբ գործել զխորհուրդն որդւոյ՝ զոր բարկութբ եհար: Եւ քրթմնջեաց՝ և ո՛չ սաստեաց ած զպղպան 'նալաւ ո՛չ խօսեցաւ, այլ՝ 'ի ձեռն յեսուայ: Եւ կամ՝ հրամայեաց ած սատակել զքանանացիսն, և ժողովուրդն ո՛չ սատակեաց:

Խառնակեցան ընդ հեթանոսս, և ուսան զգործս նոցա. ծառայեցին կռոց նոցա, և եղև նոցա 'ի գայթագղութիւն:

Զգործս նոցա ուսան, և ո՛չ ուսուցին նոցա զածպաշտութիւն: Խառնակեցան ընդ հեթանոսս խնամութբ. ծառայեցին կռոց նոցա, և այն եղև նոցա որոգայթ ոտից 'ի գլորումն:

Զոհեցին զուստերս և զդստերս իւրեանց դիւաց, և հեղին արիւն ամբիծ:

Աստուծոյ՝ և ո՛չ զօրինաւոր անասունսն մատուցին, և դիւաց՝ զարիւն ամբիծ տղայոցն:

Արիւն ուստերաց և դստերաց իւրեանց՝ զոր զոհեցին կռոց քանանու:

Կրկնէ զյանձնառութբ մոլորութին:

Շաղախեցաւ երկիր յարիւնս նոցա, և պղծեցաւ 'ի գործս նոցա. և պոռնկեցան 'ի գնացս իւրեանց:

Պղծեցին զնա ոտիւք կոխեալն յաբրահամէ, յիսահակայ, և 'ի յակոբայ:

Բարկացաւ սրտմտութբ տր 'ի վերայ ժողովրդեան իւրոյ. և գարշեցոյց զժառանգութի իւր յոյժ:

Զի գործելիք էին այլ և հրեշտակաց, գործելի եղեւ զնմ ամ՝ ազգաց. ով և արդ յայտնեցաւ յոյժ:

Մտ[illegible] զնա 'ի յետս [illegible]. [illegible]

Անձնացուց, մոլեգնեցուց, եղանակեցուց, և այլով՝ քաղ-ցրացուցիչս տկարացին. և խոնարհ եղեն 'ի ներքոյ ձեռին նոցա զամս բազումս:

Բ[illegible]

Յաստցեալ աղբաց: Դառնացուցին՝ ոչ միայն գործով, այլ՝ խորհրդով ևս, և կորուսին վասն այնորիկ թերևս նը 'ի բնականութիւն իւր աղբայ՝ յետ եօթանասուն ամի:

Հ[illegible]

Լսել ձայնի աղօթիցն՝ զանձինս, եղծիւնքեն, և այլ սոցին:

Յ[illegible]

Որ է աղաղակն, և նախ եա զնն 'ի գթութիւն, և հա-նաւ յերկնից 'ի բանտէ, և ղիւրեաց իւր ժողովրդեանն, և ապա եհան անտի:

Փ[illegible]

'Ի վերջին գերութեան աղօթէ հոգին դարձանել քին. և ժողովեալ զնա 'ի հեթանոսական ամբոխէ. զի որք քրիստոնէական անուանք՝ 'ի մի հօտ ոչ ժողովեցան՝ հեթանոսք են. հրէիցն յայտնի է զառնալն յեհն:

Խ[illegible]

Թէ որ է յն քն 'ի փառս իւրոյ հօր. և սպարծեսցուք յօրհ-նութիւն քո, զի զհրեայսն մոլեկեան (?) օրհնեաց, և երկրպագոտ. զքեզ քին, և երկնաւորք:

Օ[illegible]

Յն յաւիտեան օրհնեալք զօրհնիչն մեր. յաւիտեան, զի յն քն երէկ և այսօր նոյն և յաւիտեան: 'Ի պարզեալ յա-ւիտենից յեղփոխել, յաւիտենանս՝ 'ի բաբելոնէ:

Ե[illegible]

Այս ոչ է հրէիցն, այլ մեր անփոխականս (?). քահանայն օրհնէ, և ամ ժողովուրդն կցորդի յամէնն. եղիցի, նոյն է ամէն, և հաւատարիմ:

Ձէ



Աղօթք:

Զօրացիր հանդերձելոյն ուխտին օրէնսն առ պօղոս. ողորմեա՛ և տուր տկարաց զերեկոյն զփառսն 'ի ճաշելոյն, և զմեր աղաւթսն ընդ ցանկ աւետ:

ՍԱՂՄՈՍ· ՃԶ:



ԽՈՍՏՈՎԱՆ ԵՂԵՐՈՒՔ ՏԵԱՌՆ՝

Զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Խոստովանենք, է՛ որ դաւանենք է զիծ, և է՛ որ զ յանցանս մերկանալն. և զպարտութիւն խոստովանիլ, զի յաղթեցաւ 'ի չարէ, և մեղաւ. և զերկուսն է իմանալ աստ. սակայն ասէ՛ն խոստովան եղերուք, զայն ստուգաբանէ թէ՝ դուք խոստովան եղերուք. ով թէ՝ քարոզէ նորոյս, խոստովանեալք լերուք, յայտնի եղերուք, հաւատացեալք և հաւատարիմք եղերուք. և ամէք լերուք. ամ տէրանց, և ամէն աստուծոյ՝ քաղցր լերուք քաղցրութեն նորա պատկերք. զի նա բնութեամբ է դուք շնորհօք լերուք, և ողորմածք լերուք. զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Ասասցեն փրկեալք Տն, զորս փրկեաց 'ի ձեռաց թշնամւոյն:

Փրկեալ ուսեալքն՝ որ կրեցին զքաղցրութիւն, թող ասեն թէ՝ քաղցր ես, և յաւիտեան է ողորմութիւն քո:

Յամ գաւառաց ժողովեաց զնս. յարեւելից և յարեւմտից՝ 'ի հիւսիսոյ և 'ի ծովէ:

Որ ոչ միայն է կարելի, զհրեայսն յերկրանց ցրուածէն, և զմեզ 'ի սատանայի գերուէն, և 'ի ձաղապանաց 'ի մէջոյս պաշտօնս՝ 'ի մի հաւատ ժողովել. յարեւելից՝ 'ի պաշտօնէից զաբեզայն, և զաստեղս. և յարեւմտից՝ 'ի խաւար իջմանէն 'ի ձմեռունս, ով զ յաւէտանս իջուցին. 'ի հիւսիսոյ՝ 'ի պաշտօնէից զամեպս ոսկեձաձանչս. և 'ի ծովէ՝ զպխոնդ պատուէրոյն:

Ս·

Մոլորեցան նոքա յանապատի յանջրդի ճանապարհի․ քաղաք բնակութեան ոչ գտին։

'Ի բաբիլոն գնացին հրեայքն, և 'ի քաղաքի ոչ բնակեցին զի մինչ 'ի գալն յեհմ՝ առ գետս բաբելոնացւոց նստէին, և լային. և բնութիւն՝ ոչ միայն յասացեալ պաշտելիսդ ցրուեցան, այլ երբ յոյ մոլորեցան յանապատի բարեաց, և յանջուր ազխուցեալ կռապաշտեցին, և զդրախտն՝ զոր կորուսին, ոչ գտին :

Քաղցեալք և ծարաւեալք. և անձինք նց 'ի նոսին նուաղեցան։

Ոչ 'ի սովոյ հացի, և 'ի ծարաւ ջրոյ, այլ 'ի լսելոյ զբանն տն. վն՝ անձինքն ասէ նուաղեցան, և 'ի նոսին ասելն՝ իբր թէ՝ ինքեանք եղեն պատճառ։

Աղաղակեցին առ տր 'ի նեղութեան իւրեանց. 'ի հարկաց նց փրկեաց զնս։

Աղաղակեցին հրեայքն՝ արդարովքն 'ի նմա, և բնութիւն՝ ոչ առ տր, այլ առ հեծութեն մտօքն հեծեծէր. և այլոք ոչ ողորմէր՝ քան որ ալարն զսա, որ և՝ 'ի մտացն փրկեաց :

Առաջնորդեաց նց 'ի ճանապարհ ուղիղ. գնալ երթալ 'ի քաղաք բնակութեան իւրեանց։

'Ի ճանապարհ՝ որ զինքն ասաց զքաղաքն ցուցանելով, 'ի տան հօր՝ զբազում օթեվանսն, որ 'ի քաղաքի :

Խոստովան եղիցին տն ողորմութեանց նր. և սքանչելեաց նր որդւոց մարդկան։

Իւր ողորմութիւն յայտնի երևեալ արդեամբք, խոստովան լինի տալով գոհութի ինքեամբ ինքն, իբրև երկինք պատմեն: Սքանչելեաց նր՝ որդիք մարդկան, որք տեսօղք են և վկայք, առաքեալքն՝ որք որդիքն էին մարգարեիցն :

Զի յագեցոյց զանձինս քաղցելոց. և զանձինս նօթեցելոց լի արար բարութեամբ։

Անձով՝ երանելի որ քաղցեալ և ծարաւիք են արդարութեան, զի նք յագեսցին. և լսելով զայս հոգիքն լցան բարի յուսով. այլև՝ զմարմինն իւր և զարիւնն:

Որք նստէին 'ի խաւարի և 'ի ստուերս մահու. կապեալք էին յաղքատութեան և յերկաթս։

Հեղձամղձեալք և յերկարեալք 'ի կռապաշտութիւն և 'ի մեղս, որ շուք էր մահուն յաւիտենից և գուշակ, կապեալ 'ի գործս ձեռաց իւրեանց մեղաւորք՝ աղքատ յա͞ծպաշտութենէ իբր յերկաթս շղթայեալք։

Զի դառնացուցին զբանս ա͞յ, և զխորհուրդս Բարձրելոյն բարկա-ցուցին։

Զբանն ա͞յ 'ի դրախտին ոչ պահելով, և զխորհուրդն՝ որ խորհեալ էր 'ի դէպ ժամու տալ ճաշակել, և ա͞ծացու-ցանել։

Խոնարհ եղեն 'ի ցաւս սրտից նց. տկարացան, և ոչ ոք էր՝ որ օգ-նէր նոցա։

Խոնարհ եղեն, զի յա͞ծ պտղոյն զրկեցան՝ ցաւէին. հի-ւանդացան, տկարացան, մահկանացուք եղեն, և ոչ ոք էր որ առաջնորդէր նց՝ 'ի տեղին ուստի ելին։

Աղաղակեցին առ Տ͞ր 'ի նեղութենէ իւրեանց. 'ի վշտաց նոցա եհան զն͞ս։

Հաբելի արիւնն աղաղակէ, Ենովս յուսացաւ կոչել զա-նուն ա͞ն, և Ենովք ապաշխարութեան ձայնիւ։ Եւ 'ի վշտաց եհան, 'ի գնալն 'ի դժոխս, զԵնովս և զայլսն. և զԵնովք և զԵ-ղիա կենօք 'ի վշտալից կենաց աշխարհիս։

Փրկեաց զն͞ս 'ի խաւարէ՝ և 'ի ստուերաց մահու, և խզեաց զկապանս նց։

Զհոգևոր, խզեաց զկապանս դիւացն։

Խոստովան եղիցին Տ͞ն ողորմութիւնք նր. և սքանչելիքն նր որդւոց մարդկան։

՝Նոյնն է ինքն՝ գոչեն յայտնապէս։

Զի փշրեաց զդրունս պղնձիս, և զնիգս երկաթիս խորտակեաց։

Զմահու չարութիւն. և զնիգս երկաթիս խորտակեաց՝ զդառնութիւն դժոխոցն. և թէ՝ որպ. ասեն եղեալ էր սատա-նայ կախարդօք դժոխոց դրունս և նիգս զգայլիս, և ինքն իմանալի դրունս, և արգելս իմանալի հոգւոցն՝ զոր ասաց Եսայեաւ՝ ես երթայց առաջի քո, զդրունս պղնձիս խորտա-կեցից, և զնիգս երկաթիս փշրեցից։

Օգնեաց նմ̃ ՚ի ժամանակս անօրէնութեան իւրեանց. եւ նմ̃ փրկեաց իւր-
եանց. խոնարհ եղեն յոյժ:

Ժամանակս՝ մինչդեռ անդ էին ՚ի մէջ չարեաց իւր-
եանց. զի վ̃ս մեղաց իւրեանց խոնարհ եղեն յոյժ, զի անօրէ
նութիւնն̃ տարաւ զն̃ս ՚ի այն ժամանակս. եւ վ̃ս մեղաց՝ խո
նարհ յոյժ, քան զոր չէ́ք այլ խոնարհութիւն։

Յամս ներկայիս գործեին սէրաց նր̃. փրկեցան մինչեւ ՚ի դրունս մահու:

Գործէին սէրոք, թէ հրեայք վ̃ս խորունկ օրինացն,
եւ հեթանոսք յուսումն արտաքնոյն գործէին: Այլեւ՝ ՚ի
դժոխս ՚ի դառն հոտոց ժահոցն, եւ ՚ի ջամբելոյ նց̃ հուր, յոր
մէջ տագնապէր եւ պապակէր մեծատունն։ Մերձեցան մինչեւ
՚ի դրունս մահու, ցանկային յանդգութե̃ անկանել հոգիքն
իւր զմարմինն յիւր մահն։

Աղաղակեցին առ Տր̃ ՚ի նեղութեան իւրեանց, ՚ի վշտաց նց̃ ապրեցոյց զն̃ս։

Աղաղակեցին առ Տր̃՝ ՚ի դէպ է արդարքն՝ որ անդ. ՚ի
՚ի վշտաց նոցա ապրեցոյց զն̃ս, զոր ասաց ՚ի միջոյ ժանեաց
զերամն ՚ի դուրս կոչել։

Առաքեաց զբանն իւր՝ եւ բժշկեաց զն̃ս. եւ փրկեաց զն̃ս յապականութենէ
իւրեանց։

Հայր՝ զբանն, զոր յօհաննէս ՚ի սկզբանէ ասաց, եւ Ած
առ Ած. եւ բժշկեաց զն̃ս, զքաղց եւ զծարաւ. եւ փրկեաց զն̃ս
յապականութէ յանմահութե̃ պահելով զհոգիսն, որ մերձեալ
էին ՚ի դրունս մահու, որ է յապականութե̃ հանդերձեալ էին
անկանել։

Խոստովանեսցին Տն̃ ողորմութիւնք նր̃. սքանչելիքն նր̃ որդւոց մարդկան։

Յամ՛ երախտաւորս առէ պարտին որդիք մարդկան օրհնութի̃։

Մատուսցեն նմա պատարագ օրհնութեան. եւ պատմեսցեն զգործս նր̃ ցնծութեամբ։

Օրհնութի̃ եւ ոչ զոհ, որ նորոյս է օրէն։

Որք իջանեն ՚ի ծով նաւօք. եւ առնեն զգործս ՚ի ջուրս բազումս։

Նաւորք մարմնոյ՝ իջանէին ՚ի ծովս յիս ծննդեամբ, եւ

առ

առնելն զգործ՝ զպէսպէս արուեստս, և զգործս, ուր և ա-ռաքեալքն նշանօք, և արուեստիւք:

Նոքա տեսին զգործս Տն. և զսքանչելիս նորա 'ի խորս ան-դնդոց:

Ասաց՝ և յարեաւ հողմ և մրրիկ. և բարձրացան ալիք նց:

Թագաւորք հեթանոսաց, ըստ այնմ՝ չորս հողմք, և չորս գազանք ելանէին ծով:

Ելանէին յերկինս՝ և իջանէին յանդունդս. և անձինք նոցա յանձինս ի չարեաց մաշեցան:

Յերկինս՝ 'ի պատիւ աստեղաց, իջանէին յանդունդս՝ 'ի պաշտօն լողակացն. և անձինք նց յանձինս իւրեանց մա-շեցան, 'ի տարակոյս իւրեանց, և զճշմարիտն ոչ գիտէին:

Խռովեցան տատանեցան որպէս արբեալք. և ամենայն իմաս-տութիւն նոցա ընկլաւ:

Ցորենակերն յայտնի է թէ սքանչելիքն, 'ի ծովու և 'ի նաւս, և այնք նմանեցուցանէ զփորձանս և զխռովութիւն ծփ, որ ոչ լինի առանց թիւր ասելոյն թէ. զի կամաւ արբեալ զյի-մարեցուցիչ գինին, և թողեալ եղեն յայ՝ զոր ինչ առաք-եալքն տեսին զկամաւ չարիս խռովութեան աշխարհի, և մըշ-տացեալք էբբև 'ի նոցանէ գոլով:

Աղաղակեցին առ Տր 'ի նեղութեան իւրեանց. 'ի վշտաց նոցա փրկեաց զնս

Վասն փրկութեան՝ Տմ մարդկան. և 'ի վշտաց նց կեցոյց զնս՝ զկրկնակի մեռեալսն, անհաւատութեամբ և մեղօք:

Հրամայեաց մրրկին յօդ՝ և դադարեցին ալիք նց. ուրախ եղեն զի դադարեցին. և առաջնորդեաց նց 'ի նաւահանգիստ կա-մաց իւրեանց:

Ով երբեմն՝ 'ի քնոյ զարթուցեալ յաշակերտացն. և ուրախ եղեն զի դադարեցին, և առաջնորդեաց նց 'ի նաւա-հանգիստ կամաց իւրեանց, գերբայն՝ յեկեղ, որ և գերութեան նց՝ նման էր ալէկոծեալ ծովու. և քնութեան՝ յեկեղեցի ա-ռաջնորդեաց, որ է ճշմարիտ նաւահանգիստ ալէկոծելոցն մեղօք:

Խոստովան եղիցին Տն ողորմութեանց նր. սքանչելեաց նորա որդւոց մարդկան:

Սիմաքոս՝ արուեստաւորութիւնք ասէ. քանզի արուեստուք իւրովք փրկեաց և եհան 'ի դժոխոց, և ապրեցոյց, և կեցոյց: Զորիցս կրկնեաց զխոստովանն, և զաղաղակեցին. արուեստքն՝ զոր 'ի ձեռն չորից աւետարանչացն եցոյց անհաս 'ի մարդկանէ, բնականաւն, օրինօքն, մարգարէիւքն, այս՝ աւետարանաւն:

Բարձր արասցեն զնա 'ի ժողովս ժողովրդոց. Եւ յաթոռս ծերոց օրհնեսցեն զնա:

Երկու ասէ ժողովք, հրէայք՝ ժողովք, և եկեղեցի՝ ժողովրդոց ժողովուրդ, որ զճշմարտութիւն ունի, լերեւ սրբոց. և յաթոռ ծերոց, յեկեղեցիս առաքելոցն օրհնեսցեն զնա:

Զէ դարձոյց զգետս 'ի ցամաք, Եւ զելս ջուրց 'ի ծարաւուտ:

Զուսումն հրէից, և զերկիր ծարաւուտ զհեթանոսս՝ ուր ոչ էր օրէնք, և մարգարէքն. և արդ՝ են երկու կտակք գետքն ուրախարար:

Արար զերկիրն պտղաբեր՝ յաղտաղտուկ, վասն չարեաց բնակչաց նորա:

Զերկիրն, և զմիրաս հրէիցն. աղտաղտ՝ անբոյս, և անպտղաբեր, որ նախ՝ գնացք էր ջուրց, զչարիս գործեցին բնակիչքն. և բնակեալ 'ի նմա խորհուրդք նենգաւորք, և եղեն աղտաղտ կերակուր դիւաց վայրի երէոց պղծոց

Արար զանապատն 'ի ճահիճս ջուրց. Եւ զերկիրն ծարաւուտ 'ի գնացս ջուրց:

Յառաջմանէ հոգւոյն և 'ի հերկելոյ բանին զհեթանոսս, 'ի ձանձիմս ջուրց և 'ի լիճս, և 'ի ծովս և յաղբերակունս. որ 'ի ձայն և 'ի դէպ իջուցանեն 'ի հրէից՝ արբուցանել զծարաւն մեր:

Բնակեցոյց 'ի նմա զքաղցեալս. Եւ շինեցին քաղաքս բնակութեան իւրեանց

Քաղցեալս յօժարամիտս. և շինեցին քաղաք բնակութեան իւրեանց յերկինս:

Սերմեցին արտս՝ Եւ տնկեցին այգիս. Եւ արարին պտուղ արմտեաց իւրեանց

Առաքեալքն զհաւատացեալս միշտ քրքրելով անկեցին այ-գիս՝ զուռս հաւատացեալ անձանց, յորժամ քն անկելով, և արարին պտուղ, ինքեանք հաւատացեալքն աճեցուցին ըզ հարիւրաւորն, զվաթսնաւորն, և զերեսնաւորն։

Օրհնեաց զնս՝ և բազմացան յոյժ. և զանասունս նոցա ոչ նուազեցոյց։

Օրհնեաց զնս նա հոգևոր օրհնութե՛, և բազմացան ո-րոց անուանքն 'ի դպրութի կենաց, և բազմացան յոյժ, իբրև զաստեղս. և անասունք նոյ ոչ նուազեցան, և ախտաւորքն ևս 'ի նոցանէ ոչ նուազեցան 'ի բարի գործոյն, լսելով զխօսնոցն։ Հրէիցն յայտնի, թէ ոք կամի յայն տանել։

Նուազեցան նոքա և չարչարեցան, 'ի նեղութենէ չարեաց և 'ի վշտաց։

'Ի գերութե՛, 'ի նեղութե՛ զոր բաբելացիք և դեք ան-ցուցանէին։

Եհեղ անարգութիւն 'ի վերայ իշխանաց նոյ. մոլորեցոյց զնս յանապատի՝ և ոչ 'ի ճանապարհի։

Հրէից իշխանքն՝ որ երևելիք էին՝ անարգ եղեն, քա-հանայք, թագաւորք, որպ սեդեկիայ, որպ յեքոնիայ. և հեթա-նոսաց թագաւորք և իշխանք 'ի կուռս մոլորեալք. և արդ՝ հրէիցն անարգեալք թագաւորք և իշխանք, և ոչ ուրեք ե-րևին։ Մոլորեցոյց զնս, ոչ ած մոլորեցուցանէ, այլ՝ անհաւա-տիցն թոյլտայ, թողու և գնայ ըստ անկոխն 'ի մէջն ոյ։

Օգնեաց տնանկին յաղքատութենէ. առաջնորդեաց որպս խաշին ազգի նոյ։

Յաղքատութե՛ որ չունէր զձիրս օրհնացն հրէայն, և ոչ պաշտեալս փառաւորութե՛ հոգևոր բարեացն՝ հեթանոսն. ոյն օգնեաց 'ի ձեռս առաքելոյն. առաջնորդէ, հովիւ կոչ-եաց զինքն, և այլ ևս ոչխարք են իմ ասէ, զոր պարտ է ինձ ածել այսր, և ձայնի իմում լուիցեն։

Տեսցեն ուղիղք, և ուրախ եղիցին. և ամ անօրէն խցցէ զբերան իւր։

Ուղիղք՝ ընտրեալքն յառաջագոյն, որոց ասաց ձեզ երանի աչաց՝ որոց տեսանեն. և ամ անօրէն խցցէ զբերան իւր, որ ոչ հաւատայ սրտիւ յարդարութի, և ոչ բերանով խոստովանի զփրկութի։

Ո՞վ է իմաստուն, որ պահիցէ զայս. և ՚ի միտ առցէ զողորմութիւնս Տն:

Ո՛վ թէ՝ խորհինք և տեսանելոցքն՝ են, իմաստնոց պէտք են լսել, և իմանալ. և լսել հաւատարիմ մտօք և իմաստուն. տալ հօտին զողորմութիւն Տն. և պահել իշխանաց զբարութիւ. նախ ՚ի միտ առցէ զանձն, և ապա՝ խորհի զարժանն, և տացէ պատշաճին:

Օրհնութիւն առաւօտու ՚ի տօնին:

Զհրէից դարձն՝ և զշնորհատուութիւն Փրկութեան Քրիստոսի առաւօտու: Յարութեան աւետիսաց դարձն զոհութեամբ ՚ի Քն [illegible], և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] և դարձն, [illegible] [illegible] որ և՝ [illegible] [illegible] ՚ի [illegible] սաղմոսն, և [illegible] [illegible]:

ՍԱՂՄՈՍ. ՃԷ:



ՊԱՏՐԱՍՏ Է ՍԻՐՏ ԻՄ ԱՍՏՈՒԱԾ, պատրաստ է սիրտ իմ օրհնեցից՝ և սաղմոս ասացից քեզ փառօք իմովք:

Իմաստուն կուսանքն և իմաստուն տնտեսն, և հաւատարիմ ծառայն ասեն զայս: Սիրելիս՝ կազմ է սիրտ իմ. յորժ լաւոյն է իշխել առնել զայս. օրհնել և սաղմոս ասել քեզ փառօք իմովք, զմարգարէութիւն ասէ փառք, այլև՝ թագաւորի, և քահանայի փառք ժողովուրդ է, յորժամ նոքօք երգէ զայս, կազմ և անմեղ պահելով:

Զարթի՛ր փառք իմ, զարթի՛ր սաղմոսարան և օրհնութիւն. և ես զարթեայց առաւօտուց:

Զմարգարէական շնորհն զարթուցանէ աղօթիւք: Երբայեցիս՝ զարթիր տաւիղ, զարթիր քնար. որ է մեռեալ մորթ, զմեռելութիւն ախտից նշանակէ. զարթիր քնար, ըզ հոգի և զմարմին զարթուցանէ. իբրև կրկնակրկնութեամբ՝ հարկանէ բարի բանիւ, և գործովք երգել Տյ. և ես զարթեայց առաւօտուց, ընութեամբ ՚ի թմրութենէ, ՚ի գալ առաւօտուն քն Տյ մերոյ՝ առաջին լուսոյն:

Խոստովան եղէց քեզ ՚ի ժողովուրդս Տր. և սաղմոս ասացից քեզ յազգս:

Ժողովուրդ՝ ՚ի հրէայսն, և յազգսն՝ ՚ի հեթանոսս. ո՞վ և որդ՝ Դաւիթ է, որ երգէ բերանով ամենեցունց: Այլև՝ մեր իսկ յայտ է թէ և մեք երգեմք կենօք, և յետ մահու՝

բե

քերանով քրիստոնէից եկեղեցականաց և աշխարհականաց։

Մեծ է մինչև ցերկինս ողորմութիւն քո, մինչև յամպս ճշմարտութիւն քո։

Մինչև յերկինս՝ ուր հայրն ողորմեցաւ գալստեամբ որդւոյն. մինչև յամպս", յորժամ ամպով գայ ճշմարտութիւն դատել։

Բարձրացիր ի վերայ երկնից Ած. եւ յամ երկիր են փառք քո։

Ցոյց տուր երկրի զբարձրութիւն քո. համբարձաւ տէրն մարմնով, և տեսին երկնաւորքն. և յամ երկրի են պատմութիւնք փառաց նորա։ Երբայեցին՝ բարձր լեր տէր ասէ։

Ող փրկեսցին սիրելիք քո. կեցո աջով քով՝ և լուր ինձ։

Սիրելիք՝ աբրահամ, իսահակ, յակոբ, և այլք՝ նորա էին. կեցո աջով քով՝ խնամակալութբ։

Ած խօսեցաւ ՚ի սրբութեան իւրում. ցնծացայց եւ բաժանեցից զսիկիմ, եւ զհովիտն յարկաց չափեցից։

Մարգարէս խնդրեաց՝ բարձր լեր տէր, լինի պատասխանի ՚ի հոգւոյն շնորհաց, ցնծացայց ՚ի խնդրիր քո, բարձր եղէց խաչիւն, բաժանեցից զսիկէմ. հոյակապ քաղաքէ, զոր ետ յակոբ յոսեփու, զոր ՚ի դարձին՝ բաժանեալ ասէ երկոտասան ցեղիցն. և զհովիտս վրանատեղեացն՝ չափով տաց՝ լինել յարկս. և զերկիր տմ՝ քարոզչացն բաժանեաց։ Ած խօսեցաւ ՚ի սրբութե իւրմէ՝ ՚ի խաչին ը̅ աւազակն, այսօր ը̅ իս լիցես ՚ի դրախտին. և առ հայր թէ՝ ՚ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ. ցնծացայց մահուամբս. բարձր եղէց յերկինս. բաժանեցից զդրախտն. զհովիտս հոգւոյն՝ որ ՚ի դժոխս՝ չափեցից զերիս աւուրս, որքան չարիք անցուցին դեւքն ընդ պատկերն իմ, և հատուցից նոցա։

Իմ է գաղաադ եւ իմ է մանասէ. եփրեմ հզօրէ գլխոյ իմոյ։

Երկրին է անուն՝ դաղայադն. մանասէ՝ ցեղին, որ հնազանդի ինձ, որ է ցեղին յուդայ. եփրեմ գլխաւորն լինի թագաւորին։

Յուդայ թագաւոր իմ. մովաբ աւազան յուսոյ իմոյ.

Յու

Յուդայ թագաւոր իմ, չհակառակին 'ի դարձին ասէ ած լինել: Յուդայ թագաւոր՝ զօրաքաջել. Մովաբ աւազան յուսոյ՝ յոյս գոյ թէ՝ 'ի դարձին զմովաբ կոխեմք, եւ զոտս մեր՝ արեամբ նոցա լուանամք ողջ յաւազանին: Այլեւ՝ 'ի յուդայէ ծագեաց տէրն, որ զած խոստովանի յեկեղեցւոյ. եւ մովաբ աւազան՝, 'ի հօր կամացն է շնորհ մկրտութեան, որ է մեծ յոյս ածանալոյ:

Յեդովմ ուղղեցից զգնացս իմ, եւ ինձ այլազգիք հնազանդեսցին:

Զդարձն. եւ այլազգիք՝ փղշտացիք հնազանդին: Եբրայեցին՝ յեդոմ լուծից զկօշիկ իմ, եւ 'ի փղշտա տամ զձայն իմ. կոխեցից իբրեւ զհնձան զեդոմ, եւ զփղշտա հնազանդեցուցից: Դարձեալ՝ եդոմ զմարմնոյ մահն ասէ, զի կօշիկ՝ մարմնոյն կոչի. եւ 'ի փղշտա տայ զձայն, 'ի դժոխս, ուր այլազգիքն եւ դեւքն նեղեն զհոգիսն, ձայն տայ ասելով, որ 'ի կապանս էք՝ արձակեցարուք:

Ո՞ տարցէ զիս 'ի քաղաքն ամուր. կամ ո՞ առաջնորդեսցէ ինձ մինչեւ յեդովմ:

Ո՞ տարցէ', ցանկայ գերին գնալ մինչեւ յեդեմ, եւ տեսանել զնա ամրացեալ պարսպաւ: Եւ բնութիւն 'ի դրախտին, ուստի այլ ոչ ելանէ ամրացեալ անդ. կամ ո՞ առաջնորդեսցէ', մինչեւ յելանելն յերկրէ աստի անմահութեն:

Թէ ոչ դու ած, որ մերժեցեր զմեզ. եւ ոչ ելցես ած ընդ զօրս մեր:

Այլ ո՞ւմ ասէ կարողութիւն, եթէ ոչ՝ քո, որ 'ի դրախտէն եւ յեդեմէ մերժեցեր. եւ ոչ ելեր ած ը զօրս մեր՝ որ 'ի գլուխս զօրաց էիր եւ ը հրեշտակս գաս:

Տուր մեզ օգնութիւն 'ի նեղութենէ, զի սնոտի փրկութիւն մարդոյ:

Զայդ՝ քո. զի սուտ է փրկութիւն մարդոյ, զի եղբայր ոչ փրկէ, եւ ոչ փրկէ մարդ:

Աստուծով արասցուք զօրութիւն. եւ նա յամօթ արասցէ զնեղիչս մեր:

Յայտնեաց մկրտութիւն աւազանին՝ զօրութիւն ածցուք 'ի մեզ հոգին, եւ զանմահս հրեշտակաց. եւ նա յամօթ արասցէ զթշնամիս մեր՝ զբռնաւորն եւ զանհաւատ:

'Ի

[illegible]

[illegible]

ՍԱՂՄՈՍ ՃԸ։

Ած օրհնութեան իմոյ մի՛ լռեր, զի բերան մեղաւորի՝ բերան նենգա-ւորի բացաւ 'ի վերայ իմ:

'Ի դիմաց տ՛ն է, զի ինքն է որ իբրեւ զմարդ աղօթէ, և ոչ զա՛ծ լռէ. օրհնութիւն զչարչարանսն կոչէ, ոչ թէ սուտ, ոչ կամիմ զփառս իմ՝ այլոց, որք մերկնեցան յինէն : Բերան մեղաւորին՝, աքիտոբէլայ և յուդայի բացաւ. մի լռեր. մինչ բերէ զ՛ն մահաճանս իմ, զի չէ զ՛ն ն՛դ որք գնացին յինէն:

Խօսեցան զինեւ լեզուաւ նենգաւորաւ. եւ բանիւք ատելութեան պա-շարեցին զիս:

Նոքին իսկ զկոչումն ածէին զերկրաւոր մարդոյն:

Մարտեան ընդ իս 'ի տարապարտուց. փոխանակ սիրոյ իմոյ մատնէին զիս, այլ ես յաղօթս կայի:

Զի չար ինչ ոչ պարտէին դաւիթ և յս. փոխանակ զի սիրեցեալ քէին, և մատնէին, այլ տ՛րն աղօթէր՝ մի համարիր". չէ հակառակ աստուծոյ տ՛ն թէ՝ օրհնեցէք զանիծիչս ձեր. զի մարգարէութիւն է, և ոչ անէծք:

Հատուցին ինձ չար փոխանակ բարւոյ, ատելութիւն փոխանակ սիրոյ իմոյ:

Ըստ եսայեայ, զի զգաւս ն՛ր բառնայ. և աքիտոբէլ խոր-հրդակից դաւթի:

Կացո 'ի վերայ ն՛ր մեղաւոր. սատանայ կացցէ ընդ աջմէ ն՛ր:

Կայր և՝ որում խնդրեցաւ աքիտոբէլ. սատանայ կաց-ցէ ը՛ն աջմէ ն՛ր, յետ պատառոյն եմուտ սատանայ. նա յառաջ գիտէր, զի աւ գործաթն:

'Ի դատաստանի ելցէ դատապարտեալ. եւ աղօթք ն՛ր 'ի մեղս դարձցին:

Ինքն իւր դատաստան արար, և մինչ խորհեանց դատա-պարտեցին 'ի խնդրոյ զերկոտասանսն. և աղօթք ն՛ր՝, ասէր թէ՝ մեղայ՝ զի մատնեցի զարիւն արդար, ոչ 'ի ժամու ասաց, և ոչ 'ի սրտէ:

Եղիցին աւուրք ն՛ր նուազ. եւ զեպիսկոպոսութիւն ն՛ր, զայն այլ առցէ:

Զի 'ի չորեքշաբաթու մինչև ցուրբաթ եղև կեանքն. զայ-ցելու լինելն մատաթէ աւ:

Եղիցին որդիք նր որբ, և կին նր այրի. տատանեալք փոփոխեսցին, որ-դիք նր մուրացիկ եղիցին. և ելցեն 'ի բնակութենէ իւրեանց

Իսկ յուդայի չէ գրեալ կին և որդի, ո՞ գիտէ թէ կայր. կամ աքսորեցելի. այնպէս եղեն և ամ հրեայքն. իսկ՝ որք սա-հեցան, գերեցան 'ի տիտոսէ, և ելին 'ի բնակութէ իւրեանց։

Քննեսցէ փոխատու զամենայն ինչս նր. յափշտակեսցեն օտարք զվաս-տակս նորա։

Փոխատու սատանայ, որ փոխ ետ զարծաթն, քննեաց և զոր ինչ բարի կայր՝ քաղեաց 'ի յուդայէ. և հրեայք ընդ-հարկաւ մնին, և յափշտակեցան ստացուածքն։ Սիմաքոս՝ պարտակատոր, որ է հարկահանն։

Մի՛ գտցի օգնական նմա. և մի՛ ոք ողորմեսցի 'ի վերայ որբոց նր։

Ո՛չ գտաւ երբ ած եթող 'ի ձեռաց։

Եղիցին որդիք նր 'ի սատակումն, և յազգէ ջնջեսցի անուն նր։

Կոտորեցան հրեայք, և յուդայ այլ ո՛չ գտնեն անուն ուրեք, գարշելով իբր 'ի պղծոյ։

Յիշեսցին մեղք հօր նր առաջի տն. և մեղք մօր նր մի՛ ջնջեսցին. և եղիցին առաջի տն յամենայն ժամ։

Մխաւոր ասէ զմիակամ հրեայսն, և զորոյ զգործս գործէին՝ հայր նց և մայր, որք յանապատին մեղան զհայր անարգելով. մայր՝ զերմ ասէ, որք անդէն մեղան. մի՛ ջնջես-ցի, զի ո՛չ դարձութիւն է կենաց, նոյնպէս և մահու. ո՛չ այդ-տեղ ժողովեալ և կնքեալ պահի 'ի գանձի խորում։

Սատակեսցի յերկրէ յիշատակ նց. փոխանակ զի ո՛չ յիշեաց առնել ող-որմութիւն։

Որ լուաւ թէ՝ երանի ողորմածաց։

Հալածեաց զայր աղքատ և զտնանկ. սպանանել զարդարն, որ խոնարհ է սրտիւ։

Որ վասն մեր աղքատացաւ, և տեղի ո՛չ ունէր գլխոյն, և ասէր՝ հեզ եմ և խոնարհ սրտիւ, հալածեաց 'ի մահ։

Սիրեաց զանէծս՝ և եկեսցէ նմա. ոչ կամեցաւ զօրհնութիւն, հեռի եղիցի 'ի նմանէ։

Սիրեաց՚՚, որ զՏէրն անիծեալ առնէր խաչին, խաչն եւ, զի նա աղբիւր օրհնութեան է. ոչ կամեցաւ լսել եկայք, այլ՝ գնացէք անիծեալք։

Զգեցաւ զանէծս որպէս զհանդերձ. մտցէ որպէս ջուր 'ի փոր նորա. որպէս ձէթ յոսկերս նորա։

Շուրջանակի յամ կողմանց 'ի ներքս մտցէ իբրև զջուրս այլ՝ յոսկերս իբրև զձէթ, յորդ իբրև զջուր, և կայական իբրև զձէթ։

Եղիցի նմա որպէս հանդերձ զոր ագանի. որպէս գօտի՝ որ ածէ հանապազ զմէջ իւր։

Հանդերձ՝ որ յամ օր ագանի, և ածի ընդ մէջ գօտի. նոր անէծս առցէ յամ օր, իբրև զհանդերձ վարակեալ, իբրև զգօտի պնդեալ։

Այս գործ է այնոցիկ, որ չարախօս լինին զինէն առ Տէր, և որք խօսին չար զանձնէ իմէ։

Ինքեանք ասէ գործեցին անձանց և ոչ ես. առ Տէր, այլն այն ասէին չէ յոյս. այլ՝ յոյս խնդրէին պատուհաս։

Այլ դու Տէր Տէր՝ արա ընդ իս վասն անուան քում, զի քաղցր է ողորմութիւն քո. և փրկեսցես զիս՝ զի աղքատ և տնանկ եմ ես։

Արա ընդ իս, ընդ բնութիւնս, մի՛ ընդ չարութիւն հրէից, այլ՝ ընդ ողորմութիւն քո, և ընդ անուան քո՝ զի հայր ես։

Սիրտ իմ խռովեցաւ 'ի փորի իմում. և իբրև զստուեր 'ի խոնարհել իւրում պակասեցայ. և թօթափեցայ որպէս մարախ։

Սիրտ իմ խռովեցաւ որ ասաց՝ այժմ անձն իմ խռովեալ է. և ես ոչ ստուեր խոնարհեալ 'ի գետին, 'ի խուսափել՚՚, խոյս տայր յանապատ տեղիս, և խուսեաց առանձինն. և պակասեցայ, և թօթափեցայ, 'ի նմանէ առաքեալքն իբրև ընդ մարախ։

Ծունկք իմ տկարացան 'ի պահոց. և մարմին իմ այլափոխեցաւ յիւղոյ։

Իբր յակոբոս եղբայր Տն՝ որոյ խստացեալ էին ծունկքն։

քըն, և խուզել երբէք ոչ օծաւ. և ամ՛ առաքեալքն սովալ-
լուկ լինէին և հասկ փշրէին

Եղէ ես նախատինս նոցա. տեսին զիս՝ և շարժեցին զգլուխս իւրեանց:

Շարժէին և ասէին՝ վահ որ քակէիր զտաճարն և զե-
րիս աւուրս շինէիր:

Օգնեա ինձ Տէր ԱԾ իմ, և փրկեա զիս՝ ըստ ողորմութեան քում:

Իբր ասաց պետրոս յընկղմելն:

Ծանիցեն զի ձեռն քո այս է, և դու Տէր արարեր զայս:

Քո կամօք մեռանիմ ասէ. և դու արարեր և ոչ նոքա
զորէին. ձեռն քո, գործք քո է ասէ:

Նոքա անիծանիցեն, և դու օրհնեսցես. որք յարուցեալ են 'ի վր իմ
ամօթ կրեսցեն. այլ ծառայ քո ուրախ եղիցի 'ի քեզ:

Լայչեն. և դու օրհնեսցես, փառաւոր արարե. ամօթ
կրեսցեն՝ յորժամ տեսցեն եկեալ ամպօք և փառօք. այլ ծա-
ռայ քո ուրախ եղիցի 'ի քեզ, ծառայական մարմինս այս
մեծացեալ 'ի փառս քո:

Զգեցցին ամօթ՝ որ չարախօսեն զանձն իմ. և արկցեն որպէս կրկ-
նոց՝ զամօթ իւրեանց զերեսս:

Յետ յարութեանն, և յորժամ հայեսցին՝ յոր խոցեցին.
կրկնոց՝ երեսք և ամօթ լցցի:

Այլ ես խոստովան եղէց քեզ Տէր յոյժ բերանով իմով. 'ի մէջ բազմաց
օրհնեցից զքեզ:

Եկեղեցեաւ՝ որ բերան է քն յորժամ հանէ զմնացորդն
'ի պատուհականէն:

Զի եկաց նա ընդ աջմէ տնանկին, 'ի փրկել զիս յայնցանէ, որք հալա-
ծէին զանձն իմ:

Զնա ասէ միայն հայր ընդ խա է. փրկել զիս՝ 'ի կապա-
ղաղեցն՝ որ հալածեն զեկեղեցի:

'Ի կատարած. սաղմոս 'ի դաւիթ:

Զծնունդն որդւոյ 'ի հօրէ և զյարութիւնն յետ չարչարանացն, և զնստել
ընդ աջմէ հօր՝ մարգարէանայ:

ՍԱՂ.

ՍԱՂՄՈՍ ՃԹ.

Ասաց Տր ցՏր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ, մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց։

Պետրոս 'ի գործս առաքելոցն ասաց զսկիզբն սաղմոսիս ոչ թէ դաւիթ ել յերկինս, այլ ինքն դաւիթ ասաց, ասաց Տր ցՏր իմ՝ նիստ ը աջմէ իմմէ. եւ զի՝ Տրն հայր ամենայն յառաջ դաւթի խօսել եւս մի եւր, եւ յն եկն 'ի լոյս, առ ասաց ը փարիսեցւոցն, ձեզ զի՞նչ թուի վն քի՝ ո՞յր որդի է, եւ յասելն դաւթի՝ զբանս զայս ասաց, զիա՞րդ դաւիթ հոգւովն Տր կոչէ. ոչ յուրաստ եկաց՝ զոր գիտէինն թէ որդի է, այլ ուսոյց զոր ոչն գիտէին, թէ Տր նր եւս է, եւ որդի. զի Տրն եւ Տրն՝ զնոյն բնութեն հաւասարութիւն ցուցանէ։ Նիստ ը աջմէ", մեծ է այս՝ սակայն մարդկութեն ասի. զոր ու- նէր երբեք զնծ, եւ առ երբեք զմարդ. զի Ածութիւն երբեք զարեգակն է, ոչ ասի աջ եւ ձախ. իսկ մինչ՝ սարաս է Ածային գրոցն եղեալ, առհասարակ մեհասարակ։ Այլ՝ ը դասիւքն, 'ի բառնալ զաղանացն՝ թագաւորէ անկախձանն, եւ չկամեցո- ղացն եւս. նք են թշնամիք եւ դեւք, 'ի հաստուցմանն աւուր- ցայ՝ անկասկած այնուհետեւ ասի ունել զթագաւորութիւն։

Զգաւազան զօրութեան առաքեսցէ քեզ Տր 'ի Սիօնէ. եւ տիրեսցես դու 'ի մէջ թշնամեաց քոց։

Զոր եսայի բղխեսցէ գաւազան յարմատոյն յեսսեայ ասէ զկոյսն. եւ 'ի սրտէ հօր բղխեալ բանն անժամանակ՝ ա- նախատաբար 'ի մարիամայ երեւեալ մի լինի. եւ ելցէ ծաղիկ սքանչելիքն, կամ 'ի թէոբոր փայլատակումն։ Դարձեալ՝ գա- ւազան խաչն՝ որ 'ի սիոն ցցեցաւ. գաւազան 'ի սիոնէ՝ զի- ա՞րդ առնուն զսա 'ի վր աբր հմու, որե 'ինմանէ ինն հարեւր ամեւ յետոյ շինեցաւ սիոն 'ի դաւթայ. եւ զի՝ առա զօրութ գաւազան ասէ, զի նուլաւ զօրացան Տմ առաջինքն, եւ մեք իսկ՝ 'ի մեր ակարութեն. զի զօրութիւն հօր յն՝ 'ինմայ է յաւիտեան. եւ նա առնէր եւ առնէ զօրութիւս մեծամեծս։ Եւ տիրեսցես դու". զի խաչին քարոզքն ոչ դիւրութ՝ եւ 'ի մէջ սիրելեաց գնացին, այլ 'ի հեթանոսաց եւ 'ի բարբարոսաց պաշարեալք. բայց՝ զօրութը խաչին զօրանային, յաղթէին, տիրէին, եւ մատուցանէին խաչեալ թագաւորին. 'ի սիոնէ առաքեալ ասէ, եւ ոչ յերկրէ, այլ 'ի վերինն սիոնէ՝ ուր նախ նք գիտէին զնա։

Ընդ

Ընդ ձեռն ինչ ունելոյն առաջնոյ պտղոյն. 'ի ճաշակելն ... յառաջ գտանել յառաջ քան զարուսեակն ծնայ զքեզ:

Օր զօրութեն՝ երկրորդ դալուսանն է, երբ փրկիչն փա-
ռօքն հօր գայ, և նա է սկիզբն աւուր, և վերջին միաշաբա-
թին մեծ, և զօրութիւն անդ առաւել ցուցանի. Թէպէտ և
միշտ ընդ նմա է 'ի սկզբանէ, և ամ զօրութիւնքն՝ որ 'ի մէջ ա-
ւուրցն եղև. ընդ նմա է. և ինքն յառաջ է և յետոյ՝ քան զօր
և զժամանակ, ածելով զիւր զօրութիւն: Յարգանդէ յառաջ
քան զարուսեակ ծնայ զքեզ, զէութիւն և զածութիւն ցու-
ցանէ. ոպ յորովայնէ ծնանելն որդւոյ, և զընութի ծնողին ու-
նին: Անժամանակ, անախտ, անհատաբար ծնեալ ասէ զգե-
ղեցիկ բնութի ածութեն, յանհատ և յանախտ արգանդէ՝
լուսոյն անմատոյց: Եւ ծնեալ անուանեցաւ նախ քան զժա-
մանակ՝ վս միածնելաւոր ծագմանն 'ի ծոցոյ հօր: Եւ զի
արուսեակն նախ քան զարեգակն է՝ զոր ած արար և սահ-
մանեաց զընթացս նց: 'Ի վայելչութի սբց ասելով, ցուցանէ
թէ՝ յանձառ խնամութեամբ այս՝ միայն սբքն վայելեն անդ.
հասկանալով զօրինակ անձառ ծննդեանն որդւոյ, որ է դէմ
յանդիման՝ ընդ առաքելոյ: Մեծ զօրութի է՝ որ հողեղէն
բնութիւս միաւորի ընդ այ և առեալ և վայելէ:

Այն որ ծնաւն զնա յառաջ քան զարուսեակ, երդ-
ուաւ նմա 'ի լինելն մարդ: Ած թագաւորութի եւ հրէից,
և հեթանոսաց, քաղդէացւոց, մարաց, պարսից, մակեդոնաց-
ւոց, հռոմայեցւոց, հայոց, ասորւոց, և յունաց. և հրէից՝
քահանայութի ևս, և ոչ կային հաստատուն, զի առանց երդ-
ման առեալ. և քսին անեղը և յաւիտենական է թագաւորութի
և քահանայութի, զի երդմամբ է. զթագաւորութիւն 'ի կու-
սէն ակսաւ, զի յերկուցն էր, և կոյսն յազգէն յուդայ. և զք
քահանայութիւն 'ի յորդանան 'ի յոհաննէ, ոպ ձեռնադրութ
զոր եցոյց 'ի բաշխել զհոգւն 'ի վերնատանն: Զի և մելքիսե-
դեկ զէմ շինեաց, և անդ թագաւորեաց, և հաց և գինի
նուիրեաց աբրահամու. և տրն նորոգեաց զէմ, և զնոյն
բաշխեաց, և ոչ անասուն կենդանի: Մելքի՝ թագաւոր,
սեդեկ՝ քահանայ, թագաւոր խաղաղութեն՝ որ է թագաւոր
սաղիմայ. թագաւոր արդարութեն՝ որ է սեդեկն, զի արդա-
րութի ասի. անմայր յառաջնումն, անհայր յերկրորդումն.

յա

յաւիտեան՝ որոյ ոչ սկիզբն աւուրց, և ոչ կատարած կենաց․ որ միախառնեաց զԹագաւորութիւն և զՔահանայութիւն յինքն 'ի տանէն Ղևեայ․ պատուական տիզն Թագաւորական եւ Հեթանոսաց․ և միշտ մատուցանէ զինքն Հօր՝ Հացիւ և գինեաւ իբրև զգլուխ անդամոց այլոց մատուցողացն է, և ընդունիչ ընդ Հօր և ընդ Հոգւոյն։ Եւ Տր է աջմէ քումմէ, որդի է աջմէ Հօր, և Հոգի է աջմէ որդւոյ. զի Հոգին Տր է․ և բնաւէն աջ է անդ, և ոչ գոյ ձախ։

Խորհրդածեայց յաղագս Երկնաւորին զ[illegible]․ դարձ զ[illegible], և Երկրում աւանդէ զ[illegible]․ և Խորհրդածեայց զԳլխոյ Եկեղեցւոյ յերկիր։

Աբրահամու զգողոպտադարձումն․ և զկնի դարձին զլօզ։ Յաւուր բարկութեն, զի յայտնելոց է բարկութիւն 'ի կատարածի, և չար իշխանութի զինուց և չարաց, յորժամ խափանեսցէ զամ իշխանութիւն և զպետութիւն։ Դատի զհեթանոսս, որպ զկնի խաչին՝ զնեմ և զհրէայսն հալածեցաւ քն, և անդզամ ձախակողման բազմութիւնն՝ հալածեալք հարեալք յանիծեցն և ածեալք յանշէջ հուրն։ Եւ խորտակեսցէ զգլուխս բազմաց, զգլուխ պէսպէս աղանդից, և հերձուածողաց․ զի մի գլուխ կանգնի որն՝ միոյ եկեղեցւոյ։

Զջուրս 'ի ճանապարհի արբցէ․ վասն այսորիկ և բարձր արասցէ զԳլուխս։

Հրեիցն ուղխքն էին, և ոչ միջակայք․ օրէնք, և մարգարէք, և քահանայութի, և թագաւորութի, և տաճար, և ամ բարիք․ զոր սակաւ ժամանակս արբին իբրև զձմնապարհորդք․ ոչ ախորժելի և յստակ, զի մաղձով լի էին, անխորժ թոյնք իբրև զուղխաջուր, և արդ ցամաքեցան։ Վս այնորիկ՝ որ եկեղեցի՝ զյստակն՝ զմշտակայն ունելով՝ զի ծարաւի էր մաքուր ախորժակօք, որհնէ և բարձր առնէ զգլուխ իւր զքս, բանիւ և խորհրդով, մինչև միանայ է նմա 'ի հատակն՝ առեալ զգլուխն յանդրանական յաւիտենից հօրըն կամակցութի։

Աղօթք։

Յեկեղեցւոյ [illegible] [illegible]՝ օրհնեսցուք [illegible], Տր՝ զՔս։ Յաղագս [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible], յաւուր [illegible] [illegible] [illegible], [illegible], [illegible], և [illegible] 'ի [illegible], [illegible] [illegible], և յաղագս [illegible] [illegible] Տր [illegible] [illegible], և [illegible] Տր, և [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible], և յաղագս [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], և [illegible]։ Կատարեա [illegible]՝ [illegible] [illegible], 'ի [illegible], յաւիտեանս [illegible]։

ՍԱՂՄՈՍ. ՃԺ.



ԽՈՍՏՈՎԱՆ ԵՂԷՑ ՔԵԶ ՏԷՐ բոլորով սրտիւ իմով, 'ի խորհուրդս ուղղոց, 'ի ժողովուրդս մեծ են գործք տն. և խնդրեալ են յամս կամս նր:

Բոլորով սրտիւ և խորհրդով պարտ է խոստովանել զԱծ ուղղոց 'ի ժողովս, կցորդ զուգերոյն ծծպէսուղուին՝ հաւատովք և գործովք սանով. որով ասեմք, մեծ են գործք քո Տր և քննեցաւ, և յայտնի եղև եթէ կամք նր բաւական է վճարել գործ մեծ:

Խոստովանութիւն և վայելչութիւն են գործք նր. արդարութիւն նր մնայ յաւիտեանս յաւիտենից:

Խոստովանութի, գործք արարածոցս խոստովանել տան զնա՝ վայելչութբն, աստեղօք, արեգակամբ, և լուսնիւ. օդ, երկիր, ծաղիկ, ծովք, և լուսակքն: Արդարութիւն նր մնայ", դատաստան նր, զի չարար ինչ պակաս:

Յիշատակ արար սքանչելեաց իւրոց ուղղոց. ողորմած գթած է Տր, կերակուր ետ երկիւղածաց իւրոց:

Յիշել ետ մեզ զառաջին սքանչելիսն՝ որ 'ի փարաւոն, և յանապատի. չէաք արժանի, այլ՝ ողորմած գթած էր. կերակուր ետ, սնմամբ՝ որս ետ երկիւղածաց իւրոց. զի զայլոցն տունն տուար:

Յիշեաց յաւիտենից զուխտ իւր. զզօրութիւն գործոց իւրոց պատմեսցէ ժողովրդեան իւրում:

Յիշեաց զաբրահամեան. զզօրութին գործոց իւրոց, այժմս սքանչելեօքս պատուիրեաց մի վախել յումեքէ, միայն երկիւղածք լիցին:

Տալ նց ժառանգութիւն հեթանոսաց. և գործք ձեռաց նր արդարութիւն և իրաւունք են:

Զաւակ քո զհեթանոսս ժառանգեսցէ ասաց աբրահամու. և գործք ձեռաց նր", զի չունին ինչ տրտնջել զմէնջ եթէ՝ արարաք մեղս ինչ նց. և Աձ արդարութբ արար, զի զոր ինչ մեզ խորհեցան՝ նց դիւրեցոյց, մովաբացւոց և այլոցն:

Հաւատարիմ են ամենայն պատուիրանք նորա. հաստատեալ են յաւիտեանս յաւիտենից. արարեալ են ճշմարտութեամբ և ուղղութեամբ։

Հաւատարիմ են, զոր Մովսէսիւ պատուիրեաց ամենայն. զոր ինչ խոստացաւ՝ հաստատեաց և արար ճշմարտութեամբ. Թէ մինն 'ի ձէնջ զհայրս հալածեացէ։

Փրկութիւն առաքեաց Տէր ժողովրդեան իւրում. պատուիրեաց յաւիտենից զուխտ իւր. սուրբ և ահեղ է անուն նորա։

Փրկութիւն առաքեաց, զՄովսէս՝ զՅեսու, և այլ հրեշտակ՝ որ եարկ խաւարութիւն 'ի հեթանոսս, և սատակեցին զեր եարս. պատուիրեաց զուխտ պահել՝ զոր եդաք ի Տն. Սուրբ և ահեղ է անուն նորա, զի զանուն նորա կարդացաք, և անհոգ եղաք։ Դարձեալ՝ զՅիսուս առաքեաց Հայր. պատուիրեաց զուխտ իւր՝ 'ի վերնատանն. Սուրբ և ահեղ է անուն նորա՝ 'ի վերայ դիւաց, և գնդերն յուդայի, և ամենայն ցաւոց, և ձախակողմեանն դասուց։

Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն. իմաստութիւն բարի ամենեցուն՝ որ առնեն զնա. և օրհնութիւն նորա մնայ յաւիտեանս յաւիտենից։

Սկիզբն իմացմանց իմաստութեան՝ երկիւղ Տեառն, եթէ առաջին դաստիարակ հանելոյ 'ի մեղսն. իմաստութիւն ոչ որ լեզուաւ ճարտար են, այլ՝ որ գործով կատարեալ են. և այս սկիզբն և հիմն այն է՝ զի երկեաք յնմ, զի յորժամ բնակեսցի 'ի մէջն նորա՝ իմաստուն է և ողջախոհութիւն. և օրհնութիւն նորա մնայ յաւիտեան 'ի վերայ մեր։

Ալէլուիա. 'ի վերայ ապաշխարութեան, Անգեայ և Զաքարեայ։
Օրհնութիւն է և այս՝ յորժամ առաջնոյն, որ յորդորեաց յերկիւղ Տեառն, և առ առէ զն շնորհութիւն և երկիւղի, և ողորմութիւն, խրատելով զերկս մարմնաւոր՝ և հոգևոր, զոր 'ի նորին ասացաւ։

ՍԱՂՄՈՍ. ՃԺԱ.

Երանեալ է այր՝ որ երկնչի 'ի Տեառնէ. զպատուիրանս նորա նա կամի յոյժ։

Զի երկիւղն Տեառն խորշի ամ որ 'ի չարէ։ Զպատուիրանս նորա նա կամի յոյժ, զՏէր մեծ տեսանելով՝ յոյժ կամի զհաճոյ լինելն։

Հզօր եղիցի յերկրի զաւակ նորա. և ազգ ուղղոց օրհնեսցի։

Ով ամբահամաւն՝ որոյ զաւակն եհերձ զձով, և զգետս 'ի վեր զարձոյց, և զարեգակն և զլուսին և զաստեղս կացոյց։ Եւ՛ ապա ու զորս օրհնեսցի, ուղէր հաւատացելոց։

Փառք և մեծվայելչութիւն 'ի տան նորա. արդարութիւն նր մնայ յաւիտեանս յաւիտենից։

Անկատարիցն այս վայելէր. իսկ՝ կատարելոցն զխաչն խոստացաւ Տրն. փառք և մեծութիւն եղև 'ի զաւակին դաւթի 'ի սողոմոն. և արդարութիւն եկեալ յարեցաւ 'ի քս. և 'ի նա հաւատացեալս նր։

Ծագեաց 'ի խաւարի լոյս ուղղոց. ողորմած գթած և արդար է Տր։

Յարմարի բանս 'ի վր եզեկիայ՝ 'ի կործանմանն ասոր_ւոց, յորում՝ ծագեաց նմա լոյս մեծ՝ որ ուղիղն էր։ Ծագ_եաց 'ի խաւարի անգիտութե զլոյս գիտութե, որ եցոյց զյոբ, զյովսէփ, զդանիէլ, զհռութ, զեսթեր, որ ուղիղք էին Պարծէ՝ թողու զբան նեղիլ իբր 'ի խաւարի, զի ցուցցէ քաջութիւն իւր յորայն. ողորմած, գթած, և արդար. ողորմածացն, և գթածացն, և արդարոցն։

Քաղցր այր՝ որ ողորմի և տայ փոխ, յօրինէ զբանս իւր 'ի դատաստանի. զի յաւիտեան ոչ սասանեսցի։

Սիմաքոս՝ բարի մարդ շնորհօղ և փոխատու. զի որ ողորմի աղքատի՝ փոխ տայ Տյ, առակքն ասէ. և այս յայտնի է, յո քաղցր այրն՝ փոխ ետ զքանքարսն, և յօրինէ զբանս իւր՝ 'ի պահանջելն. այլև՝ ողորմածն զգուշանայ, զի յայլ պատաս_խանիս՝ մի պարտաւորեսցի բանիւ, սասանել լինէ 'ի պատուէր բանից Տն։

Յիշատակ յաւիտենից եղիցի արդարն. 'ի համբաւոյ չարէ ոչ երկիցէ։

Իբր զարձան գրեալ անմոռաց զանէրն Տյ, և զպատուէր բանին. այլք տեսանեն և յիշեն յետոյ զփառս նր ողջ զեզե_կեային, և զմտօքն. 'ի համբաւոյ չարէ նա մի երկիցէ, 'ի սպառնալեաց սենեքերիմայ. և յայնժամն՝ որ ասէ ո՞ պատմես ցէ ձեզ թէ՝ հուր բորբոքեալ կայ. և զլալաչացն, և զայլսն. զի պսակ աչն ունի, և ոչ տանջանաց։

Պատրաստ է սիրտ նր յուսալ առ Տր։

Սիմաքոս՝ անշարժ է սիրտ նր 'ի յոյսն, որպէս պօղոսի, կայ և մնայ ինձ արդարութեան պսակն։

Հաստատեալ է սիրտ նր. և ոչ զ' երկիցէ մինչև տեսցէ 'ի թշնամիս իւր։

Յանշարժ հաւատոմն հաստատեալ, և զոր ինչ նմա էին խորհեալ յայս կեանքս թշնամիք իւր։

Սփռեաց՝ և ետ աղքատաց. արդարութիւն նր մնայ յաւիտեանս յաւիտենից. և եղջիւր նր բարձր եղիցի փառօք։

Իբր զսերմն է ողորմութիւն, որ սիրամամբ մատանցն ցանի և առնէ բազմապատիկս. թէպէտ տուեալ լիցին աղքատականի, արդարութիւն մնայ յաւիտեանս յաւիտենից, և եղջիւր նր բարձր եղիցի փառօք, այսինքն է 'ի գլուխն եղեալ, իբր եղջիւր 'ի գլուխ կենդանւոյ. և բարձր 'ի գլուխ պարծի ասէ ողորմութիւն առ դատաստանաւն։

Մեղաւորն տեսցէ՝ և բարկասցի. զատամունս իւր կրճտեսցէ, և հալեսցի. և ցանկութիւն մեղաւորաց կորիցէ։

Տեսցէ սատանայ և բարկասցի, և չկարէ ինչ առնել՝ քան թէ ժառանգել զլալ աչացն և կրճտել ատամանցն, և հալել 'ի բոց կիզանող։ Նաև՝ ամ անողորմք իբրև զմեծատունն. և ցանկութիւն մեղաւորաց կորիցէ, սատանայի ցանկութիւն էր ընդ իւր կորուսանել զադամ. և յիմար կուսանացն և մեծատանն հանգիստն կորիցէ՝ զոր ոչ առին. ամ մեղաւորի դէպի վրիպել յիւր ցանկութեանցն։

Ալէլուիա։

Օրհնութիւն և այս անմեղաց. զի 'ի ժամ առաւօտու չոգաւ փառքն 'ի խորանն, և գտաւ 'ի լուսաբեր զտառս երգողաց, և ջահանդայից, և առաջ՝ օրհնեցէք մանկունք զՏր։ Դարձեալ՝ հաւատք և 'ի մէ զօրաժողովել։

ՍԱՂՄՈՍ. ՃԺԲ.

Օրհնեցէք մանկունք՝ զՏր. և օրհնեցէք զանուն Տն։

Մանկունք՝ ոչ զտղայսն ասէ, այլ՝ զարիսն, և զարթունսն, և զքաջսն ասէ։ Այլ՝ ոմ ակիւղաս, և սիմաքոս ասեն յերկրպագելոյն տաղօն՝ է ծառայ, որք էն քահանայքն, և ասա՝ գնեալքն արեամբն քո. և օրհնեցէք զանուն տն,

Թէ

թէպէտ զբնութիւն անգիտանայք ասէ, զանունն օրհնեսցէք, և ինքն առաջնորդէ ասելովն։

Եղիցի անուն Տն օրհնեալ, յայսմ հետէ մինչև յաւիտեան։

Զսոյն անուան Տն օրհնեմք, որ և ամենեցուն մեզ բաշ-խէն բնիր բարութիւնք։ Յայսմհետէ՝ որ եղաք մեք քրի՛ ան-մահ՝ յուսով մինչև յաւիտեան։

Յարևելից մինչև ՚ի մուտս արևու՝ օրհնեալ է անուն Տն։

Զայս և ինքն ած ասաց, ոչ են կամք իմ ՚ի ձեզ, խուն-կըս ոչ առնում ՚ի ձեռաց ձերոց. զի յարևելից մինչև ՚ի մուտս արևու՝ անուն իմ օրհնեալ է. քանզի և հեթանոսք անգիտաբար զանուն ած օրհնէին, եղեւալ կուոցն, զոր ած առնոյր զպաշտօնն, և ոչ անշունչքն։

Բարձր է ՚ի վերայ ամ ազգաց Տր. և յերկինս են փառք նր։

Տն զալստեամբն՝ և բարձրանալովն ՚ի խաչէն՝ ձայնա-կցեցին ամ ազգք, արեգականն խաւարմամբ և երկրի շարժ-մամբն. և յերկինս են փառք նորա՝ քերովբէքն որք ասեն՝ օրհնեալ են փառք Տն ՚ի տեղւոջ իւրում։

Ո՞վ է իբ՟ Տր Ած մր ՚ի բարձունս բնակեալ. և զխոնարհս տեսանէ յերկինս և յերկրի։

՚Ի բարձունս բնակեալ՝ ուր հանգչի, և ոչ եթէ բովան-դակի անդ. և զխոնարհս տեսանէ զի որչափ բարձր են եր-կինք յերկրէ, և ած այնչափ բարձր է քան զերկինս. և թէ-պէտ ՚ի ձեռս նր են իմանալիք և զգալիք, այլ այսպէս ասի, զի խոնարհ են արարածք քան զարարիչն։

Յարուցանէ զաղքատս յերկրէ. և բարձր առնէ զտնանկն յաղբեսոյ։

Զմովսէս, զդաւիթ, զսամուէլ, զզօրաբաբէլ։ Եւ բարձր առնէ զհեթանոսս՝ որք տաւապանօք շրջէին զատա-նել զած ՚ի խոնարհս, և ինքեանք յաղբեւսս մեղաց գարշանայ-ին. ուստի՝ բարձրացուցանելով զինքն ՚ի վեր՝ քան զամ զօր-նաքայն կարծեցին, և զնա բարձրացուցանէ ՚ի հրեշտակս նրս տուցանելով։

Նստուցանէ զնա ընդ իշխանս՝ ընդ իշխանս ժողովրդեան իւրոյ։

Զհրեից

Զհրեից առաջնորդսն՝ յաղքատաց ընտրեալ. ընդ իշխանըս ժողովրդեան Իւրոյ՝ ընդ քահանայսն նստել, և զհեթանոսս աստէն ընդ առաքեալսն՝ հրաման տալ դիւաց, և ցաւոց, և ախտից:

Բնակեցուցանէ զամուլն 'ի տան ուրախութեան, որպէս մայր որդւոց ուրախեալ:

Զասուայ, զանբերկայ, զմննայ, զկռապաշտեալ, զեկեղեցի 'ի վերինն Եհմ բնակէ իբրև զմայր՝ իւրովք զաւակովք բերկրեալ:

Ալէլուիա:

Օրհնութիւն Տն՝ և գնալոց առաքելութեանն յայս սաղմ. և ընդդէմ՝ պատմութիւնէ հնոյն Իէլի՝ 'ի գնալոց զօրաբանակն, այլև՝ մարգարէութիւնէ նորոյս:

ՍԱՂՄՈՍ. ՃԺԳ:

Յելանելն Իէլի յԵգիպտոսէ. տանն Յակոբայ 'ի ժողովրդենէ այլազգեաց:

Եղև Հրէաստան սրբութիւն նր, և Իէլ իշխանութիւն նր:

Տաճարն անդ շինեցաւ, և ինքն իշխանութեամբ կալաւ ըզ պաղեստին:

Ծովն ետես և փախեաւ, և Յորդանան անդրէն դարձաւ:

Ծովն՝ նշանակ ծովու աշխարհիս, որ խաչիւն բաժանեալ փախոյց զկռապաշտութիւն, և զմեղս, և գետն դարձոյց ըզ բնութիւն՝ յԱծ և 'ի դրախտն:

Լերինք ցնծացին որպէս խոյք. և բլուրք որպէս գառինք մաքեաց:

Այնպէս թռչէր ցնծալ լերանց, և խայտալ բլրոց, ուր նոյնք փառաց Տն փայլէին: Այլև՝ լերինք մովսէս և աճարոն, և իշխանք իսրայելի. բլուրք մարիամ, և դասք պարու կանանցն՝ յերգելն թմբկօք խայտացին:

Զի է քեզ ծով, զի՞ փախեար. և քեզ Յորդանան, զի՞ դարձար անդրէն

Լերինք՝ ցնծացէք որպէս խոյք, և բլուրք որպէս գառինք մաքեաց:

Զանազանեալն հարցմանէ՝ զի յօրդորեսցէ զկենդանիս օրհնել զԱծ. և պատասխանէ հոգին:

Յերեսաց Տն սասանեցաւ երկիր. յերեսաց Այ Յակոբայ:

Որ

Որ առաց յակոբայ թէ՝ ը̄ քեզ իջից յեգիպտոս, և ելից, եւս՝ փախչելն յահագին երեսաց ո̄ն՝ յորմէ լերինք իբրև դիմահարեն. այլև՝ յայտ առնէ թէ՝ զսասանելն առէ խայտալ և ցնծալ. որ հայի յերկիր, և տայ դողալ. որ ՚ի խաչին գոլով ո̄ն սասանեցան տարերք ո̄մ. և լերանց ցնծալ առէ, զի այլ մի գիտեն ՚ի նմ̄ կուռս. այլ՝ լոյս և զաւրէնս նուիրեսցեն կենդանւոյն ա̄յ յակոբայ, որում նա նուիրէր ՚ի բեթէլ, և ՚ի սամիրոն, ՚ի պառնայն ՚ի միջագետաց։

Որ դարձոյց զվէմն ՚ի լիճս ջրոց, և զապառաժն յաղբիւրս ջրոց։

Ուստի երկրասասան աղբիւրք ը̄ ապառաժ տեղիս գնացին յերկրասասան ցեղսն հեղեղ, նշանակ վիմին յորի՝ ուստի ո̄մ երկիր ուղղեալ պարարտացան. և երկրասասան առաքեալքն փոխանակ երկրասասան վտակացն գնացին ը̄ տիեզերս։

Մի՛ մեզ Տր̄՝ մի՛ մեզ. այլ անուան քում տուր զփառս, վս̄ ողորմութե̄ և ճշմարտութե̄ քո։

Որ է մի մեզ բարկանար, և վս̄ մեր մեղացն արգելուլ զշնորհս քո։ Դարձեալ՝ եթէ պետրոս և յոհաննէս ասէին վս̄ կաղին, թէ ոչ անձին զօրութբ̄, այլ՝ անուամբն յսի եղև գնալ զնմայ. վս̄ ողորմութե̄՝ առ մեղուցեալսն. և ճշմարիտ խոստմանն քո՝ առ արդարսն։

Մի՛ երբէք ասասցեն ՚ի հեթանոսս, ուր է ած նց։

Զի սովոր էին ասել ՚ի յաղթահարելն զնս̄, թէ ո՞ւր է ած նց՝ որում պարծէինն, որ խռովեաց և սատակեաց զհարս նց, և զնս̄։ Այլև ՚ի տեսանել զնշանս յառաքելոցն՝ ասէին, ո՞ւր է ածն ձեր՝ որ զայդ առնէ ՚ի ձեռս ձեր. և ն՟ք ասէին։

Ած մր̄ յերկինս և յերկրի, զա̄մ զոր ինչ կամեցաւ՝ արար։

Զի նր̄ արարածք են, և զոր ինչ կամեցաւ՝ արար, և ոչ եթէ զոր կարաց։ Եւ՛ յորժամ յաղթութե̄ պսակն տացէ մեզ փրկելոցս, մեք ասասցուք յաղթահարելոցն։

Կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ են. գործք ձեռաց որդւոց մարդկան։

Զպատիւն ՚ի նիւթոյն ունէին, և զգեղեցկութիւն յարուեստէն. զի ձեռագործք են։

Բե

Բերան ունին՝ և ոչ խօսին. աչս ունին՝ և ոչ տեսանեն:
Ականջս ունին՝ և ոչ լսեն. ռունգս ունին՝ և ոչ հոտոտին:
Ձեռս ունին՝ և ոչ շօշափեն. ոտս ունին՝ և ոչ գնան. և ոչ գոյ ձայ-
նա 'ի կոկորդս նց:

Զերկրպագեալս կենդանեաց ունին և ոչ զկենդանութիւն. և վասնզի են քան զմարդ կենդանիս, զձայնս և զմէտս. զի նոցա շարժեն գոնեայ և թաւալին և գնան. նոցա՝ որք արարին, անմտագոյնք են քան զնոսա:

Նման նց եղիցին, որք արարին զնոսա. ամենեքեան որ յուսացեալ են 'ի նոսա:

Անմիտք և անզգայք լիցին մահուամբ:

Տուն Իսրայելի յուսացաւ 'ի Տր. օգնական ընդունելէ է նց:

Որ ընկալաւ յերկիրն պարգևաց:

Տուն Ահարոնի յուսացաւ 'ի Տր. օգնական ընդունելէ է նց:

Նուիրացն ընկեր էր, և ուխտին քահանայութեան արհամարհողաց նոցա:

Երկիւղածք Տն յուսացան 'ի Տր. օգնական և փրկիչ է նոցա:

Քահանայութեան՝ առանձինն պատիւ դնէ, և զերկուս պատուէ՝ զորս երկիւղած ասէ: Քանզի երկիւղածացն 'ի սէրն տրկանէր օգնելով ընական օրինացն, և փրկէր 'ի կռապաշտութենէն: Դարձեալ՝ այս երեք տունս՝ զերեք հասակս ասէ՝ զկատարեալս որ 'ի վեր քան զօրէնս գործեն, և զարդարս՝ որք ըստ օրինացն առնեն, և զապաշխարողս՝ որք երկնչեն յայ, և ապաշխարեն, և երկիւղած՝ զերկամտութ ասէ, որք երկեան 'ի ճշմարտութենէն այ, և եկին առ նա:

Յիշեաց զմեզ Տր. և օրհնեաց զմեզ. օրհնեաց Տր զտունն Իսրայելի. օրհնեաց Տր զտունն Ահարոնի:

Զի զմեզ յօրհնելն յիշեաց, և օրհնեաց զմեզ, զի զօրհնելոյ իւր օրհնէ: Զտունն Իսրայելի, զտունն Ահարոնի զերկիւղածս՝ զաւագեղսն, զմիջինս, զկրտսերս. այլև՝ զհնոյն Իսրայելի զօրհնութիւն 'ի նորս դարձոյց, և զշնորհս քահանայութեն յեկեղեցի:

Օրհնեաց Տր զերկիւղածս իւր, զփոքունս ընդ մեծամեծս։

Զերկիւղածս փոքրկունս են՝ որ 'ի մարմնոյ տանջանաց եւ 'ի գեհենոյն երկնչին. եւ մեծամեծք՝ որք երկնչին թէ 'ի տեսլենէ նորա զրկին. եւ երկոքեանն օրհնին 'ի նմանէ։

Յաւելցէ 'ի ձեզ Տէր, 'ի ձեզ եւ յորդիս ձեր։

Մարգարէս յաւելցէ. այլ՝ զառաքելոցն որ յետոյ էին, եւ աշակերտացն նց։ Դարձեալ ասէ, յաւելցէ 'ի ձեզ զհեթանոսս, իբրեւ Տէրն յաւել յերկոտասանսն՝ զեօթանասունսն։

Օրհնեալ էք դուք 'ի Տեառնէ, որ արար զերկինս եւ զերկիր։

Ի Տեառնէ եւ ոչ 'ի կռոցն, որ յայլոց արարան։

Երկինք երկնից Տեառն են. եւ զերկիր ետ որդւոց մարդկան։

Որ վերագոյնն է այս զգալի երկնից, Տեառն են իմանալի, որ գիտէ զնա անդ. եւ զերկիրս որդւոց մարդկան ետ գիտել, եւ զվերինն ոչ քննել։

Ո՛չ եթէ մեռեալք օրհնեսցեն զՏէր, եւ ոչ ամենեքեան՝ որ իջանեն 'ի դժոխս։

Որք մեռեալ են մեղօք՝ չեն արժանի, եւ որք կուռս պաշտեն, եւ որք իջանեն 'ի դժոխս՝ յանհնազանդութիւն այ։


Այլ մեք կենդանիքս օրհնեսցուք զՏէր. յայսմհետէ մինչեւ յաւիտեան։

Ասէ յաւէ զմնացականին կենդանիքս 'ի մեռելոց յարուցեալ, զի կենդանիք օրհնեն զած. եւ որք ոչ օրհնեն՝ ոչ են բարւոք կենդանիք, այլ՝ վատք։

Ալէլուիա։

Զմոլորեալսն յերկրպագութեան զառաջինսն նշանակէ սաղմոսս։ Որպէս ասէն զերծեալ դառնէ 'ի պաշտամանէ դիւաց յոյնաց առ Աստուած, եւ ի եգիպտացւոց ելից. Այլ՝ եւ զերծեալ 'ի գերութենէն՝ ասէն զսոյն։

ՍԱՂՄՈՍ. ՃԺԴ.



ԻՐԵՑԻ ԶԻ ԼՈՒԻՑԷ ՏԷՐ ՁԱՅՆ աղօթից իմոց. խոնարհեցոյց զունկն իւր առ իս, եւ ես յաւուրս իմ կարդացի առ նա։

Կատարելոցն է ասել զսիրեցին, այլ՝ զպատճառն յաւելու՝ զի լուիցէ Տր։ Զի սիրեմ ասէ զնա. գիտեմ զի լուէ

ինձ

ինձ, զի զփորձ առեալ է իմ յառաջ։ Խոնարհեցոյց զունկն իւր, այսինքն՝ 'ի սիրտ 'ի ծածուկ, և 'ի խօսելն լսելեայն. խոնարհեցաւ և լուաւ, և ես ընդ այնր զամ՛ աւուրս կարդացից առ նա. զկեանս իմ, և զամ՛ արարածս 'ի նա եբերև 'ի գիր կարդալով։

Շրջեցան զինև երկունք մահու. և վիշտք դժոխոց գտին զիս։

Երկունք կոչի յառաջ քան զծնունդն ցաւք ծննդէն. և ամ՛ զոր տանջին կենդանեայն 'ի գերեզմանի. ուր չկայր ինչ աւէ միջոց ը դառն մահն և ը իս. զի դաւիթ յայրին, և մակաբայեցիքն ևս՝ այսպիսի վտանգ կրեցին, և դասք վկայիցըն քրիստոսի։

Զնեղութիւն և զտանջութիւն գտի, և զանուն տն կարդացի։

Անձկութիւն որ խիստ է քան զնեղութիւն, ես գտի ասէ։ զի դաւիթ արգել զինքն 'ի սպանանելոյ զթշնամիսն. և մակաբայեցիքն և վկայքն 'ի խիստ տալոյ պատասխանի. գտին զնեղութիւն՝ և չառնելով կերակուր, և աւելեաց ցանկալով վշտաց՝ նեղէին զինքեանս. և զանուն տն կարդացին յօգնութիւն, և սակս անուան նր կրեցին ասէ զայս ամ՛։

Ո՛ տր՝ փրկեա զանձն իմ. ողորմած տր մեր ողորմի՝ և պահէ զտղայս տր։

Ո՛ տր փրկեա 'ի ցասմանէ, և 'ի յանկութենէ, յերկիւղէ, 'ի տրտմութենէ, որ հոգւոյն են ախտք. և պահէ զտղայս տր, անդէն 'ի ստեղծմանէն յարգանդ մօրն սկսանի զխնամսն տր 'ի տղայսն։ Դարձեալ՝ զինքն տղայ կոչէ առ սաւուղ, ամ՛ առ գողիաթ, որ հնացեալ էին 'ի մեծմունս պատերազմողութե։

Ես խոնարհ եղէ՝ և տր կեցոյց զիս. դարձ անձն իմ 'ի հանգիստ քո. զի տր օգնեաց ինձ։

Վասն պատճառ խոնարհութեանն եղև ասէ. դարձ անձըն իմ 'ի հանգիստ քո, 'ի խոնարհութե կոչէ զանձն, զի նա է հանգիստ. այլև՝ քաջալերէ չերկնչել 'ի մահուանէ, զի մահ մարդոյ հանգիստ գրեալ է. զի դառնալ և ընդ այն լինել՝ սրբքն լաւ համարէին։ Զի տր օգնեաց՝, մարդ լինելովն աւերեաց զդժոխս։

Փրկեաց զանձն իմ 'ի մահուանէ, զաչս իմ յարտասուաց, և զոտս իմ 'ի գայթագղութենէ, հաճոյ եղէց առաջի տն յերկրին կենդանեաց։

'Ի մահուանէ՝ յայնմ մահուանէ. զաչս իմ յարտասուաց, ուր լալ աչաց է. զոտս իմ 'ի գայթագղութենէ յերթալոյն 'ի դժոխս. հաճոյ եղէց առաջի տն յերկրին կենդանեաց, զոր հեզոցն տալ ասաց տրն։

Ալէլուիա։

Եբրայեցին՝ և Ասորին՝ զայս և զհետեւեալն՝ մի գրեն, և զնոյն յերկուս հատանեն, զի յաւելուն 'ի մի միայ։ Զհամաձայնութիւն, և զմեկնութիւն սոր՝ ըստ հանդերձելոյն նշանակեսցէ։

ՍԱՂՄՈՍ ՃԺԵ։

Հաւատացի՝ վասն որոյ և խօսեցայ. և ես խոնարհ եղէ յոյժ։

Հաւատացի՝ թէ գոյ երկիր կենդանեաց, որ հաւատովք և ոչ աչօք տեսանի։ Թէև՝ ոմանք զպատուիրանն ասեն՝ ուր պաշտի կենդանին ած. և որ պաշտեն՝ կենդանի են. և ես խոնարհ եղէ յոյժ, ընթացակից է հաւատոյ խոնարհութիւն խոնարհեցայ ասէ, և ապա առի զշնորհս հոգւոյն։

Ես ասացի 'ի զարմանալ իմում, թէ ամ մարդ սուտ է։

Ակներեւ 'ի զբաղելն. սիմաքոս՝ յափշելն։ Յորժամ հաւատովքն որ 'ի հիացման եղեալ՝ 'ի բաց կայ յերեւելեացս, և ը այ եղեալ՝ չկարէ ինչ հաստատուն ունել նմա, և ասէ, ամ մարդ զինչ խօսի զանձառելեացն այ՝ սուտ ասէ։ Ոմանք ասեն՝ պատճառեցաւ առ աքիտոփելեաւ բանիւ, և առ անզգուշաւ կերպաւ բանօք, զայն ասէ։ Այլ՝ ասեն թէ հիացաւ դաւիթ՝ թէ հնար իցէ սուտ լինել սամուէլի՝ որ օծն զիս, զայն ասէ թէ՝ ես 'ի կորուստ սաւուղի եկի, և ամ մարդ հարկի սուտ։ Կամ ամ մարդ մեղանչէ, որ է սուտ՝ մեղքն։ Դարձեալ՝ որ զհետ կենցաղոյս գնայ՝ սուտ և ընդունայնութիւն է՝ ըստ սողոմոնի։ Այլ՝ զոր առաջեաւն ասաց զանձառն, զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ։ Թէ ոչ խօսի՝ ամ մարդ պակաս է, ած միայն է կատարեալ։ Այլ յորժամ դաւիթ զամ մարդ՝ սուտ ասէ, զմարդկոյ խորհրդոյ ասէ, և ոչ զհոգեւորն մարգարէիցն՝ զոր պիտոյանեանքն այլայնեն, զի մարգարէ 'ի վեր քան զմարդ է։

Զի՞նչ տաց փոխարէն տն ընդ ամի՞ զոր և ետ ինձ։

Այնքան մեծն՝ որ անհասն է 'ի մարդկանէ, զինքն ետ մեզ 'ի պաշտել, և զամ արարածս 'ի վայելել, զի՞նչ իցէ արեց նր արժանաւոր հատուցումն։

Բաժակ փրկութեան ընկալայց, և զանուն տն կարդացից։

Զմահն կոչէ բաժակ փրկութեան, զոր ետ տրն զմահն իւր 'ի ցուցումն սիրոյն առ մեզ, և այնպէս կոչեաց, և յորդւոցն որոտման՝ պահանջեաց։ Բաժակ՝ ասեն զինւոյ՝ բաժանիչ ասի, որ է մարմնոյ ամենայն մահու, և ածի տայ զմնականն. իսկ՝ զանփոխական և զյօժարական սէրն՝ այ տայ. զի

հաստատակաց է մահն, անմահից և մարդոյ. և զհաստատակացն՝ սեփհական առնել կատարելոցն է. վայ՝ փրկութեն ասէ բաժակ, զի տ՛րն այնու փրկեաց զմոլորեալս. սիրոյն մեր արբեալ ա՛մ գինեաւ՝ չզգայեաց յինչ զմեր կիրս նախատանաց: Ընկալցուք 'ի ձեռաց քո՛ւ, և զանուն տ՛ն կարդասցուք յի. եթէ նա զհօր անուանն, զբաժակն՝ զոր ետ ինձ հայր, ո՞չ արբից: Այլ զի՛ և յանուն անօթոյն՝ և զգինին սովոր եմք կոչել բաժակ:

Զաղօթս իմ տն տաց՝ առաջի ամ ժողովրդեան նր:

Զաղօթս իմ տն տաց, տր ես 'ի խաչին, տր մի՛ համարիր սոցա մեղս: Տայլն և ո՛րքն առաջին տմ, եթէ ստեփաննոս, յակոբոս, և յոլովք վկայք, զի և այս՝ պատարագ է:

Պատուական է առաջի տն մահ սրբոց նորա. ո՞վ տր ես ծառայ քո եմ, ծառայ և որդի աղախնոյ քո:

Մարդկան նախատինք թուէր և յիմարութի, իսկ՝ առաջի տն պատուական, զի ոչ ոք տեսանէ մարդ՝ տեսանէ տծ. մրդ յերևելիս, և տծ յաներևոյթն: Յամ արդ ծա պատուականն և ազնիւ կան. 'ի հրեշտակս՝ վերին դասքն՝ աթոռոցն, սերովբէիցն, քերովբէիցն. յերկինս՝ առաջին են նք տեղեաւ և փոքր: Յերկու լուսաւորս՝ արեգակն. յաստեղս՝ արուսեակն. 'ի կողմանս՝ արևելք. յերկրի՝ դրախտն. 'ի լերինս՝ սինայ, և թաբօր. 'ի գետս՝ յորդանան. 'ի յոսկին՝ արաբացւոցն. 'ի յակունս՝ շափիւղայն, և տպազիոնն. 'ի կանայս՝ մարիամ տծածինն. 'ի մարդն՝ տծն մարդացեալ. և 'ի յանարգ մահուանէ՝ մահն վկի տյ, որ քաղցրանայ դառնութի նր 'ի սէրն տյ: Ո՞վ տր ես ծառայ քո եմ, և որդի նմայի, որ աղախնին եղև հեշտութեն՝ որ տիկինն էր. զիա՞րդ վճարեցից զաղամայն և զմօրն պարտս, թէ ոչ՝ կամաւորն մահուամբ: Այլև՝ ծոյն պարտական է 'ի վկի տնն դնել զանձն. զի ոչ միայն ստեղծուած և արարած, այլև՝ գնեալ պատուական արեամբ քո ծառայ եմ, այլ՝ տծապաշտից զաւակ եմ ասէ, որ քեզ նուիրեցին, և ոչ օտարի:

Հատեր զկապանս իմ. քեզ մատուցից պատարագ օրհնութեան, և զանուն տն կարդացից:

Կապանս՝ զյերկրնայն, և զմանկանցն 'ի հուրն, և զդանիելին: Եւ՝ զարձեալ՝ հնորհ ունիմ 'ի մեռանելն ասէ՝ և 'ի կապանաց մարմնոյս ազատելն, զի հնչոյլ և արեամբ կապեալ է

հոգի

հոգւոյ ը̅ մարմնոյս : Այլեւ ՚ի դժոխս արձակեցեր ՚ի կապանաց անլուծանելեաց: Քեզ մատուցից պատարագ օրհնութե, պատարագեցից զիս քեզ. այլ՝ օրհնութիւնս մատուցից փոխանակ փրկից, զի ասացեր՝ պատարագ օրհնութե փառաւոր արասցէ զիս, եւ այս՝ միշտ զենի մարմնով մահուամբն ը̅ ա̅յ գովով:

Զուխտս իմ Տն տաց առաջի ամ ժողովրդեան նր. ՚ի գաւիթս տան Տն եւ ՚ի մէջ քո Երմ:

Տէրն ասաց՝ մտա՛ ՚ի սենեակ, զմիաբանութե ախոոն կարելով. դաւիթ զաղաղակ հոգւոյ յախտից զաղօթս, առաջի ամ ժողովրդեան ասէ, յօգուտ եւ յուսումն: Այլեւ ա̅ն ասել ծածուկ աղօթել՝ իշխեցելոցն է. եւ դաւիթ ասէ՝ իշխանաց եւ քահանայից. զի ՚ի փառս տալն կցորդեն յամենայն, ա̅ն եւ ասացն՝ ասասցէ ամ ժողովուրդն եղիցի եղիցի:

Աղօթք:

Է՛ օրհնութիւն եւ այս ՚ի գերմս առաքելական ընծայից, որոց ասաց Տէրն երթայք աշակերտեցէք զա̅մ հեթանոսս. զի ուղիղ ծածկեցան ՚ի մարգարէից՝ որ լինելոց էր ՚ի նորա աւուրս:

ՍԱՂՄՈՍ. ՃԺԶ:

Օրհնեցէք զՏր ամ ազգք. գովեցէք զնա ամ ժողովուրդք:

Ամ ազգք՝ որք են հեթանոսք. ամ ժողովուրդք՝ հրէայք. եւ ոչ օրհնեն մինչեւ ցայսօր բազումք: Այլեւ երեք մանկունքն ոչ թողին շունչ եւ անշունչ՝ զոր ոչ կոչեցին յօրհնութե Ա̅յ. յայտ է՝ զի դեռ լինելոց է ժամանակ՝ որ է օր դատաստանին, յորժամ երթան ոմանք ՚ի կեանս յաւիտենից, եւ կէսք ՚ի տանջանս յաւիտենականս, եւ անդ գովեն զՏրն՝ արդարքն վասն պսակին, եւ մեղաւորք՝ վ̅ս արդարութե վճռին, եւ արարածք՝ վ̅ս ազատելոյն ՚ի ծառայութե ապականութե:

Զօրացաւ ողորմութիւն նորա ՚ի վերայ մեր. ճշմարտութիւն Տն մնասցէ յաւիտեան:

Հեթանոսք յայնժամու կեանս ասեն յորդորել զողորմութե, եւ ոչ առնել հանդէս գործոցն չարութե. զի հեթանոսք ասէ պօղոս՝ վ̅ս ողորմութե փառաւոր առնեն զԱծ:

Ճշմար

Ճշմարտութի տն մնասցէ յաւիտեան, այս՝ հրեղէնն է վառ-եալչակեան. Նոքա ասեն մտ խոստման ուխտին, զի Ճշմարտու-ցի զաւակին օրհնութե՝ յորմէ օրհնին ամ՝ ազգք։ Եւ մնաս-ցէ յաւիտեան, և լինի այս ըստ պօղոսի՝ յորժամ լրումն հե-թանոսաց մտցէ, և ապա ամ՝ իէլ կեցցէ։

Աղօթք։

Ցուցմունքն որ ճշմ՛ պատուիրանին, և ճառն նորին մարգարէութեն։ Այլ՛ օրհնութեն է այս. զինի տարցին ծառայելեացն աղօթս, և մարթեան, և յաղ-թեցան ՚ի զօրութենէ ած, և չարեան, և նոքա արարեալ զօնս երգեցին, որ ներանակէ զյաղթութեն նշանաւոյն, և զերտարարեալ փրկութեն բնութէ։

ՍԱՂՄՈՍ. ՃԺԷ.

Խոստովան եղերուք տն, զի քաղցր է. զի յաւիտեան է ողորմութի նր։

Զբարեաց բաշխօղն դաւանեցէք ասէ։

Ասասցէ տունն իսրայէլի՝ զի քաղցր է. զի յաւիտեան է ողորմութի նր։

Ամենայն արժանաւորքդ կոչիլ իէլ։

Ասասցէ տունն ահարոնի՝ զի յաւիտեան է ողորմութեն նր։

Այժմ քահանայքդ՝ գլխովին ձեր ահարոնիւ, և եկեղեցիք քին։

Ասասցեն երկիւղածք տն՝ զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմութի նր։

Երկամուտքն՝ որք յերկիւղ տն Թողին զկուռսն, և ըն-կալաւ ած ՚ի պատուէն ահարոնի, զի յետ նր յիշոցի, զի զանձինս բերին պատարագ այ։ Զորեցս կրկնէ զխոստովա-նութին՝ ըստ չորս անկեանց երկրի, և չորից կենդանեացն, և չորս գետոցն, որք են չորս աւետարանիչքն, որք խոստո-վանել ետուն տիեզերաց զբարին ած, և զյաւիտենից ո-ղորմածն։

՚Ի նեղութեն կարդացի առ տր, և լուաւ ինձ յանդորր։

Զնեղութիւն չարչարել, այլ՝ ՚ի նեղութեն ՚ի մէջն համ-գոյց իբր զերեք մանկունքն, և զդանիէլ, և որք յեհմ պա-շարեալ շուրջանակի։

Տէր իմ օգնական. և ես ոչ երկնչայց, զի՞ արասցէ ինձ մարդ

Զի՞նչ կարաց առնել Նաբուգոդոնոսոր. զի ըստ Այ՝ և զօրութիւն իւր. ըստ մարդոյ՝ և տկարութիւն իւր։

Տէր իմ օգնական. և ես տեսից ՚ի թշնամիս իմ։

Զի հոգւով տեսլին մեք ՚ի թշնամիս զհատուցումն։

Բարի է յուսալ ՚ի Տէր՝ քան յուսալ ՚ի մարդիկ. Բարի է յուսալ ՚ի Տէր՝ քան յուսալ յիշխանս։

Զի բնութիւն ապականացու է մարդն, և իշխանութիւն խուն մի։

Ամենայն ազգք շրջեցան զինև, և անուամբ Տն յաղթեցի նց։

Յետ դարձին։

Շրջելով շրջեցան զինև, պաշարեցին զիս ՚ի միասին. և անուամբ Տն վանեցի զնոսա

Գոգ, և յաւուրս Մակաբայեցւոցն։

Շուրջ եկին զինև իբ մեղուս, վառեցան բորբոքեցան իբ փուշ ՚ի հուր. և անուամբ Տն՝ մերժեցի զնս։

Ոչ գիտացին թէ՝ իբր փուշք՝ ՚ի հուր բարկութեան Տն ժողովեցան ասորիք, և եգիպտացիք, զկնի անտիոքու, իբր զմեղու խածկեցք՝ որ զայլոց վաստակս ծծեն, և նոքա զմեր Ածպաշտութեան։ Երեքս կրկնեաց զանուն Տն, յորմէ յաղթեցան դեք շրջապատեալք զմնութիս, յանուն հօր՝ և որդւոյ՝ և հոգւոյն սրբոյ, յաղթեցան, վանեցան, և մերժեցան։

՚Ի մերժելն դարձուցեալ, և եղէ մերձ ՚ի գլորել. և Տէր ընկալաւ զիս։

Շարժեցին և այժ հասուցին ՚ի մերժելն իմ զնա՝ մերձ ՚ի գլորել, և Տր ընկալաւ զիս։ Մերձ ՚ի գլորել, իբրթէ՝ անձին զօրութիւն արարի, հպարտանալ սկսայ, սպրդեաց յոտից և ընկալաւ զիս ՚ի գլորմանէ, զի մի հպարտացայց։

Զօրութիւն իմ և օրհնութիւն իմ Տր, և եղև ինձ ՚ի փրկութիւն։

Հաւատացի թէ՝ Տմ բարի ՚ի նմանէ եղև։

Ձայն ցնծութեան փրկութեան՝ ՚ի յարկս արդարոց։

Իբրև յեգիպտոս ՚ի տուն իէլի. և եգիպտացւոցն յամ տունս

տունս մեռեալ և սուգ։ Ա՛յլ՝ աջակողմեանն ընծութիւն, և ձախելն ձայն լալոյ՝, և կրճտել ատամանցն։

Աջ Տն արար զօրութի. աջ Տն բարձր արար զիս. և աջ Տն արար զօրութի։

Երեք ասէ և զայս. Նախ՝ ազատեաց. երկրորդ՝ զտաճարն շինեաց. երրորդ՝ զգօգ վանեաց։ Եւ ճշմարիտն եւ 'ի ժամ մկրտութեան՝ երիցս քահանայն ընէ զաջն 'ի վերայ մկրտելոյն, իբր ձեռն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։ Այն հօր՝ արար զօրութի եհան 'ի դիւաց, և 'ի կռոց, և ետ որդւոյ. այն որդւոյ՝ զհողեղէնս բարձր արար 'ի դժոխոց. այլ հոգւոյն՝ ծնաւ ջրով, և արար որդի նոր, որով աղաղակեմք աբբա հայր։

Ո՛չ մեռայց, այլ կեցից՝ և պատմեցից զգործս Տն։

Ո՛չ մեռայց, զի՛ս սպանանել, հոգւով կեցից, և պատմեցից թէ՝ գործք է քո կեանքս։

Խրատելով խրատեաց զիս Տր. և 'ի մահ ոչ մատնեաց։

Խրատեաց օրինօքն դաստիարակեալ, որև՝ մահու արժանի եցոյց. աւետարանն սրբեաց մկրտութբն, և 'ի մահ ոչ մատնեաց։

Բացէք ինձ զդրունս արդարութե, զի մտից ընդ այն՝ և խոստովանեցայց Տն։

Ո՛չ զտաճարին, այլ զեկեղեցին արդարութեան՝ զոր Տրն պատանւոյն ասէր, թէ կամիս 'ի կեանս յաւիտենից մտանել, մի՛ շնար, մի՛ գողանար, և այլն. և զինքն ասաց դուռն. իբր ասէ։

Այս դուռն Տն է, և արդարք մտանեն ընդ սա։

Որ ասաց՝ ոչ ոք մտանէ յարքայութիւն եթէ ոչ ծնանի 'ի ջրոյ և 'ի հոգւոյ. արդարք մտանեն՝ անդամքն Տն։

Խոստովանեցայց քեզ Տր, զի լուար ինձ. և եղեր ինձ 'ի փրկութի։

Որ քեզ թողեալ էաք աղքատք և որբացեալքս։

Վէմն՝ զոր անարգեցին շինողքն, նա եղև գլուխ անկեան:

Վէմն՝ որ յանապատին տայր նոցա ջուր. և 'ի տեսիլն Դա-
նիէլի՝ եհար զպատկերն և եղև զամ՛ երկիր. զոր Եսայի ասէ՝
դնել 'ի հիմունս Սիոնի. և եդ հայր, զոր պարտ էր փարելոց
ազգն և դպրացն և քահանայից շինողացն զժողովուրդն՝ հա-
ւատովն 'ի նա յարել, և շինել, նոքա խաչին սպանին անարգ-
մահու. սակայն՝ եղև գլուխ անկեան՝ երկուց որմոց, հրէից
և հեթանոսաց. երկու կտակաց. հոգւոյ և մարմնոյ. երկնի և
երկրի. հրեշտակաց և մարդկան: Վէմն՝ զոր անարգեցին,
ոչ ոք հրէայքն զզօրաբաբել ասեն, զի զնա ոչ անարգեցին
քահանայքն շինողք, այլ զՔրիստոս անարգեցին, սամարացի կո-
չելով, և հիւսան որդի: Դարձեալ՝ հիմն է Քրիստոս, զի 'ի նմա
քոյ հիմն է՝ զոր այլ ոք ոչ կարէ դնել՝ քան զԱյս զՔս. և
գլուխ է, զի 'ի վեր է քան զամ՛ գլուխ, հրեշտակաց՝ աստուա-
ծութ՟ն, և մարդկութ՟ն՝ մեզ մարմնաւորացս. որ պատեցաւ,
բազմապատկեցաւ 'ի յանդամս իւր՝ ըստ պետրոսի, դուք իբրև
զվէմն կենդանի շինիք:

'Ի Տէր եղև այս. և է սքանչելի առաջի աչաց մերոց:

Ինքն կամեցաւ զանարգանսն վս մեր, և է սքանչելի 'ի
մեր մտաց տեսս, թէ զիա՞րդ ներեաց անարգողացն:

Այս օր է՝ զոր արար Տր. եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք 'ի սմա:

Ո՛չ ոք հրէայն ասէ, յորում անկան հեթանոսք հազարք
հազարաց, այլ յորում ապրեցան հեթանոսք բիւրք բիւրուց.
ոչ յորում կուրացան աչք հեթանոսաց, այլ յորում աւուր
բացան աչք մտաց հեթանոսաց: Այս օր է զոր արար Տր,
միաշաբաթն՝ յորում վէմն այս յարեաւ, և 'ի սմա գոյացաւ
լոյսն առաջին. լինի և վերջին մի օր և անքակտելի որ կոչե-
ցաւ օր մի, և այլն կրկնուածք են նորին. և արար զնա ցնծութ՟
և ուրախութ՟ օր. յորում մի՛ մեղիցուք իբրև զադամ, այլ
իբրև զքրի անդամ, որ ցնծութ՟ գոհացաւ, և գոհանալ զնյ
զհօրէ՝ զի մի՛ տրտմեսցուք:

Ո՜ Տր փրկեա՛, ո՜ Տր առաջնորդեա՛. օրհնեալ որ գալոց ես յանուն
Տն. և օրհնեցաք զձեզ 'ի տանէ Տն:

Ո՜ Տր փրկեա 'ի մեղաց. ո՜ Տր առաջնորդեա յարդարու-
թեն. օրհնեալ որ գաս անուամբ հօր որդի, զոր մանկտին

աղա

աղաղակէին, և հրէայքն նախանձէին. զոր քահանայապետն հարցանէր՝ զո՞վ ես որդի օրհնելոյն. քառասնօրեայ տղայքն ասէին՝ ովսաննա, որ է փրկեա, և կեցո զոր ասաց, ո՞ ո՞ր փրկեա: Օրհնեալ որ գալոցդ ես, յասելն մարգարէին՝ գալոցդ ես, և տղայքն ասէին օրհնեալ որ եկիր, և գալոց ես, զերկրորդն դառնալովն ՚ի առաջնոյն: Եւ օրհնեցաք ըզ քեզ ՚ի տանէ տն, որոյ տունն մեք եմք. դուք տաճար այ կենդանւոյ էք. և ինքն ասաց՝ ես և հայր առ նա ե-կեսցուք:

Տէ՛ր ած մեր երեւեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութեան ժողովեալ, մինչեւ յանկիւնս սեղանոյ:

Երեւեցաւ մարմնով. արարէք տօնս", յայս կեանքս յե-րեւման ծոյ՝ շատ եկայք ներկեցէք, շատ հաւաքելով ՚ի տաճարն և յեկեղեցիս, մինչ ՚ի սեղանն, և յանկիւնս սեղանոյ, և ...զերեսս տեսանելով տեսցէք:

Աճ իմ ես դու՝ խոստովան եղէց քեզ. ած իմ ես դու՝ և բարձր արա-րից զքեզ:

Խոստովան եղէց քեզ տր՝ զի լուար ինձ, և եղեր ինձ ՚ի փրկութիւն:

Եկիր և եղեր ինձ յս ՚ի փրկանս, և ՚ի պատարագ:

Խոստովան եղերուք տն, զի քաղցր է. զի յաւիտեան է ողորմութիւն նր:

Զսկիզբն ընէ, և աւարտ զնոյն. զի բնութեամբ բարի և ողորմած՝ ետ նմա առնել զամենայն զբանականս:

Ճ կցուրդ:

Այս աւուրս՝ կամ որ ինչ [illegible]

[illegible]

ՍԱՂՄՈՍ. ՃԺԸ:



ՐԱՆԵԱԼ ԵՆ ԱՆԲԻԾՔ 'Ի ճանապարհի, և որք գնան յօրէնս Տն̃:

Տե՛ս 'ի լերինն վարդապետութեան սրբոյն զերանութիւնսն եդ, որ վերագոյն գտանի քան զհրեշտակացն արժանաւորութիւն. և ոչ միայն է սեփհական. այլ ամենեքին 'ի մարդկանէ՝ հնարաւորք են յայս. յոր մարգարէս համարձակեալ երանէ զմարդիկ, որք ճանապարհ զարքունի գնան՝ յաջ և յահեակ անխոտոր: 'ի ճանապարհի", զի ճանապարհ է կենցաղս այս. 'ի ծնանելն մինչև ցմահ եմք 'ի ճանապարհի: Որք գնան յօրէնս՝ որ լուսատու է ճանապարհին:

Երանի՛, որ քննեն զվկայութիւնս նորա. բոլորով սրտիւ խնդրեսցեն զնա:

Քննեն՝ ոչ զբնութիւնս, այլ զվկայութիւնս, զոր տէրն հրամայեաց քննել զգիրս. բոլորով սրտիւ խնդրեն գտանել զարժամն, և որք խնդրեսնն՝ առնուն, տուօղն ասաց:

Ո՛չ եթէ որ գործեն զանօրէնութիւն, 'ի ճանապարհս նր̃ գնացին:

Ո՛չ թէ՝ որք զանօրէնս գործեն, և յետոյ զղջանան՝ չեն անբիծք, այլ 'ի մանկութէ անմեղքն են անբիծք. բայց որչափ 'ի գործսն անօրէնութեան են, չեն 'ի ճանապարհի նր̃, զի ճանապարհն օրէնքն են:

Դու պատուիրեցեր զպատուիրանս քո՝ 'ի պահել ինձ յոյժ:

Օրէնօք, մարգարէիւք, աւետարանաւն. օրէնքն 'ի կատարեալ մեղացն արգելոյր. մարգարէքն 'ի գործոց և 'ի բանից. աւետարանն 'ի խորհրդոց և 'ի դատարկ խօսից, և 'ի հայելոյն ևս. այս է յոյժն:

Երանի՜ եթէ յաջողեսցին ինձ ճանապարհք իմ, 'ի պահել ինձ զարդարութիւնս քո:

Ո՜չ, իցի՜ւ, երանի թէ յաջողեալ էր ինձ 'ի մանկութէ, զի պահեալ էի 'ի բերանաբէ. և յուրկայէ, մանաւանդ թէ՝ յաւամայնեալ յաջողեալ էին և էի անբիծ:

Յայնժամ ես ոչ ամաչէի, 'ի հայել ինձ 'ի պատուիրանս քո:

Պտուղ մեղաց՝ ամօթն է, որ ամաչեաց Ադամ. և պօղոս ասէ՝ զի՞նչ պտուղ ունէիք յայնժամ, որովք այժմ ամօթի հարեալ էք:

[illegible]

Յայտնեսցէ առանց լուծելի մեղաց՝ որ զանմեղ գնացեր. որ յանձին կարդալով ուսայց զարդարութիւն քո:

[illegible]

Շատ անգամ խոյս ետու 'ի մեղաց. մի՛ թողուր զիս մինչ ի սպառ, թողեալ լինելն ոչ քն առժամանակ մի՝ յօգուտ այլոց. որ եղիցի քաղցն՝ զի ողորմեսցի այլոց. եթէ զղջասցիս, եղծանիցես, և զղջացեալ. այլ ո՛չ ի սպառ:

[illegible]

Աղաւթն է երկնաւորն հասանէ, կարօտ է բանից քոց, եթէ յոյժ սանձոց:

[illegible]

Յորովք խնդրեմ. այլ ո՛չ բոլորով յամ սրտէ, 'ի զօրութենէ և 'ի մտաց, ըստ օրինացն. Մի՛ մերժեր, մերձեսցի առ իս շնորհ պատուիրանաց քոց, և մի՛ դարձուսցի վասն աղաւմնն:

[illegible]

Զպատուհականն սատացուածն ո՛չ յայտնի դնեն, այլ 'ի ծածուկ սնունկի. և զխորհուրդն ո՛չ յայտնեն ումեք. որք զառաքինութիւն չյայտնեն հպարտութեամբ, նոքա ծածկեն. այլև՝ յանպարժանից զբանս իմ. չտալ զսրբութիւն շանց. այլև՝ զոր առեալ է մեծամեծս՝ չտալ 'ի տխմարսն, այլ՝ զոր կարեն տանել:

[illegible]

Ընծայեմ քեզ օրհնութիւն յարաբածոյս քո. և դու ու

մի

սո ինձ զարդարութիւն։ Թէպէտ գիտեմ սրբքն՝ միշտ ուսանել հայցեն. զի զոմ զօրհնութիւնն ո՞ գիտէ։

Շրթամբք իմովք պատմեցի զամ իրաւունս բերանոյ քո։

Խոստանամ՝ զոր ուսանիմ՝ չծածկել յայլոց. իրաւունս բերանոյ քո. բերան՝ հոգին իմ՝ զոր նա իրաւունս համարի պատմել։

՚Ի ճանապարհս վկայութեանց քոց ուրախ եղէ, որպէս յամ ՚ի մեծութեան։

Յամ ՚ի մեծութեան, պէսպէս և զանազան են մեծութիւնք աշխարհի, քաղաքս, ձիերս, ոսկի, արծաթ, ականս պատուականս. քանզի այլք յայսմ ամի՝ ես ՚ի ճանապարհս վկայութեան. քանզի պատուիրանաց քոց՝ որ վկայէր թէ՝ այս է ճանապարհն իմ՝ որ զքեզ յած տանի, և զած ՚ի քեզ ածէ։

՚Ի պատուիրանս քո խորհեցայց. և զգուշացայց ՚ի ճանապարհս քո։

Թողեալ զհոգս թագաւորութեան և զամենայն զգուշութիւն։

Զիրաւունս քո խոկացայց, և ոչ մոռացայց զբանս քո։

Կատարեցի զասելն՝ խոկացեալ ՚ի դա ՚ի տուէ և ՚ի գիշերի։

Հատո ծառայի քում, զի կեցից և պահեցից զբանս քո։

Զայս ոչ կարէ ասել՝ որ խղճիւ մեղաց զգածեալ է. այլ՝ որ արար զած իւր պարտական. փախեալ ասէ ՚ի մահաբեր ճանապարհէ մեղաց՝ յօրէնս քո. և ՚ի բանից քոց կերեցից զպտուղն կենաց։

Զարթո զաչս իմ, և նայեցայց ՚ի սքանչելիս օրինաց քոց։

Եօթանասունքն ասեն՝ անծածկեա զաչս իմ, զմտացն ասէ ՚ի ցնորից, կամ ՚ի տգիտութենէ քնոյ. իբր եղիսէ ասէր, բաց տր զաչս պատանեկիս և տեսցէ. և առաքեալ ասէ, քօղ կայ ՚ի հին կտակարանացն վր, և առագաստ ՚ի սրտի, յորժամ առ տր դառնայ ոք հաւատով յաղօթս՝ վերանայ. զոր ասէ՝ մեք ամենեքեան զփառսն տն իբրև ընդ հայելի տեսեալ նորոգիմք իբրև ՚ի տն հոգւոյ։ Եւ նայեցայց յաւա կըս և ՚ի խորին խորհուրդս

Պան

Պանդուխտ եմ ես յերկրի. մի՛ թագուցաներ յինէն զպատուիրանս քո:

'Ի մարմնի գոլով ոչ բնակեմք, այլ պանդխտիմք. երբ ասէին որդքն առաջինք. և նորքս՝ պօղոս և պետրոս. մի թագուցաներ յինէն", որ ցուցանէ ինձ զհայրենի բնութիւն:

Փափագեաց անձն իմ, 'ի ցանկալ իմ իրաւանցդ քո յամ ժամ:

Երբ քաղցեալ 'ի հաց, և ծարաւի 'ի ջուր, և կարօտիլ աւելոր. և ես յիրաւունս՝ ուր ծածկեալ են իմաստք դատաստանի քո. յոլովք ցանկացան այժմ ժամանակօք, իսկ ես յամ ժամ ասէ:

Սաստեցեր ամբարտաւանից. անիծեալ ոյք խոտորեցան 'ի պատուիրանաց քոց:

Սաստեցեր փարաւոնի, ամաղեկայ, գողիաթու, և սատանայի. անիծեալ ոյք խոտորեցան 'ի պատուիրանաց քոց. զայս և օրէնքն ասեն, անիծեալ որ ոչ կացցէ յամ գրեալս 'ի գիրս օրինացն՝ առնել: Զսատանայ անէծ օձիւն, այլ ոչ զաւլամ. բայց զերկիր 'ի գործս նր. անէծ և զկայէն 'ի վր երկրի:

'Ի բաց արա յինէն զնախատինս և զարհամարհանս. զի զվկայութիւնս քո խնդրեցի:

Զնախատինս 'ի կռապաշտից. երբ նախատէր գողիաթ զտր, և զդաւիթ. և սաւուղ զդաւիթ. և սատանայ զընուէն՝ խոյ առեալ յարօտ. զի զվկայութիւնս քո խնդրեցի, զոր դու վկայեցեր թէ՝ բարի է:

Քանզի նստան իշխանք՝ և չարախօսէին զինէն. այլ ծառայ քո խոր-հէր յիրաւունս քո:

Սաւուղ, աքիտոփէլ, աքիսողոմ. և դոէք զյոբ՝ բարեկամօքն. և փարիսեցիքն զտրն. այլ ծառայ քո խորհէր թէ ո՞րպ յաղթեսցի իրաւունք դատաստանի քո:

Զի վկայութիւնք քո խօսք իմ էին. և խորհուրդք իմ արդարութիւնք քո:

Զմարդ ոք՝ ոչ առնու խորհրդակից, այլ զշնորհս հոգ-ւոյդ. և զօրէնս քո՝ զոր արդարութիւն, և իրաւունք, և վկայու-թիւնք, և ճանապարհ կոչէ:

Մ[illegible]

Զայժմ խոնարհութիւն աղօթեցն առէ, մոխրամած դի մօք. այլ՝ որքան ծերանայ բնութիւս. զի դաւթիւ եօթն նաւուն ամ ատացաւ, որ նախ քաղումն էր։ Տէր կեցո՛, յարութիւն, և ատէն եւ՝ 'ի մեղացն մահուճանէ. և ըն տեսյոլ քոյ՝ որ ասաց, որ հաւատայ յիս՝ զմահ մի՛ տեսցէ։

Զ[illegible]

Խոստովանութիւն զ յանցանս. և լռեա՛ր, զ յիմաստութիւն սաղմոսն առէ. ուսո՛ ինձ, զի քեզ միշտ կարօտիմք վարդապետել։

'Ի[illegible]

Զհոգին մը հայցէ, որ զմին քննէ, և զխորս մյ. քննեցի զբանից յես քո՝ զարարածս և զանօրէնութիւնս քո։

Տ[illegible]

Որ ասաց լռեացի զամ դիւշեր զմահինձն իմ. ձանձրաց նալ՝ 'ի խղճէ մտացն. հաստատեա, յասեղն նաթանայ՝ որ անցոյց զքև զմեղս քո և մի՛ մեռցիս։

Զ[illegible]

Զի հոգին մը եկեսցէ առ իս՝ անմեղութեան ձանապարհաւն, երբ գայր նախ քան զմեղսն։ Եւ յօրէնս քո ողորմեա ինձ, արժանի եմ մահու՝ օրէնօքն, ողորմութիւն կեցից։

Զ[illegible]

Մարգարէին հոգւով՝ որ ձշմարիտն է. զի զերաւունս՝ որ է դատաստանն՝ ըն ձշմարտութեան օրէնացն, ոչ մոռացայ։

Մ[illegible]

Որ ասացեր մի՛ ցանկար, մի՛ շնար, մի՛ սպանաներ. զի ես զերեսինս ես կատարեցի. որ մի յամօթ առներ զիս, ողորմութիւն քաւեա զիս։

'Ի[illegible]

Երբ չէի մեղուցեալ, զոր այլք ապաշխարութիւն՝ ես համդաստեալք, և դիւրութիւն առնէի, յօժար սրտիւ. և՛ի քէն էր այն ամ՛:

[illegible]

Յոլով ճանապարհս են քո, մինչև տախտակօքն չկա-րացի գալ, այլ ճանապարհս ցոյց ինձ. զ յայն հայցէ ուսանել և խոստանայ յամ՛ժամ՛ զայն լուրհիլ:

[illegible]

Զի այլ ինչ ծածկեալ կայ մնդ, ով 'ի սատոէր ճշմար-տութիւ. և պահեցից զաւետիսն կենաց՝ որ ասաց՝ եկայք առ իս ամ՛ աշխատեալք և բեռնաւորք":

[illegible]

Զի ապաշխարութեն ճանապարհն նեղէ՝ յաղթել սո-վորութենն, այլ՝ ես ի այն հաճեցայ:

[illegible]

Զհետ ազահութենն ախտի՝ երբ դիւրահաւս գետ ըն-թանայ սիրտ երբ յաղթի. զհետ վկայութեց քոց խոնարհեցո զսիրտ իմ, որ ասացեր՝ լաւ է զնա ստանալ՝ քան զոսկի և զակունս պատուականս:

[illegible]

Զմիտս յերկրաւոր զբաղմանց՝ որ ընդունայն և սնոտի է. 'ի ճանապարհս քո կեցո զիս, առ քեզ գալն է կենաց ճա-նապարհ:

[illegible]

Զբանն՝ որ ասացեր՝ 'ի տանէ քոյ քումմէ երկիւղիս, և զնա միայն պաշտեսցես:

[illegible]

Սեղանքում՝ զոր մնայի. թէ որդեգրման զոր պատկառեմ. զմեղաց նախատինս առէ՝ 'ի կողմէ մեաց, և յայլոց բամբա-սանաց, զոր մնայի անկանել 'ի պատուէոյ: Զի դատաստանք քո քաղցր են. սա՛ դու նախ զանօրէնութիւնս քո՝ զի ար-դարասցիս. և կենդանի եմ ես ասէ տր՝ թէ կամելով կամիմ զմահ մեղաւորին, իբրև զդառնալն և զկեալն:

Ահ.

Ահա ցանկացայ պատուիրանաց քոց, յարդարութեն քում կեցո՛ զիս։

Այս պատուիրանացս՝ որ քաղցր է. յարդարութեն քում կեցո՛ զիս, ոչ զոր ես արարի, այլ զոր դու քաւեցեր։

Եկեսցէ 'ի վր իմ ողորմութիւն քո Տր. եւ փրկութիւն քո ըստ բանի քում։

Ամենայն որ կարօտ է ողորմութեն քո, այլ փրկութեն արժանի եղեն՝ որք տեսին զՔր, սիմէոն, և զաքէոս, և որք ը՛նդ հոգւոյն։ Ըստ բանի քում", որ ասացեր՝ ած եմ ես 'ի միջի ձերում, և ոչ մարդ մը։

Տաց պատասխանի այնոց նախատողին զիս բանիւ. զի ես 'ի բանս քո յուսացայ։

Սեմեայ ոչ ինչ ետու պատասխանի՝ զի 'ի քէն համարեցայ վճռ մեղաց իմոց։ Զի ես 'ի բանս քո յուսացայ, զի քև ասացեր՝ բարձր արարից զնա քան զամ թագաւորս երկրի։

Մի՛ 'ի բացէ առներ 'ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեն մինչեւ յոյժ. զի յիրաւունս քո յուսացայ։

Զի նախ քան զմեղս իբրեւ զանմեղս խօսէի, զկնի մեղացն, ոչ թաքուցից մինչև 'ի վերջ խօսման. զի յիրաւունս քո յուսացայ, զի բարգաւաճողըս կոչէս։

Պահեցից զօրէնս քո յամ ժամ, յաւիտեան՝ եւ յաւիտեանս յաւիտենից։

Խոստանամ այլ ոչ մեղանչել. և յաւիտեան ասէ, զի ասացաւ օրինօքն՝ թէ արասցես զայս՝ կեցցես այսու, յայտ է զի նա հանգուցիչ է յաւիտենից։

Գնայի ես յանդորրու—. զի պատուիրանս քո խնդրեցի։

Զոր այլք յանհանգստութեն լինէին՝ չպահելով և չըմբռնելով զպատուիրանս քո։

Խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց, եւ ոչ ամաչէի։

Դաւիթ առ սաւուղ, դանիէլ առ նաբուգոդոնոսոր, պօղոս առ ագրիպպաս. վկայքն առաջի հեթանոսաց թագաւորացն։

Խորհէի 'ի պատուիրանս քո, զոր սիրեցի։

Ո՛չ բանիւ և եթ, այլ խորհրդով յայն կայի

Համբարձի զձեռս իմ 'ի պատուիրանս քո՝ զոր սիրեցի. եւ խորհէի յարդարութեն քում։

Ո՛չ միայն խորհէի և խօսէի, այլ ձեռն 'ի գործ արկի

յառ

յաւէտնել, և զխորհուրդն առաջնորդ ունել. այլ՝ զնորին իմացքն ձեռն կոչէ:

Յիշեա զբան ծառայի քո, յոր և յուսացուցեր զիս:

Պահողայն զպատուէրանս քո. կամ՝ զոր վասն իւր ասաց, ձեռն իմ ընկալցի զնա, և բազուկ իմ զօրացուսցէ զնա: Եւ՛ թէ՝ այն է զոր ասեն, յայս եւս աւանդայ՝ զնոյն զալրումն:

Սա մխիթարեաց զիս ՚ի խոնարհութեան իմում. զի բան քո կեցոյց զիս:

՚Ի խոնարհիլս ՚ի մեզ՝ յիշելով զպարգևս աւետեաց, զի բան քո կեցոյց զիս նախ ամնաւ:

Ամբարտաւանք անօրինէին յոյժ, այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ:

Սաւուղ և աքիտոփէլ, և աքիսողոմ. յոյժ՝ զառաւելն ասէ. այլ՝ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ, ոչ սպանել զսաւուղ, և յաքիսողոմ խնայել ասացի:

Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից Տէր, և մխիթարեցայ:

՚Ի յաբէլ, յաբրահամ, ՚ի մովսէս. որ թէպէտ՝ մերձեցան ՚ի վիշտս, այլ՝ պսակէր զնա սէր քո:

Տրտմութիւն կալաւ զիս ՚ի մեղաւորաց, և որք թողին զօրէնս քո:

՚Ի կայենէ զարն մեղուցեալ, ՚ի փարաւոն, ՚ի կորխ, ՚ի դաթան, և որք յանապատին մեռան:

Գովելի էին ինձ իրաւունք քո, ՚ի տեղւոջ պանդխտութեան իմոյ:

Զի օրէնքն ասեն՝ թէ պանդխտութիւն տեղի՝ և հավիտ տրտմութիւն է սա, և յայս գոյ պսլում կենաց:

Յիշեցի ՚ի գիշերի զանուն քո Տէր. և պահեցի զօրէնս քո:

Զվիշտն կոչէ գիշեր, այլև՝ կենցաղս այս: Այլև՝ ՚ի գիշերի պատուիրեցեր խոկալ յօրէնս քո. անուն քո տէրն է, և գիշեր ոչ ծածկէ:

Սա եղև ինձ ճանապարհ ՚ի կենաց. զի զարդարութիւնս քո խնդրեցի:

Անուն քո եղև կենաց ճանապարհ, զի տէր որ կարդացէ զանուն տն՛ կեցցէ, որ ասաց զինքն՝ ճանապարհ, և ճշմարտութիւն, և կեանք. զի զարդարութիւն քո խնդրեցի, զաւազանէն՝ որ առանց սորա արդարացուցէ:

Հանգիստ։



ԲԱԺԻՆ ԻՄ ԵՍ ԴՈՒ ՏԷՐ, ԱՍԱՑԻ
պահել զօրէնս քո։

Ո՛չ ամի բաժին է ած, այլ՝ կատարելոցն, մեկնելոցն 'ի բոլոր ստացուածոց, և 'ի հողոց Ճիս, իբրև ղևտացւոցն։ Բաժին իմ ես դու տր, որ զարքայութիւն և զաջմէ դամ տաս, զի արդար բաժանիչ ես. որովհետև արարէք միում 'ի փոքրկանցս յայսցանէ՝ ինձ արարէք։ Ասացի պահել զօրէնս քո, զասելն տր ած քո՝ տր մի է, և ոչ կուռքն։

Աղաչեցի զերեսս քո բոլորով սրտիւ իմով. ողորմեա ինձ ըստ բանի քում։

Զքաղցր տես աչաց քոց, զի հայեսցի յիս. ողորմեա ինձ ըստ բանի քում. զբանս զայս՝ և հիւանդն ասէ առ բըժիշկն. և վաճառականն ցնաւապետն, ասեն՝ ըստ գիտելութե քո, և ըստ արուեստիդ՝ արա զմ ինչ։

Խորհեցայ 'ի ճանապարհս իմ. և դարձուցի զոտս իմ 'ի վկայութիւնս քո։

Եբրայեցին՝ 'ի ճանապարհս իմ ասէ. քո օրէնքն հասարակաց է խորհելի ամենեցուն. և իմ ասելն՝ որ թագաւոր եմ. կամ քահանայի է, կամ զինուորի. յայլազգ ճանապարհէ՝ դարձուցի զոտս 'ի քոյն՝ որ առ քեզ բերէ, և ոչ խոտորեցայ։

Պատրաստեցայ և ոչ խռովեցայ. զի պահեցից զպատուիրանս քո։

'Ի հոգևոր տրտմութե պատրաստեցի զիս վշտացս, և 'ի հանդիպելն՝ ոչ խռովեցայ. իբրև առաքեալքն՝ որ լուան 'ի տնէ թէ՝ մատնեսցեն զձեզ 'ի նեղութի, և առաջի դատաւորաց և թագաւորաց կայցէք, և ոչ խռովէին 'ի լինելն. և իբրև իմաստուն կուսանքն պատրաստ մնէին։

Տառապանք մեղաց պատեցան զինև. այլ զօրէնս քո ես ոչ մոռացայ։

Զվիշտսն՝ որ 'ի մարդկանէ և 'ի դիւաց խառնամանեալ՝ 'ի հիւսմանէ չուանի առեալ զօրինակն, և որով տոռնին գազանք, և 'ի գործս ձեռաց կապեսցին մեղաւորք. այլ՝ զօրէնսն յիշելով խորտակեցից զտառուռնսն՝ յահ և յերկիւղ քո դատաստանին։

'Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինել առ քեզ, վասն իրաւանց և արդարութեան քո:

Յորում քաղցրացեալ է քունն՝ աչերն իմ 'ի բաց թօթափէ: Վասն իրաւանց և արդարութե քո, զի զոր տուեր մեզ 'ի հանգիստ գիշերը, տացուք 'ի քոյոյն մասն ինչ քեզ: Այլև՝ յարութին, և գալուստն քո է, յորում յարեան ամ կուսանքն և կազմեցին զլապտերս իւրեանց. և պօղոս և շիղայ 'ի մէջ գիշերի յաղօթս կային, թէպէտ պնդեալ էին ոտք նց 'ի կոճեղն: Վասն իրաւանց և արդարութե քո՝ զոր առնելոց ես մեզ:

Հաղորդ եմ ես ամենայն երկիւղածաց քոց. որոց պահեալ է զպատուիրանս քո:

Խնդիր է այս յոյժ. իսկ՝ հաղորդ էի գոլութին է անձինն. զի ոչ միայն ինքն առաքինի, այլև՝ կցորդ նոցին լինէր, զպէտս սրբոցն տալով, և սպասաւորելով՝ իբր պօղոսի: Դարձեալ՝ հաղորդ արա զիս", որ ասէ, սիրեսցես զտէր ած քո, և զընկեր քո իբրև զանձն քո: Եւ՛ զասելն թէ՝ հաղորդ էի՝ ասորին ասէ՝ սիրելի էի ամ:

Ողորմութեամբ քո Տէր լի է երկիր. զարդարութիւնս քո ուսո ինձ:

Զարեգակն ծագէ, զանձրև տեղայ չնացողաց, սպանողաց, և ամ չարագործաց նոցա: Զարդարութիւնս քո ուսո ինձ. որ գիտէ՝ զիմիրդ խնդրէ ուսանել, զի կատարեալ գիտութին 'ի հանդերձեալն է. զի ասէ պօղոս՝ փոքր 'ի շատէ գիտեմք:

Քաղցրութիւն արարեր ընդ ծառայի քում Տէր, ըստ բանի քում:

Զփորձ առի քաղցրութե քո. ըստ բանի քում, յորժամ առեր զիս 'ի հօտէ խաշանց, և ասացեր նաթանաւ՝ առի զքեզ 'ի հօտէ խաշանց:

Քաղցրութիւն, զխրատ, և զգիտութիւն ուսո ինձ. զի 'ի պատուիրանս քո եմ հաւատացեալ:

Խրատնեա ասէ զխրատն 'ի քաղցրուն, զի շատ օգուտ է անտի, զի հպարտութն մի տիրեսցէ:

Մինչ

Մինչ չև խոնարհեցայ ես՝ մեղայ. վասն այսորիկ զբանս քո պահեցի։

Իմէ սաէ մեղադրութիւն, զի անմիտս էր սաէ՝ և ինքնակալթագաւոր, և մեղայ, և ապա եկն խրատ խոնարհութե։ Ասորին սաէ, մինչև խոնարհեալ էի՝ հաւատացի. զի որ ամ ուսմք պահելի է, նախ հաւատալ, և ապա՝ խոնարհել յամ գործս բարւոյ։

Քաղցր ես դու Տր, և քաղցրութբ քով ուսո ինձ զարդարութիւնս քո։

Մեք դառնացուցաք, դու մնաս 'ի քաղցրութեան. ուսո՛ զինչ ուսանելի ապաշխարութիւն։

Բազմացան յիս անիրաւութիւնք ամբարտաւանից. այլ ես բոլորով սրտիւ իմով քննեցից զպատուիրանս քո։

Բազմացան՛՛, այլազգեացն, և որք ածին զհերս և զմորուս ծառայից նր. այլ ես բոլորով սրտիւ իմով քննեցի ըղ զպատուիրանս քո, որ սաէ՝ ակն ընդ ական. թերևս՝ և զոր տալոց ես՝ սիրել զթշնամիս և զատելիս։

Մածեաւ որպէս կաթն սիրտ նց. այլ ես զօրէնս քո խօսեցայ։

Ինքեանք խառնեցին զմակարդն, զի ես այսեայ՝ թանձրացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ. և խստացաւ սիրտ փարաւոնի. ամ կոկուղ ատեալ. այլ՝ ես զօրէնս քո խօսելով 'ի բնութենէ մնացի։

Բարի է ինձ, զի խոնարհ արարեր զիս. ոը ուսայց զարդարութիւնս քո։

Զինի մեղացն՝ բուկ փախեաւ. և 'ի փորձոյ ուսայ զարդարս դատաստանաց քո։

Բարի են ինձ օրէնք բերանոյ քո, քան զհազարս ոսկւոյ և արծաթոյ։

Զի զարծաթ և զոսկի՝ գողք երկրի բերեն. և աստէն մնան սոքա։

Ձեռք քո արարին զիս և ստեղծին զիս. իմաստուն արա զիս՝ և ուսայց զպատուիրանս քո։

Զ'ի սկզբանէ պատուէն և զսէրն յիշեցուցանէ, արարին զգէ, և աստուծոյն զմարմին. իմաստուն արա զիս, չմնցանել

զպատ

զպատուիրանաւ քո, իբրև զաղամ, և չխօսել զանարժանն զկնի մեղացն։

Ե[illegible]

Պատճառք ուրախութեն եղէց ամ երկնաւորաց քոց. զկնի մահուանն ՚ի համբերձեալն արդարքն առաջին լինելան ՚ի տեսանելն զիս, բանի քո պահօղ տեսանելով։

Ծ[illegible]

Թէպէտ առժամն դժուարըմբեր էր, յետոյ գիտացի զշահն։

Ե[illegible]

Ըստ եսայեայ՝ յորժամ դարձցիս և հեծեծեսցես՝ կեցցես։ Եւ երեմիայ՝ դարձարուք առ իս, և ես դարձայց առ ձեզ։

Ե[illegible]

Կեցից, մեռեալ համարի զինքն վս մեղացն, զթուքն այ՝ կեալ աղաչէ ՚ի մեռելոց։ Զի օրէնք քո խօսք իմ էին, աւելի եմ մեղաւորելի։

Ա[illegible]

Եւ այս չէ անէծք, զի որ ասաչէ՝ ասրել զղջմամբ, զաքիտոփէլ ասէ և զաբիսողոմ, և զայլ իշխանացն, նշ չէր մեղուցեալ. այլ՝ ես հաղացայ ՚ի պատուիրանս քո, որում յանցաւոր եմ։

Խ[illegible]

Նաթան, մուսէս, և մարգարէքն գրովք իւրեանց, և ող ճանաչեն զկայութիս քո, և ոչ չարքն՝ որոց չէ փոյթ պատուիրանն քո։

Ե[illegible]

Շատ դառնաց զիս խիղճ մտացս. յարդարութի համարեա, և յատակ, և զուտ մտօք ցանկամ օրհնել զքեզ, վստահութբ՝ առանց պածօթ ոյ։

Կ[illegible]

Հոգի իմ կարօտի փրկել 'ի ցաւեցուցանելոյ մտացս. զի ես 'ի բանս քո յուսացայ, թէ՝ առնեմ ողորմութի 'ի հազար աղէտս սիրելեաց իմոց: Դարձեալ՝ կարօտիմ 'ի յոյն քո, որ գայ զկնի հազար ամի:

Մաշեցան աչք իմ ի բանս քո. ասեմ՝ երբ մխիթարեսցես զիս:

Զի տառաքես զբանս քո՝ զյոյս. որպէս մշակ վաստակեալ, և քաղցեալ, և ծարաւեալ, աչք 'ի ճանապարհն. և սիրելիք հեռաւոր ուղևորի աչն ունին, և 'ի յամելն թալկանան:

Եղէ ես որպէս տիկ 'ի պաղեղի. զի զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ:

Տիկ՝ 'ի ջերմութեան հրով չորանայ և այրի, և ջրով թրջեալ մեղկի, և 'ի փչելն ուռնու, և 'ի պարզել եղեալ խստանայ. այսպէս՝ և բնութիւն փափկութբ մեղկի, և 'ի փառաց հպարտացեալ ուռնու, և 'ի խստամբերութեն ցամաքի. ընտրուիմ զաւելն փափկացեալ մեղաւ, և յապաշաւանս և յերկիւղէ դատաստանին չորացաւ իբր խեցի: Այլև բնութիւն հնացաւ իբրև զտիկ մեղօք, և ցրտութբ չարին՝ հիւսիսի հողմոյ խստացաւ. մինչև եկն տէրն և նորացոյց նորոգ, 'ի նոյն արժանաւորեալ՝ անպատկառելի մեծ յաւիտեան, բաւական նոր գինւոյն: Զի զարդարութեն չմոռացաւ դաւիթ, և ոչ բնութիւն. և ողորմութեն գոյին:

Քանի՞ են աւուրք ծառայի քո. երբ արասցես ինձ իրաւունս 'ի հալածչաց իմոց:

Քանի՞, եօթանասուն և կամ ութսուն ամ, այլ՝ մահ ընամբ գրաւեալ է բնութիւն. և դևք հալածեն մեզօք 'ի քէն. երբ գաս և առնես մեզ իրաւունս, որ այնքան թշնամիս ունիմք, և սակաւ և ցաւալից կեանք:

Պատմեցին ինձ անօրէնք զխորհուրդս. այլ ոչ որպէս զօրէնս քո:

Որոց չէր փոյթ օրէնքն՝ խորհրդակից լինելոյն դաւթի ապականել զաւուր, և զմեծն, այլ՝ ոչ ազդեցին յիս իբր զօրէնս քո: Այլև՝ դևք խորհրդատօնս կարգեցին՝ ափրոդիտեայ, և դիոնեսեայ, և զկռօսեցուցին զբնութիս, այլ՝ ոչ էառ զկոյ իբրև զօրէնս քո:

Ամենայն պատուիրանք քո ճշմարիտ են. 'ի նանիր հալածեցին զիս, օգնեա ինձ:

Ճշմարտութիւն՝ տունկ է դալար, որ է աւետարանն, և պտղալից. 'ի նանիր բանիւ հալածեն զիս, յայնմանէ սովա մահ առնել զիս. քում օգնականութեն կարօտիմ:

Փոխ

Փոքր մի ևս՝ և կորուսանէին զիս յերկրի. այլ ես ոչ թողի զպատուիրանս քո։

Յուսահատ առնել, և անապաշաւ մեռանել. այլ ես ոչ թողի զպատուիրանս քո, որ ասացեր ընդ Եզր մեռանի՞ք տունդ Իէլի, զի ոչ կամիմ զմահ մեղաւորին, այլ զդառնալն 'ի չար ճանապարհէն և զկեալն։

Ըստ ողորմութեան քում կեցո զիս. և պահեցից զվկայութիւնս բերանոյ քո։

Ողորմութիւն քո յուսամ ապրել, և ոչ իմ արժանեաց. և յայսմհետէ պահեցից զվկայութիւնս բերանոյ քո, զոր ընկալայ և զայլն։

Յաւիտեան Տէր՝ բանն քո կայ յերկինս. ազգէ մինչև յազգ է ճշմարտութիւն քո։

Բանն քո՝ պինդ ունի զերկինս. այլ և՝ բանն քո կայ յեր կինս 'ի հրեշտակս, զի հզօրք են զօրութեամբ յառնել զբանս քո. և նոքօք ետուր զճշմարտութի օրինացն հրէից ազգին. և ածեր զնոսա մինչև յազգս հեթանոսաց, յորս ճշմարտութիւն պայծառացաւ, և հրէիցն առաւել ցուցաւ։

Հաստատեցեր զերկիր՝ և կայ։

Բարեկամն պիտոյիցն մարդկան և անասնոցն, և կայ այնու։ Այլ և՝ ճշմարտութիւն օրինացն հաստատեցաւ երկիր, որ մաշեցաւ ինքն և ամ՛ բնակիչք իւր. զի դու հաստատեցեր զսիւնս նր։

Հրամանաւ քով մնայ տիւ. զի ամենայն ծառայ քո են։

Իբրև յեսուայ, և առ եզեկիայ. այլ և՝ բաժանեցեր ըզ տիւ 'ի գիշերէ, և մնայ 'ի սահմանեալ կեան իւր. զի ամ՛ ծառայ քո է, 'ի քէն եղեալ կան 'ի հրամանս արարչին։

Եթէ ոչ օրէնք քո խոկ իմ էին, յայնժամ ևս ապաքէն կորուսեալ էի 'ի խոնարհութեան իմում։

Զայս ամ՛ ոգի լինել 'ի վիշտս՝ առէ այլ, յովսեփ, դա նիէլ, երեք մանկունքն, դաւիթ, բնութիւն, թէ ոչ զբնա կան օրէնսն գիտէր, որով անսաւ որդին եւս առ հայրն, կանխաւ կորնչէին խոնարհեալքն 'ի վիշտս փորձանաց։

[illegible]

Քո արդարութիւն կեցցոյց զիս, և ոչ իմն, որ է հաւատոյն աներկմիտ:

[illegible]

Ո՛չ ամ որ կարէ ասել զայս՝ որ ծառայ է մեղացն։ և մինչ 'ի բաց կայ՝ կարէ ասել, զարդարութիւն այ խնդրելով։

[illegible]

Սիմաքոս՝ անսայլին թէ՝ երբ կոչնչէ՝ յայլազգիս փախուցանելով. զի զկեայութիւն քո ես 'ի միտ առի, որ ասացիր՝ գալ զդաւիթ որդի յեսսեայ՝ այր ըստ սրտի իմում, որ արասցէ զամ զկամս իմ։

[illegible]

Սիմաքոս՝ և Թէոդոտիոն՝ ամ պատրաստութիւք անցանեն. ամ բարութիւք կենցաղոյս վախճան ունին, ուտել, ըմպել, խառնակել։ Եօթանասունքն ասեն, յոյժ լայն են խնա։ Սիմաքոս՝ անդորր են. Թէպէտ՝ նեղ և անձուկ է պատուիրանն, յուսով հատուցմանն լայն և անդորր են։

[illegible]

Ոմանք վասն երկիւղի, կէսք վասն փառաց գործեն բարիս. իսկ՝ որ սիրովն այ միայն առնեն, 'ի խոկալոյ և 'ի խօսելոյ ոչ լռեն։

[illegible]

Զի թշնամիքն պատուիրանաւ քո ոչ իմաստնացան. զի յաւիտեան իմ էին, 'ի նախնեացն ունէի։

[illegible]

Սաւուղեր ուսուցիչ դաւթի, և աքիներ, և աքիտոբել. զի թագաւորի հարկէ իմաստուն լինել. զոր սողոմոն

լսուր

խնդրեաց յՔյ. նոքա ոչ իմաստնացան. այլ՝ դաւիթ մանուկ գողով խօսէր, և քննէր զպատուիրանս Քո, և զվկայութիւն։

Յ[illegible]

Շա՛տ են չար ճանապարհք, և Քոյն մի է, երկու ճանա-պարհաւ անհնար է գնալ մարդոյ. Ը մինն առէ գնալ, որ-քան գնաց անմեղ. զի պահեցից զբանն Քո, որ ասաց՝ Տր ե-ղերու՛ք, զի ես Տր եմ։

Յ[illegible]

Քո՛ է շնորհն, զի դու յայտնեցեր զհաճոյս քո։

Ո[illegible]

Զի մեղուք զմեղր վաստակեն, և հոգին Տր զբանն բղխէ՝ զոր նորքին քիմքն ճաշակեն։

'Ի [illegible]

Զի զմեղս ոչ գիտէի՝ եթէ ոչ՝ օրինացն էր ասացեալ, մի ցանկար, մի շնար, մի գողանար. այլ՝ զմիտս օրինացն ցուցեր ինձ։

Ճ[illegible]

Զի գիշերի պէտք էր օրէնքն. ընտրութեամբ յոլհամանէս տակաւին ճրագ, մինչև արեգակ ծագեաց Տր մեր, ցուցա-նէր զշաւիղն գալոյ Տն։

Ե[illegible]

Զանխոհեմութեան կոչէ երդումն. զի պահեցից զՏմ իրաւունս արդարութե Քո, որ է սէրն, յորմէ կախեալ կան Տմ օրէնք և մարգարէք, դու ասացեր։

Խ[illegible]

Յիրաւի առէր զայս. զի Թագաւոր էր և մարգարէ, և խոնարհէր նաթանայ, և տանէր սեմէի նախատանացն։ Տր կեցո զիս ըստ բանի քում Թէ՝ ես սպանանեմ, և ես կեցուցանեմ։

Ը[illegible]

'Ի բարեաց՝ է ինչ՝ որ օրինօք կարգեալ է, և է ինչ՝ զոր մարդ ախորժէ և նուիրէ, որ կամեցականն կոչի, իբրև պատարագքն. դաւիթ զերկրպագել երգն և զձայնն, և զաղխն՝ 'ի մատամբ հարկանելն, յանձնէ և 'ի սրտէ նուիրեաց, և ա-

ղաչէ հաճել ինձ. և զիրաւունս քո ուսո ինձ, թէ հաճոյ է քեզ ասէ՝ տուր ինձ իրաւունս:

Անձն իմ 'ի ձեռս քո յամ ժամ. և զօրէնս քո ես ոչ մոռացայ:

Զի պատկեր քո է, և անմոռաց պահէ զօրէնս քո:

Եդին ինձ մեղաւորք որոգայթ. 'ի պատուիրանաց քոց ես ոչ մոլորեցայ:

Դուլեկ, և զխփացէքն. 'ի պատուիրանաց քոց ես ոչ խոտորեցայ, յերեւել զքեզ 'ի նեղութեան, և այրել:

Ժառանգեցի զվկայութիւնս քո յաւիտեան. զի ցնծութիւն սրտի իմոյ:

Ժառանգութիւն սեփհականն և հայրենին է, զոր անմահ կալայց ես ընդ հոգւոյն անմահութեան կցելով, զի ցնծութիւն առնէ տրտմեալ ոգւոյս:

Խոնարհեցուցի զսիրտ իմ, առնել զարդարութիւնս քո յաւիտեան, վասն հատուցման:

'Ի հպարտութենէ խոյս ետու. առնել զարդարութիւնս քո յաւիտեան, զի որ ամբարտաւանից հակառակ կայ. և հատուցումն է, զի տայ շնորհս խոնարհաց. և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի:

Զանօրէնս ատեցի, և զօրէնս քո սիրեցի:

Զի ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել, զի զի՞նչ միաբանութիւն է լուսոյ ընդ խաւարի:

Օգնական և ընդունիչ իմ ես դու. և ես 'ի բանս քո յուսացայ:

Օգնական՝ 'ի փոքր վշտաց, և ընդունիչ՝ 'ի մահուանէ. զի ես 'ի բանս քո յուսացայ, զի իւրաքանչիւր ոք 'ի լեզուէ իւր մի դատեսցի. զի 'ի բանից քոց արդարասցիս, և 'ի բանից քոց պարտաւորեսցիս՝ դու իսկ հրամայեցեր, և այս են ասէ իմ բանքն:

'Ի բաց եղերուք յինէն չարք. և քննեցից զպատուիրանս այ իմոյ:

Սաստէ չար խորհրդոցն՝ որ եկամուտքն են, զի քննեսցէ. այն է գործ նր անդաւոր:

Օգնեա՛ ինձ ըստ բանի քում, և կեցո՛ զիս. և մի՛ յամօթ առներ զիս ՚ի յուսոյ իմմէ:

Զոր դու գիտես յօգուտ ինձ. և մի՛ յամօթ եղէց, զի ՚ի քեզ, և ոչ յայլ ոք յուսացայ:

Օգնեա՛ ինձ, և ապրեցո՛ զիս. և խորհեցայց յիրաւունս քո յամ ժամ:

Գնեա՛ զիս առ ՚ի մահճանէ մեղաց. և խորհեցայց յիրաւունս քո յամ ժամ, ՚ի դատաստանին ահեղ յամ ժամ:

Անարգեցեր զամենեսեան՝ որ ապստամբ եղեն յարդարութենէ քոյ. զի անիրաւութիւն էին խորհուրդք նոցա:


Զհսկայսն, զստորամայեցիսն. զի անիրաւութիւնք էին խորհուրդք նոցա, խորհեալ էին չարիւք ապրել:

Յանցաւորս համարեցայ զամ մեղաւորս երկրի. վա՛ն այսորիկ՝ սիրեցի զվկայութիւնս քո:

Զմեղաւորայն աշխարհիս՝ անմնացական, և վա՛ն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո, զի յաւիտենին խոստանայ փառս:

Բևեռեա՛ յերկիւղ քո զմարմինս իմ. զի ՚ի դատաստանաց քոց երկեայց յոյժ:

Հոգիս յօժար՝ մարմինս դիւրութիւն հայցէ. առէ ցցեա՛ ՚ի սա զբևեռ ահազին երևմանն քո ՚ի յօրն վերջին. զի ՚ի դատաստանաց քոց երկեայց յոյժ, ոչ չափաւոր, այլ յոյժ, զահաւոր բևեռն յիշելով, և զանշէջ գեհենանն:



ՐԱՐԻ ԻՐԱՒՈՒՆՍ ԵՒ ԱՐԴԱՐՈՒ

թիւն. մի՛ մատներ զիս ՚ի ձեռս նեղչաց իմոց:

Արար դաւիթ դատաստան իրաւամբք, թէև՝ լինէր խնայելիք. և արդարութիւն անխառն ողորմութեան: Այլև՝ ասեն թէ՝ զառաջին գուբերսն՝ և զայս՝ յանմեղութենէն է ասացեալ. և զայս ստուգելի է առնել. և զմիջինն ՚ի մեղանչելն: Սակայն՝ և աստ աղաչէ ապրիլ յերևելի նեղչաց և ՚ի դիւաց՝ որ մերով ախտիւքս կռուին: Այլև՝ չգալ իբր ընուենս ՚ի դատաստան, զի ընդ սատանայի թէ հարցանիցէ, արար բնութիւն իրաւունս և արդարութիւն. արար և անիրաւութիւն. իսկ

խոկ նա՝ չէ՛ իրաւ, զի նա՛ է սրտաձաւ մեղաց մերոց։ Այլ՝ Է ող զատելն զնեզ՝ ոչ ախորժէ մատնել՝ 'ի զատ զաւ նդ, և մի՛տ զնել ամբարտաւանին՝ զոր ինչ առէ կա մեր։ Այլ՝ տն մերոյ վայելչական է առնել իրաւունս և արդարութիւն, և հօր յանձնել զընութիւնս, մի՛ մատնել 'ի ձեռս նեղչաց զիճաց. և 'ի համդերձեալն ինքն է զատաւոր և փրկիչ։

Ընկա՛լ զծառայս քո 'ի բարիս. զի մի՛ ամբարտաւանք զզրեսցեն զիս։

Ընկալ զիս յերաշխի, և բարւոյ ածն կալ յինէն յայսմ՝ հեռէ. զի մի՛ ամբարտաւանք զզրեսցեն զիս, զարշելի և զզրէլի ունք՝ 'ի քէն և 'ի հրեշտակաց՝ աղտ ինչ խառնելով 'ի քո ստեղծուածն։ Դարձեալ՝ զզրէլ, որ է զրպարտել, եղ զնծ առ ադամ։

Սպառեցան աչք իմ փրկութեան քում տր, և բանից արդարութեան քո։

Զայս կարօտելն առէ մտացն. և բանից արդարութեան քո. զի ակնունիմ թէ դու վկայեսցես իմոց արդարութեանս, ինքով զպակասն։

Արա ընդ ծառայի քում ըստ ողորմութեան քում. զարդարութիւնս քո ուսո ինձ։

Այսքան արդարութեան մշակ՝ ողորմութեան տն պարտ աղաչէ, և տակաւին կարօտի ուսանել զարդարութիւն։

Ծառայ քո եմ ես, իմաստուն արա զիս, և ծանիցեմ զվկայութիւնս քո։

Ամենեքեան ծառայք են տն երեսալքս, այլ՝ իրաւացի ծառայ նա է՝ որ ազատ է 'ի մեղաց, որպէս և սա պարծի. և իբրև հաւատարիմ ծառայ՝ որ ցանկայ ուսանել զկամս տն, խորհրդոցն գիտակ. և ծանիցեմ իբրև զնաթանայէլ՝ որում տրն վկայեաց. ահա արդարև իսրայէլացի՝ յորում նենգութիւն ոչ գոյ։

Ժամ է առնել տն. խոտեցին զօրէնս քո։

Ցանկալ յերկայնմտութենէ, զի բազմացան խափանիչք օրինացն։ Ըստ այսոց՝ ժամ է պաշտել զտր, ութօրեայ թլփատել զտղայ. խափանեցին զօրէնս շաբաթուն։

Վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո, քան զոսկի և զտպազիոն։

Ո՛չ

Ոչ փոխանակեցի ընդ ոսկւոյ զոր ամ երկիր ունի. և տպաւորեմ՝ որ քան զամ ակն պատուական ասի։ Զոր ա-սեն գտանել ՚ի տուպարէ քաղաքի հնդկաց. և վաճառեալ դոյն գնոյ, և նուիրեալ եթովպացւոց թագուհւոյն, և նորա առեալ դնէր ՚ի մէջ թագին, որ՝ դեղ է ամ ցաւոց։ Լսե-եալ յեսմանս՝ և է կարմիր, և ջուրն՝ որ իջանէ՝ սպիտակ. և շատ աման լցեալ ջրովն՝ ոչ պակասի կշեռն, և ոչ ական-ջաւի բոլորն։ Որ է օրինակ տն մերոյ՝ որով պսակի եկեղեցի, և արեան նր բժշկէ զամ ցաւս. սպիտակացուցեալ անմեղա-ցուցէ զբժշկեալս, և ոչ արենաթաթախ արարեալ։

Ա[illegible]

Զի յանձն չարարուեստ ոչ մտանէ իմաստութի. այլ յատեցօղն չարի՝ աջողին բարիքն։

Ս[illegible]

Օրէնքն՝ զոր չարք մեղադրեն, ինձ զարմանալի եղև. զի քննեցի, և իմացայ հոգւով։

Ց[illegible]

Որ ՚ի չարացն ծածկի՝ զանմեղ տղայոն իմաստնացու-ցանել աղաչէ, զոր տրն ասէ՝ ծածկեցեր զայս յիմաստնոց, և յայտնեցեր տղայոց։ Աստուծն՝ յայտնութի բանիդ քո. որ երբեմն յայտնեցաւ բանն մարմնով՝ լուսաւորեցան անդէտք։

Զ[illegible]

Զի նախ լուայ, թէ բաց զբերան քո և լցից։ Եւ բե-րան՝ զյօժարութի հոգւոյն ասէ, իբրև ծծումն օդոյ՝ մար-մնոյ տայ կենդանութի. և նոյնքն մարդոյն՝ հոգւոյն տյ. որ-քան բանայ՝ առեալ լինի. զոր պօղոս խնդրէ աղօթս յա-շակերտացն, զի տացի բան՝ ՚ի բանալ բերանոյն. ՚ի պատուէր բանս քո փափաքեաց անձն իմ, ՚ի յառնուլ զհոգին՝ յոր-դորէ զբաղձանքս։

Ն[illegible]

Որ լի է ողորմութեամբ և ուղղութեամբ նայելով քո։ Ըստ ի-րաւունս սիրողաց անուան քո, որ իրաւունք է սիրողացն զանուն քո ողորմել։

Զ[illegible]

Ցոյ

Յորժամ յօժարութիւն իմ և օգնութիւն բանից քոց՝ միաբան գան, ոչ լինի տկարել ինձ ամենևին, թէպէտ՝ դևք մաքե-նայիւ ո[illegible] կամին:

Փ[illegible]

Յոյժ դժուարին է տանել զհպարտացն, որում տէրն վարձս բազում խոստացաւ. և այլոց համբերեաց՝ շատ ՚ի փրկութիւն, յորս յոյս անկաւ և փոքր գտաւ. և այսպէս կարացից առ է պահել զպատուիրանս քո:

Ե[illegible]

Անմարմին է ինձ՝ զխորհուրդ երևի երևոյթ. յորժամ մանր որդւոյն, և աջողին բարիքն, երևել առ երեսացն [illegible] յորժամ առաւել ուսանիմք բարեգործ լինել:

Վ[illegible]

Ըստ պօղոսի՝ թէ վշտանայ ինչ մի անդամն՝ վշտանան ամ անդամքն ընդ նմա. որ անդամ է՝ նա վշտանայ. իբր ինքն ասէր, ո՞ հիւանդանայ՝ և ոչ ես հիւանդանամ. և ողբայր զկորուստ ազգին իւրոյ, զկորուստ յանցաւորացն գթալով՝ իբրև զանձին. զի վտակ ասելով՝ զյորդն, և զկարի սաստ-ութիւն ասէ:

Ա[illegible]

Զոր ումանք զհպարտսն զօրէնս, և զօրէնսդիրն ասելով թէ՝ ընդէ՞ր նորէ չարաց և հպարտաց, և թէ՝ ընդէ՞ր դնէր զաղամ ՚ի դրախտին, և ասէր՝ մի ուտել. մեք հաւատացաք, զի արդար ես և յիրաւի, և ուղիղ դատես զյանցաւորսն:

Գ[illegible]

Եւ ոչ թագուցեր զկնայեն բարեաց՝ զոր պատրաստ է տա-նել. և ճշմարիտ են յոյժ, և ոչ դոյ ստութի:

Մ[illegible]

Զի անցանեն զօրինօքն, և հայհոյեն զքեզ. իբր էր փնտրես, և հեղլաս, և պօղոս. զի մոռացան զբանս քո թշնամիք իմ, զի հողեղոյն են թշնամիք՝ օրինացն արհամար

հօղք

հօղքն , զեամն զգուշացուցիչ մտաւցան, թէ խոտորեա՛ 'ի չարէ, և արա՛ զբարի, և որ սոյնն նմանք են ։

Ընտրելու է [illegible] ։

Եօթանասունքն՝ հրացեալ ասեն, այ՝ փորձ և ընտիր, իբր հրով փորձեալ ոսկի․ և ծա՛յ քո սիրեաց զնա, որ ճանաչէ՝ սիրէ ։

Մանուկ էի ես և [illegible] ։

Նման է՝ որք ասեն յանմեղութեան ասել և 'ի մանկութեան, որ և 'ի գնալն սամուէլի 'ի տուն հօրն յօծանել զմի յորդւոցն՝ զեօթանեսին որդիսն անցոյց հայրն առաջի, և գնեալ նէ ասաց 'ի հարցանելն՝ կայ միւս ևս փոքրիկ, և արածէ խաշն, զոր ասէ՝ արհամարհեալ էր, և դու ընտրեցեր, և արդ ոչ արհամարհեցեր քո արդար զաստուածաւդ, զայն ոչ մոռացայ։ Դարձեալ՝ 'ի տղայութեան ուսայ յօլ [illegible] քոց, և ոչ 'ի մարդկանէ, և ոչ սղալեցի ինչ 'ի մանկութեէ։ Այլև՝ մի գոլով եկեղեցի՝ տղայ է՞ր տղայս և յարհամարհանս, մինչև հասանէ յայր կատարեալ 'ի չափ հասակի կատարմանն քնի։ Զի զարդարութիւն քո ոչ մոռացայ, քինէ ոչ մոռացաք՝ որ մանուկ եղև մը մեր, և արհամարհեցաւ։

Արդարութիւն [illegible] ։

Որ 'ի մարդկանէ առնու օրէնս՝ և արդարութեան ջանայ առնել՝ չէ յաւիտենից, և չէ ճշմարիտ․ այլ՝ որ յաւիտենից միայ, և ճշմարիտ ցուցանէ։

Նեղութիւնք [illegible] ։

Նեղութիք և վիշտք ընծայեցեալ են զի առաքինեան, յորմէ առաւել շահին, ուսանին, և խօսին, և ուսուցանեն , իբրև արիւնն աբելի․ զի վիշտք մեզն օգուտ է ։

Արդարութիւն [illegible] ։

Օրէնք և արդարութի, և իրաւունք, և վկայութիք, զանազան կոչմունք են միոյ սահմանադրութեն այ, իրաւուց և զաստուածանաց՝ զոր ցանկալի համարի, և յայժ հաճոյ այ։ Դարձեալ՝ արդարութի են, որում վկայեցեր բարւոյ՝ սահման ցամուէլ , զոր է բարի, օծ զդա, անխախտ կացցէ և յաւիտեան․ զի խնամանացայց նուլա, և կեցցէ։

[illegible]

Զարդարութի օրհնացն՝ առ քեզ կարդացի, և ՚ի կամս միմ քո լուր ինձ, և զոր խնդրեմն՝ տուր։

[illegible]

Զջերմն յօժարութեան՝ աղաղակ առնէ փրկութեան խնդրելոյ, և պահել ախորժէ զանձն իւր, իբր զկայութեան խորան. զի վկայեաց, ես և Հայր՝ առ նա եկեսցուք, և օթևանս առ նա արասցուք։

[illegible]

Թագաւոր գոլով և ՚ի հոգս՝ յորում պահու հնար էր պարապել, չմիայր զարթնոյ քահանայիցն, և ոչ խօսել հառու. աղաղակեցի թէ՝ կեանք է որ ունի միշտ ՚ի բերան։

[illegible]

Ոչ միայն ՚ի մէջ գիշերի, այլև՝ զառաւօտուն քունն թօթափեցի յաչացս։

[illegible]

Այսպիսի մաքուրն՝ ողորմութիւն առնէ ազգին, և յիրաւունսն՝ ոչ և ոչ յիւրն։

[illegible]

Հեռացան յօրէնաց քոց, վասն այնորիկ՝ հալածեն զիս. այլոց շատ արարին անօրէնութիւն, յիս այլ մերձ բերին։ Զայս և տէրն ասաց, որ զձեզ լսէ՝ ինձ լսէ. և որ զձեզ ատէ և հալածէ՝ զիս ատէ։

[illegible]

Մերձ ես յամենեսեան, և խնամես զընդնաւս. և ուր հալածեն զիս՝ դու անդ ես. և ամ պատուիրանք քո ճշմարիտ են, որ ասացեր՝ զերկինս և զերկիր ես լնում։

[illegible]

[illegible]

Երկինք և երկիր վկայք են այ զօրութեան՝ որ արար, և իմաստութեան՝ որ պահէ մինչև 'ի նոյնութեան հաստատ:

[illegible]

Զի ասացեր՝ յո՞ հանգչիմ, թէ ոչ 'ի հեզս և 'ի խոնարհս, և որ դողան 'ի բանից իմոց. և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի:

[illegible]

Ե՛ զայս ես՝ դու ասացեր, իմ են վրէժխնդրութիւնք և ես հատուցից:

[illegible]

Ինքեանք հեռացան 'ի փրկութենէ՝ չպահելով զօրէնս, թէ՝ զարդարն մի պարտաւորեր. այլ՝ անդէն մերձ է՝ եթէ կամին, այլ՝ յետ մահուն բնաւին մոռացեալ հեռացեալ:

[illegible]

Իբր հօր՝ յորդորես, որքան և են զաւակքն. ըստ իրաւանց քոց կեցո զիս, իբր իրաւունք է 'ի ծնողէդ:

[illegible]

Ընդդէմ բազում գթութեանդ՝ և առեցօղքն և նեղիչքն. այլ 'ի վկայութենէ քոց ես ոչ խոտորեցայ, թէ՝ որ սպանանէ մեռցի. չսպանն զսաւուղ զհալածիչն, և յարենէ աբիսողոմայ՝ սուրբ գայ:

[illegible]

Ըստ պօղոսի՝ ո՞ գայթագղի և ես ոչ տապանիմ. և լա լալասեմ զթշնամեաց խաչին քո, զի անարգիչք են և անդորոյնք:

[illegible]

Մեծ յստակութիւն է սրտի, զի այ տեսանել աղաչէ, սա կայ՝ յողորմութի 'նր յուսայ ապրել:

52

Սկիզբն բանից քոց ճշմարտութիւն է. յաւիտեան են ամ իրաւունք արդարութեան քո:

Կամ՝ որ արարեր զհրեշտակս բանիւ և առաջին բանականս. կամ որ ասացեր եղիցի լոյս. կամ խոստումն աբրահամու՝ որ սկսաւ խօսել ը նմա. կամ ըստ պընակոյն սկիզբն՝ ես եմ որ ամ քո. և լոյս լինել որ ամ քո որ մի է: Այլև՝ սկիզբն վարդապետութեան տն՝ որ ասաց զերանութիւնսն: Յաւիտեան են ամ իրաւունք արդարութեան քո, որ ասաց՝ երկինք և երկիր անցցեն, և բանք իմ ոչ անցանիցեն:

Իշխանք հալածեցին զիս 'ի նանիր. և 'ի բանից քոց երկեաւ սիրտ իմ:

Դևք՝ իշխանք օդոյ են. 'ի նանիր հալածեցին, զի 'ի տն ոչինչ գտին, որպէս սաւուղ 'ի դաւիթ վնաս ինչ. այլ 'ի բանից տն երկեաւ դաւիթ՝ զի օծեալ թագաւոր էր սաւուղ:

Ցնծացայց ես 'ի բանս քո, որպէս այն՝ որ գտանէ աւար բազում:

Զոր գտանէ յառաւաւոր իմաստս օրինաց և մարգարէից, քան թէ՝ յաւարն ադրաազարու դաւիթ: Այլև՝ առաքեալքն 'ի քսի բանն՝ որ ասաց՝ ձեր երանի աչաց և ականջաց. իբրև զքն՝ որ էառ յաւարի զհոգիսն 'ի դժոխոց և ցնծացաւ:

Զմեղս ատեցի և անարգեցի, և զօրէնս քո սիրեցի:

Զի որ սիրէ զլոյս՝ ատէ զխաւար:

Եօթն անգամ յաւուր օրհնեցից զքեզ, վս իրաւանց և արդարութեան քո:

Զեօթն՝ բազում ասելով սովոր են գիրք. այլև՝ եօթնաղի քնարաւ օրհնէր զածն ը տիւ և ը գիշեր. վս իրաւանց և արդարութեան՝ եօթանց աւուր ստեղծման և գիշերոյ, իրաւունք է մեզ՝ զմինն եօթնպատիկել, և ը զդայրանացս: Դարձեալ՝ զի աւուր գործ 'ի գործ, և զգիշեր 'ի հանգիստ, կարծի իրաւամբք են: Այլև՝ է խորհրդով մեզ պատուէ աղօթել, զոր տրն յանձին կալաւ. յղուլ, ծնունդ՝ և մկրտութիւն, անձուկն, չարչարանքն, մահն, թաղումն, և յարութիւն. քանզի՝ ասէ 'ի յօբն, վեցիցս փրկել 'ի վշտացն, և յեօթն ոչ հարկանի, զի տրն այլ ոչ մեռանի: Եւ մեք յեօթն զօրութի հոգւոյն՝ ոյժ առեալ, զեօթն խորհուրդն տն զան ձանձ արկեալ՝ ոչ հարկանիմք. վս իրաւանց և արդարութեան զոր տրն արար խաչիւն:

Խաղաղութիւն բազում այնոցիկ որ սիրեն զօրէնս քո, եւ ոչ գոյ 'ի նոսա գայթակղութիւն:

Ընդ այս խաղաղութիւն ունելով՝ եւ սէր ընդ օրէնս՝ ոչինչ վնասի արդար, ըստ պօղոսի՝ հալածեալք, այլ ոչ լքեալք. չարչարեալք՝ այլ ոչ տառապեալք, եւ գայթագղեալք:

Սպասէի փրկութեան քում տէր, եւ զպատուիրանս քո սիրեցի:

Սպասեցի փրկութեան քում, եւ ոչ ապաւինեցայ 'ի մարդ. եւ զպատուիրանս քո սիրեցի, եւ ոչ զմեծութիւն:

Պահեաց անձն իմ զվկայութիւնս քո, եւ սիրեաց զնոսա յոյժ:

Իբր յարձանի գրեալ յոգւոջս. եւ սիրեաց զնոսա յոյժ, եւ ոչ հարեւանցի:

Պահեցից զպատուիրանս՝ եւ զվկայութիւնս քո. զի ամ ճանապարհք իմ առաջի քո են:

Պահեցից, յայտնի խոստմամբ զգուշանալ. սակայն՝ ասէ զոր դու ճանաչես, եւ դու գիտես զնոսա. զի ամ՝ ընթացք՝ զոր գնացի, եւ գնալոց եմ՝ առաջի քո է, եւ չերեւելքն իբրեւ զերեւեալ առնթեր քեզ:

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո տէր. ըստ բանի քում իմաստուն արա զիս:

Ջերմեռանդ խնդրուածքն՝ որ նախ քան զայս՝ աղաչէ մերձիլ առ Ած անմիջոց, զի չմնասցի ինչ մեղաց արգել: Ըստ բանի քում իմաստուն արա զիս, ոչ մարդկային, այլ Ածային ցանկալի իմաստութե: Ըստ իս՝ զբանն 'ի սկզբանէ հայցէ զքս գալ առնել զմեզ իմաստունս:

Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր. եւ ըստ բանի քում փրկեա զիս:

Եօթանասունքն՝ արժանաւորութիւնք, զնոյն աղօթս ասէ, ստուգելով թէ՝ յանձնողութեան է առաջեալ. եւ ըստ բանի քում փրկեա զիս, յանէ փրկեա:

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո, յորժամ ուսուցանիցես ինձ զարդարութիւնս քո:

Եօթանասունքն՝ զգայանեցին շրթունք իմ զօրհնութիւնս քո, որք 'ի խորտակելութեան զգայութիւն եղանէ ընդ շրթունսն, նոյնպէս 'ի յանձնէ սիրոյն առաքինական սրտի հանէ զօրհնութիւն. իբրեւ աղբեր ասաց, որք 'ի ձայնից արդարութեան՝ շրթամբք ցնծութեան օրհնեսցէ զքեզ բերան իմ: Դարձեալ՝ բղխեսցեն՝ ոչ զմոլորական, այլ զքոյս աւետարանս:

Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ամ պատուիրանք քո ար-դարութիւնք են:

Զբանեղէն պատարագս՝ ընդունաւ քահանայագործեցից, և պարգևաբերեցից զերգս. զի ամ պատուիրանք քո արդարութիւն են, ըստ պատշաճ ժամանակի, հինն և նորս:

Եղիցի ձեռն քո ՚ի կեցուցանել զիս. զի զպատուիրանս քո ընտրեցի:

Ձեռն՝ զներգործութիւն խնամոցն ասէ, թէ՝ ցոյց և յայտնի արա զապրելն իմ. զի զպատուիրանս քո ընտրեցի մեծ քան զամ զայլսն:

Ցանկացայ փրկութեան քում Տր, և օրէնք քո խօսք իմ էին:

Որ ոչն ցանկայ՝ ոչ ուսանի, իսկ՝ որ ցանկայ՝ ուսանի, և միշտ խօսի, և ոչ մոռանայ զցանկալին, և գտանէ ՚ի դէպ ժամանակի: Այլև՝ ցանկայ փրկութեան տն՝ զոր եցոյց ՚ի մէջ երկրի:

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ:

Ցանկայ յաւիտենից կենօքն օրհնել զած, և ոչ ախորժէ զանցաւորս. և իրաւունք քո՝ իրաւացի դատաստանին ահն օգնեսցէ յանմեղ մնալն

Մոլորեցայ ես որպ զոչխար կորուսեալ. խնդրեա՛ զծառայ քո, զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ:

՚Ի դիմաց բնութեան է, զի դաւիթ տակաւին չէր մոլորեալ. խնդրեա՛ զծառայս քո, զհովիւն քաջ աղաչէ գալ և լինել ոչխար, և խնդրել զմոլորեալն, և ՚ի յուս բառնալ, և առ անմոլորսն տանել՝ յինասունն ինն: Այլ թէ՝ և զինքն մի յոչխարացն համարի դաւիթ՝ զի ՚ի բնութենէ ասորի է, հաղորդ կլից նախաստեղծիցն մոլորելոց:

Աստիճան վերաբերութեան առաջին:

Խնդրելով առ Տէր է թէ՝ ոչ ինչ մեռ աւէն ՚ի յիշատակի մեռելոց:

Ասէ՝ թէ՝ ՚ի մէջ գերեզմանին աղաւաղ առաց դաւիթ զայս սաղմոս. զի անց զօրէնօք, և զպատուիրանաւ, և զփրկութեամբ տն. սակայն՝ յորդւոց նր յոլովք զգուշացան և պահեցին, թող մնալն ասէ նոքօք հայրենի պարզքն: Այ այսուհետ՝ ասեմք ՚ի քն՝ ննջեցելոցն յիշատակի. զի մի են քրիստոնեայքն՝ մարմին միոյ գլխոյն, և իրերաց անդամք. զի

զի շնորհք գլխոյն՝ և անդամակցացն սփռեսցի, տարածեսցի 'ի լաւացն 'ի սղալեալսն:

Եւ՛ աւելորդ չկարծելէ ասել. զի 'ի պատարագս՝ որ վ՟ն մեռելոց, խունկ ոչ խառնեսցին. և այս՝ պատարագն է վասն մեռելոց ննջեցելոցն: Այլ երբեմն զքաղցրահոտ փոխս այս՝ յանձ կայ ասա զօրութի:

Եւ՛ զի տ՟ծ մնան ոչ է ասա, այլ՝ տ՟ր և տ՟ն, և դասաւորի. զի յետ ասուի զնալոյն յառնելի դասաւորին կան, զդասաւորն աղերսեմք հաշտել, մինչև յօրն հատուցմանն. զի հաշտն, և բարեգործակին՝ յայնմ աւուր յինքն առցէ ըզվճիռն 'ի վերայ քրիստոնէից՝ հաւատով ննջեցելոցն. և յուսոյն մերոյ քՏի փառք յաւիտեանս յաւիտենից ամէն:

Ուստի՝ յայս յոյս՝ խոցոտեալ անդամս եկեղեցւոյ և վերաւոր մարմին՝ և հոգի՝ և միաք յի, մանն յաւէտ մոլորեալ ոչխարին Անաստասան, որև Վարդան, վտանգեալ 'ի յահագին ծովուս, կամ յերկրէ յերկինս դիմեալ՝ տկար ոգւով և մարմնով, ցաւօք և ծերութբ, ձեռն 'ի յս̃ կալեալ և յիւր մերձաւոր տ̃րմն՝ յեպիփան, յեփրեմ, յաթանաս, և 'ի դամնեել. զոր աւմեմն համառօտեալ կարճառօտեալ էր մի գիրք՝ յայլևայլ տեղիս. որոց յիշատակն օրհնութբ եղիցի, սեղանաւորսն՝ որ մեզ պատմեաւ եղև աշխատել և հաւաքել 'ի մի, թողեալ և յաւելեալ կամաւ, 'ի կարծիս՝ թէ չէ յարմար, թերևս մեր տխմարութե թուեցեալ. և շատն՝ զոր նա էր թողեալ, և զոր մեք սղալմամբ, և չածելով 'ի յիշումն, զարոց թողութի քն սիրոյն հայցեմ 'ի հանդիպելոցդ:

Սակայն՝ ու՟ վերադրոյն ասեցդ 'ի մեծն յոյս վստահացեալ 'ի քս̃ գլուխ, և յիւր անդամսն. զի 'ի վերուստ 'ի գըլխոյն, և 'ի ներքուստ՝ որ 'ի գերեզմանս կան տ̃ր ոսկերքն՝ մեր շուրջանակի ծնողաց, և հարազատաց, և զաւակաց նոցա, և կենդանեաց, նշոյլք ճառագայթիցն թափանցանց հանել զժանգն՝ լուացումն զմեզ լուսով և տ̃մ բարութեն խերեանց. և 'ի գալն 'ի միասին ցնծութբ առցեն զմեզ, և ցուցցեն զինքեանս 'ի փառս որդւով և հոգւով:

[illegible]

են, խոյ՝ առ Քաղդեայս մերձեցաւ: Որք [illegible] ՚ի [illegible]. որք [illegible], և [illegible] [illegible] էին, և ՚ի [illegible] առ ած՝ [illegible]:

ՍԱՂՄՈՍ. ՃԺԹ:



ՆԵՂՈՒԹԵԱՆ ԻՄՈՒՄ ԵՍ ԱՌ Տր կարդացի, և լուաւ ինձ Տր. փրկեա զանձն իմ ՚ի շրթանց նենգաւորաց, և ՚ի լեզուէ չարէ:

Ցուցանէ զտուբիաս և զընկերս իւր՝ որք կամեցան սպանանել զեզրաս. և զչարախօսսն դանիէլի և զանանեանց: Այլև՝ ամ մարգարէքն առաջինք ՚ի նեղութեն կարդացին, և լուաւ նց տր, և ապրեցոյց ՚ի լեզուէ չարաց, աբրահամ, իսահակ, յակոբ, յովբ, մովսէս, յիսուսեանց նմանչացն՝ ՚ի սպանմանէ, և ՚ի լեզուաց չարեաց փրկեցան: Զի ամ հոգի վշտացեալ մերձ է յած՝ կարդալ առ նա. և գթածն ած՝ ոչ արհամարհէ, թէպէտ՝ վս մեղաց իցեն մատնեալ ՚ի նեղութիս, իբրև յեգիպտոս, և ՚ի բաբելոն հրեայքն: Աստի յայտ է թէ՝ բարեաց պատճառ պարտ է համարել զնեղութիւն, քան զընդարձակութիւն, որպէս ինքն ասէր, ՚ի նեղութեն կարդացի առ իս, և լուաւ քեզ: Եւ՛ բարեբարոյքն ՚ի մարդկանէ և ս ոչ մերժեն զնեղեալս, իբր եղիսէ զսոմնացին, յասելն ցսպասաւորն՝ թոյլ տալ դմա, զի անձն դորա՝ վշտացեալ է:

Զի՞ տացի քեզ՝ կամ զի՞նչ յաւելցի, լեզու նենգաւոր:

Քան թէ՝ որ օձին տուեալ պակասութի յոտից կամ թեւոց. և յաւելուածք՝ անէծք, և անհաշտ պատերազմ ամ մարդկան ընդ նմա: Դարձեալ՝ զի՞նչ տացի, քան զոր ունի նենգաւոր լեզուն՝ առ ինքն ամբոխ, և նախատանաց անուն՝ այլ ի՞նչ տացի նմա՝ որ զյորդն չարախօսեաց. և նախ զած առ եւայ, որ է սատանայ. չկայր ի՞նչ բարի առ նա՝ որ բառնայր ՚ի նմանէ՝ զատ յանմահութենէն, որ ՚ի մշտնջենաւոր տանջանս է նմա:

Ոպ նետս հզօրի, զի սրեալ են [illegible]:

Ոպ նետս հզօրի, հզօր ած յոմի. նետք՝ մարք, և պարսիկք՝ հրաւիրեալք ՚ի վր բաբելոնի նենգաւոր լեզուացն, և

ամի

ամի՝ որ նմանեցան նմանին նմա։ Դարձեալ՝ նոքա հզօր պղտոր տանջանս ասէ սատանայի 'ի հանդերձեալն, և մինչ եալ կայծակամբք՝ զսաստիկ հուրն ծծմբոյն. զոր այլ թարգմանքն ասեն՝ խառնեալ է կայծակունս անապատաբորբս. զի որպէս սրոց նետի մխեալ կայծակաց ածխով՝ զհարեալն նետիւն անապատ առնէ 'ի կենաց, և հուր զքաղաքս 'ի բնակչաց. նոյնպէս բարկութիւն Այ սուր և հասանէ իբր պատուհասն գեհենի. զորոյ միութն պահեալ է դիւաց, որք անապատ լինին յօգնականաց և 'ի բարեխօսից։

Վա՛յ ինձ զի ընդերկարեաց եղև պանդխտութիւն իմ. զի բնակեցայ ես 'ի վրանս Կեդարու։

Ժամանակ կենաց մարդոյ՝ եօթանասուն ամ, նոյնքան հրէայքն 'ի բաբելոն. և այս՝ զի է կիսածառայս բնակէին. զի կեդար՝ երկրորդ որդի է իսմայելի, որք էին գերեկլեցք ինէլի։ Այլև՝ որք պանդխտութիւն համարին զկեանս զայս, և աստիճանօք առաքինութեանց՝ ելս դնեն 'ի սրտի, թէև՝ սակաւ ինչ միայն ասէին՝ տաղտկան, և ողբան վայլք զդրախտն յիշելով, և վերնոյն եդեմի ակն ունելով. որև՝ բաւական է յերանութի գիտելն թէ՝ պանդուխտ է յերկրի. մինչ զի՝ պարծել Այ նոքօք, որպ աբրահամ, իսահակ, յակոբ, և երիցն միայն՝ ոչ համարի ամօթ կոչել Այծ. քանզի՝ պատրաստեաց նց քաղաք, որք ասէին խոստովան եղեն թէ՝ օտարք և պանդուխտք են, և խաւար է կեանք աշխարհիս. զի կեդար՝ խաւար ասի։

Բազում անգամ բնակեցաւ անձն իմ ընդ այնոսիկ, որք ատէին զխաղաղութիւն։

Ընդ բաբիլոնացիսն զեօթանասուն ամ, որք օրէնօք պատերազմի էին, և աստուածպաշտութեան թշնամիք, և մատնեցին զերեք մանկունսն։ Այլև՝ արդարքն յուսով շատ անգամ բնակեցին և բնակեն ընդ ողջունատեացսն, իբր մարգարէքն ընդ հրէայսն. այլև՝ տէրն ևս՝ որ ասէր, մինչև յերբ իցեմ ընդ ձեզ. և զառաքեալսն առաքէր իբրև զոչխարս 'ի մէջ գայլոց, զի զգաստութիւն հանցեն 'ի նոցանէ։

Ես էի խաղաղարար. յորժամ խօսէի, մարտնչէին ընդ իս։

Եզեկիէլ, դանիէլ, եզրաս, նէեմի, վիճողաց հեթանոսաց ընդ ժողովրդեանն 'ի բաբելոն. այլ՝ 'ի մէջ հրէիցն իբր զմովսէս որ ասէր, արք եղբարք էք, ընդէր զրկէք ըզ-

միմ

միմեանս. և ոչ միայն պատուիրէր ՚ի ճանապարհի տալ զհաշիւն, և հաշտիլ, և չերթալ ՚ի դատաստան. և ասէր զգոյշ լերուք յամ ագահութենէ, և նոքա մալամանչէին, մինչև հասին զնա ՚ի խաչ։

Օրհնութիւն Աստուծոյ։

Նոյն Տէրն էր զոր եղեալն՝ որ յայս աշխարհ աղօթեին, ՚ի Տեառնէ ատեցայց. որ եղեալ ՚ի Տերոջ խաչէր զոր պարագային, ամենակարող զոր ՚ի յերկինս անակնկալ՝ որ խաւարեն փրկեցաւ խոյսն. և ՚ի ոչ նոյ՝ որ ծաղկաւորեն յաղթեցայ անուղէկայ, և գերեալ ՚ի Տերոջէն. Տէր՝ և տէր։

ՍԱՂՄՈՍ. ՃԻ.

Համբարձի զաչս իմ ՚ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն։

՚Ի սիոն, և ՚ի սամիրոն, ուստի համարէին օգնութիւն. ուստի գայր հրեշտակին ամբակումայ, և բերէր ճաշ դանիէլի։ Եւ մեք ՚ի բարձր քան զամ յերկինս, և յերկնից երկինս, ուստի եկն և գալոց է յիս, ակնկալութեամբ մերոյ օժանդակին։

Օգնութիւն իմ ՚ի Տեառնէ եկեսցէ, որ արար զերկինս և զերկիր։

Որ հիմնեաց ասէ զտունս զայս, որոյ ձեղուն՝ երկին, և յատակ՝ երկիր, յամի կարօղ է, ամ ուրեք է։ Դարձեալ՝ թէ գայցէ յերկնից հրեշտակ, և թէ յերկրէ մարգարէ և առաքեալ, և մարդ ո և իցէ, ՚ի Տեառնէ է օգնութիւն որ ստեղծ զմեզ՝ երկնաւոր և երկրաւոր՝ շաղկապ երկուցն. հոգին մեր առնէ պատասխանի խնդրողին և ասէ։

Մի՛ տար ՚ի սասանումն զոտն քո. և մի՛ ննջեսցէ պահապան քո։

Մի տար ՚ի սասանութիւն զոտն քո, զվերինն՝ որ գնայ ընդ երկինս՝ զյոյսն, և զներքինն ոտս՝ որ կոխէ զերկիր՝ ըստ մարմնոյ ՚ի մեղս՝ մի տար երբէք զկայեն, որ են ղողբոջուռն դատաստանաւ ՚ի Տեառնէ. և ոչ ննջէ օգնականն՝ որ պահէ զքեզ, այսինքն՝ որքան կայր է քեզ՝ մի առներ պակաս, և ՚ի Տեառնէ լինել է։

Որպէս ոչ ննջէ՝ և ոչ ՚ի քուն երթայ պահապանն Իսրայէլի։

Զի արթուն բնութիւն է, և գիտէ՝ զի թշնամին քո ոչ ննջէ ՚ի կռուոյ։ Այլ՝ ինքն է պահապան, որ յամ հայի,

 և

և ոչ կուրաց և վայրագնելոցն, այլ՝ որոց աչքն 'ի գլուխն է, իմաստնոցն լի սողոմոնի. և այլ ևս՝ յերաշխի առնու ասելով:

Տէր պահեսցէ զքեզ, և տէր ընդունեսցի աջով ձեռամբն իւրով:

'Ի բաբելոն, և զեղն յենեմ. տէր պահեսցէ զքեզ՝ 'ի կատկածոտ, և 'ի մուխատրայ կեանքս, և յելանելն ատողի՝ ընկալցի աջով ձեռամբն, յաջ ձեռն իւր դասէ, և ... օգնուն պատկէ. և կարես ասել ... յոյժ քո՝ տէր 'ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ:

Արեգակն 'ի տուէ քեզ մի՛ մեղիցէ, և մի՛ լուսին 'ի գիշերի:

Տունն մեռայ՝ որ է արեգակն, և արտեւմեայ՝ որ է տունն լուսնի, որ և՝ ամ հեթանոսք յուղարկեն նուէրս, և խնդրեն քեզ կողուատ: Այլ և՝ խոստանայ հոգւոյն զպարգևս ելից յեգիպտոսէ, լինել ամպով հովանի 'ի տուէ և 'ի գիշերի, զի և լուսին մատակար տայ ունի գիջութեան հանդերձ: Այլ և՝ արեգակն՝ սատանայ, որ խեթիւ հայեցաւ յադամ, և հայի խորշակաւ 'ի ներմանս պակասահողս. և ոչ լուսին մեղիցէ քեզ՝ որ ծագէ 'ի գիշերի նեռանն, 'ի նուաղել լուսոյ պատուիրանին: Դարձեալ՝ մեղաց մարդկան՝ ոչ արեգակն է պատճառ 'ի տուէ՝ որ է աւետարանն, և ոչ լուսինն՝ որ է օրէնքն 'ի գիշերի, զի չածին պակաս գիրաւ. այլ ազատ կամօք կուրութեան իւրեանց և անհաւատութեանն:

Տէր պահեսցէ զքեզ յամ չարէ. պահեսցէ տէր զանձն քո:

'Ի յոլովութէ յայս առնէ՝ զի բազմաբեղուն և շատազաւակ է չարն, մարմնաւորական, և հոգեկան, և մարմնական, 'ի փորձութիւ և 'ի ցաւս յոգնազանս բաժանեալ. և յամէ՝ նա միայն կարող է պահպանել, լինել պարիսպ հրեղէն շուրջանակի. և կրկնէ թէ՝ պահէ զանձն քո, որ է պատերազմդիմաց 'ի յող այդր, 'ի տանել հրեշտակաց զհոգիսն յիւրեանց տեղիս:

Տէր պահեսցէ զմուտ և զելս քո՝ յայսմհետէ մինչև յաւիտեան:

Բովանդակէ այսու զամ զկեանսն՝ 'ի մտանելոյն յածննդեանն՝ պղուշանայ 'ի վիմաստուց, և յելանելն մահուամբ՝ անխուռ ելանել ... խաւարային իշխանութեանց: Դարձեալ՝ 'ի մտանելն յեգիպտոս և 'ի բաբելոն, և յելն: Այլ և՝ զմտանելն յառաքինութեան, և զելանելն 'ի մեղաց, թէ տացէ ու-

րեք

րեք սաստնութեան ոսկւոյն, մի յուսահատեսցի յարարչական և ՚ի ծննդական խնամոցն Տր: Իսկ՝ ՚ի գետն դատեթի՝ զմնալն առ սաւուղ, և զխլանելն ՚ի վերայ փղշտացւոյն՝ աւէ հոգւոյն ՚ի նմա:

Օրհնութիւն Աստիճանաց:

Դարձի աւետիս առեալ աղօթեմք զի ՚ի Բաբելոնէ, զոր՝ խօսեցաւ Երեմիայ նոյն ժամ զԿիւրոս հասեալ ընդ յաղթութեան, խնդութեամբ և պարելով Տեառն յայտնութիւն տեսեալ:

ՍԱՂՄՈՍ. ՃԻԱ

Ուրախ եղէ ես՝ այս ասելին ցիս, ՚ի տուն Տեառն երթիցուք մեք:

Ոչ փոյթ առնէին ուրախանց տան և հանգստեան, այլ տանն Տր: Ուրախ եղէ, միաւոր զժողովուրդն կոչէ՝ որ զկնի դարձին մի եղեն ընդ միով թագաւորութեամբ. այլ ասէին, երկոտասանական է, զքահանայն յեսու, և զզօրաբաբէլ թագաւորն: Իսկ՝ զասք մարգարէիցն՝ հեթանոսացն խօսէին, ծափս հարէք ամ հեթանոսք. և լուր դաւառ''. և առաքեալքն զնոյն մարգարէիցն առեալ ասէին, ուրախ լեր ամուլ՝ որ ոչ ծնանէիր. և ուրախ լերուք հեթանոսք. և դարձեալ ասեմ՝ ուրախ լերուք հաւատացեալք եբրէ զկնյս մի որ ընկալեալ զբանն. աւէ ուրախ լերուք, զի շնորհօքն յայս ունիմք տաճար տանց ձեռագործի յերկինս, և ընդ այս տաղտկամք:

Հաստատեալ կային ոտք մեր առ դրունս քո Երուսաղէմ:

Քանզի՝ շինեցան պարիսպքն, և կանգնեցան դրունքն եէմի, հրամանաւ արտաշիսի, ՚ի ձեռն նոյեմայ տակառապետի. փոխանակ նեղութեան՝ որ յառաջին աշխեմանն, յերրորդի ամ խնդութ, հաստատեալք ՚ի դրունս վերնոյն եէմի, որ է եկեղեցի Ար, որում նախ հանդիպեն հրաւիրեալքն ՚ի վերինն: Վայ՝ մինչև ցայսօր ՚ի շրջելն մեր ընդ եղբարս՝ ՚ի ձեռաշէն եկեղեցեաց դրունս՝ զայս երգեմք, զմնաւ ածելով ուխս զանձեռագործն, և ՚ի պատկերս եղբարցն զյոն մեր ողջունելով, ՚ի բաց դնելով զորամութի հովտիս ՚ի սրտից, և անուշամբն եէմի՝ զփոխածութիւն պատերազմաց, զի խաղաղութեն է ձայնս այս:

Երուսաղէմ շինեալ որպէս քաղաք. հաղորդութիւն իւր ընդ ինքեան:

Որ

Որ յայնժամ յանտառ համարեալ էր՝ փոքր բուսմամբ և մացառովք. ոչ քաղաք, երբեմն զառաջինն՝ որ 'ի Դաւթայ և 'ի Սողոմոնէ, շինի և 'ի զօրաւորելն: Այլ՝ ոչ քաղաք ամենայն՝ նշանակէ զգիւղս, որ թաղք թաղք շինեցաւ յամ երկիր. նման գոլ իմանալոյն՝ որ անդ են դաշտք և թաղք զօրացն հրեղինաց, ուր և զպակասն լնուն որդիք Ադամայ, շինեալք զուարթունք յապստամբէն: Եւ՝ բնակութիւն շուրջ, յայտ է՝ գեղք և քաղաքք, և ագարակք՝ որ 'ի գաւառսն շուրջանակի նէմի շինին՝ զենի դարձին: Իսկ՝ իմանալոյն նէմի բնակութիւն իւր Տէրն, և փառքն իւր շուրջ զնովաւ, այս է զմեօք, որ ասաց՝ կացէք յիս, և ես 'ի ձեզ:

Անդ ելին ազգք՝ ազգք Տն. վկայութիւն Իսրայէլի, խոստովան լինել անուան Տն:

Ցեղս դարձին՝ երկոտասան ցեղքն գային 'ի տօնն յեմ, և ոչ կորեալք տասն ցեղք երբեմն յառաջն: Այլ՝ հեթանոսք ևս՝ լինել կոչելով զենքեանս խոստովան լինել օրէնօք, թէ Տն են բովանդակքն: Դարձեալ՝ անդ ելին ազգ՝ ազգ Տն, զի խառնելոց է առ Տծ ընդ բնութիւս, և ազգ լինիմք Տն՝ մարմնին և անդամ'նք, երբեմն առէ մարգարէն, թէ եղեցի աունն Դաւթի երբեմն զտուն Տյ, և յայնժամ հեռաէ անդ ելանեն ազգք՝ արք, և կանայք և մանկունք, յողջոյն տնօրէնական տեղեացն, ուր եղև ազգակցութիւս այս, ծառաեալք կարօտին: Վկայութիւն Իսրայէլի, վկայելով թէ՝ առա տեսաւ Տծ մարմնով, և եղաք նոր Իէլ. ոչ յելանել անդ հրէիցն վկայ լինել թէ՝ չեն օտարացեալ Իէլացիքն: Այլ՝ անուի յիմանալեն նէմ ելանեն ազգք հողեղինաց, և հրեղինաց տարողաց, երբ ընդ սանդուխան յակոբայ, խոստովան լինել անուանն յի քի. որ եղև մեզ առաջնորդ՝ անդ ելեյն:

Անդ արկեալ էր աթոռ դատաստանի. աթոռ արկեալ 'ի տան Դաւթի:

Զի ոչ 'ի տօն գան Տմ՝ ցեղքն, նմանապէս և 'ի դատաստանն: Աթոռք արկեալ են 'ի տան Դաւթի, միաւորին սիդոնացիքն և նէմացիք, երբեմն յաւուրս Դաւթի և Քրիստոսի, և զնոյն աթոռք և սեղան սրբոյ: Այլ՝ աթոռք յեսուսայ և զօրաբաբելի: Եւ՝ 'ի վերինն նէմ՝ աթոռք առաքելոցն, զոր Տր խոստացաւ երկոտասանիցն:

Հարցէք զխաղաղութիւն Երուսաղէմի, և լիութիւն՝ որք սիրեն զքեզ:

Սիմաքոս՝ աղջունեցէք զերէմ. քանզի՝ զեօթանասուն ամն խռովութեն և աւերման զոյր համբաւն, յայտնեալ փոխացին զորյցքն յիմ երկիր՝ շինութե, և խաղաղութե, զի մնացորդն 'ի հեթանոսս՝ յօժարին գալ 'ի նա, զի ոչ միահամուռ եկին։ Դարձեալ՝ ողք սիրեն զերկնայինն երէմ, խաղաղութե կալցին ընդ իս, և անդ դիցեն զշինուածս առաքինութե, ըստ պօղոսի թէ՝ մեր առաքինութիւն յերկինս է։

Եղիցի խաղաղութիւն 'ի զօրութեան քում, և շինութիւն յաշտարակս յա_ նաւքս քո։

Աղօթէ Դաւիթ վն երէմ՝ թէ զօրաւոր և շէն կացցես, ամուր աշտարակօք։ Զօրութի՝ յն. խաղաղութի՝ հոգին սբ. ամուր աշտարակ՝ խաչն ցցեալ 'ի սիոն, և գութն հօր՝ 'ի վեր անդ ամուր աշտարակ, առ որ ասեմք աբբա հայր, և ոչ ոք կարէ յափշտակել զմեզ 'ի ձեռաց նորա, ըստ ձայնին յի։

Վասն եղբարց և ընկերաց իմոց խօսէի զխաղաղութիւն. վասն տան տն այ մերոյ խնդրեցից զբարութիւն 'ի քեզ։

Գիտեմ ասէ Դաւիթ՝ որ յայն ժամն չիցեմ ես մարմնով կենդանի, այլ՝ վասն եղբարց և ընկերաց թագաւորաց և ազգին իմոյ խօսիմ աւետիս, և վասն քո երէմ, և վն տաճարի տն. խնդրեցաք զբարութի չպակասել 'ի քէն ո՞ երէմ; Այլև՝ եղբարք Դաւթի և ընկերք՝ քրիստոնեայք են, որ օծեալ կոչին երբև զնա, թագաւորութի, քահանայութի, ազգ սբ, ժողովուրդ սեփհական. խնդրէ զբարութի անպակաս 'ի մէնջ. զի քաջ գիտէ Դաւիթ զայս, և խառնել հայցէ զինքն ասելով այլուր, յիշեա մեզ տր ընդ հաճոյս ժողովրդեան քո, և այց արա մեզ 'ի փրկութե քում։

Օրհնութիւն Աստիճանաց։
Խոստովանութիւն և խնդրէ բարեպաշտից, որք պատժեալ կային 'ի բաբելոնի՝ ասելով։

ՍԱՂՄՈՍ ՃԻԲ.

Առ քեզ տր համբարձի զաչս իմ. որ բնակեալ ես յերկինս։

Զմտացն ասէ՝ յիմ ցնորից և 'ի հոգոց պարապեալ, և 'ի մարդկանէ յուսահատեալ՝ առ քեզ միայն հայիմ. որ

թէ

Թէպէտ՝ աւերէ տաճարն զոր մեք շինեցաք, դու 'ի քո անփոփոխականդ բնակես. ոչ զի այդր բնակեմ՝ բովանդակիս, այլ զի՝ այդր առաւել սպասաւորիս 'ի հրեշտակաց, որ և 'ի հեղս և 'ի խոնարհս 'ի մարդկանէ՝ հանգչիս ես, և ոչ միայն բնակես:

[illegible]

Ո՛չ ժամանակաւ ենչ, այլ՝ զգայդ և զգերեկ. որ թէ առնու կերակուր և հանդերձ և զամ պէտս, և թէ ոչ առնու, թէ սատակէ, թէ պատռէ, թէ կապէ, թէ արձակէ, չկայ 'ի բաց. զի գինք արծաթոյ են: Որև՝ մեզ պարտ է զնոյն առնել. զի գնեալ եմք արեամբն յոյ, և ոչ եմք անձանց տեարք: Ոչ ապա աղախնոյ 'ի ձեռն տիկնոջ իւրոյ, այս առաւել է քան ծառային առ տէրն, զի կարի քնքշանօք, և մերձ կան 'ի սենեակս և յամ տեղիս զօլ տիկնայքն, և զաւր զարեն զնա, և պշնուն 'ի նմ՝ անընդհատ. զոր և մեզ պարտ է առնել մեր եկեղեցւոյ, որ դշխոյ և թագուհի է երկնից, զխորհրդով նր փարիլ պարտ է, և կամոնաւ նորա՝ զարդուք զհաւատոյն զարդարել գործով. զի նա ինքն է եկեղեցի ամենակալ:

[illegible]

Ո՛չ երբէ զպարտս ինչ պահանջեմք, այլ՝ ողորմութիւն հայցեմք իբր զտառապեալ:

[illegible]

Կրկներորդն՝ զշնորհաւանդ պաղատանս ցուցանէ. զի բա զում լցաք արհամարհանօք, բարեկացուցն՝ եօթանասուն ամ, և սատանայի միշտ, որ առէրն ճէր է տծն ձեր:

[illegible]

Քան թէ անարգ ծառայութիւն՝ մարմնոյ աւելի ցաւս հասուցանէ հոգւոյն, որ դառն է քան զամ արհամարհելին յամբարտաւանից, յորմէ այրին աղքատք և հառաչեն:

Օրհնութիւն Աստիճանաց։

Յետ դարձին շրջմոլիկաց ազգին զոգւոյն 'ի հրաշափառն ազատեալ փրկչին 'ի վերայ հրէիցն, որք և ասեն յոգւոյն 'ի մարտնչելիցն. այս ինքն լուրբ ցեն ասելով, թէ հասանելովինք 'ի Բէլփաւն, որք և ասեն։

ՍԱՂՄՈՍ. ՃԻԳ.

Եթէ ոչ Տր էր ընդ մեզ, ասասցէ Իէլ, եթէ ոչ Տր էր ընդ մեզ։

Խրատ տայ կանուխ դաւիթ հնարս ունել փրկողին, զոր նախ քան զփորձ առնուլն՝ յոլովք յուսահատեին, իբրև թողելոց 'ի Տնէ. զոր կրկնեն հիացմամբ՝ զեթէ ոչ Տր էր։

Ընդ յառնել մարդկան 'ի վե մեր. կենդանւոյն կլանէին զմեզ։

Իբր գազանք հմակերք կամէին կլանել կենդանւոյն. այլև՝ չարագոյն քան զգազանս մարդիկ խորհրդով և հնարիւք՝ զմտադրութիւն մեր, և զմտադրութեան կամէին կլանել. զի այն է կենդանութիւն զոր աւարժելին բառնալ։ Այլև՝ դևք յառնեն 'ի վր մեր ուսմամբ։ Եթէ ոչ Տր էր ընդ մեզ, որ ասաց Ես ձեզ եմ մինչև 'ի կատարած աշխի՝ և ետու ձեզ իշխանութիւն կոխել զօձս և զկարիճս, եթէ ոչինչ ծուլանայցեմք՝ ոչինչ կարեն առնել։

'Ի բարկանալ սրտմտութեան նց 'ի վերայ մեր. ապա և ջուրք ուրեմն ըն-կղմէին զմեզ։

Զբազմութիւն ջուրց նմանեցուցանէ, մահ և գերեզ-ման լինելին մեզ. անթաղ մնային դիակունք մեր։

Ընդ ուղխս անցին անձինք մեր. անցին անձինք մեր՝ ընդ ուղխս ան-դընդոց։

Ուղխաջուրս կոչէ՝ զի յանկարծ հասաքեցան և յարին 'ի վր. և Տր զփորձութիւն 'ի յուղխաջուրս առակէ, որ չկարէ կործանել զշինուած իմաստնոյն. այլ թէպէտ՝ ան-դադար գայ ուղխն՝ դիւրաւ անցանէ, և չյեղկարէ մարդ-կանց և դիւաց նա, զի յանցաւոր կեանքս է։

Օրհնեալ է Տր. որ ոչ ետ զմեզ յորս ատամանց նց։

Զյոլովութիւն ջուրց և զչարութիւն թշնամեացն՝ գազանաց ատամանց նմանեցուցանէ։

Ան

Անձինք մեր ապրեցան որպէս ճնճղուկ յորոգայթէ որսողաց։

Այսմ ձայնս նմանեցուցանէ զբնութիւնս. մի՝ զի ոտկաւոր եմք, և միւս եւս՝ զի ունիմք թեւս երկու, զհաւատս և ըզգործս. դիւրաւ զերծանիմք. որոց թեւոց անուն կոչէ եւագրիոս՝ գիտնական և արդիւնական։ Այլև՝ որպ զնոյն տալ ըեցաք, որ եղև ճնճղուկ միայն 'ի տանիս։

Որոգայթն խզեցաւ, և մեք ապրեցաք։

Բազմութիւն զօրացն՝ որ պատեցին զնէմ, որովք խոր- եանց 'ի միմեանց կոտորեցան նք, և մեք 'ի բազմօրինակ որո- գայթից թշնամեաց ապրեցաք, որ դնէ յամ՚ ուրեք. իբրև պետրոսի ասէր տրն, սիմոն սիմոն ահա սատանայ խնդրեաց խարբալել զձեզ իբրև զցորեան, այլ ես հոգացայ՝ զի մի՛ պա կասեսցի հաւատք քո։ Վձ՝ ասէ։

Օգնութիւն մեր յանուն տն, որ արար զերկինս և զերկիր։

Եհէմ ասէ յանուանէ տն. իբրև ասէր Դաւիթ ցԳո- ղիաթ՝ դու գաս 'ի վերայ իմ սրով և նիզակաւ, և ես ան- ուամբ տն՝ որ ձակատ է ինէն. նոյնպէս և յայնմ ժամանա- կի հրեայքն՝ անդէն և անօգնական՝ զերծեալք 'ի գերութէ՝ անուամբ տն օգնեալք եղեն, և փրկեալք։ Եւ մեք ան- ուամբն յի քի շիջուցանեմք զամ՚ նետս մուխս չարին, և զորոգայթս մանրեմք, շահեալք յամ՚ անուանց նր, 'ի լաւ- ոյն՝ 'ի կենացն, և յայլոցն։

Օրհնութիւն Աստուածոյ։
Զանշարժութիւն յասոյն՝ յայս առնէ յոյսն առաջնոյն, զոր պարտ էր առնել անշարժութիւն 'ի տէրն՝ առնլով։

ՍԱՂՄՈՍ. ՃԻԴ.

Որ յուսայ 'ի տր, իբրև լեառն սիոն, մի՛ սասանեսցի յաւիտեան՝ որ բնակեալն է յէմ։

Ո՛չ այլ լերին նմանեցուցանէ զյուսացօղն, այլ՝ սիոնի, որ բազում կրեաց զկխտս, և աւեր, և այլ մերպատիս չեղե- ցաւ։ Լերին նման եղեն զանիէլ և երեք մանկունքն, թէ- պէտ գերեցան առեալ՝ անսասան մնացին յանծպաշտութէ, իբր զսիոն լեառն՝ որ յաւերժանն եհէմ անշարժ եկաց որպ և

էրն

էրն, եւ կայ նոյնպէս՝ ոչ յիշեմ բնակեալ։ Այլ՝ վերին սիոնի նմանել պարտին արդարքն, ուր ոչ է ապականութիւն։

Լերինք շուրջ են զնովաւ․ Տէր շուրջ է զժողովրդեամբ իւրով՝ յայսմհետէ մինչեւ յաւիտեան։

Յայտ է զինչ մեծ զգալիքս, նոյնպէս եւ Տէրն խնամածն որք առ նա ժողովին։ Այլ՝ զվերին սիոնին հրեշտակք, որ լերինք են հրեղէնք, եւ Տէր զնոսա բովանդակեալ է, յայսմհետէ ժամանակաց մինչեւ յաւիտեան։

Ո՛չ թողու Տէր զգաւազան մեղաւորաց ՚ի վիճակս արդարոց․ եւ արդարք մի՛ ձգեսցեն զձեռս իւրեանց յանօրէնութիւն։

Զթագաւորս հեթանոսաց ասէ, ըստ այնմ՝ վայ ասո բռնաւորութեան, գաւազան ցասման իմոյ ՚ի ձեռս նց, զոր յաղթօտար տաճարեցից․ այլ՝ չթողուլն՝ զի յերկարել ասէ․ բայց արդարք մի՛ ձգեսցեն զձեռս իւրեանց յանօրէնութիւն, զի ոչ վայելէ, եւ ոչ սակաւ ինչ գործ անօրէնութեան՝ արդարոյ, երբեք ոչ է միաբանութիւն լուսոյ ընդ խաւարի։

Բարի արա Տէր բարեաց․ եւ այնոցիկ, որք ուղիղ են սրտիւ։

Զի արդարադատ է Տէրն, ընտրութեամբ տանէ զբարին բարեաց՝ որոց վայելէ, ըստ ասելոյն՝ որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ։ Եւ այնոցիկ որք ուղիղ են սրտիւք, տանէ զբարիս եւ ուղղասրտից ՚ի հաւատս՝ թէ գործոյն չեն կարող․ եթէ զկատարումն միւսոր հիմանունն, որ ուղիղ սրտիւ տանէր վշտացն։

Իսկ զխոտորեալսն յաղթահարութիւնս, տարցի Տէր ընդ այնոսիկ որք գործեն զանօրէնութիւն․ խաղաղութիւն ՚ի վերայ Իսրայէլի։

Որ փոխանակ բարւոյ առնելոյ ընկերաց յանիրաւէ եւ՝ թիւրեալ յօրինաց, տանի զնս Տէր ընդ այնոսիկ՝ որ անօրէնք են ՚ի բնէ, եւ գործքն չար, ՚ի կորուստ եւ յապականութիւն․ եթէ յուդայ՝ որ թիւրեցաւ յառաքելական պատուոյն, յանիրաւեալ զերեսուն արծաթին՝ ընդ սատանայի եւ ընդ տիրասպանսն տարեալ լինի ՚ի տանջանս․ իսկ՝ օրհնապաշտքն որք յար յօրէնս նր հային եւ յած, միշտ ՚ի խաղաղութեան են․ եթէ Տէրն զկնի յարութեան ասէր, խաղաղութիւն ընդ ձեզ․ եւ պօղոս խաղաղութիւն ՚ի քս Յս լիցի ձեզ։

Օրհնութիւնք Աստիճանաց:
[illegible]

ՍԱՂՄՈՍ. ՃԻԵ:



ԴԱՐՁՈՒՑԱՆԵԼ ՏԵԱՌՆ ԶԳ[illegible]
գերութիւն Սիովնի, եղաք մեք մխիթարեալք:

Զոր այլ թարգմանքն եղիցուք ասեն, զի դեռ լինելոց էր, սակայն 'ի գիրս մի է լեալն, և լինելոցն: Այլև՝ առաջին արդարոյն պաղատանքն է առ Տր, դարձուցանել զգերեալսն 'ի սատանայէ, իբրև զանառակ որդին. զի լիցի նց մխիթարութիւն, և ոչ իբրև զերեցորդւոյն բարկութիւն

Յայնժամ լցաւ բերանք մեր խնդութեամբ, և լեզուք մեր ցնծութեամբ:

Խնդութեամբ՝ փոխանակ ողբոցն. և լեզուք մեր՝ փոխանակ տրտնջմանն՝ մինչ գերի երթայաք, 'ի դառնալն լնումք զբերանս և զլեզուս ցնծութեամբ, օրհնել զՏր գոհութեամբ:

Յայնժամ ասասցեն 'ի հեթանոսս, մեծ արար Տր զառնել իւր ընդ նոսա. մեծ արար Տր զառնել իւր ընդ մեզ. և մեք եղաք բերկրեալք:

Եւ այս առաւել էր պատճառ խնդութեան, զի գիտացեն տիեզերք զսէրն Այ առ Իէլ, և զզօրութիւն նր. և նոքա թէ հիանան, մեք զի՞արդ ոչ գոհանամք, զի մեր են բարիքն. բայց՝ ոչ ասաց փրկեաց, այլ՝ մեծ արար զառնելիքն, հուշակաւոր և անուանի. և մեք եղաք փրկեալք, հեթանոսաց հիանալ, և մեզ բերկրել: Այսպէս և դառնալն մեր առ հայր, դիւաց՝ ահ և զարմացումն, և մեզ մխիթարիլ 'ի ձայնէն հօր, և առաջի հրեշտակաց ուրախութիւն, իբր 'ի գալ անառակին:

Դարձո՛ Տր զգերութիւնս մեր՝ որպ զհեղեղս 'ի հարաւոյ. այս որք սերմանեն արտասուօք, ցնծութեամբ հնձեսցեն:

Առաջինքն ասեն վն յետնոցն. որպ զուղխս 'ի հարաւոյ, զի նէմ հարաւակողմ է երկրի. որպ հողմով հարաւոյ հալեալ ձիւն և սառն, ուղխք ջուրց յառնեն. նոյնպ՝ աղմամբ հոգւոյ շնչման՝ գայ գերին յամ կողմանց իբրև զուղխաձև: Այլև՝ 'ի կակղանալ սրտի սաստուցեալ հեթանոսաց,

վերա

վերանան ուղխաձև յամ տեսակս բարեաց, և զարմացումն տեսողաց հոգւոցն հրեշտակաց, որպ ասէ՝ ով են սոքա՝ որ իբրև զամպս թռուցեալ, և իբրև զաղաւնիս ձագուխառն երամովին գան առ իս. ուր վարելին արտասուօք հերկե-լով զոգիս 'ի գնայուն գերի, ասելով զՄեղայն՝ ցնծութբ հըն-ձեսցեն. և թէ երբ եղև այս՝ յայտ առնէ:

Երթալով երթային՝ և լային, արկանէին զսերմանիս իւրեանց:

Զի մեղաց սերմանքն արար նմ զայն զհունձքն յար-մար սերմանցն:

Գալով եկեսցեն՝ ցնծութեամբ, բարձեալ զորայս իւրեանց:

Քանզի՝ գերութիւն նմ՝ առաջին մեղացն հունձք էր, և դարձին որայքն՝ զղջման արտասուքն. վսն՝ կրկնելով ասէ երթալով երթային, երբ հարկեալ 'ի գերչացն. և գալով գային, իբրև շարժեալք յոյժ և 'ի խնդութենէ կրեցն: Դարձ-եալ՝ առաքեալքն լալով առին 'ի Տէնէ զսերմն քարոզութեան, զի 'ի մէջ գայլոց ասաց գնալ. իսկ՝ 'ի դառնալն խնդութբ գային բարձեալ զորայսն՝ որ էր փրկութիւն Տի. ըստ այնմ թէ՝ դարձան եօթանասունքն խնդութբ և ասեն՝ Տր և դևք հնազանդեին մեզ յանուն քո: Այլ՝ ամ որ ախորժէ, և ելանէ 'ի հոլովս տրտմութեան՝ լալով, և դժուար է, զի նեղ է ճանապարհն. և այնպէս զուգեաց Տրն, զոր թէ չէր՝ ոչ ախորժէին ելանել. որպ և որդիքն Իսրլի՝ թէ ոչ նեղեալ լինէին յեգիպտացւոցն. և զի՝ ապերախտք էին, ոչ խնդա-ցին, այլ՝ կամեցան անդրէն դառնալ, որոց ոչ նմանի դար-ձըն 'ի բաբելոնէ, այլ՝ ցնծութբ գան. որպ ապաշխարողացն արտասուքն՝ խնդութիւն առնէ յերկինս: Արդ՝ մի խնդրես-ցուք ընդարձակութիւն և փափկութիւն աստէն, զի մի բաժա-նեսցուք ընդ սէր աշխարհիս:

Օրհնութիւն Աստուծոյ:

Դարձուցելոյդ գերեաց՝ ոչ արար սոյն ազգաց յանուանէ, ոչ հարցէին շինել զարմացն զխրատաստան ամ, մինչև էին զօրաւորեալք. և զմեզ առն հաստա-տեաց. զի Տր ընդ մեզ էր, որպ և ասէ:

ՍԱՂՄՈՍ. ՃԻԶ:

Եթէ ոչ Տր շինէ զտուն, 'ի նանիր վաստակեն շինողք նր:
Եթէ ոչ Տր պահէ զքաղաք, ընդունայն տքնին պահապանք նր:

Քան

Քանզի՝ զոր 'ի տուընջեան վաստակէին՝ գիշերի կործանէին թշնամիքն 'ի չպահելն տն:

'Ի նանիր է ձեզ յառնել կանխաւ · արդ արիք մինչև էք ննջեցեալ, որք ուտէք զհաց ցաւոց:

Մինչև էին եկեալ զօրաբաբէլ և յեսու · արդ՝ արիք մինչև էք ննջեցեալք, այսինքն՝ հանգեալք · զի մին ձեռն 'ի գործ, և միւսն 'ի սուր և յաղեղն · կամ մինչև՝ էք ննջեցեալք զքուն մահու: Դարձեալ՝ զկործանեալ ադամայ բնութիւն եկին շինել մարգարէքն, և արդարք, և ոչ կարացին · մինչև եկն ստեղծօղն ադամայ, և եղև երկրորդ ադամ: Եւ հաց ցաւոց ուտէին նախ՝ զի տարերքս որ դայեակ և դաստիարակք էին մարդկան, չէին հաց, ծեծէին զնս անբերրութբ, խորշակօք, և կարկտիւ, և մարախաւ, մինչև եկն հացն իջեալ յերկնից: Դարձեալ՝ բանական հացն՝ յարտաքնոցն ուսմանէ՝ ցաւեցուցանէր խղճի միտօք, զի ոչ կատարեալ ունէր յինքեան զճշմարիտ ածպաշտութիւն, մինչև եկն որ ասաց, ես եմ յարութիւն և կեանք, և հաց, և ջուր, և հովիւ · ուստի՝ ասէ, արդ արիք 'ի լսել զձայն յարութեն:

'Ի ժամանակի, ած տացէ քուն սիրելեաց իւրոց · ժառանգութիւն տն՝ որդիք են · որոց վարձք իւր են, այն է պտուղ որովայնի իւրոյ:

Քուն՝ զհանգիստն ասէ, զի պատերազմ չտայր նոցա հանգչել և ոչ քնով ևս · ժառանգութի խոստանայ նց՝ բարեմանկութի, և ասէ թէ՝ տն ժառանգութի է յակոբ: Այլ՝ զլաւս որդիս իւր կոչէ տրն, չասնէ անպտուղ, և ամուլ, զի որ վաստակի 'ի պատուիրանս տյ՝ վարձ զայն տայ տրն զպտուղ որովայնի, զոր խոստացաւ օրինապահացն ասելով, մի եղիցի 'ի քեզ անսերմն, և ամուլ: Այլ՝ առաքինիք՝ որ են արք կրօնաւորք և կուսանք, ժառանգութի տն են, և վարձ պտուղ որովայնի հոգւոյ իւրեանց · յորժամ գետք յորովայնէ նց՝ ջրոյն կենդանութե բղխեսցեն՝ ուսմունք և խրատք, որովք ածեն բազում որդիս 'ի փառս:

Որպէս նետք 'ի ձեռս հզօրի · այնպէս են և որդիքն թօթափելոց:

Յորժամ թափին 'ի մատանց հզօրաց նետք · սիմաքոս՝ որդիք մանկութե քաջ լինին, որդիքն 'ի ձեռացն տն ուժաւեալ վնասեն զթշնամին:

Եւ

Երանի՛, որ լցցէ զցանկութիւնս իւր 'ի նոցանէ. Ոչ ամաչեսցեն՝ յորժամ խօսեսցին թշնամիս նոցա ընդ նոսա առ դրունս ։

Ճշմարտութեան հայցելոյն ցանկութիւն զշինութիւն պարսպացըն եկեղի, և փակելոյ դրանցն ընդդէմ թշնամեացն, յորժամ առանց ամօթոյ մեծաւ համարձակութեամբ արգելուն զթշնամեացն զդիտաւորսն՝ արտաքոյ դրանց քաղաքին, և առնեն պատասխանի ։ Դարձեալ՝ ցանկալի է և այս, զի մեծ քաղաքս այս Աստուծոյ՝ բնութիւնս մեր պարսպեալ լիցի երկիւղիւն Աստուծոյ, և դրունք զգայարանաց փակեալ պատուիրանօք Աստուծոյ, յորմէ արգելեալք լինին դեսպանք, և լուռք թշնամեաց դիմացն՝ բանիւ պատասխանի առնել 'ի գրոց, և դարձուցանել, և ոչինչ գործել ամօթալից, իբր տէրն, և տէրք. այլ՝ և նախ քան զայս՝ չէք Աստուծոյ քաղաք պատուհական։

Օրհնութիւն Աստիճանաց։

Յայսմ սաղմոսի ցուցանէ, որչափ բարի է հանդերձեալ յաւուրն երկնչողին յԱստուծոյ, որպէս և ասէ ։

ՍԱՂՄՈՍ ՃԻԷ.

Երանի՛ ամենեցուն՝ որք երկնչին 'ի Տեառնէ, և գնան 'ի ճանապարհս նորա ։

Ո՛չ երանէ զզաւակն աբրահամու, և զսերմն իսրայէլի, այլ՝ որպէս պետրոս ասէ, ճշմարտապէս հասեալ եմ 'ի միտ, զի յամենայն ազգս՝ որ երկնչին 'ի նմանէ, և պահեն զպատուիրանս նորա, ընդունելի են նմա. և գնան 'ի ճանապարհս նորա, զի երկնչելն չէ բաւական յերանութիւն. զի ոչ որ ասէ ցիս Տէր Տէր, այլ՝ որ առնէ զկամս հօր իմոյ որ յերկինս է ։

Զվաստակս պտղոց քոց կերիցես. երանի՛ է քեզ, և բարի եղիցի ։

Սիմաքոս՝ զերկս ձեռաց քոց կերիցես. 'ի քո սերմանեալ բարեացն կթես պտուղս, և ոչ յօտարաց 'ի զրկանաց և յափշտակութենէ. և զոր յաղքատս սերմանես, զի որ սերմանէ առատութեամբ զիւրն, առատութեամբ և հնձեսցէ ։ Այլ՝ զայն ևս ասէ թէ՝ ոչ շնորհօք ևեթ, այլ՝ վաստակօք լիցիս երանելի. և բարի եղիցի, այսինքն՝ մարմնականն հոգևոր եղիցի ։ Այլ՝ վաստակօք ուսմամբ՝ որ կերակուր է մտացն, կարէ երանելի առնել առաւել քան զմարգարէսն՝ որ շնորհօք առին ։ Այլ՝ բարի թող լինի ուսումնասիրի հոգւոյն՝ բարի շնորհօք՝ պտուղ բարի գանձեալ 'ի դիւրս, և յառաջինի հոգւոյս սրբոց նորատղայց, և յԱստուծոյ երկիւղածաց ։

Կին քո որպէս այգի վայելչութեան յանկիւնս տան քո. որդիք քո որպէս նորատունկ ձիթենեաց՝ շուրջ զսեղանով քո։

Թէպէտ զայս ասաց թէ՝ բարի եղիցի, որք մարմնաւոր բարեաց սիրօղք էին, որով կաշառէ մարգարէս։ Կին քո ոչ այգի, և թէ՝ այսպէս օրհնեսցի ամ մարդ, տեսցես դու զբարութիւնս եմի, տեսցես դու զորդիս որդւոց քոց. այս ամ բարիք՝ լինին քեզ ասէ եթէ դառնաս յեզմ, և արդար լինիցիս. զի է և այս՝ տեսակ բարւոյ, և 'ի Տնէ յաջողեալ. սակայն՝ յոլով արդարք մեռանին անորդի. որև՝ այլ մեծագոյն հատուցման լինին արժանաւորք։ Կին քո՛, վկայէ այսու և զկանանց բարեպաշտութիւն, և թէ՝ որդիքն ողջախոհ և ծառայէր լինին, ձիթենեաց նմանին պտղաբերութեբն. որպէս 'ի յիսուն և մին սաղմոսին ասէ, ես որպէս ձիթենի պտղալից. շուրջ զսեղանով, որ է հեշտալի յաչս ծնողացն։ Դարձեալ՝ կին եկեղեցի, զի չասաց թէ՝ կին քո այգի, այլ իբրև զայգի, այսինքն՝ նման քի որ ասաց՝ ես եմ այգի, որ է որթ ճշմարիտ. որպէս պօղոս ասէր, նմանօղ ինձ եղերո՛ւք, իբրև ես քի. և պտուղ է նմանիլ հարսինն գեղոյ՝ փեսային յի։ Որդիք քո՛, որք մկրտութեբն ծնանին՝ որդիք լուսոյ լինին. շուրջ զսեղանով քով, լցեալ հրապարակք քո՝ մանկտով և աղջկամբք, և սաղմոսարան 'ի ձեռս նց։ Այլև՝ երկու են սեղանք յեկեղեցիս, ուսման՝ ուր աշխարհականքն ժողովին ընդ եկեղեցականսն. և ուր տրն պատարագի՝ քահանայքն, և սարկաւագունքն սպասաւորեն։

Այսպէս օրհնեսցի ամենայն մարդ, որ երկնչի 'ի Տեառնէ. օրհնեսցէ զքեզ Տէր 'ի Սիովնէ։

Եւ տեսցես դու զբարութիւնս յերուսաղեմի՝ զամ աւուրս կենաց քոց։

Զի ամ՝ վարուց և բարուց է դատաւոր, և պարգևատու, և ո՛չ այսմ անուան ազգի. կամ այն. օրհնեսցէ զքեզ տր, անդ տեսանելով զհրեշտակս 'ի սիոն, և զմեզ յեկեղեցի, ամ հոգևոր օրհնութբ յերկնաւորս 'ի քս. և տեսցես բզ բարութի, նոքա՝ շինութի և լուսութի մարմնական յեհմ նաքին, և մեք 'ի վերինն՝ զոր աստ պանձեմք, զառաքինութե զհատուցումն՝ զոր ակն ո՛չ ետես։

Տեսցես դու զորդիս որդւոց քոց. խաղաղութիւն 'ի վերայ Իսրայէլի։

Մարմնաւորացն հրէից. և մեք զհոգևորսն, իբրև առաքելքն տեսին զորդիս աշակերտացն իւրեանց. խաղա-

ղու

ղութի ՚ի վերայ ինքեան, զոր պօղոս տանի ՚ի վեր ինքեան որք սփիհականք են յամ հայելով միշտ:

Օրհնութիւն Աստիճանաց:
Յետ դարձին յարեան ՚ի վերայ հրէից շրջակայ ազգքն, և անարգէին ապա-կէսցեալք. զոր ՚ի յիշէ արժէալ առ Տեառն:

ՍԱՂՄՈՍ. ՃԻԸ:

Բազում անգամ մարտեան ընդ իս ՚ի մանկութենէ իմմէ, ասասցէ Իսրայէլ:
Բազում անգամ մարտեան ընդ իս ՚ի մանկութենէ իմմէ, և ինձ ոչ յաղթեցին:

Բազում, յԵլիցն յԵգիպտոսէ. և թէպէտ շատ յաղթեցին, ոչ կարացին սպառել, և չկարեն ՚ի փառաց և ՚ի պատուոյ ընկենուլ, ՚ի թագաւորութենէ, ՚ի քահանայութենէ, մինչև գայ Քս, և լրբին ՚ի նա կատարմամբ:

Զթիկամբ իմ հարկին մեղաւորք. ընդ երկար արարին զանօրէնութիւնս իւրեանց:

Սփոփանս ՚ի վր մկանաց իմոց տաշեցին: Թիկնադիտան՝ լայնեցին. որ յայտնի առնէ զյերկարելն, որ է լայնելն. և տաշելն զհամեալն ՚ի նոյն բարեացն մարմնականաց: Այլ՝ զթիկունս ասելն՝ զգալով յախշտակելն, որ ՚ի թիկանց եկեալ, և ոչ յերեսաց կռուէ. զոր առն յանդգնեցան՝ ոչ հայելով յերեսս մծուլթեն, այնմ՝ որ եա կամաւ զթիկունս ՚ի հարուածս, և զծնօտս յապտակս, որ մարգարէն ասաց: Ընդ երկար արարին զանօրէնութիւս իւրեանց, եգիպտացիքն տանջելով զինքն երկուհարիւր ամ, և բաբելացիքն՝ եօթանասուն ամ: Այլև՝ հրէայքն յարևնս մարգարէիցն խառնելով զսն ապանումն՝ կարի յերկարեցին զանօրէնութիւս: Այլև՝ հեթանոսք բազմաց արարին տանջանս սրբոցն, իբր մնկաքայեց նոյն նախ, և յետոյ՝ քրիստոսի վկայիցն, կուռս և չարչարանս թիկանց՝ անձնցուցանել զմեղս իւրեանց:

Տր արդար է, և խորտակէ զգլուխ մեղաւորաց:
Ամաչեսցեն և յետս դարձցին ամենեքեան՝ որք ատեն զՍիոն:

Այլ թարգմանքն՝ զվիզս և զվզզանոցս մեղաւորաց ասեն արդար դատաւոր է Տրն, հատուցանէ կտրելով զվիզս թագաւորաց՝ որք են զօրք, որք բարձրակելեն իբրև զգլուխս՝ զթագաւորսն. իբր զօրք սեննքերիմայ խորտակեցան, և գլուխն

գլուխն 'ի տան կաց ևրոց։ Աստղին ասէ, որ խորտակէ զստա մեղաւորաց. մեղաւորք դևք, և ասոք բուսեալք 'ի նմ հեթանոսք. նախ զստա, և ապա զդևսն առաքէ 'ի հուրն. զի նախ յառնեն ազգ յազգի վը և թագաւորք 'ի թագաւորութն վը, սովք և սրածութիւք, և սպաւին. և այսպս խորտակին վերջք և ստոք մեղաւորաց։ Ամաչեսցեն ոյք ասելուք եկլն 'ի վը ենժի, և ոյք ասեն զեկեղեցի. հալածիչ թագաւորքն յետս դարձան ամօթով. այլև՝ ոյք ասեն զառաքենութիւն՝ որ տանի 'ի վերլինն սիոն։

Եղիցին նոքա որպէս խոտ տանեաց. որ մինչչև 'ի բաղուան ելեալ չորացաւ։

Մարդոյ ոպ խոտոյ են աւուրք, որ զդիւրանցութիւն յայտ առնէ. այլ նոքա կրկին ունին զվճիռն առաժամայն կորըստեան. զի խոտ են, և իբրև զամենեաց, ոյք 'ի պատրստին բուսանին 'ի տանիս, և ոչ 'ի կողմանս հիւսիսոյ, զի նք անդ չորացան 'ի բարկութն այ, մինչ չեկեալ էր օրհասն նյ։

Որով ոչ ելից զձեռն իւր հնձօղն, և ոչ զգիրկս իւր՝ որ զորայն ժողովէր։
Ոչ ասացին անցաւորքն՝ [illegible], թէ օրհնութիւն տն ընդ ձեզ. և օրհնեցաք զձեզ յանուն տն։

Սովորութի է այս, յորժամ տեսանեն վարսագեղեալ զարտորայսն՝ քաջահասկ, և առողջահատ, անուանեն տն օրհնել զվաստակաւորս. բարի է վաստակել զայդպիսիսդ. օրհնեալ էք դուք 'ի տնէ։ Այլև՝ հնձօղք հրեշտակք են ասաց տր, որք արդ 'ի պահանջել զոգիս արդարոյն՝ յսուն ըզ բուսն և զգիրկս ևրեանց բարի գործովք նց, զոր ժողովեալ տանին նոքերս երկնաւոր թագաւորին։ Նոյնպէս՝ և 'ի կատարածի աշխարհիս՝ յայ առեալ զբարիս և զպսակն յաղթութե՝ լի գրկօք յուժ լաւացն, և զբուսն սակաւաւոր արդարոցն, և ընդ այնպիսի ուղիս անցեալքն՝ հրեշտակք և արդարք երանութք օրհնեն զնա 'ի փառս այ հօր։ Իսկ՝ անարժան և խորշակաւոր, և փտտթառամ, և անօսրահող ծղօտին և խոզանին՝ ոչ լինին այսպիսիքս. որք կամ ոչ առին զանուն տն՝ քրիստոնէութե, և կամ առին, և ոչ զնացին արժանաւոր կոչմանն։

Օրհնութիւնք Աստիճանաց։
[illegible]

ՍԱՂ.

ՍԱՂՄՈՍ ՃԺԹ.

'Ի խորոց հոգւոց ասա ընդ Դաւթի՝ Տէր՝ Տէր՝ լուր ձայնի իմում։

Այսինքն՝ ոչ լեզուաւ, և ոչ միայն 'ի միտս շրթամբք, այլ 'ի խորոց խորհրդոց, լի յուսով. և սրտի յօժարութե. այլ ոչ այնպէս՝ որ ասէ, մերձ ես դու 'ի շրթունս նց, և հեռի յե երիկամանց նց. և ինքն իսկ վկայէ, ժողովուրդս այս շրթամբք մերձ է առ իս, և սիրտք նոցա հեռացեալ մեկուսի են յինէն, զուր պաշտեն զիս։ Վասն որոյ կրկնելով զՏէրն՝ վստահութե ասէ՝ լուր ձայնի իմում. ձայնս և եթ է իմ ասէ, բանս քո է, և Տմ բարի կամաց։

Եղիցին ականջք քո 'ի լուր ձայնի աղօթից իմոց։

Անմարմին է Տծ, և ոչ բաժանելին նմա զգայարանք. այլ որով զօրութե լսէ, և տեսանէ, ակն և ականջ կոչեմք ըստ մերոյ օրինակի. և լինի այս 'ի խոնարհեցուցանելն. ոպ այլուր աղաչէ՝ զի լի է ականջ նր՝ 'ի քաղցրաձայնութենէ մաքուր բնութեց լուսեղինացն, զիջանել աղերսեմք զի մերս ակարութե. և կամ զի՝ ասէ իմաստունն՝ երկիր խոր, երկինք բարձր, Տմ երկիր ասէ՝ կարդայ ընդ իս. իբր անդամք Տմ բերանով միով, և դու լուր միջնորդօք ականջաց քոց հրեշտակաց բարեխօսութե. զի ականջքն վերադոյն են քան զբերանն, որ են հրեշտակք՝ քան զմարդիկ։

Թէ զանօրէնութիւնս սպասես Տէր՝ Տէր, իսկ ո՞ կարէ կալ առաջի քո. զի 'ի քէն է քաւութիւն.

Որ ասացեր՝ մեղքն ձեր որոշեն 'ի մէջ իմ և 'ի մէջ ձեր, և եթէ յայդ հայիս դատաստանաւ՝ ո՞ կարէ գալ և կալ անդամ առաջի քո, և տալ համար, թող թէ արժանաւոր երևել բարւոյ, և գտանել արդար. զի 'ի քէն է քաւութիւն զոր մաքսաւորն աղերսէր, Տծ քաւեա՛ զիս զմեղաւորս. Բազմապատիկ եղաք մեղօք մեկնակ բնութես մեր. դու մի՛ առներ զպատկերս քո զուտ և յստակ՝ բազմախառն, զի 'ի քէն կարելի է. զի քա՛ւն՝ մի՛ առի։

Վասն անուան քո համբերեցի Տէր. համբերեաց անձն իմ բանի քում. յուսացաւ անձն իմ 'ի Տէր.

Անուն քո ողորմած է, գթած, երկայնամիտ. երբ ա-սացեր 'ի գնելն զմովսէս՝ 'ի ծերպ վիմին. և բանիւ ասացեր եօթանասուն ամ կալ լինձ գերի. այն անուն քո, և այն խոստումն բանին. և ժամանակս եօթանասուն ամաց, և յի-նէն այլ ինչ, քան թէ՝ համբերութ՛ն չարաչար կրեց գեր-չաց, զոր միայն ունիմ զնել առաջի քո, այլև՝ զկշյան ան-տեսանելի, որ է ակն հաւատոյն, և առաջին նուէր, զոր ե-նոյս մատոյց. զոր և ասէ, յուսացաւ անձն իմ 'ի Տր. և որ յուսայ՝ ոչ ամաչէ յաւիտեան:

'Ի պահէ առաւօտու՝ մինչև ցերեկոյ. 'ի պահէ առաւօտու՝ յուսասցէ Իէլ 'ի Տր:

Յելից յեգիպտոսէ՝ մինչև ցերեկոյ յիջանելն մեր 'ի բաբելոն. 'ի պահէ առաւօտու, յելանելոյն մեր 'ի բաբելոնէ յուսացաւ Իէլ, թէ որ փրկեաց յեգիպտոսէ, հանէ և 'ի բաբելոնէ, և այլ ոչ մնամք երեկոյի, այլ յուսով սպասեմք եր-րորդ առաւօտուն: Յայսմհետէ մինչև յաւիտեան, որ զկնի մահուն՝ յերրորդում առաւօտուն՝ երբև զառաւօտ պատրաս-տական գտեալ եղև Տրն:

'Ի Տնէ է ողորմութիւն բազում. 'ի նմանէ է փրկութիւն. և նա փրկեսցէ զԻէլ յամ նեղութեանց նր:

Աշխարհ ողորմութբ շինեցաւ, և յետ ջրհեղեղին վերըս-տին նորոգեցաւ, և իէլ ողորմութբ փրկեցաւ երիցս անգամ. և այսօրինակ գրաւորականք են անպատումն և անճառ ողորմու-թեն, զոր բազում կոչէ, տալ զմիածին որդին 'ի մահ, վասն անառակեալ բնութես, զի առաքելոյ՝ ուր առաւել եղեն մեղքն՝ առաւելան շնորհքն, և բացան անդունդք գթութեն Տյ, և ոչ չափի, և ոչ կշռի, և ոչ է թուով անկանի. 'ի մեղաց՝ կամ 'ի խորհրդոց, կամ 'ի բանից: Վասնզի փրկութիւն մեր յԱյ 'ի ծոցոյ և 'ի բնութէ նր է, որ փրկեաց զնոսա իէլ յամ նեղութեց և 'ի յաւիտենից մահուանէ, և 'ի դիւաց, և յապականութէ և 'ի դժոխոց, և 'ի գեհենէ հրոյն, և 'ի հոգւոց և 'ի ցաւոց, և 'ի տրտմութեց, 'ի բնութիւն իւր խառնելով:

Օրհնութիւն Աստիճանաց:

Զխոնարհութիւն սրտին յայտ առնէ ասելովն:

ՍԱՂՄՈՍ ՃԼ:

Տր ոչ հպարտացաւ սիրտ իմ. և ոչ ամբարձան աչք իմ:

Դանիէլ՝ և երեք մանկունքն, և մուրթքէ, թէպէտ հա

ռին յիշխանութիւն, և թէպէտ մեծացան, և նորահրաշ սքանչելիք գործեցաւ ՚ի ձեռս նր. զի բարձրութիւն սրտի ոչ միայն զամբարիշտս, այլև զո՟ս ապականէ իբր զօղիս. այլև զեղեկիս էարկ ՚ի հիմնատակութի. Նմին լինի և Տր ասէր, ուսարուք յինէն. զի հեզ եմ: Սիրտ՝ զոգին ասէ. չեղէ ասէ նման չար ոգւոյն, որ դնել ասէր աթոռ ՚ի բարձունս: Եւ ոչ զբօսան աչք իմ, Տր՝ մտօք ոչ ցնորեցայ անգամ ՚ի խորհուրդս մեծութեն. և զմարմնոյ աչս՝ յոլովք են որ կերպարանեն, խոթիւ հայելով և ակնարկելով, և զ յօնսն պաստելով, զորս ոչ ասէին մերձաւորքն Տն, զոր պօղոս անզգամութեան անուանէ զպարծելն հպարտութիւն թէև արդար է:

Ո՛չ գնացի ես ընդ մեծամեծս. և ոչ ընդ այնոսիկ, որ սքանչելի են քան զիս:

Ընդ մեծամեծ հպարտացեալսն. դանիել ընդ իշխանս պարսից և մարաց. և մովսէս ընդ համրայ: Եւ ոչ ընդ այնոսիկ որ սքանչելի եղեն քան զիս, ընդ նաբուգոդոնոսոր և ընդ կիւրոս, որք երկրպագանեին բելայ, և վիշապին: Այլև՝ առաջին սքանչելի որքոյն՝ ոչ հաւասարեցին զանձինս, ասելով՝ յամօթ և նախատինք եղաք ծառայից քոց և պաշտօնէից:

Բայց եթէ խոնարհեցայ ես՝ որ՟ մանուկ կաթնակեր ՚ի մօրէն մօր իւրոյ. և հատուցեր ինձ անձին ՚ի նոյն:

Իբր Տրն ասէր, եթէ ոչ դարձջիք և լինիջիք որ՟ ըդ մանուկ՝ ոչ կարէք մտանել յարքայութիւն: Եւ որ՟ մանուկ պատուցեալ ՚ի ստենէ մօր. թէպէտ դառն դերեալ օծանեն՝ ոչ դիւրաւ կորի. կամ սարտուցեալ խուսի, լռեալ, և ըդ լալ հառաչանէ, և վազվազակի հաշտի, և խնդրէ: Այսպէս՝ ՊՔն յերկայնամտելն Տյ քրիստոսի, հողպարար պատկեն, իբր երեխայ ուխտէր չխօսել բնաւ, զի բան Տն եղև ինձ նախատինս ասէր, մինչև պղծեալ լինէր փոր նր. և ամբարշտ ասէր, ընդէր ցուցեր ինձ աշխատութիւն և ցաւս. և փութով դառնայր անդրէն ասելով, Տր զլուր քո լուայ և երկեայ:

Այլ եթէ հպարտացայ արդեօք զանձն իմ, այսպէս եղիցի հատուցանես անձին իմոյ. յուսասցի իսրայէլ ՚ի Տր յայսմհետէ մինչև յաւիտեան:

Իբրև ամբարտաւանից զիլեցաւ յերկնից, և սեղկեայ. և թէ ասիցէ ոք՝ մի թէ չգիտէր Տծ. յայլոց օգուտ

ասէ

ասէ և յօրինակ, և ոչ պարծելով առաջի Այ՝ ուսուցանէ զիւր առաքինութիւն։ Յուսացաւ լինել 'ի Տր, յոլով անգամ ուսեալ ասէ լինել՝ զփորձ յուսոյն յելս եգիպտոսէ և 'ի բաբելոնէ, և որ ինչ գործեցան յերկոսեան աշխարհսն, և անդէն իսկ յետ, բուռն հարեալ զնմանէ՝ լինելին յուսով ընդ Այ յայսմհետէ մինչև յաւիտեան։

Երգ չուոց։

Ըստ ինչ ազգականութիւն ունի այս սաղմոս ընդ ՃԼ, սաղմոսին. զի երկոքեան՝ զուխտն Այ և զխոստումն դաւթի յիշեցուցանեն. զոր Քերբէն ընդ ողորմանաց իւրոց ճշմարտութիւն առաջի Այ ուխտ առնել։

ՍԱՂՄՈՍ. ՃԼԱ.



ՅԻՇԵԱ ՏԷՐ ԶԴԱՒԻԹ, ԵՒ ԶԱ-մենայն հեզութիւն նր։

Եւ թողու զայլ բարիսն, և զհեզութիւն առ սաւուղ, և առ աբիսողոմ, և առ այլս, և զայս միայն յիշեցուցանէ, թէ այնչափ ջերմ փափագմամբ կամեցաւ շինել զտաճար Այ, անհանգիստ յանկողինս, 'ի քնոյ, և 'ի ննջելոյ անգամ, և այն՝ երդմամբ։

Որպէս երդուաւ Տն. և ուխտ եդ Այ յակովբայ։

Զարկ եդ անձին, զի մի պատճառք ինչ և հոգք խափանել կարասցեն։

Թէ ոչ մտից 'ի յարկս տան իմոյ. Թէ ելից յանկողինս մահճաց իմոց։ Թէ տաց քուն աչաց իմոց. կամ նինջ արտևանաց իմոց. կամ հանգիստ քունքաց իմոց. մինչև գտից տեղի յարկի Տն Այ յակովբայ։

Հանգիստ մարմնոյ՝ զոր խրանաց ասէ, մինչև գտից, և ոչ թէ շինեցից, զի այն՝ անհնար էր։ Քանզի՝ ասէ պատմութիւն թէ՝ յաւուր միում նստեալ էր դաւիթ 'ի տան, և նաթան ընդ նմա, և ասէ դաւիթ ահաւասիկ ես բնակեալ եմ 'ի տան անուշահոտ մայրից, և տապանակն Այ 'ի բացեայ ընդ արև, և ընդ անձրև. և ասաց նաթան՝ զոր ինչ կամիս՝ արա, զի Տր ընդ քեզ է. յինքենէ ասաց, և ոչ հրամանաւ Այ. և նա յարուցեալ խնդրէր տեղի. և առնէր պատրաստութիւն սեղանոյ 'ի կալն ոռնեայ, ուր հրեշտակն վերացոյց զսուրն 'ի կոտորելոյ, և մատոյց անդ պատարագ և ասաց, ահա լուաք զնմա

նէ

նէ. Դաւիթ և Նաթան լուեալ 'ի հոգւոյն զառաջարկէն տն՝ ուր շինել պարտ է. քանզի՝ ասաց մարգարէն Նաթան, որ կանգնեաց սեղան տն 'ի կալն Ոռնեայ, և հոգւոյն տր. ազդեաց նմա թէ՝ որդւոյն քո սա շինէ տաճար ընչաւոր՝ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ, որով փրկչին տեսողքն. է որ խնդացեալ բերկ-րանօք ասէ :

Ահա լուաք զնմանէ յԵփրաթայ. և գտաք զնա 'ի դաշտս մայրեաց:

Եփրաթայ՝ որ է Բեթղեհեմ, յայտ է յայտնութեն անճառ խորհրդոյն՝ որ ծածկեալ էր յազգաց և յաւիտենից: Քան-զի՝ ասեն 'ի պատմութէ, թէ 'ի մեռանելն գազուբայ՝ կնոջն քաղեբայ, էառ կին 'ի հեթանոսաց բնակչաց երկրին, որում անուն էր քաբրաթայ, ըս քանանացւոց կոչմամբ, զոր սեփ-հականեալ կոչեցին Եփրաթայ, և հայր նր տիրէր ամ՛ երկրին զոր ետ դստեր իւրոյ, յորոյ անուն կոչեցաւ Տն Եփրաթայ որ ծնաւ որդի և կոչեաց զանուն նր քաղէբ բէթղէհէմ, և շինեաց քաղաք անուամբ նր՝ զբէթղէհէմ, որ է տուն հացի որ տուեալ մեզ հաց կենաց իջեալ յերկնից, զոր իմացեալ դաւիթ խնդալով ասէր, ահա լուաք զնմանէ յԵփրաթայ և գտաք զնա 'ի դաշտս մայրեաց, զառաջինն անբան 'ի դաշտս մայրեաց. քանզի՝ մայրի էր տեղին, և անխնամ զառաջինն. վը՝ ասէ :

Մտցուք 'ի յարկս նր. երկիր պագցուք 'ի տեղւոջ՝ ուր կացեալ էին ոտք նր.

Ուր կաթնկեր տղայն ծնաւ՝ յանսասուախուն առաքի-նութե մարիամ, և եղաւ 'ի մսուր մարմնով, որ ոտք ասի. և յետոյ 'ի վարդապետութեան հասակին շրջեցաւ ոտիւք և խաչեցաւ, և եղաւ 'ի գերեզմանի. յորմէ բանէ ուսեալք գան 'ի ծովէ և 'ի ցամաքէ երկրպագանելն. և յօրհնութէ անուն վայրէն՝ ուր կացեալ են ոտք. զի արդ մարմնաւն ոչ է անդ, այլ՝ իմանալ լութար: Այլ՝ Դաւիթ յետոյ ուսեալ 'ի Նաթանայ՝ հրամանաւ տր արգելեալ 'ի շինելոյ զտաճարն, և պատճառն՝ զի խնայեաց ած 'ի նա, զի կարի վաստակօք շինել կամեցաւ. և կամ զի որդին այնու պատուեսցի. կամ թէ՝ պատերազմասէր էր. կամ 'ի քաղում արեանցն հեղմանց հեթանոսաց՝ չէր մաքուր ձեռքն դաւթի. սակայն՝ զտեղին նշանեաց, և զոսկի ծախսն պատրաստեաց. և ած մեծարեաց զյօժարութի նր. և շինեաց զհրաշալի խորան դաւթի՝ զանկեալ և զկործանեալ բնու-թիւն, 'ի զարմից դաւթի առեալ, է մեծին պետրոսի առաքե

կոյ՝ որ ասէ, մարգարէ էր դաւիթ, և գիտէր, զի երդմամբ երդուեաւ նմա ած՝ 'ի պտղոյ որովայնէ նո՛ նստուցանել յաթոռ նո։ Զոր իմացեալ ասէ։

Արի՛ տր 'ի հանգիստ քո՝ դու և տապանակ կտակի սրբութեան քո։

'Ի շինելն սողոմոնի և 'ի նորոգելն զօրաբաբելի՝ ասեն 'ի հեղուլթի և 'ի խոնարհութե՛ն տանն դաւթի։ Դու և տապանակ'', երկուքն եղև անդ, 'ի շինեալն սողոմոնի՝ տապանակաւն բնակեցաւ. և 'ի քանէն ոչ 'ի շինոյեալ՝ ած ածնաւն ուստի մարմին առ՝ որ տապանակ եղև, և տեղի դրութեան ածային բանին՝ 'ի հոգի և 'ի մարմին, ընդ երկոսին միաւոր եալ բանին, և մի կաղմեալ, և սուրբ ջականն մանանային կենաց, տապանակ սրբութե՝ զոր հայր սրբեաց անդ զընուլս բանին՛, և առաքեաց սրբեաց զաշխարհս, զոր այլ թարգմանքն՝ տապանակ զօրութե կոչեն, և կէսք տրութե, յորմէ զօրութեն հօր, և տրութեն որդւոյ՝ երևեցաւ կուսութե։

Երիցունք քո զգեցցին զարդարութիւն. և սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

Փոխանակ զի զգեցեալ էր յեսու զաղտեղի պատմուճանն և հրամայեցաւ 'ի բաց առնուլ, և զգեցուցանել նմա ըզ պճնեալսն. և որք նստէին ընդ նմա քահանայքն կիտահը մայք, որ է հրաշալէտք և նշանախնդիրք. զոր նմա ասաց տալ պատասուրս։

Քանզի՝ քահանայն հայր է աշխարհի. և քահանայապետն՝ քահանայիցն իշխան, իբր հայր՝ հարանց. և պճնեալսն 'ի չորս նիւթոց փոխանակ չորից տարերաց, 'ի բեհեզոյ՝ որ է երկրի նշանակ, զի վուշ յերկրէ բուսեալ. կարմիրն՝ հրոյ. կապուտակն՝ օդոյ. ծիրանին՝ ջրոյ, զի 'ի ջրոյ գոյանայ. և այս է նիւթ երկնի և երկրի՝ զոր զգենոյր քահանայապետն. և ունէր յուսանոցն զերկոտասան ակունս, 'ի խորհուրդ՝ երկոտասան կենդանակերպիցն, և երկոտասան ցեղիցն իէլի, որ 'ի վն յանձանցն գայր, 'ի յագանեալն զուսանոցն. և երկու ակն այլ 'ի կաւանն, նշանակ երկու կիսագնդացին, և խորհուրդ ծովու և ցամաքի, ուր բնակեալ են ամ ազգ մարդկան. այլ թէ՝ զայս ամ զգեցեալ քահանայապետն մտանէր առաջի այ։ Եր զորդիսն իւր՝ և զ[illegible] ամ [illegible] իւր տարին՝ հաշտեցուցանել զամ, և նուէր տալ նմա զերկինս և զերկիր. արդ արաւ [illegible] եալ նախ [illegible]քն, և այս՝ արդարացուցանել զայլսն. զի արդարութիւն՝ նոցին մարդոյն է պճնեալ և

ագա

ազամնելէք, որ է պատուական և ճոխագեղ, այնիւ քան զար-
տաքինն, Թէպէտ՝ զարմանալին էր։ Քանզի՝ հոգւոյ երեք
մասունք են, բան, ցասումն, և ցանկութի. և առանձին յա-
տուկ առաքինութի ունի բանն՝ զխոհականն. ցասումն՝ զա-
րիականն. ցանկութին՝ զողջախոհականն. իսկ՝ արդարութեն
կարօտ են ամենեքեան, զի հաւասարութի, և չափաւորութի
արասցէ նոյ. քանզի՝ արդարութեին՝ հաւասարաբաշխութի
ասէ։ Թէ խոհականն չունի արդարութի՝ անհաւասար է,
աւելի է, կամ պակաս. Թէ աւելի է՝ նենգաւոր է, Թէ պա-
կաս է՝ անմիտ է, Թէ հաւասար է՝ արդար է։ Նոյնպէս՝ արիա-
կանն, Թէ աւելի է՝ յանդուգն և լիրբ է. և Թէ պակաս՝
երկչոտ է. Թէ հաւասար է՝ արդար է։ Այսպէս ողջախոհու-
Թին, Թէ պակաս է՝ արբշիռ է և իգամոլ. Թէ աւելի՝ ան-
խայօղ է, սպանօղ է մարմնոյն. Թէ զոյգ է՝ արդար է։ Այս-
քան հարկաւոր է չորրորդ առաքինութիս, որ է արդարու-
Թին, զոր հրամայէ զգենուլ քահանայից, որ քուէչք և միջ-
նորդք են նոյ, 'ի վայր քան զԱծ՝ և 'ի վեր քան զմարդիկ։
Որ չէ զարդարեալ արդարութե պատմուճանաւն՝ տգէտ է,
կամ խորամանկ և նենգաւոր, կամ լիրբ, և ցանկացօղ և չէ
քահանայ, զպատկերն նոյ՝ ոչ ունի, այլ՝ զպատկեր գազանաց.
Թէ անմիտ է՝ էշ է. Թէ խեռաբարոյ է՝ ջորի է. Թէ յան-
դուգն է և լիրբ՝ շուն է, և կիսոց շողոքորթ. Թէ ցանկասէր
է՝ ձի է իգամոլ՝ ասաց մարգարէն. Թէ քծնի է՝ աղուեսու
է պատկեր. Թէ գող է՝ գայլոյ է նման. Թէ ագահ՝ խոզի.
Թէ ոխակալ՝ ըղտու. Թէ ամբարտաւան՝ առիւծու. և այս
պիսիքս 'ի սեղանն նոյ՝ ոչ ելանեն, և չմատչին սպասարաւ նոյ
և անարժք են, զայս զխորհրդ սրբեն, և զՔսի զխորհրդ սպասաւորա
գեն։ Վս այսորիկ՝ 'ի սրբքն՝ պատկերն նոյ ոչ է. և 'ի յանսրբքն
կերպարանք գազանացն, և սողնոց, զորս դանդաղեցաք յի-
շել։ Իսկ՝ զլայնութի տանս խնդրեցին, մի՛ զժտհարիք. սա
կայն՝ չէ օտար 'ի սբ գրոց և 'ի բանից։ Վս՝ յետ զգենլոյ
զարդարութե զգեստն՝ սբ կոչէ, և ցնծալ հրամայէ, ազատ
գոլով 'ի խղճէ մտաց, ասելով Թէ՝ սբք քո ցնծալով ցնծաս
ցեն, զի ցնծութին՝ առաւելութի է խնդութենն. որպ Թէ՝
եռալ և զուարձանալ և ծաղկիլ հոգւոյն։ Եւ կրկնելով ասէ՝
ցնծալով ցնծասցեն, կրկին մարդոյն յայտ է. զի սրտի բերկ
րեցելոյ՝ երեսք զուարթ են, և ծաղկ. ալ է գեղ։ Գրեալն ասէ։

[illegible]

Վան դաւԹի ասէ հոգին սբ, որ այնքան սիրեաց ըզ-
քեզ

քեզ, և յօժարեաց շինել քեզ տուն, և սիրեցաւ 'ի քէն՝ զի խնայեցեր 'ի նա, և ողջունալք 'նր կանգնեցեր՝ զոր խոստացար, միոյն՝ զքարաշէն տաճարն, և միւսն՝ զանծախսան խորանն աւանդեան և դաւթեան։ Մ՛ի դարձուցաներ զերեսս քո՝ յօծելոյ քումմէ, 'ի զօրաբաբելէ յայնժամ, զի շինեցէ զկործանեալն 'ի բաբելացւոց. և այժմ 'ի քրիստոնէական օծմանէ, զի լիցուք տաճար և հանգիստ կամաց քոց, և օծեալք՝ որ են քրիստոնեայք։

Երդուաւ Տր Դաւթի ճշմարտութիւն՝ և ոչ ստեաց նմա. 'ի պտղոյ ո-րովայնէ քումմէ նստուցից յաթոռ քո։

Զի նստոյց զօրհնեալն և զայս՝ յաթոռ հայրենի, որ կայ և մնայ յաւիտեան. որում ասաց երդմամբ՝ պտուղ 'նր յա-ւիտեան կացցէ, և աթոռ 'նր որ զարեգակն առաջի իմ, զոր ունէր յառաջ քան զյաւիտեանս, և զամն մարմնոյն՝ եդև 'ի դաւթի աթոռ։

Թէ պահեսցեն որդիք քո զօրէնս իմ. և զվկայութիւնս իմ, զոր ուսուցից նոցա։

Որդիք նց նստցին յաւիտեանս յաւիտենից յաթոռ քո։

Ամենագէտն գիտէ թէ՝ ոչ պահեն, այլ կռապաշ-տեն, վն այնորիկ խոտոր արկանէ, զի թէ ոչ պահեն ըզ պատուիրանս տն, այլև՝ խաչեն զնա, զիա՞րդ նստին յաթոռ նորա. վա՛յ ոչ որ ուխտեացն, այլ ուխտապահացն եղեն պատճառ չնստելոյն՝ սերեալ 'ի դաւթայ որդւոյն. այլ նա զերդն պահեաց, և ճշմարիտ գտաւ։

Հաճեցաւ Տր ընդ Սիոն. և ընտրեաց բնակել 'ի նմա. ասէ՝ այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից. 'ի սմա բնակեցայց՝ զի հաճեցայ ընդ սա։

Ուր կատարեցան եօթանասուն եօթներորդքն 'ի դա-նիէլէ, և երևեցաւ, և սպանաւ օծեալն. քանզի անդ կատա-րեցան տնօրէնականքն տն, և ոչ մեկնի չորրորդքն 'նր 'ի տեղ-եաց անտի. ուր եղև գերեզման 'նր, և յարութի, և համ-բարձմն յերկինս, և գալ հոգւոյն։ Այլև՝ եկեղեցի և մե-րեսն սիոն՝ անմեկնելի ունին զտէրն յինքեանս, հեզ լինելով որդւոց լուսոյ և խոնարհ։

Զոր

Զորս նորա օրհնելով օրհնեցից. և զաղքատս նորա լցուցից հացիւ:

Սնունդս և ակնկալս՝ զարդիւնաւորութիւնս ասէ, այսինքն՝ զառաքինութիւնս, զպարկեշտութիւնս, զսրբութիւնս, զոր ինչ սոյա բարութիւնքն են ասէ՝ օրհնելով օրհնեցից. այսինքն՝ կրկին խառնելով զօրհնութիւն՝ բազմապատիկ արարից. և զաղքատս՝ որք յօժար լինին գործելոյ զբարիս՝ և ոչ կարեն՝ կրկին յաւելից. Զի թէ զկրկինս ծածկէ առաքինութիւն նորա, որքան զհոգեղինացս զբարեգործութիւնս: Իբր ասէ սուրբն Գրիգոր, թէ յամ օր 'ի կշիռ վերանան բարիք և չարիք մարդկան. և զի՞ շատ և ծանր են մեղքն՝ քան զբարեգործութիւնս, դնի 'ի վեր չարչարանքն քո՝ որ վասն մեր, զի մի՛ հակեսցէ չարն՝ կորիցէ աշխարհ: Զի աղքատ և չքաւոր է ազգ մարդկան, որպէս և Դաւիթ՝ աղքատ և տնանկ կոչէ զինքն, թէպէտ թագաւորութիւն ունէր. և հաց կոչէ զՏէր պատճառս կենդանութեան մարդկան, որ է աստուածպաշտութիւն: Այլ թէ զՏէր ինչ ունէաք, ո՞ այլ մեզ պատճառ յաւիտենական կենացն՝ զաստուածախառն մարմինն, որ իջանէ յերկնից և կերանս տայ Տէր, որպէս ինքն հրամայեաց:

Զքահանայս նորա զգեցուցից զփրկութիւն. և սուրբք նորա ցնծալով ցնծասցեն:

Քահանայսն ասէ՝ որք զգեցեալ են զարդարութիւն. քանզի փրկութիւն ծնունդ է արդարութեան. արդարութիւն 'ի մէնջ, և փրկութիւն յԱստուծոյ. նմին իրի՝ ասաց նախ թէ՝ զգեցցին, որ մեր յօժարութիւնս է, և ապա՝ որ յինքենէ ասէ զգեցուցից զփրկութիւն. և կրկնէ զանդ ասացեալն թէ՝ սուրբք սորա ցնծասցեն:

Անդ բուսուցից եղջիւր 'ի Դաւիթ. պատրաստ արարից ճրագ օծելոյ իմոյ:

Հրէայն զԶօրաբաբէլ ասէ, այլ՝ նա սակաւ ժամանակս թագաւորեաց, և այլ ոք ոչ նստաւ յետ նորա. և մարդ էր, և ոչ ծագումն. այլ՝ որպէս 'ի Զաքարիայն ասէ, ահա այր և ծագումն անուն նորա. որ է արեգակն իմանալի՝ ըստ Մաղաքիայ, 'ի ներքուստ ասաց 'ի մէջ կուսէն ծագեցաւ տէրն. Եւ եղջիւր եւս կոչի, այս է զօրութիւն, քանզի՝ Քրիստոս Աստուծոյ զօրութիւն որ և Դաւթի եղև զօրութիւն, անմահացուցանելով զանունն նորա և զթագաւորութիւն: Պատրաստ արարից զճրագ օծելոյ իմոյ. 'ի գթութենէն հօր պատրաստեցաւ ճրագ մարմինն, որ

լուցաւ ա͞ծուբն, և է ք͞ս ն͞ր, հօր՝ ը͞ս ա͞ծութեան, և դաւթի ը͞ս մարդկութեան։

Թշնամեաց նր զգեցուցից զամօթ. այլ ՚ի վր նր ծաղկեսցէ սրբութի իմ։

Հրէից և հեթանոսաց, յորժամ տեսցեն զնա եկեալ ՚ի վր ամպոց զօրութբ և փառօք բազմօք. ամօթ մեծ պատէ զնա։ Այլ ՚ի վր նր ծաղկեսցի սրբութի իմ, զի՝ երևեցուցանէ ամ՝ տեսողաց թէ՝ նա է որ արար սրբութի մեղաց մերոց, և նստաւ ը աջմէ ա՛յ՝ ը պօղոսի. և սրբութի նր՝ հօր սրբութի է. որպ ասաց՝ զամ ինչ զոր ունի հայր՝ իմ է։

Երգ աստ՞ց։

Որ է գնացից առաջնորդաց՝ ՚ի վերին հրէից. [illegible]

ՍԱՂՄՈՍ ՃԼԲ.

Զի՞ բարի, կամ զի՞ վայելուչ, զի բնակին եղբարք ՚ի միասին։

Է՛ բարի՝ որ ոչ է վայելուչ, յորժամ անարժան իցէ վայելողն. որպ քահանայութիւն ողիայ՝ որ չվայելէր. թէև՝ բարի է քահանայութիւն. որպ և ոչ արդ՝ անարժանից վայելէ։ Եւ է՝ որ վայելէ, որպ օրինաւոր ամուսնութիւն աշխարհականին. և ոչ է բարի՝ որ ուխտաւոր է կուսութի։ Իսկ՝ եղբարց ՚ի միասին բնակել բարի է, և վայելուչ համարեալ է առ ամենեսեան. որպ ՚ի քն հաւատացելոցն մի լինել հրէից և հեթանոսաց. զի բնակին եղբարք աստ յեկեղեցի, և անդ՝ յարքայութեան. և օրինակն՝ այս։

Ո͞պ իւղ զի իջանէ ՚ի գլուխ՝ և ՚ի մօրուսն Ահարոնի. ՚ի մօրուսոյն իջանէ ՚ի գրպանս զգեստու նր։

Քահանայական իւղն աստուածպէս հեղեալ ՚ի գլուխն Ահարոնի՝ որ իջանէր ՚ի գլուխ և ՚ի մօրուս, և ՚ի գրպանս, ՚ի չորից նիւթոց էր կազմեալ. ծաղիկ զմռսոյ, և եղեգան խունկ. հիրիկ, և կինամոն։ Ծաղիկն զմռսոյ՝ հինգ հարիւր սիկղ, և հիրիկն. իսկ՝ խունկն եղեգան, և կինամոնն, կէս

նոցին՝ երկերիւր յիսուն սիկղ, որ է օրինակ՝ առաքինութեան, որ բազմատեսակ է. և չորս երանականն՝ որք նախ ասացաւ, զոր ունին քրիստոնեայք աւելի և պակաս. միաւորեալ յերկ-քարցն առ իրերաց՝ լինին անուշահոտ իբրև զայն խունկն. մին կուսան. մին ողջախոհ աշխարհական. մին անինչ. մին ողորմած. մին պահօղ աւելի. մին աղօթօղ՝ քան զնա աւելի. և այլն նման առ իրերաց անցեալ և միաւորեալ՝ լինի որ, 'ի հոտ անուշից պատարագ. և մեզ օծումն իւրեանց 'ի պահպանութիւն անկոտնելի 'ի ձեռաց թշնամւոյն. զի որոց՝ կռիւն է մեր և պատերազմ: Այս իւղ նախ 'ի գլուխն մեր Քրիստոս իջանէ հոգւոյն 'ի հօրէ, և զնոյն անբաւ առաքինութիւն յաւելուածս առնու, և ապա՝ իջանէ յառաքելսն, և 'ի մարգարէսն՝ որ մօրուք են նորա, հրեշտակաց առաքինութեան միջնորդութեամբ՝ եկեալ առ նոսա, և յամենայն նահատակս ածպաշտութեան. և նոքօք 'ի մեզ իջեալ իբրև 'ի գրապան, պահպանէ զմեզ, մտեալ 'ի ծածուկ առաքինութիւն մեր: Եւ մեք հանապազ զայս նմ կրելով 'ի մեզ՝ հաւատով ընծայեմք հօրն երկնաւորի 'ի հոտ անուշից պատարագ, որդւով և հոգւով փառաւորեալ: Եւ այլ եւս՝ օրինակ առնու բնակութեան եղբարցն 'ի միասին:

Որպէս ցօղ՝ որ է ցօղն 'ի հերմոնէ 'ի վերայ լերին սիովնի:

Ահերմոն լեառն է 'ի պաղեստին, և 'ի հարաւոյ երեմի. ուր յորդ է յոյժ ցօղաւոր և բարեխառնեալ, գայ ցօղէ 'ի սիոն՝ որ է երեմ: Սիոն է նշանակ՝ զոր լեռնացեալքն առաքինութեամբ՝ իբրև զահերմոն՝ նախ առնուն շնորհս գիտութեան և զայլ առաքինութիւն, և ցօղեն 'ի վերայ տկար եղբարց: Որպէս առաքեալքն 'ի հոգւոյն՝ իբր յահերմոնէ լեռնէ՝ 'ի քէ աւետարանեալ, և 'ի հոգւոյն սրբոյ առեալ 'ի սիոն, և նախ՝ անդ ցօղեցին, և ապա՝ յամենայն տկարս 'ի հեթանոսս:

Տէր անդ պատուիրեաց զօրհնութիւն, և զկեանս յաւիտենից:

Յայտ է՝ ուր միաբանութիւն է, և սէր եղբարց. որ ձեզ լսէ՝ ինձ լսէ. և ուր երկու և երեք ժողովեալ են յանուն իմ, անդ եմ ես 'ի մէջ նոցա. և նա է կեանք յաւիտենից: Որ և մանաւանդ՝ 'ի հանդերձելոյն լինի բանք սաղմոսիս. զի անդ բնակին եղբարքն 'ի միասին, զուգեալքն հաւատովք և գործովք, 'ի տան հօրն՝ ուր և որդին է:

Եւթ շարայ:

Որպէս իւղ՝ հրաշալեաց իջեալ, և ցօղոյն յերկնից, յաւիտենից զօրհնութիւն առցուք:

ՍԱՂ

ՍԱՂՄՈՍ. ՃԼԳ.

Ահա օրհնեցէք զՏր ամենայն ծառայք Տն, որ կայք ՚ի տան Տն, ՚ի գաւիթս Այ մերոյ։

Առաջինք՝ և միջինք, և վերջինք, այլև՝ վերին զօրութիւնք միաբանեալ ընդ մեզ, և մի՛ մեր օրհնեցէք զՏր. ո՛ կայք ՚ի տան Տն, որք լցեալ ունելին զտաճարն, և զգաւիթն. և այն է սրահական տեղի օրհնելոյն զԱծ, զորոյ զփառսն բազմապատկեալ փոխեաց նր եկեղեցի, ուր գնեալքն արեամբն Քի՝ օրհնեն զԱծ։

՚Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ՚ի սրբութիւնս և օրհնեցէք զՏր։

Ցայտ է գիշերապաշտօն առնելն խնդութե. զօրն անդկացեալ երգիչքն ՚ի հեծս յաղօթս, և յերեկոյացեալ ժամն առնեն, ասա օրհնեցէք, և ՚ի տուն մի երթայք, և ՚ի գիշերի համբարձէք. ով և ՚ի կերակմանուն կարգեալ է այս սաղմոս, ըստ առաքելական սահմանին՝ գիշերապաշտօն առնել զկեբակէն։ ՚Ի գիշերի՝ որ մանաւանդ պատշաճ է օրհնել զԱծ, միայն պարապել ՚ի զգայութեցն խուձալից. համբարձէք, երբ զմիտս, և զխորհուրդս, և զբանական պաշտօնն, նուէրս բարձեալ ՚ի վերայ ձեռացն՝ ՚ի վեր նուէրեցեալք Այ. Իր առաքելոյ՝ կամիմ զի արք կացցեն յաղօթս՝ բառնայցեն զսր ձեռս ՚ի վեր, զոր ասա ասէ ՚ի սրբութի։ Երէ միւս թարգմանն ասէ, սրբութի օրհնեցէք զԱծ. ասաց ոմն և յարտաքնոյն, թէ աւանդ է այս հայրենի՝ ՚ի մեզ հասեալ, կալն յաղօթս՝ ամբառնալ զձեռս, իբրթէ՝ լաւ աղօթից ՚ի վեր է քան զԱմ։ Սրբութի ձեռաց՝ ՚ի կաշառաց, ՚ի շօշափման կակղութեց, ՚ի զրկմանց, ՚ի ծեծելոյ, ՚ի սպանմանէ. այլև՝ ողորմութե կարկառել յաղքատս՝ սրբութի է ձեռաց. զի մի՛ լռեցուք թէ՝ ձեռք ձեր լի են արեամբ։

Օրհնեսցէ զքեզ Տր ՚ի Սիոնէ. որ արար զերկինս և զերկիր։

Զի ՚ի մեր օրհնելն ՚ի սիոնէ անտի, և նա օրհնեսցէ զմեզ. հրեշտակքն՝ անտի հաշուելին զբարիսն, և մեք ՚ի վերին սիոնէ, որ արար զերկինս և զերկիր. զի չէ բովանդակեալ անդ. նմա են երկինք, և աշխարհ իմ։

Ալէլուիա։

Կատարեցան սաղմոսք երեքս. փառք՝ օրհնութիւն եւ գոհութիւն եւ խոստովանութիւն ընծայեն զօրաւորին աստուծոյ:

ՍԱՂՄՈՍ. ՃԼԴ.

Օրհնեցէք զանուն Տն. օրհնեցէք ծառայք Տն զՏր. ո՛ կայք 'ի տան Տն, 'ի գաւիթս այ մերոյ:

Զի ետ փառս անուան իւրոյ՝ դարձեալ առնլով ըզ մեզ. եւ է անուն նր յամ՛ ծառայս, եւ յամ՛ արարածս. զի ծառայք զՏր՝ եւ արարածք զարարիչն թարգմանեն, իբր թէ՝ առնեն. ո՞ կայք 'ի գաւիթս այ մերոյ, եւ ոչ 'ի մեհենից, եւ ոչ անհոգութբ 'ի տունն՝ իբրեւ զանասուն:

Օրհնեցէք զՏր՝ զի բարի է. սաղմոս ասացէք անուան նր՝ զի քաղցր է:

Բարի է բնութբ եւ անզխտելի, զբարերարութիւն առեալ պատճառս օրհնեցէք, զի եւ դուք բարի լինիցիք. զանունն քաղցր երգով օրհնեցէք, զի նա քաղցր է:

Զյակոբ ընտրեաց իւր Տր, եւ զԻսրայէլ ժառանգութի իւր:

Ընտրողին է շնորհն, որ եւ իէլ կոչեաց. զոր թէ չէր ցուցեալ զինքն՝ զիա՞րդ լինէր կոչեցեալ: Իսկ՝ ժառանգութի ասելն՝ իւր սեպհական, եւ կամացն կատարօղ:

Ես ծանեայ՝ զի մեծ է Տր. եւ Տր մեծ է քան զամ՛ կուռս:

Թէպէտ եւ ամենեքեան ծանեան՝ զի մեծ է, այլ ոչ որպ սրբքն. եւ Տր մեծ է քան զամ՛ կուռս, ոչ կշռելով ընդ նոսին, այլ՝ ակար լռողացն ասէ. եւ այսպէս եւս ծանուցեալ մեծութի նր՝ որ ասէ:

Զամենայն զոր ինչ կամեցաւ՝ եւ արար Տր. յերկինս եւ յերկրի՝ 'ի ծով եւ յամ՛ խորս:

Ո՛չ ըստ զօրութեն, այլ ըստ կամելութեն չափոյն արար. ոչ զոր մեքս տեսանեմք՝ են գոյքս. այլ՝ յերկինս եւ յերկրի, եղերք ծովուն մեծի, եւ յամ՛ խորս ծովակաց, որք են խորունք, եւ գոգք ծովուց՝ մեծաց եւ փոքունց, եւ որ ինչ 'ի խորս երկրի ծածկեալ կան. ոչ որպ հեթանոսք իւրեանց տծոյն համբաւեն բաժանմամբ, ամն այսմ, եւ ամն այլում գոլ արարիչ. եւ զայս՝ ասելի ծանիցուք:

Հանէ

Հանէ զամպս 'ի ծագաց երկրէ · զփայլատակունս իւր յանձրեւս արար · եւ հանէ զհողմս 'ի շտեմարանաց իւրոց ։

Զամպս՝ զմարգարտս յերկրէ. փայլատակունն՝ ապառնալիքն. հողմ՝ հոգին. շտեմարան՝ հայր և որդի, հոգին՝ որ 'ի հօրէ ելանէ, և յորդւոյ առնու։ 'Ի ջուրց ծովուց՝ որ շուրջ են զերկրաւ երկրի՝ ջլացուցանելով զօդն, և աբարել ծակոտիքն, արկանէ ջուր 'ի ներքս՝ իբր 'ի տիկս. և հողմով 'ի վեր առեալ տանի յօ և կախի. և ձնշմամբ հողմոյն՝ փայլատակէ հրոյն՝ որ կայ խառնեալ 'ի ջուրն, հրաշէք հա կուռակքն. հուրն ոչ ցամաքեցուցանէ զջուրն, և նա ոչ կարէ շիջուցանել զնա։ Փայլակն՝ որ ըստ ոմն՝ ելանէ յարեւելից, և երևի մինչև 'ի մուտս. այն երագ է քան զարեգակն, որ յերկոտասան ժամն գնայ յարեւմուտս. և սաստիկ է լոյս քան զնա. զի միշտ տեսօղքս արեգական՝ առժամայն խոփեմք զաչս 'ի հարկէ։ Եւ հանէ զհողմն. յո արտաքնոցն՝ եր կոտածն են հողմք. զխուրինն և հեշտ գործեն զնա կամացն ոյ՝ յայտ առնէ. իբր ոք 'ի մառանէ և 'ի տանէ գանձուցն հանէ զերեւան. և նովաւ սրբէ զօդ, և զովացուցանէ զկենդանիս, և տանի զնաւս 'ի ծովու, և սրբէ զյարդ 'ի ցորենոյ. և շատ ինչ բարի առնէ հողմով, յահ և երկիւղ անզգուշից և սնունդ բուսոց և տնկոց։

Եհար զորս անդրանիկս եգիպտացւոց, 'ի մարդոյ մինչև յանասուն ։

Այս՝ առանձին սքանչելիք յաղագ մի՝ և յաղագս այլի միոյ լինելի ցուցեալ. լծէ որ ստեղծ զկենդանիս, և առաջին բանիւ զարդանուր ծնողաց, նա է՝ որ վս տանջելոյն զանդրանիկ ժողովուրդն և չարձակելոյն՝ սաստկեաց զոր եստեղծ։

Առաքեաց նշանս եւ զարուեստս իւր 'ի մէջ քո եգիպտոս, 'ի փարաւոն և յամ ծառայս իւր ։

Դու վկայես եգիպտոս՝ որ 'ի մէջ քո եղեն. նշան է՝ որ բանիւ. և արուեստ է՝ որ ձեռօք. և երկուքն լինէին մովսեսիւ. զի նովաւ առաքեաց նշան՝ և արուեստ. որ և՝ յետին հրաշքն գործեցան 'ի կարմիր ծովն, 'ի փարաւոն, և յամ ծառայս իւր, որ զղջացան յարձակելն զինել։

Եհար զազգս բազումս. և սպան զթագաւորս հզօրս ։

Զհեն բնակչաց պաղեստինացւոց՝ 'ի ձեռս յեսուայ մծի։

[illegible]

Որ նախ քան զայն՝ ՚ի ձեռն մտանէ:

Եւ ընկեր ոչ ՚ի ժամանակի. ժամանակի [illegible] իւրոյ:

Ռուբենի, և Գադայ, և կիսոյ ցեղին Մանասէի, յայնկոյս Յորդանանու. Հսկայք և սկայազունք էին թագաւորքն այնոքիկ. որոց՝ միայն հասակն իննկանգուն էր, և մարմինք երկաթիք:

Տէր [illegible]:

Զի ամ արարածք ՚ի քէն եղեն, և առին անուն, որ է նիւթ քանակութեան. որ՝ ՚ի գիրս գրեցան յիշատակի վերին՝ դու անեղ, և անուն քո և յիշատակ անսկզբնական:

[illegible]

Զի արդար է՝ և ոչ դիւրին թողուլ առանց բերելոյ յատեան և ՚ի քննութիւն. Եւ՝ ՚ի ծառայս իւր մխիթարել. ոչ միայն բարկանայ ծառայից իւրոց ստարաբար. զի նք ոչ յար մեղանչեն, և ոչ անորոշելով, զի ծառայք են նն. այլ պատահմամբ, և ձգմամբ մարմնոյ՝ սղալեն, իբր դաւիթ և այլք: Մխիթարէ. իբր թէ՝ ՚ի փոքր հարկանելն հանգչի ՚ի ցասմանէն:

[illegible]

Պատիւ նց ՚ի նիւթոյ է, և կերպարանն յարուեստից:

[illegible]
[illegible]

Զկերպարանս ունին, և ՚ի զօրութենէ թափուր են:

[illegible]

Անշունչք և անբանք. զի այնքան յիմարք են՝ որ գործոց ձեռաց իւրեանց երկրպագանեն, որ քան զմկունս՝ և զմժղուկս, և զգորտս՝ անարգ են:

Տուն

Տուն Իսրայէլի օրհնեցէք զՏէր. տուն Ահարոնի օրհնեցէք զՏէր։

Յերկուս բաժանէ զերկոտասան ցեղսն, ՚ի ժողովուրդն և ՚ի քահանայսն. օրհնեսցեն զՏէր՝ զի բարեբախտք եղեն ՚ի շնորհացն Այ՝ քան զազգս ամ, զկենդանին Ած ճանաչելով։

Տուն Ղեւեայ օրհնեցէք զՏէր. երկիւղածք Տն օրհնեցէք զՏէր։

Կրօնաւորքն քահանայից՝ և սպասաւորք Նր, և առանձինն յիշէ՝ զի մի յառնիցեն ՚ի մի մեհիցն քան զինքեանս, այլ կացցեն ՚ի չափու իւրեանց։ Երկիւղածք Տն օրհնեսցեն զՏէր, որք ՚ի հեթանոսաց եկամուտք՝ յերկիւղն Այ դիմեալք, որք կարօղ են ելանել յորդեգրութիւն սորայն. զի երկիւղն Այն կարէ առնել ազգակցութիւն երկրորդ՝ և առաւել ևս քան զա_րենեայսն։

Օրհնեալ Տէր ՚ի Սիօնէ. որ բնակեալ է յԵրուսաղէմ։

Յեկեղեցւոյ՝ որ մայր և դիտանոց է բոլորից, ամենայնիլ և ամենահաւաք, որ է հաւատն՝ որ բնակեալ է յԵմ, ՚ի վերինն՝ և ՚ի խաղաղական հոգիս հեզոց։

Ալէլուիա։

Վերնագրի ասելն. Ալէլուիա՝ զի երգէ առ՝ զոր յառաջ քան զաստեղծանելոյ աշխարհի՝ դնէր վերադիրս՝ ալէլուիայ։ ՚Ի զանազան երգոց հաւաքէ զօգուտ ամենեցուն. քանզի՝ ընդդէմ առէ այնոցիկ՝ որ ինքնաբոյս ասէին զարարածս. և չար այլում, և այլում հաւատային Այց՝ բարւոյ և չարի. Որոց՝ ցուցէ առ աղգս Ած առնելով։

ՍԱՂՄՈՍ. ՃԼԵ.



ՈՍՏՈՎԱՆ ԵՂԵՐՈՒՔ ՏԵԱՌՆ.

զի քաղցր է. զի յաւիտեան է ողորմութիւն նր։

Խոստովան եղերուք Այ աստուածոց. զի յաւիտեան է ողորմութիւն նր։
Խոստովան եղերուք Տն տերանց. զի յաւիտեան է ողորմութիւն նր։

Դաւանեցէք ասէ զՏէր՝ զի բարի է. բարի է բարեգործաց. և յաւիտեան զողորմութիւն զղջացելոց. և Այլ ողորմութիւն՝ նոյնպէս և բարութիւն յաւիտենական է. և բարւոյն չափ ոչ գոյ. զի ածացուցիչ և տիրացուցիչ է, զեւրն տալով անսահմանս։ Եւ սուտ ասաց օձն թէ՝ յաշակելեաց զԱծանալն աւածոց և

եւ

եհայր. և ա՛ծս կոչէ զհրեշտակաց և զմարդկան մեծագոյնս ըստ առաքելոյ թէ՝ են ա՛ծք բազումք և տեարք բազումք, յեր-կինս և յերկրի։ Եւ նա ոչ թէ՝ չիցին է ա՛ծ և տ՛ր, այլ՝ էիցն որք անուանին տէրունիք յերկինս՝ դաս մի. և այլ մեծագոյնքն քան զնա՝ ա՛ծք կոչին խոնարհագունիցն, որ թարգմանին բարերարք, կամ՝ տեսօղք. որք զտեսեալս յինքեանց իմաստս բարերարեն ներքնոցն, ըստ ամենին դիմնխեայ։ Նոյնպէս՝ և ՚ի մարդկանէ արդարութ՟բ երևեալքն՝ քահանայութ՟բ և իշ-խանութ՟բ ծածկեալքն՝ ա՛ծք և տեարք կոչին, ըստ այնմ՝ թէ՝ զա՛ծս քո մի՛ հայհոյեսցես, և զիշխանս ժողովրդեանն՝ մի՛ բամբասեսցես։

Արար զլուսաւորս մեծամեծս միայն. զի յաւիտեան է ողոր։

Յայտ առնէ զմիոյն ա՛յ յատկութ՟ին. զի ա՛ծ սքանչելիք մեծամեծք՝ յոյր ձեռն որ եղեն, ն՟ր գործութ՟բ միայն եղեն. և թէ ուստի՞ սքանչելիքն սկսան՝ ասէ։

Զերկինս արար իմաստութ՟բ իւրով. զի յաւիտեան է ողոր։

Յա՛յտ է որդւով և հոգւով. ո՛չ այլուր պարզ ասաց, ողորմութ՟բ տ՟ն լի եղև երկիր, բանիւ տ՟ն երկինք հաստա-տեցան, և հոգւով բերանոյ ն՟ր՝ ա՛մ զօրութիւնք ն՟ր։ Այլև՝ իմաստութ՟բ, զի իմաստուն բանաւորօք լի արար զերկինս։ Դարձեալ՝ իմաստութ՟բ արար զերկինս արձակ, զի ՚ի դէպ և պատշաճ յաւիտենից անդ փոխելոց է զազգս մարդկան։ Զի յաւիտեան է ողորմութ՟ի ն՟ր, զի ոչ յիւր պէտս, այլ զի՝ վայե-լեսցեն յողորմութ՟ին ն՟ր արարածք։

Հաստատեաց զերկիր ՚ի վերայ ջուրց. զի յաւիտեան է ողոր։

Զայնքան ծանրութի ՚ի վ՟ր այնպիսի լուծութե, և թու-լութե. որ թէպէտ՝ ջուր ՚ի վ՟ր հողոյ ասի և է, այլ՝ է տեղի առ եզերօք երկրի, որ ՚ի վ՟ր ջուրց է հող, և է՝ որ ՚ի ներքոյ հողոյ է ջուր. և ը՟ մէջս երկրի, և ՚ի վ՟ր երկրի՝ ջուրք են, զի յա՛մ ցուցցէ ամենահնար զօրութի արարչին։ Եւ է նշանակ բանական երկրի, որ հաստատեցաւ ՚ի վ՟ր ջուրց աւազանին. և է ցոյց ողորմութե տ՟ն։

Արար զլուսաւորս մեծամեծս միայն. զի յաւիտեան է ողոր։
Զարեգակն արար իշխանական տուընջեան. զի յաւիտեան է ողոր։

Զոր և Մովսէս ասաց, արար ած երկուս լուսաւորս մեծամեծս. ասեն թէ՛ են աստեղք՝ որ քան զարեգակն մեծ են, բայց՝ զի հեռանան է արեգակն առ՛ նշխան՝ ծածկէ զնա, շատ ունելով զլոյսն. կամ զի՛ կարի հեռի են ասեն, չկարեն արձակել լոյս 'ի խոնարհ, և ոչ երևեցուցանեն զմեծութիւն:

Զլուսին և զաստեղս յիշխանութիւն գիշերոյ. զի յաւիտեան է ողորմ:

Եւ զի՛ գիշերոյ են լուսաւորք, զգիշեր և ոչ զտիւ զարդարեն. և սոքօք երևի ողորմութիւն նր, և դէտս ողջամտութե շահուց մարդկան, և այլոց գործելնաց են:

Եհար զերկիրն Եգիպտացւոց անդրանկօք իւրեանց հանդերձ. զի յաւ:

Զի յայտ ածէ արարչէն ոչ երկեան:

Եւ եհան զԻէլ 'ի միջոյ նր. զի յաւիտեան է ողորմ.

Քանզի՛ յառաջագոյն արդար կոչելով զնա ած՝ ողորմութիւն իւրն բերէ կորուստ եգիպտացւոցն, զի զնր սերմն աբրահամու հեղձուցանէին: Եւ քանզի՛ յայն դատաստանն մտանէ կշիռ ողորմութեն, եդից ասէ զողորմութիւն 'ի կշիռ. և այս է յիրաւունս ասել հաստատեալ է աթոռ նր:

'Ի ձեռն հզօր՝ և 'ի բազուկ բարձր. զի յաւիտեան է ողորմ:

Ձեռն՝ զներգործութիւն ասէ. բազուկ՝ զզօրութիւն. քանզի՝ անաշխատ զամ ինչ կարէ, և ոչ վաստակի:

Եհերձ զծովն Կարմիր, և բաժանեաց յերկուս մասունս. զի յաւիտեան:

Ստոյգ են որ ասեն ըստ ցեղիցն բաժանեալ երկոտասանս:

Եւ անցոյց զԻէլ ընդ մէջ նր. զի յաւիտեան է ողորմ:
Ընկղմեաց զփարաւոն և զզօրս իւր 'ի ծով կարմիր. զի յաւիտեան:

Եւ ասա եւ՝ կշռեցաւ ողորմութիւն այ. զի ոչ ած ընդ մաւ զբաժանիչ ծովուն, և ոչ զայն թէ՝ չէ՛ նմա յանդգնել 'ի ճանապարհն իւրել. զփարաւոն և զզօրս իւր, զի և զորս կամակիցք էին թագաւորին. զի աչս որք ոչ նիւն զնա՝ ողորմութիւ այլոցն:

Եւ եհան զժողովուրդ իւր յանապատ, զի յաւիտեան է ողոր:

Զվեցհարիւր հազարսն՝ թող զկանայսն, և զանհամար մանկտիսն, մինչև ցքսան և մին ամն, և՚ի վեր քան զկաթ-մուն զծերունիսն՝ առանց թուոյ, կերակրել յանապատին զամս քառասուն ծնեցելովք անդէն, հանդերձիւք և կե-րակրովք մնացմանէր· և այն ը զազմոս և ը սողունս· զոր և մովսէս ասէր՝ որ եած զքեզ ը անապատն մեծ և ահագին որ օձն հարկանէր և կարիճն, և ծարաւն· որ այս միայն էր գործ: Զի յաւիտենական է ողորմութիւն նր, որ չէ նման ժամա-նակաւորաց, և մահկանացուաց՝ ողորմութիւն նր:

Եհար զազգս մեծամեծս մեծս· զի յաւիտեան է ողոր:
Եւ սպան զթագաւորս հզօրս· զի յաւիտեան է ողոր:

Առ այս հզօրք և բազումք, և առ զօրութիւն տն փոքր և գոլոչէ:

Զսեհոն զթագաւորն Ամովրհացւոց · զի յաւիտեան է ողոր:
Զովգ զթագաւորն Բասանու· զի յաւիտեան է ողոր:

Երկայն՝ ընդ կանգուն իւր կանգնովն, և հինգ լայն· զոր եհար այն՝ որոյ մեծութիւն ոչ գոյ չափ:

Եւ ետ զերկիր նց ՚ի ժառանգութիւն զի յաւիտեան է ողոր:
Ժառանգութիւն Իսրայէլի ծառայի իւրոյ· զի յաւիտեան է ողոր:

Զի ոչ տային անցանել ընդ երկիրն իւրեանց՝ գոնեա ոտիւք, և ոչ ծառայեցին արարչին իւրեանց:

Յիշեաց զմեզ Տր ՚ի խոնարհութեան մերում· զի յաւիտեան է ողոր:
Եւ փրկեաց զմեզ ՚ի ձեռաց թշնամեաց մերոց · զի յաւիտեան է ողոր:

Ոչ յառաքինութեան մերում, այլ ՚ի խոնարհութեան՝ խիստ ծառայութեան, կաւոյ և աղիւսոյն· և ինքն ասէ տծ՝ լուայ հեծութեան նց, և իջի փրկել զնս:

Որ տայ կերակուր ամ մարմնոյ· զի յաւիտեան է ողոր:

Որ ստեղծու կարօտ կերակրոյ, նա և կերակրէ զամ կենդանիս, յամ ժամանակս· ապա չէ զարմանք թէ զինչ կերակրեաց թուով ամաց:

Խոստովան եղերուք այ երկնաւորի· զի յաւիտեան է ողորմութիւն նր:

Յայտ է՝ զի և զերկնաւորսն իմանալի կերակրովք՝ ան-մահապէս նախախնամէ:

՚Ի

[illegible]

ՍԱՂՄՈՍ ՃԼԶ։

Առ գետս Բաբելացւոց, անդ նստաք և լացաք. յորժամ յիշեցաք մեք անդ զՍիովն։

Պատճառ լալոյն, զի յիշեցաք զսիոն կցուելով զաւերումն՝ Թէ ո՞ւր էաք, և ո՞ւր եկաք մեք մեղաց. սակայն՝ այնքան օգտեցան 'ի կրից, զի 'ի սիոն գոլով կուռս ընծէին 'ի տաճարին, և անդ զ յիշատակն չբերէին առանց արտասուաց. նմին իրի՝ և մարգարէն Թողացուցանէ զկիշան սգալ զարժանն։

'Ի մէջ ուռենեաց նորա կախեցաք զնուագարանս մեր։

Փոխանակ սենեկաց՝ 'ի սիոն. և յերաւե տարան զգերսն, զի մի մոռասցին զ յանդիմանիչ բանսն՝ որ 'ի նմա, զոր չլսելովն գերեցան։ Եւ զի՝ ինքեանք անպտուղք 'ի զոհից և 'ի պատրաստ էին, յայն սակս՝ յանպտուղ ծառս կախեցին։

Անդ հարցանէին գերիչք մեր զբանս օրհնութեան. գերեվարք մեր տանէին զմեզ՝ և ասէին։

Ոմանք յուսով մխիթարութն, և կէսք այպանութն տղայ գաւ. գերեվարքն՝ որք վարեցին գերի, և Թոյլ ետուն զկատակաբանսն բերել զնի, ասուլէին և ասէին։

Օրհնեցէք մեզ յօրհնութեանց Սիոնի. իսկ զիա՞րդ օրհնեսցուք զօրհնութիւնս Տն՟ յերկրի օտար։

Զոր լուեալ՝ ասէին, զիարդ օրհնեսցուք զօրհնութիւնս Տն՟ յերկիր օտար, ուր օտար պաշտելիք պատուէին, և երգ օտար հնչէր առ առն. Թէպէտ՝ և գիտէին, և երգէին, Թէ՝ Տն՟ է երկիր լրիւ իւրով. զի մի մոռասցուք ասեն զսիոն, վայ՝ և երդնուն եւս։

Թէ մոռացայց զքեզ Երուսաղէմ. մոռասցի զիս աջ իմ։

Որ է աջողուածն իմ. կամ աջն իմ, որում ասէին՝ կեցո աջով քո և լուր. և Թէ՝ Տր ընկալցի զիս՝ աջոյ ձեռամբն իւրով։

Կցեսցի լեզու իմ ՚ի քիմս իմ, Եթէ ոչ յիշեցից զքեզ. Եթէ ոչ նախ նախադասեցից զԵրուսաղէմ, սկզբան ուրախութեան իմոյ։

Մահուչափ երդնուն, մանաւանդ՝ հոգւոյն զրաւէ զնոյն երդմամբ, զի եօթանասուն ամ բնակելովն անդ՝ յիշմամբ ընդ մտի կայցեն։ Թէ ոչ նախ նախադասեցից, յորժամ լսեմ զբ հրամանն դարձին, այն է սկիզբն ուրախութեան, զոր օրհնելով ասացեր, հասեալ կացցեն ոտք մեր առ դրունս քո Եմ։

Յիշեա՛ Տէր զորդիսն Եդովմայ՝ յաւուրն Երուսաղեմի։

Քանզի՝ հայրենի մխիթարանն ունելով՝ յաւուր կործանմանն նեղեալ՝ յորդորէին զքաղդէս պարսպացն մինչեւ ՚ի հիմն, որոց ասաց ամ մարգարէին Երեմիայի, զհիմն թողէք զի Եմն է. վա՛յ ասէ։

Որ ասէին՝ քակեցէ՛ք քակեցէ՛ք, մինչեւ ՚ի հիմն հասուցէք։

Որոց ՚ի դարձին հատուցին փոխարէն։

Դուստր Բաբելոնացւոց թշուառական. Երանի՛ որ հատուսցէ զհատուցումն քո, զոր դու մեզ հատուցեր։

Զոր առնէ քեզ կիւրոս, երանի որ լինի կենդանի, տալ զհատուցումն քո՝ զոր դու մեզ հատուցեր, փոխարէն՝ զի զկուռս քո ոչ պաշտեցաք, զանմեղ զաղայսն մեր հարկանէիր զքարի, եւ վա՛յ այն ասէ։

Երանի՛ որ կալցի զմանկունս քո, եւ հարցէ զվիմի։

Զայս ասեն նք՝ զի ընդ օրինօքն էին, որ ասէր՝ ակն ընդ ական, եւ ատամն ընդ ատաման կորիցէ. այլ մեր պատուիրանն ՚ի բաց տանի զմեզ ՚ի յառնելոյ ընդ թշնամեաց, ասելով՝ սիրեցէք զթշնամիս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց, եւ այլն։

Սաղմոս ՚ի Դաւիթ։

Յետ դարձին զԶօրաբաբելին՝ որով հիմնեցաւ յեկեղեցին ՚ի ձեռն Բաղդասարեան աղօթից ասելով։

ՍԱՂՄՈՍ. ՃԼԸ.

Խոստովան եղէց քեզ Տէր՝ բոլորով սրտիւ իմով. առաջի հրեշտակաց սաղմոս ասացից քեզ։

Խոստովանիմք առեն վկայութիւն սրտից մերոց, թէ դու արարեր զյաղթութիւն զայս եւ զհրապարակս հրեշտակաց կերպարանիւ՝ իբր առաջի նոցա կացեալ՝ զօրհնութիւն առեալ ՚ինոցանէ՝ երգեցից քեզ գոհութիւն։ Այլեւ՝ առաջի պահապանացն մեր հրեշտակաց, որք զօրացուցին զմեզ, ընդ դէմ

դէմ թշնամեացն, և պատերազմակից եղեն մեզ և յորդորեն զմեզ սաղմոսել: Իսկ՝ ոմանք զքաջանայս ասեն հրեշտակ, որք սաղմոսել մեզ հրամայեն, և լինին մեզ առաջնորդ:

[illegible]

Զոր խնդրեցի բերանով՝ տուր ինձ յաղթութիւն։ Երկիր պագից 'ի տաճար սբ. քո՝ մարմնով, և հոգւովս խոստովան եղէց վս. ողորմութեան քո առ իս, և ճշմարտութեան՝ առ թշնամիսն, զի ճշմարտապէս հատուցեր նց։

[illegible]

Մեծ արարեր 'ի համբաւն՝ զոր տանեին զերծեալքն յամ յերկրէ, զոր թէ այլոք յանդգնեին, զնոյն ունեիմ հնարս կարդալ առ քեզ, և դու լուր ինձ. և բազում արարացես զզօրութիս յանձն իմ, զի զօրութի քո 'ի տկարութե իմ կատարեսցի։

[illegible]

Դարեհ և արտաշէս, որք դարձուցին զմեզ վս. քո. այլև՝ ամ թագաւորք՝ որք ոչ եկին ՟Է խաժամուժ ամբոխին 'ի վս. մեր. զի լուան զբանս բերանոյ քո, թէ եդից զհազարապետս յուդայ իբրև զկամբարս լուսոյ 'ի մէջ անտառին, որ գայ 'ի վս. նեղի, և կերիցէ յաջմէ և յահեկէ շուրջանակի, և կատարեցան բանքն. վս. այսորիկ՝ օրհնեսցեն զձայնապարհս քո՝ որ է առնելոց քո արդարութե. լուան յետոյ զայս, և երկիրպագին քեզ, զի զոր ասացեր՝ արարեր: Այլև՝ առաքելական քարոզութիւն, և նոյին աշակերտացն՝ կատարի առասցեալքս. զի լուան կոստանդիանոս, և արդատէս, և նախ քան զնս՝ աբգարիոս. զի լուան թէ՝ երթայք աշակերտեցէք զամ հեթանոսս. և օրհնեսցեն զձայնապարհս՝ զանօրէնս կանոնս ամենայն։

[illegible]

Որ անդ յենէմ, և այժմ յեկեղեցի։ Մեծ են փառք տն. բարձր է տր, զխոնարհս տեսանէ, 'ի հեռս բնակէ. և զբար

ձունս

ձունս 'ի հեռաստանէ ճանաչէ, հեռի ժամանակօք կանխաւ ճանաչէ. զի աստ որ խոնարհեցուցանէ զանձն ասէ բարձրասցի. և երանի աղքատաց հոգւով, հեռի ճանաչելով՝ զոր տալոց է նոցա:

Թէ գնացից ես 'ի մէջ նեղութեան, կեցուսցես զիս 'ի բարկութենէ թշնամեաց:

Փորձիւ ուսայ և յուսով հաստատեցայ. որ թէպէտ և գնացից ես 'ի մէջ գայլոց, ոչխար գոլով, կեցուսցես զիս. որ երբեք զաւրին գոչէ ստոյն մեր. որ ասացեր համբերողին խոպառ կեալ:

Ձգեցեր զձեռն քո՛ եւ փրկեաց զիս աջ քո. եւ Տէր հատուսցէ ընդ իմ:

Ձգեցեր 'ի վերայ խաչին. և փրկեաց զիս աջ քո՛ 'ի ձախմէ այծեացն. զի շատ սպառ էաք, և պարտիմք մարդ գոլով, Տէրն քո հատուսցէ հօր ընդ իմ, զի ես չեմ բաւական:

Տէր ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի՛ անտեսեր:

Որ նախ քան զլինելն Ծի ընտրեցեր զմեզ, և խորհուրդ մարդեղութեան քո սահմանեցաւ, ողորմութեամբ զգենուլ զանկեալ բնութիւնս մեր. և արդ՝ հայցեմք 'ի քէն անձառագութ, որ միայն ձեռագործ քո եմք յամ էքս, մի անտես առներ վս սակաւ աւուրց յանցանաց մերոց, որոյ հազար ամն երբեք զպահ մի 'ի գիշերոյ է. այլ միշտ աչք քո տեսցեն զմեզ գթութեամբ հօր և հոգւոյդ սբյ:

'Ի կատարած. սաղմոս 'ի Դաւիթ:

'Ի կէս օրինակս՝ [illegible] Զաքարիայ, որ է ասելն. [illegible] Զի Դն՝ Զաքարիա, որ 'ի [illegible] 'ի Բաբելոնէ, և [illegible] [illegible] և [illegible] 'ի [illegible] [illegible]: Այլ [illegible] [illegible] [illegible] [illegible], զի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], և [illegible] 'ի [illegible] [illegible] այս:

ՍԱՂՄՈՍ ՃԼԸ:



ՓՈՐՁԵՑԵՐ ԶԻՄ ԵՒ ԾԱՆԵԱՐ զիս. դու ծանեար զնստել իմ, և զյառնել իմ:

Փորձիւն մարդկան ոչ միայն աղքատութեամբ և ցաւօք, այլև հարստութեամբ և թագաւորութեամբ, և առողջութեամբ, որպ մեծա-

տունն

տուեմն, և ղազար. այլ` Ած ոչ 'ի փորձոյ ուսանի, այլ` զանազան գիտելն առ յԱծ պօղոսի, թէ որ քննէ զսիս` Ածր է. յԱծ որ ըզ քնաւն գիտէ. եւ ոչ գիտեմ զանձն իմ ասէ, դու ծանեար զնստելն իմ. և զյառնել իմ, զբոլոր կեանքն նշանակէ. ոմ սովոր եմք ասել, գիտեմ զնստելն և զյառնելն` այսր անուան: Այլ` զնստելն հրէից յեէմ, և զյառնելն 'ի տեղւոյն 'ի գնալն գերի:

'Ի միտ առեր զխորհուրդս իմ 'ի հեռաստանէ. զշաւիղս իմ և զշիջանս իմ դու քննեցեր, և զամ ճանապարհս իմ յառաջագոյն տեսեր. զի ոչ գոյ նենգութիւն 'ի լեզուի իմում:

Ցուցրս յերօբովամայ` զոր 'ի վր սեղանոյն ասաց մարգարէն` եկեալն 'ի յուդայէ 'ի սամարիայ, զոր յոլան կոչեն. ծնցի ասէ մանուկ 'ի տանէն յուդայ` յովսիայ անուն, որ հանցէ զոսկերս քրմաց քոց, և այրեսցէ 'ի վր քո: Այլ` զգերեալն 'ի բաբելոնացւոց կանխաւ ասէր մարգարէիւք, և վր դաւթի ևս` որ փորձեցաւ որդւովն: զվիճակս իմ դու քններ, եօթանասունքն` զլարավիճակս ասեն, որ է շինուած առաքինութեն` իբր լարիւ օրինօքն` զուղիղ վարս, որ վիճակ է մեզ Ածյ. և շաւիղ` նուրբ և նեղ ճանապարհ, որ ոչ ամի գնալի է: Եւ զամ ճանապարհս իմ յառաջագոյն տեսեր, զի յոլով են վարուց ընթացքն յԱծ օթևանայն. զի ոչ գոյ նենգութի 'ի լեզուի իմում, զի ոչ ստութբ ասէ պատժիմ. որ է կատարեալ և մեծ բարի` ամենենց լեզու, իբր անմեղ տղայոց` որոց է արքայութին:

Ահա դու Տր` ծանեար զյետինս իմ, և զառաջինս իմ. դու ստեղծեր զիս և եդեր զձեռն քո 'ի վր իմ:

Զբովանդակ կեանսն ասէ, զի Ած նախ զյետինն հայի քան զառաջինն: Այլ` զերւոյն բաբելոնի յետին, եգիպտոսին առաջինն. զոր Ած ասաց աբրահամու, եթէ ծառայեսցեն զաւակք քո յերկրի` որ ոչ լինին իւրեանց, զերկոսինն ասաց: Դու ստեղծեր ադամու, և եդեր զձեռն քո 'ի վր իմ, զի ձեռամբ ստեղծաւ, ձեռն եդեալ` իբր ձեռն թագաւորի 'ի գլուխ: Այլ` դնել ձեռն` զխնախնամելն ասէ, ոմ պահել, կերակրել, զգեցուցանել. և յօժար ձեռն դնել, նոյն է, և ձեռնադրել զնա թագաւոր:

Սքանչելի եղև գիտութիւն քո յինէն. զօրացաւ, և ոչ յաղթահարեմ նմա:

Թէ զայս թողում զառաջածս՝ զիս չեմ հերիք գի-տել՝ ո՞վ եմ ես, միտք, հոգի, մարմին. զի՞նչ մասունք, զի՞նչ գործ իւրաքանչիւրոյն առանձինն, զի՞նչ երկաքանչ-իւրոյն, կամ երիցն 'ի միասին. մեծ եմ, և փոքր. անմար-մին, և մարմին. անմահ, և մահկանացու. զօրացաւ անձնաւորն որ յիս, և ոչ համեմատեմ, չեմ հերիք ասա. Պարծիլ՝ սքան-չելի եղև գիտութի քո յինէն, ինև խրատեցայ ամ աղգք. զօրացաւ բարձրացաւ, և ոչ եմ 'նմա բաւական:

Յո՞ երթայց ես յոգւոյ քումմէ. կամ յերեսաց քոց ես յո՞ փախիցայց:

Հոգի և երես՝ զածութիւն ասէ. երես՝ յո՞ն մեր. և հոգին յի՞ ա͞ծ մեր. ուր և երթամք՝ անդ գտանեմք. թէ և մեղանչեմք՝ յո՞ գնամք՝ քաւել, բայց՝ արտաքս ո՞ն, և հոգւոյն սրբոյ արարչաւ, և 'ի խնդիր կենաց և անմահութե՛ն, փառաց և լուսոյ, մխիթարութե՛ն, թէ հօր, եղբօր, որդւոյ, այլ ի՞ քան թէ որ ասաց, ես եմ կեանք, և հոգին է կեն-դանարար:

Թէ ելանիցեմ յերկինս, դու անդ ես. եթէ իջանիցեմ 'ի դժոխս, և ան-դէն սոյ ես:

Իբր զերկիւ՝ զա՞ւ արարիր զհրեշտակս. թէ իջանեմ իբր զերկնից 'ի գերեզման, և անդ կենագործես զմեռեալս, և 'ի դժոխս առ գերեալ հոգիսն: Ո՞ւմ թարգման ասէ, թէ արկից անկողինս յերկրի, իբր թէ համդչեմ, և յաւիտեան մնամ, ո՞ղ զհակայման որ ջրով հեղձան:

Թէ առից զթեւս իմ ընդ առաւօտս, և բնակիցեմ յծագս ծովու:

Զմարգարէութիւն ասէ թէ. ընդ առաւօտս՝ որ է արեւելք. և բնակեցայց յեզր ծովու՝ որ է արեւմուտք, և հարաւ, և հիւսիս, որք ծավերզերեայք են ամենեքեան, թէ գը-նամք իբրև զյոյժան,

Սակայն և անդ ձեռն քո առաջնորդեսցէ ինձ, և աջ քո ընկալցի զիս:

Առաջնորդէ 'ինաւ, և տայ հոլմոյ և ձկան. և աստ՝ աջ քո ընկալցի զիս վերաբերել. և այսու ցուցանէ զնա՝ անբովանդակելի, և բոլորից արարիչ. զի չասաց թէ՝ 'ի հետ դաս, այլ թէ՝ անդ լինիս: Այլ՝ հաւատացեալ ոք մի ասի-ցէ 'ի սրտի՝ ո՞վ ելանիցէ յերկինս, որ է զ͞քս իջուցանել,

կամ

կամ ո՛վ իջանիցէ յանդունդս, որ է զՔս հանել 'ի մեռելոց. և կամ՝ յեզր ծովու տեսանել զՔն գնացեալ հետի 'ի ծովու. կամ ալեաց սաստել. կամ՝ հանել սատեր 'ի ձկանէ. այլ՝ զդիւրինն առնել, բերանով ասել՝ հաւատալ սրտիւ՝ ըմ գրելոցն վն նր. որք 'ի յանդէտ զօրութենէ նր՝ սակաւ ինչ չիմեք են, 'ի պատճառս հաւատալոյ միայն գրեալ :

Ասացի՝ խաւար ուրեմն արդեօք ծածկեսցէ զիս, կամ գիշեր փոխանակ լուսոյ փափկութեան իմոյ:

Այն՝ որ նախ քան զաստեղն երկնի լոյս, թէ անդ չլինի կամ գիշեր փոխանակ լուսոյ փափկութե իմոյ, այս գիշեր՝ որ փոխէ զտիւ, փափկացուցիչ մեր է : Սիմաքոս՝ և գիշեր լուսաւոր շուրջ է զինև. իբր որդւոցն Իէլի սեամբն հրոյ. Եւ այլ ոմն՝ խաւար մթին շուրջ էր զինև զթշուառականաւս, և ես ոչ գիտէի, զի լոյս՝ զփափկութիւն կարծէի. Եթէ ամն ոմանք զինքեանս հեշտութե փափկութե՝ ասելով չիք ինչ բարի՝ քան զուտելն և զըմպելն, կերիցուք՝ արբցուք, զի վաղիւ մեռանիցիմք, այնպիսեացն՝ խաւար շուրջ է անհաւատութե, և յուսահատութե 'ի յարութենէն. Ամենայն աստեղքս նշանակեն թէ՝ անսահմանափակ է ած և ոչինչ թագչի 'ի նմանէ, ըստորում ասէ.

Խաւարն 'ի քէն ոչ խաւարեսցի. և գիշերն ոպ տիւ լուսաւորեսցի. և խաւար նր ոպ լոյս նր :

Արդ եթէ ասէ այս ընտրութի լուսոյ և խաւարի, 'ի ձեռն ծղոյ և զգայութեց, և ոչ առ քեզ: Այլ՝ զնեղութի մշտայն կոչէ խաւար, զոր նեղեալքն կարծեն թէ՝ թողեալ է ած 'ի ձեռաց, կամ ոչ կարէ փրկել, երբ նեղեալքն յեգիպտոս և 'ի բաբելոն. սակայն՝ մերձ է ած և ձեռնհաս, որ ոչ միայն 'ի բաց տանելով 'ի նեղութենէն՝ դիւրութի առնէ, այլ՝ անդէն 'ի մէջ մշտայն, երբ երից մանկանցն, և դանիէլի. այլ՝ յեգիպտոս լինէր լոյս էր, և եգիպտոսի խաւար թանձրամած, ոպ և ասէ, խաւար նր ոպ լոյս նր. այնպիսի ինչ՝ ոպ յոլովմու խաւարն՝ գերութի նր՝ ոպ լոյս նր, ոպ էր Ը հօրն ազատուե, և 'ի փառք սորա, և անդ 'ի փրկութեանն ևս աւելի. Դարձեալ՝ զի ես խաւարն որ գրեալ է, եդ զխաւարն ծածկոյթ իւր, ոպ գայն՝ որ ասէ՝ բնակեալ է 'ի լոյս անմատչելի, զի երկրքեանն՝ անյայտութե ցուցք են. խաւարն՝ որ չտայ տեսանել, և անմատոյց լոյսն՝ որ չտայ մօտել տեսողին.

Դու ստացար զերիկամունս իմ Տէր, ընկալար զիս յորովայնէ մօր իմոյ:

Զի որ բոլորեցն է ստեղծող՝ և միայն, զի մի ոք ասիցէ թէ առ իս ինչ անըաւ բարերարութիւն՞ է. զի պատճառ գոյութեան մերոյ՝ 'ի սերմանէ, և 'ի ցանկութենէ է, որոյ աման երի կամունքն. այլ՝ հանձնարոյ ասեն զնա աեղի. սակայն 'ի խնամոց նոր ստացմանն այգեքին, երբ յօր առէ, ոչ կաթն կթեցեր զիս, և երբ պանիր մածուցեր զիս: Այլ՝ յարգանդէ մօրն ընկալար ծննդեամբ՝ յետ գոյացուցանելոյն, և սառուցանելոյն անաղաղ՝ երբ 'ի գիրկս խնամոց ընկալար Ճշմարտութեան հայր:

Սքանչելի եղև քոյ, զի ահեղ և սքանչելի են. սքանչելի են գործք քո, և անձն իմ գիտէ յոյժ:

Է՝ ինչ սքանչելի որ չէ ահեղ, երբ ծաղիկ, և գեղաղէշ դէմք և նկարք. իսկ՝ ահեղ և սքանչելի, ոչ ծով պայծառ կուտակեալ. զի առ մեծ է անդեղջ մերոյք զնացելոյն անկանել 'ի ձեռս քո: Սքանչելի են գործք քո, ոչ միայն որ յարարածս տեսանի, այլ՝ որ 'ի փորձանս վշտաց ծագես լոյս, և առնես փրկութիւն: Եւ՝ անձն իմ գիտէ յոյժ՝ նորութիւն փորձիլ երբ զոսկի 'ի բովս, քո առաքելոյ, 'ի խրատու համբերութեան կայք, երբեւ յորդ. ես մատուցեալ է 'ի ձեռն քո:

Ոչ ծածկեցաւ ոսկր իմ 'ի քէն՝ զոր արարեր 'ի ծածուկ. և գոյացութիւն իմ 'ի ներքոյ երկրի:

Զանազանութիւն արուեստին յայտ առնէ, որ երբ 'ի ստորինս երկրի 'ի ներքոյ հողոյ ստեղծու ոք ասօթս ինչ, այնպէս յարգս մօրն, 'ի թանձր, և 'ի նեղ և 'ի խաւարչուտ վայրի ստեղծու. ոչ պատեալ 'ի թուղթ ոսկերաց, երակաց, և ջլաց, աչաց, և ձախոյ, արեան, և խղի. զոր ասեն թէ՝ երեքհարիւր վաթսուն ոսկր. երեքհարիւր վաթսուն և հինգ երակք. այլ՝ սուղ գաղափանք երկուհարիւր քառասուն երկու ոսկր. երակք՝ երկուհարիւր յիսուն. ջիլք՝ հարիւր եօթանասուն. միունք ջլուաք շատք. այլև՝ կար զօրութեան 'ի ջիլն է և յոսկերսն, ուր զնէ ստեղծօղն:

Զանգործս իմ տեսին աչք քո. և 'ի գիրս քո ամենեքեան գրեսցին:

'Ի ստեղծմանէն գիտես զոր ինչ գործելոց եմ, երբև զեսաւ և զ յակոբայ՝ առաքեալն առէ, թէ մինչև բարի ինչ

կամ

կամ չար գործեալ էին, սիրեցաւ յախտ, և առեցաւ եսա. զի ընտրութեան ոչ յառաջնոցի։ Նոյ 'ի գիրս քո ամենեցուն գրեցան, այս է՝ 'ի յիշատակին ոչ արձանացան. զոր զանիէլ բանալ ասէ գպրութեան՝ յօրն դատաստանի, լաւն և վատթարին ընթերցմանի։

'Ի պահս ծուլութեան. և ոչ ոք էր որ առաջնորդէր նմա։

Ցուցանէ յարուեստաւորաց 'ի տուէ մոլորին յանձնելն անօթս լինել. զի ոչ ոք իբրև զգեղ որ՝ աչս ունի, որ անսըղալ առաջնորդէ նմա։ Սիմաքոս՝ ընդ 'ի տուէ ստեղծեցելոյն ուղնչ պակասեաց. ուր իէ՝ ոչ ստեղծուածն՝ յարգանդ մօրն ուղնչ պակասէ, քան թէ՝ յորժամ գործեաց զարարածս, յետ առնելոյն եղեցն լոյս, որ է տիւ, և արեգական ընթացք։ Հրեայքն պահէն ունելով, և զառաջնորդն կենաց՝ մոլորեցան և սպանին, և արդ՝ ոչ թագաւոր է նմա, և ոչ մարգարէ, որ առաջնորդէ նմա։

Խնչ յոյժ մեծարոյ եղեն՝ բարեկամք քո իմ. և յոյժ զօրացան իշխանք նմա։

Յոյժ մեծարեաց յօսնալ զբարեկամս իմ, և զօրացան իշխանքն. զոր սիմաքոս՝ տառապեալքն ասէ. զի չար թագաւորքն՝ կոծանէին նոքա և տառապեալ արարին. և ոչ թագաւորն մեծարեաց 'ի պատիւ։

Թուեցայց զնա՝ և քան զաւազ բազմասցին. զարթեայ՝ և տակաւին ընդ քեզ եմ։

Ոչ կարաց առնուլ զհամարն, զի էին իբրև զաւազ, ըստ խոստման զաւակաց աբրահամու. կամ զառաջինն էին իբրև զաւազ, և եղեն իբրև զաստեղս. կամ զերկնային բարեացն. կամ որք յանդիմանին սինայ՝ հայրապետք, և մարգարէք, և յիմնաւորք, և առաքեալք. կամ բարեկամք իմ յառաջ, և արդ՝ առաւել քան բազմացան իբրև զաւազ։ Մեծարեալ իշխանք՝ առաքեալքն, և տառապեալքն էին և սակաւ, բազմացան 'ի հաւատացեալսն՝ որոց ոչ գոյ թիւ. զաւ այն՝ որ իբրև զաւազ եմ արդ։ Զարթեայ և արդ ընդ քեզ եմ, իբր ասէ առաջնորդեցի, և արդ ընդ քեզ եմ անմահութիւն։ Այլև՝ յօսնալ 'ի կարգաւքն զերկրորդում օրինացն՝ իբր 'ի քնոյ զարթուցեալ՝ ասէ ընդ քեզ եմ զամ ը օրինացն, ը ոչ գոլով։

Թէ սպանանիցես զմեղաւորս՝ այ. արք արեանց 'ի բաց խոտորեցարուք 'ի ինէն։

Թէ սպանանես զմեղաւորս՝ ը օրինացն, արք արեանապարտք

'ի

՚ի բաց եղիցին յինէն, որք պղծէք ասէ, ընդ առաւօտս սպանանէի զամ մեղաւորս. յորում ոչինչ է նոցա մնալոց կեալ։

՚Ի հակառակութենէ և ՚ի նախանձ, առցեն ՚ի նանիր զքաղաքս քո։

Յոչինչ պիտանացուս ունին զքաղաքս քո, և լի առնեն խռովութեամբ. իբր հերձուածողքն զեկեղեցի։

Զատելիս քո Տէր՝ ատեցի, և ՚ի վր թշնամեաց քոց մաշէի։

Այսինքն՝ ոչ միայն ատեմ իբր զատելիս քո, այլ՝ ողորմիմ, և մաշիմ ՚ի վր նց դժուարով երբեւ ՚ի մարդկէն, և աղաղակելով, թէ զիարդ իշխեն լինել թշնամիք նմա՝ որ արարին զնոսա։

Ատելութեամբ կատարեալ ատեցի զնս, և եղեն ինձ թշնամիք։

Յորժամ ոչ խրատեցան, և ոչ դարձան, և փոխանակ ողորմելոյն իմ նց՝ թշնամիք եղեն։

Փորձեա՛ զիս Տէր՝ և ծանիր զսիրտ իմ, քննեա՛ զիս՝ և ծանիր զշաւիղս իմ. և տես թէ իցէ անօրէնութիւն ՚ի ճանապարհս իմ. և առաջնորդեա ինձ ՚ի ճանապարհս յաւիտենից։

Ես այսպէս կարծեմ ասէ, և պարկեշտանամ. այլ դու ՚ի վեր ես քան զգիտակցութիւն մտաց մերոց, փորձեա ՚ի բուն մարդասիրութեան քո, և զպակասն ուղղեա, և յայտնեալ առաջնորդեա ՚ի ճանապարհս յաւիտենից, աւետարանն ասէ, զի նա է լրումն օրինաց և մարգարէից. յաւիտենից՝ որ ասաց ես եմ ճանապարհ, և է յաւիտենից՝ ոչ ունելով սկիզբն, և ոչ կատարումն։

՚Ի կատարած. սաղմոս ՚ի Դաւիթ։
Կոտորէ ՚ի մէջ չարաչարացն, նա առնէ ՚ի մէջ փառնէլի, և նոյն ինքն Դաւիթ, որ հալածեցաւ ՚ի Սաւուղայ ասէր։

ՍԱՂՄՈՍ. ՃԼԹ.

Ապրեցո՛ զիս Տէր ՚ի մարդոյ չարէ. յառնէ անիրաւէ փրկեա՛ զիս։

Նախ՝ սատանայ կոչեցաւ չար, զի տրտմութք չարչարեաց զվերինսն, իւր անկմամբն, և զընտանին պատրանօք խաբեալ եհան ՚ի դրախտէն, չարացոյց զնա. և նոքն կոչեցաւ դատակ՝ և

և մայր չարեաց: Ած բարի է, և զնմ գոյսն՝ բարի կոչեաց, և կամեցաւ ած՝ և որդի նոյ կոչել զմարդիկ. իբր զմոլեգնս՝ նոյ ասաց՝ ես ասացի, որ է կամեցայ, թէ ածք լիջիք, և որ-դիք բարձրելոյ. սատանայ իւր անուամբն կոչելեա, զորս կարաց գործակիցս իւր առնել. զոր մեք աղօթեմս ապրել'ի չար մարդոյ, յառնէ յանիրաւէ՝ որ 'ի բաց եկաց յարդա-րութենէ, գնալով զկնի ցանկութեն մարմնոյ և մտաց:

Խորհեցան զանօրէնութիւն 'ի սիրտս իւրեանց. զօր ամ պատրաստէին 'ի պատերազմ:

մինն 'ի վեր խաղաղութեան եղեալ է, զոր յաճախ տան քահանայք զխաղաղութիւն ամենեցուն ։ Պատարագութեք ցուցնոյ, զի՞նչ քան զնա պարարտ, որ զամ միացեալ ունիցի համս որ յերկնից իջեալ, և կեանս տայ Տէր։ Լցոյց, զի անծախելի է և բաւական ամենեցունց։

Առաքէ զբան իւր յերկիր․ վաղվաղակի ընթանայ պատգամք նորա։

Զաւետիսն եհան․ վաղվաղակի ընթանան, շուրջ պատմէին համբաւ սքանչելեացն։ Դարձեալ զբան Նախախնամութեան ասէ, որով կարգաւորեալ ամ յօրինուածք Տեառն, բնական օրէնօքն տեղեկացեալ։

Դնէ զձիւն ոպ̃ զասր, և զմէգ ոպ̃ զմոխիր ցանէ։

Զի անընդհատ իջանէ ոպ̃ զբուրդ, և չտայ ցաւ ումեք։ Եւ զմէգ ոպ̃ զմոխիր ցանեաց, որ 'ի գիջութենէ օդոյ, և 'ի գոլորշոյ երկրի գործի յօդդ։ Այլև՝ այս գործ նախախնամութեան է, որով համբուցանել զերկիր ցրտութեք, 'ի գործելոյ զծնունդս բուսոց և անկոց․ և 'ի միոյ նիւթոյ գինոյ՝ 'ի ձեռն ցրտոյ և տօթոյ՝ առնել զցօղ և զանձրև ամարայնի վեր տօթոյն․ և կարկուտ յաղագս ցամաքման և բարկութեան . իսկ՝ ձիւն և եղեամն, և սառն ձմերայնոյ՝ յաղագս առնել ցրտութեան, սքանչելի արուեստիւն իւր . 'ի պատշաճ պէտսն։ Այլև՝ գործեալ լինի ամ թոյլ տալով փորձութեք՝ հողմոց և անձրևաց, կարկտաւանք ցրտոյ, 'ի ձիւն և 'ի սառն առնելով․ ցրտացուցանելով, և ձմեռն գործելով հոգւոց, և ընդարմացումն, և կապ սառնամանեաց, պատուհասք 'ի հերձուածս, և 'ի չարիս, դյալովս գրաւելով յանդգնչիցն՝ իբրև զամ հեթանոսութեան․ որպէս ասէ։

Արկանէ զսառն ոպ̃ պատառս․ առաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կալ։

Ցորժամ սառնել երեսք ջուրց՝ պինդ առնել 'ի վերուստ, ոպ̃ հալեալ մոմ, և արկեալ յամանս, նախ 'ի սառնումն պինդ առնու զերեսս, մինչև պակասէ բնաւ ջերմութիւն, և պնդի բոլորն․ ոպ̃ փորձութեք ցրտացեալ հոգւոց վատացն՝ առ սակաւ սակաւ բնաւ կորնչին։

Առաքէ զբան իւր՝ և հալէ զնս․ շնչեսցէ հողմ՝ և գնասցեն ջուրք։

Այսինքն՝ հրաման և ազդումն գարնան՝ հնչմամբ հարաւոյ․ ուր նախ հաւատացին , և ապա ուրացան, և շարժե-

ցին

ցին սաստիկ հալածումն. երբ յուղիանոս, կոստանդիին, և լի-
կիանէս փեսայն իւր. և օրելիանոս. երբ լուծանէր սատն, և
հալէր ձիւն, և յառնէին ուղխք, և բաղխէին զվիմաշէն տունն,
և ոչ կործանէր, և զխլրդանան չարչարեալք 'ի փորձանաց. և
ոչ բնաւ սասանեցեալքն 'ի կարծրութե քարանց : Ոչ 'ի շնչել
հողմոյն 'ի ձայն հողմոյ 'ի վերնատանն, և առաքեալքն յաշ-
խարհս տմ, տեղի ետուն ձիւնն և սառն և եղեամն կռապաշ-
տութե և չարագործութե, և անհաւատութե, և արձակել
հոգիքն կակղացեալք երևեցան ամենապատիկ բուսոց վայ-
ելչութեամբք, և գնացին ջուրք և գետք քարոզութե յն անջրդի
հոգիս. քաղցր աղբերք փոխանակ անխծից ջուրցն և հեղ-
ձուցիչ հեթանոսական ուսմանն, որք խոստացաւ տր հաւա-
տացելոցն. գետք բղխել յորովայնից նց։

Պատճ. զի՞նչ էր յաւելմայ, զարդարութիւն և զիրաւանց էր։

Զաքարիա և Մաղաքիա, և անգէտս 'ի դարձին պատ-
մեցին մտաւացելոցն զբանս երեւանց և արդարութե. զորս
պարտ էր առնել: Իսկ վն առաքելոցն որ նախ ասաց, առա-
քէ զբան իւր յերկիր, և վաղվաղ առաքեցան, և թուեաւ քա-
րոզութեն յն տիեզերս, մի թէ թուեցի, թէ զյակոբաւ
զանց արարին, ասէ աստ, թէ նախ նց պատմեցին. որք և ա-
սէին, նախ ձեզ պարտ է աւետարանել. այլ զի չարարին զան
ձինս արժանիս, աշակերտ դառնալք 'ի հեթանոսս, որք տրն
հրամայեաց, նախ մանկանցն պարտ զոլ կերակրել, որք զէ
ոչ ունէցին ինչ պատճառ ասել թէ՝ զմեզ զանց արարին
հպարտութե, և չոգան առ հեթանոսս. զի այն էր երեւանց
և արդար դատաստան. նախ՝ նց պատմել, որոց որդեգրու-
թին և պաշտօնն, և աւետիքն. յորոց հարքն, և քս ըստ մարմ-
նոյ. որ 'ի վն ամենեցուն է տծ օրհնել յաւիտեանս: Վսյ՝
ասէ:

Ո՞չ այսպէս ասաց տր մարգարէն տր. և զմարգարէութիւն էր ոչ յայտնեալ նոց։

Աստուծոյ չէ պարտ անհաւատար տալ զշնորհս, որոց
նա միայն է ստեղծօղ և խնամածու. այլ վն երկու պատճա
ռի նախապատուեցան հրէայքն. մի՝ զի աբրահամ հայր նց՝
ազնիւ գտաւ քան զազգս տմ. և երկրորդ՝ զի անապատ գո-
լով որդւք խիստք, և չարաբարոյք, հայրենի գթովք առաւել
հոգացաւ, զի մի կորիցեն: Այլև՝ ասէ սբն եփրեմ, զի՞նչ
աւելի արար նց, զի բնական օրէնս՝ հաստատակաց են. և

զծնեալն և զծնիչն, և զսուրբն, և հոգւոյ զարմանմանն, զոր ասաց 'ի սաղմոսին, միապէս հաւասարեալց. և զգրաւոր օրէնսն մով-սէսի հրէիցն, և յիսուս հեթանոսաց գրեալ 'ի վ̄ր սեղանոյն, յանցանելն է̄ յորդանանն: Այլ՝ զայս ասելով պարթուցանէ զնա 'ի հաստուցանեն երախտեացն իւր: Չասաց թէ՝ զայս չա-րար, այլ թէ՝ այսպէս չարար. զայս օրինակս՝ հանդերձ յե-գիպտոսէ հարուածովք. և 'ի ծովու և յանապատի գործել հրաշս, և հիացմամբ տալ օրէնս. սակայն՝ այլազգ որով հր-նարէր արբեցուցանել զմարդիկ՝ արար ա̄ծ ազգաց. որպէս հոմանիշեցեալ՝ կոստանդիանոսիւ. և հայոց՝ տրդատայ աքան-չելեօքն. և զոր առաքեալքն գործեցին է̄ ա̄ծ Տ̄ս. Իսկ մեզ պարտ է ասել քրիստոնէիցս, թէ ոչ այսպէս արար ա̄ծ ազ-գաց ա̄յլ. զի զնոքն եա մեզ, և 'ի մեզ է. և յաղագս մեր մինչև 'ի մահ խաչի համբերեաց. և զսոսկալին եւ՝ զմարմինն և զարիւնն իւր. զորդեգրութեան շնորհս. զապաշխարութիւն զկնի սղալմանն. և զայլսն ա̄ծ՝ զոր ոչ է դիւրին թուել: Իսկ զդաստապատմանն եւ մեզ յայտնեաց ասելով, յորժամ գայցէ որդի մարդոյ և նստցի յաթոռ փառաց իւրոց, և ժողովես-ցեն առաջի նր̄ա ա̄մ ազգք. այլովքն: Վ̄ս՝ պարտ է զգուշա-նալ ահիւ, յիշելով զպատուհասն բիւր քանքարոյ. զի ո-րում՝ շատ տուաւ՝ շատ խնդրեսցեն յերաւունքն զվճարն:

Աւելուածս. անգիտաց և զգաստոց:

Սովորութիւն է ա̄ծաշնչոյ գրոցս՝ 'ի զարմացման լինել առանձինն գոր-ծոց ա̄յ, և զնոյն անձամբ հրաշագործութեան նորա. և զարմանալ ընդ այնր՝ տալ նմա օրհնութիւն. ոչ միայն երկրաւոր էակացս և շնչաւորաց, այլև՝ զա̄մ արարածս շարժել 'ի նկարագրութիւն խաղաղութեան. երկինք երկինս մանկանցն 'ի հնչելն. և այլ մարգարէքն. զոր և դաւիթ 'ի բազում տեղիս, և ա-ստուծոյ ասէ յայսմ սաղմոսի՝ չոյն արքայէ ա̄յ բնակաց և մանկանց արա րանս, զմարմնաւորս, և 'ի զգայունս. զբանաւորս և զանբանս, զանշունչս և զմնչաւորս հրաւիրել յաւանդաւ: Եթէ և զարարչ մերոյին, և յայն-մանէ զաղաչանս բնութեանն՝ 'ի չար մերոյինն՝ մահու, և մեղաց, և դժոխոց. և զանարժանիւ հոգւով ասէ յաւաշինութ:

ՍԱՂՄՈՍ ՃԽԸ:



ՐՀՆԵՑԷ՛Ք ԶՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ.

օրհնեցէ՛ք զնա 'ի բարձունս:

Ուստի մովսէս զարարածոցս լինելն ասէ, անտի և մար-գարէս զօրհնելն սկսանի: Հոգւոյն ա̄ծ խօսի դաւթաւ հր-

բանին տալով, եթէ անդրանկաց նախ վերնոցն ասելով, օրհ-
նեցէք զտր յերկնից. և չասէ թէ երկիրք օրհնեցէք. այլ
թէ՝ յերկնից. եթէ թէ՝ օրհնընկալն բարձր է քան զնս, որ
յերկինս են։ Եւ օրհներգուք՝ զօրք երկնայինք, որք ընդ-
երկնի կենդանածնեալք էացան, անբաւն զօրութիւնք։ Զի այլ
գիտէ երկինս մարգարէս՝ ուր կայ աթոռ աստուածութեն, ասե
լոյն ձայնապարհ արարէք 'ի ձեռ այնմիկ՝ որ նստի յերկինս
երկնից. զի մաքուր լեզուք եղեւ զայն տեղի՝ ուր կայ նա։
Քանզի՝ ձեռուն է այ երկինքն՝ հրեշտակաց երկնիցն, եթէ
նոցայն մեզ. յորմէ օրհնել ասէ զտր, որ է յայտնաբանել,
պաշտել, և փառս մատուցանել։ Օրհնեցէք զնա 'ի բար-
ձանց. նշանակելով թէ՝ բարձունք են օրհնողքն, և օրհնելն
բարձրագոյն քան զբարձունսն։ 'Ի բարձանց ասելով՝ յայտ
է բարձրագոյն և երկնային վարուք, և անլռելի ձայնիւ օրհ-
նել վայելչապէս զտրն. քանզի՝ զտրն ասելով ցուցանէ թէ՝
ծառայական ահիւ և դողութբ։

Օրհնեցէք զնա ամ հրեշտակք նր. օրհնեցէք զնա ամ զօրութիւնք նր։

Մեծն Դիոնեսիոս՝ զհրեշտակսն ներքին դաս ասէ, և զզօրութիւնս՝ առանձին դաս կարգէ, որ միջին քահանայապետութեանն միջին է. 'ի վեր քան զիշխանութիւն, և 'ի վայր քան զտէրութեանցն դասս. ուստի՝ յայտ է թէ յերկնից և 'ի բարձանց նախ ասելն օրհնել զած՝ վերին քահանայապետութեանցն ասաց, որ ծայրք են ամ դասուց, և շուրջ զայով ասէն. ուստի՝ պատկառեաց զանուանսն կոչել, որք են աթոռք, քերովբէք, սերովբէք. այլ՝ միայն երկնայինք և բարձունք կոչեաց. և զտէրութիւնս և զիշխանութիւնս ը զօրութիւնս յարմարեաց. և զհրեշտակապետսն և զպետութիւնս՝ ը հրեշտակացն դասուց։

Քանզի երեք են դասք, և յերիս քահանայապետութիւնս որոշին, և ամենեքեան օրհներգուք են տէրութեանն այ. զի և տր անունդ՝ 'ի մի երրորդութե ասի, հօր և որդւոյ, և հոգւոյն սրբոյ նմանապէս։ Զի թէ ոչ էին տր՝ որդի և հոգի, նախ նց ասէր օրհնել։ Քանզի՝ այլ ոչինչ է միջոց տէրութե և ծառայութե, բայց եթէ այս. զի մինն օրհնէ արարած գոլով, և մինն ընդունի զօրհնութի՝ արարիչ գոլով և տր։

Այլ՝ երկնից և բարձանց հրեշտակաց և զօրութեանց են պատուէր՝ օրհնել զտրն՝ ասելովն, օրհնեսցեն զնա հրեշտակք նր. օրհնեսցեն զնա ամ զօրութիք նր։ Թերևս՝ չպատուիրէ և ոչ ևս հրաման տայ, այլ՝ վկայէ ասելով, օրհնեն զնա հրեշտակք նր. օրհնեն զնա ամ զօրութիք նր։

Դարձեալ՝ ամ երկնայինքն հրեշտակաց անուանմբ կոչին զի քուն ներքին դասք են․ և ամ վերնական դասքն ունին զնոյն պատիւն և զպաշտօնսն։ Իբր եպիսկոպոսք առ մեզ կոչին քահանայք և երիցունք, այլ՝ պաշտօնեայք, որ է սարկաւագ․ որպ յօհաննէս զինքն երեց կոչեաց, յերիցունէ առ կիւրիայ․ և առաքեալն գրէ առ տիմոթէոս, որ էր եպիսկոպոս, զպաշտօնդ քո կատարեալ կալ։ Իսկ՝ ներքինքս վերնոցն անուանմբն՝ ոչ կոչին սերոբէք․ և քերովբէք, և այլն․ զի ոչ ունին զնոցայն աստիճան․ որպ սարկաւագն՝ եպիսկոպոս ոչ ասի։

Այլ՝ հրեշտակն պատգամաւոր ասի և բանաբեր․ և ամ երկնայինքն յայ առնուն բան և պատգամ, կամ միջնորդիւ, կամ առանց միջնորդի․ և ածեն առ իրեարս, և առ մեր ծառայական, գոլով բանաբերս ամենեցունց։

Իսկ՝ զօրութիւնք չեն յետինք, թէ զնոցայն ամենեքեան ունիցին․ այլ զի՝ ամ մեա երկնայինն ունին էութի և զօրութի, և ներգործութի․ էուի կոչին, զի գոյութիւնք են․ և զօրութիւնք ասին, ըստորում զօրք են և կարեն ինչ առնել։ Արդ՝ երբեմն յէութենէն՝ էութիւնք կոչին․ և երբեմն ՚ի կարելոյն՝ զօրութիւնք․ ՚ի դէպ է թէ ասա զամ դասսն կոչեաց զօրութիւն՝ ՚ի զօրութենէն․ Որպ և այլուր՝ ՚ի բանաբերութենէն զամենեսեան հրեշտակս՝ ասելով, օրհնեցէք զնա ամ հրեշտակք նր։

Եւ զայս ասացեալ՝ ոչ յամէ ՚ի վերինսն պատկառանօք, զի մովսէս ոչ ճառեաց զառնելն նց․ բայց՝ դաւիթ ՚ի յասելն թէ արար զհրեշտակս իւր հոգիս․ յաղագս որոյ՝ փութով իջանէ ՚ի ներքոյ հաստատութեանցդ՝ ասելով։

Օրհնեցէք զնա արեգակն և լուսին․ օրհնեցէք զնա ամ աստեղք և լոյս։

Սոցա իշխէ հրամանս տալ․ զոր սիմաքոս՝ աստեղք լուսոյ ասէ․ յառաջնումն աւուր՝ լուսոյն հրամայեաց ած լինել և չորրորդումն՝ յանօթ արկեալ՝ զայն երևեցոյց արեգակն և լուսին և աստեղս։ Արեգակն՝ մեծակն, լուսոյ ակն․ զի լուսոյն սեռն և յստակ լոյսն ՚ի նմա է։ Լուսին կոչի, իբր թէ՝ լոյս ունի փարատիչ մթութե գիշերոյ․ որ փոփոխմամբն նշանակէ զայլայլական բնութիւն մեր․ որպ արեգակն մտանելովն՝ զմահն մեր, և ծագմամբն զյարութիւն։ Եւ զայսպիսիս ուսանելով ՚ի նոցունց, և կրելով օգուտ՝ օրհնեմք զար․ զի թէպէտ՝ անբանք են, պատմիչ են փառացն այ, և ընդ ամ երկիր ել բարբառք նց․ զի են պատճառք խօսից և իմաստութե և օրհնութե այ․ և երևմամբ իւրեանց ՚ի պէտս պայծառութե,

և

և գեղեցկութե՛ն, և ձրի և հասարակ բարեգործութեամբն իւրեանց։

Դարձեալ արեգակ՝ աւետարանին, և լուսին՝ օրէնքն. աստեղք՝ մարգարէքն, և առաքեալքն. լոյս երեք աւուրն՝ որ նախ քան զարեգակն, խոստովանութիւն յերեքանձնեայ ածութիւն. և առ մեզ ծրագաց լոյսքն, և պայծառացեալքն բանիւ և առաքինութբ։

Օրհնեցէք զնա երկինք երկնից. ջուրք որ ՚ի վերոյ քան զերկինս, օրհնեսցեն զանուն տն։

Երկինք երկնից՝ յայտ արար թէ՝ ուստի օրհնեն զած երկնայինքն՝ յերկրորդէն յառաջինն. որ է յերկրորդ երկնիցն ուր զօրքն կան, յառաջինն՝ ուր ած կայ, ստան զօրհնութիւն։ Եւ նմա ևս հրամայէ օրհնել, զի և նա եղանին է, որ ծածկէ զածային փառսն՝ ՚ի վերին բանականացն։ Եւ երկինք երկնից կոչելով՝ բազմաւորական. զի եբրայեցիք և մեք ևս՝ չունիմք երկորական անուն յատուկ, այլ յոգնականաւն կոչեմք. իբր զերկու մարդն՝ մարդիկք, և մարդք կոչեմք. այլ՝ զբազումն միաւորական, իբր աթենացի, կամ հայեցի, և հռոմայեցի։

Այլ՝ երկինք եկեղեցի. և երկնից երկինք՝ վերինն սիոն, օրհներգու տն. Ջուրք որ ՚ի վերոյ քան զերկինս, որ բաժանեցան ՚ի ներքին ջրոյս՝ յերկրորդում աւուրն, և ելին ՚ի վերոյ քան զհաստատութիւն, բարձր քան զնա՝ իբրև զերկին մի այլ. յորոյ վերայ ասի կայանք հրեշտակաց. և ելանեն ընդ նա և իջանեն, հրեղէնք գոլով, և ոչ շիջանին, նմա ասի օրհնել զտր, այնպէս հրաշիւք, և հրեղինացն լեզուօք։ Ջուրքն՝ որ ՚ի վերոյ ասէ և ոչ ՚ի վր հաստատութեն. ոչ ոք կարծեսցէ ումանք՝ բանական գոլ զջուրսն զայն, և լուսաւոր. և զներքինս ջուր դեխախեալ, և դիւականս. զի և սա իսկ օրհներգու է այ իւրով յոլովապատիկ բարութեամբքն։

Այլ՝ ջուրք ՚ի վերոյ երկնից ասի, աւազանն ածընկալ, որ զծնեալսն գեր ՚ի վերոյ երկնից առաքէ. զի այս է ջուրն՝ որ ՚ի վր գլխոյն յր արկաւ, և վերագոյն գտաւ երկնից։ Զանուն տն օրհնեսցեն, յաճախ է գտանել ՚ի գիրս հրամանն՝ օրհնել զանուն տն. զի ցուցցէ թէ խնկոյ բնութեան անգիտելի գոյ. զանուն նր՝ որ պարգևական է օրհնել հրամայէ, զի լի են բարութբ որ ՚ի վր այ կոչին անուանք, բարի, բարերար, գթած, ողորմած, և լոյս, ճանապարհ. և կեանք, և հաց ՚ի յերկնից իջեալ, և ջուր ծարաւեաց. և այլն։

Զի նա ասաց՝ և եղեն, հրամայեաց՝ և հաստատեցան։

Ցայտ առնէ թէ՝ մի՞ էր հրամայէ օրհնել զնոյն․ քանզի՝ պարտին առ է արարածք գոլ։ Զի նա ասաց"․ բանիւն այսու երբ չորս և իմաստք գեղեցիկք յանդիման կացոյց․ զի արար, և յոչէից արար։ Նա ասաց. և եղեն առէ․ որ է երկու, հրամայեաց դիւրաւ և անխափան․ զի ՚ի մերն հրամայել՝ չկայ աշխատութի․ և հաստատեցան, զպահելն առէ ՚ի նոյնութեն։

Կայոյց զնոսա յաւիտեան յաւիտենից. հրաման ետ՝ և ոչ անցանէ։

Այս այլ իմաստք, որ ոչ խառնակս իմն և շփոթեալս եթող զերկնային, այլ՝ կարգ եդ, և դաս, և որոշումն պատշաճ վերին լինել, և միջին, և ներքին․ իմանալիք, և զգալիք․ բանաւորք և անբանք․ իշխանք և իշխեցեալք՝ յամ կենդանիս․ և կացոյց զնախախնամութիւն կառավար և պահապան, կալ յիւրաքանչիւր բնութեն։ Սահման եդ, և ոչ անցանեն․ յայտ է՝ ը եդեալ սահմանն․ բացորոշ առէ, եդի ծովու սահմանս, եդեալ դրունս և փականս․ ասացի ցայդ վայր եկեսցես, և մի անցանիցես։ Սահմանք են բնութիւք և խառնմունք, և որպիսութիւք կերպից, և ձևոց․ տեղիք և կայք․ և ծնունդք կենդանեաց․ և եղանակք ՚ի տարիս՝ գարնան, ամառան, աշնան, ձմերան․ տիւք, գիշերք, ժամք, աջողուածք՝ ամենայն ժամուց առընթեր և գիշերոյ, որ և է տեսանել ՚ի սկզբանէ լինելութեան՝ մինչև ցայժմ, և կայ յաւիտեան, անձեռ և հրաշալի, և լի զարմացմամբ․ և գործ խորհրդոյ՝ զցայդ և զցերեկ։

Իջանէ յերկիր և ՚ի ծով, զի դրացիք են, և ջուր ծովու՝ ՚ի մի ցամաքի է․ և որք անդ ստեղծանին՝ խառն յերկրէ և ՚ի ջրոյ կենդանատեղծին․ իբր առէ։

Օրհնեցէք զՏէր յերկրէ՝ վիշապք և ամ խորք։

Զոր անդէտք՝ չար և վնասակար ասեն զնէտս, զոր մեշապ կոչէ, իբրև զկենդանութիւն որ սկիզբն է ստեղծման ջրոյ նոցին․ և յաղագս մեծութեն՝ վիշապ կոչի․ ասէ՝ ոչ օրհնեն զած․ այլ՝ օրհնեն զայն՝ որ արարին զնա․ զի յանհ և յերկիւղ տեսանաց են, և ՚ի զարմացումն խնամոցն այ․ զի յաննաւագնաց խորըս արկեալ զնա, զի մի վնասեսցեն զնաւորդսն։ Մեզ մի լիցի ասել զայն զբարացն։ Այլոց՝ հեթանոսք ոմանք ՚ի պաշտօն առին զայնպիսիսն, ցուցանէ թէ՝ չեն ածք, այլ՝ օրհներգուք Աստուածայինն այ։ Վիշապք որ յամ խորս․ զայն յայտ առնէ

զլմնամն՝ որ արգել զնա 'ի խորս: Եւ զի յօհաննէս այսպէս ասէ, օրհնեցէք վիշապք և ամ խորք. զի խորք ծովուց և ծովակաց՝ պղտորմունք են նաւորդաց, և մնունդ ծովայնոց. և կերակուր լուսաւորաց. և պատճառք օրհնութեն ամն սքանչելարարին: Այս ջուր՝ բերանով մարդոյ օրհնէ զած, երբ ջուրն վերին՝ բերանով հրեշտակացն. զի ամենեքեան այսպէս օրհնեն, կալով 'ի սահմանին՝ յոր եղեն անշունչք և անբանք, պահեցին և պահեն զսահմանս իւրեանց, և լինին ընդդոստուցիչ և շարժիչ յօրհնութիւն այ: Այլ՝ բանականք խոտորեցան 'ի վերնոցն՝ և ոչ օրհնեցին, և եղեն դևք: Եւ ադամ՝ որ չպահեաց, անկաւ յախտս, և 'ի ցաւս. և 'ի մահ անասնոց. և յայլայլմունս երկրի որք պահեցին զիւրեանցն. քանզի՝ յայլայլմանէ է նց կայականութիւն. զոր և երկնեն, և դժուարաւ բերեն. մինչև ազատեսցին 'ի ծառայութէ ապականութե յազատութի փառաց որդւոյն այ: Թերևս՝ ասեսն թէ սահմանն եդ և ոչ անցանեն, զի՞ նց է. իսկ՝ բանականացս սահման անձնիշխան կամքն է. քանի կամին՝ վերանան մինչև յածութիւն. և քանի ախորժեն՝ նուաստանան մինչ յոչէիցն ցանկութի՝ երբև դիմեացն աղգ. զի ցանկալի է նց չէութին՝ քան թէ յաւիտենից տանջիլն, ըն անվախճան էութեն իւրեանց:

Հուր և կարկուտ՝ ձիւն և սառն՝ հողմ և մրրիկ, որ առնէք զբանն նր:

Հրաշափառագոյնս ասէ, զհակառակսն 'ի միասին դասելով, հուր և կարկուտ. ոչ՝ յեգիպտոս եղև 'ի տանջելն զնս հրով, և կարկտիւ. և 'ի միասին կալեալ զհակառակսն, հուր 'ի մէջ կարկտին. որ 'ի բեկանելն կարկտին՝ հուրն այրէր զխսցեալսն: Իսկ՝ այլն ամ 'ի ջրոյ ունի զգոյութիւն. հողմով հիւսիսոյ փչելով՝ գէջ ամպ, և պաղեալ. և զնոսին կոտորեալս՝ առնէ կարկուտ. և փրփրեալ՝ առնէ ձիւն. և յերկրի զջուրն սառուցեալ միատարր՝ լինի սառն. և զալամուրքս ամպոց՝ լինի օդ մրրկեալ, և ըն փոշի զանկեալ՝ կոչի մրրիկ: Զսոսա բանն այ առնէ. և սոքա առնեն զկամս այ պաշտել 'ի ժամու՝ զարարածս խրատելով, կամ բարի առնելով փոփոխմամբ օդոյդ. կամ մարդկան. կամ տարերաց 'ի պէտս ինչ, զոր բանն գիտէ, և կամի. և ոչ անբանապէս յարմարեն այսոքիկ, այլ՝ հարկաւորեալք և բռնադատեալք 'ի խորհրդոց այ. և յորժամ կամի՝ թոյլ տայ սառուցեալ բարուց մարդկան բարբարոսաց՝ խրատել զազգս, բքաշարշար և հողմակոծեալ պատուհասիւք: Որպ 'ի մեր ժամանակս՝ զմ մեղաց մերոց անզղջականաց, ազգ հիւսիսականք՝ որք կոչին թաթարք,

յերկար առնելով մեզ զձմեռն յոլով ժամանակս. և է զի սակաւ ինչ մեղմանան 'ի յօդ հանդարտ՝ 'ի քաղցրութեան այս վառն շունչ կլանելոյ տագնապեալ անձանց:

Լերինք՝ և ամ բլուրք՝ փայտք պտղաբերք՝ և ամ մայրք:

Լերինք՝ որ ծնօղք են աղբերականց և բլրոց և բանջարոց, 'ի պէտս բժշկութեան դեղոց. և բնակութիւնք եղջերուաց, և մեծ և մանր երէոց, որով օրհնեն զԱծ: Այլև՝ լերինք մեք ամ հրեշտակք և նահապետք, և արդարք, բարձրագոյնք ածպաշտութե և առաքինութե: Ծառ պտղաբեր՝ 'ի պէտս կերակրոց, և 'ի վայելչութիւն աչաց, և 'ի հոտ ռնգաց, 'ի ծաղկոցս և 'ի բուրաստանս, զորս պատուէրաց, և մեկուսի դաշտաց յանտառաց: Եւ զկնի եբեր զամ մայրս. որք են և նոքա պիտանիք՝ 'ի շինուածս և 'ի հուրս, և 'ի բնակութիւն գազանաց, և 'ի դադարս թռչնոց. իբրև իշխանք և թագաւորք և զօրողք երկրի՝ խակասիրտք և դառնակեք յառաքինութե. սակայն՝ պիտանացուք 'ի շինութե աշխարհի. թէ պէտ լուցկիք են գեհենոյն:

Գազանք՝ և ամ անասունք. սողունք, և ամ թռչունք թեւաւորք:

Գազանք՝ յերկիւղ չարագործաց, և անասունք՝ 'ի ծառայութիւն մարդկան. և գազանք՝ վա պատառողութեան կոչին զոր մեղքն մեր գազանացուցին. զորս պարտ է 'ի տեսանելն զնա՝ գալ 'ի յիշատակ չարեացն մերոց. և լինել իբրև զնոյ և զդանիէլ, որոց ոչ գազանացան: Անասունք՝ զի անխօսք են և անմտականք, նշանակեն պարզամտաց, ոպ գազանք՝ խորամանկաց: Սողունք և ամ թռչունք, 'ի մի յարեաց զսոսա յիշատակն զի ոպ սողունքն ընդ երկիր և ընդ ջուր սողին, նոյնպս՝ թռչունք ընդ օդս. սողունք մեք 'ի կերակուր, և ոմանքն և թունաւորքն 'ի պէտս դեղոց, և չարիք և դաժնիկք խստապարտից: Նոյնպս և թռչունք 'ի կերակուր և յառողջութի, և 'ի ձայն քաղցրութե 'ի հրճուանս մարդկան: Այլև՝ նշանակեն պէսպէս ախտից և բարուց, սողունք և թռչունք՝ առաքինեաց և հպարտից:

Թագաւորք երկրի և ամ ժողովուրդք. իշխանք և ամ դատաւորք երկրի:

Կարգաւ դնէ տե՛ս եկն գործոցն այ՝ յերկնէ յերկիր իջեալ և 'ի դըրացն իւր՝ 'ի ծով, և ճանապարհորդեալ ընդ լերինս և ընդ դաշտս, և ընդ ամ կենդանիս ջրայինս և ցամաքայինս, զկնի

ամե

ածի գայ 'ի մարդս, երբեւ մաքրեալ՝ որ զբնութիւն յաւիտենից եղոց ածի. իսկ՝ մարգարէս զհետ աստեղծմանց գայ, որ 'ի մարդկանէ բնութեան, նախ նա հրամայէ պահանջել և օրհնել, զի պատուէրան քան զծառայակիցս իւրեանց. մի ուղելով բնութիւն, զի երանութիւնք դատեսցեն և արդարութիւն, յիշելով՝ զի և նա որ գայ յերկինս. զոր օրհնել պարտ է քանի և գործով, նմանիլ նմա՝ երանութիւնք. զոր և առաքեալ ասէ, ոչ ուրեք է իշխանութիւն, եթէ ոչ յայ, և հրամայէ հնազանդ լինել նմա:

Երկրպագութեան և հնազանդութեան, ծէսք և փառք՝ օրհնութեան զանազան այն :

Զի յայտնելով հաւատն յորում և եղեն, զհանդէս առաքինութեան ցուցցեն արժանաւոր հաւատոյն, զգուշասցին 'ի մեղաց և գործեսցեն զբարիս. և կատարելութիւն այն. երկիւղածութիւն երկիւղագործ. ծերք գոհացողք, և խոստովանաք մի՝ ողորմութեան առնել գինէ, և պերճացուցին և զկուսանս առաջնոյ, զորս խրատելով յառաջ է մտուցեալ, և ինքն 'ի մէջ նոցա, տեսանելով շուրջանակի զվարս ամենեցուն:

Բարեխօսութիւն նոր կտակին. խոստովանութիւն նմա յերկինս և յերկրի :

Մարգարէանայ զբաւանդակ կատարելութիւնն, յորում յանուն այն քնի ամենայն կոչնի. խոստովանութի նմա յերկինս և յերկրի. նախ՝ յերկինս միայն խոստովանեալն զնա, և ապա՝ յերկինս և յերկրի, իջեալ յերկնից 'ի յերկիր. դարձեալ ելանէ 'ի վեր 'ի մի յարելով զերկուսին ծայրսն, զի ոչ գոյ այլ ած յերկինս 'ի վեր և յերկիր 'ի խոնարհ. քանզի՝ որ էջն յերկնից՝ նոյն է որ ել 'ի վերոյ քան զամ երկինս. զի լցցէ զամ իւրով խոստովանութեամբն:

Բարեխօս մանէ նոր վեհագոյն քաղաքավարութեան իւրոյ. օրհնութիւն յամ ազգաց նմա. յարգարոյն կէս քաղաքաւորաց՝ որ ծերն է առ նա :

Երջանիկ անուանեալն զզօրութիւն ասէ այ, որ եղջիւր՝ նր կենդանեացն է, և որ նր քաղաքավարեան իւրոյ, այն է՝ որ է այ զօրութիւն, և իմաստութիւն, և տունն միաւորութիւն հօր՝ մանուկ և որդի, և եղջիւր փրկութե. Օրհնութիւն յամ սրբոց նմա պատմէ զօրքոյն պարն՝ զորս ոչ արժէ [illegible]. զի նա փառաւորեալն է յերկինս և յերկրի օրհնել զած. և մեղաւորին ասէ դաւիթ իսկ դու ընդէր պատմես զարդարութիւն իմ. զոր 'ի դէպ է մեղաւորքս դառնալով 'ի մեղաց՝ նոքօք օրհնեմք զած նախ,

և

և յոյս ունիցիմք գալ ՚ի մեզ առաւելութիւն նր̅ ՚ի մեր պակասութիւնս. ը̅ որս դասակցեալ օրհնեմք ը̅ նս̅։ Ցորդւոց լինել, ցուցանէ թէ մեք ած̅ որդիք լինել կոչեմք ը̅ առաքելոյն, որ խնդրէր խաղաղութիւն ՚ի վր̅ լինելոյն այ̅. զի ոչ որք մարմնոյն՝ միայն համարին ՚ի զաւակ, այլև՝ որ ը̅ հոգւոյ. ըստորում ՚ի վր̅ բերէ՝ ժողովուրդ որ մերձ է առ նա. ոչ տեղեաւ՝ զի նա ոչ է ՚ի տեղւոջ, այլ՝ առաքինութեամբ. որոց ոչ իցէ միջոց և որոշումն մեղքն, որ ասաց, ած̅ մերձաւոր եմ ես և ոչ հեռաւոր. այլ՝ մեղքն ձեր որոշեն զձեզ ՚ի ձէնջ. զի ը̅ յորի այ̅ մերոյ ուր երկու և երեք ժողովեալ են յանուն նր̅, կայ ՚ի մէջ նց̅ օրհնեալն յաւիտեանս։

Ալէլուիա. Անգեայ և Զաքարիայ։

Ցէս զարդին օրհնութիւնն այս ճշմարտութեան. այլև՝ հասարակ յարութեան ճաշակութեանցն յաղթութեան. և առաջին և՝ նոր ժողովրդեանն օրհնութեան է, որ ասէ։

ՍԱՂՄՈՍ. ՃԽԹ։

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն ՚ի նոր. օրհնութիւն նորա յեկեղեցւոջ սրբոց։

Արդարև քեզ վերկնեալք նոր ուխտիւն՝ որ ասաց, այս ուխտ նոր է իմով արեամբ, ըստ պօղոսի, բայց եթէ ՚ի քս̅ նոր արարած իցէ. արդ՝ սոցա վայելէ նոր օրհնութիւն յամենայնի երրորդութիւն, և ՚ի միասնական ածութիւն՝ տալ զգոհութիւն. յեկեղեցիս սրբոց, ՚ի ժողովս սրբոց. զի ամենեքեան ՚ի մի բերան փառաւորեսցեն զաստուած միշտ և հանապազ։

Ուրախ եղիցի իսրայէլ յարարիչ իւր. որդիք սիօնի ցնծասցեն ՚ի թագաւորին իւրեանց։

Նորս լինել՝ նոր արարած եղեալ, և ոչ հինն՝ որ սպան զայն՝ որ արարն զնա. որդիք սիոնի վերինոյ՝ ցնծասցեն ՚ի թագաւորին քս̅, ըստ գաբրիելի.

Օրհնեսցեն զանուն նորա օրհնութեամբ. սաղմոսիւ և օրհնութեամբ սաղմոսասցեն նմա։

Զանուն նորին օրհնելով զյս̅ քս̅՝ սաղմոսիւք և օրհնութբ̅. նորա գործեօք և մեր բերանով։

Հաճի Տր ընդ ժողովուրդս Տր իւր. Եւ բարձր առնէ զհեզս 'ի փրկութիւն:

Որոց հովիւ եղև և ասաց, ժառանգութիւն իմ հաճոյ ե_ ղև ինձ. և բարձր առնէ զհեզս՝ որոց ասաց, երանի հեզոց, զբարձր երկիրն տալով:

Պարծեսցին սուրբք փառօք՝ եւ ցնծասցեն 'ի հանգիստս իւրեանց. Եւ բարձր առասցեն զԱծ կոկորդանօք իւրեանց:

Փառօք՝ որ է խաչն, որով պարծի առաքեալն. որ նա է փառք Քի, որով փառաւորեցաւ՝ ըս յօհաննու աւետարան_ չին: Եւ ցնծասցեն 'ի հանգիստս իւրեանց, սիմաքոս ասէ յան կողինս իւրեանց. հանգիստն է՝ զոր Տր ասաց, եկայք առ իս ամ վաստակեալք, և ես հանգուցից զձեզ: Եւ բարձր առաս ցեն զԱծ բերանօք իւրեանց, խոստովանելով զբարձրանալն Քի 'ի խաչին, և զամենեցուն առ ինքն ձգելն. զի սրտիւ հաւատամք, և բերանով խոստովանիմք:

Սուր երկսայրի եւ 'ի ձեռս նց, առնել հատուցումն 'ի հեթանոսս, յանդիմանութիւն ամ ժողովրդոց:

Զի սրով և աղօթիւք վանեցին զդևս, և մակաբայեցիքն զանօրէնս: Այլ՝ սուր բանն է, զոր Քս եկն արկանել յեր կիր՝ զբաժանարարն, որոշեալ զհաւատացեալսն յանհաւա_ տիցն. զոր և առին առաքեալքն զհին և զնոր կտակարանսն որով առին հատուցումն 'ի սատանայէ, սատակելով զնա, և հա նելով 'ի նմանէ զազգս մարդկան, յանդիմանեն ամ երկիր, կոր ծանելով զմեհեանս և զբագինս նց: Այլև՝ երկսայրի սուր՝ զի կապէին և արձակէին յերկինս և յերկրի. զսատանայ կա պեցին, և զհեթանոսս արձակեցին 'ի կապանաց նր յերկինս արձակելով. որ յուղարկելով ասացեալ է՝ զվերինն խորհե ցարուք:

'Ի կապել զթագաւորս նց կապանօք, զփառաւորս նց ձեռնակապօք երկաթեօք:

Որք թագ էին եղեալ և շուք անձանց՝ 'ի գալն 'ի վր Եէմի, որք կապեցան անդէն, և զօրավարք նց 'ի ձեռս կա_ պեցան երկաթով. և առ մակաբայեցւովքն ահիւ կապեցան թագաւորք, և զօրավարք նց յԵէմ. որք և յետ կապելոյն՝ հատան ձեռքն, եւր 'նիկանովրայն՝ զոր հատին և կախեցին 'ի դրան տաճարին: Այլև՝ զթագաւորս հեթանոսաց կա_ պեցին առաքեալքն 'ի սէրն Քի. որք սնոտեաւորս զկռոսատան_

դի

գլխանոս. և սրբոց գրիգոր զարդարանս. և զզօրութիւն նոցա՝ զիշխանս և զզօրագլուխս՝ ոչ միայն հաւատովք ՚ի Քս, այլև՝ ձեռակապօք, որ է ծանր և վստակուռ ձեռօք առաքինութեն:

Առնել նոցա դատաստան ՚ի գրոց. փառք այս են ամ սրբոց նր:

Զոր նախ գրեցին մարգարէքն՝ մովսէս և այլքն ըղ յաղթութեն ինչի, և այս փառք է՝ զոր տան նմա ամ սրբք, ուրախացեալք ը̄ փրկութե աշխարհին իւրեանց: Եւ յա̄ ամ մեր դատաստանաւ մարտեաւ ը̄ թշնամին մեր և ոչ ամաչար, այսպէս ՚ի դատաստան եկի յաշխարհս յայս. Եւ զայս գրեցին մարգարէքն զաղաչանս իւրեանց, արի տր և դատեա զերկիր. արի տր հրամանաւն՝ զոր պատուիրեցեր. և այս՝ փառք է և պատիւ յամ սրբոց, յերկնաւորաց և յերկրաւորաց, զի զաղաչանս նոցա լուաւ, և եկն ՚ի կեցուցանել. վս՝ ասէ դաւիթ, օրհնեալ է տր որ ոչ ՚ի բացեայ արար զաղօթս իմ. և բարձր առնեմ զքեզ տր՝ զի ընկալար զիս. եւ սուրբքէքն երգեն, սբ սբ սբ տր զօրութեանց, լի են ամ երկինք և երկիր փառօք նր. իբր ՚ի ծննդեանն հրեշտակք և հովիւք ասէին, փառք ՚ի բարձունս այ և յերկիր խաղաղութի. եւ քերովբէքն յեզր քոբար գետոյ, օրհնեալ են փառք տն ՚ի տեղւոջ իւրում. և մեք զամէնն ասեմք, եղիցի եղիցի:

Ալէլուիա. անգէի և զաքարիայ:
Յաղագս աւրհնութեան է և այս, յաղագս ընծայից յամ մարգարէից՝ ամենայն նորութեան, որ ասէ.

ՍԱՂՄՈՍ. ՃԾ:

Օրհնեցէք զած ՚ի սրբութեան նր. օրհնեցէք զնա ՚ի հաստատութեան ՚ի զօրութեան նր:

Եօթանասունքն ասեն՝ օրհնեցէք զած վս սրբոց նր. որ մեծ և բաւական սպասաւորք են սրբքն՝ օրհնելոյ զած. զի թէ վս անկոց և դադարմանաց ընկալաք հրաման օրհնել զած, որչափ ևս առաւել վս սրբոց նր: Զի ո՞ անձանէր զերանելին զպօղոս, կամ զած ընտիրն զպետրոս, բանիւ քարոզութեն սպասաւորեցեալ. կամ զյաղթ ազգեաց վկայսն. կամ զայժմու ուղղիչքն առաքինութե, և ոչ շարժէր. կամ արդ ևս ոչ շարժի յօրհնութի տեառն զնն մեղ: Զած ասելով՝ զհաշտականն և զբարերարութեան անուանն. ՚ի հաստատութե, վս անմահ և հաստատուն կացեալ զօրայն, որք զգուշանային մեղ աղօթիւք և պահպանութբ. զի ինչքն կայ յանանցութե, և պահէ զնն:

Օրհնեցէք զՏէր ՚ի պտղաբերս ծառս. օրհնեցէք զՏէր ՚ի բազմազան մրգոցս նր։

Երթամնասունքն հնչմամբ փողոյ ասեն. զի գործ ի էր և այս՝ քահանայապետական, առ ՚ի յիշատակ լերինն Սինայ։ Գովեցէք զնա տաւղօք. գովեցէք զնա ծնծղայիւք յորդաձայնիւք։ Հրէայքն խաղալիք և լինիք էին, ՚ի մեհեանս եգիպտացւոցն սովորեալք, թող եւ իւրեանց սովորութիւն յարենալ ՚ի մեր։ Ըհ՜ արդ՝ ասէ ՚ի բաց արա զձայն երգոց քոց։ Օրհնեցէք զՏէր՝ որ զօրացոյց զմեզ ՚ի գիտել զնա. ՚ի բազում մեծութեան նր, և ո՞ կարէ հաւասարել մեծութեան նր զօրհնութիւն, և ոչ ոք, այլ ըստ կարի ջանալ պարտ է։

Օրհնեցէք զՏէր ՚ի ձայն օրհնութեան. օրհնեցէք զՏէր սաղմոսիւք և օրհնութեամբ։

Զայնական գործեօք, որ ՚ի ընութես. սաղմոսիւք, դաւթայ և այլոց մարգարէից երգովք։

Օրհնեցէք զՏէր ցնծութեամբ, գովեցէք զՏէր ուրախութեամբ։

՚Ի խղճէ մաքուր աղաւ սիրտ՝ ցնծութբ օրհնէ զՏր։

Օրհնեցէք զՏէր ՚ի ձայնս փողոյ. գովեցէք զՏէր ՚ի ծնծղայս բարեհնչիւնս։

Ցած ձայնիւ. այլև՝ առ մարդիկ քաղցր բարուք լինել։ ՚Ի բարբառ լսելի, որ և այս լինի բարեգթութբ և ողորմութբ, որ ասաց՝ մինչդեռ ՚ի պատիւ խօսեցիս՝ լռեայց քեզ։

Օրհնեցէք զՏէր ՚ի ձայն գոհութեան. ամ հոգիք օրհնեցէք զՏէր։

Այսինքն՝ ամ ազգ մարդկան, զի երբեմն ՚ի մարմնոյ կոչի բանականս, և երբեմն ըստ հոգւոյ. ըստ այսմ՝ օրհնեսցէ ամ մարմին զՏէր. և առ քեզ ամ մարմին եկեսցէ. և աստ՝ ՚ի հոգւոյ բանականէ յորջորջէ զբոլոր ազգի մարդկան. իբր թէ՝ խրատեալքն ՚ի բոլոր սաղմոսացս հարիւր և յիսնիցս՝ ՚ի բաց ընկեցեալ զմարմնական ժանգ և զաղտեղութի, և հոգւոց եալք օրհնեն զՏէր ըստ հոգեղէնսն, զի անդ կատարի խորհուրդն այս, յորժամ ՚ի դասս նր կարգէ զհոգեղէնքս՝ հրեղէն նորոգմամբ. զոր և մարգարէս իմացեալ՝ էարկ հիմն զերանութիւն՝ որ մկրտութեան անկլին ՚ի գնացս ջրոց, և տան ըստ պտուղն ՚ի ժամու, որև աւարտեաց ՚ի խաչն. որ է այս սաղմոս՝ կատարումն ամէ, որ է խաչն, որ ասաց, օրհնեցէք զՏէր ՚ի

'ի սրբութեան նոր. զի զխաչն կոչեաց սրբութի, եւ նովին իսկ արար սրբութի մեղաց մերոց ։ 'ի հաստատութեան 'ի զօրութեան նոր ասելով՝ զեկեղեցի եցոյց կառուցեալ 'ի զօրութեան նոր, եւ 'ի բարձրութեան մեծութեան. զի եւ 'ի վերոյ քան զամ երկին՝ մարմինն խոնարհ։ 'ի բանս քաղցր, զի մեղր եւ կաթն բղխէ 'ի ներքոյ լեզուի հարսին եկեղեցւոյ. զոր վկայեն տղայք նորա ասելով, քաղցր են ստինք քո քան զգինի. եւ քաղցր են 'ի քիմս իմ բանք քո քան զմեղր. եւ 'ի բարբառ լսելի, յասելն՝ եկայք օրհնեալք հօր իմոյ. յորում ամ հոգիք 'ի հոգեւոր կեանսն՝ հոգեւորապ օրհնեն զած 'ի ձայն գոհութե. եւ քաղցր եղիցի նմա օրհնութի մեր. զի պակասին մեղաւորք յերկրէ. եւ սրբեսցին արտասուք ամ եւ քերոն դատապարտութե, ցաւք, եւ հեծութիւնք, եւ տրտմութիւնք։ Նախ՝ ասի 'ի Ձխղ. սաղմոսին ամ մարմին, եւ ապա՝ ամ հոգիք. զի հոգւոց եւ մարմնոց արար չէին՝ սպարտին արարածքն օրհնութե։ Այլ՝ արժանապէս երգիչքն ձծ սաղմոսացս՝ հաւատալի է, զի հոգեխառն հոգեխառնեալք յամենեսանբ հոգւոյն երգեցեալ սաղմոսս այս, 'ի համարս մտեալ հոգեղինացն դասուց. որոց գործ է միանգամայն եւ յաւէժապէս բերկրանօք օրհնել զած՝ յերիս անձինս եւ 'ի միում բնութեան, զհայր եւ զորդի եւ զամենասուրբ հոգին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

Որոյ յուսով՝ յեցեալ 'ի հաւատոյն անկշիռ, անչափ, անհամար, անեզր, անսահման, ողորմածին ամ, Վարդան մեղաներկ մարմին, ելի բ երկնագնաց ուղիս, բուռն հարեալ զողորմած ձեռացն քո, եւ զեկեղեցւոյ նոր, հասի յաւարտս 'ի Տն՝ տուեալ զբիւր քանքար պարտուցն իմոց 'ի սաղմոս, եւ յաղօթս՝ նախ քան զմեզ գնացեալ առաջնորդացն մեկնողաց հոգեխաղացեցից. եւ 'ի յիշումն թուն՝ ազատել անկուսնիմ յազատարարն՝ եւ յուծարարն հոգին սբ. ապաւինեալ, յիմս ուրախութի մեծարելով զազատ մանկունս եկեղեցւոյ, եւ զընտր արարածս, բոլորեւք եւ մասամբք բազմապատկեալ. աղաչելով զորսն՝ զեմմանուէլս եւ զգալիս որքան կամի, եւ կարէ, ընդունել յամենեցունց, յաղագս իմոյ փրկութեան. խնդութի եւ յօժարապէս ցնծութի օրհնութի, գոհութի, փառք, պատիւ, եւ երկրպագութի, 'ի սկիզբն հիմնարկութեան արարածոց՝ մինչեւ յօրս յայս, եւ մինչեւ ցկատարումն արարածոց, 'ի նորանալն երկնի եւ երկրի, եւ անզրաւ յաւիտենին. Եւ եւ՝ եւ յիւրում անսկզբնութեան, եւ յանվախճանութեան, բարեբան փառաւորութի օրհնեսցի անկարօտն բնութի, լի պահելով զեկեղեցի եւ զաշխարհ, գթութի եւ ողորմութի եւ փառօք իւրովք. զամէնն եւ զերկիցէն ասաս-

ցեն համարձակագոյնքն և մերձաւորքն նր սբք ամ երկնաւորք, և երկրաւորք, որք էին, և են, և լինելոց են. անմեկնելի զմեր նուաստութիս կամելով ինքեանց, և յոյժ հայցելով յամենողորմ տէն և 'ի բարերարն բարւոյն յաւիտենս. ամէն:



Այս սաղմոս ինքնագիր Դաւթի արտաքոյ թուոյ: 'Ի ժամանակին զի էր նա նահատակի ընդդէմ Գողիաթու, առաջի Սաւուղայ, և ամ զօրացն Իսրայէլի:

Փոքր էի ես յեղբարս իմ, և կրտսեր 'ի տան հօր իմոյ. արածէի զխաշինս հօր իմոյ:

Ձեռք իմ արարին սաղմոսարան. և մատունք իմ կազմեցին գործի օրհնութեան:

Իսկ արդ՝ ո՞ պատմեսցէ զայս տն իմում. ինքնին տր ամն լուիցէ զիմ:

Նա առաքեաց զհրեշտակ իւր. և համբարձ զիս 'ի հօտէ խաշանց հօր իմոյ. և օծ զիս յօծութիւն իւղոյ իւրոյ:

Եղբարք իմ մեծամեծք և գեղեցիկք. և ոչ հաճեցաւ ընդ նս տր:

Ելի ես ընդ առաջ այլազգւոյն, և նզովեաց զիս կռովք նր:

Հանի զսուսերն 'ի նմանէ, և հատի զգլուխ նորին. և բարձի զնախատինս յորդւոյն իէլի:

Սաղմոսս՝ որ ասացեալ է յիւրում անդրոջն, երգոյ է անուն. յայտ է և սա երգովասիւր 'ի հնումն, որ և արդ ասի յեկեղեցւոջ 'ի յիմներորդի պենտեկոստէին, յաւուր իջման ամենասրբոյն այ հոգւոյն յառաքեալսն, զնոյն հարկիւր և յետուն համարոյն. որ լի է խոնարհեալ հոգի ամ՝ նմանութեամբ դաւթայ ասացէ զհոգին նր. զի պատարագ այ հոգի խոնարհ, զոր ած հոգին՝ ոչ արհամարհէ՝ թէև սղալեալ իցէ իբրև զդաւիթ. որոյ յուսով երգեն մանկունք եկեղեցւոյ՝ յորում աւուր խոնարհեցոյց զերկինս և էջ տրն: Զի և ինքն դաւիթ խոնարհութե արժանացաւ, և զնոյն մեղացն պահեաց, և հաստատեաց յոգւոջն փոքր նորոգեալ: Եւ զնոյն փարթամացուցանելոյն, և հաստատուցանելոյն զանձեղերս, և յինքն զեկեղեցի հարկիւր յետուն սաղմոսիւքն, զնէ և զայս՝ 'ի չափու պահիլ զանձն. յարացոյց ամ հոգւոյ մեծացելոյ յայս. զի մի մոռացցի զառաջին նուաստութիւն իւր. իբր նախատեղծքն զհողն՝ ուստի եղեն. զոր յիշեցոյց արդար դատաւորն՝ առե տաւոր պատուհասիւն. զոր սաղմոս կոչէ զխոնարհութենս

քան, երգ քաղցրաձայնի, և ախորժ Այ և մարդկան և հրեշտա-
կաց ես։

Դարձեալ սաղմոսարան՝ որ է անձն, և կազմարան բնու-
թեան՝ յարգանդի մօր. ոգի և սաղմոսարանս այս՝ կազմեալ է և
գործարան ըն Այ մարդոյն, և՛ի քո տղայութե, և պատճառ
նորագործութե՝ հնացեալ պատկերին Այ։

Իսկ՝ ասելն ինքնագիր, յայտ առնէ թէ՝ զայլսն եր-
գիչքն գրեցին՝ ասափ, և իդիթում, և որդիքն կորխայ, և
այլքն. և ինքնագիր է սա ձեռացն դաւթի, և բանքս՝ ծնունդ
սրտի նր, իբրու հարիւր և յիսունն, որոյ գրիչ էր լեզուն
դաւթի. զոր ասէ թէ՝ արտաքոյ թուոյ է յայտ է Ճ և Ծ եցն։

Զի որ խոնարհն էր ասոյդ և՛ի սրտէ՝ արտաքոյ մեծցն հա-
մարի զանձն, իբր պօղոս՝ որ անարժան ասէր զինքն արկա-
նել 'ի թիւ համարոյ առաքելոցն։

Զոր 'ի ժամանակի՝ զի եղ նա նահատակ ընդդէմ գո-
ղիաթու. քանզի՝ անդ ասաց՝ ուր 'ի դէպ էր նմա պերճ և
պայծառ երևել յԱմ որդւոյն իէսէի, և առաջի սաւուղայ. ես՝
և քան զնա վերագոյն երևել, յորում ժամու՝ պարաւորքն
երգէին, եհար սաւուղ զհազարս, և դաւիթ զբիւրս. իսկ
նա՝ այսպիսի բանիւք եղանէ ընդդէմ ամբարհաւաճութեն, կա-
խէ զնա, և Այ տայ զյաղթութիւն, և զինքն Ամ սաղմոսացս
կարգէ, յինքն ցուցանել զօրինակն բոլոր բարութեց Ամ դարուց։

Զի եղ նա նահատակ, որ է հաւատով զինեալ, և յԱմ
զօրութէ և 'ի կամաց դիմեալ և ոչ բնաւ երկմտեալ. ոգի և
կոչին նահատակք քսի վկայքն, արեամբ չափի ծարաւեալք,
և նահատակեալք. և կամ՝ ըն ըծորդին՝ զհօն՝ խէ դնել, և
նախատակ ասել. զի նախ դաւիթ նախատակ եղեալ, և հար
եալ զախոյեանն, և ապա սաւուղ, և Ամ իէլ. որ ասէ։

Փոքր էի ես յեղբարս իմ, յայտ առնէ զփոքրն՝ յեղբար
ցըն ասա. և կրտսեր 'ի տան հօր իմոյ, որ ասաց, կայ մեւս
ես փոքրիկ, և արածէ խաշն. իսկ՝ յաչս Այ, և 'ի տան նր՝ յոյժ
մեծագոյն, Ամ իէլի՝ թագաւոր նկատեալ. և արդ յեկեղեց
ւոջ՝ հայր յոն, և իշխան գանձուց նր, և հրամանատու դա-
սուց և դասապետաց տան Տն Այ։ Որդի և զաւակ նր աւե-
տեաց՝ ամենակալն Տծ փոքրկացաւ յաչս եղբարցն՝ հրէիցն.
այլև՝ որդւոյն յովսեփու՝ որ չէին հաւատացեալ 'ի նա, 'ի
տան հօր իւրեանց յովսեփայ, և առաջնոյն ադամայ. սակայն
փոքրիկն կարծեցեալ, և կրտսերն քան զյօհաննէս՝ մեծ է
յարքայութեն երկնից. որոյ չափ ոչ գոյ մեծութեն. որ նախ
արածէր զխաշինս հօր իւրոյ՝ զհրեշտակս յերկինս խնամե-
լով, և զինել յերկրի. ոչ զօտարի, այլ զարարածս և զպաշտօն

եայս

եայս հօր իւրոյ. զոր մարգարէքն պատմեցին, որ հոլովեալ իջին նայեաց, և յայլսն՝ որ քո են, և ոչ ճանաչեն զքեզ. և ցրուեալք են իբրև ոչխարս՝ որոց ոչ իցէ հովիւ. զորոց աղօթմն լսէ քաջ հովիւն. ասէ, այլևս ոչխարք են իմ, որ ոչ են յայսմ գաւթի, և զայն ևս պարտ է ինձ ածել այսր, և եղիցին մի հօտ, ով և մի է հովիւն. զորս յանձնէր պետրոսի երիցս զբաւական սիրելոյն զնա, արածել զգառինս և զոչխարս նր։

Զեռք իմ արարին սաղմոսարան. քանզի՝ ինքնին ճարտարապետեալ ձեռամբ իւրով՝ տասնաղի քնար կազմէր, զի տասն մատամբն կցորդեսցէ խօսուն լեզուին յօրհնութիւն այ, որ զպսակաւեալ թիւ տասանցն դասուց երկնից՝ ելից յորդւոցս ադամայ։

Այլև՝ ը թուոյ եօթնամամնեայ զգայութեանցս՝ յօրինակէր եօթնաղի քնարն. որև՝ ՚ի բաղխմանէ եօթնարփի շնորհաց հոգւոյն՝ եօթն անգամ նուագէր տն յաւուրն, խափանելով զսատանայական սաղմոսարանն, և զդիւահալին քնարն. որ սկսաւ ՚ի դստերացն կայենի, և ածեաց յորդւոյն ապստամբութեան։ վս՝ լցեալ խնդութբ և գգուանօք ասէ։

Իսկ արդ՝ ո՞ պատմեսցէ զայս տն իմում. ինքնին տր տմի լուիցէ զմս։ Իբր սառայ ծնեալ զիսահակ՝ ասէր հրճուանօք. ո՞ պատմեսցէ տն իմոյ աբրահամու, թէ դիեցուցանէ մանուկ սառայ. որ քաջ գիտէր աբրահամ. զի հրճուանք է, և գգուանք այսպիսի բանք. իբր ասել՝ ո՞ է բաւական պատմել նմա. Եւ յետ ասելոյն զորքանութիւն երախտեաց նր առ իս, և առնուլ զթիւ համարոյ շնորհացն նր որ յիս. զի ինքն՝ որ տր է տմի, լուիցէ զմս. օրհնութիւ որքան պարտիմն եմ, և ոչ կարեմ հատուցանել, գոչեսցեն առ նա շնորհքն, և երախտիքն նր՝ որ յիս. և ինքն լուիցէ զմս, զմն խլացեալ լինէին և ոչ լինքենէ. ով օրհնէ զնա յայլում սաղմոսի, որ ուսուցանէ ասէ՝ զձեռն իմ ՚ի պատերազմ, և զմատունս իմ ՚ի ճակատամարտս։ Քանզի՝ երգարանօքն պատերազմէր ը դևսն, որ խեղդէր զսաւուղ. և աւելի ևս՝ ձեռօք նկրքին մարդոյն. որ ասացեալ է յիւրում տեղւոջն։

Այլև՝ զ յոլովս զինէ հոգին՝ ձեռօք և մատամբք կրօնել ՚ի հնոասանէ ը իշխանութիւնս և ը պետութիւնս, և ը աշխարհակալս խաւարիս այսորիկ, ՚ի ձեռն գրոց իբրև զպօղոս՝ չորեքտասան թղթովքն. որև՝ արդ քնար և սաղմոսարան են յմս եկեղեցիս, և գործի օրհնութենն քսի. զորս ով պատմէ տն՝ զշահ օգտութե զսրոցական մանկանց սիոնի. այլ ինքն էր տրն, որ խօսէր նովաւ։ Լուիցէ զմս ՚ի բացմանն

մամն դպրութեան, յասելն պօղոսի՝ աշակերտիկ ես և մանկունք իմ, զորս ետ ինձ տ՟ր ա՟ծ. զորոց ուսումն՝ ոչ միայն գրել և ասել, տեսէք օրպիսի գրով գրեցի ձեզ՝ իմով ձեռօք. այլև՝ ասէ, զիս՝ և որոց ը՟ն իս էին եղբարք, պաշտեցին ձեռքս այս. զի և ն՟ք քնարք են, որք առ դատաւորին երգեն զգոհացողա-կան նուագն. յորոց իբրև լռեսցէ, ասէ, եկայք օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւն։

Այլև՝ հոգւոյն մ՟ր ձեռք և մատունքն է յոր որդւոց ն՟ր. ը՟ն մարգարէին, ձեռն տ՟ն եղև ՚ի վ՟ր իմ. և ինքն ասէ, մա-տամբ ա՟ծութե իւրոյ հանել զդևս. որև՝ ՚ի լեառն ձիթե-նեաց համբարձեալ զձեռն՝ կոչմէր զառաքեալսն երգարան և գործիս օրհնութե. որով օրհնի, և օրհնեցաւ ք՟ս ա՟ծ՝ յազգս և յազգիս տմ՟. զոր ո՞վ կարէ սպառել տ՟ն՝ զպաշտօն ծառայի ցին. այլ ինքնին տ՟ր՝ որ քննէ զսիրտս և զերիկամունս, և ետ զշնորհս արծաթոյն. գիտէ և լռեսցէ զտմ՟ որքան առնի և շահեցան. և կրկնէ զպարգևսն. և զթագուցիչսն՝ խաւարի և լալեաց աչաց, և կրճելոյ ատամանց։

Ե՛րբ առաքեաց տ՟ր զհրեշտակ իւր. և համբարձ զիս ՚ի հօտէ խաշանց հօր իմոյ. և օծ զիս յօծումն իւղոյ իւրոյ։ Հրեշ-տակ՝ զսամուէլ ասէ, որև նա ՚ի ձեռն երկնաւոր հրեշտակի առաքի, և լսէ զպատգամս տ՟յ. որ՟պ տմ՟ մարգարէքն՝ ը՟ն մեծին դէմենեայ։ Ե՛րբ ամբարձ զիս կարի յոյժ բարձր, ՚ի հօտէ խա-շանց՝ ՚ի թագաւորութի ատեղացն որդւոցն աբրահամու։ Ե՛րբ զգաբրիէլ առաքեաց տ՟ր՝ առ կոյսն մ՟ք, որ մի էր ՚ի խա-շանցն յովսեփու. և ՚ի նմանէ ամբարձ զընութիւն՝ յանկրուգա-կան փառս ա՟ծութե իւրոյ, և զկոյսն մ՟ք՝ յա՟ծածին կոչումն. այն՝ որ օծ զդաւիթ յօծումն իւղոյ նուէթականի՝ ՚ի չորից կազմեալ. իսկ՝ զկուսածին մարմինն անհուեթական ա՟ծութե՝ յօծումն ուրախութե՝ առաւել քան զընկերսն, որք ՚ի մարդ-կանէ կոչեցան օծեալք։

Եղբարք իմ մեծամեծք և գեղեցիկք. և ոչ հաճեցաւ ը՟ն ն՟ս տ՟ր։ Ե՛րբ զայս՝ պատմութիւն ասէ, թէ ասաց տ՟ր ցսամուէլ, ոչ ընտրեաց ՚ի դոցանէ տ՟ր. զի թէպէտ նախ քան զյայտ-նելն տ՟ն՝ ՚ի տեսանելն պեղխաբ՝ ասաց սամուէլ, այլև՝ առա-ջի տ՟ն օծեալ իւր. ասէ հոգին մի հայիր ՚ի գեղ դորա, և մի ՚ի մեծութի հասակի դորա, զի ոչ հաճեցաւ ը՟ն դա տ՟ր. զի ոչ որ՟պ տեսանէ մարդ՝ տեսանէ ա՟ծ. զի մարդ յերեսս հայի. իսկ ա՟ծ ՚ի սիրտս։ Քանզի՝ ՚ի ժամ հարցմանելոյն վ՟ն գողութ՝ նախանձեցան վ՟ն նմա և սատեցին, թէ յո՞ թողեր զսակաւ-ոչխարսն. չարութի սրտի քո ած զքեզ այսր տեսանել զպ-պատերազմն։

Այլև

Այլ՝ 'ի վր քն մարդոյ սահ բանս. զի եղբայրք սորին նմա՝ որդիք ադամայ, և որդիքն յովսեփու. և ոչ ումեք եղև վկայութիւն այն՝ որ 'ի յորդանան և 'ի թաբօր, եթէ դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ, դմա լուարուք, 'ի հօրէ եկեալ բարբառս. քանզի՝ ըն ածն՝ և այժ իւր. ըն այ՝ և գործք իւր. զի նմա միայն եղև կարելի կեցուցանել զազգս մարդկան. և միայն՝ որդւոյն միածնաւ յայտնեցաւ սէրն նր 'ի մեզ, ըն մեծին յովհաննու կարապետին:

Ելի ես ը առաջ այլազգւոյն, և նզովեցի զկուռս նորա: Որովք նա անէծ զդաւիթ, նզովեցաւ 'ի դաւթէ. զի ոչ միայն զդագոն՝ որ տապանակաւն փշրեցաւ, և յետոյ 'ի դաւթայ կործանեցաւ. այլ՝ զբազում մեհեանս քակեաց, և զկուռսն նզովեաց. որ է որոշեաց 'ի պաշտելոյ, և 'ի պատուելոյ զմարդիկ. Վայ՝ ոսկարունի կառոցն գողիաթու խայտառակեալ լինէր 'ի նմին աւուր. զի քարիւ հարեալ անկաւ մտաբերութն 'ի դաւթայ. և նորին սրովն կտրեալ զգլուխն՝ բարձան նախատինքն իէլի. որ զաւուրս քառասուն արհամարհեալ նախատէր՝ ոչ լինելոյ յիէլի ոք քաջակցան՝ ելանել նմա 'ի պատերազմ. զի ահա 'ի պատանւոյ միոջ՝ ալ զօրացելոյ բառնայր 'ի մէջոյ. և կոտորէին հազարք և բիւրք յայլազգեացն, գնալով զհետ փախստէից՝ մինչև 'ի մուտս գեթայ, 'ի փառս ածն իէլի:


Այլ՝ քն մեր եւ ը առաջ այլազգւոյ չարին սատանայի, որ ոչ 'ի բնութէս, ուստի քն մարդ եղև, և որդի դաւթի՝ դաւիթ կոչեցելոյ 'ի մարգարէից, որք ասէին դաւիթ դալոց է և յայտնելոց. եւ ընդդէմ նր 'ի յորդանանէ՝ ելեալ յանապատ զաւուրս քառասուն, նման գողիաթու մատուցեալ փորձիչն զնա՝ տկար կարծելով, լնուլ զքաղցն. կամ անկանել յաշտարակէն անխնայ. և իբրև զկարօտ փառաց և թագաւորութեն. զոր՝ սաստիւ հարկանէր իբրև քարիւ:

Եւ յետ այնորիկ առնոյր զաւարն նր՝ զմաքսաւորս, և զմեղաւորս, և զպոռնիկս, և զհալածիչս, և զկախարդս, և զթագաւորս՝ զջատագովս կռամոլութեն. և նոքօք հատանէր զգլուխ նր՝ զհպարտութե և զկռամոլութե, որ գլուխ է բոլոր չարութեն նր. իբր տրդատաւ, և կոստանդիանոսիւ, և կլօրիմոնսիւ, և նմանեօք նոցա՝ եբարձ զնախատինս՝ ածատեստանն ադամայ, և որդւոց նր, որ փայտի, և քարի, և կաւոյ, և զազիր կենդանեաց երկրպագանէին, 'ի պատիւ դիւաց կորուսչաց իւրեանց: Որ ոչ միայն եբարձ զայսպիսի նախատինս. այլ՝ այնքան բարձրացոյց զգլուխ պատուոյն մերոյ՝ զոր էառ զմնութիս, մինչ նստոյց զնա 'ի վերոյ ամ իշխանութեց և պետութեց, և ամ անուանս անուանելոյ, ը աջմէ


հօր

Հօր. որում երկրպագեն բոլոր բնութիւնք գոյից արարածոց՝ իմանալեաց և զգալեաց։ Ցորմէ պատուոյ և փառաց սոսկալ պարտիմք և զարհուրել, գուցէ մնոտի խաբէութ֊ կենցաղոյս անցաւորի՝ առօրեայ հեշտութե֊ պատրանօք, ցանկութե֊ և ագահութե֊ ընկենուցումք զմեզ յայնքան բարձրութենէ, ան֊կումն մեծ՝ և ողբոց արժանի եմ խօսնոց։ Ցորմէ պահեսցէ քո տէրն մեր՝ և խաչեալ Թագաւորն անմահից զմեզ, և զմեզ հաւատացեալս անուամբն իւրոյ, օրհնեալն յաղագս և յազգաց, 'ի կենդանեաց և յոչկենդանեաց, 'ի վերնոց և 'ի ներքնոց, այժմ և յօրն՝ որ գալոցն է ընդ Հօր և ամենասուրբ Հոգ֊ւոյն, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ուստի՝ ընտրութեամբն այ և օծմամբ սբ Հոգւոյն՝ դա֊ւիթս այս բեթղահեմացի՝ որդի յեսսեայ՝ արժանացեալ եօթնարփի շնորհաց սբ Հոգւոյն՝ նախատեսութեամբն լինել հայր ըստ մարմնոյ՝ որդւոյն այ, ձայնարարապետել կարգէ գործի օրհնութե, և 'ի նմանէ ուսեալք որդիք ժողովրդեան իւրոյ 'ի պաղեստին միայն օրհնէին՝ մինչև 'ի ծնունդն անճառ բա֊նին այ, որ ընտրեաց զերջանիկ և զանարատ սիրողսն իւր զա֊ռաքեալսն երկոտասան, և նոքօք որսացեալ զտիեզերս այ 'ի կեանս և յօրհնութիւն ամենասուրբ երրորդութեանն՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։



Յիշատակարան Տպագրութեանս Գրոցս



Փառք համագոյ, համազօր, համապատիւ, համագոյգ ամենասուրբ երրորդութեանն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, գոհութենական բարբառով, և ծնրադրական երկրպագութբ, աներր և անվախճան յաւիտեանս. ամէն:

Որ եստ կարողութե, և արժանացոյց զմեզ նուաստութիւնս տպմամբ յաւարտ հասանելոյ Հոգէնուագ Մատենիս սքանչելի առն այ՝ մեծին Վարդանայ Երանելւոյն Վարդապետին յօրինեալ, ամենահօրն Դաւթայ՝ հիահրաշ գրչին հոգւոյն իմաստութե՝ անսպառ գանձուն ծածկելոյ՝ հարկաւոր յիսուն Սաղմոսացս՝ պարզաբանական Մեկնութեն. ՚ի դառն և յամենաստէք վշտապատ ժամանակիս. յորում աղէտալի անցքն՝ է անքին և աներրատ Մայրս մեր Սբ Էջմիածին յանօրէն բռնաւորաց, և յերկրորդ հռաւմայեցւոց, նոյնպէս և է անքաղարութբ պաշարեալ քաղաքն Թիֆլիզ, և է բոլոր կողմունս արևելեան նահանգի, ՚ի յորս՝ ամենայնիւ Վեհագոյն Տիրապետողին՝ անձամբ անձին դատեալն Եռերջանիկ Սրբազան Առաջնորդին՝ հիւսիսային կողմանց՝ Տն Յովսեփայ Պատրիարքեալ Արք Եպիսկոպոսին, յայցելութե և յօգնութե խղճալի ազգիս Հայոց, չէ կարելի ստամբոր՝ դոյն ինչ սակաւ ՚ի համառօտաբանիս պարունակել. այլ ունիմք զայնց՝ յայլուր՝ ՚ի կարգի վիպասանօրէն ձառել, շնորհիւ Տնօրէնողին և կարգադրողին այն՝ վերնական ինքնաբուն բարւոյն

Արդ՝ ՚ի վախճանի բանիս՝ դուք որդիք լուսոյ Սբ Եկեղեցւոյ՝ յիշեսջիք ՚ի միաբուր և ՚ի լուսաւոր յաղօթս ձեր՝ զարժանին յիշման և զբարի պատճառն Տպման ՚ի լոյս ընծայեցման՝ Հոգեկերոյս Մատենիս, զ՚ի Տր հանգուցեալ Յովհաննէս Աղայն Խօջայ Մինասեանց, որ ՚ի կենդանութե իւրում՝ եղև ցանկացող ինքնայօժար կամօք՝ ՚ի յիշատակ Լուսահոգի նախնեաց իւրոց և ինքեան և Մեծահարուստ Կենակցին իւրոյ, և յատկապէս՝ յերջանիկ կայանն փոխեալ եղբարցն իւրոց, և Համեստափայլ Տիկին Քոյէթին իւրոյ և օրհնութ պտուղ որդւոցն՝ կենդանեաց և հանգուցելոց, նոյնպէս և թոռանցն և բոլոր բարերարացաց զարմին իւրոյ, որք արդեւս բնակին յերկրին Հնդկաց ՚ի Սուրաթ. տալ տպել ՚ի Տիրապարգև գոյից իւրոց՝ զամ պծառման վճարելով զՄեծին Վարդանայ՝ Լուսաւոր Մեկնութե Սաղմոսացն Դաւթի. ՚ի պայծառութե Լուսաւորչական Սբ Եկեղեցւոյ, և ՚ի յօգուտ՝ Հայկազեան տոհմիցս՝ յամ ուրեք բնակելոց:

Որոյ զծախսն՝ ա՟ծապարգև խոհեմութ՟բ իւրով՝ այնպէս բարեկարգեաց, զի ոչ զկնի վախճանուց՝ մնասցէ միշտ ներ Տպարանիս անվերջանալի. և որքան ինչ ազգաօգուտ գրեանք տպեցին 'ի նոյն Տպարանի այնու դրամով՝ 'ի զանազան ժամանակս, ամն՝ 'ի յիշատակ անուան իւրոյ և իւրայնոցն լինիցի 'ի յաւիտեանս ժամանակաց:

Որոյ զյիշատակն գրեսցէ տր յանջնջելի մատեանս իւր և զարդիւնաւոր տուրս նորին՝ վերընկալցի ամենակալն ա՟ծ՝ 'ի փառս իւր. և զբարեխախձան յոյս և զանձնկալութիս նորին՝ ծաղկեցուսցէ տր՝ բեղմնաւոր արգասեօք յամեայ յաւիտեանս:

Ուրեմն զայսպիսի այր բարեյիշատակ՝ յիշման արժանի համարեսջի՛ք համայն բարեսէրքդ հանդերձ բարեպաշտօն ծնողէն իւրով՝ 'ի Ք՟ս ննջեցեալ՝ խօջայ Մինասէնց Գրիգոր Աղայէն, և մարբն իւրով՝ Աննայ խաթունէն, և կենդանի կողակցէն՝ համեստափայլ Վարվառայ խաթունէն, որ բարեբարոյութ՟բ հաշակեցեալ դուստրն է՝ Հոգելոյս Աղայ Յօհանջան Գէորգեանին:

Յիշեսջի՛ք ընդ նոսին՝ և զվաղաթառամ եղբարսն՝ նոյն հանգուցեալ Յօհաննէս Աղային՝ զՄիքայէլն, զՊետրոսն, զՊօղոսն, և զՍէթ Աղայն. և զկենդանի քոյրն՝ զՓէրի խաթուն Համեստաբարոյ Տիկինն՝ Ա՟ծպաշտութ՟բ զարդարեալ, և բոլոր առաքինական գործովք բարեկլացեալ:

Յիշեսջի՛ք և այնց ամենից՝ և զկենդանի որդիսն՝ նոյն հանգուցելոյն, բարեբեր ծառոյն՝ զբարի պտուղսն, զՅակոբոս Աղայն, և զԳրիգոր Աղայն, է Ովսաննայ և Գուստագուլ հարսանցն, և զչքնաղագեղ Թագուհոս մանուկն տիօք: Ընդ նոսին յիշեսջի՛ք և զհանգուցեալ զաւակունսն նորին՝ զՊօղոսն, զՅովսէփն, և զԱննայն. և ևս՝ զկենդանի զաւակունսն՝ Աղայ Յակոբոսին՝ զԹոռունսն նոյն հանգուցելոյն՝ զԹագուհին, և զդուստրն Յովհաննէսն անձնագեղ, զոր տր զարդացուսցէ 'ի շնորհս իւր:

Այլև՝ հուսկ յետոյ արժանաւոր յիշման համարեսջի՛ք զմեծ երախտաւորսն սոյն Տպարանիս, և առատատուր նուէրօք իւրեանց՝ զպայծառ պահօղսն սորին, զԼուսաւորչածին զԽոյեանս, և զզուարթամիտ ժողովուրդս՝ բովանդակ Հնդկաց երկրին. որք լեալք տրովք իւրեանց՝ միշտ ոչ զարդին՝ 'ի փայլեցուցանելն են զԱզգաօգուտ Տպարանս՝ ներ ազգիս Հայոց:

Եւ որք յիշէքդ՝ յիշեալ լիջիք 'ի Ք՟է յա՟ւր մեծի. ամէն:

Diesen Kommentar erhielt ich am 15/I – 99 aus Konstantinopel durch meinen Freund Kalemkiar aus der armenischen Kirche in Balat (Vorstadt v. Kstpl.) zum Preise von über 2 türkische Pfund = 40 Mark.

Dr. Goussen.

Es war das einzige Exemplar in Kstpl.!

